Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ

Տ. ՆԱՎԱՍԱՐԴ ԱՐՔ. ԿՃՈՅԱՆԻ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ
ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻ



ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԳԱՐՈՒՑ

Ցորիանց եւ բացատրեց
(† Երուսաղէմի միաբան եւ Կ. Պոլսոյ Պատրիարք)
ՊՕՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԴՐԻԱՆՈՒՊՕԼՍԵՑԻ

ՀԱՏՈՐ Ա.

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.
Վեհափառ եւ Արարատեան Կաթուղիկոսի
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Թարգմանեց
ՄԱՂԱՔԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՈՒՆԵԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1902

Վաղարշապատում 1902 թ. տպագրված բնագրի շապիկը

ՊՈՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԵՑԻ

ՀԻՆԳ ԴԱՐԵՐԻ ԶԱՆԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փոխադրություն արևմտահայերենից

ՀԱՏՈՐ Ա

Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցի
ԵՐԵՎԱՆ • 2018

ՀՏԴ 27–29
ԳՄԴ 86.37
Պ 797

Արևմտահայերենից փոխադրեց
Վաչագան սրկ. Դոխոլյանը

Խմբագիր՝
Դավիթ Գյուրջինյան

Պողոս եպիսկոպոս Ադրիանուպոլսեցի
Պ 797 Հինգ դարերի զանազանությունը: Հին կտակարանի պատմություններ / Պողոս եպս Ադրիանուպոլսեցի; թարգմ. արևմտ.՝ Վ. սրկ. Դոխոլյանի.– Եր.: Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցի, 2018:
Հատոր Ա.– 380 էջ:

Ընթերցողին է ներկայացվում Պողոս եպս Ադրիանուպոլսեցու 1902 թ. Վաղարշապատում հրատարակված եռահատոր համանուն երկի առաջին հատորի արևալահայերեն թարգմանությունը, որը նվիրված է Հին Կտակարանի՝ Արարչագործությունից մինչև Մովսեսի մահը ընկած ժամանակահատվածին՝մարդկության պատմության հոգևոր առաջին երեք դարաշրջաններին: Գրքում հարցուպատասխանի ձևով ներկայացված է հինկտակարանյան պատմությունների ամբողջական պատկերը՝ մանրամասներով և խրթին հատվածների մեկնություններով:

ՀՏԴ 27–29
ԳՄԴ 86.37

ISBN 978-9939-1-0839-1

© Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցի, 2018

Մեկենասությամբ՝

ԱՐԱՄ ՖՐԱՆԿՅԱՆԻ

Ի հիշատակ իր ծնողների՝ Հայկ Ֆրանկյանի և
Ֆենյա Կարապետյանի

**Որք հանդիպիք սմա տեսեամբ եւ կարդալով,
ողորմի ասացէք ծնօղաց իմոց եւ ձեզ՝ յիշողացդ,
տէր Յիսուս Քրիստոս ողորմեսցի յիւր
միւսանգամ գալստեանն. ամէն:**

ՀԵՂԻՆԱԿԻ ՆԱԽԱԲԱՆ

«Հիշի՛ր անցած օրերը, մտաբերի՛ր
անցած սերունդների տարիները...»
Բ Օրինաց 32:7

Այս աշխարհում մարդու համար ամենակարևոր իմացությունն Աստծուն ճանաչելն է (*Հովհ.* 17:3), և ամենակարևոր գործը՝ Նրա պատվիրանները կատարելը: Քանզի Աստված Իր գերագույն կամքով ստեղծելով մարդուն՝ Իր հրամանները կատարելու ծառայությանը կոչեց նրան: Աստված կատարյալ հավատքով է ճանաչվում, իսկ պատվիրանները բարիքներ գործելով են կատարվում, ինչպես որ մեզ ուսուցանում է Սուրբ Գիրքը: Ուրեմն մարդու համար Աստվածաշունչ գրքերի իմացության մեջ հմտություն ձեռք բերելուց ավելի կարևոր գիտություն չկա (*Բ Տիմ.* 3:16):

Սակայն Սուրբ Գիրքը նմանվում է մի ծովի, որի միջով մի մեծ եռահարկ նավը կարող է ուղիղ նավարկելով նավահանգիստ մտնել, իսկ մեկ թիակ ունեցող փոքրիկ մակույկը միայն եզերքով լողալով է, որ նույն նավահանգիստն է հասնում, այդպես են և իրենց սիրո և եռանդի համեմատ գիտելիք ունեցող և չունեցող հավատացյալները, այսինքն՝ ի վերուստ պարգևված կարողության համաձայն (մի նավավարի նմանությամբ, որն ուղեցույցին նայելով՝ որոշում է իր ճանապարհը): Սուրբ Գրքի ուսումնասիրության մեջ հմտանալով, նրա պատվիրանների համաձայն գործելով, Աստծո շնորհով հավատացյալը մտնում է փրկության նավահանգիստ: Այս պատճառով Սուրբ Գրքի բովանդակությունը չորս մասի է բաժանվում: Առաջին՝ ըստ գրվածքի, այսինքն՝ այն, ինչ որ գրված է:

Երկրորդ՝ ըստ մտքի, այսինքն՝ ինչպես որ իմաստուններն են հասկանում:

Երրորդ՝ ըստ հայտնության, հատկապես Աստծո կողմից սրբերին հայտնվածի համաձայն:

Չորրորդ՝ ըստ կատարելության, այսինքն՝ արքայության արժանիների իմացածի համեմատ (*Ա Կոր.* 13:9,10): Իրոք, մարդը որքան էլ գիտելիք ձեռք բերի, այնուամենայնիվ ամբողջությամբ կատարելությանը չի կարող հասնել: Ինչպես որ երբ ճանապարհորդը մի քաղաքի մոտով անցնելիս երգի և երաժշտության ձայն է լսում, հասկանում է, որ բնակիչները զվարճանում են, սակայն աչքով չտեսնելու պատճառով չի կարող իմանալ, թե քաղաքի զարդարանքները և մարդկանց տեսքն ինչպիսին են, նրանց փառքն ու պերճանքներն ինչ ձև ունեն, այդպես էլ և մարդը ողջ կյանքում ճանապարհորդի նման է, Սուրբ Գիրքն այդ երաժշտության նման արքայության փառքն ու վայելքներն է հայտնում մեզ, սակայն այս երկրային կյանքում որոշակիությամբ չի հայտնվում, թե այն ինչպիսի՞ն է, կամ որքա՞ն մեծ է, քանի որ մարդու աչքը չի տեսել, ականջը չի լսել և սրտով չի զգացել այն, ինչ Աստված պատրաստել է Իր սիրելիների համար (*Ա Կոր.* 2:9): Սուրբ Գրքում գրվեց այնքան, որքան մարդուն անհրաժեշտ է իմանալ (*Հովհ.* 20:31):

Արդ, աշխարհի արարչագործությունից մինչև մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի խաչելությունն ընկած ժամանակահատվածը բաժանվում է հինգ դարերի:

Առաջին դար. Ադամից մինչև Նոյ նահապետի տապանից դուրս գալը:

Երկրորդ դար. Նոյ նահապետից մինչև Աբրահամի կանչվելը:

Երրորդ դար. Հայր Աբրահամի կանչվելուց մինչև Սինա լեռան վրա Մովսեսին օրենքներ տալը:

Չորրորդ դար. Մովսեսից մինչև Բաբելոնի գերությունը:

Հինգերորդ դար. Բաբելոնի գերությունից մինչև Քրիստոսի խաչելությունը:

Վերոհիշյալ դարերում Հին Կտակարանը հայտնում է, թե Մեսիան ե՞րբ, ո՞ր ցեղից և որտե՞ղ պիտի ծնվի, ի՞նչպես և որտե՞ղ պետք է մարդկային ցեղը փրկի մեղքից, որպեսզի մարդիկ, ապավինելով Նրա ողորմությանը, մխիթարություն գտնեն, և երբ գա, հավատան Նրան և Նրա պատվիրաններին հնազանդվելով՝ արքայությանն արժանանան:

Սակայն դժբախտաբար մեր ազգակիցները շատ անգամ հայերեն չհասկանալով, այդ կենսատու հոգևոր բարիքների վայելքից զրկված են մնում: Այդ պատճառով ոմանց բարեկամների խնդրանքով գրվեց այս «Հինգ դարերի զանազանությունը» գիրքը, որն իր մեջ պարունակում է Հին Կտակարանի պատմությունները, մի փոքր էլ մեկնողական գրականությունից ծաղկաքաղեր, այնպես, ինչպես կարծես թե մի մեծ օվկիանոսից մի կաթիլ ջուր է առնված: Երբեմն էլ թուրքերեն լեզվով խրատներ ավելացրեցինք, որպեսզի հայերեն չհասկացողներն իրենց նախահայրերի լեզուն սովորելու ցանկություն ունենան: Մանավանդ իրենց զավակներին ուսումնարաններ ուղարկելով՝ գրել-կարդալ սովորեցնեն, որպեսզի Սուրբ Գիրքը հասկանալու համար օտար լեզվի կարիքը չզգան: Քանի որ մարդու համար մեծ հանցանք է իր ազգային կամ մայրենի լեզուն չիմանալը:

ԱՌԱՋԻՆ ԴԱՐ

Հարց Ա. **Ե՞րբ է ստեղծվել աշխարհը:**

Պատասխան: Աշխարհը ժամանակի մեջ չի ստեղծվել, այլ ժամանակն սկսվել է աշխարհի արարչագործությունից: Արդ, հայտնի է, որ աշխարհը ժամանակի սկզբին ստեղծվեց, քանզի ժամանակը, արարածներին հատուկ լինելով, նրանց փոփոխումն է չափում, և այս չափը արևի շրջապտույտից է առաջանում, ինչպես օրը, ամիսը, տարին:

Ուրեմն աշխարհի արարչագործումից առաջ ո՛չ չափ կար, ո՛չ էլ չափելիք, այլ մեկ հավիտենական Աստված, որը ժամանակի ներքո չէ: Քանզի ժամանակը երեք մասի է բաժանվում՝ անցյալ, ներկա և ապագա, բայց Աստծու համար չկա անցյալ և ապագա, բոլորը ներկա են Նրա համար:

Աշխարհի արարման ժամանակը իմանալը օգտակար չէ, փոխարենը խորհի՛ր, որ դու քանի տարի է՝ աշխարհ ես եկել և ի՛նչ ծառայություն ես մատուցել Աստծուն, ինչո՛ւ քեզ համար ստեղծեց աշխարհը, որպեսզի դու Աստծուն ճանաչելով՝ հնազանդվես նրան, որով էլ Նրա արքայության մեջ ևս հավիտենական փառք շնորհվի քեզ:

Հարց Բ. **Քանի որ ժամանակը աշխարհի ստեղծագործությունից է սկսվում, դրանից առաջ եղածն ինչպե՞ս հասկանանք:**

Պատասխան: Մարդը, ժամանակի մեջ ստեղծված լինելով, հազիվ կարող է ժամանակի մեջ եղածները հասկանալ: Արդ, աշխարհից առաջ արարած չստեղծվեց, այլ միայն մեկ Աստված կար, հավիտենական, անսկիզբ և անվախճան. և որքան էլ հարցնեն, թե ավելի առաջ ի՞նչ կար, դարձյալ պատասխանելու եմ՝ հավիտենականություն, անսկիզբ և անվախճան, միօրինակ տևողություն:

Մի՛ մտածիր, թե ի՛նչ կար աշխարհի արարումից առաջ, այլ դրա վախճանի՛ մասին խորհիր, կամ թե քո մահվանից հետո ի՛նչ կա, դրա՛ մասին խորհիր: Այո՛, արդարև մարդու մարմինը ոչնչից գոյացավ, բայց հոգին անմահ է. Աստծու պատվիրաններին հնազանդվողների համար արքայություն կա, իսկ անհնազանդների համար՝ հավիտենական պատիժ:

Հարց Գ. **Աշխարհ ասելով ի՞նչ ենք հասկանում:**

Պատասխան: Երկինքն ու երկիրը և բոլոր արարածները, որոնց Աստված Իր ամենազոր և անսահման մեծ կարողությամբ ոչնչից գոյացրեց: Սակայն Աստծու կարողությունը ստեղծված արարածներով չի սահմանափակվում, այլ պարտավոր ենք դրանցից, ինչպես օվկիանոսի մեկ կաթիլ ջրից, մարդկային մտքին անհաս աստվածային մեծ կարողությունը մտաբերել և հասկանալ: Որովհետև Աստված ամենակարող չէր համարվի, եթե ստեղծված արարածներից զատ որևէ բան ստեղծելու անկարող լիներ, մինչդեռ ոչ թե Աստված արարածներին Իր կարողության համեմատ ստեղծեց, այլ Իր բարձր կամքի համաձայն[1]: Քանզի Աստծու կարողությանը չափ ու սահման դնել չի կարելի, բայց անչափ և անսահման արարած ևս չի լինում: Մարդն իր ուզածի համեմատ չի կարող գործել, այլ իր կարողության համեմատ, բայց Աստված իր կարողության համեմատ չի անում, այլ ըստ Իր կամքի:

Ո՛վ մարդ, մի՛ հպարտացիր քո գիտելիքով, կարողությամբ, իշխանությամբ և հարստությամբ, այլ Աստծու մեծ կարողության շուրջ խորհելով՝ զարմացի՛ր և ամաչի՛ր ու հպարտությունից հե՛տ կանգնիր:

---

[1] Մեր Աստվածը երկնքում է և երկրի վրա. ինչ որ նա ուզեց, արեց (*Սաղմ.* 113:11):

Հարց Դ. **Աստված ինչո՞ւ ստեղծեց արարածներին:**

Պատասխան: Իր համար[2]: Բայց ոչ թե, որ նրանց կարիքն ուներ, այլ որպեսզի Իր մեծ կարողությունը, գիտությունը, բարությունը և մեծաշուք փառքը նրանցում բացահայտ երևան[3], և հրեշտակների հետ մարդուն Իր անվախճան տերությանը և փառքին արժանացնի, քանի որ բոլոր արարածների մեջ միայն հրեշտակներն ու մարդն են ընդունակ բարձրյալ Աստծու շնորհիվ հաղորդակից լինելու հավիտենական փառքին:

Որովհետև նրանք, միտք և կամք ունենալով, կարող են մտքով ճանաչել և կամքով սիրել Աստծուն, նաև անմահ լինելով՝ Աստծու հավիտենական արքայության մեջ Նրա երկնային փառքով փառավորվել: Ինչպես հրեշտակները, հոգեղեն էակներ լինելով, չեն մահանում, այդպես էլ մարդկային հոգիները, հոգեղեն լինելով, չեն մահանում, և այս պարգևը ձրի շնորհվեց նրանց, սակայն այն պայմանով, որ Իր հրամանին հնազանդվեն:

Սակայն ոչ թե նրանց հնազանդությամբ Աստծու փառքը ավելանում է կամ անհնազանդությամբ՝ պակասում, քա՛վ լիցի, այլ նրանք, իրենց արդար պարտքը վճարելով, Աստծու փառքին են արժանանում:

Եվ ինչպես որ Աստված այս աշխարհն ստեղծելու ժամանակ Իրեն հնազանդվողների համար Իր արքայության մեջ հավիտենական ուրախություն պատրաստեց, քանի որ բարերար և ողորմած է, այդպես էլ անհնազանդների համար Նա դժոխքում բնակվելու հավիտենական պատիժ սահմանեց, որովհետև արդար է:

Արդ, ինչպես որ Աստծու հանդեպ ըմբոստացած հրեշտակները դատապարտության այդ վայրն աքսորվեցին, նույնպես

---

2 Տերն ամեն ինչ արել է իր նպատակի համար (*Առակ.* 16:4):

3 Երկինքը պատմում է Աստծու փառքը (*Սաղմ.* 18:1):

և մարդկանցից ապստամբները ամենայն արդարությամբ նույն պատժավայրը պիտի գցվեն:

Թեև արքայությունը մարդու, իսկ դժոխքը սատանայի համար պատրաստվեց[4], բայց մարդը, իր մեղքի պատճառով Աստծու դեմ ապստամբելով, իր համար պատրաստված արքայությունը թողնում է և սատանային հատկացված դժոխքն է ցանկանում, որովհետև մարդու դժոխք գնալու պատճառը իր մեղքն է, քանզի Աստված, արդար լինելով, ոչ մի անմեղ մարդու չի դատապարտում:

Արդ, ինչպես որ հնազանդության մեջ մնացող հրեշտակները, հավիտենապես Աստծու փառքի մեջ լինելով, Նրան փառավորում և սիրում են և Նրա սիրով արքայության անվախճան երանության մեջ հրճվում և ուրախանում, նույնպես և մարդը, եթե աշխարհում հնազանդվում է Աստծուն, արքայության մեջ հրեշտակների նման պիտի լինի:

Աշխարհում մարդը Աստծու հրամանով ապրելուց բացի ուրիշ գործ չունի[5]. և մարդու համար սրանից մեծ կամ կարևոր ծառայություն կամ զբաղմունք չի կարող լինել: Քանզի եթե կարևոր չլիներ, մարդն իզուր ստեղծված կլիներ: Սակայն «Աստված մարդուն իզուր ստեղծեց» ասելը պարզապես հայհոյություն է: Արդ, եթե կա ծառայություն, կա նաև վարձ[6]: Ահա այս է մեր սուրբ հավատի վերջնական նպատակը. ըստ որի՝ այս աշխարհում Աստծուն հավատարմությամբ

---

4 Եկե՛ք, իմ Հոր օրհնյալնե՛ր, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից մեզ համար պատրաստված արքայությունը.... Անիծյալնե՛ր, գնացե՛ք ինձնից հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի և իր հրեշտակների համար (*Մատթ.* 25: 34, 41):

5 Աստ գործեալ զգործս Աստուծոյ և անդ հանգչիլ ընդ Աստուծոյ… (*Շարակ.*):

6 Մշակն արժանի է իր վարձին (*Ա. Տիմոթ.* 5:18):

ծառայողին արքայության անվախճան ուրախությունն է շնորհվում[7]: Քանզի եթե արքայության մեջ մարդուն մեկ այլ վարձատրություն և շնորհ չլիներ, մարդն անասունների նման կլիներ, քանի որ մարդն էլ է մեռնում, անասունն էլ, և մեռնելուց հետո այս աշխարհում վայելած կյանքի ուրախությունն ու իշխանությունը երազի նման են լինում:

Արդ, սրա վերաբերյալ կա՛մ արքայությունը պիտի ընդունել, կա՛մ մարդուն մարդկությունից դուրս դիտարկել. և արքայությունը ընդունելուդ պես, իհարկե, պարտավոր ես Աստծու հրամանին հնազանդվել, և ով չի հնազանդվում, հիմարի աստիճանին է իջնում, քանի որ օգուտն ու վնասը չզանազանելը հիմարություն է:

Հարց Ե. **Արդյո՞ք կարելի է հնարավորինս հասկանալ աշխարհի արարչության եղանակը:**

Պատասխան: Աշխարհի արարչության եղանակը, Մովսես մարգարեի պատմությունից և գիտնականների կողմից ամփոփված, այսպես է հասկացվում, որ բոլոր արարածների պատկերը կամ նկարը, հավիտենապես Աստծու մեջ լինելով, Իր բարձր կամքի համաձայն, այդ նկարի համեմատ:

Առաջին օրը՝ սկզբում, Աստված ստեղծեց հրեղեն երկինքը և երկիրը, հրեղեն երկնքից հետո ստեղծեց հրեշտակներին և լույսը: Դատարկության մեջ հաստատեց երկիրը[8] և նրա շուրջբոլորը ջրով շրջապատեց[9], և Սուրբ Հոգին շրջում էր այդ ջրի վրայով, որ նրան զորություն տա[10]: Եվ ջրի շուրջը օդն էր,

---

7 Ազնիվ ծառա, բարի և հավատարիմ... մտի՛ր քո Տիրոջ ուրախության մեջ (*Մատթ.* 25: 21):

8 Կախեց երկիրը ոչնչի վրա (*Հոբ* 26: 7):

9 Եվ երկիրն անձև էր ու անկազմ (*Ծննդ.* 1:2):

10 Եվ Աստծու հոգին էր շրջում ջրերի վրա (*Ծննդ.* 1:2):

և օդից վեր լույսն էր, որը, երկրի մի կողմը կանգնեցնելով, այն կողմը լուսավորեց, իսկ մյուս կողմը՝ խավար[11]. ահա այսպես է ասվում՝ երեկո և առավոտ եղավ[12]:

Երկրորդ օրը ջուրը, որ շրջապատում էր երկիրը, բաժանվելով՝ մի մասը դեպի երկինք բարձրացավ, իսկ մյուս մասը ներքևում մնաց: Եվ այս երկու ջրերի մեջ հաստատվեց երկինքը, որը նաև հաստատություն է կոչվում[13]:

Երրորդ օրը ներքևում մնացած ջուրը մի կողմ հավաքելով՝ ծովը կազմեց, իսկ մյուս կողմը ցամաքը երևաց[14]: Եվ ահա Աստծու հրամանով երկիրն իսկույն տեսակ-տեսակ բույսեր և ծառեր աճեցրեց, և երկրի երեսը ամեն տեսակ բուսականությամբ զարդարվեց: Եվ Աստված դրախտն էլ տնկեց, որտեղ կենաց ծառը և բարին ու չարը գիտենալու ծառը կային:

Չորրորդ օրը Աստված արևը, լուսինն ու աստղերը ստեղծեց, որպեսզի աշխարհը լուսավորելով՝ գիշեր, ցերեկ, ամիս, տարի և ժամանակ որոշվի:

Հինգերորդ օրը Աստված հրամայեց, որ ջուրը տեսակ-տեսակ ձկներ և թռչուններ և ջրում եղած բոլոր կենդանիներին առաջացնի, և նրանց հրամայեց, որ բազմանան:

Վեցերորդ օրը Աստված հրամայեց, որ երկիրը դուրս բերի բոլոր ցամաքային կենդանիներին, և երբ սրանք ամբողջացան, Աստված մարդու մարմինը հողից ստեղծելով և փչելով նրա վրա՝ հոգի տվեց, այնպես որ մարդը բանական կենդանի եղավ: Աստված, օրհնելով մարդուն, հրամայում է, որ շատանան և իշխեն բոլոր կենդանիների վրա. հրամայեց նաև, որ

---

11 Խավարը տիրում էր անհունի վրա (*Ծնող.* 1:2):

12 Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ (*Ծնող.* 1:6):

13 Թող երկնքի տակ գտնվող ջրերը հավաքվեն մի տեղ (*Ծնող.* 1: 9):

14 Եվ երևաց ցամաքը (*Ծնող.* 1: 9):

պտուղներն ու բույսերը նրա համար կերակուր լինեն: Եվ ցամաքի վրա գտնվող բոլոր կենդանիները և թռչունները Աստծու հրամանով Ադամի մոտ եկան, որ նրանց բոլորին հարմար անուններ դնի: Աստված Ադամին իր գտնվելու վայրից դրախտ տեղափոխեց, որտեղ Աստծուց Ադամի վրա թմրություն եկավ, և Ադամը քնեց. նրա կողոսկրերից մեկը վերցնելով՝ Եվայի մարմինը ստեղծեց և նրան ևս տվեց հոգի, ինչպես որ Ադամին էր տվել: Երբ Ադամը զարթնելով տեսավ Եվային, հասկացավ, որ Աստված նրան որպես օգնական է տվել իրեն: Արդ, այսպես վեց օրվա մեջ երկինքն ու երկիրը և բոլոր արարածները ամբողջացան:

Իսկ յոթերորդ օրը, որը շաբաթն է, Աստված հանգստացավ, այսինքն՝ աշխարհի վերաբերյալ կարևոր ամեն ինչ ամբողջացավ:

Եվ քանի որ Աստված բոլոր արարածներից ավելի մարդուն սիրեց և նրան մեծապես փառավորելով՝ աշխարհի իշխան կարգեց, և որպեսզի առ իր Արարիչն ունեցած նրա հնազանդությունը հայտնի լինի, Ադամին պատվիրում է, որ դրախտի բոլոր ծառերի պտուղներից ուտեն, սակայն բարու և չարի գիտության ծառի պտղից չուտեն, որ չմեռնեն: Սակայն սատանան, օձի միջոցով Եվային և վերջինիս ձեռքով էլ Ադամին տրված պատվիրանին հակառակ գործել տալով, դրախտից նրանց արտաքսվելու պատճառը եղավ: Այս պատճառով Աստված քերովբեներին հրամայեց, որ կենաց ծառի ճանապարհը պահպանեն:

Ո՛վ մարդ, Աստված քեզ երկրի վրա գտնվող բոլոր արարածներից ավելի փառավորեց և նրանց բոլորի վրա իշխան կարգեց, ուստի պարտավոր ես Աստծու մարդասիրությունը գնահատելով՝ ամենայն հավատարմությամբ միշտ Նրան ծառայել:

Հարց Զ. **Ինչո՞ւ աշխարհը վեց օրում ստեղծվեց:**

Պատասխան: Աստված կարող էր աշխարհը միանգամից արարել, սակայն այս պարագայում մարդուն օրինակ է տալիս, որ նա իր գործերը կարգով կատարի և չշտապի: Նմանապես արարածների աստիճանաբար կատարելության հասնելը բնական օրենք է: Սակայն Աստված ոչնչից իսկույն գոյություն տվեց նրանց[15]: Որովհետև Աստված վեց օրվա մեջ երեք տեսակի կարողություն գործադրեց՝ ստեղծել, բաժանել և զարդարել: Առաջին օրը ստեղծեց, երկրորդ օրը երկնքի և երկրի ջուրը բաժանեց, երրորդ օրը ծովն ու ցամաքը բաժանելով՝ սկսեց զարդարել. նույնպես հաջորդ երեք օրերին տարբեր արարածներով կատարելապես շքեղորեն զարդարեց երկինքն ու երկիրը:

Արդ, արարածների ստեղծման մեջ Աստծու մեծ կարողությունը հայտնի դարձավ, դրանք բաժանելով և զանազանելով՝ Նրա մեծ գիտությունը, զարդարելով՝ Նրա մեծ բարությունը, աշխարհը մարդուն տալով՝ Նրա մեծ բարերարությունը. և մարդուն այս ամենի վրա իշխան կարգելով էլ Նրա մեծ իշխանությունը հայտնի դարձան, քանի որ Ինքն է ամենքի Տերը. ում ուզենա, նրան կտա[16]:

Հարց Է. **Դրախտը որտե՞ղ էր:**

Պատասխան: Սուրբ Գրքից իմանում ենք, որ արևելյան կողմում՝ Եդեմ կոչված վայրում էր[17], և այն Հայաստանի Խնուս գավառի Բյուրակն (Բինգյոլ) կոչված վայրն է կարծվում: Որովհետև Դրախտից դուրս եկող չորս գետերը, որոնք են՝ Փիսոնը,

---

15 Քանզի նա ասաց, և դրանք ստեղծվեցին (*Սաղմ.* 148: 5):

16 Երկինքների երկինքը Տիրոջն է, բայց երկիրը նա տվեց մարդկանց որդիներին (*Սաղմ.* 113: 16):

17 Աստված դրախտը տնկեց Եդեմում՝ արևելյան կողմում (*Ծննդ.* 2:8):

Գեհոնը, Տիգրիսն ու Եփրատը, այդ կողմերի լեռների ստորոտներից են բխում: Փիսոնը, որը Ճորոխ գետն է, Բաբերդի լեռներից սկիզբ առնելով՝ Գյումուշխանի և Ջանիկոյի կողմերում պտույտ է գործում, որտեղ ոսկու, արծաթի և պղնձի հանքեր կան: Երկրորդը՝ Գեհոնը, որ Արաքս գետն է, Եթովպիայի, կամ որ նույնն է Դավրեժի կողմերում է պտույտ գործում, քանի որ նախկինում այդ կողմի ժողովուրդը եթովպացի էր կոչվում: Երրորդը՝ Տիգրիսը Շաթն է, որը դեպի Ասորեստանի կողմերն է հոսում, այսինքն՝ Տիգրանակերտ և Մուսուլ քաղաքների կողմը: Չորրորդը՝ Եփրատը, որը Մուրադ գետն է, Մշո գավառից անցնելով՝ հոսում և միանում է Տիգրիսին:

Եդեմական դրախտի որտեղ գտնվելը մի՛ հարցրու, այլ երկնային դրախտի որտեղ լինելը, և թե ի՛նչ ճանապարհով և ինչպե՛ս կարելի է այնտեղ մտնել, ահա ա՛յդ սովորիր: Քանզի Եդեմական դրախտ մտնողը դուրս եկավ, իսկ երկնային դրախտ մտնողը միշտ այնտեղ է մնում: Նաև հայտնի է, որ հանցանքի պատճառով մարդը դրախտից վտարվեց: Արդ, եթե հանցանքը մարդուն դրախտից վտարում է, Հիսուս Քրիստոսի շնորհով առաքինությունը մարդուն երկնային դրախտ՝ արքայություն է մտցնում:

Հարց Ը. **Ադամը որտե՞ղ ստեղծվեց:**

Պատասխան: Սուրբ գրքում անհայտ մնացած որևէ խնդրի անհնար է լիարժեք պատասխան տալ, բայց ոմանց կարծիքով ասվում է, թե Քանանի Քեբրոն կոչված տեղում է ստեղծվել: Հայր Աբրահամի գերեզմանը այնտեղ լինելու պատճառով արաբները հիմա Խալիլ Իբրահիմ են անվանում այդ վայրը, որը Ս. Երուսաղեմից վեց ժամվա ճանապարհի վրա է:

Ասվում է, որ Ադամը դրախտից դուրս գալուց հետո դարձյալ այդ վայրում բնակվեց, քանի որ աքսորվելով հողը վերցված

կամ ստեղծված վայրը՝ այնտեղ էլ բնակություն հաստատեց[18]: Նաև Ադամ «կարմիր» է թագմանվում հատկապես արյանն առնչելով, քանզի «ղեմ» արաբերեն «կարմիր» է նշանակում, այս պատճառով ոմանք նաև ասում են, որ Ադամի հողը Դամասկոսի դաշտից է վերցված, քանզի Դամասկոսին «Դըմըշգ» են անվանում, որը նույնպես արյուն է նշանակում: Եվ այս սկզբունքով, ոմանք հասարակության մեջ գործածվող խոսքը՝ «Էվէլի շամ՝ ախըրի շամ», թարգմանում են՝ «Մարդու սկիզբը հող էր և վերջն էլ հող պիտի լինի»[19]: Դարձյալ քանի որ Ադամի գերեզմանը Քեբրոնում է, հետագայում նրա գլուխը Գողգոթա է փոխադրվել և թաղվել[20]: Հայր Աբրահամն իր որդուն՝ Իսահակին, այս լեռան վրա զոհ մատուցեց, այդ պատճառով հիշյալ լեռանը Գողգոթա անունը տրվեց, որ նշանակում է գլուխ կամ գլուխ կտրելու վայր, որտեղ էլ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսը խաչվեց[21]: Ահա այս իմաստով է, որ նկարիչները խաչելության պատկերների ներքևում Ադամի գլուխն էլ են նկարում:

Անհրաժեշտ է այս պարագայում մեծ ուշադրություն դարձնել մարդուն, քանի որ «մարդ» բառը (ադեմ, դեմ) «արյուն» է նշանակում, ամեն անգամ, երբ հիշի կամ իր անվան իմաստը հասկանա, պարտավոր է վախենալ և զգույշ լինել, որ Աստծու կամքին հակառակ՝ ուրիշի արյան մեղքի տակ չմտնի, քանզի պատվիրանին դեմ կանգնողը նախ իր արյան մեղքի տակ է մտնում, ինչպես որ Եսայի մարգարեն մեղքը արյան է նմանեցնում[22]:

---

18 Եվ Տեր Աստված արտաքսեց նրան բերկրության դրախտից, որպեսզի նա մշակի այն հողը, որից ստեղծվել էր (*Ծննդ.* 3:23):

19 Հող էիր և հող էլ կդառնաս (*Ծննդ.* 3:19):

20 Սոսկալին Սերովբէից՝ բառնայր Ինքեամբ զփայտ խաչին, մինչ ի տեղին Գողգոթային, յորում եղեալ մարդն առաջին (*Շարակ.*):

21 Գողգոթա, որ նշանակում է կառափնատեղի (*Մատթ.* 27: 33):

22 Ձեր ձեռքերը լի են արյունով (*Եսայի* 1:15):

Հարց Թ. **Աստված Ադամին ինչո՞ւ դրախտի մեջ չստեղծեց:**

Պատասխան: [Որպեսզի] Ադամը չկարծի, որ դրախտը իր սեփականությունն է, այլ Աստծու ողորմությունն ըմբռնելով՝ ջանք գործադրի այն պահպանելու, որպեսզի այնտեղից դուրս չհանվի: Ուստի այլ տեղում Ադամի ստեղծվելն ու դրախտ փոխադրվելը մեծ խրատ էր նրան:

Մարդուն բարիք անելը երկու կերպ է լինում. մեկը՝ իր նպատակին հասցնել, մյուսը՝ իր երկյուղի կամ կասկածների պատճառից ազատել: Բարերար Աստված երկու բարիքն էլ միաժամանակ է շնորհում մարդուն, քանի որ հարկավոր բաները այնպես է տալիս, որ դրանցից մարդուն վնաս չի լինում: Շատ անգամ մարդը հեշտությամբ է հարստություն գտնում, սակայն դժվարությամբ է այն պահում կամ չի կարողանում պահպանել և կորցնում է: Հարստության հասնելը քաջություն չէ, այլ իմաստություն է դրա մեջ հարատևելն ու մնալը: Աստծու բարիքը միշտ ողորմություն է մարդու համար, բայց նա պարտավոր է այդ ողորմությունը պահել, պահպանել և կորցնելուց զգուշանալ:

Հարց Ժ. **Ինչո՞ւ մինչ Ադամի ստեղծվելը Բարձրյալի անունը Սուրբ գրքում միայն Աստված է գրված, իսկ Ադամի արարումից հետո՝ Տեր Աստված:**

Պատասխան: Քանզի Աստված պատվեր պիտի տար Ադամին, իսկ պատվերը իշխանություն ունեցողն է տալիս, այդ պատճառով Ադամի ստեղծվելուց հետո իշխանություն արտահայտող բառն էլ Աստված բառի հետ գրվեց, որպեսզի ինչպես որ մարդը որպես Արարիչ է ճանաչում Աստծուն, այնպես էլ Տեր և Իշխան ճանաչելով՝ հնազանդվի Նրան: Քանզի մարդը, կամքի տեր լինելով, կարող է

Աստծուն հնազանդվել կամ չհնազանդվել: Արդ, պատվիրվում է, որ հնազանդվողին՝ պատիվ և փառք, իսկ անհնազանդին պատիժ տրվի. քանի որ իշխանությունը պատվեր տալու և պատվերի փոխարեն հնազանդություն տեսնելն է, որովհետև հնազանդություն չպահանջող պատվերը խրատ է կոչվում:

Հիրավի, Աստված բոլորին հրամայում էր, բայց որոնք կամքի տեր չեն, նրանց տրված հրամանում պատվեր չկա, այլ պարզապես հրաման, որովհետև նրանք, հրամանին հակառակ գործելու անկարող լինելով, իրենց բնության մեջ հաստատված զորությունը անկարող են թողնել, միայն թե Աստծու բարձր կամքը լինի, և այն ժամանակ բնության զորությունը հետ մնալով հրաշք է լինում: Եվ մի՛ ասա, որ հրաշք լինելով բնությունը խաթարվում է, այլ ընդհակառակը՝ բնության մեջ հնազանդական կարողություն գտնվելով՝ նրա կատարելությունը առավել ևս է բացահայտվում:

Հարց ԺԱ. **Ինչպե՞ս պիտի իմանալ, որ Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերի համեմատ և Իր նմանությամբ:**

Պատասխան: «Մարդը Աստծու պատկերի համեմատ է ստեղծվել» ասելը մարմնի համար չէ, այլ նրա հոգևոր կարողության, մտքի և կամքի տեր լինելու համար, և այս պատկերը, Իր բնության վրա հիմնված լինելով, մեղքի հետևանքով ամբողջությամբ չխաթարվեց, այլ միայն նսեմացավ, քանի որ մարդու կամքը՝ չարության, միտքը հիմարության և մոռացության հակվեց[23]: Մանավանդ մարդը, բոլոր արարածներից

---

23 Կամքին տիրեց չարությունը, մտքին՝ տգիտությունը, իսկ հիշողությանը՝ մոռացությունը:

հետո ստեղծված լինելով, իր մեջ ամբողջապես ունի նրանց բոլոր կարողությունները՝ էություն կամ գոյություն, լինելություն, զգացողություն, ճանաչողություն, իմացություն, կամեցողություն, հիշողություն. բոլոր արարածների կատարելությունները սրանց մեջ են, և մարդը, լինելով բոլոր արարածների կնիքն ու ավարտը, Աստծու պատկեր ասվեց: Չէ՞ որ Աստծու անհուն կարողությունը, գիտությունը, բարությունն ու սերը ամենից շատ և մասնավորապես մարդու առումով հայտնի են, ինչպես որ թագավորի նշանը կամ պատկերը կրող անձը ուրիշների վրա իշխում է, այդպես էլ մարդը, որպես Երկնային Թագավորի փոխանորդ, իշխում է այլ արարածների վրա: Եվ դարձյալ, ինչպես որ թագավորը իր պատկերն է դնում կառուցած քաղաքի վրա, որպեսզի իր անունը չմոռացվի, այդպես էլ Աստված, այս աշխարհը ստեղծելով, նրա վրա մարդուն դրեց, որպեսզի նրանից Արարիչը իմացվի:

Մանավանդ Աստված կամեցավ, որ մարդն այլ արարածների կարիքը չունենա Աստծուն ճանաչելու համար, այլ իր մեջ եղած կարողություններով ճանաչի: Ինչպես որ արարածները Արարչի հետքերն են և ապացուցում են Նրա գոյությունը, նրանց բոլորի կատարելությունն ամբողջությամբ և գերազանցապես Աստծով է ի հայտ գալիս, այդպես էլ Աստծու անչափ կատարելության նվազագույն նշանն ու ստվերը բոլոր արարածներից ավելի մարդու վրա երևալով՝ Աստծու պատկեր է կոչվում, քանի որ Աստծու կատարելությանը նայելով՝ մարդու կատարելությունը տկար ստվերի պես է:

Աստծուն նման լինելը, ըստ բարոյական կարգի, մեր կամքը Նրա կամքին համապատասխանեցնելն է. Աստծու կամքին հակառակ գործելուն պես մարդը կորցնում է Աստծու նմանությունը: Այո՛, մարդը սկզբնական արդարության վիճակում

Աստծու նմանությամբ ստեղծվեց[24], բայց մշտապես այդ վիճակի մեջ մնալ կամ չմնալը մարդու կամքին թողնվելու պատճառով, *Ծննդոց* 1:27 համարում նմանությունը չի հիշատակվում, այլ միայն պատկեր է գրված[25]:

Ընդունելի պատկերն այն է, որը նմանվում է նախատիպին, ընդունելի մարդը նա է, որն Աստծու կամքին միշտ հպատակվելով՝ իր վիճակի համեմատ առաքինությամբ Աստծուն է նմանվում: Քանզի առաքինությունը շնորհով է գործվում, և շնորհի հիմքը, Աստծուց լինելով, մագնիսի կողմից երկաթը ձգելու նման՝ մարդուն Աստծու սիրո հետ շաղկապելով՝ Աստծուն է նմանեցնում, որովհետև սերը նմանություն է[26], նմանությունն էլ երկու կամքերի միությամբ է առաջանում:

Արդ, որտեղ կամքերի միություն կա, այնտեղ նաև սեր կա, և որտեղ հակադիր կամքեր կան, այնտեղ սեր չկա: Ուրեմն ջանա՛, որ Աստծու կամքի համաձայն շարժվես, որպեսզի Նրա սերը չկորցնելով՝ ողորմության և շնորհների արժանի լինես:

Հարց ԺԲ . **Ադամը դրախտում ի՞նչը պիտի մշակեր և պահպաներ, քանի որ գրված է, թե Աստված Ադամին դրախտում դրեց, որ մշակի և պահպանի[27]:**

Պատասխան: Առաջին՝ Աստծու մեծության, կարողության, գիտության և բարության մասին խորհելով՝ պետք էր

---

24 Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ (*Ծնն.* 1:26):

25 Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան (*Ծնն.* 1:27):

26 Ասացվածքի համաձայն՝ նման զնմանն սիրէ (Նմանը նմանին է սիրում):

27 Տեր Աստված իր ստեղծած մարդուն դրեց բերկրության դրախտում, որ նա մշակի ու պահպանի այն (*Ծնն.* 2:15):

գոհությամբ և փառաբանությամբ հանդերձ, ամեն ինչից վեր և առավել Նրան սիրելով պահեր պատվերը: Երկրորդ՝ ժամանակը դատարկ չանցկացնելու համար զվարթությամբ այդ պարտեզում աշխատել, սակայն ոչ թե հողագործ մշակի նման նեղություն քաշելով՝ ապրուստի մասին հոգար, քանի որ ուտելու համար տեսակ-տեսակ պատրաստի պտուղներ կային արդեն, և այլ բանի կարիք էլ չուներ, ինչպես դրախտից արտաքսվելուց հետո նեղությամբ և դժվարությամբ հաց վաստակելու անհրաժեշտությունն ունեցավ: Մանավանդ պարտավոր էր այն, թշնամուց պահպանելով, միշտ իր համար պահել:

Իրոք, ուրիշ ոչ ոք չէր կարող Ադամին դրախտից հանել, ուստի նա մանավանդ պարտավոր էր իր անվայել ընթացքից պահպանել այն, քանի որ միայն իր մեղքերի պատճառով այնտեղից վռնդվեց: Արդ, այս մասին մեծ ուշադրությամբ խորհի՛ր, որ մարդն իր մեղքով իրեն հասցված չարիքն ու վնասը, եթե ամբողջ աշխարհը միաբանվի, չի կարող նրան հասցնել: Այո՛, մարդու հոգևոր թշնամին՝ անիծյալ սատանան, ցանկանում է, մարդուն մեղքի մեջ գցելով, իր նման թշվառ և ապստամբ դարձնել, միայն թե չի կարող ստիպել, այլ պատճառ է փնտրում և եթե մի փոքրիկ առիթ գտնի, հազար տեսակ խորամանկ և քսու ձևերով ջանում է իր դիտավորությունն ու նպատակը իրականացնել: Մեղքին առիթ տալը վառոդին կրակ մոտեցնելու նման է: Աստծու պատվերը միայն մեկ ծառի համար էր, սակայն սատանան իր չարամիտ մտքով իբր թե բոլոր ծառերի համար պատվիրված լինելու պես է հարցնում[28]: Եվ այս խորամանկ հարցը, ոսկեզօծ թույնի նման նախապես

---

28 Աստված ինչո՞ւ ասաց, թե դրախտում եղած բոլոր ծառերի պտուղներից չենք կարող ուտել (*Ծնող.* 3:1):

անվնաս երևալով, հետո թունավորեց մարդուն. հենց այսօրինակ մեղքի առիթ տվողներն են միշտ անպակաս:

Թշնամուն չհաղթող զինվորին պսակ չի տրվում. սատանան՝ թշնամի, իսկ մարդը Աստծու զինվորն է[29]: Այս անգութ թշնամին փախչողին հալածում է, իսկ դիմադրողից ինքն է փախչում: Գիշերային գողի նման է. աղմուկ հանելուդ պես փախչելու տեղ է փնտրում: Ուրեմն հարկավոր է ջանալ, Աստծու շնորհով սատանային ոտնակոխ անելով, պսակն ստանալ: Եթե միշտ մեղքերի պատճառներից չփախչես, կամ թշնամուդ քաջաբար դիմադրելով՝ չհաղթես, վարձ և մրցանակ չես կարող ստանալ[30]: Ինչպես որ յուրաքանչյուր արարած որևէ ծառայության համար է նախասահմանված, այդպես էլ մարդու պաշտոնը և ծառայությունը երկրի վրա Աստծու կամքը կատարելն է[31]: Եթե մարդը սահմանված և իրեն հատկացված ծառայության մեջ թերանա, անտարակույս կպատժվի:

Հարց ԺԳ. **Առաջին պատվիրանն ինչո՞ւ կերակրի մասին եղավ:**

Պատասխան: Ինչպես որ Աստված նախ կերակուր տվեց մարդուն, այդպես էլ առաջին պատվերը կերակրի վերաբերյալ եղավ: Որովհետև մարդը միշտ իր օգտին է հակված, իսկ օգուտը այն է, երբ մեկի բաղձանքը ամբողջացնում է, և բաղձանքն էլ հայտնի

---

29 Որովհետև մեր պատերազմը մարմնի և արյան չէ, այլ իշխանությունների հետ, պետությունների հետ, այս խավար աշխարհի տիրակալների հետ (*Եփես.* 6:12):

30 Եվ եթե մեկը մրցամարտիկ է, պսակ չի ստանա, եթե ըստ օրենքի չմարտնչի (*Բ Տիմոթ.* 2:5):

31 Որովհետև նրա արարածներն ենք՝ Քրիստոս Հիսուսով ստեղծվածներ բարի գործերի համար, որոնց համար էլ Աստված սկզբում պատրաստեց մեզ, որ դրանք կատարենք (*Եփես.* 2:10):

բանի համար է լինում: Արդ, քանի որ մարդը այս աշխարհի մեջ է, մարմնի վերաբերյալ բաներ է ցանկանում, որ տեսնում է, և մարմնական ցանկություններից առաջինը կերակուրն է[32]:

Մանավանդ մարդն այն աստիճան է պարտավոր Աստծուն սիրել, որ հանձն առնի իր կյանքը Նրա համար զոհել, և մարդու անձը երկրի վրա կերակուրով է պահպանվում և կենդանի մնում, այս պատճառով առաջին պատվիրանը կերակրի վերաբերյալ եղավ: Մարդը մանուկ հասակում կաթով է սնվում, և ինչքան մեծանում է, այնքան զանազան կերակուրներ է ցանկանում. այո՛, մարդուն պետք է կերակուրը, սակայն հացից և ջրից բացի մնացածը անհրաժեշտություն համարելը և կամ տեսակ-տեսակ կերակուրներ ցանկանալը անձը փչացնել է նշանակում, քանզի շատ ախտեր անչափ կերուխումներից են առաջանում: Ուտելու խնդիրը մարդու մտահոգության համար մեծ առարկա լինելու պարագայում, նաև հպարտությամբ անվան և համբավի սիրով տոչորվելով, հանդերձների և բնակարանի վերաբերյալ անհաշիվ և անիմաստ զբաղմունքներին ենթարկվել՝ պարզապես ինքն իրեն դատապարտել և պատժել է նշանակում:

Տիտղոսի և զվարճանքների համար շատ դրամ է պետք, շատ դրամ ձեռք բերելու համար կամ շատ նեղություններ պիտի կրել կամ շատ մեղք գործել, այս երկուսն էլ մարդու հոգուն, մարմնին և հանգստությանը վնասակար են: Մանավանդ այսպիսի անվայելուչ վարմունքը Աստծու հրամաններին հակառակ է, իսկ Աստծու հրամանին հակառակ գործողը անպատճառ պատժվում է:

Մարդու անձը և էությունը, միմյանց հակառակ նյութերից բաղկացած լինելով, արդեն իսկ ստիպում է միշտ մեծ

---

32 Մարդու բոլոր ջանքերն իր բերանի համար են (*Ժող.* 6:7):

պատերազմ մղել[33], որովհետև երկրի վրա մարմնական բաները տեսնելով՝ մարդը դրանք է ցանկանում, իսկ հոգևոր բաները առայժմ տեսնել չկարողանալով՝ միայն ունկնդիր է լինում: Թեպետ ըստ աշխարհի՝ աչքը հաղթում է ականջին[34], սակայն հոգևոր խնդիրների կամ պարագաների առումով ականջն է հաղթում աչքին[35]: Արդ, եթե մեր մարմնավոր աչքով տեսածները ցանկանալով՝ հոգևորը չխորհենք և զանց առնենք, ապա անասունի նման կլինենք:

Քանի որ անասունը ըմբռնում է միայն ներկայում կատարվող և տեսանելի բաները, իսկ մարդու փառքը հոգին է, որքան ավելի հոգու վերաբերյալ խնդիրների մեջ կատարելություն գտնի, այնքան նրա փառքը կմեծանա: Ուրեմն հոգևոր իրողությունների վրա լավ և շա՛տ խորհիր, մի՛ ասա, թե նախ հասկանամ, հետո հավատամ, այլ նախ հավատա՛, որ հետո հասկանաս[36]:

Հարց ԺԴ. **Ադամին արգելված պտղի ծառի անունն ի՞նչ էր:**

Պատասխան: Անունը հայտնի չէ, բայց մի հասարակ ծառ էր, և դրա անունը Ս. գրքում անհայտ լինելու պատճառով ով ինչ

---

33 Քանի որ մարմինը Հոգու հակառակն է ցանկանում, իսկ Հոգին՝ մարմնի հակառակը (*Գաղ.* 5:17):

34 Ըստ առածի, թե՝ Ճշմարտագոյն է տեսութիւն աչաց, քան զլուր ականջաց (ինչպես՝ Մի անգամ տեսածը հազար անգամ լսելուց լավ է):

35 Հավատը լսվածից է, իսկ լսվածը՝ Քրիստոսի խոսքից (*Հռոմ.* 10:17):

36 Ըստ այն առածի, թե՝ Մի՛ իմանար՝ զի հաւատասցես, այլ հաւատա՝ զի իմանայցես (Մի՛ իմացիր, որ հավատաս, այլ հավատա՛, որ իմանաս):

էլ ասի, չի կարող հաստատել: Եթե ծառի ինչ լինելը հայտնի լիներ, աշխարհն այն վատ ծառ պիտի համարեր, սակայն ծառի բնույթի կամ իսկության մեջ անպետքություն չկար[37], քանզի Աստված անպետք բան չստեղծեց[38]: Այո՛, կան որոշ բաներ, որոնք եթե մարդիկ կամ անասունները ուտեն, կմահանան, սակայն դրանց վերաբերյալ էլ վատը չի ասվում, քանի որ, անտարակույս, եթե Աստված ստեղծել է, ուրեմն մի բանի համար օգտակար են: Սրա վերաբերյալ եթե մեկն այլ մեկնություն տալով ասի, որ անպատճառ ծառ կամ ուտելու պտուղ չպիտի հասկանալ, Ս. գրքի իմաստը կխեղաթյուրի:

Պատիժը վատ գործի համար է, բայց վատ գործը երկու կերպ է լինում. մեկը՝ ինքն իրենով բնությամբ վատ է, օրինակ՝ մարդասպանություն, շնություն, գողություն, ստություն, ագահություն և սրանց նման այլ բաներ, որոնք, բնական օրենքներին հակառակ լինելով, արգելված են, և որոնք գործողները անպատճառ պատժի կարժանան, իսկ մյուսը արգելված լինելու համար է, որ վատ է ասվում: Առաջինը վատ կամ չար լինելու համար է արգելվում, երկրորդը արգելված լինելու համար է, որ չար է կոչվում:

Եթե բնությամբ ոչ չար բաների համար արգելք և պատվեր չկա, դրանք գործողները պատժի չեն արժանանում. օրինակ՝ մի թագավոր իր տերության մեջ ինչ-ինչ բաներ արգելում է, որոնք մեկ այլ թագավորի թագավորության մեջ արգելված չեն, դրանք գործողները կպատժվեն միայն արգելված թագավորությունում: Ահա այսպե՛ս հասկացիր նաև արգելյալ պտղի վերաբերյալ, քանզի եթե պատվերը չլիներ, այն ուտելը հանցանք

---

37 Ծառի պտուղը լավ է ուտելու համար (*Ծնող.* 3:6):

38 Որովհետև Աստծու բոլոր ստեղծածները բարի են, և խոտան բան չկա (*Ա Տիմոթ.* 4:4):

չէր լինի[39]: Ուրեմն խնդիրը պտղի և այն ուտելու մասին չէ, այլ անհնազանդության:

Հարց ԺԵ. **Ադամին պատվերը տալու ժամանակ Եվան ստեղծվա՞ծ էր:**

Պատասխան: Ստեղծված էր, և պատվերը երկուսի համար տրվեց: Բայց Ադամը իմաստուն և կնոջ վրա գերիշխան լինելով՝ պատվերը նրան տրվեց: Ադամը պարտավոր էր ուշադիր լինել, որ Եվան պատվերին հակառակ չգործեր, նույնպես Եվան պարտավոր էր Ադամի կողքից չհեռանալ, որի պատճառով էլ դրախտում մենակ շրջելու ժամանակ խաբվեց: Եվ եթե Ադամը, նրան հանդիմանելով, ինքն էլ չլսեր նրան, ոչ մի վնաս չկար, ինչպես որ Եվայի կերած ժամանակ մերկությունը չզգացին, չմերկացան, սակայն Ադամի ուտելուն պես մերկ լինելը իմացան[40]:

Շատ մեծ խոհեմություն է հարկավոր կանաց սեռը կառավարելու համար, որովհետև եթե նրանց իրենց ցանկությանը թողնես, շատ անգամներ անվայելուչ ընթացքի և վարքի հակվելով՝ իրենց և ուրիշների դժբախտության պատճառ են լինում:

Հարց ԺԶ . **Ինչո՞ւ արգելված պտղի ծառը բարու և չարի գիտության ծառ կոչվեց:**

Պատասխան: Քանզի պատվերը հիշյալ ծառի վերաբերյալ եղավ, և նորաստեղծ զույգը, դրա պտղից ուտելուն պես

---

39 Մեղքը պատվիրանով առիթ գտավ.... որովհետև առանց օրենքի մեղքը մեռած է (*Հռոմ.* 7:8):

40 Նա առավ պտղից և տվեց իր մոտ կանգնած ամուսնուն, և նրանք կերան: Երկուսի աչքերն էլ բացվեցին, և նրանք հասկացան, որ մերկ են (*Ծնող.* 3:6-7):

իրենց երանական վիճակը կորցնելով, մերկ և թշվառ դարձավ և այդ ժամանակ բարու և չարի տարբերությունը հասկացավ: Այս պատճառով այն բարու և չարի գիտության ծառ կոչվեց:

Բարու և չարի ծանոթությունը պատվերով է լինում[41]: Երբ մի պատվեր է տրվում, դրա վերաբերյալ տարակուսելով և հակառակը գործելով՝ անհնազանդություն և անիրավություն է առաջանում: Աստծու հրամանը իմանալով՝ փոխանակ այն առանց կասկածանքի, կատարյալ հնազանդությամբ հարգելու և պահելու, Եվան սատանայի թելադրանքով Աստծու նկատմամբ տարակուսեց, թե գուցե այդ պտուղը դիտմամբ խնայեց մեզ, որպեսզի մեր միտքը չբացվի, և այս կերպով իր վստահությունը Աստծուց վերացնելով՝ կերավ հիշյալ պտուղը: Ադամը նույնպես հանուն Եվայի սիրո ուտելուն պես առաջին անգամ փորձով հասկացավ անհնազանդության չար լինելու աստիճանը:

Հարց ԺԷ. **Ի՞նչ ենք հասկանում «մահով մեռնել» ասելով:**

Պատասխան: Մարդու մարմնի մահը բնական է, քանզի մարմինը իրար հակառակ չորս տարրերից է բաղկացած: Բայց հոգին, մասերից բաղկացած չլինելով, պարզ գոյացություն է, հետևաբար անկարելի է, որ մարդկային հոգին մահանա, և այն ընդունակ է ու կարող է, Աստծու շնորհներով առաքինություն գործելով, հավիտենական կյանքին հասնել[42], բայց նա, ով մահացու մեղք է գործում, պարգևված շնորհը

---

41 Մեղքը չէի ճանաչի այլ կերպ, քան օրենքով (*Հռոմ.* 7:7):

42 Աստծու շնորհը՝ հավիտենական կյանք Քրիստոս Հիսուսով (*Հռոմ.* 6:23):

կորցնում է և առանց շնորհի արքայություն մտնելու հնարավորություն չունենալով՝ հոգով հավիտենական մահացած է համարվում:

Որովհետև, օրինակ, մարդու աչքն առանց լույսի չի կարող տեսնել, նույնպես և հոգին առանց շնորհի չի կարող հավիտենական կյանքին արժանանալ, սակայն հոգին, բնությամբ անմահ լինելով, մեղքի պատճառով հավիտենական դատապարտության է արժանանում, և ահա այսպիսի պատժին է ասվում «մահով մեռնել»:

Հարց ԺԸ. **Սատանան ինչո՞ւ խաբեց մարդուն:**

Պատասխան: Իր չարության և նախանձի պատճառով: Քանզի սատանան, բոլոր հրեշտակների պարագլուխը լինելով, հպարտության պատճառով Աստծուց պատիժ ստացավ և դժոխքի դատապարտվեց[43]: Նա իր համառությամբ հավիտենական ապստամբության մեջ անզեղջ հարատևեց, մնաց: Որի համար էլ Աստծուն հակառակ լինելով՝ ի հեճուկս, դիտմամբ խաբեց մարդուն, որ իր նման ապստամբելով՝ առ Աստված ունեցած հնազանդությունից հեռանա և արքայությունից զրկվի:

Լա՛վ իմացիր, եթե սատանան մարդուն չխաբեր, միայն իր առաջին մեղքի պատիժը պիտի կրեր, սակայն մարդուն մեղքի մեջ գցելով՝ իր պատիժը ավելացրեց: Դժբախտաբար բոլոր նախանձոտ մարդկանց ընթացքը այսպիսին է. որպեսզի ուրիշների երջանկությունը խախտվի, իրենց պատիժն էլ սաստկացնում են:

---

43 Քանզի Աստված չխնայեց մեղանչած հրեշտակներին, այլ խավարի կապանքներով գցեց տարտարոսը, որ նրանք պահվեն դատաստանի օրվա համար (*Բ Պետ.* 2:4):

Հարց ԺԹ. **Սատանան ինչո՞ւ օձի միջոցով խաբեց մարդուն:**

Պատասխան: Սատանան, իր մեղքով թունավորված լինելով, և օձն էլ բնականից արդեն իսկ թունավոր է, այս պատճառով նրա միջոցով խաբեց մարդուն: Որովհետև մի այսպիսի ամենաչար և դավաճանության գործի համար նրան պետք էր օձի նման սիրտը թույնով լեցուն, երեսի վրա սողացող և ուղիղ քայլելու անընդունակ մի կենդանի գործիք: Մանավանդ որ օձը բոլոր կենդանիներից ավելի խորագետ էր[44], նրա միջոցով հեշտությամբ կարող էր իր նպատակին հասնել: Օրինակ՝ անիրավ մարդիկ այլ անմեղ մարդկանց իրավունքը հափշտակելու համար չարամիտ և ճարպիկ կեղծ վկաներ են իրենց հետ դատարան տանում, և ինչպես սատանան, ի սկզբանե օձի բերանով Աստծու պատվերին հակառակ մեկնություններ տալով, խաբեց մարդուն, այսպես էլ նա, միշտ օձի նման թունավոր և չարամիտ եղողներին գործիք դարձնելով, շատերի աղետալի կորստյան պատճառ է դառնում, և աշխարհի ավարտին էլ նեռի միջոցով շատ չարիքներ պիտի անի[45]:

Հարց Բ. **Աստված չգիտե՞ր, որ Ադամը մեղանչելու է, ինչո՞ւ պատվեր տվեց:**

Պատասխան: Գիտեր, սակայն Աստծու կանխագիտությունը մարդկանց մեղքի պատճառ չէ: Քանի որ Նրա գիտությունից չի ենթադրվում, որ մարդը մեղանչի, իսկ պատվերը հարկավոր էր, քանզի մեծի և փոքրի միջև տարբերությունն անհրաժեշտ է, և այս տարբերությունը կատարյալ սիրո և հարգանքի վրա

---

44 Օձը երկրի վրա Աստծու ստեղծած բոլոր գազաններից ավելի խորամանկ էր (*Ծնն.* 3:1):

45 Նրա՝ Անօրենի գալուստը Սատանայի ներգործությամբ է (*Բ Թեսաղ.* 2:9):

է հիմնված: Արդ, պատվի և մեծարանքի մեջ ամենաընդունելին մեծի հրամանը կատարելն է[46], այս պատճառով պատվեր տրվեց, որպեսզի մարդու առ Աստված ունեցած սերն ու Նրա պատվիրանը պահելու տրամադրվածությունը հայտնի դառնա: Քանզի մարդը բոլոր առումներով պարտավոր է սիրել և պատվել Աստծուն և այս այլ բանով չի կարող հայտնել, եթե ոչ Նրա պատվերը կատարելով:

Մանավանդ, Աստված պատվիրեց. այն գործադրելու միտքն ու կամքը նույնպես տվեց, որպեսզի մարդն իր մտքով ճշմարիտը ճանաչի և իր կամքով բարին սիրի: Արդ, ճշմարտության մեջ Աստծու հրամանը ամենաճշմարիտն է, և սիրելիների մեջ Աստծուց առավել սիրելի էակ չկա: Բացի այս, Աստված բավական շնորհ տվեց մարդուն, որ եթե հրամանին հակառակ գործի, ինքնաարդարացման տեղ չունենալով՝ հանցանքը մարդունը լինելը հայտնվի և պարզ երևա: Հիրավի, Աստված գիտի մարդու սիրտը, սակայն որպեսզի մարդուն ևս այն հայտնի լինի, պատվիրում է նրան, որով էլ մարդիկ պարտավորվում են Աստծու արդարությունը գովել, երբ հնազանդ եղողին՝ պատիվ և փառք, իսկ անհնազանդին պատիժ տա[47]: Եթե Աստծու պատվերը անհնարին մի բան լիներ, ոչ ոք չէր կարող այն կատարել, սակայն շատերը կատարեցին. և ով թերանում է իր պարտականությունները կատարելիս, ոչ թե անկարողության, այլ կամք չունենալու պատճառով է, քանի որ Աստված երբեք անկարելի բան չի հրամայում[48]:

---

46 Եթե մեկը սիրում է ինձ, իմ խոսքը կպահի (*Հովհ.* 14: 23):

47 Հիշի՛ր այն ամբողջ ճանապարհը, որով Տերը քեզ առաջնորդեց անապատի միջով, որպեսզի քեզ տանջելով փորձի և իմանա, թե ի՛նչ կա քո սրտում (*Բ Օր.* 8:2):

48 Քո սրտում մի՛ ասա՝ «Ո՞վ է ելնելու երկինք».... կամ «Ո՞վ է իջնելու անդունդ.... Մոտ է խոսքը քեզ, քո բերանում և քո սրտում (*Հռոմ.* 10:6-8):

Պատվերը նման է հարթ, ուղիղ ճանապարհի, որով ընթացողը շուտ և չմոլորվելով հասնում է նախատեսված իջևանին. եթե պատվեր չլինի, մարդը անկոխ և անհետք անապատում մոլորված ճանապարհորդի նման չգիտի գնալու ճանապարհը և հետևաբար իջևանին էլ չի կարող հասնել: Մանավանդ եթե պատվեր չլինի, կամ Աստված մարդուն ստիպի Իր պատվերը կատարել, այն ժամանակ մարդը վարձի չի արժանանա և անասունների աստիճանի կիջնի ու կստորանա: Իրոք, եթե բոլոր մարդիկ իրավունքի և արդարության համաձայն շարժվեն, պատվերի անհրաժեշտություն չի լինի, ինչպես օրինակ՝ Ենովքի, Նոյի, Մելքիսեդեկի, Հոբի և մյուս սրբերի պարագայում, բայց երբ շատերն ապօրինի ընթացքի հակվեցին, Աստված իր հրամանը, օրենքն ու կամքը Սուրբ Գրքի մեջ հայտնեց, որպեսզի «չգիտենք» ասելով՝ պատրվակների և պատճառաբանությունների չդիմեն:

Ուրեմն, ո՛վ մարդ, կա՛մ պիտի հնազանդվես օրենքին, կա՛մ հույսդ կտրես արքայությունից: Դու պահի՛ր Աստծու պատվիրանը, որպեսզի Աստված էլ քեզ փառավորի ըստ քո արժանիքների[49]:

Հարց ԻԱ. **Մի՞թե Աստված չգիտեր Ադամի թաքստոցի տեղը, երբ հարցնում էր՝ ո՞ւր ես:**

Պատասխան: Անշուշտ գիտեր, բայց նրան հարցնելը զղջման հրավեր էր, քանի որ ոչ թե նրա որտեղ լինելն է ուզում իմանալ, այլ ուզում է նրա՝ ինչ վիճակում լինելը նրան հայտնի դարձնել, որպեսզի զղջա և «մեղա՛» գոչի: Կարծես կամենում էր ասել. «Ո՛վ Ադամ, այս ի՞նչ թշվառ վիճակի մեջ ես հայտնվել, ո՞ւր է քո

---

49 Ես փառավորելու եմ ինձ փառավորողներին, իսկ ովքեր ինձ արհամարհում են, անարգելու եմ (*Ա. Թագ.* 2:30):

հոգևոր զարդարանքը, ո՞ւր է քեզ պարգևած շնորհը, ո՞վ քեզ այս դժբախտ վիճակի մեջ գցեց, այնպես որ նույնիսկ ծառի տերևներով ծածկվելու կարիքն ունես», սակայն Ադամը, իր մերկ լինելը պատրվակ բերելով, չզղջաց, «մեղա՛» չասաց: Ուշադրությո՛ւն դարձրու մարդու ողբալի վիճակին. փոխանակ մեղքի համար զղջալու, ընդհակառակը՝ մեղքի պատճառով ընդունած պատժի համար է գանգատվում, քանի որ մերկությունը մեղք չէ, այլ պատիժ: Այդ պատճառով Աստված պատասխանում է. «Քեզ ո՞վ ասաց, որ մերկ ես (քանզի այդ քո կամքով չէ), չլինի՞ թե «չուտես» ասված ծառի պտղից կերար, որի ուտելը կամ չուտելը քո ձեռքին էր»: Բայց Ադամը, «մեղա՛» չասելուց բացի, Եվային պատճառ բռնելով, Աստծու առջև ցանկացավ պատրվակներ բերել:

Ուշադրությո՛ւն դարձրու, որ Ադամը, պատվերին հակառակ գործելուն պես, Աստծուց իրեն շնորհված երանությունը կորցնելով հանդերձ, դեռևս դրախտում էր, և զղջալու փոխարեն Աստծու հարցմանը անտեղի պատասխաններ տալու համար է՛լ ավելի պատժի արժանացավ, որովհետև դրախտից արտաքսվելուց բացի, ստիպված եղավ ապրուստը նեղությամբ վաստակել[50], մանավանդ նրա ծանր սխալի պատճառով երկիրն էլ անեծքի արժանացավ[51]:

Մարդն իր մեղքերի համար ոչ միայն իր անձի, այլ նաև ունեցվածքի, զավակների և սիրելիների առումով է պատժվում, քանի որ մեղանչողը, Աստծու սիրուց երես դարձնելով, աշխարհի բաներին է սեր ընծայում, ուստի և իրավամբ նրանց միջոցով ևս պատժվում է[52]:

---

50 Քո երեսի քրտինքով ուտես հացդ (*Ծնող.* 3:19):

51 Անիծյալ լինի երկիրը քո արածի պատճառով (*Ծնող.* 3:17):

52 Ինչով մեղանչում է մարդ, նրանով էլ պիտի պատժվի (*Իմաստ.* 11:17):

Հարկավոր է իմանալ, որ Աստված որչափ գթած է, նույնչափ էլ արդար է. Նրա ողորմության կամ գթության հակառակ կանգնողը հարկավորաբար Նրա արդարությունից էլ է պատժվում, քանզի գթության արժեքը արդարությամբ է հայտնվում: Մի՛ ասա. «Եթե Աստված մարդու մեղքերը ների, ո՞վ ինչ կարող է ասել»: Իրոք, ոչ ոք չի կարող հանդգնել և խառնվել Աստծու գործերին: Սակայն որքան Նրա ողորմությունն է անչափ, նույնքան էլ Նրա արդարությունն է անչափ[53]: Եթե արդարություն չլինի, օրենքը կխախտվի, և օրենքը խախտվելուն պես ապստամբ հոգով ազատված և զորացած՝ մարդիկ աներկյուղ իրենց չար կամքի համաձայն են գործում, և հետզհետե բոլորն էլ միանգամայն ապականվում են:

Արդ, որևէ բանի արտոնություն տալը լինում է երկու պատճառով՝ կա՛մ հաճությունից, կա՛մ արգելելու անկարողությունից: Հայտնի է, որ Աստված մեղքը չի սիրում, քանզի սուրբ է: Նմանապես Նա, ամենակարող լինելով, իրավամբ պատժում է մեղավորին[54]: Այս աշխարհում մեղավորը որքան էլ պատժվի, դարձյալ գթության որևէ հետք կամ նշան կարելի է նշմարել նրա վրա[55]: Օրինակը պարզ տեսնում ենք Ադամով և Եվայով, որովհետև դրախտից վտարելու ժամանակ Աստված նրանց մերկ չթողելով՝ ծածկվելու համար (ոչխարի կաշվից) հագուստ տվեց[56], բայց մահանալուց հետո ողորմության դուռը փակվելով՝ մեղավորը արդարությամբ պատժվում է, ինչպես դժոխքում մեծատունին մեկ կաթիլ ջուր անգամ չտրվեց:

---

53 Իրավունքդ խոր անդունդի պես (*Սաղմ.* 35:7):

54 Տերը կործանում է բոլոր մեղավորներին (*Սաղմ.* 144: 20):

55 Տերն ինձ խրատելով պատժեց, բայց մահվան չմատնեց (*Սաղմ.* 117:17):

56 Տերը.... կաշվից հանդերձներ պատրաստեց (*Ծնող.* 3: 21):

Հարց ԻԲ. **Աստված Ադամին ինչո՞ւ ասաց. «Հող էիր և հող կդառնաս», քանի որ նա անմահ հոգի ուներ:**

Պատասխան: Որպեսզի Ադամն իր չափը իմանա, քանզի հող լինելով հանդերձ՝ նրան անմահ հոգի տվեց և այս կերպ նրան հրեշտակների աստիճանի բարձրացրեց և փառավորեց: Սակայն երբ Ադամը այս բարությունն ու շնորհը չհասկացավ, Աստված վճռեց, որ նա մահանալով իր նախկին՝ սկզբնական վիճակին վերադառնա: Եվ դարձյալ, հիրավի մարդու հոգին չի մեռնում, սակայն նա հրեշտակների նման միայն հոգի չէ, այլ նաև հողից շինված մարմին ունի: Արդ, մարդն իր ներկա վիճակում, եթե հոգուն համեմատ գեղեցիկ վարք ունենա, հրեշտակային պատիվ կստանա, իսկ եթե մարմնական անարժան վարք ունենա, հողի և անասունների աստիճանին է հավասարվում[57], քանի որ հոգևոր իղձերը թողած՝ միայն մարմնավոր զվարճություններին և ցանկություններին սիրով կապվելը դեպի հողը հակվել է նշանակում: Այս պատճառով էլ մեղավոր մարդուն «հող կդառնաս» ասաց[58]:

Հարց ԻԳ. **Աստված օձին ինչո՞ւ ասաց, թե քո որովայնի վրա սողաս և հող ուտես, մի՞թե արդեն իսկ չէր սողում և հող ուտում:**

Պատասխան: Այո՛, արդեն իսկ սողում և ուտում էր, ինչպես այժմ, բայց Աստված նրան անիծեց դրանով, որից հետո որովայնի վրա սողալը և հող ուտելը պատիժ դարձավ[59]:

---

57 Մարդը պատիվ ուներ, բայց չհասկացավ, հավասարվեց անբան անասուններին ու նմանվեց նրանց (*Սաղմ.* 48:13):

58 Հող էիր և հող էլ կդառնաս (*Ծնն.* 3:19):

59 Քո լանջի ու որովայնի վրա սողաս, ողջ կյանքումդ հող ուտես (*Ծնն.* 3:14):

Սրանից բացի, մարդու անկման գործիք լինելու պատճառով, ամենքին թշնամի դառնալով՝ Աստված մարդուն թույլ տվեց, որ նրա գլուխը ջախջախի[60]:

Սակայն հիշյալները ոչ միայն օձի, այլ նաև սատանայի վերաբերյալ հասկանալով, օձի՝ իր կրծքի վրա սողալով գնալն ու հող ուտելը, սատանայի հպարտությունը, ինչպես նաև կերակրի պատճառով մարդուն խաբելն ու մահվան դատապարտվելն է մատնացույց անում, որովհետև օձի կուրծքը՝ հպարտության, իսկ որովայնը որկրամոլության նշան է: Նմանապես մարդու գարշապարը օձի խայթելուն սպասելը, մարդուն մեղքի մեջ գցելու՝ սատանայի միշտ պատրաստ լինելը և մինչև մահ նրան չարիք հասցնելուց չդադարելն է մեզ հայտնում: Հոգևոր կամ կրոնական իմաստով մեր Տեր Հիսուս Քրիստոսը ջախջախեց սատանայի գլուխը, և նրա շնորհներով բոլոր առաքինի և բարեգործ մարդիկ, մեղքին դեմ կանգնելով, ջախջախում են սատանայի գլուխը[61]:

Հարց ԻԴ. **Աստված, պատժելով Ադամին, Եվային և օձին, ինչո՞ւ չարիքի հեղինակ սատանային որևէ բան չասաց:**

Պատասխան: Պատժի նպատակը՝ պատժվողից վերցնել այն լավը, որ ունի, նրան զրկել այն լավագույն բանից, որի վրա է դրել հույսը, կամ էլ նրա անձին տանջանք տալ: Բայց սատանան, Աստծու ներկայությունից հենց սկզբից հեռացած, այնքան զարգացավ չարության մեջ, որ նրա գոյությունից բացի

---

60 Թշնամություն պիտի դնեմ քո և այդ կնոջ միջև, քո սերնդի ու նրա սերնդի միջև: Նա պիտի ջախջախի քո գլուխը, իսկ դու պիտի խայթես նրա գարշապարը (*Ծնող.* 3:15):

61 Ահա ձեզ իշխանություն տվեցի կոխելու օձերի, կարիճների վրա (*Ղուկ.* 10:19):

նրանից հետ վերցնելու այլ բան չմնաց, և հուսալու ոչ մի բարի բան կամ լավության նշույլ չկար, որից զրկվեր: Նմանապես արդեն իսկ հանգստություն չունի, որ նրան տանջանք տրվի, քանզի Աստծու արդար դատաստանով միշտ տանջանքի մեջ է:

Մանավանդ Աստծու շնորհը կորցնելով՝ հուսահատության մատնվելը պատիժներից ամենասոսկալին է. արդ, սատանան, բոլորովին հուսահատ, միայն իր թշվառ գոյությունն է պահում, և առանց շնորհի գոյությունն էլ նույնպես մեծ պատիժ է նրա համար, քանի որ հավիտենապես տանջվում է: Այս աշխարհում մարդուն տրված պատիժը դեղի նման է, իսկ դեղը հիվանդին առողջանալու համար է տրվում. ինչքան էլ մարդը մեղանչելով հիվանդացավ, առողջանալու հույսը չկորցրեց, դրա համար տրվեց պատժի դեղը, որպեսզի բժշկվի: Բայց քանի որ սատանան մեռած մարդու նման դեղ ընդունելու անկարող եղավ, Աստված նրա մասին ոչինչ չասաց: Եվ դարձյալ, հրեշտակների դասերից սատանայի վռնդվելը «գլխիվայր անկում» բացատրությամբ մեզ հայտնում է Քրիստոսը[62]: Եվ այսպիսի անկումը սատանայի մեղքի աններելի լինելու նշանն ու պատկերն է, բայց Ադամին, դրախտից արտաքսելով, Աստված նրան դարձյալ դրախտի դիմաց մի վայրում բնակեցրեց, որպեսզի նա իր մեղքի ներումն ստանալու հույս ունենա[63]:

Հարց ԻԵ. **Կենաց ծառն ի՞նչ էր:**

Պատասխան: Մի հասարակ ծառ էր, սակայն անունը հայտնի չէ, դրա պտուղն այնքան զորություն ուներ, որ ժամանակ առ ժամանակ նրանից ուտողը, մահվան ենթակա չլինելով,

---

62 Տեսնում էի սատանային երկնքից ընկնելիս, ինչպես փայլակը (*Ղուկ.* 10:18):

63 Աստված դուրս հանեց Ադամին, բնակեցրեց բերկրության դրախտի դիմաց (*Ծնն.* 3:24):

Աստծու բարձր կամքի համաձայն, սահմանված ժամանակը լրանալուն պես պետք է արքայությանը արժանի դառնար. այս պատճառով Ս. գիրքը այն «կենաց ծառ» անվամբ է հիշատակում: Այս զորությունը ոչ թե ծառի բնությունից էր, այլ Աստծու կարողությունից, ինչպես որ ամեն տեսակ բույսերին առանձին-առանձին զորություն և հատկություն է պարգևել, որով մարդու մարմնում գոյացած ախտերի առողջարար դեղ են լինում, ինչպես փորձով տեսնում ենք:

Հարց ԻԶ. **Եթե Ադամը կենաց ծառից ուտեր, ի՞նչ կլիներ:**

Պատասխան: Եթե նախքան խաբվելը ուտեր, լավ կլիներ, որովհետև ինչպես վերը հիշատակեցինք, արքայություն կգնար, բայց եթե խաբվելուց հետո ուտեր, միշտ մեղքի մեջ մնալով՝ վատ հետևանքներ կունենար, որովհետև լավ է մեռնել, քան մեղքով ապրել, այս պատճառով Աստված Իր ողորմությամբ նրան դրախտից արտաքսեց, որպեսզի հիշյալ պտղից չուտի[64]:

Հարց ԻԷ. **Աստված ինչո՞ւ կենաց ծառի ճանապարհը պահպանելու հրաման տվեց հրեշտակներին (քերովբեներին):**

Պատասխան: Որպեսզի մարդիկ երկար ապրելու բաղձանքով նրա պտուղը չուտեն և այն չպաշտեն: Մանավանդ չլինի թե սատանան, դրա միջոցով մարդուն կյանք խոստանալով, մարդուն իրեն կապի, և դրանով չկարծվի, որ սատանան մարդու բարեկամն է, և խոսքն էլ ճշմարիտ է: Դարձյալ, քանի որ

---

64 Արդ, զուցե նա ձեռքը մեկնի, քաղի կենաց ծառից, ուտի և անմահ դառնա (*Ծնող.* 3:22):

Ադամը չափից ավելին գիտենալու իր բաղձանքն ունեցավ, այդ պատճառով քերովբեներին հրամայեց կենաց ծառի ճանապարհը պահպանել, որպեսզի մարդը անկարող լինի մերձենալու, որովհետև Քերովբե բառը «շատ իմացող» նշանակելով՝ Ադամի հանցանքի համեմատ պատշաճապես դատախազ կարգվեց նրա վրա[65]:

Դու նայի՛ր Աստծու ողորմությանը. մարդուն մեղքից խնայելու կամ զգուշացնելու համար այն աստիճան իմաստուն կարգադրություններ է անում, որոնց մեր խելքը անհասու է: Մի՛ ասա, թե Ադամը չի խաբվել. ինչո՞ւ Աստված սատանային չարգելեց մարդուն մեղքի մեջ գցել: Իրոք, եթե կամենար, կարող էր, սակայն Աստված պարտավոր չէ արգելել սատանային, քանի որ անհրաժեշտ կարողությունը՝ որպես զենք, տվեց նրան, որպեսզի դրանով հաղթի թշնամուն, հետևաբար հանցանքը մարդունն է, քանզի միտք և կամք ունենալով՝ կարող էր սատանայի դավաճանությունը իմանալ և նրա չար ու հրապուրիչ գործին դեմ գնալ, կանգնել:

Մասնավորապես կարող ենք ասել, որ այս տխրագին դեպքում Աստծու կարողությունը, գիտությունն ու բարությունը երևան պիտի գային, քանի որ մարդուն հասցրած սատանայի չարիքը բարիքի փոխարկելը, նրա կարողության համեմատ իմաստուն ճանապարհներ գտնելն Աստծու գիտության և իմաստության, իսկ Իր ողորմությունը ձրի շնորհելը Նրա անհուն բարության փայլուն և անհերքելի ապացույցներ են:

Նմանապես, երբ Աստված անմեղին՝ շնորհ և ողորմություն, իսկ մեղավորին պատիժ է տալիս, Նրա գթությունն ու արդարությունը հայտնվելով՝ լսողներն անշուշտ պետք է Նրա

---

65 Հրամայեց քերովբեներին... հսկել դեպի կենաց ծառը տանող ճանապարհները (*Ծնող.* 3:24):

արդար դատաստանը գովեն և ներբողեն: Եվ դարձյալ, մարդը, իր չափը ճանաչելով, չամբարտավանանա, և սատանայի չարությունը բոլորին հայտնի դառնա: Թող ուրեմն անխելք մարդիկ Ս. գրքի մեջ գրված նյութերի դեմ հիմարաբար չխոսեն, քանզի Աստծու խորհուրդները ոչ ոք չի կարող հասկանալ[66]:

Հարց ԻԸ. **Ո՞րն էր Ադամի հանցանքը:**

Պատասխան: Անհնազանդությունը[67]: Անհնազանդությունը ենթադրում է նախապես տրված մի պատվեր, և պատվերն էլ կերակրի վերաբերյալ եղավ. այսպիսով որկրամոլությունը մեղք համարվեց: Սակայն նա այն ոչ թե որպես սնունդ իր համար կերավ, այլ դրանով առավել գիտություն ստանալով՝ Աստծու նման բարին ու չարը ճանաչելու ցանկություն ունեցավ, այսպիսով գիտենալու անչափ բաղձանքը մեղք համարվեց: Դարձյալ. «Ի՞նչ կա այդ պտղի մեջ» ասելով՝ իր համար հետաքրքրության առարկա կամ կիրք դարձրեց, կամ թերևս միայն վախ տալու համար այդ պատվերը տրվեց, մանավանդ Եվայի սիրտը չկոտրելու համար. նրա սերը Աստծու պատվերից նախամեծար համարեց, քանզի Ադամը գիտեր[68], որ պատվիրազանցությունը մեղք է, և դրա հետևանքը՝ ծանր և աղետաբեր:

Հարց ԻԹ. **Ադամի հանցանքների համար ի՞նչ պատիժ տրվեց:**

Պատասխան: Անհնազանդության պատճառով երբ նրա անձի մեջ մարմնավոր ցանկություններն այլևս հոգուն

---

66 Ո՞վ իմացավ Տիրոջ միտքը, կամ ո՞վ խորհրդատու եղավ նրան (*Հռոմ.* 11:34):

67 Մեկ մարդու անհնազանդությամբ շատ մեղավորներ եղան (*Հռոմ.* 5:19):

68 Ադա՛մը չխաբվեց, այլ կի՛նը խաբվեց (*Ա. Տիմոթ.* 2:14):

չինազանդվեցին, իսկույն մեղքի խլրտոց զգաց, և ամոթից թզենու տերևներով ծածկվելու անհրաժեշտություն եղավ[69]:

Չափից ավելի գիտություն ստանալով՝ Աստծու նման բարին ու չարը իմանալ ուզելու փոխարեն իր ունեցած սուր հիշողության զորությունը տկարացավ, և մահվան վճիռ արձակվեց: Աստծուն կասկածելով՝ փոխարենը սատանայի գերին դարձավ: Պտղի գեղեցկությունը և համեղությունը ախորժելով, մարմնի կամ անձի վրա տեսակ-տեսակ ախտերի ենթարկվելով՝ ստիպված եղավ ապրուստն էլ տքնելով ձեռք բերել: Վերջապես կնոջ սերը Աստծու պատվերից բարձր համարելու համար էլ դրախտից արտաքսվելով՝ աշխարհի վիշտը կրելու դատապարտվեց:

Արդարև բոլոր մարդիկ՝ տղամարդիկ և կանայք, հիշյալ պատիժներին և ախտերին ենթարկվեցին, սակայն կանանց սեռին նաև ցավով զավակ ծնելու պատիժը տրվեց[70]: Այս պատճառով կինը պարտավոր է իրեն վիճակված նեղություններին և տրտմություններին ամեն կերպ համբերելով՝ միշտ հնազանդ լինել ամուսնուն: Երբեք մի՛ ասա, թե մենք, ոչ մի բանից տեղյակ չլինելով, միայն Ադամի պատճառով ենք այսքան նեղություն կրում: Այո՛, մեղք գործողը Ադամն էր, սակայն պատիժը տվողը Աստված է, և Նա, արդարադատ լինելով, ոչ մեկին չի զրկում և անիրավություն չի անում, մեկի հանցանքի փոխարեն երբեք ուրիշին չի պատժում: Սրա մեջ մի խորին գաղտնիք կա, որի մեջ մարդու միտքը անկարող է թափանցել: Միայն այսքանը գիտենք, որ Ադամը մարդկության նախահայրն է, հետևաբար իր սերունդը ևս իր հետ մեղավոր

---

69 Նրանք հասկացան, որ մերկ են, թզենու տերևներն իրար կարեցին և իրենց համար գոգնոց շինեցին (*Ծնն.* 3:7):

70 Ցավերով երեխաներ պիտի ծնես, քո ամուսնուն պիտի ենթարկվես, և նա պիտի իշխի քեզ վրա (*Ծնն.* 3. 7):

համարվեց[71]: Օրինակ՝ եթե ծնողները բորոտ լինեն, բնականաբար նրանց սերունդը նույնպես բորոտ կլինի, ինչպես նաև թունավոր որթատունկի գինին նույնպես թունավոր է լինում:

Հիշի՛ր, ինչպես որ դու, ոչ մի բանից տեղյակ չլինելով, մեղավոր դարձար, նույնպես էլ ոչ մի բանից տեղյակ չլինելով՝ փրկության արժանացար: Որովհետև մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, Ադամից մեզ ժառանգություն հասած հոգևոր մահից, այսինքն՝ սկզբնական մեղքից մեզ փրկելով՝ Ադամի կորցրածը վերստին մեզ շնորհեց: Մանավանդ Նրա շնորհներով ուրիշ շատ հոգևոր բարիքների արժանի լինելը մեզ վիճակվեց[72]: Սակայն մարմնի մահը և աշխարհի ցավերն ու վշտերը մնացին, որպեսզի մարդն աշխարհում նրանց գոյությամբ կարողանա առաքինություններին վարժվել և կատարելության մեջ զարգանալ և այլևս երբեք Աստծու հրամանի և օրենքներին դեմ չգործել: Ուրեմն Ադամին մի՛ մեղադրիր, ո՛վ մարդ, այլ հակառակը՝ Հիսուս Քրիստոսից, մեր Տիրոջից գոհ և շնորհակա՛լ եղիր ու մեղքից հեռո՛ւ մնա, որպեսզի դժոխքի տանջանքների չդատապարտվես:

Հարց Լ. **Ադամն իր զավակներին և թոռներին պատվիրանի վերաբերյալ ինչ-որ բան ավանդե՞ց:**

Պատասխան: Ընդունված է կարծել, որ Ադամը գոհ մատուցեց Աստծուն, և նրա որդիներն էլ գոհագործելը նրանից սովորեցին. մանավանդ առ Աստված աղոթք, աղաչանք,

---

71 Մենք մեր հայրերի հետ մեղանչեցինք (*Սաղմ.* 105: 6):

72 Մահը թագավորեց Ադամից մինչև Մովսես նույնիսկ նրանց վրա, որոնք Ադամի հանցանքի նման հանցանք չգործեցին:.... որովհետև եթե մեկի հանցանքով շատերը մեռան, որչա՛փ ևս առավել Աստծու շնորհները և պարգևները մե՛կ մարդու՝ Հիսուս Քրիստոսի շնորհով ավելացան շատերի մեջ (*Հռոմ.* 5:14-15):

փառաբանություն և գոհաբանություն մատուցելն ու սրանց նման այլ առաքինի ճանապարհներ ու միջոցներ և, անշուշտ, հրահանգներ տվեց ժամանակի կարիքների համեմատ:

Բայց հավանական է, որ հանդիմանության և պատժի արժանիների նկատմամբ լուռ մնաց, քանի որ բոլորին հայտնի էր, որ նրա հանցանքի համար մարդիկ այս աշխարհի տառապանքներին էին մատնվել, քանի որ մեկի գործած հանցանքը, իր համար բերանի սանձ և աչքի վարագույր լինելով, թույլ չէր տալիս, որ ուրիշների հանցանքը հիշելով՝ հանդիմանի կամ խրատ տա[73]:

Սակայն Նոյ նահապետը անիծեց իր Քանան թոռանը, երբ լսեց և իմացավ նրա հանցանքի մասին[74], նմանապես Հակոբ նահապետը իր որդիներ Շմավոնին և Ղևիին հանդիմանեց[75], երբ նրանք իրենց քրոջ՝ Դինայի համար կոտորեցին Սյուքեմի բնակիչներին: Որովհետև Նոյը և Հակոբը, հանցանք չունենալով և անմեղ լինելով, հանցավորին և մեղավորին հանդիմանելու համարձակություն ունեցան:

Հարց ԼԱ. **Ինչո՞ւ Աբելի զոհն ընդունելի եղավ, իսկ Կայենինը՝ ոչ:**

Պատասխան: Սիրով չմատուցվելու համար, քանի որ զոհը Աստծուն մատուցվում է որպես ընծա, իսկ ընծան սիրո նշան է: Եթե մարդու սրտում սեր չլինի, նրա ընծան ընդունելի չէ, և սերն էլ առանց սրտի նվիրումի չի լինում, այս պատճառով Աստված մարդու սիրտն է ցանկանում[76], քանի որ սիրտը

---

73 Ինչո՞ւ քո եղբոր աչքի մեջ շյուղը տեսնում ես, իսկ քո աչքի մեջ գերանը չես տեսնում (*Մատթ.* 7:3):

74 Անիծյալ լինի ստրուկ Քանանը (*Ծնող.* 9:25):

75 Ատելի դարձրիք ինձ (*Ծնող.* 34:30):

76 Տո՛ւր ինձ, որդյա՛կ, քո սիրտը (*Առակ.* 23:26):

նվիրողը իր կյանքն ու ամբողջ հարստությունն էլ կնվիրի: Արդ, Կայենի սրտի մեջ Աստծու սերը չլինելու պատճառով նրա զոհն ընդունելի չեղավ, քանի որ Կայենը երկրագործ էր, հողի արդյունքից ընծա բերեց, սակայն լավը և իր ժամանակին չընծայեց[77], մինչդեռ Աբելը, քանի որ հովիվ էր, պարարտ և նախածին կենդանիներից ընծայեց առանց ժամանակ կորցնելու:

Այն ժամանակի պահանջի համեմատ ընդունված ընծայի վրա երկնքից հրաշքով կրակ իջնելով ընդունելի լինելն էր հայտնի դառնում[78]: Աբելի զոհի վրա երկնքից հուր իջավ, իսկ Կայենի զոհի վրա չիջավ[79]: Թեպետ Կայենն այս պատճառով մեծ տրտմության մեջ ընկավ, սակայն իր արարքի համար չզղջաց և իր անտեղի տխրությամբ հանցանքն ավելի սաստկացրեց, քանի որ հանցանքը չգիտակցելով՝ իր զոհը չընդունվելու համար նեղսրտեց: Սակայն Աստված Իր ողորմությամբ ցանկացավ Կայենին ազդարարել, որ հանցանք գործեցիր, ուրեմն պետք է լռես[80]: Սակայն նա դարձյալ անզիջող մնաց:

Եվ քանի որ Աստված Աբելի պատարագը ընդունեց, հնարավոր է, որ անդրանկության պատիվն էլ նրան տար. Կայենը սկսեց կասկածել և Աբելին սպանելու չար խորհուրդը հղացավ: Նրան այս սոսկալի չարությունից հետ պահելու համար

---

77 Որոշ ժամանակ անց Կայենը երկրի բարիքներից ընծա բերեց Աստծուն (*Ծնող.* 4:3):

78 Որով վկայություն ստացավ, որ արդար է, քանի որ նրա մատուցած զոհերի համար նրան վկայություն տրվեց Աստծուն (*Եբր.* 11:4):

79 Աստված բարի աչքով նայեց Աբելին ու նրա ընծաներին, իսկ Կայենի ու նրա ընծաների վրա ուշադրություն չդարձրեց (*Ծնող.* 4:4-5):

80 Երբ արդար չես բաժանում, մեղանչած ես լինում, լո՛ւռ մնա (*Ծնող.* 4:7):

Աստված Կայենին հայտնում է, որ Աբելը նրան պիտի հնազանդվի, և ինքը պիտի իշխի նրա վրա[81]. կարծես թե ցանկանում է ասել. «Անդրանկության պատիվը քեզ է պատկանում, միայն թե զղջա՛ և եղբորդ չարիք մի՛ արա»: Բայց նախանձը թույլ չտվեց, որ Կայենն իր վատ և եղբայրասպան խորհրդից ետ կանգնի: Ենթադրվում է նաև, որ Կայենն իր ընծայի չընդունվելու պատճառով Աբելին Աստծուց գանգատվեց, որն էլ Աստծուն իրավունք տվեց Կայենի անիրավ լինելը հայտնելու, որից բարկանալով՝ Կայենը սպանեց իր եղբայր Աբելին[82]: Լա՛վ նկատիր, ինչպես որ բարձրից ընկնող քարը, արագությունը հետզհետե ավելացնելով, գետնին է ընկնում, այդպես էլ Կայենի չարությունը հետզհետե ավելի խորացավ: Անշուշտ մարդասպանությունը մեծ մեղք է, սակայն եղբայրասպանությունը՝ առավել ևս: Ամեն մի մեղք գործող պատժվում է, բայց նա, ով մեղքի հնարողն է դառնում, շատ ավելի մեծ պատժի է արժանի: Արդ, ինչպես որ Կայենը առաջին մարդասպանը եղավ, այդպես էլ Աբելը առաջին արդարն է այս երկրի վրա:

Սրանից բացի, երբ Աստված Կայենին հարցնում է, թե եղբայրդ ո՞ւր է[83], զղջալով մեղքը խոստովանելու փոխարեն, լրբորեն և իրեն հավասարին պատասխանելու նման ասում է. «Մի՞թե ես եղբորս պահապանն եմ», որով իրեն՝ անտեղյակի և անմեղի, իսկ Աստծուն էլ անգետի տեղ է դնում: Ո՛վ անգութ, քանի որ եղբորդ պահապանը չէիր, ինչո՞ւ նրա սպանողը եղար: Ո՛վ անողորմ մարդ, պարտավոր էիր պահպանել, քանի

---

81 Տե՛ս Սարգիս կաթողիկոսի մեկնությունը: Նաև՝ Այժմ Աստծու որդիներ ենք, և դեռ հայտնի էլ չէ, թե ինչ ենք լինելու (Ա *Հովհ.* 3:2):

82 Կայենը հարձակվեց իր եղբայր Աբելի վրա և սպանեց նրան (*Ծնող.* 4: 8):

83 Ո՞ւր է քո եղբայր Աբելը (*Ծնող.* 4:9):

որ եղբայրդ էր: Քանի որ հանցանք չունեցող մարդու նման պատասխանեց, և որպեսզի չկարծվի, որ Աստված անտեղյակ է նրա արած չարությանը, այդ պատճառով հայտնելով նրա ծածուկ գործածը՝ ասում է. «Եղբորդ արյունը քո դեմ բողոքում է ինձ»[84]: Բայց երբ այդ բռնավոր անգութը, նորից համառելով, մնում է իր անզղջության մեջ, այն ժամանակ Աստված վերջնականապես անիծում է նրան:

Այն ժամանակ Կայենը բոլորովին հուսահատվեց. Աստծու ողորմության և գթության դեմ պատասխան տալու համար նրա հանցանքն ավելի ծանրացավ, որովհետև իր մեղքը Աստծու ողորմությունից ավելի մեծ համարեց[85]: Այդ պատճառով Աստծու ողորմությանն այլևս իսկապես անարժան լինելով, ինչպես որ Աստծու սերն էր հանել իր սրտից, նույնպես էլ ինքը Աստծու առջևից անդարձ արտաքսվեց[86]:

Ով էլ որ լինես, ընթերցո՛ղ, լա՛վ մտապահիր այս կետը, ում գործին կամ օրինակին հետևես, նրա նման էլ հատուցում կունենաս: Աչքերիդ առջև պատկերացրո՛ւ Կայենի վիճակը. ձեռքերն ու ոտքերը դողում են, կանգնած տեղը երերում է, որևէ տեղ չի կարող մնալ, բոլորից վախենում է, ոչ ոք նրան չի համակրում և հարգում, երկիրն ու երկինքը նրան թշնամի են, և բոլոր արարածները նրան դահիճի նման են երևում, քանի որ բոլոր արարածների Արարչի հետ թշնամացավ: Աստծու մերժածին ամբողջ տիեզերքն է մերժում, կյանքը մահից վատթար է թվում, կյանքը նրա պատիժն է: Որովհետև գիտի, որ

---

84 Քո եղբոր արյան կանչը երկրից բողոքում է ինձ (*Ծնող.* 4:10):

85 Գործած մեղքս մեծ է թողության արժանի լինելու համար (*Ծնող.* 4:13):

86 Կայենը հեռացավ Աստծու մոտից (*Ծնող.* 4:16): Իսկ անիրավը բարկությամբ հեռացավ նրանից և կործանվեց իր եղբայրասպան զայրույթի մեջ (*Իմաստ.* 10:3):

արդարության դատաստանը՝ որպես դահիճ, իր սուրն է սրում, մի օր իր վրա սպանության ահեղ գործը կատարելու համար, և դժոխքն էլ պատրաստ է հավիտենական անշեջ հրով այրել իրեն:

Ո՛հ, Կայենը մահ է փնտրում, սակայն չի կարող գտնել, քանի որ ամբողջ աշխարհին սարսափազդու օրինակ և խրատ լինելու համար Աստծու հրամանով նրա վրա նշան դրվեց, որպեսզի ոչ ոք նրան չսպանի[87]. ահա՛ «մեղա՛» չասող անզիղջ մեղավորի ողորմելի և ահավոր վիճակը այս է:

Հարց ԼԲ. **Պատժից հետո Կայենն ի՞նչ եղավ:**

Պատասխան: Վերին աստիճանի վատթար վիճակի էր մատնվել. քանի որ Աստված Ադամի հանցանքի ժամանակ անիծելիս ոչ թե Ադամի անձին, այլ երկրին էր այն ուղղել. միայն Կայենին տրված անեծքը նրա անձի վրա թափելով[88]՝ թե՛ Աստծու շնորհներից, թե՛ երկրային և երկնային օրհնություններից զրկվեց, և ինչպես որ անմշակ և խոպան մնացած արտը փշերով է լցվում, այդպես էլ Կայենի մեջ ամեն տեսակ չարությունների սերմեր ծլեցին ու աճեցին: Ի վերջո Նայիդ կոչված գավառում բնակվելով՝ նրա սերունդը բազմացավ, և այնտեղ մի քաղաք կառուցելով՝ իր որդու անունով կոչեց այն, քանի որ իր անունը բոլորի համար ատելի էր:

Կայենի՝ երկրի վրա առաջին անգամ քաղաք կառուցելուց հասկացվում է, որ երկնային արքայության հույսը ամբողջությամբ կտրած՝ միայն մարմնական ցանկություններին էր անձնատուր եղել: Այսպես թշվառականը ամեն կերպ, Աստծու

---

87 Տեր Աստված նշան դրեց Կայենի վրա, որպեսզի ոչ ոք, ով հանդիպի նրան, չսպանի (*Ծնող.* 4:15):

88 Անիծյալ լինես դու երկրի վրա (*Ծնող.* 4:11):

բարության հիշատակն անգամ մոռանալով, օր օրի այնքան չարանա, որ ասվում է, թե վերջապես իր թոռան թոռ Ղամեքի ձեռքով անասունի նման մահացավ: Հիշյալ Ղամեքը, երբ մի օր իր ծառայի հետ անտառում որս էր փնտրում, Կայենն էլ այնտեղ ծառերի մեջ էր գտնվում, և ծառան կարծելով, թե այնտեղ ինչ-որ կենդանի կա, Ղամեքին իմաց տվեց, և նա էլ չիմանալով նետահարեց ու սպանեց նրան: Սակայն հենց հայտնի դարձավ, որ կարծեցյալ որսը Կայենն էր, Ղամեքը բարկանալով ծառային էլ սպանեց[89]:

Հարց ԼԳ. **Կայենից և Աբելից բացի Ադամը ուրիշ զավակ ունեցա՞վ:**

Պատասխան: Ունեցավ: Թեև Ադամը բազում արու և էգ զավակներ ունեցավ, սակայն միայն երեք որդիների անուններն են հայտնի՝ Կայեն, Աբել և Սեթ: Կայենն իր մեղքի պատճառով մերժվեց, Աբելը, դեռևս չամուսնացած, Կայենի ձեռքով սպանվեց, հետո Սեթի ծնվելով՝ Ադամի համար մեծ մխիթարություն եղավ: Մանավանդ Աստված նրան Իր շնորհներով էր զարդարում, որպեսզի մարդիկ Աստծու ողորմությունից հույսները չկտրեն: Այնպես որ Սեթի առաքինի և Աստծուն միշտ հնազանդ մնալու պատճառով նրա սերունդները Աստծու որդիներ կոչվեցին[90]: Սրա որդին Ենովսն էր, որը, առաջին անգամ հայտնի կերպով և պատվով ժողովրդի հետ Աստծուն երկրպագություն մատուցելով, աղոթք և աղաչանք արեց[91]: Դարձյալ նրա ցեղից էր Ենոքը, և քանի որ Աստծուն հաճելի և առաքինի

---

89 Ես մի երիտասարդ սպանեցի, որովհետև նա ինձ վիրավորել ու հարվածել էր (*Ծնն.* 4:23):

90 Աստծու որդիները տեսան (*Ծնն.* 6:2):

91 Նա հուսալով կանչում էր Տեր Աստծու անունը (*Ծնն.* 4:26):

էր, Աստված նրան մարմնով այլ տեղ փոխադրեց[92]: Նոյ նահապետը նույնպես նույն ցեղից էր և Աստծուն հավատարիմ ու հաճելի մարդ էր:

Մտքումդ պահի՛ր, որ Աստծուն կատարյալ հնազանդություն ցույց տվողը, որդիական պատիվ ստանալով, բոլոր տեսակ նեղություններից զերծ է մնում, ինչպես Նոյը Աստծու ողորմությամբ ջրհեղեղից ազատվեց, սակայն Աստծու հրամանին անհնազանդները, Աստծու որդիության պատվին չարժանանալով, մարդկանց որդիներ են կոչվում, ինչպես որ Կայենի ցեղի աղջիկները մարդկանց աղջիկներ կոչվեցին[93], որոնք հետո ջրհեղեղով կործանվեցին:

Հարց ԼԴ. **Աստված Ենոքին ինչո՞ւ փոխադրեց աշխարհից:**

Պատասխան: Մեղքի մեջ չընկնելու համար, քանի որ հիշյալ անձն առաքինի էր, Աստված նրան սիրելու պատճառով մեղավորների միջից այլ տեղ փոխադրեց, որ հանկարծ մեղքի մեջ չընկնի[94]: Մանավանդ մարդիկ իրենց հույսը չկտրեն Աստծու ողորմությունից և արքայությունից, այլ եռանդով և սիրով ջանան Նրան հաճելի լինելով՝ արքայությանը արժանանալ: Եվ դարձյալ հայտնի թող լինի, որ եթե Ադամը հնազանդության մեջ մնար, առանց մահ ճաշակելու արքայություն պիտի փոխադրվեր: Արդ, Ենոքն ամեն առումով հնազանդ էր, որի

---

92 Ենոքը սիրելի եղավ Աստծուն: Նա անհայտացավ, քանի որ Աստված նրան տարավ իր մոտ (*Ծնող.* 5:24):

93 Աստծու որդիները տեսան մարդկանց դուստրերին (*Ծնող.* 6:2):

94 Աստված սիրեց նրան (Ենոքին) և նրան՝ իր կենդանության ժամանակ մեղավորների միջից փոխադրեց երկինք... որպեսզի չարությունը չայլափոխի նրա իմաստությունը, կամ նենգությունը չխաբի նրա հոգին (*Իմաստ.* 4:10):

համար էլ Աստված նրան վերցրեց, որ իմացվի, թե մարդու՝ մահվան ենթակա լինելը միայն մեղքի պատճառով է[95]:

Սրանից բացի. եթե մարդիկ չմեղանչեին, բոլորն էլ արքայություն պիտի գնային, բայց այժմ ովքեր ճշմարիտ հավատքով հնազանդվում են Քրիստոսին (Մեսիային), միայն նրանք են արքայության արժանանում: Ենոքի ուր փոխադրվելը այս գլխի մեջ թեև գրված չէ, այնուամենայնիվ Ս. գիրքը մեկ այլ տեղ դրախտ անունով է հիշատակում այն[96]: Ս. Եկեղեցին նույնպես Ենոքի գտնված վայրը Վերին Երուսաղեմ և դրախտ է անվանում: Ենովքը՝ բնական օրենքի, իսկ Եղիա մարգարեն, մովսիսական օրենքի ժամանակներում հավատարիմ վկաներ լինելով, աշխարհի վերջին՝ Նեռի ժամանակ, վերստին պիտի գան՝ քրիստոնեական սուրբ հավատի ճշմարտությունը մարդկանց քարոզելու համար (Մաղաք. 4:5): Տե՛ս նաև Հայտ. 11:3:

Հարց ԼԵ. **Ինչո՞ւ ջրհեղեղ եղավ:**

Պատասխան: Մարդկանց մեղքերի պատճառով: Քանի որ թեև Սեթը իր ցեղի մարդկանց առաքինության ուղիղ ճանապարհը ցույց տվեց, սակայն Կայենի սերունդը, իր նախահորից վատ օրինակ տեսած և հետզհետե առավել չարանալով, բացի Նոյ նահապետից, Սեթի ցեղն էլ, Կայենի ցեղի անպարկեշտ և անամոթ աղջիկների հետ խառնակվեցին: Դրանով էլ ամենքն այն աստիճանի ապականության մեջ ընկան, որ այլևս չարն ու բարին չզանազանելով՝ ամեն մարդ մեղքը փառք ու պատիվ էր

---

95 Աստված մարդուն ստեղծել է անեղծ լինելու համար.... Մահը աշխարհ է եկել բանսարկուի նախանձով (*Իմաստ.* 2:23-24):

96 Ենովք հաճոյացավ Աստուծոյ և վերափոխեցաւ ի դրախտն (*Միրաք* 43:16):

համարում իր համար[97]: «Ամոթ է» ասելու համար անմեղ մարդ է պետք, «Ճի՛շտ քայլիր» ասելու, խրատելու համար ուղիղ մարդ է պետք: Արդ, երբ ամենքն այսպես վատթարությամբ և ամեն կերպ ախտերով վարակվեցին, իսկապես անհրաժեշտ եղավ, որ Աստված, Իր շնորհը նրանցից ամբողջությամբ վերցնելով, պատժի, քանի որ Նրա շնորհներին բացարձակապես անարժան գտնվեցին[98]: Որովհետև մեղքն այնքան շատացավ, որ Աստված մարդուն ստեղծած լինելու համար զղջման և բարկության նշաններ է ցույց տալիս[99]:

Արդարև, Աստված ամենակարող և ամենագետ է, Նա բարկություն և զղջում չունի, քանզի բարկությունը՝ անկարողության, իսկ զղջումը անգիտության հետևանքներ է: Այսպիսի խոսքերը մարդկանց ապականված վիճակի վերաբերյալ իրավացի գանգատն են ցույց տալիս, և որ մեղքն այնքան զարշելի և Աստծու սրբությանը հակառակ բան է, որ Նա մեղավոր մարդ ստեղծելու համար զղջա և բարկանալու չափ չհավանի նրան: Տե՛ս և հիացի՛ր Աստծու ողորմությամբ, որ հիշյալ ապստամբ մարդկանց ամեն առումով և անմիջական պատժի արժանի լինելու դեպքում Իր անսահման գթությամբ, իսկույն պատժելու փոխարեն, 120 տարի անց ջրհեղեղով պատժելու սպառնալիք է տալիս, որպեսզի վախենան, մեղա գան և բնաջնջմամբ կորչելու ահավոր վտանգից ազատվեն[100]:

---

97 Բազմացան մարդկանց չարագործությունները երկրի վրա, և ամեն ոք իր մտքում խնամքով չարիք էր նյութում (*Ծնն.* 6:5):

98 Իմ ոգին հավիտյան թող չմնա այդ մարդկանց մեջ, որովհետև նրանք մարմնավոր են (*Ծնն.* 6:3):

99 Եվ զղջաց Աստված, որ մարդ է ստեղծել երկրի վրա (*Ծնն.* 6:6):

100 Նրանց կյանքի սահմանը թող լինի հարյուր քսան տարի:.... Իսկ ես ահա ջրով կհեղեղեմ երկիրը՝ ոչնչացնելու երկնքի տակ գտնվող ամեն մի շնչավոր էակ (*Ծնն.* 6:3-17):

Քանի որ պատիժը ջրով պիտի լիներ, դրա համար էլ Աստված Նոյին հրաման է տալիս մի տապան կառուցել, որպեսզի ջրհեղեղը սկսելու ժամանակ դրա մեջ մտնելով՝ ազատվի: Մանավանդ մեղավոր մարդիկ, տապանի կառուցումը տեսնելով և հասկանալով, որ պատժի գործադրումը պետք է տեղի ունենա, փութային զղջալ: Իսկ ջրհեղեղի ժամանակ տապան մտնելու, փրկվելու հույս չունենալու համար նախապես Նոյին հայտնում է, թե ովքեր պիտի տապան մտնեն՝ ասելով. «Դու և քո որդիները, կինդ և որդիներիդ կանայք պիտի մտնեք տապան», որպեսզի ծածուկ չմնա, որ նրանցից բացի բոլորն էլ պիտի խեղդվեն: Դարձյալ, չմտածելու համար, թե աշխարհի վերջն է, հրամայում է, որ թռչունների և ցամաքային կենդանիների ցեղերը չկորչելու նպատակով, նրանցից արու և էգ տապան վերցվի, որպեսզի լավ հասկացվի, որ երկիրը վերստին պիտի ծաղկի ու շենանա, և թե սույն պատիժը միմիայն մարդկանց մեղքի համար է:

Հարց ԼԶ . **Նոյը չաղոթե՞ց Աստծուն, որ ների մարդկանց մեղքերը, կամ մեղավորներին չխրատե՞ց և կամ նրանց չհանդիմանե՞ց, որ իրենց չար ճանապարհներից հետ դառնան:**

Պատասխան: Հիրավի, Աստծուն հաճելի և ընդունելի է մեղավորի համար աղոթելը, սակայն մի պայմանով, որ մեղավորն էլ, իրեն հանցավոր ճանաչելով, զղջա, որովհետև Աստծուց ներում խնդրելը նշանակում է ճանաչել Նրա մեծությունը, իշխանությունն ու զթությունը, նաև մարդու կողմից խոնարհության և զղջման նշան պետք է լինի իսկապես: Ինչպես որ հայր Աբրահամի աղոթքով Աբիմելեք թագավորի (*Ծնող.* 20:17), Հոբ երանելու աղաչանքով իր բարեկամների (*Հոբ* 42:10), Մովսես մարգարեի պաղատանքով Իսրայելի ժողովրդի հանցանքները

ներվեցին (*Ելք* 32:30): Քանի որ սրանք, իրենց հանցանքը հասկանալով, միանգամից զղջացին: Սակայն ջրհեղեղի ժամանակ մարդիկ ոչ միայն իրենց մեղքերի համար չզղջացին, այլև օր օրի ավելի վատթարացան, և Նոյն էլ թեև աղոթեց նրանց համար, սակայն այն չընդունվեց, քանի որ հիշյալները, սաստիկ հպարտությունից փքված, իրենց ուժին էին ապավինել[101]: Նույնպես խրատի մասին Նոյը թե՛ Աստծու հրամանը խոսքով հաղորդելու, թե՛ առաքինությամբ նրանց բարի օրինակ լինելու պարտականության մեջ չթերացավ[102], բայց նրանք ամենևին չուղղվեցին, քանի որ մեղքը մարդու միտքն այն աստիճանի է կուրացնում, որ այլևս բարին ու չարը անկարող է զանազանել[103]: Նոյը, անկարող լինելով նրանց պատժել, տրտմում է նրանց ապօրինի վարքի համար: Քանի որ այն ժամանակ դատավոր և թագավոր չկար, յուրաքանչյուրը, իր ցանկությամբ շարժվելով, Աստծուց չէր երկնչում և մարդկանցից էլ չէր ամաչում. ընդ որում՝ ամենքն էլ գոռոզ և ամբարտավան էին, ամենքն էլ բռնակալ, ինքնագլուխ[104] և անամոթ, մի խոսքով՝ ինքնահավան, անգութ և բարբարոս լինելով, մեծից մինչև փոքրը զվարճությունների և շվայտությունների անձնատուր եղած՝ Նոյ նահապետի խրատներից և առաքինություններից ո՛չ ազդվում և ո՛չ էլ օրինակ էին վերցնում: Ինչպես որ նախապես հիշեցինք, 120 տարին անցնելով՝ տապանի կառուցումն էլ ավարտվեց, և այդքան երկար ժամանակահատվածում ոչ ոք չզղջաց և ոչ էլ ապաշխարեց:

---

101 Հենց սկզբից, երբ կործանվում էին ամբարտավան հսկաները (*Իմաստ.* 14:6):

102 Ջրհեղեղից փրկեց միայն ութ հոգու, այդ թվում նաև Նոյին՝ արդարության քարոզչին (*Բ Պետ.* 2:5):

103 Համաձայն առածի՝ Մեղքով բռնվածը մտքով էլ է բռնվում:

104 Այն օրերին հսկաներ էին ապրում երկրի վրա (*Ծնող.* 6:4):

Դու Աստծու մարդասիրությո՛ւնը տես, որ թեև արդարությամբ որոշել էր պատժել մեղավորներին, բայց ողորմած լինելով՝ անձրևի սկսվելուց յոթ օր առաջ հրամայում է Նոյ նահապետին, որ կենդանիներին, ինչպես նաև իրենց և նրանց համար անհրաժեշտ պաշարը վերցնելով, իր երեք որդիների՝ Սեմի, Քամի, Հաբեթի, իր կնոջ և որդիների կանանց հետ շտապի տապան մտնել: Արդ, Նոյը հրամայվածի համաձայն տապան մտնելուն պես, ո՛վ հրաշք, հրեշտակը դրսից փակում է տապանի դուռը[105], որ ուրիշ մարդ չկարողանա դրա մեջ մտնել, բայց ականատեսները ծիծաղելով ծաղրում են, քանի որ չէին հավատում, որ ջրհեղեղ է լինելու:

Հարց ԼԷ. **Բոլոր տեսակի անասուններից վերցվե՞ց տապանի մեջ:**

Պատասխան: Հայտնի է, որ ջրային կենդանիներին, խոնավությունից նեխած փայտի մեջ ապրողներից չվերցրեց, սնդի համար անպետք անասուններից երկու-երկու հատ՝ արու և էգ, իսկ ուտելի և Աստծուն զոհելու անասուններից արու և էգ, յոթական վերցրեց՝ հրամանի համաձայն:

Եթե առարկես, թե այդքան կենդանիներ մի ամբողջ տարի ինչպե՞ս տեղավորվեցին տապանում, կպատասխանեմ, որ տապանի երկարությունը երեք հարյուր կանգուն, լայնությունը հիսուն կանգուն և բարձրությունը երեսուն կանգուն լինելով, ներսն ու դուրսը նավթով պատած էր, վերևից ներքև մինչև մեկ կանգուն հաստությամբ սնդուկի նման կառուցվածք ունենալու պատճառով Տապան կոչվեց[106]: Իսկ ներսից երեք հարկերով ու զատ-զատ բնակության համար նախատեսված

---

105 Տեր Աստված նրա հետևից փակեց տապանը (*Ծնն.* 7:16):

106 Դու քեզ համար տապան կշինես (*Ծնն.* 6:14):

բաժիններ կառուցվեցին, որպեսզի կենդանիները չկարողանան միմյանց վնասել:

Պետք չէ ասել, թե Նոյն այսքան կենդանիներին ինչպե՞ս կարողացավ տապանում հավաքել, քանի որ ինչպես նրանց անուններ դնելու համար նրանք իրենք իրենց Ադամի մոտ եկան, նույնպես էլ իրենց փրկության համար Աստծու հրամանով տապանը մտնելով՝ Նոյ նահապետին հնազանդվեցին: Թեև տապանի կառուցման վայրը Աստվածաշնչում նշված չէ, սակայն համարվում է, որ Անտիոքի մեջ է կառուցվել, ինչպես որ Մովսես Խորենացին է իր «Աշխարհացույցի» մեջ նշում:

Հարց ԼԸ. **Երբ անձրևը սկսվեց, մարդիկ, դրա պատիժ լինելը հասկանալով, զղջացի՞ն:**

Պատասխան: Երբեք չզղջացին: Մարմնի աչքերին լույս է պետք, որ տեսնեն, հոգու աչքերին շնորհ է պետք, որ Աստծու բարերարությունը ճանաչելով՝ զղջումի գան. քանի որ Աստված նրանց մեղքերի պատճառով Իր շնորհը նրանցից վերցրած լինելով, ինչպես որ այնքան ժամանակ Աստծու բարիքը հասկանալու համար անկարող եղան, նույնպես և պատժի ժամանակ էլ տեսնելով հանդերձ չուղղվեցին: Այո՛, հնարավոր և անհրաժեշտ էր իմանալ ու հասկանալ, որ մի այդպիսի ահռելի տապան, որ Նոյը Աստծու հրամանով կառուցեց, անտեղի չէր կարող կառուցվել: Իհարկե մի գաղտնիք կար, մանավանդ այդքան կենդանիներ, լեռնային և դաշտային թռչուններ և գազաններ հրաշալի տնօրինությամբ տապան էին մտնում, և Նոյը այսչափ գեղեցիկ հանդիսավորությամբ դրա մեջ է բազմում. այս տեսնելով՝ փոխանակ խրատվելու, ընդհակառակը, արհամարհեցին, և իրենց շվայտ կերուխումն ու

անառակությունը ուրախությամբ շարունակելով՝ ամեն առումով անհոգ էին մնում[107]:

Լա՛վ հաշվի առ այստեղ թշվառ մեղավորների վիճակի որպիսությունը. քանի որ մեղքի չափը լցված լինելուն պես աղեղից արձակված նետի նման հանկարծ երկնքի ու երկրի ամբարների և աղբյուրների բացվելու հրաման է տրվում, որ արդարության տարիներին արձանագրված պատժի վճիռը իսկույն գործադրվի[108]: Ահագին մրրկի պես փչելով՝ հողմը երկնքի երեսն է ծածկում, և կարծես թշնամու դեմ պատերազմ մղելու համար անձրևի նետերն իջնում են ամենայն ուժգնությամբ: Մարդիկ, նախ մի հասարակ անձրև կարծելով, մտածում են, որ շուտով կդադարի, և «զվարճությանը արգելք մի՛ եղեք» ասելով միմյանց խրախուսում են: Սակայն երբ օրը սկսում է մթնել, և անձրևը հետզհետե ավելի է ուժգնանում, այն ժամանակ, «այս ի՞նչ տարօրինակ բան է» ասելով, մտատանջության մեջ են ընկնում, այն ժամանակ բանը բանից անցած լինելով՝ պատսպարվելու տեղ են փնտրում:

Երբ ապաշխարելու ժամանակ կար, խնդալով և ծիծաղելով ծաղրեցին, հիմա աղաղակելով ողբում և արտասվում են, սակայն լսող չի լինի, ինչպես որ իրենք Աստծու հրամանը չլսեցին[109]: Ո՞ւր են նրանք, ովքեր, ուտելով և խմելով զվարճությունների մեջ և անարժան հաճույքների անձնատուր եղած, ամեն տեսակ հորդորանքներ և խրատներ արհամարհելով, արդար Նոյին քամահրելով և երգիծական լեզվով հեգնում էին: Ի՞նչ եղան իրենց բազկի զորությանը ապավինած

---

107 Ուտում էին և խմում, կին էին առնում ու մարդու էին գնում, մինչև այն օրը, երբ Նոյը տապանը մտավ (*Մատթ.* 24:38):

108 Ժայթքեցին ստորգետնյա բազում աղբյուրներ, բացվեցին երկնքի ջրվեժները (*Ծնող.* 7:11):

109 Որովհետև կանչում էի, բայց դուք չէիք լսում (*Առակ.* 1:24):

քաջերը, հիմա ի՞նչ են խորհում այդ անառակության տիղ-մի մեջ խոզի նման թավալվող արարածները: Անիրավ մարդը որտե՞ղ պետք է պահի զրկանքներից ձեռք բերած ապրանքն ու հարստությունը, քանի որ ջուրը ամբողջ երկիրը պատեց: Տե՛ս, ոմանք, ճաշի սեղանը թողած, փախչելու տեղ են փնտրում, մյուսը, իր սիրելիից բաժանված, իր ազատվելու ճարն է անում, մեկ ուրիշն իր հարազատ մանկանը գրկից նետում է, մանուկները լալիս են, երիտասարդները ծառերն են բարձրանում, ծերերը երիտասարդներից օգնություն են սպասում, վերջապես մեծն ու փոքրը խելագարված, ձեռքերն և ոտքերը դողալով, կուրծքներն են ծեծում, ոչ մեկը ոչ մեկին չի օգնում, քանի որ ամեն մեկը հուսահատորեն իր փրկության մասին է հոգում:

«Ավա՛ղ, այս ի՞նչ դժբախտություն է,- ասում են,- Նոյը մեզ ասաց, սակայն մենք չհավատացինք, նրան հիմարի տեղ դրեցինք, սակայն նա՝ իմաստուն, իսկ մենք հիմար ենք եղել. երանի՛ նրան, որ պատսպարվել է տապանի մեջ, վա՛յ մեզ, որ պիտի կորչենք: Ահա չորս տարերք մեզ թշնամացել են. հողը բերանը բացել է, որ կուլ տա, ջուրը հորդում է, որ խեղդամահ անի, հողմը սաստկաբար շնչում է, որ կործանի, հուրը մինչև այն աստիճան է մեր սրտերը այրում, որ բոլոր ջրերը չեն կարող մարել, երկինքը սև-սև ամպերով երեսը ծածկեց մեզնից, ցամաքն անգամ ջրի մեջ անտեսանելի դարձավ»:

Ոմանք էլ դեռ հույս են տածում, թե արդյոք տապան մտնել հնարավոր չէ՞, որովհետև տապանից բացի ապավինելու այլ տեղ չկա, սակայն դրա դուռն էլ փակ է: Անձրևը միօրինակ սաստկությամբ և հեղեղի նման թափվում է, ջուրը տներն է մտնում. ներքևի հարկերի բնակիչները վերևի հարկերն են բարձրանում և այնտեղից էլ վազում դեպի կտուր այնտեղ փրկություն գտնելու հույսով, սակայն իսկույն հուսախաբ են

լինում՝ տեսնելով, որ ջրերը կատաղորեն այնտեղ էլ հասան, և հույս չկա: Արդարև ողորմելի վիճակ:

Քանի որ անձրևի ընթացքին նայելով՝ խեղդամահ լինելը ստուգապես գիտեին, և թեպետ հեղեղանման արտասուք թափելով՝ կսկծագին հառաչանքներով ողբացին և կոծեցին, բայց անօգուտ, քանզի թողության և ներման ժամանակն անցել էր: Իրոք, եթե պատժի երևալուց օր առաջ «մեղա՛» ասելով մի կաթիլ արցունք թափեին, իրենց մեղքերի ներում ստանալով՝ սոսկալի պատուհասից կազատվեին: Քանի որ ոմանք հույս ունեին, որ բարձր լեռների վրա կարելի է փրկություն գտնել, սակայն այն լեռները հասնելու համար քաջություն է անհրաժեշտ. քանի որ սար ու ձոր ջրի տակ մնացին, դաշտում եղողները թեև բարձրացան լեռները, սակայն չփրկվեցին, քանի որ ջուրը այդ լեռներից էլ տասնհինգ կանգուն վեր բարձրացավ[110], ուրիշները ջանում էին լողալ, բայց ի՞նչ օգուտ. անձրևը քառասուն օր և քառասուն գիշեր տեղատարափ թափվեց. ցամաքը բոլորովին աներևութացավ. և տապանից դուրս գտնվող բոլոր մարդիկ և անասունները ջրասույզ կորան[111], ինչպես որ վճռված էր Ամենակալի կողմից:

Խրա՛տ առ, ո՛վ մահկանացու, սույն ահեղ եղելությունից, նկատի՛ր, որ Նոյը ջրի վրա անվնաս մնաց տապանում, մինչդեռ մեղավորները ցամաքի վրա խեղդվեցին: Աստծու զորությունը՝ այսպես անդիմադրելի, իսկ նրա խորհուրդները և իմաստությունն անքննելի են. Նա Իր հավատարիմ ծառային պահպանում է, որտեղ էլ որ լինի նա, իսկ նենգավորին

---

110 Տասնհինգ կանգուն ավելի բարձրացավ ջուրը և ծածկեց բոլոր լեռները (*Ծնող.* 7:20):

111 Երկրի վրա անձրև թափվեց քառասուն օր և քառասուն գիշեր.... Աստված բնաջնջեց երկրի երեսին գտնվող ամեն մի էակ (*Ծնող.* 7:12, 23):

չարաչար պատժում է: Ջրի հարյուր հիսուն օր բարձրանալուց հետո[112] տապանը Հայաստանի Արարատյան գավառի Մասիս լեռան վրա նստեց[113]: Մի՛ ասա, թե մի՞թե դրանից բարձր լեռ չկար, որ տապանը դրա վրա նստեր. հնարավոր է, որ լինի, սակայն քանի որ այդ նավի նավապետը Աստված էր, դրա Մասիս լեռան վրա կանգնելը կամեցավ[114]:

Ուրեմն հիմա, ո՛վ մեղավոր մարդ, միշտ խորհի՛ր այս բաների մասին, քանի որ այդ մարդկանց հետ պատահածը մի օր քեզ էլ պիտի պատահի, մանավանդ դու ավելի արժանի ես պատժի, քանի որ նրանք Նոյ նահապետի քարոզչությունը չլսեցին, իսկ դու Քրիստոսի Ավետարանը չես լսում, նրանց համար նախօրինակ չկար, իսկ քեզ համար թեև բազում օրինակներ կան, չես ուղղվում և միայն հանույքներիդ ես հետևում:

Մտքումդ ինքդ քեզ մի լեռան վրա պատկերացրո՛ւ, այնտեղ այն ժամանակ գործածդ մեղքերը, որոնք չցանկացար խոստովանել, ջրհեղեղի նման քեզ պիտի շրջապատեն, որպեսզի ընկղմեն[115], քանի որ Քրիստոսը դատաստանի օրը ջրհեղեղի է նմանեցնում[116]: Մարմնի թշնամին ինչքան էլ անգութ լինի, նրա իշխանությունը մինչև մահ է հասնում, իսկ մահացու մեղքը, այս աշխարհում մարդու կորստյան

---

112 Ջուրը հարյուր հիսուն օր ողողեց երկիրը (*Ծնող.* 7:24):

113 Տապանը նստեց Արարատ լեռան վրա (*Ծնող.* 8:4):

114 Հենց սկզբից, երբ կործանվում էին ամբարտավան հսկաները, աշխարհի լույսը, ապավինելով լաստանավին և ղեկավարվելով քո ձեռքով, փրկվեց (*Իմաստ.* 14:6):

115 Ինչո՞ւ վախենամ չար օրերին, երբ կյանքիս անօրենություններն ինձ պաշարեցին (*Սաղմ.* 48:6):

116 Ինչպես Նոյի օրերն էին, այնպես պիտի լինի մարդու Որդու գալստյանը (*Մատթ.* 24:37):

պատճառ լինելուց բացի, հանդերձյալ կյանքում ևս հավիտենական դատապարտության է առաջնորդում: Մահացու և մեծ մեղքի մեջ ընկնող մարդը Աստծու սիրո կապը խզած, Աստծուց փախչել ցանկացող մեկին է նմանվում, միայն թե Աստված ողորմած լինելով, հովվի կորած ոչխարին փնտրելու նման, բազմիցս մեղավորին դարձի է հրավիրում[117]: Սակայն նա, ով չի դառնում և օր օրի չարության և մոլորության մեջ առաջադիմում է, ահա այն ժամանակ Աստված վերցնում է Իր շնորհը: Մարդու համար Աստծու շնորհից զրկվելուց ավելի մեծ պատիժ չի կարող լինել: Որովհետև չափը լցված, պատժի վճիռը կայացնելուն պես հետ դառնալը անհնար է, ինչպես որ պատահեց վերոհիշյալ ապստամբների, Սոդոմի և Գոմորի բնակիչների, փարավոնի և այլ շատերի հետ. արդ, եթե պատժից ազատվել ես ցանկանում, մեղք մի՛ գործիր, և եթե սխալվելով մեղքի մեջ ընկար, ուղիղ սրտով զղջա՛. այս է և այս պիտի լինի ողջամիտ մարդու ընթացքը:

Հարց ԼԹ. **Նոյը կորուսյալներին կարեկցելով չտխրե՞ց:**

Պատասխան: Տխրեց, քանի որ մարդը պարտավոր է կարեկցել վշտացածներին, բայց նա, ով Աստծու հրամանին հակառակ է կանգնում, իրավացիորեն պատժվում է: Արդ, Աստծու արդարության օրենքի համաձայն անզիղջ մեղավորի պատիժը տեսնելով՝ ամեն մարդ պետք է, Աստծու դատաստանը գովելով, իր համար անպատճառ խրատ առնի: Այո՛, Նոյը տխրում էր, սակայն ոչ թե Աստծու տված պատժի, այլ մարդկանց անօրեն ընթացքի համար, որով իրենք իրենց դատապարտության պատճառ են դառնում:

---

117 Դարձե՛ք դեպի ինձ, և ես կդառնամ դեպի ձեզ (*Մաղաք.* 3:7):

Հարց Խ. **Ջրհեղեղը ո՞ր ամսին եղավ:**

Պատասխան: Ենթադրվում է, որ մայիսին եղավ: Որովհետև եթե ձմռանը կատարվեր, կասվեր, թե բնական օրենքի համաձայն կատարված մի միջադեպ է, և նաև գարնանային եղանակը, զվարճությունների ժամանակ լինելով, այդպիսի մի զվարճության ժամանակ պատժի հանդիպելը առավել տրտմառիթ պիտի լիներ հեշտասեր և զվարճասեր անխիղճ և անզիղջ մարդկանց համար:

Հարց ԽԱ. **Նոյն արդյո՞ք գիտեր, թե որքան պետք է մնար տապանում:**

Պատասխան: Չգիտեր, քանի որ Աստված դրան ժամանակ չտրամադրեց, և նա էլ չհարցրեց, քանի որ կատարյալ հնազանդության պայմանն է, որ առանց պատճառ հարցնելու միայն հրամանի գործադրությանը ուշադրություն հատկացնել:

Հիրավի, Նոյը հավատարիմ լինելով, առանց իր հնազանդության պարտականությունների մեջ թերանալու, իր որդիներին էլ էր մխիթարում, որպեսզի Աստծու ողորմությունից իրենց հույսը չկտրեն: Արդարև, այս գործը շատ մեծ նեղության և իր նախընթաց օրինակը չունեցող չարչարանք էր, քանի որ իր տունը և հանգիստը թողնելով՝ ստիպված եղավ տապանը մտնել, մանավանդ դրանից դուրս գալն էլ իր ձեռքին չէր, սակայն ապստամբների գլխին գալիք չարիքը և իր ընտանիքի հրաշքով փրկվելը մտաբերելով՝ Աստծուց գոհանում էր, ինչպես որ կատարյալ հավատքը Ս. գրքի մեջ գովությամբ է հիշվում[118]:

---

118 Հավատո՛վ է, որ Նոյը, պատգամ ստանալով դեռևս անտեսանելի բաների մասին, վախից բռնված, իր ընտանիքի փրկության համար տապանը պատրաստեց, որով և դատապարտեց աշխարհը և ժառանգորդ եղավ այն արդարության, որ հավատից է (*Եբր.* 11:7):

Հարց ԽԲ. **Նոյն ինչքա՞ն ժամանակ մնաց տապանում:**

Պատասխան: Մեկ տարի, քանի որ հարյուր հիսուն օր ջուրը միօրինակ բարձրանալուց հետո, փա՛ռք Աստծո, սկսեց նվազել, և լեռների գագաթները երևացին[119]: Սակայն եթե ջուրը արագ-արագ քաշվեր, ապա դիակների հոտը, օդը ապականելով, կարող էր վնասել նավից դուրս եկողներին, ուստի ջրի այդքան ժամանակ մնալու հետևանքով՝ դիակների մի մասը ձկները կերան, իսկ մնացած մասը փտեց:

Ապա ևս քառասուն օր անցնելուց հետո Նոյը, տապանի պատուհանը բացելով, արձակեց ագռավին, որպեսզի երկրի վիճակի մասին տեղեկություն ստանա, բայց այն, իր որկորի հոգսերով զբաղված, հետ չդարձավ: Ապա հեզաբարո աղավնուն արձակեց, որը, թառելու տեղ չգտնելով, հետ դարձավ: Յոթ օր հետո նորից աղավնուն արձակեց, որը, որպես ավետաբեր բերանում մի ճյուղ վերցրած, վերադարձավ տապան[120]: Նոյը, այդ տեսնելով, հասկացավ, որ ջրերը քաշվել և ցամաքել են: Յոթ օր դարձյալ սպասելուց հետո վերստին արձակեց նրան, որն այլևս հետ չդարձավ: Ուստի Նոյը տապանի վերևի մասը բացեց և ցամաքը տեսնելու ժամանակ, որպես մի նոր աշխարհ եկած մարդ, շատ ուրախացավ: Աստված հրամայեց, որ տապանից դուրս գան՝ ինքը և իր կինը, որդիներն ու նրանց կանայք և բոլոր կենդանիները:

---

119 Ջուրը գնալով իջնում, քաշվում էր.... Երևացին լեռների գագաթները (*Ծնն.* 8:3, 5):

120 Աղավնին նրա մոտ վերադարձավ երեկոյան: Նրա կտուցին ձիթենու մի շյուղ կար (*Ծնն.* 8:11):

Հարց ԽԳ. **Ինչո՞ւ տապանը մտնելու ժամանակ նախ Նոյը և իր որդիները, ապա կինը և որդիների կանայք մտան, մինչդեռ դուրս գալու ժամանակ նախ Նոյը իր կնոջ հետ դուրս եկավ, հետո որդիները և իրենց կանայք միմյանց հետևից դուրս եկան:**

Պատասխան: Տապանը մտնելու ժամանակ կնոջից բաժանված տղամարդու մուտքը տապան նրանց զավակ գոյացնելու ցանկություն չունենալն է ցույց տալիս: Քանի որ տապանը նրանց փրկության համար էր կառուցված և կարգադրված, որպես ապաշխարանքի տեղ, վայել էր, որ այնտեղ մարմնական հաճույքներից զերծ մնային, ինչպես որ Ս. Եկեղեցին ապաշխարության օրերին մարմնի հաճույքները արգելում է:

Իսկ դուրս գալու ժամանակ յուրաքանչյուրի հետևից իր կնոջ ելնելը զավակ ունենալու թույլտվության նշան է:

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՐ

Հարց Ա. **Երկրորդ դարը ինչո՞վ է տարբերվում առաջինից:**

Պատասխան: Այն ուխտով, որ Աստված կապեց Նոյի հետ՝ օրհնելով նրան, երբ նա, տապանից դուրս ելնելով, զոհ մատուցեց Աստծուն: Այո՛, առաջին դարում մարդկանց անարդար վարք ու բարքի պատճառով Աստված պատժեց նրանց, բայց երկրորդ դարում մարդասիրությամբ մխիթարում է, որ չհուսահատվեն: Քանի որ Նոյը տապանից դուրս գալուց հետո երկնքում փրկության նշան սկսեց երևալ, այս առթիվ ծիածանը հաշտության նշան կոչվեց:

Հարց Բ. **Նոյը տապանից դուրս գալուց հետո որտե՞ղ բնակվեց:**

Պատասխան: Հայաստանի Արարատյան գավառի Մասիս լեռան մոտ Նախիջևան կոչված տեղում, որն «առաջին իջևան» է նշանակում: Այստեղ լա՛վ ուշադրություն դարձրու Նոյի առաքինությանը. նա, որ մի տարի տապանի մեջ փակված էր, դուրս ելնելով, դեռևս ուրիշ որևէ բանով չզբաղված, անմիջապես սեղան կառուցելով, զոհությամբ և շնորհակալությամբ զոհ է մատուցում Աստծուն՝ Նրա բարության համար[121]:

Կարծիք կա, որ Նոյ նահապետից առաջ սեղան կառուցող չեղավ, թեպետ Աբելը զոհ մատուցեց, սակայն սեղան կառուցելու մասին գրված չէ: Մասնավորապես Նոյի մատուցած զոհը կամ ընծան այնքան հաճելի եղավ Աստծուն, որ «Տեր Աստված հոտոտեց անուշ բույրը» գեղեցիկ բացատրությամբ է հիշատակվում[122]: Աստված, ընդունելով Նոյի

---

121 Նոյը զոհասեղան շինեց Աստծու համար: Նա առավ բոլոր տեսակի անպիղծ անասուններից, բոլոր տեսակի անպիղծ թռչուններից և ողջակիզեց զոհասեղանի վրա (*Ծնն.* 8:20):

122 Տեր Աստված հոտոտեց անուշ բույրը (*Ծնն.* 8:21):

զոհը, օրհնում է նրան և նրա որդիներին, միևնույն ժամանակ ուխտ հաստատելով՝ խոստանում է, որ այլևս ջրհեղեղ չի լինի[123]: Հիրավի, նախապես Աստծու օրհնությունը ստացավ, սակայն այս անգամ նորից օրհնություն շնորհելով՝ Աստծու ողորմության դուռը վերստին բացվեց: Որովհետև հրամայում է, որ աճեն և բազմանան, նախկինի նման երկրին տիրեն, և միս ուտելու արտոնություն ևս տրվեց, որ առաջ թույլատրված չէր:

Հարց Գ. **Մի՞թե ծիածանը արդեն չէր երևում, որ Աստված այն հաշտության նշան է հայտարարում:**

Պատասխան: Այո՛, երևում էր, սակայն ջրհեղեղ չլինելու պայմանով Աստված հատկապես Իր ուխտի և հաշտության նշան դրեց այն, որ մարդիկ տեսնելով գիտենան, թե Նա իրենց հետ հաշտվել է, և ուրախ լինեն: Օրինակ՝ եթե մեկը ձեռքին գավազան կամ մատին մատանի դնելու նախնական սովորությունը ունեցած լինի, և թագավորն այդ մարդու վերաբերյալ հայտարարի, թե՝ «Այս գավազանը կամ մատանին որքան այս մարդու ձեռքին տեսնեք, պիտի իմանաք, որ նա իմ բարեկամն է», նույնպես և ծիածանը, թեև արդեն ամպերի մեջ երևում էր, բայց հետո հաշտության նշան համարվեց, որպեսզի մարդիկ երկյուղածության զգացումով մեղքից հեռու մնան:

Քանի որ հաշտությունը թշնամություն կամ բարկություն է ենթադրում, երբ ասում ենք՝ «Աստված հաշտվեց մարդու հետ», նշանակում է, որ նախապես բարկացած էր, իսկ բարկությունն էլ հանցանքի համար է լինում: Ահա այս

---

[123] Ահա ես ուխտ եմ դնում ձեզ հետ. այլևս ոչ մի էակ չի մեռնի ջրհեղեղից (*Ծննդ.* 9:11):

տեսությամբ, երբ ծիածանը տեսնենք, պետք է խորհենք, որ պարտավոր ենք Աստծու պատվիրաններին հակառակ չգործել, որպեսզի նորից մեզ վրա բարկանալով՝ չպատժի մեզ: Թեպետ Աստված խոստացավ վերստին ջրհեղեղով չպատժել, բայց այս խոստումով մեղավորին չթույլատրվեց իր ուզածն անելու և պատժից ազատ ու զերծ մնալու, այլ ուրիշ կերպով է պատիժ տալիս:

Արդարև ծիածանն աղեղի ձև ունի[124], իսկ աղեղը էլ պատերազմի գործիք է, և առանց նետի այս երկրի վրա նրա երևումը Աստծու զթությունն է հայտնում: Որովհետև մահացու մեղքերի տեր մարդիկ կարծես թե պատերազմի են դուրս ելել Աստծու դեմ և Նա, ողորմած լինելով, շատ անգամ առանց պատժելու համբերությամբ սպասում է, որ մեղավորը դառնա և զղջա, սակայն մի՛ կարծիր, թե միշտ պիտի համբերի, քանզի աղեղը լարված է, անշուշտ մի օր բարկության նետը պիտի արձակվի[125]:

Հարկ է հատկապես նկատել, որ ինչքան աղեղը լարված է, այնքան նետն ավելի ուժգին է հարվածում. նույնպես Աստված որքան երկար համբերի, պատիժն էլ այնքան սաստիկ և խիստ կլինի[126]: Արդ, ծիածանը աշխարհի համար մի խրատ է, որ Աստծուց երկյուղելով՝ զգաստությամբ ապրենք՝ պատժի նետից ազատ և զերծ մնալու համար[127]:

---

124 Իմ ծիածանը կկապեմ ամպերի մեջ (*Ծնող.* 9:13):

125 Սակայն եթե չդառնաք դեպի Նա, սուրն իր սրած է և աղեղն իր՝ լարած (*Սաղմ.* 7:13):

126 Երբ ժամը հասնի, ճշմարիտ դատաստան պիտի տեսնեմ (*Սաղմ.* 74:2):

127 Երկյուղածներիդ նշան դու տվեցիր, որ փրկություն գտնեն աղեղից (*Սաղմ.* 59:6):

Հարց Դ. **Մարդու հետ Աստծու հաշտվելն ու ուխտ կապելը ինչպե՞ս հասկանանք:**

Պատասխան: Մարդուն խոսք հասկացնելու համար նրա լեզվով պետք է խոսել. այդ պատճառով Աստված մարդուն հասկանալի եղանակով Ս. գրքում իր կամքն է հայտնում՝ համրին նշաններով խոսք հասկացնելու պես: Քանի որ մարդկորեն հաշտվել կամ ուխտ ու դաշինք կնքելը կռվից հետո հավասարների միջև երկու կողմերի կամքի միությունն է հայտնում, բայց Աստծու հաշտությունն ու ուխտադրությունը, միայն Իր կամքով և Իր կողմից լինելով, Նրա ողորմությունն է հայտնում[128]: Քանի որ Աստված ոչ թե հարկադրված է ուխտ հաստատում, իբր թե պարտական է մարդուն, այլ մանավանդ Նոյ նահապետին և բոլոր մարդկանց մխիթարելով՝ իր ողորմությանն է արժանացնում, որպեսզի Աստծու բարերարությունը անմոռաց հիշելով՝ միշտ գոհությամբ հնազանդվեն և հավիտենական փառքին ևս հասնեն:

Հարց Ե. **Նոյը և իր որդիներն ի՞նչ եղան:**

Պատասխան: Քանի որ հողագործությունն ամեն բանից առավել էր, Նոյը Մասիս լեռան ստորոտին այգի տնկեց (այդ տեղի անունը մինչ այսօր հայերեն Արկուսի է կոչվում, որը նշանակում է «որթ տնկված վայր») և նրա գինուց խմելով՝ մերկ և բաց պառկեց: Նոյի երկրորդ որդին՝ Քամը, այդ տեսնելով, փոխանակ նրա մերկությունը ծածկելու, ծաղրանքով իր եղբայրներին ևս հայտնեց: Սակայն Սեմը և Հաբեթը, հայրական պատիվը պահպանելու նպատակով զգեստ վերցրած, հետ-հետ գնալով ծածկեցին իրենց հոր մերկությունը:

---

128 Տեր Աստված ասաց Նոյին. «Այս է նշանն այս ուխտի, որ հաստատեցի իմ ու ձեր միջև» (*Ծնող.* 9:17):

Նոյը արթնանալուց հետո, երբ իմացավ եղելության մասին, Քամի որդուն՝ Քանանին, անիծեց[129], քանի որ ենթադրվում է, որ առաջին անգամ Քանանն է իր պապին այդ վիճակում տեսել և հայտնել իր հորը՝ Քամին, որն էլ՝ իր եղբայրներին: Ինչպես որ առաջին դարում Կայենը, անեծք ընդունելով, օր օրի չարանալով իր հորից մերժվեց, նույնպես երկրորդ դարում Քանանին անեծք տրվեց, և Քամն նույնպես, հայրական օրհնությանը արժանի չլինելով, հետզհետե վատթարացավ այնքան, որ Նոյը ստիպված մերժեց նրան:

Քանի որ կարծվում է, որ Քամը կախարդության և այլ անարժան ընթացքի էր հետևում, իսկ Սեմը և Հաբեթը, որոնք իրենց հոր պատիվը հարգել իմացան, օրհնություն ընդունեցին հորից, որով էլ Քամը իր եղբայրների ծառա է կոչվում: Մանավանդ Քրիստոսը Սեմի ցեղից պիտի ծնվեր, իսկ Հաբեթի ցեղը Նրան պիտի հավատար, Աստծու ներշնչանքով Նոյը մարգարեաբար այդ է հայտնում[130]: Արդարև, այս կետը մի օր բոլոր կռապաշտների՝ Քրիստոսին հավատալն է հայտնում, ինչպես որ հայ ազգը, Հաբեթի սերունդից լինելով, Քրիստոսին հավատաց:

Մանավանդ Աբգարը՝ Եդեսիայի թագավորը, ազգությամբ հայ, Երուսաղեմում Քրիստոսի կատարած հրաշքների մասին լսելով, հատուկ մարդ և նամակ ուղարկեց Նրան, և բոլոր հեթանոս թագավորներից առաջինը հավատաց, և Քրիստոսը՝ մեր Փրկիչը, նրա նամակին պատասխան գրել ցանկացավ, ինչպես որ Ս. Մովսես Խորենացին Իր պատմության երկրորդ մասի 19-րդ գլխի մեջ է գրում:

---

129 Անիծյալ լինի ստրուկ Քանանը (*Ծնն.* 9:25):

130 Աստված թող բարգավաճ դարձնի Հաբեթին, նա թող բնակվի Սեմի տանը (*Ծնն.* 9:27):

Դու Քամի չարությա՛նը նայիր, որ մեղքի հուրը, դեռ նոր ջրհեղեղով մարած լինելով, նորից արծարծեց և իր սերնդի համար չար օրինակ եղավ. մեղքի սերմերը նորից սկսեցին բողբոջել մարդկանց սրտերում:

Հարց Զ . **Մարդիկ ինչպե՞ս ցրվեցին աշխարհի չորս կողմերը:**

Պատասխան: Սեմի, Քամի և Հաբեթի սերունդները օր օրի բազմացան. բոլորի բնակվելը իրենց գտնված վայրում անհնարին դարձավ, ուստի անհրաժեշտությունից դրդված՝ յուրաքանչյուր ցեղի մարդիկ տարբեր կողմեր ցրվեցին, գնացին՝ բարեկեցություն գտնելու համար: Քանի որ այն ժամանակի մարդկանց մեծամասնությունը հողագործ էր, ընդարձակ դաշտերի և լեռնահովիտների կարիք ուներ: Ուստի հարմար տեղ գտնելու նպատակով բավականին մեծ մի ամբոխ, մասնավորապես անիրավ մարդկանց դասակարգից, Բաղդադի դաշտը հասնելով, միմյանց հետ խորհրդակցեցին, որ առանց իրարից բաժանվելու աշտարականման մի քաղաք կառուցեն, որի գագաթը մինչև երկինք հասնի, և այդ աշտարակը իբրև հիշատակ թողնելով՝ անուն և համբավ ստանան, և իրենց այս ամբարտավան խորհուրդը իրականացնելու համար իսկույն եռանդով ձեռնամուխ եղան շինարարությանը:

Քանի որ սույն գործը սկսելու գլխավոր շարժառիթը նրանց նույն լեզվով խոսելու կարողությունն էր, Աստված նրանց հասկանալի բառերի իմաստը խառնեց, որպեսզի միմյանց լեզու չհասկանալով[131]՝ սկսած շինարարությունը թողնեն: Քանի որ այդ մարդկանց հիշյալ ընթացքը միայն իրենց

---

[131] Արի իջնենք ու խառնենք նրանց լեզուն այնպես, որ ոչ մեկը չհասկանա իր ընկերոջ ասածը (*Ծնն.* 11:7):

հպարտության արդյունքն էր, ուստի հակառակ էր Աստծու հրամանին և մտադրությանը: Եվ երբ յուրաքանչյուրը իրեն հանձնարարված գործով զբաղված, աշխատում էր շինության վրա, ահա սաստիկ փոթորիկ և քամի փչեց, և ամեն մեկն իսկույն տարօրինակ վիճակի մեջ հայտնվեց. այլևս իրար խոսք չկարողանալով հասկանալ՝ յուրաքանչյուր ցեղ առանձին լեզվով սկսեց խոսել, և այսպես իրենց միությունը խախտվեց, և շինարարության գործն էլ կիսատ մնաց: Ահա այդ ժամանակ ամեն ցեղ իր մարդկանցով իր ուզած կողմը գնաց, և առանձին ազգեր կազմեցին, որոնց լեզուները, ինչպես արդեն հայտնի է, իրարից տարբերվում էին:

Նկատի՛ր, որ դեռ ջրհեղեղը չմոռացած՝ մարդիկ նորից Աստծուն բարկացնելուն հետամուտ եղան, բայց մի՛ զարմացիր, քանի որ աշտարակը կառուցողների պարագլուխը Քամի թոռը՝ Նեբրովթն էր: Չափազանց հպարտ և իր զորության վրա վստահ, պատերազմող մի անձ լինելով՝ շատերին բռնությամբ իրեն հպատակեցնելուց հետո նա առաջին անգամ սկսեց թագավորել Բաղդադում[132], քանի որ մինչ այդ թագավորություն չկար:

Բացի այդ, բանակ կազմելով՝ իրար կոտորելը Նեբրովթից սկսեց, որը նաև Բել է անվանվում: Սույն բռնակալը ինչպես մարդկանց հետ էր պատերազմ ծավալում, նույնպես էլ Աստծու դեմ կռապաշտություն է հնարում, քանի որ ասվում է, թե իր պատկերը բոլորին պաշտել տալով՝ կռապաշտության պատճառն ու հիմնադիրը եղավ: Եվ նրա պատկերը եղող կուռքը, որը Աստվածաշնչում Բահաղ անունով է հիշվում: Ամբողջ Արաբիայում և արևմուտքում (կամ հարավում) հռչակավոր էր, և Եղիա մարգարեն նախանձախնդրությամբ դրա քուրմերին կոտորեց (*Գ Թագ.* 18:40):

---

132 Նրա թագավորությունն սկիզբ առավ Բաբելոնից (*Ծնն.* 10:10):

Թող հպարտ և Աստծու հրամանին հակառակ գործող անզգամները խրատվեն: Արդարև, կարողություն ունեցող մարդիկ պարտավոր են երկրի վրա հիշատակ թողնել, սակայն պայմանով, որ դրանից ուրիշներին օգուտ լինի, և ոչ թե իրենց անվան փառքի համար հպարտությամբ մեղանչեն, ինչպես որ հիշյալ աշտարակը կառուցողներն արեցին: Նաև կարծիք կա, որ աշտարակ ցանկացան կառուցել, որպեսզի մյուս անգամ ջրհեղեղ լինելու ժամանակ դրա մեջ պատսպարվեն: Սակայն այս միտքը շատ անարդար և ապօրինի է, քանի որ երբ Աստված ցանկանա պատժել, մի՞թե մարդիկ կարող են ազատվել: Թող որ մարդը թռչունի նման երկինք թռչի, թող մրջյունի նման երկրի խորքերը մտնի, թող ձկան նման ծովի հատակը իջնի, Արարչի ձեռքից դարձյալ չի կարող ազատվել: Եթե ցանկանում ես պատժից զերծ ու ազատ մնալ, հրամանին կամ օրենքին հակառակ մի՛ գործիր:

Հարց Է. **Լեզուները խառնվելուց առաջ մարդիկ ի՞նչ լեզվով էին խոսում:**

Պատասխան: Կարծիք կա, որ հայերեն էին խոսում, քանի որ հայտնի է, որ մինչ աշտարակաշինությունը Ադամի լեզվով էին խոսում, և միայն աշտարակը կառուցող այդ հպարտ և բռնակալ մարդկանց որպես պատիժ՝ նրանց լեզուն Բաղդադի դաշտի մեջ խառնվեց[133]: Արդ, քանի որ Նոյը և նրա հարազատները Հայաստանում էին գտնվում, նրանց լեզուն անխառն մնաց, որովհետև մինչ այդ ժամանակը Նոյը դեռևս կենդանի էր, և աշտարակ շինողներին չմիանալուց բացի, եթե կարողանար, անշուշտ նրանց ապօրինի գործը կխափաներ: Ուրեմն կարելի է եզրակացնել, որ լեզուները խառնվելուց հետո մեր Հայկ

---

133 Տեր Աստված այնտեղ խառնեց ամբողջ երկրի բնակիչների լեզուները (*Ծնն.* 11:9):

նահապետը, Հայաստանի կողմը գալով, այնտեղ նախնական լեզվով սկսեց խոսել, քանի որ այն արդեն իսկ իր լեզուն էր:

Արդարև, ինչպես որ մարդիկ մեղքի պատճառով աշխարհի նեղությունների և վշտերի ենթարկվեցին, նույնպես էլ մեղքի պատճառով լեզուները շատացան, որպեսզի մարդիկ չարության մեջ իրար հետ չմիաբանվեն: Քանի որ մարդկային բնությունը զարմանալի է. լավ բաների չձգտելով, ընդհակառակը՝ շատ վատ և անպիտան բաների է սկսում հետևել և այսպես, ի վերջո, բոլորն էլ չարանում են, ինչպես ջրհեղեղից առաջ եղավ: Ուրեմն այս առումով լեզուների շատությունը մարդկանց համար մեծապես օգտակար եղավ, և դարձյալ՝ լեզուների խառնվելը մեծ հռչակ տվեց աշխարհին, ինչպես երկիրը միօրինակ դաշտավայր եղած ժամանակ հանկարծ լեռներով, ձորերով և բլուրներով զարդարվեց, կամ ինչպես մի ծաղիկ միագույն լինելուց առավել հաճելի է, երբ զանազան գույներ է ունենում:

Հարց Ը. **Նոյը քանի՞ տարեկանում մահացավ:**

Պատասխան: Ինը հարյուր հիսուն տարեկանում (*Ծնող.* 9:29): Տե՛ս մարդկանց թշվառ վիճակը: Որովհետև յուրաքանչյուր ժողովուրդ, իր վիճակի համապատասխան երկիր գրավելու պայմանով, թեպետ այլևայլ ազգություններ կազմելով աշխարհային բաների մեջ տեսակ-տեսակ ճարտար գյուտերի շնորհիվ փառքի և պատվի հասավ, բայց հոգևոր ճանապարհում հետին աստիճանի ողորմելի և խեղճ մնաց: Քանի որ երկինքն ու երկիրը ստեղծող Արարչի փոխարեն անհամար կուռքեր ստեղծելով՝ որպես աստվածների սկսեցին պաշտել դրանց: Հիրավի, բոլոր արարածների Արարչի և աշխարհը կառավարող իմաստուն և գերագույն Էակի գոյությունը ակամա խոստովանում են, բայց թե ի՞նչ է Նրա

հրամանը, և ի՞նչ եղանակով է հարկավոր ծառայել Նրան, ահա այդ չգիտեն[134]:

Հարց Թ. **Ինչի՞ց առաջացավ կռապաշտությունը:**

Պատասխան: Առաջին՝ հպարտությունից. քանի որ ինչպես վերոհիշյալ Նեբրովթը հպատակներին ստիպում էր երկրպագել իր պատկերին, նույնպես իր որդիները և ուրիշներ նրա օրինակին հետևեցին, իսկ անհնազանդներին պատժում էին: Ինչպես որ երեք մանուկները Բաբելոնում Նաբուգոդոնոսորի ստեղծած պատկերին զոհ չմատուցելու համար բորբոքված (կրակի) հնոցի մեջ նետվեցին (*Դան.* 3: 21): Սակայն հեշտ է գուշակել, որ ոմանք՝ երկյուղի, ոմանք՝ կեղծավորության, և ուրիշներն էլ ստիպողաբար սկսեցին կուռքեր պաշտել:

Երկրորդ՝ զավակի ցավից[135]. քանի որ երիտասարդ տարիքում մահացած զավակի հայրը մխիթարվելու համար նրա պատկերն է փայտից շինել տալիս հյուսնին և զանազան թանկագին նյութերով զարդարած՝ պատիվ է տալիս անշունչ պատկերին. նրա հպատակներն էլ հոր պատվի համար սկսում են նույն հարգանքը մատուցել պատկերին, ուրիշներն էլ նույն կերպ պատրաստելով և պատվով պահելու համար այլ տեղեր են տանում: Ուրիշներն էլ նույնպես հաճոյանալու համար տեսակ-տեսակ ընծաներ են բերում դրան:

Երրորդ՝ ագահությունից[136]. որովհետև ճարտարագետ մարդիկ հարստանալու մտադրությամբ սկսեցին ոսկուց,

---

134 Ճանաչեցին Աստծուն, բայց իբրև Աստծու չփառավորեցին (*Հռոմ.* 1:21):

135 Իր վաղամեռիկ որդու տարաժամ մահվան ոգով թախծող մի հայր շինել տվեց նրա արձանը (*Իմաստ.* 14:15):

136 Անգետների մեջ պաշտամունքի տարածմանը նպաստեց արվեստագետ վարպետի փառասիրությունը (*Իմաստ.* 14:18):

արծաթից, փայտից և մինչև իսկ ցեխից կուռքեր պատրաստել և վաճառել: Այս մոլորյալ սովորությունը իր համար այնքան նյութ գտավ, որ սկսեց տիրապետել, և բռնակալ մարդիկ, իրենց կուռքերի համար կռատներ կառուցելով, պաշտոնյաներ էլ հատկացրին, որոնք էլ իրենց շահի համար այլևայլ պայմաններ հնարեցին:

Չորրորդ՝ սատանայի դավաճանությունից. քանի որ մարդը արարածների մեջ իր փափագին լրում չգտավ, միշտ այն լրացնելու կարող անձ է փնտրում, և Աստծուց բացի իր փափագին հագուրդ տալ կարողացող մեկին չգտնելով՝ մարդը հարկադրված Աստծուն է փնտրում: Նրան չգտած մարդը հանգիստ չունի, ուստի այս իմանալով՝ սատանան կուռքերի մեջ է մտնում և մարդկանց հրապուրիչ պատասխաններ է տալիս, որպեսզի դրանց իբրև աստծու ճանաչել տալով՝ նրանց հուսադրի, որ իրենց փափագների գոհացումը այդ կուռքերից սպասեն՝ դրանց երկրպագելով և պաշտելով:

Հիմա դու տե՛ս սատանայի ճարպիկ, խորամանկ և չարագործ հաջողությունն ու մարդկանց թշվառ և անմիտ վիճակը, քանի որ նա այն աստիճանի կապեց և կաշկանդեց մարդկանց այդ անշունչ և անզգա կուռքերին, որ անգամ այդ գարշելիների սիրո համար իրենց զավակներին զոհելով՝ կրակի մեջ այրում էին[137]: Եվ երբ մի քանի խելացի մարդիկ, «մարդու սարքածը անկարելի է, որ Աստված սարքած լինի» ասելով, տարակուսում էին, այն ժամանակ սատանան իր նենգավոր հնարագիտությամբ սկսում է կենդանիներին ցույց տալ իբրև աստծու և հաջողեցնում է դրանց երկրպագել տալ[138]: Նմանապես, երբ կենդանիների վերաբերյալ էլ

137 Իրենց ուստրերին և դուստրերին զոհեցին դևերին (*Սաղմ.* 105:37):

138 Կար նաև մի մեծ վիշապ, և բաբելացիները պաշտում էին նրան (*Դան.* 14:22):

տարակուսանք է ծագում, նզովյալ չար ոգին ճարը կտրած արևը, լուսինը, կրակն ու ջուրն է ներկայացնում որպես Աստված: Որովհետև վերջիններս մարդկանց համար օգտակար և հարկավոր են, և թերևս նրանց նկատմամբ ամեն տեսակ տարակույս և կասկած չունենալով՝ միշտ կռապաշտության մեջ մնան, և մարդիկ, որպես իր նման Աստծու դեմ ապստամբներ, դժոխք գնան:

Ահա այսպես սատանան թեև շատ աշխատեց բոլոր մարդկանց կռապաշտության մեջ բանտարկելու համար, այդուհանդերձ միշտ գտնվեցին մարդիկ, որոնք արարածներին որպես աստծու չընդունեցին, այլ երկինքն ու երկիրը արարող գերագույն Տիրոջը ճանաչեցին աղոտ: Քանի որ միայն բնական լույսով և առանց շնորհի չի կարելի այդ գերագույն և սուրբ Էակի վերաբերյալ բավական գիտություն ունենալ, ուստի թե՛ գիտունն ու անգետը, թե՛ մեծն ու փոքրը, կռապաշտության խոր խավարի մեջ ընկղմված, թշվառ և դատապարտելի վիճակի էին մատնվել, մինչև որ բարեգութ Աստված, մարդկանց գթալով, հայր Աբրահամին կանչեց:

Զգուշացի՛ր, ո՛վ մարդ, կռապաշտությունը երկու տեսակի է. մեկը՝ հայտնի, իսկ մյուսը՝ գաղտնի: Հայտնի կռապաշտը նա է, ով Արարչին չճանաչելով՝ կուռքերին է պաշտում, իսկ ծածուկ կռապաշտը նա է, ով թեև Աստծուն ճանաչում է, սակայն իր սիրտը արարածներին տալով՝ նրանց սիրո համար Աստծու պատվիրաններին հակառակ է գործում: Քանի որ մարդը Աստծուց առավել ինչ սիրում է, այն է աստվածացնում: Այսպիսի մարդիկ, եթե իրենց արածի համար զղջալով՝ մեղքերի կուռքերին չթողնեն, հայտնի կռապաշտներից ավելի մեծ պատժի պիտի ենթարկվեն, քանի որ նրանք անգիտաբար գործեցին, իսկ սրանք՝ գիտությամբ. մեկը կռապաշտ է կրոնով, մյուսը՝ գործով:

Արդարև, Աստծու հրամանին հակառակ գործող մարդը, ով էլ լինի, պատժի և դատապարտության է արժանի: Սակայն քանի որ մարդը երեք պատճառով է մեղանչում՝ տգիտությամբ, տկարությամբ և չարությամբ, ուստի նա, ում խելքը չի հասնում կամ անճար մնալով մեղանչում է, հայտնի է, որ նրա պատիժը թեթև է լինում, իսկ նա, ով գիտությամբ և չարությամբ է մեղանչում, նրա պատիժը խիստ ծանր և սաստիկ է լինելու ըստ Ավետարանի[139]:

[139] Իսկ այն ծառան, որ գիտե իր տիրոջ կամքը, բայց նրա կամքի համաձայն չի պատրաստի, շատ ծեծ կուտի (*Ղուկ.* 12:47):

ԵՐՐՈՐԴ ԴԱՐ

Հարց Ա. **Երրորդ դարը երկրորդից ինչո՞վ է զանազանվում:**

Պատասխան: Աստծուց՝ Աբրահամին կանչելով: Թեպետ երկրորդ դարում օրհնություն շնորհվեց մարդուն և ծիածանը որպես հաշտության նշան տրվեց նրան, բայց մարդը Երուսաղեմի երկիր չկանչվեց, և Աստված մարդուն չերևաց: Միայն երրորդ դարում Աստված, հատկապես Աբրահամին կանչելով[140], երևաց նրան, և Աբրահամի հնազանդությամբ հայտնվեց, մի կողմից, Աստծու սերը մարդու նկատմամբ, և մյուս կողմից՝ մարդու հնազանդությունն Աստծուն: Որովհետև ինչքան էլ Աստված մեղքի պատճառով պատժեց մարդուն, այդուհանդերձ չզլացավ իր շնորհը տալ նրան, նույնպես էլ մարդը, որքան հանցանք գործեց, այնուամենայնիվ մարդկանց մեջ Աստծու հրամանին հնազանդ եղող անձինք անպակաս եղան: Օրինակ՝ Ադամը դրախտից արտաքսվելուց հետո սգով և տրտմությամբ անցկացրեց իր կյանքը, Աբելը, Սեթը և Նոյը Աստծուն կատարյալ հնազանդություն ցուցաբերեցին: Նույնպես Աբրահամը, որը իր հոր՝ Թարայի հետ Բաբելոնի կողմերն էր բնակվում, Սեմի ցեղից լինելով, ոչ միայն ոչնչով անարժան ընթացքի մեջ չեղավ, այլ նաև կռապաշտության անմիտ և հիմար ըմբոստությանը ո՛չ հավանություն է տալիս և ո՛չ էլ հետևում է: Աստծու ազդեցությամբ իր հոր հետ Խառան գնալուց հետո նա որոշ ժամանակ այնտեղ բնակվեց, որտեղից յոթանասունհինգ տարեկանում Աստված կանչում է նրան, որպեսզի իր ծննդավայրը, ազգը և հայրական տունը թողնելով՝ Աստծու ցույց տված տեղը գնա:

Լա՛վ մտապահիր, ինչպես որ ծովի վրա խավար գիշերում իր ճանապարհը կորցրած նավաստին, փայլատակումների

---

140 Աստված ասաց Աբրամին. «Հեռացի՛ր քո երկրից, քո ցեղից ու քո հոր տնից և գնա՛ այն երկիրը, որ ցույց կտամ քեզ» (*Ծնն.* 12:1):

լույսով եզերքը նշմարելով, իր ճանապարհն է վերագտնում, այդպես էլ Աստծու կողմից Աբրահամին կանչելը հավատի ճանապարհը մարդկանց հայտնելն էր:

Քանի որ Աստված Մեսիայի ձեռքով մարդուն պիտի ազատեր սատանայի գերությունից, Աբրահամի սիրտը շնորհներով լցնելով՝ կանչում է նրան, որպեսզի բոլոր մարդկանց կողմից՝ որպես փոխանորդ և ներկայացուցիչ, կատարյալ սիրով և հավատով Աստծուն հնազանդվելով՝ Մեսիան նրա ցեղից ծնվի և Մեսիան բոլոր հավատացողների հայր կոչվի, որպեսզի ամեն մի մարդ, նրանից խրատ և օրինակ վերցնելով, հնազանդվի Աստծուն և Մեսիայի շնորհներով արքայությանն արժանանա:

Հիրավի, Աստված Իր շնորհների բնակարան դարձնելու արժանի գտավ Աբրահամի սիրտը, բայց Աբրահամն էլ իր սիրտը կատարյալ հպատակությամբ Աստծուն տալու համար «հավատքի հայր» կոչվեց, և նրա «գոգը» արքայության օրինակ եղավ (Ղուկ. 16:22): Ստացած հրամանի համաձայն՝ Աբրահամը, իր կնոջ Սառայի և եղբորորդի Ղովտի ու իր ընտանիքի անդամների հետ իր հայրենիքը թողնելով, Քանան եկավ: Սակայն չի կարծվում, որ նա իր պանդխտության մեջ խեղճ և թշվառ վիճակ ուներ, ընդհակառակը՝ Աստված նրան «մեծ ազգ» դարձրեց և շատ մեծ հռչակով ու համբավով փառավորեց: Քանի որ ճշմարտապես առաքինի ամեն մի մարդ, որտեղ էլ լինի, իր անարատ և անաղարտ կյանքով փառավորվում է:

Ուրեմն հարկ է, որ մենք, ոչ միայն Աստծու բարության և մարդասիրության շուրջ խորհելով, գոհ ու շնորհակալ լինենք, որ մարդուն կռապաշտության խավարից հանեց, այլ նաև Աբրահամի պանդխտությունից խրատվենք, քանի որ նա թեև իր բնիկ երկրում հավատաց Աստծուն, բայց

գործնականորեն մինչև Բաբելոնից դուրս չեկավ, սուրբ Երուսաղեմի հողը չշնորհվեց նրան[141]:

Նույնպես էլ քանի որ Բաբելոնը «խառնակություն» և Երուսաղեմը «խաղաղություն» է նշանակում, հեշտությամբ կարող ենք հասկանալ, որ մինչև այս աշխարհի խառնակ վիճակից չխուսափենք, մեզ համար հոգևոր խաղաղություն չկա. ուրեմն թող յուրաքանչյուր անձ հոգու փրկության համար մեծ զգուշությամբ ընթանա այս պանդուխտ, անցավոր ու երկրավոր կյանքում:

Հարց Բ. **Աբրահամն արդեն ճանաչո՞ւմ էր Աստծուն, որի հրամանին հետևեց:**

Պատասխան: Ընդունված է, որ այն ժամանակների գիտության մեջ հմուտ լինելով՝ կուռքերի Աստված չլինելը լավ հասկացել էր և նրանց երբեք հակված չէր եղել, ուստի Աստված, նրա սրտին ազդելով, Ինքն Իրեն ճանաչելի դարձրեց Աբրահամին: Եվ նա էլ, անփուշ արտի նման հավատի պտուղը պտղաբերելով, այն աստիճանի կատարյալ հնազանդության հասավ, որ հավիտենական Աստծու զերագույն հրամանին հակառակ չգործեց: Քանի որ միայն բնական լույսով Աստծուն ճանաչելը մարդու համար անկարելի է, անպայման գերբնական շնորհի կարիքն ունի, որ ճանաչի Նրան[142]:

---

141 Մեռած է հավատը առանց գործերի (*Հակոբ.* 2:26):

142 Ոչ ոք չի կարող գալ դեպի ինձ, եթե նրան չձգի Հայրը (*Հովհ.* 6:44):

Հարց Գ. **Աստված Աբրահամին հրամայում է, որ իր ծննդավայրը թողնի, սակայն գնալու տեղի անունն ինչո՞ւ չի հայտնում:**

Պատասխան: Ասվում է, որ քանզի Նոյը Քանանի երկիրն իր անդրանիկ որդուն՝ Սեմին էր հատկացրել, Աբրահամը նույնպես նրա սերնդից առաջ եկած և մանավանդ Աստծու կողմից ներքնապես ազդված լինելու պատճառով Քանանի երկիրն է գալիս: Սակայն ինչքան էլ աստվածային ազդեցության ներքո էր, դարձյալ ոչ մի տեղ բնակություն չհաստատելով՝ վրանաբնակ կյանք է վարում, մինչև որ Աստծու կամքը որոշակի ձևով իրեն հայտնվի: Արդ, Սամարիա կոչված երկրի Սյուքեմ անվամբ տեղն է գալիս, որի մոտ մի բարձր կաղնի կար, և Քերրոն քաղաքն էր գտնվում, ահա այստեղ Աստված նրան է երևում և խոստանում այդ բոլոր վայրերը նրա որդուն տալ[143]: Աբրահամը, այնտեղ սեղան կանգնեցնելով, շնորհակալություն է հայտնում Աստծուն:

Օրինա՛կ վերցրու, արդարև նախ Աստված Իր ողորմությամբ Աբրահամին կանչեց, երբ նա դեռևս իր հայրենիքում էր, և Աբրահամն է,լ հնազանդվելով և պանդխտության գնալով, անմիջապես Աստծու համար սեղան է կառուցում: Քանի որ ինչպես Աստված իր շնորհը ոչ ոքի չի խնայում, նույնպես էլ մարդու պարտքն է, մարմնական ցանկությունները մերժելով, պարգևյալ շնորհներին հակառակ չկանգնել, և իր կողմից էլ ամեն ջանք գործադրել Աստծու շնորհը չկորցնելու համար:

---

143 Հավատո՛վ է, որ Աբրահամը, երբ կանչվեց, հնազանդվեց և գնաց այն տեղը, որն ստանալու էր որպես ժառանգություն. ելավ գնաց և չգիտեր՝ ուր էր գնում (*Եբր.* 11:8):

Հարց Դ. **Քանի որ տեղի անունը Աբրահամին չասվեց, զարմանալի չէ՞, որ ուրիշ կողմ գնալու փոխարեն Քանանի երկիրը գնաց:**

Պատասխան: Աբրահամի հավատը աշխարհին հայտնի լինելու համար է: Քանի որ առանց ուր գնալն իմանալու ճանապարհորդություն ձեռնարկելը նրա կատարյալ հավատքի ապացույցն է[144]: Այո՛, Աստված Աբրահամի սիրտը գիտեր, սակայն մարդկանց հայտնի լինելու համար տեղի անունը չասաց: Եվ Աբրահամն էլ չի հարցնում, քանզի գիտի, որ իրեն կանչողը Աստված է, և մարդու պարտականությունն է հնազանդվել, քանի որ չի կարելի Աստծուն հարցնել պատճառների մասին:

Լա՛վ տես և խրա՛տ ստացիր, Աբրահամը, Աստծուն ապավինելով, մեծ բարիքների և շնորհների արժանացավ, քանի որ Աստված խոստացավ օրհնել այն մարդկանց, որոնք Աբրահամին բարիք կկամենան, և անիծել նրանց, ովքեր չարիք կանեն, մանավանդ բոլոր մարդիկ նրանով պիտի օրհնվեին[145]: Ուրեմն ջանա՛, որ Աստծուն հաճելի մարդկանց հետ բարեկամանալով՝ նրանց համար աղոթես, քանի որ Աստված իր ծառաների սիրո համար անպատճառ քեզ էլ կօրհնի: Մարդը պարտական է բոլոր մարդկանց բարիք անել և նրանց մասին բարին խոսել, քանի որ մարդու սիրտը միայն Աստված գիտի. պետք չէ, որ դու դատես որևէ մեկին, կարող է պատահել, որ մեկին դատելով՝ դու դատապարտվես, որովհետև նա Աստծուն հաճելի անձ է թերևս:

Ինչպես որ բոլորին ստեղծողն Աստված է, այդպես էլ բոլորի գործերը քննողն Աստված է, ուրեմն Աստծուն վերաբերվող

---

144 Պիտի օրհնեմ քեզ օրհնողներին, իսկ քեզ անիծողներին պիտի անիծեմ: Քեզնով պիտի օրհնվեն աշխարհի բոլոր ժողովուրդները (*Ծնն.* 12:3):

145 Դո՞ւ ես, որ դատում ես ուրիշի ծառային (*Հռոմ.* 14:4):

գործերին դու մի՛ խառնվիր, որպեսզի դատապարտության արժանի չլինես[146]:

Հարց Ե . **Մարդուն Աստծու երևալը և նրա հետ խոսելն ինչպե՞ս հասկանանք:**

Պատասխան: Երեք կերպ է հասկացվում. կա՛մ Աստված մարդուն տեսիլքով հայտնում է Իր հրամանը, կա՛մ հրեշտակի միջոցով խոսելով, կա՛մ մտքի և երևակայության մեջ խոսելով: Կարծիք կա, որ այս երրորդ եղանակով տեղի ունեցավ Աբրահամի կոչումը, քանի որ Աստծուն մարմնավոր աչքով տեսնելն անկարելի է[147]: Թեպետ Աստված ամենուրեք է, սակայն որտեղ Աստծու կարողությունը հայտնապես երևում է, ասվում է «Աստված այնտեղ է»: Նույնպես երբ Աստված իր հրամանը մեկին ձայնով հաղորդի կամ մտքին ազդելով և կամ հրեշտակի միջոցով, ասվում է «Աստված խոսեց»: Քանի որ այն զորությունը հայտնողը կամ մարդու մտքին ազդողը և կամ հրեշտակը առաքողը Աստված Ինքն է:

Սակայն ոչ թե հրեշտակների գոյությունը մարմնավոր է, և մարմնական զգայարանների կարիքն ունեն, այլ մարդը՝ մարմնավոր լինելով և հոգևոր գոյությունները տեսնելու անկարող. Աստծու հրամանով հրեշտակները, եթե հարկ է, մարմնավոր կերպարանքով են հայտնվում և մարդկանց նման շարժվում: Արդ, եթե հրեշտակը ինքն իրեն Աստծուց առաքված է հայտարարում, ասվում է. «Հրեշտակը երևաց» (*Դան.* 10:11): Եվ եթե Աստծու կողմից առաքվելը չհայտնելով՝

---

146 Աբրամը կտրեց անցավ երկիրն իր երկարությամբ մինչև Սյուքեմ վայրը, բարձր կաղնին:.... Տերը երևաց Աբրամին և ասաց նրան. «Քո հետնորդներին եմ տալու այս երկիրը» (*Ծնն.* 12:6):

147 Դու չես կարող տեսնել իմ երեսը, որովհետև մարդ չի կարող տեսնել իմ երեսն ու կենդանի մնալ (*Ելք* 33:20):

ինքը իր կողմից հրամաններ է տալիս, «Աստված երևաց» է ասվում, ինչպես Սամսոնի հորը՝ Մանովեին հայտնվողը հրեշտակ էր, բայց Մանովեն ասում է. «Աստծուն տեսանք»[148]: Քանի որ իմաստունները և գիտնականները կարծում են, որ Հին Կտակարանում, որտեղ «Աստված երևաց» է ասվում, պետք է հասկանալ հրեշտակների միջոցով [երևաց][149]:

Հարց Զ. **Աստված Քանանի երկիրն ինչո՞ւ տվեց Աբրահամին մի՞թե դրանից ավելի պտղաբեր և ուրախ երկիր չկար:**

Պատասխան: Անշուշտ կար, բայց քանի որ մարդն արքայության համար ստեղծվեց, և մեղքի պատճառով այս աշխարհի թշվառություններին էր ենթարկվել, ուստի բարերար Աստված, նրան մեղքից փրկելով, կամեցավ արքայության արժանացնել, և այս մեծ բարիքը Երուսաղեմում Մեսիայի ձեռքով կատարվելը սահմանելու համար Աստված այդ երկրում երևաց Աբրահամին: Միևնույն ժամանակ խոստանում է այդ երկիրը որպես ժառանգություն տալ նրան և նրա սերունդներին, որպեսզի մարդիկ իմանան, որ Մեսիան (Քրիստոս) Աբրահամի սերնդից Երուսաղեմում պիտի ծնվի, և որ մարդկանց փրկությունը այնտեղ պիտի կատարվի, հետևաբար պետք էր իրենց սրտերն առ Նա ուղղել և գալու ժամանակ Նրան հավատալով՝ հրամանին հնազանդվել. այս պատճառով Երուսաղեմի հողը «Ավետյաց երկիր» է կոչվում (*Եբր.* 11:9):

Քանանի երկիրը Աբրահամին տալու խոստումը հիրավի եղավ, սակայն նա դեռևս շարունակում էր որպես պանդուխտ

---

148 Մանովեն ասաց իր կնոջը. «Անպատճառ կմեռնենք, որովհետև տեսանք Աստծուն» (*Դատ.* 13:22):

149 Հրեշտակների միջոցով օրենքն ստացաք (*Գործ.* 7:53):

շրջել, քանի որ աստվածասեր մարդը արքայության արժանանալու տենչով երկրի վրա որպես պանդուխտ է բնակվում, քանի որ աշխարհի մեծությունը և զվարճությունը, անկայուն լինելով՝ սառույցի վրա գրելու են նմանվում, որի համար էլ աստվածասեր մարդը, Աբրահամի նման պանդխտության մեջ շրջելով, արքայության անվախճան փառքին հասնելն է բաղձում միշտ և անսասան[150]:

Հարց Է. **Քանանի երկիրը Աբրահամին խոստանալու ժամանակ նա դեռ որդի չուներ, ինչո՞ւ զավակ չխնդրեց Աստծուց:**

Պատասխան: Քանի որ մարդը պարտավոր է հնազանդվել Աստծուն և Նրա կամքը կատարել, այդ պատճառով Աբրահամը, այլ բան չմտածելով, ամենայն հնազանդությամբ ջանում է միայն Աստծու կամքը կատարել: Քանի որ Աստված, որ նրան խոստացավ որդի տալ, անշուշտ տալու ժամանակն էլ գիտի: Հիրավի, Աբրահամին զավակ խոստանալուց հետո շատ ժամանակ անցավ առանց խոստման կատարումը տեսնելու, բայց Աբրահամը ուր գնում էր, մեծ պատիվ և փառք գտնելով՝ բոլոր մարդկանցից հարգանք էր ստանում, քանի որ Աստծուն հավատարմությամբ ծառայողին համայն աշխարհն է ծառայում[151]:

Այն ժամանակ քանի որ Քանանի երկրում սով էր, Աբրահամը Եգիպտոս գնաց. Եգիպտոսի փարավոն թագավորը նրա կնոջը՝ Սառային, նրա ձեռքից վերցրեց՝ կարծելով, թե նրա քույրն է, քանի որ Սառայի շատ գեղեցիկ լինելու պատճառով Աբրահամը օտար տեղերում քույր էր կոչում

---

150 Քանզի սպասում էր հիմքերով հաստատված քաղաքին, որի ճարտարապետը և արարիչը Աստված է (*Եբր.* 11:10):

151 Աստվածապաշտությունը զորավոր է ամեն բանից (*Իմաստ.* 10:12):

նրան, որ նրա պատճառով իրեն չսպանեն: Թեպետ մարդասպանությունը և շնությունը հավասարապես մեծ մեղքեր են, սակայն եգիպտացիները շնության մեղքն ավելի մեծ էին համարում, քան մարդասպանությունը, այս պատճառով Աբրահամը իր անձը փրկելու համար Սառային քույր կոչեց: Բայց և այնպես, փարավոնը, Աստծուց հանդիմանվելով, առանց Սառայի պատվին դիպչելու իսկույն նրան անվնաս հանձնում է Աբրահամին և իր մարդկանց էլ պատվիրում է, որ չվնասեն նրանց:

Նկատի՛ առ Աստծու զորությունը. Աբրահամը մի պանդուխտ էր, սակայն թագավորը նրանից վախենում է, և մի՛ կարծիր, որ նա Աբրահամից վախեցավ, այլ մանավանդ նրա Աստծուց, քանի որ Աբրահամն իրեն Աստծու պաշտպանությանն էր հանձնել[152]:

Հարց Ը. **Եգիպտոսից վերադառնալուց հետո Աբրահամն ո՞ւր գնաց:**

Պատասխան: Կրկին վերադառնում է այն վայրը, որտեղ նախապես սեղան էր կանգնեցրել Աստծու համար, և նրա եղբոր որդի Ղովտն էլ նրա հետ եկավ: Եվ քանի որ Աբրահամն ու Ղովտը բազմաթիվ ոչխարներ, կովեր և ուրիշ անասուններ ունեին, նրանց հովիվների միջև արոտավայրերի համար վեճ ծագեց: Աբրահամը, վեճեր չցանկանալով, Ղովտին առաջարկում է գնալ իր ցանկացած վայրը, որպեսզի երկուսն էլ հանգիստ կառավարեն: Հորդանանի կողմերը խիստ արգասավոր և բերրի լինելու համար Ղովտը, Աբրահամից բաժանվելով, Սոդոմ քաղաքը գնաց և այնտեղ բնակվեց:

---

152 Նա թույլ չտվեց մարդկանց, որ վնասեն նրանց, կշտամբեց թագավորներին նրանց համար (*Սաղմ.* 104:14):

Դու տե՛ս Աբրահամի առաքինությունը. Ղովտի սիրտը չվշտացնելու և իրենց միջև կռվի առիթ չտալու համար նրա կամքին է թողնում, որ իր ցանկացած կողմը գնա, և ինքն էլ բավարարվում է նրա չհավանած տեղով: Հետո Աստված, նախապես տրված խոստումը կրկնելով, երկրի ավազի չափ անհամար զավակներ է խոստանում տալ Աբրահամին[153]՝ հրամայելով, որ իրենց ժառանգելիք երկրի բոլոր կողմերով շրջի՝ թե՛ երկարությամբ և թե՛ լայնությամբ, որպեսզի հայտնի դառնա Աստծու բարերարություն, և Աբրահամը ճանաչի այն տեղերը, որ պիտի զբաղեցնի:

Հրամանի համաձայն՝ Աբրահամը շրջելով գալիս է Քեբրոն և բնակվում է այնտեղ ու սեղան կանգնեցնում Աստծուն: Իսկ Ղովտը, որ, արգասավոր տեղ որոնելով, սկսեց բնակվել Սոդոմի մեղսասեր բնակչության մեջ, մեծ վտանգի հանդիպեց. իրոք, Ղովտը առաքինի և Աստծուն հաճելի մարդ էր, բայց չար մարդկանց մեջ գտնվելով՝ նրանց հետ գերության մատնվեց: Քանի որ Սոդոմի և Գոմորի բնակիչների թշնամի չորս թագավորները միաբանվելով պատերազմի են դուրս գալիս Սոդոմի և Գոմորի երկրի տեր հինգ թագավորների դեմ և այս վերջինների հաղթվելով՝ Ղովտն էլ թշնամիների ձեռքը գերի ընկավ: Աբրահամը այս լսելուն պես, հույսը Աստծու վրա դնելով, իր 318 հպատակների հետ հանկարծակի հարձակվեց թշնամու վրա, որով էլ նրան հաջողվեց թե՛ Ղովտին և թե՛ նրա հետ գերի ընկածներին իրենց ամբողջ գույքով ազատել:

Խրա՛տ ստացիր. բարի մարդը չարերի պատճառով վտանգի հանդիպեց, և չար մարդիկ էլ մի բարի մարդու պատճառով գերությունից ազատվեցին:

---

153 Որքան աչքդ կտրում է, այդ ողջ երկիրը հավիտյան քեզ եմ տալու և քո սերունդներին (*Ծնող.* 13:15):

Երբ Աբրահամը թշնամու նկատմամբ տարած հաղթանակից վերադարձավ, Մելքիսեդեկ քահանան նրան հաց և գինի մատուցելով օրհնեց. Աբրահամն էլ թշնամուց վերցրած կողոպուտից տասանորդ տվեց (*Եբր.* 7:9): Քահանային տասանորդ տալով՝ Աբրահամն ընդունում էր, որ հաղթանակը Աստծուց էր, և այդպես շնորհակալ էր լինում Նրան: Քանի որ սոդոմացիների ունեցվածքն ազատել էր թշնամիներից, դրանք իրավամբ Աբրահամին էին պատկանում, և նրանց թագավորն էլ հոժարակամ ստիպում էր նրան, որ վերցնի, սակայն նա չկամեցավ ոչինչ վերցնել, որ չասեն, թե Աբրահամը սոդոմացիների ունեցվածքով հարստացավ: Արդարև, այս դեպքում Աբրահամը մեծ փառք վաստակեց, սակայն միևնույն ժամանակ սրտում երկյուղ ընկավ. Աստված նրան քաջալերում է, որ բնավ չերկնչի:

Հարց Թ. **Ո՞վ էր Մելքիսեդեկ քահանան:**

Պատասխան: Թագավորական ցեղից էր և Սաղիմ կոչվող վայրի թագավորն էր, սա մի առաքինի, աստվածապաշտ և սուրբ մարդ լինելով, «Մելքիսեդեկ» կոչվեց, որը «հավատարիմ թագավոր» է նշանակում, քանի որ Մելիք «թագավոր» և Սեդեկ «հավատարիմ» է թարգմանվում, և քանի որ նրա բնակության վայրը Սաղիմ՝ «խաղաղություն» է նշանակում, նաև «խաղաղության թագավոր» էլ է կոչվում: Նա ինքը, քահանա լինելով և Աբրահամին հաց և գինի նվիրելով, հոգևոր առումով պատարագի խորհուրդը կամ օրինակն է հայտնում:

Մանավանդ որ Ս. գրքում նրա տոհմաբանությունը նշված չէ, ինչպես նաև նրա անունն ու քաղաքը, մատուցած նվերը և Աբրահամին օրհնելով, նրանից տասանորդ վերցնելով՝ Քրիստոսի օրինակը եղավ: Որովհետև Քրիստոսը,

խաղաղության և արդարության թագավոր լինելով, Երուսաղեմում մարդկությանը ազատեց գերությունից, և Սուրբ Պատարագը որպես հավիտենական կյանքի կերակուր պարգևեց. որի շնորհիվ վերանորոգված մարդը պարտական եղավ հավատալ և հնազանդվել Նրան, ինչպես նաև իր ստացվածքից տասանորդ տալ, քանզի Քրիստոս Ինքն է ճշմարիտ քահանան՝ ըստ Մելքիսեդեկի կարգի[154]:

Հարց Ժ. **Աբրահամը ինչի՞ց էր վախենում, որ Աստված քաջալերում էր նրան:**

Պատասխան: Ինչպես որ բարձր վայրում կանգնածը ավելի է վախենում, որ չընկնի, նույնպես էլ Աբրահամի փառքը որքան ավելանում էր, նույնքան էլ խոնարհ սրտով երկնչում էր, որ Աստծուն չբարկացնի: Որքան Աբրահամը խոնարհվում է, այդքան Աստծու օգնությունն է հայտնվում[155]: Որի համար էլ Աստված մխիթարում և քաջալերում է նրան, որ չերկնչի[156]: Մինչ այդ Աբրահամը Աստծուց ոչինչ չէր խնդրել, և դեռևս որդի չունենալու համար այս անգամ խնդրում է, որ գոնե իր հավատարիմ ծառա Եղիազարն իր ժառանգը լինի (նա տան վերակացուն էր, և քանի որ մանկությունից ի վեր իր մոտ էր մեծացել, զավակի նման սիրում էր):

Սակայն Աստված Եղիազարին նրան ժառանգ կարգելու փոխարեն հայտնում է, որ նրա զավակները երկնքի աստղերի

---

154 Մելքիսեդեկը թագավոր էր Սաղեմի, բարձրյալ Աստծու քահանա.... Նա անհայր էր, անմայր, առանց ազգատոհմի. ո՛չ օրերի սկիզբ ուներ և ո՛չ կյանքի վախճան. նմանվելով Աստծու Որդուն՝ նա կա ու մնում է մշտնջենապես քահանա (*Եբր.* 7:1,3):

155 Ով ինքն իրեն բարձրացնում է, պիտի խոնարհվի (*Ղուկ.* 14:11):

156 Մի՛ վախեցիր, Աբրա՛մ, ես քեզ հովանավոր կլինեմ, և քո վարձը չափազանց շատ կլինի (*Ծնն.* 15:1):

նման անհաշիվ պիտի լինեն[157]: Կարծես թե Աստված ասելու լիներ. «Ո՛վ Աբրահամ, դու բավականանում ես քո ծառայի քեզ ժառանգ լինելով, սակայն քո ժառանգը պիտի քո որդին լինի և ոչ թե միայն աշխարհի հարստության և ստացվածքի, այլ մանավանդ երկնքի արքայության, որովհետև ով քեզ նման կատարյալ հավատով և սիրով Աստծուն հնազանդվելով Մեսիային հավատա, նա, քո հոգևոր որդին համարվելով, աստղի նման պիտի փայլի երկնքում»: Ինչպես քրիստոնյաները, Աբրահամի հոգևոր զավակները լինելով, երկնքի աստղերին են նմանեցվել, իսկ հրեաները, մարմնավոր որդիներ լինելով, երկրի ավազին են նմանվում:

Հիրավի, Աստծու խոստմանը հավատալով՝ Աբրահամի արդարությունը հայտնի դարձավ[158], սակայն նա իր սրտի խնդությունից միանգամից շտապում է հարցնել Աստծուն, թե ինչպես պիտի խոստացած երկիրը գրավի և տիրանա դրան[159]: Մի՛ կարծիր, թե Աստծու խոստմանը տարակուսելով է այս հարցը տալիս, այլ ձևի և կերպի մասին տեղեկություն ստանալու համար է խնդրում, որպեսզի Աստված մի նշանով հայտնի, թե ե՛րբ և ի՛նչ եղանակով պիտի գործադրի իր խոստումը:

Արդ, թե ե՛րբ և ինչպե՛ս Աբրահամի սերնդին խոստացված երկիրը ժառանգելը հայտնելու համար հրաման է տրվում նրան, որ երեք տարեկան մի երինջ, մեկ արու այծ և մեկ խոյ վերցնի և դրանք երկու մասի բաժանելով՝ իրար դեմ դիմաց կանգնեցնի, նույնպես մեկ տատրակ և մեկ աղավնի վերցնի, սակայն դրանց

---

157 Նայի՛ր երկնքին ու հաշվի՛ր աստղերը, եթե կարող ես հաշվել դրանք.... Այդքան է լինելու քո սերունդը (*Ծնող.* 15:5):

158 Աբրամը հավատաց Աստծուն, և այդ հավատը իր համար արդարություն համարվեց (*Ծնող.* 15:6):

159 Տե՛ր ամենակալ, ինչի՞ց իմանամ, որ ժառանգելու եմ այն (*Ծնող.* 15:8):

ձեռք չտա: Երբ Աբրահամն ամեն ինչ ըստ հրամանի արեց, թռչունները այդ մսերի վրա էին իջնում, և արևը մայր մտնելիս Աբրահամի վրա մի թմրություն, երկյուղ և խավար իջավ, և կրակի բոցախառն ծուխը այդ մսերի միջով անցնում էր:

Երբ Աբրահամը այս վիճակի մեջ էր, նրան ասվեց. «Հաստատ իմացի՛ր, որ քո զավակները օտար երկրում և պանդխտության մեջ 400 տարի պիտի չարչարվեն[160], իսկ իրենց չարչարող ազգը պիտի պատժվի, հետո բազում ստացվածքներով Քանանի երկիրը պիտի վերադառնան»: Արդարև, այսպիսով Աստված Աբրահամի հետ ուխտ կապեց[161], որով հայտնի դարձավ, որ նրա սերունդը Եգիպտոսում պիտի չարչարվի, և հետո ազատվելով՝ Քանանի երկրին պիտի տիրանան: Ինչպես որ Մովսեսի միջոցով Իսրայելի ժողովրդի՝ Եգիպտոսից դուրս գալը և չորրորդ դարում Հեսուի առաջնորդությամբ Երուսաղեմի կողմերում տիրապետելը Ս. գրքի մեջ ընդարձակորեն պատմվում է:

Հարց ԺԱ. **Ի՞նչ խորհուրդ ունեն վերոհիշյալ երինջը, արու այծ, խոյը, տատրակն ու աղավնին:**

Պատասխան: Երինջը, որը դեռ լծի տակ չի մտել, իսրայելացիների առաջին սերունդն է հայտնում, որ, առաջինը Եգիպտոս գնալով, Հովսեփի շնորհիվ առանց հարկերի և նեղությունների ենթարկվելու, հանգիստ և զվարճանքներով անցկացրեց իր կյանքը: Արու այծը երկրորդ սերունդն է ցույց տալիս, որոնց եգիպտացիները սկսեցին հարստահարել Հովսեփի մահանալուց հետո, նրանց կաթը կթելու նման, քանի որ առանց վարձատրության էին աշխատեցնում:

---

160 Քո հետնորդները պանդուխտ են լինելու օտար երկրում:.... Նրանց պիտի տանջեն չորս հարյուր տարի (*Ծնող.* 15:13):

161 Այդ օրը Տերն ուխտ դրեց Աբրամի հետ (*Ծնող.* 15:18):

Խոյը երրորդ սերունդն է հայտնում, որ փարավոնը ինչքան չարչարում էր, այնքան ավելի էին շատանում, և խոյի նման նեղություններին տոկալով՝ իրենց մարմինն անվնաս էր մնում: Նույնպես արևի մայրամուտի ժամանակ մսերի միջով բոցախառն ծխի անցնելը, ինչպես նաև [մսի վրա] թռչունների թառելը Հովսեփից հետո կռապաշտների կողմից եկող թշնամությունն էր ցույց տալիս, որը իսրայելացիները տեսան ու կրեցին թե՛ Եգիպտոսում, թե՛ հետո անապատում ամաղեկացիներից և հեթանոս ուրիշ թշնամիներից:

Իսկ երկու թռչունը՝ տատրակն ու աղավնին, որոնց առանց սպանելու թոցրեց, չորրորդ սերնդի օրինակն էին, որոնք թռչունի պես հրաշքով Եգիպտոսից դուրս եկան և քառասուն տարի անապատով ճամփորդելով՝ բոլոր տեսակի առանձնահատուկ նեղությունների ենթարկվեցին՝ տատրակի նման տխուր և տրտում: Հետո Ավետյաց երկիրը գրավելու հույսով միայն ոգևորված և այնտեղ՝ Ավետյաց երկրում, աղավնու նման պարզամիտ և ուրախ, իրենց ցեղերով բնակվելու և բազմանալու նշանն ու ապացույցն էր:

Իսրայելի ժողովրդի չորս հարյուր տարի Եգիպտոսում օտարության մեջ մնալը նրանց չորրորդ սերնդի Եգիպտոսից դուրս գալու օրինակը եղավ: Ոմանք այս չորս հարյուր տարին Իսահակի ծննդյան ժամանակից են հաշվում: Անդրադառնալով Աբրահամի վրա թմրություն, երկյուղ և մթություն տիրելուն՝ ապա սրանք նրա մահն էին նախանշում, քանի որ վերոհիշյալ նշանների կատարումը Աբրահամի մահից հետո պիտի տեղի ունենար[162]:

---

162 Դու խաղաղ հոգով պիտի գնաս քո նախնիների գիրկը (*Ծնող.* 15:15):

Հարց ԺԲ. **Աստված ամենակարող է և նախապես հայտնում է լինելու բաները, ինչո՞ւ այնքան ժամանակ հապաղեց գործադրել իր խոստումը:**

Պատասխան: «Աստված ինչո՞ւ է այսպես անում» ասելը պարզապես հանցանք է: Քանի որ Աստված առանց պատճառի բան չի անում: Ս. գիրքը, վերջում կատարվելիք բաների մասին նախապես հայտնելով, Աստծու կարողությունը, իմաստությունը և խոստումի մեջ հավատարիմ լինելն է հայտնում, որպեսզի մարդիկ, Աստծուն հավատալով, Նրան երախտապարտ լինելը հասկանան և Նրա հրամաններին հնազանդվեն: Քանի որ հզոր լինելով՝ Իր ամեն մի կամեցածը գործի է դնում. իմաստուն և նախագետ լինելով՝ հետագայում կատարվելիք բաները որպես ներկա գիտի և տեսնում է. հավատարիմ լինելով՝ կատարում է խոստումը, սակայն մարդու միտքը, Աստծու խորհուրդներին և գաղտնիքներին հասու և գիտակ չլինելով, երբ իր խնդրանքն իսկույն չի գործադրվում, հուսահատությամբ տանջում է ինքն իրեն:

Արդ, դու ժամանակի երկարությանը մի՛ նայիր, այլ գործի աստիճան առ աստիճան առաջ գնալո՛ւն ուշադրություն դարձրու, որովհետև այս անգամ խոստացված վայրերը և այնտեղ բնակվող ազգերն անուն առ անուն հիշատակվում են[163]: Մանավանդ այս ընթացքում Սարան (համարվում է, թե Աստուց ներշնչված) իր Ագար աղախնին Աբրահամին է տալիս, որպեսզի նրանից զավակ ունենա, սակայն Ագարը, հղիանալուն պես հպարտանալով, այլևս չցանկացավ հնազանդվել Սարային: Այս ըմբոստությունը Սարային խիստ դժվար և ծանր թվաց,

---

[163] Քո հետնորդներին եմ տալու այդ երկիրը՝ եգիպտացիների գետից մինչև Եփրատ մեծ գետը, նրանց պիտի ենթարկվեն կինեցիները, կենեզացիները.... ամորհացիները, քանանացիները և հեբուսացիները (*Ծնող.* 15:18-21):

և գանգատի ձևով խնդիրը Աբրահամին հայտնեց՝ դատաստանը Աստծուն թողնելով: Աբրահամը պատասխանում է, թե աղախինը քո ձեռքում է, քեզ ինչ հաճելի է, ա՛յն արա:

Սարան սույն լիազորված արտոնությունը ստանալուց հետո սկսեց նեղել Ագարին, որը փախավ Աբրահամի տնից, սակայն Սուր կոչվող վայրի ճանապարհին Աստծու հրեշտակը, նրան երևալով, հրամայում է, որ հետ դառնա և հնազանդվի իր տիկնոջը՝ հայտնելով, որ նրանից ծնվող զավակը Իսմայել պիտի կոչվի, որ շատ ուժեղ ու վայրագ պիտի լինի և պիտի աճի ու բազմանա: Ագարը, Աստծուց շնորհակալ լինելով, վերադառնում է Սարայի մոտ, և մանուկը ծնվելով Իսմայել անունն է ստանում Աբրահամից, որն այդ ժամանակ ճիշտ ութսունվեց տարեկան էր:

Արդարև, այս դեպքն էլ Աբրահամին Աստծու խոստման առհավատչյա կամ վավերացում կարելի է համարել, որովհետև Աբրահամը՝ սինագոգի, իսկ Սարան սուրբ եկեղեցու օրինակն էր, նախ Ագարից որդի ծնվեց Աբրահամի համար, ապա՝ Սառայից: Ինչպես որ Աստված նախ՝ Իսրայելին Իր սեփական ժողովուրդը համարեց, հետո՝ քրիստոնյաներին:

Աբրահամի 99 տարեկան լինելու ժամանակ Աստված նորից երևաց նրան, անվան վրա մի տառ ավելացրեց, քանի որ նախկինում Աբրամ էր կոչվում, իսկ հետո Աբրահամ անվանվեց, որը «բազում ազգերի հայր» է նշանակում[164]: Սարայի անվան վրա նույնպես մի տառ ավելացնելով՝ Սարան փոխվեց Սառայի, որը «բազում ազգերի մայր» է նշանակում:

Սրանից բացի, Աբրահամի ցեղը կռապաշտներից զատելու համար հրաման եղավ, որ Աբրահամը և նրա հպատակներն ու ցեղը թլփատվեն: Այս պատվերը Հիսուսը փոխեց մկրտության,

---

[164] Բազում ազգերի նախահայր եմ դարձնելու քեզ (*Ծնող.* 17:5):

հետևաբար թլփատությունը ընդհատվեց, քանի որ մկրտությունը, հոգևոր թլփատություն լինելով, մարմնավորին մի կողմ թողեց, ինչպես որ արեգակի ծագելուն պես գիշերային մթությունը փարատվում է[165]: Մինչ այդ Սարան տակավին զավակ չէր ծնել, որի համար Աբրահամին ավետիս է տրվում, որ Սարան զավակ պիտի ունենա, և անունն էլ Իսահակ պիտի դնի, որով էլ Աստծու խոստումը պիտի կատարվի, այլ ոչ թե Իսմայելի ծնվելով[166]:

Հիրավի, մարդկային տեսակետից այնպես է թվում, թե Աբրահամին տրված խոստման կատարումը օր օրի ուշանում է, սակայն Աստծու տեսակետից արդեն կատարված էր: Քանի որ մարդու համար անհնար է անփոփոխ մնալ, ուստի Աստծու ողորմությունը մարդու վիճակի համեմատ է շնորհվում նրան, որպեսզի Աստծուն՝ փառք, իսկ մարդուն օգուտ լինի: Ինչպես վերոհիշյալներից հայտնի դարձավ, ինչքան էլ Աբրահամի զավակ ունենալու խոստումը և ավետիսը տրվեց, սակայն ժամանակը հայտնված չէր: Ահա այս անգամ մարդկային կերպարանքով երեք հրեշտակներ, նրա վրանը գալով, մանկան ծնվելու ժամանակն էլ հայտնում են[167]: Սակայն Սարան, իր ծերությանը նայելով և մտքում այդ բանը անկարելի համարելով, հանդիմանության է արժանանում:

---

165 Հաճելի թվաց Սուրբ Հոգուն և մեզ՝ ավելի ոչ մի բեռ չդնել ձեզ վրա (*Գործք* 15:28):

166 Ահա քո կին Սառան քեզ համար որդի է բերելու, նրա անունը Իսահակ պիտի դնես, և իմ ուխտը հաստատելու եմ քեզ հետ (*Ծնն.* 17:19): Ոչ էլ բոլորը, որ Աբրահամի սերնդից են, որդիներ են, այլ «Իսահակի անունո՛վ քո սերունդը պիտի կոչվի» (*Հռոմ.* 9:7):

167 Ես կօրհնեմ նրան և նրա միջոցով քեզ զավակ կպարգևեմ (*Ծնն.* 17:14):

Ճշմարիտ է, որ մարդկայնորեն անհնար էր, սակայն Աստծու համար՝ հնարավոր[168]:

Աբրահամի հյուրասիրությունից պետք է օրինակ վերցնել[169], քանի որ վրանի դռան մոտ հատուկ սպասում էր, որ անցորդ ճամփորդներին պատվի, ինչպես որ երեկ արեց՝ հրեշտակներին ճաշ տալով: Թեև հրեշտակները՝ որպես հոգեղեն էակներ, մարմնական կերակուրի կարիքը չունեն, սակայն մարդկային կերպարանքով երևալու պատճառով որպես մարդ կերակուր ուտելու կարողությունն են ցույց տալիս վայելչորեն:

Հարց ԺԳ. **Ինչո՞ւ է երեք հրեշտակ գալիս Աբրահամի մոտ. մեկը բավական չէ՞ր:**

Պատասխան: Բավական էր, սակայն եկան ոչ թե միայն Աբրահամի զավակ ունենալն ավետելու, այլ մանավանդ Սոդոմն ու Գոմորը կործանելու և Ղովտին մեծ վտանգից ազատելու համար: Այդ պատճառով երեք հրեշտակներ ուղարկվեցին, որոնցից մեկը Աբրահամի մոտ մնաց՝ զրուցելու համար, իսկ երկուսը Սոդոմ քաղաքը գնացին: Աբրահամը, երեք հրեշտակներին մասնավորապես հոգևոր իմաստով որպես Սուրբ Երրորդության օրինակ ընդունելով, երեքին մեկ անգամ է երկրպագում և որպես մեկ հոգու է դիմում[170], ինչպես նաև հրեշտակներից միայն մեկն է պատասխանում[171]:

Այս պարագայում Աստված իր ողորմությունն ու արդարությունն է հայտնապես ցույց տալիս, որպեսզի օրինապահ

---

168 Մի՞թե Աստծու համար անկարելի բան կա (*Ծնող.* 18:14):

169 Մի՛ մոռացեք օտարասիրությունը, որովհետև դրա շնորհիվ ոմանք հրեշտակներ հյուրընկալեցին առանց իմանալու (*Եբր.* 13:2):

170 Տե՛ր, եթե շնորհ գտա քո առաջ (*Ծնող.* 18:3):

171 Եվ Տերն ասում է Աբրահամին (*Ծնող.* 18:13):

և հնազանդ մարդիկ ուրախանան, իսկ չարագործներն ու պարտազանցները վախենալով ապաշխարեն: Քանի որ օրինակի համար Սոդոմի և Գոմորի ժողովրդին՝ որպես ամբարիշտ ու անօրենի, պատժելու համար հրեշտակ հատկացվեց, նույնպես էլ առաքինի և աստվածավախ Ղովտին ազատելու համար հրեշտակ հատկացվեց: Բացի այդ, Աբրահամի արդարությունն ու հավատարմությունը հայտնի դարձնելու համար Աստված «իր ծառա» է անվանում նրան, որպեսզի մարդիկ, նրա սիրտը լավ ճանաչելով, հավատարմությամբ ծառայեն Աստծուն և այսպիսով ամեն վտանգից զերծ մնան. քանի որ ինչպես Աբրահամն էր Աստծուն հավատարիմ, նույնպես էլ իր որդիներին պիտի պատվիրեր, որ նրանք նույնպես հավատարմությամբ ծառայեն և հնազանդվեն Աստծուն[172]:

Դու ևս օրինա՛կ վերցրու, ո՛վ ընթերցող, մարդու համար «Աստծու ծառա» կոչվելուց առավել մեծ պատիվ չի լինում[173]: Ճատերը, մարմնավոր պատիվ և փառք կորցնելով, թշվառ դարձան, սակայն Աստծու հավատարիմ ծառան երկու աշխարհներում պատվի և փառքի արժանացավ: Լա՛վ մտապահիր չար և բարի մարդկանց տարբերությունը, քանի որ Աբրահամի առաքինությունը արևի նման պայծառ երևում է: Իսկ Սոդոմի և Գոմորի ժողովրդի չարությունը և նրանց հանդեպ աղաղակները երբ շատանում են, խիստ մեծ[174] մեղքերի

---

172 Տերն ասաց. «Մի՞թե ես իմ ծառա Աբրահամից գաղտնի պիտի պահեմ այն, ինչ անելու եմ:.... որովհետև գիտեի, որ նա իր որդիներին և իր հետնորդներին կպատվիրի, որ նրանք Տիրոջ ճանապարհով գնան» (*Ծնն.* 18:17):

173 Մեծ բան է քեզ համար այն, որ քեզ իմ ծառան եմ կոչում (*Եսայի* 49:6):

174 Սոդոմացիների և գոմարացիների մեղքերը խիստ շատացել են (*Ծնն.* 18:20):

մեջ անդառնալի կործանված լինելու ցավալի վիճակը հայտնելուց բացի, հրեշտակը հայտնում է նաև, որ չարաչար պիտի պատժվեն, որպեսզի բոլոր մարդկանց համար ուղղության օրինակ լինեն: Այդ ամբարիշտ ժողովուրդը ոչ թե մի փոքր ժամանակ էր չարացել, այլ վաղուց չար լինելով՝ օր օրի ավելի ու ավելի բազմապատկեց իր անզգամությունը, քանի որ սրանց մեղավորության մասին Ս. գիրքը նախապես գրել էր և հիշատակել[175]:

Մարդ կա, որ թե՛ Աստծուն և թե՛ մարդկանց հաճելի է, ինչպես Աբրահամը: Նույնպես մարդ կա, որ թե՛ Աստծու և թե՛ մարդկանց թշնամին է, ինչպես սոդոմացիները: Կան մարդիկ, որոնք Աստծու առջև մեղավոր են, սակայն մարդկանց աչքին արդար են երևում, և կան մարդիկ, որոնք թեև Աստծու աչքին հաճելի են, սակայն մարդիկ նրանց մասին չար են խոսում և բամբասում: Որովհետև նրանք, իրար սրտերը չիմանալով, շատ անգամ բարուն չար են ասում, իսկ չարին՝ բարի: Ուրեմն դու ջա՛նք թափիր, որ թե՛ Աստծու և թե՛ մարդկանց աչքին բարի լինես, և եթե երկուսին էլ միաժամանակ չկարողանաս հաճելի լինել, Աստծուն հաճելի լինելը նախընտրի՛ր, և եթե մարդիկ քեզ պարսավեն, հոգ մի՛ արա, միայն թե դու ինքնին բամբասանքների առիթ մի՛ տուր:

Դարձյալ նայի՛ր, որ մի բանի մասին լավ չտեղեկացած՝ վճիռ չարձակես, քանզի սոդոմացիների մեղքը հայտնի լինելով հանդերձ՝ Աստված՝ մարդու նման, գործը քննելու երևույթ է ցույց տալիս[176]:

---

175 Սոդոմացիները չար մարդիկ էին և Աստծու հանդեպ բազում մեղքեր էին գործում (*Ծնն.* 13:13):

176 Իջնեմ տեսնեմ, թե ինձ հասած նրանց աղաղակը համապատասխանո՞ւմ է նրանց կատարածին, թե՞ ոչ (*Ծնն.* 18:21):

Նայի՛ր, որ Սուրբ գիրքը մեղքը նմանեցնում է աղաղակի և գանգատի, քանի որ արարածները, մեղավոր մարդու մասին գանգատվելով, աղաղակ են բարձրացնում առ Աստված: Պետք է իմանալ, որ Աստված նրանց ծառայելու համար հանձնեց մարդուն, որպեսզի մարդն էլ Աստծուն ծառայի, արդ, երբ մարդը մեղանչում է, Աստծու ծառայությունից հետ կանգնելով՝ արարածին իր մեղքի գործիք է դարձրած լինում, ուստի արարածներն աղաղակում և բողոքում են, որ կա՛մ մեղավորի ձեռքից ազատի իրենց և կա՛մ նրան իրավացիորեն պատժի: Ինչպես Եսայի մարգարեն է երկնքին և երկրին հրավեր կարդում, որ Իսրայելի ազգի հետ ունեցած Աստծու դատաստանին ունկնդիր լինեն, որպես թե վկայելու համար[177]:

Հիրավի, մեծ մեղավորների դեմ բովանդակ տիեզերքն է դատախազ լինում, սակայն Աբրահամը, Աստծու գթության վրա հույս դրած, մանավանդ սոդոմացիների մեղքն իրեն հայտնելուց հետո համարձակություն ստացած, սկսում է աղաչել Աստծուն, որ եթե հինգ քաղաքներում՝ Սոդոմ, Գոմոր, Սեբոյիմ, Ադամա և Սեգոր, հիսուն անմեղ և արդար մարդիկ գտնվեն, ի սեր այս վերջինների[178]՝ բոլորին մեղքերի ներում և թողություն շնորհի, թեև նրանք ներման և գթության անարժան են:

Բայց երբ Աստված հայտնում է, որ այդ քաղաքի բնակիչների մեջ հիսուն արդար մարդ չկա, Աբրահամը, խոնարհությամբ իրեն հող և մոխիր[179] կոչելով, կրկին ու կրկին աղաչում է և թախանձում, որ եթե 45, 40, 30, 20 և վերջապես 10 արդար

---

177 Լսի՛ր, երկի՛նք, և ակա՛նջ դիր, երկի՛ր... Զավակներ ունեցա և մեծացրի, իսկ նրանք ինձ անարգեցին (*Եսայի* 1:1):

178 Եթե քաղաքում հիսուն արդար լինի, կոչնչացնե՞ս նրանց, չե՞ս խնայի ամբողջ քաղաքը (*Ծննդ.* 18:24):

179 Բայց ես հող եմ ու մոխիր (*Ծննդ.* 18:27):

գտնվի[180], խնայի այդ բազմությանը, և պատասխան է ստանում, որ եթե տասը արդար գտնվի, դրանց պատճառով մնացյալին չի կործանի:

Սակայն ոչ թե տասը կամ հինգ, այլ նույնիսկ մեկ արդար էլ չգտնվեց: Այո՛, Ղովտը արդար է և Սոդոմ քաղաքում է բնակվում, սակայն նա սոդոմացի չէ: Ուրեմն, ո՛վ մարդ, Ղովտի ազատվելը և սոդոմացիների ահեղ պատուհասը թող քեզ ամբողջ կյանքումդ փրկարար խրատ լինի:

Հարց ԺԴ. **Որ՞ն էր սոդոմացիների մեղքը:**

Պատասխան: Բնության օրենքների դեմ պղծագործությունը: Հիշյալ օրենքը մարդու էության մեջ բնության ձեռքով գրված գրքի նման տպված է, դրան հակառակ գործողը Աստծու հրամանին հակառակ է գտնվում և անպատճառ պատժվում է: Սոդոմացիները մի այսպիսի չար ընթացքի էին մոլեգնորեն հետևել, և հետևաբար շատ մեծ էր նրանց մեղքը: Եվ այս նողկալի մոլորության պատճառը իրենց հպարտությունը և չափից դուրս կերուխումների և զվարճությունների հանդեպ սերն էր[181]: Քանի որ հպարտ մարդը ինքն իրեն հավանում է, այդ պիղծ ախտը պատիժ է լինում նրան՝ աշխարհի առջև խայտառակ լինելու համար:

Եվ դարձյալ, զվարճասիրությունն ու շվայտությունը, ինչպես նաև անգործությունը, կրակի վրա յուղ լցնելու նման ցանկական ախտի զորությունը մեծացնելով՝ մարդուն անբան անասունից էլ ավելի են ստորացնում: Ինչպես ջրհեղեղի ժամանակ մարդիկ ամեն տեսակ զվարճությունների էին

---

180 Չեմ կործանի հանուն տասի (*Ծնն.* 18:32):

181 Քո քրոջ՝ Սոդոմի անօրենությունն այս էր՝ ամբարտավանություն, հացով լիացածություն, գինու մեջ հղփացածություն: Մեղկ կյանք էին վարում ինքն էլ, դուստրերն էլ (*Եզեկ.* 16:49):

անձնատուր եղել, նույնպես նաև սոդոմացիները[182], քանի որ այդ երկրի բերքը շատ առատ էր, ամեն մարդ իր ապրուստը առանց դժվարության էր ձեռք բերում, ուստի բոլորն էլ միահամուռ մարմնի ցանկություններին հագուրդ տալով էին զբաղված, քանի որ հանգստությունը նրանց կատաղության աստիճանի էր հասցրել:

Ինչպես որ պարարտացած ձին, ոտնակապը կտրելով, իր տիրոջն է աքացի տալիս, այդպես էլ այդ անիրավները, ամոթի ոտնակապերը արձակելով, Աստծուն հնազանդվելու դեմ ապստամբեցին: Մի՛ հրճվիր ստացվածքների, մեծության և հաճույքների վրա, ընդհակառակը՝ վախեցի՛ր, որ չհրապուրվես, որովհետև մարմնի ճոխությունները, մեծությունը և հաճույքները մեծ վտանգ են մարդու համար և շատ-շատերը անզերծ և անդառնալիորեն վտանգվեցին:

Դու տե՛ս Աստծու ողորմությունը, թեպետ Սոդոմի և Գոմորի ժողովուրդը ամեն տեսակետից պատժի է արժանի, սակայն Աստված իր բազում ողորմությամբ երկու հրեշտակների է ուղարկում Սոդոմ, որպեսզի ստուգապես իմանան, որ պատժվելու են, փութան ապաշխարել, սակայն նրանք զղջալու փոխարեն ավելի լրբացան: Ղովտը, որ Սոդոմում էր բնակվում, հրեշտակներին տեսնելուն պես, ճանապարհորդների տեղ դնելով, իր տուն հրավիրեց, որպեսզի հյուրասիրության պարտքը կատարի: Իսկույն քաղաքի բնակիչները՝ երիտասարդ և ծեր, առհասարակ բոլորը, շրջապատեցին Ղովտի տունը և չար մտադրությամբ ցանկանում էին հյուրերին բռնությամբ տանել[183]:

---

182 Նույնպես, ինչպես Ղովտի օրով էլ եղավ. ուտում էին, խմում, առնում էին ու վաճառում, տնկում էին, շինում (*Ղուկ.* 17:28):

183 Սոդոմացիների քաղաքի տղամարդիկ՝ երիտասարդից մինչև ծերը, ամբողջ ժողովուրդը միասին պաշարեցին տունը (*Ծնն.* 19:4):

Ղովտը նրանց չհանձնելու համար դուրս է գալիս, և թեև շատ խրատ է տալիս, շատ է աղաչում, սակայն չեն համոզվում: Այդ ժամանակ Ղովտը, խիստ նեղ վիճակի մեջ մնալով, հանձն է առնում իր երկու կույս աղջիկներին նրանց ձեռքը տալ, պայմանով, որ իր հյուրերին ձեռք չտան, սակայն անօգուտ, քանի որ նրանց սրտերից Աստծու երկյուղը և մարդկային ամոթը ջնջված էր. ոչ միայն չեն զղջում, այլև Ղովտին նույնպես սկսում են սպառնալ, քանի որ խրատ լսել չցանկացողին խրատելը կրակի վրա յուղ լցնելուն է նմանվում:

Մինչ Ղովտը սոդոմացիների հետ վիճում էր, հանկարծ հրեշտակները դուրս են գալիս, որպեսզի Ղովտին այդ անզգամների ձեռքից ազատեն, սոդոմացիների աչքերը կուրացնում են[184], և ինչպես որ նրանց հոգու աչքը մեղքի պատճառով փակված էր, նույնպես մարմնի աչքերի ևս վրա վարագույր իջեցնելով՝ տան դուռը որքան էլ որոնեցին, սակայն չկարողացան գտնել: Հիրավի, մինչ այդ պահը Ղովտը միշտ ցավում էր սոդոմացիների չար ընթացքի համար[185], սակայն այս անգամ հյուրերից ակնածելով՝ վերին աստիճանի տխրեց, քանի որ նրանց հրեշտակ լինելը դեռ չգիտեր: Արդարև այս պարագայում Ղովտի առաքինությունը երևան գալով, սոդոմացիների չարությունն ու անամոթությունը բազմապատկվեցին:

Այստեղ նկատի՛ առ, թե Աստված որքա՛ն ներողամիտ է, իսկ չարագործները որքա՛ն համառ են: Այո՛, սոդոմացիների աչքերը կուրացան, սակայն դարձյալ չզղջացին: Հրեշտակները, քաղաքի կործանման համար իրենց գալը Ղովտին հայտնելով, ստիպում են, որ իսկույն Սոդոմից դուրս գա, սակայն նրանք

---

184 Դռան մոտ գտնվող մարդկանց՝ փոքրից մինչև մեծը կուրացրին (*Ծնող.* 19:11):

185 Արդարը, բնակվելով նրանց մեջ, ականատես և ականջալուր էր լինում նրանց անօրեն գործերին (*Բ Պետ.* 2:8):

չեն հավատում, մանավանդ Ղովտի աղջիկների նշանածները ծիծաղելով ծաղրում են[186]: Բացի այդ, երբ Ղովտի կինն ու աղջիկները Սոդոմից դուրս գալը շատ են դանդաղեցնում, այդ ժամանակ հրեշտակները Ղովտի, նրա կնոջ և աղջիկների ձեռքից բռնելով դուրս են հանում՝ միաժամանակ պատվիրելով, որ առանց հետ նայելու շտապեն լեռը բարձրանալ, որպեսզի վերահաս պատժից ազատվեն:

Թեպետ Ղովտը, հրեշտակների խոսքին հավատալով, դուրս եկավ Սոդոմից, սակայն «միգուցե լեռը չհասած՝ պատիժը վրա հասնի» ասելով՝ սկսում է վախենալ և աղաչում է հրեշտակներին, որ գոնե Սեգոր քաղաքը խնայեն, որտեղ կկարողանային ապաստանել[187] (քանի որ Սեգորը ճանապարհի վրա էր և իրենց մոտ էր): Հիրավի, այդ քաղաքը կործանվելու համար նախատեսված հինգ քաղաքներից մեկն էր, այսուհանդերձ, ի պատիվ Ղովտի՝ հրեշտակը պատասխանում է, որ քո աղաչանքների համար այդ քաղաքը թող որ անկործան մնա:

Արդ, մտապահի՛ր արդար մարդու օգտակարությունը, քանի որ ի սեր Ղովտի, մի ամբողջ քաղաք կործանվելուց ազատվեց[188]:

Սակայն Ղովտի կինը, հավատք չընծայելով հրեշտակների խոսքին, նրանց պատվերին հակառակ հետ դառնալով և դեպի Սոդոմը նայելուն պես աղի արձան դարձավ[189]: Հիրավի, հիշյալը սոդոմացիների հետ չայրվեց, քանի որ Սոդոմից դուրս եկավ, սակայն Ղովտի հետ չազատվեց, քանի որ պատվերին

---

186 Փեսացուներին թվաց, թե նա կատակ է անում (*Ծնող.* 19:14):

187 Աղաչում եմ, Տե՛ր: ....Ես չեմ կարող փախչել լեռը, որովհետև գուցե ինձ էլ հասնի փորձանքը, և ես մեռնեմ (*Ծնող.* 19:18–19):

188 Ահա ես շնորհ եմ անում քեզ և քո այդ ասածին անսալով՝ չեմ կործանի այն քաղաքը, որի մասին ասացիր (*Ծնող.* 19:21):

189 Ղովտի կինը հետ նայեց ու դարձավ աղե արձան (*Ծնող.* 19:26):

հակառակ գործեց: Քար դարձավ, սակայն շինարարության համար անպիտան, քանի որ աղ էր, նմանապես կերակուրին համ չի տալիս, քանի որ քար է և նույնիսկ անձրևից չի հալչում:

Արդարև, մի այլ տեսակ քար չդառնալով, այլ որպես աղի արձան ճանապարհի վրա կանգնած լինելը մեծ խրատ է բոլոր մարդկանց համար, քանի որ ինչպես մահապարտներին ճանապարհների մոտ են կախում, որպեսզի անցորդները տեսնելով վախենան, նույնպես հիշյալ կնոջ պատմության շուրջ խորհողները մեծ և զարհուրելի սարսափով են համակվում: Ինչպես աղն է կերակրին համ տալիս, այդպես էլ Ղովտի կնոջ պատժից մարդիկ պարտական են խրատ առնել և աստվածային պատվիրաններին հակառակ գործելուց խիստ զգուշանալ[190]: Այս իսկ պատճառով մեր Փրկիչ Տեր Հիսուս մեզ պատվիրում է Ղովտի կնոջը չմոռանալ և հիշել[191]:

Լա՛վ հիշիր, Ղովտի ձեռքից բռնելով չտարան Սոդոմ, այլ իր կամքով և հոժարությամբ գնաց, սակայն Սոդոմից դուրս գալու համար հրեշտակի օգնության կարիքն ունեցավ. նույնպես մարդը իր կամքով է մեղանչում, սակայն միայն իր զորությամբ անկարող է փրկվել, այլ Աստծու շնորհների և օգնության կարիքն ունի[192]: Ղովտը, բարեբեր և բազմաբեղուն երկրում բնակվելով, նախ գերի ընկավ, և եթե այս անգամ երկնքից եկող օգնությունը չլիներ, պետք է կործանվեր: Եվ թեպետ պատժից ազատվեց, սակայն մահու չափ երկյուղ կրեց, և եթե նա, ով սոդոմացիների մեղքին անհաղորդ էր, և իր ազատվելու համար հրեշտակ էր հատկացված, այսպիսի մեծ վախի ենթարկվեց,

---

190 Խորագետն ավելի հաստատությամբ է խրատում իրեն, բայց անմիտները, զանց առնելով այն, ավելի են վնասվում (*Առակ.* 22:3):

191 Հիշեցե՛ք Ղովտի կնոջը (*Ղուկ.* 17:32):

192 Առանց ինձ ոչինչ անել չեք կարող (*Հովհ.* 15:5):

ի՞նչ պիտի լինի այն մարդու վիճակը, որն աշխարհի հարստության և մարմնի հանգստության պատճառով ոչ միայն մարմինը, այլև մանավանդ հոգին է վտանգում:

Ափսո՛ս, շատերը մարմնի հաճույքների և զվարճանքների համար իրենք իրենց անմտորեն հավիտենական տանջանքների են ենթարկվում:

Հարց ԺԵ. **Ի՞նչ էր Սոդոմին և Գոմորին տրված պատիժը:**

Պատասխան: Հուր և ծծումբ[193]: Սակայն այս հուրը ոչ թե բնական ուժերի համաձայն երկրի ընդերքից առաջ եկավ, այլ հատկապես Աստծու կողմից տրված պատիժ էր:

Դու նայի՛ր այս խեղճ մեղավորների թշվառ վիճակին, որովհետև Ղովտի Սեգոր մտնելուն պես արևը, սովորականի պես երկնքի սև քողը պատռելով, իր լուսեղեն կերպարանքն է ցույց տալիս մահկանացուներին՝ աշխարհը խնդությամբ և բերկրանքով լցնելու համար, երբ հանկարծ, Աստված ողորմի, մի գարշահոտ կրակ՝ սևաթույր ծխով, որպես անձրև սկսեց տեղալ այդ ամբարիշտների վրա: Ուրիշ տեղեր առավոտյան ցողը իջնելով կենդանություն է պարգևում, իսկ Սոդոմ Գոմորի վրա կրակ է տեղում. այլուր առավոտյան զովագույն զեփյուռը փչելով աշխարհին ուրախություն է պատճառում, իսկ սրանց վրա ծծմբախառն բոց փչելով ամենքին էլ այրում և ածխացնում է[194]:

Օ՜հ, ուրեմն այժմ որտե՞ղ են ամեն առավոտ իրենց զվարճություններին անձնատուր եղողները: Ո՞ւր են նրանք, ովքեր օր օրի տարբեր տեսակի հաճույքներ անցկացնելու համար

---

193 Տերը երկնքից ծծումբ ու կրակ թափեց Սոդոմի ու Գոմորի վրա (*Ծնն.* 19:24):

194 Այն օրը, երբ Ղովտը Սոդոմից դուրս ելավ, երկնքից կրակ և ծծումբ տեղաց ու բոլորին կորստյան մատնեց (*Ղուկ.* 17:29):

այգիներում և պարտեզներում ուտում և խմում էին, ո՞ւր են նրանք, ովքեր, Ղովտի տունը շրջապատելով, ցանկանում էին հյուրերին բռնությամբ ստանալ, ո՞ւր են Ղովտի փեսաները՝ Ղովտին հիմար կարծող ծիծաղողները, արդյոք հիմա որքա՛ն լաց ու կոծով ողբում և արտասվում են: Բայց կրակի բնությունը հայտնի է, այն արտասվելու ժամանակ չի թողնում և փախուստի ճանապարհ չի տալիս:

Քանի որ Աստծու հրամանով և տրված վճռի համաձայն արդարության համար սահմանված զորքը՝ կրակը, թշնամու բանակը շրջապատելու պես Սոդոմի և Գոմորի երկիրը իսկույն պատելով, ազատվելու ոչ մի հնարավորություն չի տալիս: Փրկության հնարավորությունը կորցնողը պատժի ժամանակ չի կարող փրկվել: Աստծու բարերարությունը չիմացողը գթության և ողորմության չի կարող արժանանալ: Խորհի՛ր, թե կրակ տեղալ սկսելու ժամանակ այդ անհիրավների մտքով արդյոք ի՞նչ էր անցնում, արդյոք որևէ տեղից օգնություն խնդրեցի՞ն, արդյոք իրենց մեղքի պատճառով Աստծուց պատիժ կրելու գիտակցությունը ունենալով՝ աղոթեցին և աղաչեցի՞ն, քա՛վ լիցի, քանի որ ամեն մարդ դեռևս իր տանը մահճում էր, ո՞վ կարող էր աչք բացել, ո՞վ կհամարձակվեր տեղից շարժվել, կրակը վերևից սաստկությամբ իջնում էր և ընկած տեղը բռնկվելով՝ երկրի երեսը հրե սալահատակով էր ծածկում, ուստի բոլորն էլ իրենց կրակ դարձած բնակարաններում այրվում են:

Ինչպես որ չորացած տերևները երբ հնոց են նետվում, որքա՞ն արագ են այրվում, նույնպես էլ այդ երկրի լեռներն ու քարերը կրակ դարձած՝ թփի պես սոդոմացիներին այրելով մոխիր դարձրին: Կրակի բնությունն է բոցը միշտ դեպի վեր ուղղել, սակայն այս անգամ բնությանը հակառակ դեպի ներքև դարձրեց իր երեսը, որպեսզի բնության օրենքներին հակառակ գործողներին այրի:

Պետք չէ առարկել՝ ասելով, թե անասունների և մանուկների մեղքը ո՞րն էր, որ մեղավորների հետ պատժվեցին. արդյո՞ք անասունները նրանց վաստակը չէին, կամ երեխաները մեծանալով իրենց ծնողներից վատթար չպիտի լինեին: Նախկինում մեղքի համար շատ անգամ էր պատիժ տրվել, սակայն շատերի հետքը կորսվել էր, միայն գրքերի մեջ նրանց պատմությունը մնաց: Իսկ Սոդոմի և Գոմորի պատահարած սոսկալի դեպքի պատմությունը Ս. գրքում գրվելուց բացի, ապացույցները մինչ այժմ հայտնապես երևում են:

Որովհետև մինչ այդ երկիրը նախկինում շատ բարեբեր և այգիներով ու պարտեզներով լի էր[195], դեպքից հետո հրդեհված մի ավերակ դարձավ: Մինչ այսօր հրդեհի ծխի պես ծխում է, և այդտեղի պտուղն ընդհանրապես չի ուտվում, այո՛, ծառի վրա եղած ժամանակ այն ուտելու պտուղ ես համարում, սակայն մեջը բոլորովին փոշի և մոխիր է: Նույնպես Ղովտի կնոջ աղի արձանը մինչ այսօր առանց լուծվելու մնում է[196]:

Իմացի՛ր, եթե բնական օրենքի ներքո գտնվող մարդիկ այսպիսի խիստ պատժի արժանացան, այժմ Քրիստոս Փրկչի շնորհական օրենքի տակ այդպես մեղանչող մարդիկ արդյոք որքա՞ն առավել սաստիկ պատժի պիտի արժանանան[197]:

---

195 Աստված քանի դեռ չէր կործանել Սոդոմն ու Գոմորը, ... Աստծու դրախտի նման էր (*Ծնող.* 13:10):

196 Իմաստությունն ամբարիշտների կորստի ժամանակ փրկեց արդարին՝ փախցնելով նրան հինգ քաղաքների վրա իջնող հրից, ուր որպես չարիքի վկա՝ հողերը ծխալով դեռևս մնում են խոպան, ուր պտղատու տունկերը ժամանակին պտուղ չեն տալիս, և ուր որպես անհավատ հոգու հիշատակ՝ կանգուն է աղի արձանը (*Իմաստ.* 10:6-7):

197 Նա սոդոմացիների և գոմարացիների քաղաքները մոխրի վերածելով դատապարտեց՝ օրինակ ծառայեցնելով նրանց ապագայի ամբարիշտների համար (*Բ Պետ.* 2:6):

Հարց ԺԶ. **Աբրահամն ինչպե՞ս իմացավ Սոդոմի և Գոմորի այրվելու և Ղովտի ազատվելու մասին:**

Պատասխան: Աբրահամը գիտեր, որ Աստված անմեղ մարդուն պահպանում է[198]: Մանավանդ սոդոմացիների համար բարեխոսելու ժամանակ Ղովտի փրկությունն էլ էր խնդրել[199]: Հիրավի, Ղովտի անունը չի հիշատակում, սակայն հայտնի է, որ մտադրությունը Ղովտի համար էր[200], հետևաբար Ղովտի փրկության համար Աբրահամը երբեք չտարակուսեց: Եվ ուրեմն առաջին իսկ օրվանից գործին տեղյակ էր, երկնքում բոցի երևալուն պես իմացավ, որ սոդոմացիներն էին այրվում[201]:

Սակայն այս դեպքի պատճառով իր հանգստությունը գրեթե կորցրեց: Որովհետև Սոդոմի և Գոմորի երկիրն իր բնակության վայրին մոտ էր, բնականաբար հրդեհի բորբոքումը այդ կողմերը նույնպես պիտի վնասեր, ուստի Քեբրոնից գաղթում է Գերերա կոչված վայրը: Եվ ահա այստեղ նույնպես Եգիպտոսում պատահածի նման Աբիմելեք թագավորը, Սառային Աբրահամի քույրը կարծելով, նրան իրեն կին դարձնելու նպատակով վերցնում է:

Արդ, քանի որ հիշյալը անգիտաբար և ոչ թե չար մտադրությամբ այս բանն արեց, դրա համար էլ Աստված երազի մեջ պատվիրում է Սառային վերադարձնել իր ամուսնուն, եթե ոչ՝

---

198 Տերը գիտե աստվածապաշտներին փրկել փորձությունից (*Բ Պետ.* 2:9):

199 Մի՞թե դու արդարին ամբարիշտի հետ կկործանես (*Ծնն.* 18:23):

200 Տերը հիշեց Աբրահամին և քաղաքից հանեց ու կորստից փրկեց Ղովտին (*Ծնն.* 19:29):

201 Աբրահամը վաղ առավոտյան գնաց այնտեղ, ուր ինքը կանգնել էր Տիրոջ առաջ, նայեց սոդոմացիների ու գոմորացիների կողմը, ամբողջ շրջակայքը և տեսավ, թե ինչպես երկրի բոցը բարձրանում է հնոցի ծխի պես (*Ծնն.* 19:27):

կմեռնի, և Աբրահամը աղոթելու էր նրա համար, որ չմահանար: Սրանից բացի, մեղքից հեռացնելու համար որպես պատիժ մի այնպիսի ախտ է տալիս նրան և իր հպատակներին, որ ինչքան ժամանակ Սառան նրա մոտ մնաց, նրանք ծննդագործության որևէ բան անելու անկարող եղան, ինչպես նաև նրանց կանայք, ամլության դատապարտվելով, ծննդաբերելուց բոլորովին դադարեցին:

Աբիմելեքը, այս պատժից շատ վախենալով, իսկույն կանչում է Աբրահամին, և Սառային վերադարձնելուց բացի, քաղցր և խոնարհ խոսքերով նրան մեղադրում է՝ ասելով, թե ինչո՞ւ այդ բանն արեց, որով էլ իրեն մեծ վտանգի մեջ գցեց, և որպես ընծա Սառային հազար սատեր (արծաթե դրամ), երինջ, ոչխար, ծառա և աղախիններ է տալիս, նրանց արտոնում է, որ իր երկրի մեջ՝ ցանկացած վայրում, բնակվեն: Աբրահամն էլ նրա համար աղոթում է, որպես պատիժ տրված հայտնի ախտը փարատվում է, և Աբիմելեքի կինն ու հարճերը սկսում են զավակներ ծնել:

Օրինա՛կ վերցրու և Աբրահամի նման հավատարմորեն ծառայի՛ր Աստծուն, որպեսզի ամեն վտանգից և փորձությունից ազատ լինես, քանի որ Աստված իր հավատարիմ ծառային միշտ հովանավորում և փառավորում է: Աբիմելեք թագավորն Աբրահամի աղոթքի կարիքն ունեցավ, քանի որ արդար մարդու աղոթքով Աստված ուրիշներին էլ է ողորմում, ուստի մեծ բարիք է այն տեղի համար, որտեղ արդար մարդ է գտնվում: Նույնպես մեծ շնորհ է այն մարդուն, որին Աստված մեղքերից խնայելու համար վիշտ և նեղություն է տալիս:

Արդարև, մարդը պարտավոր է շնորհակալ լինել Աստծուն, երբ այս աշխարհի մեջ որևէ կերպով մի պատուհաս է տեղի ունենում, իմանալով, որ այն Աստծուց է, և որ մեզ համար այն բարի է, խոնարհությամբ ընդունենք: Քանի որ նա,

ով մարմնական նեղությունների է ենթարկվում, մեղքերից խույս է տալիս[202]:

Այս ընթացքում, ինչպես արդեն նշվել է, Աստծու խոստման և Աբրահամին տրված ավետման համաձայն ծնվում է Իսահակը: Աբրահամն ու Սառան չափազանց ուրախանում են, սրտով ու հոգով բերկրում, Իսահակ անունն էլ արդեն իսկ «խնդություն» է նշանակում, քանի որ ամբողջ աշխարհին հոգևոր ուրախություն պարգևող մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի օրինակը պետք է լիներ: Այս պարագայում մի՛ կարծիր, թե Աբրահամը միայն Իսահակի ծննդյան համար ուրախացավ, այլ հատկապես Աստծու կողմից մարդկային ազգին անելիք բարիքների և ողորմության համար: Որովհետև Քրիստոսն Իսահակի ցեղից պետք է ծնվեր, մարդկային ազգը նրա զավակի՝ Մեսիայի շնորհիվ օրհնության պիտի արժանանար: Արդ, երբ ծնվեց զավակը, հայտնի եղավ, որ խոստացված բարիքն էլ պիտի շնորհվեր, այս պատճառով Իսահակը ավետյաց զավակ է կոչվում[203]:

Դու Աստծու ողորմությա՛նը նայիր. Աբրահամը յոթանասունհինգ տարեկան էր, երբ Քանանի երկիրը մտավ, և քսանհիգ տարի շարունակ Աստծու ողորմությամբ տեսակ-տեսակ բարիքների և պատվի արժանանացավ, և իր ծերության հասակում ժառանգի ծնունդն էլ Աստծու հատուկ և մասնավոր սիրո և շնորհի փայլուն ապացույցն էր: Քանի որ Աբրահամը բազում ազգերի հայր պիտի լիներ, այդ իսկ պատճառով Աստված իր խոստման կատարումը այդքան ժամանակ ուշացրեց, որ նրա հավատը հայտնի դառնա բոլորին:

---

202 Ով մարմնով չարչարվում է, դադարում է մեղանչելուց (*Ա Պետ.* 4:2):

203 Քանզի այս է խոստումը, որ ասում է, թե՝ «Այս ժամանակում պիտի գամ, և Սառան որդի պիտի ունենա» (*Հռոմ.* 9:9):

Եսայի մարգարեն Աբրահամին՝ մի հաստատուն վեմի, իսկ Սառային մի չորացած ջրհորի է նմանեցնում[204]: Քանի որ բնական օրենքի համաձայն զավակ ունենալու ժամանակն անցել էր, Աստված նրանց զավակ է շնորհում, որպեսզի մարդիկ խրատվելով նրանց նման անկեղծորեն հավատան և հավատարմությամբ ծառայեն: Իսահակի ծնվելու ժամանակ Աբրահամը հարյուր, իսկ Սառան իննսուն տարեկան էր: Երիտասարդ տարիքում զավակ ունենալը բնության զորությունից է, իսկ բնության ձեռք քաշելուց հետո զավակ ունենալը Աստծու հատուկ պարգևն է:

Իսահակի մեծանալուց հետո՝ կաթից կտրվելու օրը, Աբրահամը մեծ հրավեր և ուրախություն կազմակերպեց: Սակայն այստեղ պետք է ուշադրություն դարձնել Աբրահամի և Սառայի վիճակին, որոնք միշտ իրար հանդեպ վերին աստիճանի սիրով էին, և Սառան միշտ Աբրահամին հնազանդ էր. միայն թե երբ Իսմայելը սկսեց Իսահակի մեծանալուն պես նրան նեղել և վշտացնել, Սառան Աբրահամին առաջարկեց իր աղախնին և նրա որդուն վռնդել[205]: Թեև այս առաջարկը Աբրահամին ծանր և դժվար թվաց, սակայն Աստված հրամայում է նրան, որ լսի Սառային: Ուստի Աբրահամը Աստծու հրամանը իմանալուն պես, մի տիկ ջուր և հաց տալով Ագարին և որդուն՝ Իսմայելին էլ նրան հանձնելով, հեռացնում է իր տնից[206]:

Արդարև, Ագարը առաջ էլ հղիության առթիվ իր տիկնոջը՝ Սառային չցանկանալով հնազանդվել, խույս էր տվել նրանից,

---

204 Նայեցե՛ք այս հաստատուն վեմին, որից կերտվել եք, և այն հորի փոսին, որից հանվել եք: Ձեր հայր Աբրահամի՛ն նայեցեք և Սառայի՛ն, որ ծնեց ձեզ (*Եսայի* 51:1-2):

205 Հեռացրո՛ւ քո աղախնին և նրա որդուն (*Ծնող.* 21:10):

206 Առավոտյան վեր կացավ Աբրահամը, առավ հաց ու մի տիկ ջուր, տվեց Ագարին, մանկանը դրեց նրա շալակին և տնից դուրս հանեց (*Ծնող.* 21:14):

իսկ այս անգամ նրա որդին՝ Իսմայելը, Իսահակի դեմ ելնելով, Աբրահամի տնից հեռացան: Ագարը, Աբրահամից բաժանվելով, անապատում Երդման ջրհոր կոչվող տեղը գալու ժամանակ կորցնում է ճանապարհը: Տիկի ջուրը սպառելով՝ երկուսն էլ հոգնած էին, սոված ու ծարավ: Այդպես հուսահատությամբ մանկանը ծառի տակ թողնելով՝ մայրը նստում է հեռվում, որպեսզի զավակի մահը չտեսնի, որն այդ ժամանակ բարձրաձայն լալիս էր:

Բայց ահա հրեշտակը ձայն է տալիս՝ ասելով, թե մի՛ վախեցիր, որովհետև Աստված լսեց քո որդու ձայնը, վե՛ր կաց, վերցրո՛ւ մանկանը, «քանի որ մեծ ազգ պիտի դարձնեմ նրան»: Ճշմարիտ է, որ այն տեղի մոտ ջրի աղբյուր կար, բայց խեղճը շվարած լինելով տրտմությունից չէր կարողացել տեսնել: Ուստի երբ Աստված նրա աչքերը բացում է, և նա տեսնում է աղբյուրը, տիկը լցնում է և խմեցնում մանկանը, որով էլ զորանում են և գնում, Փառան կոչված անապատում բնակվում: Երբ Իսմայելը մեծանում է, մայրը Եգիպտոսից նրա համար կին է առնում, և նրա ցեղը հետզհետե տիրանում է այն տեղերին:

Կարևոր է իմանալ, որ Աստված, ի սեր Աբրահամի Իսմայելի ցեղը զորացնելով, մարմնավոր մեծություն է խոստանում նրան, ոչ թե հոգևոր զավակի աստիճանով, այլ մարմնավոր, քանի որ աղախնից ծնվեց, ինչպես Աբրահամը մարմնի կարիքները հոգաց՝ հաց ու ջուր տալով: Մինչդեռ Իսահակը, միշտ Աբրահամի մոտ մնալով, նրա ստացվածքներին, փառքին և մանավանդ հոգևոր պարգևներին ևս ժառանգ եղավ, և Հիսուս Քրիստոսը, քանի որ Իսահակի ցեղից էր սերում, բոլոր քրիստոնյաները Աբրահամի հոգևոր ժառանգներն են համարվում[207]:

---

[207] Մենք, եղբայրնե՛ր, խոստման որդիներ ենք, Իսահակի նման (*Գաղ.* 4:28):

Վերոհիշյալ Աբիմելեք թագավորը, որը Աբրահամի աղոթքով բժշկվել էր, հասկանալով, որ Աստված Աբրահամի հետ է, և նրա գործերը հաջող են գնում, օր օրի զորանում է, այս պատճառով միշտ նրա հետ բարեկամություն է տենչում: Այս ժամանակ իր մարդկանց հետ Աբրահամի մոտ գալով՝ ասում է. «Երդվի՛ր, որ ինձ և իմ զավակներին չես վնասի, ինչպես որ մենք քեզ վնաս կամ չարիք չպատճառեցինք»: Ճշմարիտ է, որ Աբրահամը ոչ ոքի զրկանք չպատճառելուց բացի, իրեն զրկանքներ տվողներին ևս առանց փոխարենը հատուցելու համբերում էր: Օրինակ, Աբիմելեք թագավորի մարդիկ նրա փորած ջրհորը գրավել էին, սակայն Աբրահամը մինչ այդ պահը ձայն չէր հանել որևէ խոսք ասելու համար: Միայն այս առթիվ է, որ Աբիմելեքին գանգատվեց նրանց դեմ: Թեպետ հիշյալը այս բանի մասին անտեղյակ ձևացրեց իրեն, ուստի Աբրահամը, իմանալով, որ դժվար պետք է լինի թագավորին ապացուցել նրա մարդկանց հանցանքը, յոթ ոչխար է տալիս՝ որպես ջրհորը իրեն պատկանելու գրավական:

Այս առթիվ երկուսն էլ երդմամբ ուխտեցին, որ միշտ եղբայրներ մնան, և այդ տեղն Աբրահամը «Երդման ջրհոր» կոչեց: Երբ Աբիմելեքը իր տեղը վերադարձավ, Աբրահամը, այնտեղ ծառ տնկելով, Աստծուն «հավիտենական» դավանեց իր աղոթքներում[208], և երկար ժամանակ այնտեղ բնակվեց: Արդարև, Աբրահամի տնից Ագարի և Իսմայելի հեռանալով՝ Սառան և Իսահակը հանգստացան, Աբրահամը նույնպես. մինչ ամեն ինչով փառավորված խաղաղ վիճակն էր վայելում, ահա Աստված նրան փորձելու համար[209] ասում է. «Աբրահա՛մ,

---

208 Այնտեղ պաշտեց Տիրոջը, նրան կոչեց Աստված հավիտենական (*Ծնն.* 21:33):

209 Աստված փորձեց Աբրահամին (*Ծնն.* 22:1):

Աբրահա՛մ, վերցրո՛ւ քո սիրելի ուրդուն՝ Իսահակին, և գնա՛ այն բարձր լեռը, այնտեղ նրան ողջակե՛զ արա, նվիրի՛ր Ինձ»[210]: Այս անգամ Աբրահամ անունը երկու անգամ հիշատակելու պատճառը տրված հրամանն անմիջապես կատարելու խիստ մեծ կարևորությունը զգացնելու համար է:

Հարց ԺԷ. **Աբրահամն ի՞նչ էր խորհում Իսահակին զոհելու հրամանը ստացած պահին:**

Պատասխան: Աստծու հրամանը գործադրելուց բացի այլ բան չէր մտածում: Այստեղ մեծ ուշադրությո՛ւն դարձրու Աբրահամի առաքինությանը: Որովհետև հոր համար բնական է իր զավակին սիրելը, մանավանդ երբ նա միածին՝ մեկ հատիկ է, և առավել ևս հրաշքով է պարգևված, և Աստծու խոստումն էլ նրանով էր կատարվելու, մի քանի անգամ հայտնված լինելով հանդերձ, «նրան ողջակե՛զ արա» և «զոհի՛ր» ասելը խիստ ծանր առաջարկ է: Բացի այդ, հորը հրամայվում է, որ իր ձեռքով զավակին մորթելով՝ հեղի նրա արյունը, և, արդարև, սա նույնպես բնությանը հակառակ գործ է: Սակայն Աբրահամի սերն առ Աստված այնքան հզոր է, որ առանց սիրտը կոտրվելու կամ առանց վհատության Իսահակին զոհելու պատրաստություն է տեսնում:

Դու հիշյալի հնազանդությա՛նը նայիր. այն, ինչ ըստ բնության անհանդուրժելի էր, սակայն Աստծու շնորհով և հավատի զորությամբ բնությունը հաղթվեց, և Աբրահամը, ոսկու նման փորձության բովի մեջ հալվելով, երբեք իր հավատի կշիռը չնվազեցրեց: Սակայն ոչ թե Աբրահամի սիրտը հասկանալու

---

210 Նա ձայն տվեց նրան. «Աբրահա՛մ, Աբրահա՛մ.... Վերցրո՛ւ քո միակ որդուն՝ քո սիրելի Իսահակին, գնա՛ մի բարձրադիր տեղ և այնտեղ՝ լեռան վրա, որ ցույց կտամ քեզ, ողջակիզի՛ր նրան (*Ծնող.* 22:1-2):

համար Աստված փորձեց նրան, այլ նրա զորավոր հավատքը մարդկանց ցույց տալու համար:

Պիտի իմանաս, որ սատանան մարդուն փորձում է՝ մեղքի մեջ գցելու համար, մարդը մարդուն փորձում է նրա մտադրությունը հասկանալու նպատակով, իսկ Աստված իր սիրելիին փորձում է նրա վարձը ավելացնելու միակ միտումով: Քանի որ ինչպես ադամանդը հղկելու գործիքով ավելի է փայլում, նույնպես կատարյալ հնազանդ մարդը փորձի անվի տակ առավել է առաքինանում: Ահա այս պարագայում Աբրահամի առաքինությունն արևի պես փայլեց աշխարհի առջև: Որովհետև նա ո՛չ Աստծու խոստումից հույսը կտրեց և ո՛չ էլ հրամանի գործադրության մեջ ամենափոքր վարանումը ցուցաբերեց:

Աբրահամը գիտեր, որ Աստծու խոստումը Իսահակով պիտի կատարվեր, քանի որ հենց նույն նպատակով էր Իսահակին իրեն պարգևել, սակայն նույն ամենակարող Աստվածն էր, որ պահանջում էր զոհը, և եթե կամենար, կարող էր վերակենդանացնել նրան[211]: Ուստի նրա հավատքը բնավ չի խախտվում՝ խորհելով, որ անպատճառ Աստծու որևէ խորհուրդ կա սրա մեջ, որին մարդու խելքը չի հասնում. հարկավոր է իսկույն, առանց կասկածի և ամենայն հնազանդությամբ կատարել Նրա հրամանը: Ուստի Իսահակին, երկու ծառաների և էշի վրա բարձած փայտ վերցնելով՝ առավոտյան կանուխ ճանապարհ են ընկնում՝ առանց իմանալու, թե ո՛ւր են գնում: Թեպետ և զոհելու համար ճանապարհ ընկավ, և զոհն էլ իր հետ էր, բայց զոհ մատուցելու վայրը Աստծուց նշանակված չէր մինչ այդ ժամանակը: Աբրահամն առանց հարցնելու երեք օր շրջում է Երուսաղեմի կողմերում, մինչև որ տեղը կհայտնվի իրեն:

---

211 Հավատո՛վ է, որ Աբրահամը, իր փորձության մեջ, Իսահակին որպես զոհ մատուցեց, և նա, ով խոստումն էր ընդունել, իր միամորիկ որդուն էր որպես զոհ մատուցում (*Եբր.* 11:17):

Երրորդ օրը զոհելու կամ պատարագելու վայրը հեռվից տեսնելով (դա Գողգոթա լեռն էր)՝ ծառային և էշին լեռան ստորոտում է թողնում, իսկ փայտը Իսահակի ուսին է դնում, ինքն էլ, երբ կրակն ու սուրը վերցրած, դեպի վեր էր բարձրանում, Իսահակը տեսնում է, որ պատարագի պատրաստություն կա, սակայն պատարագելու ոչխար չկա, ուստի հորը հարցնում է. «Հա՛յր, ահա՛ կրակ, ահա՛ փայտ, ո՞ւր է զոհաբերության ոչխարը»[212], հայրը պատասխանում է, թե՝ «Աստված հոգ կտանի Իր պատարագացու ոչխարի համար, զավա՛կս»[213]: Այս խոսքը ոչ թե Իսահակի հարցի պատասխանն էր, այլ հատկապես հոգևոր մտքով Հիսուս Քրիստոսի աստվածային զոհի վերաբերյալ կանխասաց մարգարեություն էր, որ կարծես կամենում էր ասել. «Ո՛վ իմ սիրելի զավակ, առայժմ պատարագը դու ես, սակայն քո պատարագով մարդիկ չեն կարողանա մեղքից ազատվել, այլ մի օր մարդկանց փրկության համար այս լեռան վրա Մեսիան պիտի պատարագվի Հայր Աստծու հաճությամբ»[214]: Երբ հասնում են որոշված վայրը, սեղան կանգնեցնելով՝ փայտը վրան է դնում: Լավ, ահա սեղանը պատրաստ է, ինչպես նաև կրակն ու դանակը, ո՞ւր է ոչխարը, ո՛վ Աբրահամ. Իսահակը գործից անտեղյակ է, դեռևս պատարագելու և ոչ թե պատարագվելու փափագ ունի: Արդարև, Ս. գրքում գրված չէ, թե Աբրահամն Իսահակին ի՞նչ խոսքերով տեղեկացրեց, սակայն հայտնի է, որ Աստծու հրամանը լսելով՝ առանց

---

212 Ահա կրակը, և ահա փայտը, հապա ո՞ւր է ողջակիզելու ոչխարը (*Ծնող.* 22:7):

213 Աստված կհոգա իր ողջակիզելու ոչխարի մասին, որդյա՛կ (*Ծնող.* 22:8):

214 Աբրահամը՝ ձեր հայրը, ցանկացավ իմ աշխարհ գալու օրը տեսնել. տեսավ և ուրախացավ (*Հովհ.* 8:56):

սրտաբեկության, կատարյալ հնազանդությամբ համաձայնեց ի սեր Աստծու զոհվել:

Քանի որ նա գիտի, որ Աստծու հրամանը բոլոր առումներով մարդու համար օգտակար է և բարի, ուստի մարդու պարտքն է իր կյանքից ավելի Աստծուն սիրել և Նրա սիրո համար նվիրել իր անձը: Հիմա, ո՛վ մարդ, մտքովդ Գողգոթա լե՛ռը բարձրացիր և մտքովդ նայի՛ր Իսահակի և Աբրահամի հավատի մեծությանը: Քանի որ Աբրահամը, Իսահակին կապելով, դնում է սեղանի վրա, որ զոհաբերի[215]: Միայն թե հայտի չէ, թե հայր ու որդուց ո՞րն է ավելի եռանդով շտապում, որ ժամ առաջ Աստծու հրամանը կատարի: Ճիշտ է, որ Աբրահամի եռանդը հայտնի է, քանի որ երեք օրից ավելի սպասում էր, որ զոհելու վայրը որոշվեր. նաև Իսահակը, որ անձնատուր եղած և կապկպված էր. հայտնի դարձավ, որ Աստծու հրամանի կատարմանը եռանդով փափագում է և Նրա սիրո համար ընծա և նվեր լինելու փափագով տենչում է, որպեսզի արքայության մեջ շուտով հավիտենական կյանքի ուրախությանը հասնի:

Այսպես էր, թեև մինչև իսկ հարկավոր չէր Իսահակին կապել, սակայն Հիսուս Քրիստոսի՝ մեր պատվական Փրկչի օրինակը և պատկերը լինելով՝ կապվելը խորհրդի համար կատարվեց: Քանզի այդ լեռան վրա Քրիստոսը, Իսահակի նման խաչափայտին կապված, պիտի մեխերով զամվեր: Ահա Աբրահամը ձեռքը երկարում է՝ սուրը վերցնելու, որ իր սիրելի որդուն՝ Իսահակին, իր ձեռքով մորթի[216]: Օ՜հ, այս ի՞նչ տեսարան է, որդին՝ զառան նման վիզը երկարացրած, հայրը սուրը ձեռքին պատրաստվում է որդու գլուխը կտրել. սակայն զարմանքը

---

215 Իր որդի Իսահակին կապեց և դրեց զոհասեղանի փայտի վրա (*Ծնն.* 22:9):

216 Աբրահամը երկարեց ձեռքը, որ վերցնի դանակն ու մորթի իր որդուն (*Ծնն.* 22:10):

այս է, որ երկուսի սիրտն էլ ուրախ է, երկուսն էլ հոժար, երկուսն էլ միաբան և զոհունակ են:

Մարդն ինչպե՞ս կարող է հանդուրժել այս վիճակը, ո՞ր աչքը արտասուքի փոխարեն արյուն չի հեղի, ո՞ր սիրտը կարող է դիմանալ և չնվաղել. Գողգոթա լեռը սկսում է դողալ, քանի որ Քրիստոսի խաչելության պատկերը սկսեց պատկերվել: Արդ, Աբրահամը, սրտի խորքից աղաչելով (ո՛վ Տեր, ընդունի՛ր պահանջածդ պատարագը), սուրն Իսահակի պարանոցին ուժգին հարվածելու շարժումն անելուն պես երկնքից իսկույն մի ձայն է լսվում. հրեշտակը աղաղակում է՝ ասելով. «Աբրահա՛մ, Աբրահա՛մ, մի՛ դիպչիր պատանյակիդ, ձեռքդ հե՛տ քաշիր»[217], կարծես թե ցանկանում է ասել. «Թո՛ղ սուրդ, արածդ պատարագն ընդունելի եղավ, ծառայությունը կատարյալ է, հնազանդությունը՝ զոհացուցիչ. բավական է, անթերի սերդ հայտնվեց»: Նկատի՛ր, որ ինչպես Իսահակին զոհելու համար Աբրահամի անունը երկու անգամ է տալիս, նույնպես էլ այս անգամ կրկնակի կանչով պատարագի մեծապես ընդունված լինելն է հայտնում:

Ճշմարիտ է, որ Աբրահամի հավատարմությունը Աստծուն հայտնի էր, սակայն մի այսպիսի մեծ գործ, որ Աբրահամը կատարեց՝ ամբողջ աշխարհին հայտնելով, որպեսզի մարդիկ դրանից խրատ ստանան: Հրեշտակը ասում է. «Հիմա իմացա, որ Աստծուց վախենում ես[218], այսինքն՝ քո առաքինությունը հիմա հայտնեցի աշխարհին»: Որովհետև այս գործին ոչ միայն երկինքն ու երկիրն են հանդիսատես լինում, այլև բոլոր հրեշտակները սքանչացած դիտում և զմայլվում են: Այս պարագա-

---

217 Տիրոջ հրեշտակը ձայն տվեց նրան երկնքից ու ասաց. «Աբրահա՛մ, Աբրահա՛մ... ձեռք մի՛ տուր պատանուն (*Ծնող.* 22:11):

218 Այժմ համոզվեցի, որ երկյուղ ունես Աստծու նկատմամբ (*Ծնող.* 22:12):

յում Աստված, Աբրահամի կամքի համաձայնությունը որպես պատարագ ընդունելով, Իսահակին նորովի պարգևեց նրան:

Այո՛, Աբրահամը սրով չմորթեց Իսահակին, և սա էլ արյուն չթափեց, բայց երկուսն էլ իրենց վարձը չկորցրին: Որովհետև եթե Աստված չարգելեր, գործնականում զոհը պիտի կատարվեր: Որի համար էլ Աբրահամը հատկապես «Աստծու սիրելի» և Իսահակը «Աստծու ծառա» կոչվեցին[219]: Երբ Աբրահամը սուրը ձեռքից թողեց, տեսավ, որ սաբեկի ծառի վրա մի խոյ է եղջյուրներից կախված, որն էլ իսկույն վերցնելով՝ ողջակեզ մատուցեց, և Իսահակը Աստծու ազատագրված ծառան եղավ:

Թեպետ նախապես Աբրահամին խոստացվել էր, որ իր սերունդը պիտի աճի և բազմանա, բայց այս անգամ Աստված երդվելով խոստանում է, որ նրա զավակները երկնքի աստղերի և ծովի ավազների նման անհաշիվ պիտի լինեն:

Այն ժամանակ Իսահակն արդյոք քանի՞ տարեկան էր: Թեև Ս. գրքում գրված չէ, սակայն կարծվում է, որ քսանհիգ տարեկան կար: Այսպիսի մի մեծ դեպք, որ Գողգոթա լեռան վրա տեղի ունեցավ, ինչպես նաև մարդկանց հանդեպ Աստծու սերը չմոռացվելու համար, մանավանդ ժամանակներ հետո Մեսիայի այնտեղ խաչ ելնելը ներկա տեսածի նման, այն տեղի անունը «Տերը տեսավ» դրեց[220], որպեսզի միշտ պատմեն, որ այն լեռան վրա Աստված երևաց: Տե՛ս հիմա և խրատվի՛ր. Աբրահամը մի զավակ նվիրեց Աստծու սիրո համար, բայց Աստված նրա փոխարեն երկնքի աստղերի և ծովի ավազի նման անհամար զավակներ է խոստանում նրան: Նմանապես այն մարդուն, որ հանուն Աստծու սիրո երկրավոր հաճույքներն ու

---

219 Հանուն քո սիրելի Աբրահամի, հանուն քո Իսահակ ծառայի (*Դան.* 3:35):

220 Աբրահամն այդ վայրի անունը դրեց «Տերը տեսավ» (*Ծնող.* 22:14):

մեծությունը կարհամարհի և կթողնի, Աստված արքայության անվախճան երանությունն է խոստանում: Նա, ով իր անձը և երկրավորն Աստծուց առավել է սիրում, մեռած ժամանակ դրանք թողնելուց բացի՝ դրախտի փառքից էլ է զրկվում[221]:

Այսուամենայնիվ, ոչ թե երկրավոր հաճույքն ու մեծությունը թողնելով՝ մարդը կարոտության մեջ թշվառության է ենթարկվում, այլ առավել մեծ հաճույք և մեծություն է գտնում, որովհետև մեծ հաճույքը մտքի անդորրությունն է, իսկ ճշմարիտ մեծությունը՝ աշխարհային իրերին կարոտ չլինելը: Քանի որ դրանք մարդուց ցածր են և մարդու համար ստեղծված լինելով՝ չեն կարող մարդուն ուրախացնել և երջանկացնել, որի համար նրանց վրա հույս դնող մարդու պատիվը նսեմանանում է և արատավորում նրա անունը:

Եթե կամենում ես փառավորվել և զվարթանալ, հույսդ Աստծու վրա՛ դիր, Նրա՛ն սիրիր, Նրա հրամանին հնազանդվի՛ր, քանի որ Նա, բոլորից մեծ և ամենակարող լինելով, փառավորում և հանգստացնում է Իրեն սիրողներին[222]: Սակայն մի՛ կարծիր, թե մարդու երկրավոր կարիքների համար կարևորը ձեռք բերելը հանցանք է, ո՛չ, քա՛վ լիցի, այլ միայն ամբողջ սերդ դրանց մի՛ տուր և դրանք Աստծուց առավել մի՛ սիրիր, մանավանդ հարկ եղած ժամանակ հանուն Աստծու սիրո զոհաբերե՛լ իմացիր: Որովհետև ինչպես նրանք, քեզ համար ստեղծված լինելով, քեզ են ծառայում, նույնպես էլ դու, Աստծու համար ստեղծված լինելով, ամեն ինչով պարտավոր ես հավատարմությամբ Նրան ծառայել և Նրա պատիվը պահելով՝

---

221 Ով սիրում է իր անձը, կկորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կպահի հավիտենական կյանքի համար (*Հովհ.* 12:25):

222 Եկե՛ք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ (*Մատթ.* 11:28):

հարկ եղած դեպքում հանուն Նրա սիրո զոհվել. այս է մարդկության ամենաէական պայմանը:

Հարց ԺԸ. **Աստված Աբրահամին ինչո՞ւ հրամայեց զոհաբերել Իսահակին:**

Պատասխան: Աբրահամի հավատքն ու հավատարմությունը ամբողջ աշխարհին հայտնի դարձնելու համար: Քանի որ Աբրահամը բազում ազգերի հայր պիտի կոչվեր, ուստի նրա հավատը ամբողջ աշխարհի համար հռչակելը հույժ կարևոր էր, որպեսզի ամեն մարդ, նրանից օրինակ վերցնելով, նրա բռնած ուղղության ճանապարհով ընթանա[223]:

Մասնավորապես, որովհետև ամբողջ մարդկային ազգը Աբրահամի զավակով պիտի օրհնվեր, և այս զավակը Ինքը Քրիստոսն էր, որի պատկերն էր Իսահակը: Եվ դարձյալ, ճշմարիտ է, որ Աբրահամն իր ամբողջ կյանքի ընթացքում փորձությունից զերծ չմնաց, սակայն այս անգամ նրա արդարությունն ու հավատարմությունը հայտնապես պայծառությամբ փայլեցին, որ երկրի վրա առաքինության տիպար լինելուց բացի, նաև բոլոր մարդկանց մեծ հույս և մխիթարություն եղավ[224]:

Որովհետև եթե մարդը, որ բնությամբ տկար է, Աստծու սիրո համար իր որդուն չխնայեց, մի՞թե մարդկանց փրկության համար Աստված պիտի խնայեր Իր Որդուն: Արդարև, հայտնի է Սուրբ Ավետարանի այն պատգամը, թե՝ «Ինչ կկամենաք, որ

---

223 Եթե Աբրահամի որդիները լինեիք, Աբրահամի գործերը կգործեիք (*Հովհ.* 8:39):

224 Արդ, խոստումը Աբրահամի՛ն արվեց և նրա շառավիղին, չի ասում շառավիղներին, չակնարկելու համար շատերին, այլ ակնարկում է մեկին, որ Քրիստոսն է (*Գաղ.* 3:16):

մարդիկ ձեզ անեն, նո՛ւյնը արեք և դուք նրանց»[225]: Սակայն չի համարվում, որ Աբրահամի այս գեղեցիկ արարքի պատճառով էր, որ Փրկիչն աշխարհ եկավ: Նա արդեն պիտի գար մարդկային ազգը մեղքի գերությունից փրկելու, իսկ այս դեպքը Նրա գալստյան օրինակը եղավ, ինչպես վերը հիշվեց:

Քանի որ Աստված այն աստիճան սիրեց մարդուն, որ նրա փրկության համար Իր միածին Որդուն՝ Աստծու Բանին, աշխարհ ուղարկել կամեցավ[226]: Մարդն էլ այն աստիճան պարտական մնաց Աստծուն, որ եթե հարկ լինի, Նրա սիրո և փառքի համար իր անձը պետք է զոհի: Այս պատճառով հավատի համար մահացողները «վկա» են կոչվում, որովհետև իրենց արյամբ կրոնի ճշմարտությունն են հաստատում:

Հետո, երբ Աբրահամի կինը՝ Սառան, 127 տարեկանում մահանում է, Աբրահամը գերեզմանի համար հատուկ տեղ է գնում Քեբրոնում, որտեղ թաղվում է Սառան: Այս պետք է նկատի առնել, որ Աբրահամը Քանանի երկրում այն աստիճանի փառքի էր հասել, որ կարծես թե Աստծու կողմից թագավոր կարգված լիներ[227]. ամեն մարդ նրան հարգում և մեծարում էր: Այսուամենայնիվ, սեփական հող գնելով՝ տուն չկառուցեց, այլ, իբրև վրանաբնակ պանդուխտ շրջելով, ապրում էր, միայն Սառային թաղելու համար գերեզմանատեղի է գնում: Քանի որ երկրավոր կալվածքը կամ սեփականությունը մարդու համար մնայուն և տևական չէ, Աստծու արքայության անվախճան ժառանգության փափագով էր տոչորվում միշտ:

---

225 «Եվ ինչպես կամենում եք, որ մարդիկ ձեզ անեն, այնպես արե՛ք և դուք նրանց» (*Ղուկ.* 6:31)

226 Քանզի Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տվեց (*Հովհ.* 3:16):

227 Դու մեր մեջ Աստծու նշանակած թագավորն ես (*Ծննդ.* 23:6):

Արդարև, Աբրահամին խիստ շատ բարիք պարգևվեց ի վերուստ, սակայն նա էլ, Աստծու պարգևած բարիքն ու երախտիքը հասկանալով, ամեն ինչով հնազանդվեց Նրա պատվիրաններին և այսպես երկու աշխարհներում ևս փառավորվեց: Դու էլ, եթե Աստծուց քեզ պարգևված բարիքը հասկանաս, պիտի փառավորվես երկրավոր և երկնավոր կյանքում: Քանի որ Աստված ոչ միայն Աբրահամին հրավիրեց, որ իր բնիկ երկիրը, ազգը, հողն ու տունը թողնելով՝ Երուսաղեմի երկիրը գնա, այլ նաև բոլոր մարդկանց կանչում է երկնային Երուսաղեմ գնալ և ժառանգել[228]:

Սակայն ոչ թե ամենքն էլ Աբրահամի նման երկիր կամ վայր պիտի փոխեն, այլ մեղքի պատճառ եղող ամեն ինչ թողնելով՝ առաքինության ճանապարհով ընթանան դեպի հոգևոր կատարելություն, որպեսզի ինչպես Երուսաղեմի երկիրը Աբրահամին տրվեց, այդպես էլ արքայության փառքն ու մեծությունը բոլորին շնորհվի, որով էլ Երուսաղեմը արքայության օրինակն է:

Հարց ԺԹ. **Սառայի մահվանից հետո Աբրահամը նորից ամուսնացա՞վ:**

Պատասխան: Ամուսնացավ, սակայն նախ Իսահակին ամուսնացրեց: Չցանկացավ Քանանի ազգից իր որդու համար աղջիկ առնել, այլ իր հավատարիմ Եղիազարին, իրենց սովորույթի համաձայն երդվեցնելով, մեծամեծ ընծաներով ուղարկում է Խառանի երկիրը՝ իր ցեղից Իսահակին կնության համար մի աղջիկ բերելու:

Եղիազարը այս հրամանի համաձայն գնում է և հանգիստ առնում է Խառանին մերձ մի աղբյուրի մոտ, որտեղ աղջիկները ջուր վերցնելու էին գալիս: Աստծուն աղոթելով՝ Եղիազարը

---

228 Այդ է բարին և ընդունելին մեր Փրկչի՝ Աստծու առաջ (*Ա Տիմոթ.* 2:3):

մտքում որոշում է, որ եկող աղջիկներից մեկից ջուր խնդրի, և եթե այդ աղջիկը իրեն ջուր տալուց հետո «ուղտերին ևս ջուր տամ» ասի, նա լինի Իսահակի կինը: Այս մտքերի մեջ էր, երբ Աբրահամի ցեղից Բաթուելի դուստր Ռեբեկան, սափորն ուսին, ջրի եկավ և լցրեց այն: Եղիազարը աղջկանից հենց ջուր է խնդրում, նա էլ ասում է, որ թե՛ իրեն և թե՛ ուղտերին ջուր կտա. հորից ջուր է հանում և խմեցնում:

Սրանից ուրախանալով՝ Եղիազարը Աստծուն շնորհակալ է լինում, որ իր խնդրանքն ընդունեց: Հետո հարցնելով, թե ո՛ւմ դուստրն է, իմանալուն պես ընծաներից Ռեբեկայի ականջին ոսկե օղ և ձեռքին ապարանջան է դնում: Աղջիկը, տուն գալով, եղբորը՝ Լաբանին, պատմում է եղելությունը, որն էլ Եղիազարին տուն է հրավիրում և հասկանում խնդիրը, որով երկու կողմերի հաճությամբ Եղիազարը Ռեբեկային բերում է, և Իսահակը, նրա հետ ամուսնանալով, իր մոր՝ Սառայի մահվան վշտից մխիթարվում է:

Հոգևոր իմաստով Եղիազարը՝ սուրբ առաքյալների, Ռեբեկան եկեղեցու օրինակն է, իսկ օղն ու ապարանջանը քրիստոնյաների առաքինի և բարի գործերն են, որոնք գործվում են՝ ի Հիսուս Քրիստոս հավատով և նրա պատվիրաններին ու օրենքներին հնազանդվելով[229]:

Որովհետև Աբրահամը բազում ազգերի հայր պիտի լիներ, ուստի (Աստծու հրամանով) իր աղախնի՝ Քետուրայի հետ ամուսնանալով վեց զավակ ունեցավ նրանից, բայց ինչպես առաջ Իսմայելն ու նրա մայրը՝ Ագարը, բաժանված էին իրենից, նույնպես Քետուրայից ծնված զավակներին իր մոտ չպահելով՝ արևելյան կողմերն է ուղարկում նրանց, որպեսզի բազմանալով յուրաքանչյուրը մի-մի ազգ կազմի: Քանի որ

---

229 Բոլոր մտքերը հնազանդեցնում ենք Քրիստոսին (*Բ Կորնթ.* 10:5):

Իսահակի վերաբերյալ Աբրահամին տրված խոստումը կատարվել էր, ուստի աղախնից եղած զավակներն իրենց մոր անվամբ կոչվեցին: Աբրահամը 175 տարեկանում մեռավ, որին Իսահակն ու Իսմայելը թաղեցին Քեբրոնում՝ Սառայի մոտ: Իսահակը, հոր օրհնությունը, փառքն ու ունեցվածքը ժառանգելով, օրհնվեց Աստծուց:

Հարց Ի. **Իսահակը քանի՞ տարեկան էր, երբ ամուսնացավ:**

Պատասխան: Քառասուն տարեկան էր: Սակայն Աստված այնպես կամեցավ, որ ինչպես Աբրահամը երկար տարիներ զավակ չէր ունենում, նույնպես 19 տարի անցավ առանց Իսահակին զավակ լինելու, սակայն նա առանց հուսահատվելու աղոթում էր առ Աստված, որ իրեն որդի պարգևի[230]:

Հիրավի, ինչպես վերը նշեցինք, Աբրահամին տրված խոստումը Իսահակով էր կատարվելու, և, հետևաբար, նա շատ զավակներ պիտի ունենար, քանի որ Աստված հավատարիմ է Իր խոստմանը, սակայն խոստման գործադրության համար ցանկանում է, որ մարդը իր կողմից կատարյալ հավատով խնդրի, որպեսզի նրա հույսը միշտ Աստծու վրա լինի և Աստծու բարերար և շնորհատու լինելը հայտնի դառնա (ինչպես ասվում է, նախասահմանությունը աղոթքով է կատարվում): Եվ ահա Աստծու ողորմությունը և Իսահակի հավատը հայտնի դարձան, քանի որ այդքան ժամանակ Իսահակը, Աստծուց հույսը չկտրելով, աղաչում և խնդրում էր:

Ամուսնության քսաներորդ տարում Ռեբեկան հղիացավ: Պտուղը երկվորյակ էր, և մայրը շատ է անհանգստանում,

---

230 Իսահակն աղաչեց իր կին Ռեբեկայի համար, քանի որ սա ամուլ էր (*Ծնն.* 25:21):

քանի որ մանուկները մոր արգանդի մեջ իրար հետ պատերազմ մղելու նման շարժումներ էին անում: Նա սեղանի առջև է գնում և Աստծուն հարցնելով՝ պատասխան է ստանում, որ երկու ազգ կա նրա արգանդի մեջ, և երկու ժողովուրդները կբաժանվեն, և երեցը կրտսերին պիտի ծառայի[231]: Արդարև, ժամանակը լրանալով՝ նախ՝ Եսավը, և ապա՝ Հակոբն է ծնվում: Եվ ինչպես որ դեռ չծնված՝ միմյանց հակառակ էին, այդպես էլ ծնվելու ժամանակ՝ մեկը մյուսից առաջ ծնվելու փափագով Հակոբը Եսավի կրունկից է բռնում, որպեսզի նրան հետ պահելով՝ առաջինն ինքը ծնվի[232]: Այսպես նրանք կռվի հիմքը մոր արգանդի մեջ դրեցին. թե՛ իրենց և թե՛ հետո իրենց ցեղերի միջև թշնամությունը միշտ անպակաս եղավ: Քանի որ Հակոբը, որ Եսավից հետո ծնվեց, անդրանկության պատիվը գրավելու համար Եսավի բարկությունը իր վրա հրավիրեց: Սակայն նայի՛ր, թե գործն ինչպե՛ս տեղի ունեցավ:

Քանի որ Եսավը մի վայրագ և մազոտ անձնավորություն էր, միշտ դաշտերում որսորդությամբ էր զբաղվում, սրան հակառակ Հակոբը տանն էր մնում: Մի օր ոսպով ապուր է եփում, և ուտելու ժամանակ Եսավը դաշտից սաստիկ սոված գալիս և Հակոբից ապուր է խնդրում, նա էլ հանձն է առնում տալ, բայց միայն պայմանով, որ անդրանկության իրավունքը իրեն վաճառի: Եսավը խոստանում է վաճառել, քանի որ շատ սոված լինելով՝ կարծում էր, թե եթե չուտի, իսկույն մահանալու է: Հակոբը նաև երդումով է սույն առևտուրը հաստատել տալիս և հաց ու ապուր տալով՝ փոխարենը անդրանկությունը ծախու է առնում:

---

231 Նա գնաց այդ մասին Տիրոջը հարցնելու: Տերը նրան ասաց. «Քո արգանդում երկու ցեղ կա.... ավագը կրտսերին պիտի ենթարկվի» (*Ծնն.* 25:22-23):

232 Եսավի գարշապարից բռնած ծնվեց նրա եղբայրը (*Ծնն.* 25:25):

Խրա՛տ առ Եսավի թշվառ վիճակից. անդրանկությունը բնության պարգևն է. ոչ ոք չէր կարող դա նրա ձեռքից խլել, սակայն իր որկրամոլության և անհամբերության և առավել ևս Աստծու պարգևը չհասկանալու պատճառով կորցրեց այն[233]: Մի՛ կարծիր, թե այս առումով Հակոբը անիրավություն գործեց, քանի որ երբ ապուրի հարցը կար,Եսավը հայտնապես երդումով, դաշինքով, իր հավանությամբ և կամքով վաճառեց անդրանկությունը: Թեև նա չցանկացավ կարևորություն տալ այս սակարկությանը, բայց երդվելու համար Աստված արդարության տոմարում արձանագրեց նրա դաշինքը, որով Եսավը, իրավացիորեն կորցնելով անդրանկության իրավունքը, հոր օրհնությունից զրկվեց:

Քանի որ այն ժամանակի պահանջների համեմատ՝ անդրանիկ զավակը հինգ կետերով իր եղբայրներից առավելություն ուներ: Առաջին՝ կարող էր իշխել և հրամայել եղբայրներին՝ որպես հայրական իշխանության ներկայացուցիչ, երկրորդ՝ հոր ունեցվածքից կրկնապատիկ ժառանգություն էր ստանում, ինչպես որ մինչ այժմ հրեաների սովորությունն է, երրորդ՝ իր տան մեջ քահանայի նման էր, չորրորդ՝ հայրը մահանալիս անդրանիկ զավակին հատուկ օրհնություն էր տալիս, որը մեծ հարգանք էր իրենց մեջ, և վերջապես հինգերորդ՝ հագուկապով էլ էր տարբերվում մյուս եղբայրներից: Սրա համար է, որ Ռեբեկան Եսավի զգեստները հագցրեց Հակոբին:

Հարկ է իմանալ, որ Հակոբը ոչ թե նյութական հարստության համար արեց այս բանը, այլ հայրական օրհնությանն արժանի դառնալու համար: Քանի որ, որպես օրինակ, մարմինը հացով է սնվում, իսկ հոգին՝ հոր և մոր օրհնությամբ: Այս պատճառով մարմնավոր սնունդ է տալիս, որի փոխարեն

---

233 Եսավն արհամարհեց իր անդրանկությունը (*Ծնն.* 25:34):

հոգևոր սնունդն է առնում: Իրավ է, որ Եսավը հետո զղջալով լացեց և շատ ողբաց իր կորստյան համար, սակայն այլևս ի՛նչ օգուտ, չկարողացավ կորցրածը նորից գտնել:

Այս ընթացքում սով ընկավ. Իսահակը թեև ցանկացավ գնալ Եգիպտոս, սակայն Աստված, նրան երևալով, ասաց. «Մի՛ գնա Եգիպտոս, այս վայրերը քեզ և քո զավակներին պիտի տամ», և նրան օրհնելով՝ խոստացավ երկնքի աստղերի նման բազմացնել նրա զավակներին: Իսահակը, Աստծու հրամանը իմանալով, չգնաց Եգիպտոս, այլ իր ողջ ընտանիքով Գերարայի թագավոր Աբիմելեքի երկիրը գնալով՝ բնակվեց այնտեղ: Երբ ժողովուրդը Ռեբեկայի մասին էր հարցնում, ասում էր՝ քույրս է:

Որովհետև Ռեբեկան շատ գեղեցիկ էր, և միգուցե նրա համար իրեն սպանեին, այս պատճառով էր, որ սույն պատասխանն էր տալիս Իսահակը: Հետո Աբիմելեքը, լսելով, որ նրա կինն է, թեև նրան մեղադրեց, սակայն իր մարդկանց պատվիրեց, որ նրան չարիք չպատճառեն, այլապես մահվամբ կպատժվեն: Իսահակը, որոշ ժամանակ Գերարայում մնալով, սկսեց հող մշակել, և Աստծու օրհնությամբ այնքան առատ արդյունք եղավ, որ մեկի փոխարեն հարյուրը ստացավ: Իր անասունները նույնպես այնքան բազմացան, որ բնակիչները նախանձելով նրա հոր՝ Աբրահամի փորել տված ջրահորները հողով լցրին:

Աբիմելեք թագավորն էլ, Իսահակի ունեցվածքի շատանալը տեսնելով, խնդրում է, որ այդ կողմերից հեռանա՝ ասելով. «Քանի որ դու մեզնից զորավոր եղար»: Նա էլ գնում և մի ձորում փորելով ջուր է գտնում, սակայն բնակիչները նախանձելով նրա փորել տված բոլոր հորերը գրավում են: Իսահակը չուզեց վիճել, նրանց այս անիրավությանը համբերում է, մինչև որ ինքնին այլևս դադարում են նրան վնասելուց: Աստված նրա համբերությունը վարձատրելու և նրան մխիթարելու համար

քաջալերում է, որ չվախենա, նախապես արված խոստումը կրկնում է, որի համար Իսահակը, սեղան կանգնեցնելով, շնորհակալություն է մատուցում Աստծուն:

Երբ Իսահակն օր օրի համբավի և փառքի տեր է դառնում, Աբիմելեք թագավորն իր մեծամեծներով նրա մոտ է գալիս, որպեսզի դաշնակցելով միշտ իրար հետ բարեկամներ լինեն: Իսահակը պատասխանում է. «Դուք ինձ չընդունեցիք, հիմա ինչո՞ւ եկաք», նրանք խոնարհաբար ասում են. «Տեսանք, որ Աստված քեզ հետ է, սրա համար ցանկանում ենք ուխտ և դաշինք կնքել քեզ հետ, որ մեզ որևէ չարիք կամ վնաս չհասցնես, ինչպես որ մենք քեզ չարիք չհասցնելով արձակեցինք»:

Այդ առթիվ Իսահակը, նրանց համար ճաշկերույթ պատրաստելով, հաջորդ օրը ուխտ է կապում, որից հետո էլ Աբիմելեքը գնում է իր տեղը: Իսահակը, այնտեղ հոր փորելով, ջուր է գտնում և տեղը անվանում Երդման ջրհոր: Կարծիք կա, որ այս Աբիմելեքը Աբրահամի ժամանակվա Աբիմելեք թագավորը չէ, քանի որ «Աբիմելեք» բառը, որպես տիտղոս, հատուկ էր Գերարայի թագավորներին. ով թագավորում էր այնտեղ, Աբիմելեք տիտղոսն էր ստանում այդ ժամանակվա իրավունքի և սովորույթի համաձայն:

Հարց ԻԱ. **Հակոբն ինչպե՞ս ստացավ հոր օրհնությունը:**

Պատասխան: Իսահակը ծերացել էր, աչքերը ամբողջովին տկարացել էին, և չէր տեսնում, ուստի, ըստ սովորության, ցանկացավ անդրանիկի հատուկ օրհնությունը տալ Եսավին: Սա, որսորդ լինելով, հոր համար միշտ որս էր բերում, սակայն այս անգամ հատկապես որս է խնդրում, որպեսզի իր օրհնությունը տա, ուստի Եսավը գնում է որսի: Բայց քանի որ Ռեբեկան Հակոբին Եսավից ավելի էր սիրում, Իսահակի մտադրությունը

իմանալուն պես Հակոբին ասում է. «Գնա երկու ո՛ւլ բեր, որ խորովեմ, և տար հորդ, որ ուտի և քեզ օրհնի»:

Հակոբը, Եսավի մազոտ լինելը հիշելով, վախենում է, որ չլինի թե հոր մոտ խաբեբայի կերպար առնելով՝ օրհնության փոխարեն անեծքի արժանանա: Ռեբեկան պատասխանում է. «Այդ անեծքը թող իմ վրա լինի, դու գնա բե՛ր»: Նա էլ բերում է ուլերին, որոնք Ռեբեկան խորովում է. Եսավի հին զգեստները Հակոբին է հագցնում և որպեսզի բոլորովին նմանվի Եսավին, ուլի մորթին Հակոբի պարանոցին և ձեռքերի վրա է դնում, որ եթե նույնիսկ Իսահակը շոշափի, չկարողանա իմանալ, թե ո՛վ է:

Հակոբը խորտիկը տանում է հորը, որի «Դու ո՞վ ես» հարցին պատասխանում է, թե քո անդրանիկ որդի Եսավն եմ, հրամանիդ համեմատ որս բերեցի, վե՛ր կաց, կե՛ր և օրհնի՛ր ինձ: Իսահակը զարմանքով հարցնում է. «Ի՞նչ շուտ գտար, որդյա՛կ», որին Հակոբը խորհրդավոր պատասխան է տալիս, թե Աստված այդպես կարգավորեց՝ գործը Աստծու կամքին հանձնելով:

Թեպետ Իսահակը, նրա ձայնից կասկածելով, ասաց. «Մո՛տ արի, որ տեսնեմ դո՞ւ ես որդիս՝ Եսավը,- և ձեռքով նրան շոշափելուց հետո,- ձայնդ Հակոբի ձայնին, իսկ ձեռքերդ Եսավի ձեռքերին են նման» ասելով՝ օրհնեց նրան[234], սակայն թե՛ զգեստների հոտից և թե՛ ուլենուց, որ Հակոբի ձեռքերին և պարանոցին էին զցված, չկարողացավ լավ զանազանել, ուստի խորտիկը ուտելուց և գինին խմելուց հետո անդրանիկ որդուն հատուկ օրհնությունը Հակոբին տվեց:

Պետք չէ ասել, որ Հակոբը խաբեց իր հորը, քանի որ անդրանկությունը նախապես գնած լինելով Եսավից՝

---

234 Ձայնդ Հակոբի ձայնն է, բայց ձեռքերդ Եսավի ձեռքերն են (*Ծնող.* 27:22):

իրավացիորեն անդրանիկն էր համարվում: Նույնպես մի՛ կարծիր, որ Ռեբեկան զավակներից մեկին բարիք կամենալու ժամանակ, մյուսին անիրավություն արեց: Արդարև, այդ նախաձեռնությունն ըստ երևույթին միայն Ռեբեկայինն էր, սակայն նա դրդված և ներշնչված էր ի վերուստ: Քանի որ Աստված նախապես նրան հայտնել էր, որ մեծ որդին պետք է ծառայեր փոքրին: Մանավանդ Մեսիայի՝ Հակոբի ցեղից գալը սահմանված լինելու խոստման համաձայն՝ հայրական օրհնությունը նրան էր վայելում:

Դու մի՛ նայիր ո՛չ Իսահակի ցանկությանը և ո՛չ էլ Եսավի որսի գնալուն, այլ Աստծու ողորմությա՛նը նայիր[235]: Այո՛, Իսահակը առավել էր սիրում Եսավին, բայց Աստված, Հակոբին սիրելով[236], անդրանիկ օրհնության համար նրան արժանի տեսավ: Այսպես օրհնությունը ստանալով՝ Իսահակի մոտից Հակոբի դուրս գալուց հետո Եսավը իր պատրաստած խորտիկը հորը բերեց, որ ուտի:

Նայի՛ր Իսահակի առաքինությանը, որ լսելով Եսավի որսից նոր վերադառնալու մասին և հասկանալով, որ Հակոբն օրհնությունը ստացավ, թեև շատ զարմացավ[237], բայց Հակոբին երբեք չնեղացրեց, այլ կատարվածը Աստծուն թողնելով՝ Նրա գաղտնի խորհուրդներին է վերագրում: Ճշմարիտ է, որ իրողությունը Իսահակի դիտավորությանը հակառակ էր, քանի որ Եսավին օրհնել կամեցած ժամանակ Հակոբին օրհնեց. այս խորհրդավոր կարգադրությունը Աստծուց լինելը հասկանալով, տրված օրհնությունը կրկնելով Հակոբի վրա՝

---

235 Դա կախում չունի նրանից, ով կամենում է և ոչ էլ նրանից, ով ջանում է, այլ Աստծուց, որ ողորմում է (*Հռոմ.* 9:16):

236 Հակոբին սիրեցի և Եսավին ատեցի (*Հռոմ.* 9:13):

237 Իսահակը մեծապես զարմացավ (*Ծնող.* 27:33):

հաստատում է, որ նախապես անգիտությամբ էր օրհնել նրան, սակայն հիմա գիտենալով է օրհնում[238]:

Եսավի թշվառ վիճակից խրատվի՛ր, քանի որ ախորժակով կերած ոսպի ապուրի վնասն ու ցավը նոր զգալով՝ սկսում է բարձրաձայն լացել ու ողբալ և միևնույն ժամանակ գանգատվել Հակոբից: Անդրանկության օրհնությունից հույսը կտրած, «Ինձ էլ օրհնի» ասելով՝ հեծեծանքով լացել սկսելուն պես Իսահակը թեև հայրական կարեկցանքից դրդված փոքր-ինչ օրհնություն է տալիս, սակայն անդրանկության օրհնությունը Հակոբի առումով կայացած լինելով՝ Եսավին ծառա է դարձնում Հակոբին[239]: Սրանից Եսավը, սաստիկ բարկանալով, մտադրվում է հոր մահից հետո սպանել Հակոբին:

Դու Եսավի չարությանը նայի՛ր. ամեն ինչով հանցավոր լինելով հանդերձ՝ գոհ չի մնում իր վիճակից և այլ կերպ բարկությունը մեղմելու անկարող լինելով՝ ցանկանում է բնության միջոցներին դիմել, իբր թե Հակոբից վրեժ լուծելով՝ մխիթարվի, միայն թե չի մտածում, որ հակառակորդից վրեժ լուծելով՝ մարդը չի կարող մխիթարվել, այլ, հակառակը, ավելի վնասվելով՝ պատժվում է: Ահա այսպիսին է իր վիճակից գոհ չեղողների կացությունը: Իրենց հանցանքը ճանաչելով՝ զղջում հայտնելու փոխարեն վրիժառության իղձ են տածում և արժանի են դառնում մեծագույն պատժի:

Սակայն Ռեբեկան խոհեմ և հնարագետ կին էր, որը երբ իմացավ Եսավի չար մտադրությունը, մտածելով՝ միգուցե երկու զավակներից միանգամից զրկվի՝ որոշում է Հակոբին Խառանի երկիրը՝ իր եղբոր՝ Լաբանի մոտ, ուղարկել, մինչև որ Եսավի բարկությունը անցնի, և Հակոբը քանանացի աղջիկ

---

238 Օրհնեցի նրան, և թող օրհնյալ լինի (*Ծնն.* 27:33):

239 Քո եղբորը պիտի ծառայես (*Ծնն.* 27:40):

առնելու փոխարեն Խառանի երկրում ամուսնանա: Քանի որ Եսավի կինը քանանացի էր, Ռեբեկան զզված էր նրանցից: Այս պարագայում Ռեբեկան ոչ միայն Հակոբին վտանգից, այլ նաև Եսավին ոճիր գործելուց հեռու պահելու ցանկությամբ իր մտադրությունը հայտնեց Իսահակին, որը, իր հավանությունը տալով, կանչում է Հակոբին և պատվիրելով, որ քանանացի աղջկա հետ չամուսնանա, հորդորում է գնալ Խառան և այնտեղ ամուսնանալ և օրհնությամբ ճանապարհ է դնում:

Հարց ԻԲ. **Հակոբը միայնա՞կ գնաց Խառան:**

Պատասխան: Այո՛, միայնակ գնաց: Ցխուր և տրտում, ցուպը ձեռքին, աղքատի պես քայլելով՝ գնում է: Երբ արևի մայր մտնելով մութն ընկնում է, դաշտի մեջ՝ ամայի մի վայրում, պառկելով քնում է. նրա անկողինը հողն էր, իսկ բարձը՝ քարը[240]: Այստեղ մտապահի՛ր մարդկանց խորհուրդները և Աստծու կարգադրությունը:

Քանի որ Եսավը վրիժառության մտադրությամբ ցանկանում է սպանել Հակոբին, Ռեբեկան, անզավակ չմնալու խորհրդով Հակոբին օտար երկիր ուղարկելով, Հակոբին բաժանում է Եսավից և հեռացնում, Իսահակը Հակոբի համար քանանացի աղջիկ չառնելու նպատակով հրամայում է Խառան գնալ և ամուսնանալ: Հակոբը համաձայնում է գնալ, որպեսզի ազատվի Եսավի չարությունից: Հիրավի, սրանցից յուրաքանչյուրը մի-մի առանձին մտադրությամբ գործեցին, սակայն միևնույն պահին տեսնում ենք, որ Աստված իր անսահման ողորմությունը Հակոբին հայտնելու համար Խառան ուղարկեց:

---

240 Նա առավ այնտեղի քարերից մեկը, դրեց գլխի տակ ու քնեց այնտեղ (*Ծնող.* 28:11):

Սակայն Ճանապարհին և գնացած տեղում իր հետ ինչ պատահելը չիմանալով՝ Հակոբի սիրտն անհանգիստ է: Ապահո՛վ եղիր, ո՛վ Հակոբ, և հայրենիքդ թողնելով՝ միայնակ ու առանձին մնալու համար մի՛ տխրիր և մանավանդ մի՛ վախենա, քանի որ քո ապահովության համար երկնքի հրեշտակները մեծ պատրաստության մեջ են և ցանկանում են աստիճան դնելով երկիր իջնել և ընկերանալ քեզ:

Արդարև, Հակոբն այն գիշեր երազում տեսավ, որ մի սանդուղք երկրից մինչև երկինք էր բարձրացած, որի վրայով հրեշտակները բարձրանում և իջնում էին. Աստված, նրա հետ խոսելով, մխիթարում է և քաջալերում, որ չվախենա, որովհետև նրա հետ պիտի լինի և ամեն կերպ նրան պահպանելով՝ Քանանի երկիրը պիտի վերադարձնի[241]: Բացի այդ, Աբրահամին և Իսահակին տրված խոստումները նրան էլ են տրվում, թե իր սերունդը չափազանց շատ պիտի աճի և բազմանա, և թե բոլոր մարդիկ նրա զավակով օրհնության պիտի արժանան:

Ուշադի՛ր եղիր. Հակոբին, որ բնիկ երկրից, հորից և եղբորից բաժանվել և միայնակ էր մնացել, Աստված մխիթարում է, որ չտխրի: Քանի որ նա, ով հավատում է Աստծուն և հույսը դնում Աստծու վրա, Աստված էլ, որպես հայր, պահպանում է նրան, և հրեշտակներն էլ, որպես եղբայր, ընկերակցում են նրան, նաև երկնքի արքայությունը՝ որպես ճշմարիտ հայրենիք, շնորհվում է նրան: Հակոբը արթնանալով վախենում է և խոստովանում. «Այստեղ Աստծու տունն և երկնքի դուռն է»[242]:

---

241 Նա երազ տեսավ. Երկրի վրա հաստատված էր մի սանդուղք, որի ծայրը հասնում էր երկինք, իսկ Աստծու հրեշտակները դրանով ելնում-իջնում էին (*Ծնող.* 28:12):

242 Ասաց. «Տերն այնտեղ է, իսկ ես չգիտեի»: Նա վախեցավ և ասաց. «Սարսռազդեցիկ է այս վայրը, և սա այլ բան չէ, եթե ոչ Աստծու տունը, իսկ սա էլ երկնքի դուռն է» (*Ծնող.* 28:16-17):

Հոգևոր իմաստով Հակոբի քնած տեղը՝ Գողգոթա լեռան, իսկ սանդուղքը Սուրբ Խաչի օրինակն ու պատկերն է խորհրդանշում: Այս երազով Հակոբը, մեծապես մխիթարվելով, շնորհակալություն է հայտնում Աստծուն և որպես բարձ գործածած քարը օծելով՝ նշանաքար է կանգնեցնում: Միևնույն ժամանակ որոշում է, որ եթե խաղաղությամբ վերադառնա, այն վայրում Աստծուն երկրպագի, և ինչ նյութական կարողություն էլ իրեն շնորհվի, տասանորդ տա դրանից:

Ապա Խառանի դաշտում մի ջրհորի մոտ հասնելով՝ կանգ է առնում, բայց ջրհորի բերանը մի մեծ քարով փակված էր, և մինչև այդ կողմի հովիվները չհավաքվեին, անհնար էր այդ քարը վերցնել, որի համար էլ Խառանի հովիվներն այդ պահին այնտեղ սպասում էին, որ մյուսներն էլ գային և քարը մի կողմ տանելով՝ ջրեին իրենց հոտերը:

Հակոբը հարցրեց Լաբանի մասին, և նրանք տեղեկություն տալով ասացին, թե ահա նրա աղջիկը՝ Ռաքելը, դեպի մեզ է գալիս: Արդարև, այդ պահին Ռաքելը (նա հոր ոչխարներն էր արածեցնում) գալիս էր՝ ոչխարներին ջուր տալու. այդ ժամանակ Հակոբը, հիշյալ քարը մի կողմ տանելով, ջրում է նրա ոչխարները: Միևնույն ժամանակ ազգականության սիրով սկսում է սաստիկ արտասվել և Ռաքելին հայտնում է, որ ինքը Իսահակի որդին է: Նա էլ գնում և Հակոբի գալստյան մասին տեղեկացնում է Լաբանին, որը, նրան դիմավորելով, սիրով իր տունն է տանում, և Հակոբը մնում է նրա մոտ:

Այս պատմության մեջ Հակոբը հոգևոր առումով Մեսիայի օրինակն է, քանի որ ինչպես նա, հորի վրայի քարը վերցնելով, Ռաքելի ոչխարների ծարավը հագեցնում է և մեծ սեր հայտնում Ռաքելին, նմանապես Մեսիան (Քրիստոս), հին օրենքի վրայից ծանր վարագույրը վերցնելով, քրիստոնյաներին հոգևոր շնորհներով լցրեց և Սուրբ Եկեղեցուն Իր սերն ընծայեց:

Հարց ԻԳ. **Հակոբը որքա՞ն մնաց Լաբանի մոտ:**

Պատասխան: Քսան տարի: Սակայն Լաբանի մոտ գնալու ժամանակից մի ամիս անց Լաբանը Հակոբին առաջարկեց, որ ձրի ծառա չլինելու համար իրեն հասանելիք վարձի չափն ասի: Քանի որ Հակոբը Խառանում պիտի ամուսնանար (ինչպես հայրն ու մայրն էին պատվիրել) դրա համար էլ պատասխանում է. «Փոքր աղջկաղ՝ Ռաքելի համար յոթ տարի կծառայեմ քեզ, նրան ի՛նձ տուր»: Լաբանը այս պայմանին հավանություն է տալիս, ուստի Հակոբը սիրով յոթ տարի ծառայելուց հետո Ռաքելին է պահանջում, սակայն Լաբանը, խոստացած պայմանը դրժելով, նրա մեծ քրոջը՝ Լիային է տալիս, որի աչքերը հիվանդ էին: Զեղբա անունով մի աղախին էլ օժիտ է տալիս Լիային:

Հակոբի հարցին, թե՝ «Ինչո՞ւ խաբեցիր ինձ», Լաբանը պատասխանում է. «Մեր սովորույթի մեջ չկա մեծից առաջ փոքրին ամուսնացնելը, եթե յոթ տարի ևս ինձ ծառայես, նրան էլ քեզ կտամ»: Արդ, քանի որ Հակոբը Ռաքելին շատ էր սիրում՝ խոստանում է յոթ տարի ևս ծառայել նրան և ստանում է, այսինքն՝ Ռաքելի հետ նույնպես ամուսնանում է: Լաբանը Բալլա անունով մի աղախին էլ Ռաքելին է օժիտ տալիս:

Դու այստեղ Աստծու դատաստանը տե՛ս: Լիայի աչքը հիվանդ է, և մանավանդ Հակոբը Ռաքելին առավել է սիրում, քան Լիային, բայց Ռաքելը երկար ժամանակ զավակ չունեցավ, մինչդեռ Լիան չորս արու զավակ է ունենում՝ Ռուբեն, Շմավոն, Ղևի և Հուդա: Ռաքելը տեսնում է, որ Աստված իրեն զավակ չտվեց, իր աղախնին Հակոբին է տալիս, որ գոնե նրանից ծնված զավակին որդեգրի: Ռաքելի աղախնից ծնվում են Դանը և Նեփթաղիմը:

Նմանապես Լիան, Ռաքելից օրինակ վերցնելով, իր աղախնին տալիս է Հակոբին, որ նրանից նույնպես զավակ ունենա:

Լիայի աղախնից ծնվում են Գադը և Ասրը, ապա Լիան նորից ծննդաբերում է երկու արու և մեկ աղջիկ զավակ՝ Իսաքար, Զաբուղոն և Դինա:

Լա՛վ նայիր. ինչպես աշխարհում անհնար է միշտ անտրտում և անվիշտ լինել, նմանապես անհնար է միշտ ուրախ և երջանիկ լինել, այս պատճառով, երբ մեկն ինչ-ինչ պարագաների մեջ վշտի և տրտմության ներքո հեծեծում է, Աստված նրան ուրիշ պարագաներով մխիթարում է, որպեսզի Աստծու ողորմությունից հույսը չկտրի: Դարձյալ, երբ մարդն ինչ-որ պատճառով ուրախություն ունի, Աստված նրա ուրախությունը մեկ այլ պատճառով տրտմության է փոխում, որ նա Աստծու երկյուղը սրտից չհանի և միշտ իր չափը ճանաչի:

Քանի որ աշխարհիկ կամ մարմնավոր գործերում երբ մարդն իր ամեն ուզածին հասնում է, այդ ժամանակ չափը մոռանալով՝ շատ անգամ հպարտանում և մեղանչում է: Օրինակի համար ահա Լիան, որի աչքերը հիվանդ լինելու համար Աստված զավակներ է պարգևում նրան, որ չտխրի և մխիթարվի, իսկ Ռաքելին էլ զավակ չի տալիս, որ իր գեղեցկությամբ չհպարտանա: Արդարև, սրա պատճառով Ռաքելը մեծապես տխրեց, սակայն չհուսահատվեց Աստծուն աղաչելուց, Աստված, նրա աղաչանքները ընդունելով, նրան մի զավակ պարգևեց, որն էլ Հովսեփն էր[243]:

Այս դեպքի համար դու մի՛ ասա, թե Հակոբն ինչո՛ւ է երկու կին առնում և երկու աղախիններին նույնպես, քանի որ այն ժամանակ հին օրենքով այդ սովորույթն արգելված չէր: Հիսուս Քրիստոսը աշխարհ գալով դադարեցրեց այսպիսի անվայելուչ սովորույթները և ինչպես ի սկզբանե մարդուն ստեղծելիս մեկ

---

243 Աստված հիշեց Ռաքելին, անսաց նրան և բեղմնավոր դարձրեց նրա արգանդը (*Ծնող.* 30:22):

այր և մեկ կին ստեղծեց, նույն հրամանը վերահաստատեց: Արդ, Քրիստոսից հետո միաժամանակ երկու կին կամ աղախին ունենալը մեծ մեղք է, քանի որ սուրբ Ավետարանին հակառակ է (*Մատթ.* 19:6):

Հետո, երբ Հակոբը իր հայրենի երկիրը վերադառնալու ցանկություն հայտնեց, Լաբանը, հասկանալով, որ նրա գալստյամբ օրհնվեց իր տունը[244], նրա վերադարձը խոչընդոտելու համար հայտարարում է, թե ինչ վարձ էլ կամենա, պատրաստ է և խոստանում է տալ: Քանի որ Աստծու հովանավորությունն ու խնամքը Հակոբի հետ էր, Լաբանի ունեցվածքը բազմապատկվում էր: Հակոբը հանձն է առնում նորից մնալ նրա մոտ, սակայն մի պայմանով, որ «գույնզգույն բոլոր ոչխարներն ու այծերը, որոնք այսուհետև ծնվեն քո հոտի մեջ, իմ վարձը լինեն, որոնք, եղածներից զատվելով, որպես սեփականություն ինձ հանձնվեն»:

Լաբանը, ընդունելով սույն պայմանը, իր հոտում որքան բազմագույն ոչխար կամ այծ կար, առանձնացրեց և իր որդիներին հանձնեց, իսկ միագույնները հանձնեց Հակոբին և նրանց երեք օրվա անցնելիք ճանապարհի չափ իրարից հեռու տեղեր ուղարկեց: Արդ, Հակոբը մի այսպիսի հնարք գործի դնեց. վերցրեց ընկույզի և սոսի ծառերի դալար ոստեր, որոնք, տեղ-տեղ կեղևազատելով, գույնզգուն հորինվածքով տաշեց՝ մի տեղ կանաչ, մի տեղ սպիտակ թողնելով, և դրանք դրեց ավազանների մեջ, այնպես որ ոչխարներն ու այծերը, ջուր խմելու ժամանակ դրանց նայելով, գույնզգույն էին ծնում:

Արդարև այս հնարքն ու կարգադրությունը բնության օրենքի համաձայն է, սակայն դրա գործադրությունը

---

244 Լաբանը նրան պատասխանեց. «....համոզվեցի, որ Աստված ինձ օրհնեց իմ տուն քո ոտք դնելով» (*Ծնն.* 30:27):

և հաջողությունը Աստծու զորությամբ կատարվեց: Լաբանը, որ մի ագահ մարդ էր, Հակոբի իրավունքը միշտ կողոպտելու ցանկություն ուներ, սակայն Հակոբը Լաբանին այն աստիճան հավատարմությամբ էր ծառայում, որ ցերեկը տապից և գիշերը ցրտից հիվանդանալով՝ անգամ քունն էր աչքերից հեռացել[245]:

Որպեսզի արդարությունը հաղթանակի, Աստծու հրամանով ոչ միայն Հակոբի արածեցրած ոչխարներն ու այծերը, այլ նաև Լաբանի որդիներին հանձնված միագույնները նույնպես սկսեցին խայտաբղետ կամ բազմագույն ծնել, և Լաբանը տեսնում է, որ այդ տարի գույնզգույնները խիստ շատացան, ուստի հաջորդ տարի խորամանկությամբ պայմանը և դաշինքը փոխելով՝ միագույն ծնված ոչխարներն ու այծերը Հակոբին, իսկ գույզգույնները իրեն է հատկացնում, բայց զարմանալի բան. այս տարի էլ միագույններն են բազմանում[246]:

Խրա՛տ վերցրու. ոչխարների դալար ոստերին նայելով գույնզգույն ծնելու նման՝ մարդիկ էլ, տեսակ-տեսակ բարի խրատներին անսալով, մանավանդ Սուրգ Գրքի խրատները մտապահելով, միշտ դրանց շուրջ խոկալով, Աստծու ողորմությամբ հեշտությամբ կարողանում են նախ առաքինի մտքեր հղանալ և ապա իրենց կյանքի ընթացքում գործնականորեն իրականացնել դրանք: Քանի որ ինչպես աչքը ուր նայում է, միտքն էլ այնտեղ է նայում, նույնպես մարդը մտքում ինչ որոշի, կամքն էլ դեպի այն է հակվում: Ուրեմն բարի գործերի շո՛ւրջ խորհիր, որ բարեգործ լինես:

---

245 Ցերեկը տանջվում էի շոգից, իսկ գիշերը՝ ցրտից (*Ծնող.* 31:40):

246 Եթե նա ասի. «Երանգավոր մաքիները թող լինեն քո վարձը», ապա բոլոր մաքիները երանգավոր գառներ կծնեն, իսկ եթե ասի՝ «Սպիտակները թող լինեն քո վարձը», ապա բոլոր մաքիները սպիտակ գառներ կծնեն (*Ծնող.* 31:8):

Հոգևոր իմաստով վերոհիշյալ ոստերը կամ գավազանները՝ սուրբ խաչի, ավազանը՝ սուրբ ավազանի, և Հակոբի հոտը քրիստոնյաների օրինակն են:

Հարց ԻԴ. **Երբ Հակոբի անասունները շատացան, Լաբանն ու իր որդիները նախանձեցի՞ն:**

Պատասխան: Նախանձեցին: Արդարև, ինչպես վերևում ասվեց, Հակոբը տասնչորս տարի ծառայեց Լաբանին նրա երկու աղջիկների համար, վեց տարի էլ ընկերական պայմանավորվածության համաձայն աշխատեց: Բայց քանի որ ամեն ինչում հավատարիմ էր, Աստված բազմացնում էր նրա ունեցվածքը՝ օրհնելով նրա աշխատանքը: Մանավանդ ոչ միայն Լաբանի ոչխարներն էր արածեցնում, այլ նաև, ինչպես ենթադրվում է, առևտրով էլ զբաղվելով՝ ծառաների, աղախինների և այլ բազում ստացվածքների տեր է դառնում իր քրտնաջան աշխատանքով: Այս պատճառով Լաբանի որդիները նախանձելով գանգատվում են, թե մեր հոր ունեցվածքը գրավեց: Լաբանը նույնպես նախանձից երեսը ծռմռում է:

Սակայն քանի որ Աստված միշտ և ամենուր արդարի և անմեղի պաշտպանն ու օգնականն է և ինչպես Հակոբին Եսավի ձեռքից ազատեց, նույնպես էլ Լաբանի չարությունից էր ցանկանում փրկել, դրա համար Հակոբին հրամայում է վերադառնալ հոր մոտ: Հակոբն իսկույն հայտնում է իր կանանց և ճանապարհի պատրաստություն է տեսնում: Լաբանը այդ ընթացքում գնացել էր իր ոչխարների բուրդը խուզելու, Հակոբը իր ամբողջ ընտանիքով և ունեցվածքով ճանապարհ է ընկնում դեպի Քանան:

Երեք օր հետո Լաբանը լսում է և իր մարդկանցով նրա հետևից է ընկնում, որ պատժի նրան: Յոթերորդ օրը Գաղաադ լերան վրա հասնում է նրան և հարցնում. «Ինչո՞ւ ինձնից

գաղտնի գնացիր և աղջիկներիս գերու նման քշեցիր տարար», Հակոբը պատասխանում է. «Վախեցա, որ աղջիկներիդ և ունեցվածքս ինձնից հետ կվերցնես»: Իրոք, Լաբանի միտքը չար էր, և Հակոբը, նրա ապօրինի ընթացքի մասին լավ իմանալով, ծածուկ ճանապարհ ընկավ:

Քանի որ եթե Աստված Լաբանին երազի մեջ չպատվիրեր, որ Հակոբին որևէ վնաս և չարիք պատճառելուց զգուշանա, այլապես մեծ նեղություն և վիշտ պետք է պատճառեր նրան, ինչպես Լաբանն ինքը խոստովանեց՝ ասելով. «Հիմա կարող էի քեզ վնասել, սակայն հորդ Աստվածն ինձ պատվիրեց, որ զգուշանամ»[247]:

Նայի՛ր, թե Աստված ինչպե՛ս է պաշտպանում իր հավատարիմ ծառային, քանի որ առանց Հակոբի իմանալու նրա ոսոխին օր առաջ հանդիմանություն է տալիս՝ նրա կյանքի և ունեցվածքի պաշտպանության համար: Սակայն Հակոբից գաղտնի Ռաքելի՝ իր հոր կուռքը գողացած լինելու պատճառով Լաբանը սկսում է մեղադրել Հակոբին. «Ինչո՞ւ իմ աստվածները գողացար», Հակոբը պատասխանում է. «Ում մոտ գտնես քո աստվածներին, նա թող մեռնի»:

Քանի որ Լաբանը ցանկանում էր Հակոբին հանցավոր հանել, այսպիսի թույլտվություն ստանալուն պես Հակոբի, Լիայի և աղախինների վրաններն իսկույն խուզարկում և չի կարողանում գտնել կուռքը: Երբ Ռաքելի վրան է գալիս, Ռաքելը, անմիջապես կուռքը պահելով ուղտի թամբի տակ, նստում է վրան, և երբ հայրը իր մոտ է գալիս, ոտքի կանգնելու փոխարեն, որից կուռքը կարող էր երևալ, հայտնում է, որ կանանց հատուկ տկարության մեջ է, որի համար հորից

---

247 Ես հիմա կարող էի քեզ վատություն անել, բայց քո հոր Աստվածը երեկ ասաց ինձ. «Զգո՛ւյշ եղիր....» (*Ծնող.* 31:29):

ներողություն է խնդրում: Լաբանը, չկասկածելով Ռաքելին, նրան չի ստիպում, որ ոտքի կանգնի, այլ միայն ունեցվածքը խուզարկելով է բավականանում և այսպիսով չի կարողանում գտնել կուռքը:

Այն ժամանակ Հակոբը բարկանալով պարսավում է Լաբանի անիրավությունն ու իր քսան տարվա հավատարիմ ծառայության փոխարեն ցույց տրված ապերախտ վերաբերմունքը: Լաբանը, դրան պատասխան չգտնելով, սիրալիր և քաղցր ու խոնարհ խոսքերով շահում է Հակոբի սիրտը, որով էլ հաշտվում են: Միևնույն ժամանակ Աստծուն որպես վկա կոչելով՝ ի նշան իրենց միջև հաստատված խաղաղության և ուխտի տևական լինելու, մի քարե կոթող են կանգնեցնում և որպես սահմանագլուխ ընդունելով՝ երդվում են, որ իրար վնասելու մտքով և խորհրդով երբեք նշված սահմանից չանցնեն: Ապա միասին ճաշելուց հետո Լաբանը սիրով և խաղաղությամբ իր տեղն է գնում, իսկ Հակոբն իր ամբողջ ընտանիքով շարունակում է ճանապարհը:

Վերոհիշյալ կուռքը վերցնելու Ռաքելի նպատակը ոչ թե այն պաշտելու մտադրությունն էր կամ ագահությունից էր (քանի որ համարվում է, որ այն ոսկուց էր), այլ որ հայրը կռապաշտությամբ չզբաղվի:

Հարց ԻԵ. **Հակոբը, Խառանից դուրս գալով և Քանանի երկիր գնալով, մի՞թե չվախեցավ իր Եսավ եղբորից:**

Պատասխան: Վախեցավ: Քանի որ գիտեր, որ Եսավի բարկությունը ժամանակի ընթացքում չէր մեղմանում: Այս առումով մեծ մտատանջության մեջ էր, ուստի նրա սիրտը հանգստացնելու համար Աստծու կողմից հրեշտակներ են ուղարկվում օգնության համար, որոնք պատերազմող բանակի

նման Հակոբին ընդառաջ են գալիս[248]: Թեև սա իմացավ նրանց առաքման նպատակը, այսուհանդերձ մարդուն վայել եղածն էլ գործադրելը իր պարտքը համարեց և հատկապես եղբայրական սիրո համաձայն մարդ ուղարկեց Եսավի մոտ՝ իր գալուստը հայտնելու, որպեսզի անկեղծությամբ հայտնի դառնա նրա եղբայրության նկատմամբ վստահությունը:

Այս լուրը ստանալուն պես, ի պատիվ Հակոբի և իր փառքի համար, Եսավը կամեցավ չորս հայրուր մարդկանց ուղեկցությամբ նրան դիմավորել: Այդպիսի բազմությամբ ընդառաջ դուրս գալու լուրը լսելով՝ Հակոբը սաստիկ վախեցավ, ուստի աղոթքի օգնությանը դիմելով՝ նախ շնորհակալությամբ մեկ առ մեկ հիշում է մինչ այդ Աստծո՝ իրեն արած բարիքները և խոստովանելով, որ անկարող է բավարար խոսքեր գտնել՝ դրանց համար իր երախտագիտության զգացումը արտահայտելու, խնդրում է, որ իրեն Եսավի ձեռքից նորից ազատելու շնորհն անի[249]:

Այստեղից սովորի՛ր աղոթքի պայմանները, որպեսզի խնդրածդ ընդունես Աստծուց: Հիրավի, Հակոբը աղոթքի առումով անթերի գտնվեց, սակայն մարդուն պատշաճ և հարմար երևացող խոհական կարգադրությունն էլ ձեռքից չթողնելով, իր մարդկանց և ընտանիքը երկու մասի բաժանեց, որպեսզի եթե հանկարծ Եսավը մի մասին վնասի, գոնե մյուս մասն ազատվի: Եվ այն ժամանակների պահանջների համաձայն՝ այծ, կով, ուղտ և սրանց նման անասուններ է ուղարկում Եսավին՝ որպես ընծա, որպեսզի սրանք տեսնելով՝ բարկությունը թերևս մեղմանա:

---

248 Նրան ընդառաջ եկան Աստծու հրեշտակները (*Ծնող.* 32:2):

249 Ես արժանի չեմ բոլոր այն արդարություններին ու ճշմարտություններին, որ արեցիր քո ծառային, որովհետև ցուպը ձեռքիս անցա Հորդանանի այս կողմը, իսկ հիմա բաժանվել եմ երկու մասի (*Ծնող.* 32:10):

Բացի այդ, ինքն իրեն ծառայի տեղ դնելով, սրտի խոնարհությամբ և աղաչանքով լուր է ուղարկում, որ բարեհաճի ընդունել իր ընծաները: Հետո ամբողջ ընտանիքը Հորդանան գետի հանդիպակաց ափն անցկացնելով՝ ինքն այդ գիշեր իր եղած տեղում է մնում, որպեսզի աղոթքներով և խնդրանքներով նորից Աստծուն դիմի:

Հակոբից օրինա՛կ վերցրու, որին Աստված հրամայեց գնալ Քանանի երկիրը և նրան օգնելու համար հրեշտակներ հատկացրեց, սակայն նա դարձյալ աղոթում է: Որովհետև ինչքան էլ Աստված Իր ողորմությունը չի խնայում մարդուն, սա դարձյալ պարտավոր է, աղոթքից հետ չմնալով, միշտ զոհությամբ և շնորհակալությամբ հանդերձ, աղաչել Աստծուն, որ է՛լ առավել շնորհների և ողորմության արժանացնի: Ինչպես այս անգամ. Հակոբի աղոթելու ժամանակ, մարդկային կերպարանքով մի հրեշտակ գալիս և գոտեմարտում է նրա հետ, և Հակոբը, նրան մարդ կարծելով, ջանում էր չհաղթվել[250]:

Այս բանը պատահեց ոչ թե երազում, այլ արթուն ժամանակ և միմյանց հաղթելու փափագով մարտը մինչև առավոտ շարունակվեց, սակայն երբ Հակոբը մինչև առավոտ անպարտելի մնաց, հրեշտակն ասաց. «Թո՛ղ ինձ, որովհետև լույսը բացվեց», սակայն Հակոբը չի թողնում, ուստի հրեշտակը, ճզմելով նրա ազդրի ջլերը, անզգայացնում է նրան, որպեսզի թողնի իրեն: Հակոբը դարձյալ չի թողնում, մինչև իրեն չօրհնի[251], քանի որ իմանում է, որ իր հետ գոտեմարտողը Աստծու հրեշտակն է, դրա համար էլ օրհնություն է խնդրում նրանից:

Առարկելու բան չէ, թե հրեշտակն ինչո՛ւ չհաղթեց Հակոբին, քանի որ հաղթելու դիտավորություն չուներ, այլ Եսավի

250 Հակոբը մնաց միայնակ: Մի մարդ մարտնչեց նրա հետ մինչև առավոտ (*Ծնն.* 32:24):

251 Թույլ չեմ տա, որ գնաս, մինչև ինձ չօրհնես (*Ծնն.* 32:26):

երկյուղը նրա սրտից փարատելու, ինչպես նաև նրա հավատը և մանավանդ նրան արված Աստծու շնորհը աշխարհին հայտնելու: Այդ պատճառով հրեշտակը հայտնում է. «Այսուհետև քո անունը Հակոբ թող չկոչվի, այլ Իսրայել» [252]: Ոմանք «Իսրայել» բառով օրհնությունն են հասկանում, քանի որ Հակոբը օրհնություն էր խնդրել, կամ թե քանի որ «Հակոբ» նշանակում է «խաբող», նախ անունն է փոխում և ապա օրհնում, որպեսզի չկարծեն, որ Հակոբը խաբեբա մարդ էր, այլ մաքուր, սուրբ և հավատարիմ:

Քանի որ ինչպես Աբրահամը Աստծու սիրելի, Իսահակը Աստծու ծառա, նույնպես էլ Հակոբը Աստծու սուրբ կոչվեց[253]:

Նկատի՛ ունեցիր, որ Աբրահամի անվան վրա միայն մեկ տառ ավելացավ, սակայն Հակոբի անունն ամբողջությամբ փոխվեց: Քանի որ «Աբրահամ» բառը «շատ ազգերի հայր» նշանակելով՝ Աբրահամի առումով իրականացավ, սակայն «Իսրայել» բառը «Աստվածատես» էր նշանակում և միայն Հակոբին չէր վերապահված, այլ նրա ցեղը ևս պիտի կոչվեր «Իսրայել»: Ուստի անունը փոխվելով՝ Իսրայել է կոչվում, որպեսզի մարդիկ դրա նշանակությունը և պատճառը իմանան ու Հակոբի նման կատարյալ հավատով և մաքուր սրտով Աստծուն ապավինելով՝ թշնամուց ազատվեն և դրախտում Աստծուն տեսնելու արժանի լինեն:

Դարձյալ, մարդկային կերպարանքով հրեշտակի գոտեմարտելը Հակոբի հետ և Իսրայել անվանակոչությունը հայտնում էր Հակոբի ցեղից Մեսիայի սերելը, և ով Քրիստոսին հավատալով, նրա հրամանին հնազանդվի, նա՛ է Իսրայելը, այս

---

252 Այսուհետև քեզ Հակոբ թող չկոչեն, այլ Իսրայել թող լինի քո անունը (*Ծնող.* 32:28):

253 Հանուն քո սիրելի Աբրահամի, հանուն քո Իսահակ ծառայի և հանուն քո սուրբ Իսրայելի (*Դան.* 3:35):

պատճառով է, որ քրիստոնյաները իրավացիորեն «Նոր Իսրայել» են կոչվում:

Վերջապես Հակոբի խնդրանքների համաձայն հրեշտակը նրան օրհնելով քաջալերում է, որ չվախենա Եսավից. քանի որ կարողացավ մենամարտել հրեշտակի հետ, մարդկանց ևս պիտի հաղթի[254]: Երբ Հակոբը հրեշտակից բաժանվում է, լույսը բացվում է, բայց նա սկսում է կաղալ: Սակայն մի՛ կարծիր, թե Հակոբի կաղալը նրա համար պատիժ էր, այլ ազդարարություն, որ ամեն քայլափոխի Աստծու ողորմությունը մտաբերելով՝ գոհանա. նրա որդիները նույնպես Աստծու բարիքը չմոռանան (սա է պատճառը, որ հրեաները կենդանու ազդրը չեն ուտում): Նաև՝ Հակոբի կաղությունը տեսնելով՝ թերևս Եսավի բարկությունը մեղմանա:

Հակոբը, տեսնելով, որ Եսավը գալիս է, իսկույն ընդառաջ գնաց և յոթ անգամ մինչև երկիր խոնարհվեց ողջունելու համար, Եսավը նույնպես Հակոբին տեսնելուն պես առաջ եկավ և արտասուքներով միմյանց պարանոցին փաթաթվելով՝ սիրալիր տեսակցեցին: Եսավը ցանկանում է, որ միասին գնան, սակայն Հակոբը, պատճառ բերելով իր ընտանիքի բազմությունը, առաջարկում է, որ նա առաջ գնա, իսկ ինքը ծանրաքայլ կգա: Ուստի Եսավը բաժանվելով իր տեղը գնաց: Հակոբն էլ, Սոքովտ կոչված տեղը գալով, իր և անասունների համար տեղ է կառուցում, որտեղ մի որոշ ժամանակ բնակվելուց հետո փոխադրվում է Սամարիայի կողմերը՝ Սիկիմ անունով վայրը, որն այժմ Նապուլուս է կոչվում:

Այստեղ Հակոբը, հարյուր ոչխար տալով, անասունների համար հող է գնում և քաղաքի մոտ վրան կանգնեցնելով՝

---

254 Դիմացար Աստծու հետ մաքառելիս, ուստի մարդկանց նկատմամբ էլ ուժեղ լինես (*Ծնող.* 32:28):

սեղան է շինում և աղոթելով գոհանում Աստծուց[255]: Մտորի՛ր, Հակոբը ինչպես նախկինում, երբ երկյուղի մեջ էր, աղոթքի է դիմում, նույնպես իր սիրտը խաղաղվելուց հետո դարձյալ չի դադարում աղոթելուց: Քանի որ աղոթքը հարկավոր է ոչ միայն այն ժամանակ, երբ մարդիկ նեղությունների և տառապանքների մեջ են գտնվում և աշխարհի վշտերի, վտանգների և վախի սպառնալիքների տակ չարաչար ճնշվելով՝ աստվածային օժանդակության կարիքն ունեն ազատվելու համար, այլ նաև հանգստության և երջանկության օրերում պարտականություն է շնորհակալությամբ և երախտագիտությամբ աղոթք, գոհություն և փառք մատուցել Աստծուն, որպեսզի Նրա մարդասեր բարիքները չմոռացվեն:

Հարց ԻԶ. **Երբ Հակոբը Խառանից վերադարձավ, հայրը ո՞ղջ էր:**

Պատասխան: Ողջ էր: Քանի որ Իսահակը 180 տարեկանում մահացավ, որին Հակոբն ու Եսավը թաղեցին Քեբրոնում՝ Աբրահամի մոտ: Այստեղ աշխարհի ընթացքի և սրբերի ու արդարների առաքինության վերաբերյալ խրատ է պետք վերցնել: Քանի որ ինչպես Աբրահամն իր ամբողջ կյանքի ընթացքում այլևայլ փորձությունների ենթարկվեց, բայց այնուամենայնիվ երբեք իր հավատքը չտկարացրեց, աստվածպաշտությամբ և գոհությամբ միշտ անց էր կացնում իր պանդխտության օրերը: Իսահակը նույնպես փորձություններից զերծ չմնաց, մանավանդ Ս. գրքի խոսքին հետևելով՝ քառասուն տարուց ավելի կուրությամբ անցկացրեց՝ առանց երբեք դժգոհելու:

---

255 Նա այնտեղ զոհասեղան կառուցեց և երկրպագեց Իսրայելի Աստծուն (*Ծնող.* 33:20):

Հակոբը ևս գրեթե միշտ փորձության բովով անցավ, թեև ծանրագույն վշտերի օրեր ունեցավ, սակայն Աստծու ողորմությունից բնավ հույսը չկտրեց ոչ մի անգամ: Այս առումով մի՛ կարծիր, թե արդարների նեղությունները և դժբախտությունները իրենց հանցանքների պատճառով են, այլ ի սկզբանե, բնական օրենքի համաձայն, աշխարհի ընթացքն ու բնական պահանջն է[256]: Այս պատճառով առաքինի մարդուն գրչի և մոմի նմանեցնելով՝ ընդհանուր առած է դարձել. մարդն ուղիղ ընթացքի մեջ գրիչ լինի, վառվելու մեջ՝ մոմ, չի կարող գլուխը ազատել փորձանքների մկրատից:

Արդարև, գրիչն ու մոմը, մարդուն պիտանի և օգտակար լինելով հանդերձ, երբեմն-երբեմն երկուսի գլուխն էլ հատում են: Նույնպես էլ մարդը, եթե այս աշխարհում գրչի նման ուղիղ և մոմի նման լուսավոր էլ լինի, դարձյալ չի կարող իր գլուխը փորձանքից փրկել: Թեպետ Հակոբը, Խառանից վերադառնալով և Եսավի հետ հաշտվելով, միառժամանակ ուրախ և երջանիկ եղավ, սակայն քանի որ երկրի վրա մարդու համար անհնարին է տևական երջանկությունը, Հակոբը նույնպես, իր աղջկա՝ Դինայի պատճառով մեծ մտատանջության մատնվեց:

Քանի որ, ինչպես վերը ասացինք, Նապուլուսի մոտ էր բնակվում, երբ Դինան միայնակ քայլում էր՝ քաղաքի աղջիկներին տեսնելու հետաքրքրությունից դրդված, քաղաքի կառավարչի որդին, բռությամբ նրա պատիվը անարգեց, ապա օրենքի համաձայն ցանկացավ նրան կնության վերցնել: Հակոբի որդիներն արտաքնապես համաձայնում են պայմանով,

---

256 Որդյա՛կ, եթե նվիրվում ես Տիրոջը ծառայելու, քո անձը փորձությունների՛ պատրաստիր (*Միրաք* 2:1): Բոլոր նրանք, որ ուզում են աստվածապաշտությամբ ապրել Քրիստոս Հիսուսով, հալածանքների մեջ պիտի լինեն (*Բ Տիմոթ.* 3:12):

որ քաղաքի բոլոր բնակիչները թլփատվեն: Նրանք համաձայնվելով ընդունեցին սույն առաջարկը, և բոլորը մեկ օրվա մեջ թլփատվեցին: Սակայն դեռևս նրանց ցավը չանցած՝ Հակոբի երկու որդիները՝ Շմավոնը և Ղևին, վրեժխնդրության համար Հակոբից գաղտնի քաղաք մտնելով, բոլոր տղամարդկանց սուսերով կոտորելուց բացի, կանանց էլ գերում են և քաղաքը կողոպտելով՝ վերցնում իրենց քրոջը: Այս պատճառով Հակոբը մեծ տխրության մեջ է ընկնում: Մանավանդ վախենալով, որ երկու եղբայրների անխոհեմ հանդգնության պատճառով իր ընտանիքին մեծ վտանգ կհասցվի քանանացիներից:

Մայրերն ու աղջիկները թող խրատ վերցնեն. Դինան շրջագայելու համար տնից մենակ դուրս եկավ և սնոտի հետաքրքրության համար մեծ վտանգի հանդիպեց և այնքան մարդկանց կորստյան պատճառ էլ դարձավ: Սակայն Աստված Հակոբին հրամայում է, որ այնտեղից դուրս գա, Բեթել կոչված վայրը գնա և այնտեղ սեղան կանգնեցնի: Սա այն վայրն է, որտեղ Խառան գնալու ժամանակ Հակոբը, հրաշալի երազ տեսնելով, այն վայրը «Աստծու տուն» և «Երկնքի դուռ» անվանեց, քանի որ «Բեթէլ» «Աստծու տուն» է թարգմանվում:

Դու լա՛վ նայիր Հակոբի առաքինությանը և ճշմարիտ աստվածպաշտությանը. որովհետև Բեթել գնալու և Աստծու սեղան կանգնեցնելու հրամանը ստացավ, այս առթիվ իր բազմանդամ ընտանիքի անդամներին պատվիրում է, որ ոչնչացնեն իրենց մոտ եղած բոլոր կուռքերը, և բոլորն էլ, զգեստները փոխելով, ամեն կերպ մաքրվեն, որպեսզի Բեթել գնան արժանի տրամադրվածությամբ[257]: Քանի որ ինչպես արդեն հիշվել է, Լաբանի կուռքը Ռաքելի մոտ գտնվելուց բացի, (Սիկիմ-Նա-

[257] Վերացրե՛ք ձեր միջից ձեզ մոտ եղած օտար աստվածները, մաքրվեցե՛ք, փոխեցե՛ք ձեր զգեստները, որ վեր կենանք գնանք Բեթել, այնտեղ զոհասեղան կառուցենք Աստծուն (*Ծնող.* 35:2-3):

պուլուս) քաղաքը կողոպտելու ժամանակ նրանց կուռքերը և դրանց ընծայված ու նվիրված զարդերն էլ վերցրել էին:

Արդ, ում մոտ կուռք կամ կուռքերին վերաբերող որևէ բան կար մինչև իսկ իրենց ականջօղերը, հանելով բերեցին և Հակոբին տվեցին, որը, դրանք թաղելով ոչնչացնում է նրանց ձեռքը այլևս չընկնելու համար: Օրինա՛կ վերցրու. նա, ով փափագում է երկնքի թագավորությունը մտնել, պարտավոր է նախ մեղքերի կուռքերը խոստովանելով սրտից դուրս վտարել՝ և մեղքերի աղտերը, արտասուքի ջրով լվանալով, ամբողջովին սրբել և հանդերձ փոխելու նման չար գործերն էլ մի կողմ դնելով՝ պարտավոր է առաքինության զգեստը հագնել, որպեսզի Աստծու արքայության փառքերին արժանի լինի:

Հետո, Աստծու հրամանի համաձայն, Հակոբը Բեթել գնալուն պես սեղան է շինում և սրտի զեղումով հավիտենական երկրպագություն մատուցում, և Աստված, նորից նրան երևալով, ոչ միայն օրհնում է, այլև «Ես Եմ քո ամենակարող Աստվածը» ասելով՝ նախապես արված խոստումն է կրկնում[258]: Այս խոսքով Աստված հայտնում է, թե Ինքը ամենակարող է, և բոլորի փափագները Իրենով և Իր մեջ կարող են լիություն գտնել: Կարծես ցանկանում է Հակոբին ասել. «Հոգ մի՛ արա, ո՛վ Իսրայել, և քանանացիներից էլ մի՛ վախեցիր, քանի որ դու Ինձ հանձնվեցիր, Ես կարող և բավական եմ քեզ ամեն տեսակ չարիքից պահելով փառավորել»:

Արդարև, եթե Աստված քանանացիների սրտերում երկյուղ չգցեր, անպատճառ Հակոբին կպատժեին[259]: Եվ սույն խոսքը ոչ միայն Հակոբի, այլև ամբողջ մարդկանց համար

---

258 Ես եմ քո ամենակարող Աստվածը (*Ծնող.* 35:11):

259 Իսրայելը չվեց Սիկիմից: Աստծու երկյուղը պատեց նրա շուրջը գտնվող քաղաքները, և նրանց բնակիչները չհետապնդեցին Իսրայելի որդիներին (*Ծնող.* 35:5):

մխիթարություն եղավ, քանի որ Աստված կարող է թե՛ այս աշխարհում և թե՛ հանդերձյալ աշխարհում ամեն ինչով երջանկացնել և փառավորել այն մարդուն, որը, Աստծուն ապավինելով, հավատարությամբ և սիրով ծառայում է Նրան:

Այդ ընթացքում՝ Բեթելից դեպի Բեթղեհեմ Հակոբի գնալու ժամանակ, Ռաքելը Բենիամինին ծննդաբերելուց հետո մահանում է: Հակոբը նրան թաղում և վրան մահարձան է կանգնեցնում, որ մինչ այժմ Բեթղեհեմի ճանապարհի վրա մնում է, որին հրեաները ուխտի են գնում: Հակոբն այս անգամ Բեթղեհեմի մոտ է բնակվում.սա այն վայրն է, որտեղ համարվում է, թե Քրիստոսի ծնված ժամանակ հրեշտակները հովիվներին ավետիս տվեցին:

Այստեղ Սուրբ գիրքը ընդարձակորեն պատմում է Եսավի ցեղաբանությունը, որը մենք ստիպված բաց թողեցինք:

Հարց ԻԷ. **Հակոբը քանի՞ որդի ուներ:**

Պատասխան: Տասներկու: Ռուբեն, Շմավոն, Ղևի, Հուդա, Դան, Նեփթաղիմ, Գադ, Ասեր, Իսաքա, Զաբուղոն, Հովսեփ և Բենիամին: Տասներկու զավակները Հակոբի համար մեծ ուրախություն էին, մանավանդ Աբրահամի սերնդի բազմանալու խորհուրդը Հակոբի առումով սկսում է իրագործվել: Քանի որ այս տասներկու որդիներից տասներկու ցեղեր առաջանալով՝ Իսրայելի ազգ կոչվեցին: Եվ մասնավորապես Քրիստոսը Իսրայելի ցեղից պետք է ծնվեր, այդ պատճառով Աբրահամին, Իսահակին և Հակոբին խոստացված շնորհն ու ողորմությունը նրանց վրա կայացան: Միայն թե ուշադրությամբ պիտի նկատել, թե Աստված ի՛նչ խորախորհուրդ կարգադրությամբ կամեցավ Իր բարձրագույն կամքը կատարել:

Արդարև, Աստծու համար դժվարություն չկա, ինչ եղանակով էլ լինի, նա կարող է ի գործ դնել Իր կամքը, բայց որպեսզի

Իր հզոր զորությունը, բոլորին հայտնվելով հանդերձ, մարդուն միանգամայն օգտակար լինի,երբեմն իր կարողությունը հայտնապես հրաշքով է հայտնում, երբեմն ծածկում է բնական օրենքների ներքո: Քանի որ եթե Աստված Իր զորությունը միշտ հրաշքով հայտներ, մարդուն առաքինության վարձ չէր մնա: Եվ եթե միշտ բնության պայմանների ներքո պահեր, այն ժամանակ մարդը պիտի կարծեր, թե աշխարհը իր բնությամբ է կառավարվում:

Ահա այս պատճառով իրավացի չէ ասել, թե ինչ տեղի է ունենում բնության օրենքի համաձայն, դիպվածի արդյունք է, մանավանդ արարածները, Արարչին հլու հնազանդվելով, բնության տեղաշարժերը և զորությունները միշտ Նրա բարձր կամքի համաձայն են կատարվում[260], որպեսզի մարդը, ըմբռնելով այդ, խրատվի և առաքինություն գործելով՝ վարձատրության արժանանա: Սրա շուրջ արժե խորին մտադրությամբ խորհրդածել, և եթե վտանգ կամ փորձանք պատահի, մի՛ ասա, թե պատճառը մարդն է: Եվ կամ արևելյան, արևմտյան, կամ անապատի և լեռների կողմերից հողմը փչելով և թշնամին հայտնվելով՝ այդ արկածն ու փորձանքը գոյացան, այլ նկատի՛ր, որ ամեն բանի դատավորը Աստված է, և Նրա հրամանով և թույլտվությամբ են կարող նրանք այդպիսի դիպվածներին և գործերին ծնունդ տալ[261]:

Հակոբը թեև տասներկու որդի ուներ, ինչպես վերը հիշվեց, սակայն բոլորից առավել սիրում էր Հովսեփին՝ որպես իր ծերության զավակի, որը ոչ միայն դեմքով, այլև մանավանդ հոգևոր շնորհներով զարդարված լինելով՝ նրա համար ծաղկակար մի պատմուճան է գործել տալիս: Իբր ինչպես

260 Քո արարածները քեզ ծառայում են իբրև Արարչի (*Իմաստ.* 16:24):

261 Մեծությունը գալիս է ո՛չ արևելքից, ո՛չ արևմուտքից, ո՛չ էլ լեռների անապատից, այլ Աստված է դատավոր (*Սաղմ.* 74:7-8):

Հովսեփի հոգին առաքինության ծաղիկներով է զարդարված, նույնպես մարմինն էլ զարդարված, նրա առաքինության արտաքին նշանը կլինի:

Բայց Հովսեփի եղբայրները, սրա համար սաստիկ նախանձելով, իրենց հորը նրա մասին միշտ գանգատներ և ամբաստանություններ էին անում[262]: Սակայն անմեղ մարդու մասին գանգատվելը և զրպարտելը նշանակում է նրա պատիվն ու փառքը մեծացնել: Իրենք հանցավոր են, սակայն Հովսեփին են հանցավոր ներկայացնում, որպեսզի հոր կողմից չսիրվի: Մինչև ատելության և չար նախանձի կիրքը այն աստիճան է տիրապետում նրանց սրտերին, որ այլևս չեն կարողանում նրա հետ մարդավայել խոսել[263]:

Կարևոր է գիտենալ, որ թեև եղբայրները նրան չէին սիրում, սակայն Հովսեփը սիրում էր իր եղբայրներին, ուստի Աստված, Հովսեփին սիրելով, ցանկանում է նրան ավելի փառավորել, երազում հայտնում է, թե ապագայում նրան ինչ մեծության պիտի հասցնի: Քանի որ երազում տեսնում է, որ իր եղբայրների հետ դաշտում խուրձեր կապելու ժամանակ, նրանց խուրձերը, իր խուրձի առջև խոնարհվելով, ողջունեցին: Հովսեփը, իր եղբայրներին հավատարիմ կարծելով, իր տեսած երազը պարզասրտորեն և միամտությամբ պատմում է: Որոնք, այն լսելուն պես «մի՞թե մեր վրա թագավոր պիտի լինես» ասելով, սկսում են նրան առավել ևս ատել և զայրանալ նրա վրա:

Հովսեփը նորից է երազ տեսնում. այն է, թե արեգակը, լուսինը և տասնմեկ աստղեր խոնարհությամբ ողջունում են նրան, այս երազն էլ է պատմում: Հակոբը, հասկանալով, որ

---

262 Որդիներն իրենց հայր Իսրայելի մոտ վատաբանում էին Հովսեփին (*Ծնող.* 37:2):

263 Նրա հետ հանգիստ խոսել չէին կարողանում (*Ծնող.* 37:4):

այս երազն Աստծու կողմից է, թեև մտքի մեջ պահում է, սակայն որպեսզի մյուս եղբայրները չնախանձեն, հանդիմանական տոնով Հովսեփին ասում է. «Մի՞թե ես, մայրդ և եղբայրներդ պիտի խոնարհվենք քո առջև»: Արդարև, այս վերջին երազի պատճառով նրա եղբայրների նախանձն ու ատելությունը իրենց բարձրագույն կետին են հասնում:

Քանի որ նախանձը հպարտության ծնունդն է, և նախանձոտ մարդը չի կամենում, որ իրենից առաջադեմ մարդիկ գտնվեն, որի պատճառով էլ ում վրա որևէ առավելություն կամ գերազանցություն է տեսնում, դժկամում է և չի հավանում, որ միգուցե իր փառքի նվազումը լինի: Ինչպես եղբայրները նախանձեցին, քանի որ Հովսեփն իր հոր աչքում ավելի պատվավոր էր, քան իրենք: Ճշմարիտ է, որ բոլոր նախանձողներն էլ անիրավ են, բայց Հովսեփի եղբայրները առավել ևս, քանի որ նրա պատիվը իրենց էլ էր պատիվ:

Հետո եղբայրները ոչխարներն արածեցնելու համար հեռու տեղ են գնում: Հակոբը Հովսեփին ուղարկում է, որ եղբայրների մասին տեղեկություն բերի: Հեզահոգի Հովսեփը, դեռևս տասնյոթ տարեկան, շատ տեղեր ման գալով՝ իմանում է նրանց գտնվելու տեղը: Նրանց մոտենալիս եղբայրները հեռվից ճանաչում են և իրենց սրտում բույն դրած նախանձի թելադրանքին հետևելով՝ առիթը բաց չեն թողնում, և մեկը մյուսին ասում է. «Ահա գալիս է երազատեսը, եկեք նրան սպանելով մի հորի մեջ գցենք և ասենք, որ մի չար գազան նրան պատառոտեց, և տեսնենք, թե նրա տեսած երազն ի՛նչ հետևանք պիտի ունենա»[264]:

---

264 Յուրաքանչյուրն իր եղբորը դիմելով՝ ասում էր. «Ահա երազատեսը գալիս է: Եկեք սպանենք նրան, նետենք այստեղի հորերից մեկը և ասենք, թե վայրի գազան է կերել նրան: Այն ժամանակ տեսնենք, թե ի՛նչ կլինեն նրա երազները» (*Ծնող.* 37:19-20):

Նկատի՛ր, թե ի՞նչ շուտ համաձայնեցին Հովսեփի սպանության շուրջ, մի՛ զարմացիր, քանի որ նախանձոտ մարդու վիճակն այդպիսին է, քանի որ Աստծու երկյուղը, հոր պատիվը և եղբայրական սերը նրանց սրտերից վերացել էին, և իրենցից բացի այլ մարդ չկար, որ ակնածեին և պատկառեին: Նախանձի և թշնամության զգացումն այն աստիճանի հասավ, որ մի հորի մեջ գցել էին ցանկանում, որպեսզի գերեզմանը բոլորովին անհայտ մնա, անունն ու հիշատակը աշխարհի վրայից կորչեն:

Այսպիսի մի անգթության գործ թերևս մարդու համար անվայել համարելով՝ մի գիշատիչ գազանի վրա են ցանկանում գցել: Հիրավի, բացի նախանձից, այնպիսի չար ուրիշ ի՞նչ գազան կա, որ իր եղբորը սպանի: Բայց դու նայի՛ր Աստծու դատաստանին. ցանկանում են սպանել Հովսեփին, որ նրա երազը չկատարվի, սրանով հանդերձ Աստված դարձյալ ցանկացավ նրանց ձեռքով գործադրել, Ռուբենն առաջարկում է, որ սպանելու փոխարեն մի հորի մեջ գցեն՝ խորհելով, որ հետո հորից կհանի և հորը կհանձնի նրան:

Ռուբենի առաջարկը[265], թե իրենց եղբոր արյունը թափելու փոխարեն մի հորի մեջ նետեն, համաձայնությամբ ընդունվում է, և որոշում են Հովսեփին մի չորացած ջրհորի մեջ նետել, որտեղ կարող էր սովից մեռնել: Այո՛, Ռուբենի դիտավորությունը նրան վերստին հանելն էր, բայց մյուսների միտքը իսկ և իսկ նրան սպանելն էր: Թեև նրանք Հովսեփի սպանության մտքով և ցանկությամբ էին այրում և մրկում, բայց նա եղբայրների մոտ հասնելու համար ուրախանում է, որ խաղաղության լուրը հորը տանելով՝ իբրև ծնողասեր զավակ նրան ևս ուրախացնի, որը շատ բնական է:

---

265 Երբ Ռուբենը լսեց դա, նրանց ձեռքից փրկեց նրան. նա ասաց. «Չսպանենք նրան» (*Ծնող.* 37:21):

Սովորության համաձայն խոնարհությամբ ողջունելով (քանի որ նրանց մեջ ամենափոքրը և առաքինին էր), նրանց որպիսությունը հարցնելու ժամանակ հանկարծ թշնամաբար նրա վրա հարձակվելով, հազի ծաղկակար զգեստը հանելով՝ հորի մեջ են նետում նրան[266]: Արդյոք Հովսեփն իր եղբայրներին մի այսպիսի կատաղի վիճակի մեջ տեսնելու ժամանակ մտքով ի՞նչ էր անցնում, ո՞վ կմտածեր այսպիսի ամբարիշտ ոճիր կրել իր եղբայրներից, մանավանդ տասը եղբայրներ միասին ինչպե՞ս չխնայեցին այդ անմեղ պատանյակին:

Արդյոք այս անխիղճ և եղբայրասպան մարդիկ Կայենի պատիժը չհիշեցի՞ն: Մի՛ զարմացիր, ինչպես կրակի ծուխը մարմնի աչքն է կուրացնում, նախանձի կիրքն էլ հոգու աչքն է խավարեցնում: Որի համար էլ նրանք իրենց չարության մեջ այնքան են առաջ գնում, որ իրենց կատարած անասելի ոճիրն ու անզգամությունը չհասկանալով՝ Հովսեփին հորի մեջ նետելուց հետո թշնամուց վրեժ լուծածի նման բերկրանքով իսկույն նստում են հաց ուտելու[267], ասես բնավ ոչինչ էլ չի եղել:

Հարց ԻԸ. **Հովսեփը հորի մեջ եղած ժամանակ արդյոք լացե՞ց և աղաչե՞ց իր եղբայրներին:**

Պատասխան: Այո՛, լացեց ու աղաչեց, ինչպես հետո իրենց բերանով խոստովանեցին նրա եղբայրները[268]:

Մի՛ լացիր, ո՛վ Հովսեփ, քո եղբայրները քեզ հորը գցեցին, սակայն քեզ ստեղծող Աստված շուտով քեզ կհանի այնտեղից. մի՛ կարծիր, թե դու՝ մատղաշ պատանյակդ, միայնակ իջար

---

266 Նրա վրայից հանեցին ծաղկազարդ պատմուճանը և նրան նետեցին հորի մեջ (*Ծնող.* 37:23-24):

267 Եվ նստեցին հաց ուտելու (*Ծնող.* 37:25):

268 Անտեսեցինք նրա հոգու մղձավանջը, երբ նա մեզ աղաչում էր, իսկ մենք նրան չլսեցինք (*Ծնող.* 42:21):

փոսի մեջ, այլ երկինքն ու երկիրը արարող Էակն էլ է քեզ հետ մեկտեղ[269]: Քանի որ Հովսեփի սերը Աստծու վրա էր կենտրոնացած՝ Աստված նրան միայնակ չի թողնում: Հորի մեջ Հովսեփը արդյոք ի՞նչ է մտածում, ինքը իր վրա ողբո՞ւմ է, թե՞ հոր մասին է մտածում կամ եղբայրների վրա է ցավում, որոնք մեծ մեղք գործեցին:

Քանի որ իրենց զրկողներին կարեկցելով՝ չար ճանապարհներից դառնալու համար աղոթելը սրբերի սովորությունն է, ինչպես որ սուրբ Ստեփանոսը և Հակոբոս Տեառնեղբայրն էին աղոթում իրենց սպանողների համար, որ Աստված ների նրանց հանցանքները:

Դու նայի՛ր Աստծու գաղտնի դատաստանին. մինչ Հովսեփը հորի մեջ էր, եղբայրները, մեծ խնջույք սարքած, իրենց զվարճությանն էին հետամուտ, սակայն Ռուբենը մի կողմ է քաշվում, որ հետո գալով դուրս հանի և ազատի: Եվ որովհետև Հովսեփի նկատմամբ սահմանված վճիռը գործադրվելով՝ Քրիստոսի օրինակը պիտի լիներ, քանի որ հրաշքով նույն պահին վաճառականների մի քարավան էր գնում Եգիպտոս: Հուդայի մտքում մի նոր գաղափար է հղանում, և առաջարկում է եղբայրներին՝ ասելով. «Մեր եղբորը հորի մեջ սպանելու փոխարեն, ավելի լավ է Եգիպտոս գնացող այս վաճառականներին վաճառենք»: Եղբայրները համաձայնվում են, իսկույն հանում են հորից և քսան դահեկանով վաճառում որպես գերու[270]:

Հետո Ռուբենը գալիս է և Հովսեփին հորում չի գտնում. օձիքը պատռելով՝ լաց է լինում, քանի որ չգիտեր, որ հորից հանել և վաճառել են, ուստի երբ եղբայրներից խնդիրը կամ իրողությունը իմացավ, ինքն էլ լռեց:

---

269 Աստված նրա հետ իջավ փոսը (*Իմաստ.* 10:14):

270 Հովսեփին քսան դահեկանով վաճառեցին իսմայելացիներին (*Ծնող.* 37:28):

Կարևոր է իմանալ, որ թեև Հովսեփին որպես գերու վաճառեցին, ի՛նչ զարմանք, որ նա չհայտնեց, որ գերի չէ, որովհետև եթե վաճառականները իմանային, չպիտի գնեին: Ուրեմն Հովսեփը հանձն է առնում գերի լինել, որպեսզի իր եղբայրների ձեռքով չսպանվի:

Այստեղ պիտի լավ խորհրդածես. մի՛ կարծիր, թե աշխարհի վրա ամեն չարիք ու նեղություն մարդկանց մեղքի համար է, այլ շատ անգամ դրանք Աստծու կողմից են տնօրինվում՝ Իր իմաստուն և խորհրդավոր դատաստանի համեմատ աշխարհի կառավարության համար՝ երբեմն ընդհանրապես, երբեմն էլ մասնավորապես: Այսպիսի պատահարների պատճառը միայն Աստծուն է հայտնի. մարդը պարտավոր է առանց զանգատվելու համբերությամբ տանել:

Ինչպես Հովսեփը, ոչ մի հանցանք չունենալով, որպես գերի վաճառվեց, և գնող վաճառականներն էլ պարզապես իրենց նյութական շահի համար գործեցին, սակայն Աստված մի բարձրագույն նպատակի, այն է՝ Եգիպտոսի իշխան կարգելու համար է կարգադրում և ուղարկում նրան, ինչպես Հովսեփն էլ վերջում խոստովանում է[271] Աստծու սույն հեռատես և խորհրդավոր տնօրինությունը:

Հարց ԻԹ. **Հովսեփի եղբայրները իրենց հորն ինչպե՞ս տեղեկացրին նրա վիճակի մասին:**

Պատասխան: Հովսեփի վիճակի մասին չեն հայտնում, այլ «մի գազան նրան կերավ» ասելով՝ խաբում են իրենց հորը: Օրինակի համար, եթե անարդար գործ գործողները իրենց հանցանքի համար քավություն չփնտրեն և ավելին՝ իրենց

[271] Ոչ թե դուք եք ինձ ուղարկել այստեղ, այլ Աստված: Նա ինձ դարձրեց փարավոնի գործերի վերակացու, նրա ողջ տան տերը և համայն Եգիպտացիների երկրի իշխանը (*Ծնն.* 45:8):

եղբոր դեմ գործած անիրավության և անգիտության վրա ստախոսության հանցանքն էլ են բարդում: Քանզի իբր թե Հովսեփը մեռավ ու թաղվեց ջրհորի մեջ և հետո հարություն առնելու նման հորից դուրս գալով՝ Եգիպտոս գնաց: Այսպես Հովսեփի ողջ եղած ժամանակ «մի չար գազան նրան կերավ» ասելով՝ իրենց հորը խաբելը մեծ հանցանք էր: Ճշմարիտ է, որ Ռուբենը նախ ցանկացավ ազատել Հովսեփին, հորը նետել, և Հուդան՝ վաճառել առաջարկեցին, բայց այս անգամ բոլորն էլ միաբանվում են ստի շուրջ, որպեսզի չհայտնվի իրենց հանցանքը: Թեպետ եթե Հովսեփին սպանեին, իրենց հանցանքը առավել կծանրանար, բայց մահացած լինելով՝ կասվեր «թշնամու չարագործության է հանդիպել»: Ուստի նեղ վիճակում հայտնվելով՝ մի ուլ են մորթում և Հովսեփի ծաղկանկար պատմուճանը թաթախելով արյան մեջ՝ իբր թե իրենք բնավ տեղեկություն չունեն և դաշտում գտնելով՝ իրենց հորը՝ Հակոբին են ուղարկում, որ նայի, թե արդյո՞ք իր որդու պատմուճանն է[272]: Նրանք այս վարմունքով ցանկանում էին ասել, թե՝ «Տե՛ս, քո պատրաստած զգեստը Հովսեփին ինչ վիճակի մեջ գցեց», քանի որ կարող էին, այն ոչնչացնելով, բոլորովին լռություն պահպանել:

Նկատի՛ր, թե նախանձը ի՞նչ աստիճանի չար է, որովհետև պատմուճանը ուղարկելու ժամանակ չեն ասում, թե «Նայի՛ր, մեր եղբայր Հովսեփի՞նն է», այլ «Նայի՛ր, քո որդո՞ւնն է»: Քանի որ նրանք այնքան էին թշնամացած Հովսեփի հետ, որ իբրև եղբայր չընդունելով՝ անունն էլ բնավ չեն ցանկանում տալ: Բացի այդ, այսպիսի հարցով իրենց հորն էլ էին հանդիմանություն ուղղում, թե Հովսեփին շատ սիրելով՝ նա էր միայն քո որդին,

---

272 Ապա ծաղկազարդ պատմուճանն ուղարկեցին իրենց հորն ու ասացին. «Գտել ենք սա, տե՛ս, քո՞ որդու պատմուճանն է սա, թե՞ ոչ» (*Ծնող.* 37:32):

հիմա ուրեմն տե՛ս քո սիրելի որդու վիճակը: Մանավանդ շատ անգութ և անհավատարիմ եղան իրենց հոր նկատմամբ, քանի որ Հովսեփի պատմուճանը այդպես ուղարկելը Հակոբի կյանքը մեծապես վտանգել էր նշանակում: Քանի որ Հովսեփին սաստիկ սիրելով և նրա արնաշաղախ զգեստը տեսնելով՝ տխրությունից մինչև անգամ կարող էր մահանալ:

Այո՛, թեև Հակոբը ցավից չմեռավ, բայց մահվան դուռը հասավ: Ո՞վ պիտի մխիթարեր Հակոբին, արդյոք որքա՛ն դառը կսկիծով խոր խոցվեց նրա սիրտը[273], նրա հոգին այդ մեծ հարվածից ի՛նչ աստիճանի անբուժելի վիրավորվեց: Դավիթը, պատերազմի դաշտում իր Աբիսողոմ որդու մահը լսելով, այն աստիճանի լաց ու կոծ արեց, որ մինչև իսկ նրա փոխարեն մեռնելու ցանկություն հայտնեց[274]: Իսկ Հովսեփը, որ այնքան առաքինի և բարեբարո մի պատանի էր և միշտ էլ կատարելապես հնազանդ իր հորը, արդյոք որքա՛ն մեծ վիշտ պատճառեց Հակոբին և արտասուք քամեց նրա աչքերից:

Որովհետև նա բարձրաձայն ողբալով ու լացով զգեստներն է պատռում, քուրձ է հագնում և երկար ժամանակ մահվան սուգն է պահում[275]: Թեև նրա որդիները ցանկանում էին մխիթարել նրան, սակայն անհնար է լինում, ընդհակառակը՝ ցանկանում էր մեռնել, որպեսզի Հովսեփին գտնի [276]: Հիրավի, որդիները, տեսնելով Հակոբի այս սրտահույզ վիճակը, նրա լաց ու կոծը, նրանց սիրտը ևս մորմոքում և արյունոտում է, քանի

---

273 Նա ճանաչեց այն ու ասաց. «Այս պատմուճանը իմ որդունն է, վայրի գազան է կերել նրան» (*Ծնող.* 37:33):

274 Որդի՛ս, Աբեսաղո՛մ, Աբեսաղո՛մ, որդյա՛կ իմ, երանի՛ ես մեռնեի քո փոխարեն (*Բ Թագ.* 18:33):

275 Նա պատառոտեց իր հագուստները, քուրձ կապեց իր մեջքին և երկար ժամանակ սուգ էր պահում իր որդու համար (*Ծնող.* 37:34):

276 Ես այս սգով էլ կիջնեմ գերեզման՝ իմ որդու մոտ (*Ծնող.* 37:35):

որ հանցանքը երբեք չի թողնում, որ մարդու միտքը հանդարտվի, ինչպես որ հետո իրենք էլ խոստովանեցին[277]: Թեև Հակոբը մեռնել է ցանկանում, որ գտնի Հովսեփին, սակայն Աստված նրա մահից առաջ նրա մոտ է ուղարկում Հովսեփին, ինչպես որ սրանից հետո կտեսնենք ըստ կարգի:

Խրա՛տ վերցրու աշխարհի այս դյուրափոփոխ և անհաստատ վիճակից: Հակոբը որքան, Հովսեփին շատ սիրելով, ուրախանում է նրա համար, այդքան է՛լ ավելի նրա պատճառով տրտմության և ցավերի է ենթարկվում: Քանի որ մարդը մարմնավոր ինչ բանի էլ որ շատ սեր տա, մի օր անպատճառ դրա երեսից վիշտ պետք է կրի: Երբ հայրը իր որդիներից մեկին կամ իշխանը իր հպատակներից մի քանիսին կողմնակալություն և հատուկ վերաբերմունք է ցույց տալիս, կարող է մյուսների նախանձը և հակառակությունը արթնացնել, և տեսակ-տեսակ աղետալի խռովությունների և երկպառակությունների պատճառ դառնալ[278]:

Այստեղ Սուրբ գիրքը Հակոբի չորրորդ որդու մասին է խոսում, որը ամուսնանալով երեք որդի է ունենում՝ Էր, Օնան և Սիլոմ: Բայց քանի որ Էրը և Օնանը չար և ամբարիշտ էին, Աստված նրանց մեռցնում է: Հետո նորից երկու որդի է ծնում՝ Փարեզ և Զարա, ինչպես իր տեղում արդեն հայտնի է:

Հարց Լ. **Հովսեփին գնած վաճառականը նրան ո՞ւր տարավ:**

Պատասխան: Եգիպտոս, որտեղ թագավորի դահճապետը, որի անունը Պետափրես էր, գնեց նրան: Հովսեփը ամեն ինչով

---

277 Մենք մեղավոր ենք մեր եղբոր նկատմամբ (*Ծնող.* 42:21):

278 Երբ նրա եղբայրները տեսան, որ իրենց հայրը նրան սիրում է իր բոլոր որդիներից ավելի, ատեցին նրան (*Ծնող.* 37:4):

խոհեմ, հավատարիմ և հաջողակ էր, և նրա գործերն էլ հաջողությամբ էին պսակվում[279], նրա պատճառով Աստված Պետափրեսի տունն էլ օրհնեց[280], որից նա շատ գոհ մնալով՝ տան կառավարումը հանձնում է Հովսեփին: Այո՛, Հովսեփը անունով զերի է, սակայն իր տիրոջ աչքում խիստ պատվավոր:

Դու տե՛ս Հովսեփի առաքինությունը. ինչպես նրա եղբայրները միայն նրա մարմինը ցանկացան սպանել, նմանապես Պետափրեսի կինը մեղանչելու բաղձանքով հետամուտ է լինում սպանելու նրա հոգին: Քանի որ իր ծառայության բերումով Հովսեփը ելումուտ ուներ կանանոց, թշվառական կինը երկար ժամանակ ձանձրացնում է նրան՝ իր չար և հրապուրիչ առաջարկությամբ: Սակայն Հովսեփը Աստծուց վախենում է և իր տիրոջը ևս հավատարիմ լինելով՝ նախընտրում է մեռնել, քան կնոջ չար առաջարկին ամենափոքր իսկ հակում և հոժարություն ցույց տալ:

Ընդհակառակը՝ նա համարձակվում է խրատել վավաշոտ կնոջը, թե՝ «Իմ տերը ամեն ինչով ինձ է վստահում և ես ինչպե՞ս կարող եմ այդպիսի չար և մեծ գործ անելով՝ մեղանչել Աստծու առջև»[281]: Թեև Հովսեփը երկար ժամանակ ենթակա եղավ սույն փորձության կրակին, սակայն Աստծու ողորմությամբ չայրվեց. կան մեղքեր, որոնց կարելի է համբերատար հոգով և դիմադրությամբ հաղթել: Սակայն այնպիսի մեղքից խուսափելով[282], որը մարդու պատիվն է վնասում, հաղթվում է:

---

279 Տերը Հովսեփի հետ էր, նրա գործերը բարեհաջող էին (*Ծնող.* 39:2):

280 Աստված Հովսեփի համար օրհնեց եգիպտացու տունը (*Ծնող.* 39:5):

281 Ինչպե՞ս կարող եմ անել այդ չար և սոսկալի բանը և մեղանչել Աստծու առաջ (*Ծնող.* 39:9):

282 Փախե՛ք պոռնկությունից (*Ա Կորնթ.* 6:18):

Հետո, երբ Հովսեփը դարձյալ ծառայության մի առիթով կանանոց էր գնացել, հիշյալը, ձեռքը մեկնելով, բռնում է նրա զգեստից, որպեսզի իր չար միտքը գործի դնելով՝ մեղանչի: Հովսեփը, նրա այս անօրեն ընթացքը տեսնելով, իր վերարկուն իսկույն այնտեղ է թողնում և անմիջապես փախչում այնտեղից: Հիրավի, Հովսեփի համար ցավալի էր վերարկուն այնտեղ թողնել, սակայն այդ անամոթը այն աստիճան լրբացավ, որ նրա մոտ մնալը և նրան դիպած զգեստը վերստին հագնելը վտանգավոր համարելով՝ այրվող տնից փախչողի նման ամենից առաջ հոգին ազատելու միջոցի մասին է մտածում:

Այս պարագայում Հովսեփը մեծ քաջություն ցուցաբերեց, քանի որ մարդու համար իր անձը հաղթելուց զատ մեծ քաջություն չկա: Մանավանդ Աստված նրան մեղքից փրկեց: Քանի որ ցանկության կրակին մատնվելու և չայրվելու համար Աստծու հատուկ շնորհի և օգնության կարիքն ունի[283]: Արդարև, Հովսեփը հոգևոր մահ պատճառող մեղքից ազատվեց: Բայց նայի՛ր, որ Աստծու երկյուղը սրտից հանող և ամոթի քողը երեսից պատռող անզգամ կինը, իր իսկ հանցանքը ստությամբ Հովսեփի վրա դնելով, ինչպե՛ս ցանկացավ նրան արատավորել, կարծես արևի վրա ցեխ շպրտելու ճիգ թափեց:

Սակայն մի՛ զարմացիր, քանի որ նույն ընթացքի մեջ գտնվողների վիճակն այս է: Նա, որ մի անգամ սատանայի ձեռքին գործիք է դառնում, երբ իր կրքերին հագուրդ տալով՝ չի կարողանում սիրածին հոգով սպանել, ցանկանում է մարմնով սպանել, քանի որ մարմնավոր սիրո վախճանը թշնամություն և ատելություն է, ինչպես հիշյալ անզգամ կինը մեղքի սուրը դահճի սրով փոխարինեց: Կինը գանգատվում

---

283 Իմաստությունը չլքեց վաճառված արդարին, այլ մեղքերից փրկեց նրան (*Իմաստ.* 10:13):

է Պետափրեսին՝ ասելով, թե իբր Հովսեփը չար դիտավորությամբ մտել է կանանոցը և վերարկուն այնտեղ թողել. նա էլ առանց քննության և միայն կնոջ խոսքի վրա հիմնվելով՝ բանտարկում է Հովսեփին:

Այո՛, Հովսեփը մահապարտների շարքի մեջ շղթայակապ նետվեց[284], սակայն նրա հոգին ազատ է և ոչ մի կապանքի ներքո ճնշված չէ. նա միայն մարմնով է կապված, քանի որ անմեղ մարդու հոգևոր քաղցր ազատությունը կա և մնում է՝ նյութական շղթաների ներքո ընկճված վիճակում անգամ: Շատ ժամանակ չանցած՝ բանտապետը, Հովսեփի ոտքից շղթան հանելով, բանտի կառավարումը նրան է հանձնում[285]:

Նկատի՛ր, ինչպես Պետափրեսի տան մեջ Հովսեփը մեծ պատիվ ուներ և իշխում էր ուրիշների վրա, նույնպես բանտում է իշխանություն տրվում նրան: Քանի որ նա, ով վախենում է Աստծուց և փախչում է մեղքից, ամեն տեղ պատիվ է վայելում:

Խրա՛տ առ, եթե ուզում ես ցանկության հրի բորբոքումից ազատվել, ապա Աստծու երկյուղը երբեք մի՛ հանիր սրտիցդ, կրքերիդ մի՛ հետևիր, բարերարիդ անհավատարմություն մի՛ արա, անզգամ կնոջ հետ երբեք բարեկամություն և հարաբերություն մի՛ հաստատիր, նրա գտնված վայրից խո՛ւյս տուր, ինքդ քեզ վստահելով՝ մեղքերի պատճառ դարձող տեղեր բնավ մի՛ հաճախիր, քանի որ որքան էլ մարդը առաքինի լինի, դարձյալ պարտավոր է մեղքի շարժառիթներից փախչելով հեռանալ՝ համաձայն այն առածի, թե՝ եթե վերացնում ես պատճառը, վերանում են նաև պատճառի հետևանքները: Հիրավի,

---

284 Նրա ոտքերը ցավեցրին շղթաների մեջ և նրա մարմինը երկաթով պնդացրին (*Սաղմ.* 104:18):

285 Կապանքների մեջ չթողեց նրան, մինչև իսկ նրա ձեռքը թագավորական գավազան դրեց (*Իմաստ.* 10:14):

կրակն ընկած քարը այրվելով չի փոշիանում, սակայն վնասվում և անպիտան է դառնում:

Հարց ԼԱ. **Հովսեփն ինչքա՞ն ժամանակ մնաց բանտում:**

Պատասխան: Երեք տարի: Սակայն մի՛ կարծիր, թե Աստված նրա վրայից վերցրել էր Իր խոստումը կամ պակասեցրել հսկողությունը, այլ մեծ փառքով այնտեղից հանելու համար է այնքան ժամանակ թողնում բանտում: Քանի որ թագավորների սիրտը Աստծու ձեռքին է[286], և ահա Եգիպտոսի փարավոն թագավորը, իր երկու պաշտոնյաների՝ տակառապետի և մատակարարի վրա բարկանալով, Հովսեփի գտնված բանտն է նետում նրանց, որոնք երկուսն էլ, նույն գիշերվա մեջ երազ տեսնելով, պատմում են Հովսեփին: Տակառապետը երազում մի որթատունկ է տեսնում, որի վրա երեք դալար ճյուղեր կային, և սրանց վրա՝ երեք ողկույզ. իր ձեռքին փարավոնի գինու բաժակն էր, որի մեջ երեք ողկույզները քամելով՝ տալիս է փարավոնին: Հովսեփը պատասխանում է, որ երեք ճյուղերն ու երեք ողկույզները երեք օր են նշանակում, ուստի երեք օրից պաշտոնիդ պիտի հասնես: Մատակարարն էլ տեսնում է, թե գլխի վրա երեք ամաններ կային, և դրանց մեջ թագավորի կերած կարկանդակներից էին, և դրանցից թռչուններն ուտում էին: Հովսեփը պատասխանում է, որ երեք օրից թագավորը գլուխդ կտրելու է, փայտից կախի և թռչունները մարմինդ ուտելու են:

Արդարև, Հովսեփի մեկնության համաձայն կատարվեց: Քանի որ երրորդ օրը, որ փարավոնի ծննդյան օրն էր, նա, իր ծառաներին և մեծամեծներին խնջույք տալու առթիվ հիշելով

---

286 Թագավորի սիրտը Աստծու ձեռքին է (*Առակ.* 21:1):

վերոհիշյալ պաշտոնյաներին, տակառապետին վերահաստատում է իր պաշտոնի մեջ և մատակարարին կախել է տալիս: Հովսեփը տակառապետի երազը մեկնելու ժամանակ նրան խնդրում է, որ փարավոն թագավորին աղաչելով՝ իրեն բանտից հանի:

Օրինա՛կ վերցրու Հովսեփի առաքինությունից. ճշմարիտ է, որ իր ազատության համար է աղաչում, սակայն գլխին եկած դժբախտությունը եղածի պես չպատմելով՝ հնարավորինս լավ լույսի տակ է բացատրում և ներկայացնում իր խնդիրը, որպեսզի ոչ ոքի մեղադրած կամ բամբասած չլինի: Քանի որ փոխանակ հայտնելու, որ իր եղբայրները վաճառեցին իրեն, և իր տիրոջ կինը զրպարտեց իրեն, պարզապես ասում է, որ ինձ գողացան իմ երկրից և առանց հանցանք գործելու՝ բանտ գցեցին այստեղ[287]:

Իրոք, իր եղբայրները իրենց հոր գրկից գողացան իրեն և որպես գողոն վաճառեցին հանդիպած մարդուն, նույնպես ճշմարիտ է, որ Եգիպտոսում առանց որևէ հանցանք գործելու բանտարկվեց: Այո՛, Հովսեփը ինչ ասաց և պատմեց՝ ճշմարիտ էր, սակայն ճշմարտությունն ամբողջությամբ չհայտնեց: Քանի որ մարդը պարտավոր է միայն խոսել այն, ինչ ճշմարիտ է, և ոչ թե ամեն ճշմարիտ բան ամեն տեղ խոսել:

Դու այստեղ մտապահի՛ր Աստծու գաղտնի դատաստանը. Նա, որ Հովսեփի հետ էր, անշուշտ կարող էր կարճ ժամանակում ազատել նրան, բայց քանի որ Հովսեփը ցանկացավ տակառապետին աղաչելու միջոցով շուտափույթ ազատվել, այս պատճառով երեք տարի բանտում մնաց: Քանի որ

---

287 Առևանգելով ինձ բերեցին Եբրայեցիների երկրից, և ես այստեղ ոչինչ չարեցի, բայց ինձ նետեցին այս բանտախուցը (*Ծնող.* 40:15):

ազատվելով՝ տակառապետը երկու տարուց ավելի մոռանում է Հովսեփի մասին[288]: Արդ, երբ հասնում է ազատության ժամը, Աստծու կարգադրությամբ փարավոնը մի զարմանալի երազ է տեսնում. կարծես ինքը, Նեղոս գետի ափին գտնվելով, տեսնում է, թե յոթ պարարտ և գեղեցիկ երինջներ նույն գետից դուրս եկան և այնտեղ արածում էին, հետո յոթ այլ երինջներ, որոնք սաստիկ նիհար և տգեղ էին, նույն գետից դուրս գալով՝ կերան հիշյալ պարարտ երինջներին: Ապա զարթնելով՝ նորից քնում է և այս անգամ տեսնում, որ մի ցորենի արմատից յոթ գեղեցիկ և լի հասկեր են բուսնում և ապա յոթ ուրիշ հասկեր, որոնք տկար և խորշակահար էին, նույն արմատից ելնելով՝ կերան առաջին գեղեցիկ և լի հասկերը:

Սույն երազները տեսնելուց հետո երբ փարավոնն արթնանում է, իր մոտ է հրավիրում Եգիպտոսի բոլոր գիտնականներին, որպեսզի մեկնեն տեսած երազները, սակայն նրացից ոչ ոք չի կարողանում մեկնել: Այն ժամանակ տակառապետը իսկույն մտաբերում է Հովսեփին և փարավոնին պատմում, թե ինչպես նա կարողացավ մեկնել իր երազը, և որ նրա տված մեկնությունն էլ ճշտությամբ կատարվել է: Այդ պատճառով էլ փարավոնը մարդ է ուղարկում, որ Հովսեփին բանտից հանեն, երկարած մազերը կտրելով և հանդերձանքն էլ փոխելով՝ մեծ պատվով փարավոնի մոտ են տանում նրան: Այն ժամանակ Հովսեփը երեսուն տարեկան էր:

Թագավորը նրա մոտ կրկնում է իր տեսած երազների պատմությունը, որն էլ Աստծու շնորհով պատասխանում է, որ Աստված քեզ հայտնել է՝ ի՛նչ պիտի անի: Քանի որ յոթ պարարտ երինջները առատության յոթ տարիներն են, իսկ

---

288 Մինչև որ նրա խոսքը կատարվեց, և Տիրոջ խոսքը փորձեց նրան (*Սաղմ.* 104:19):

յոթ նիհար երինջները յոթ սոված տարիներն են նշանակում: Նույնպես յոթական ընտիր և չորացած հասկերը առատության և սովի տարիներն են հայտնում. երկու երազներն էլ միևնույն միտքն ունեն: Հովսեփը, հայտնելով, որ այս բանը շուտով պետք է իրականանա և կատարվի, գործը կառավարելու եղանակն էլ է հայտնում՝ ասելով, որ մի իմաստուն մարդ պիտի գտնի և նրան հանձնարարի, որ առատության յոթ տարիներին բերքը հավաքի, որպեսզի սովի տարիներին կարողանա երկիրը կառավարել:

Դու Հովսեփի համարձակությա՛նը նայիր. փարավոնը միայն իր երազի մեկնություն է ուզում, իսկ նա երազը մեկնելուց հետո դրա վերաբերյալ ձեռնարկելիք միջոցներն էլ է ցույց տալիս: Արդարև, մի պանդուխտ մարդու համար մեծ համարձակություն էր փառաշուք թագավորին կառավարելու եղանակ ուսուցանել: Սակայն մի՛ կարծիր, թե Հովսեփն ինքն իրեն ստացավ այս համարձակությունը, կամ փարավոնը ինքն իրենով ընդունեց նրա առաջարկությունը, այլ Հովսեփին խոսել տվող Աստված փարավոնին ևս ընդունելի դարձրեց մատնացույց արված միջոցը:

Քանզի փարավոնը Հովսեփի խոսքերը շատ է հավանում, ասում է. «Քեզնից առավել իմաստուն մարդ ո՞վ կարող է լինել, քանի որ այդ բանը Աստված քեզ հայտնեց, քեզ իշխան կկարգեմ Եգիպտոսի վրա», իր մատանին նրա մատն է դնում և նախարարներին հատուկ փոխարքայի վերարկուն հագցնելով՝ ժամանակի սովորության համաձայն նրա պարանոցից ոսկե մանյակ է կախում և երկրորդ կառքի վրա կանգնեցնելով՝ նրա առջևից մունետիկին կանչելու հրաման է տալիս, որ ամեն մարդ, նրան տեսնելով, առանց բացառության հնազանդվի նրա հրամաններին: «Միայն գահով քեզնից վեր կլինեմ ես»,- ասում է:

Փարավոնը Հովսեփի անունը փոխելով՝ Փսոմթոմփանե է կոչում, որը եգիպտական բարբառով «աշխարհի փրկիչ» է նշանակում: Միևնույն ժամանակ Արեգ քաղաքի Պետափրես քուրմի Ասանեթ անունով աղջկան էլ կնության է տալիս նրան:

Խրա՛տ վերցրու. թեպետ Հովսեփը, որպես գերի վաճառվելով, միառժամանակ Պետափրեսի տանը և ապա բանտում մնաց, սակայն Աստծու երկյուղը սրտից չհեռացնելով՝ հույսը միշտ Նրա ողորմության վրա դնելու համար չափազանց մեծ փառքի հասավ: Որովհետև նրան այն աստիճանի ընդարձակ արտոնություններ են շնորհվում, որ ամբողջ թագավորության գործերը նրա խնամքին և հսկողությանն են հանձնվում:

Հիրավի, Աստծու ողորմությամբ յոթ տարի երկրի արդյունքը այնքան առատ է լինում, որ Հովսեփը ծովի ավազի նման անհամար ցորեն է հավաքում: Հետո յոթ տարի էլ սով է լինում. հավաքած ցորենով, իր խոհեմ և իմաստուն կարգադրություններով ողջ ժողովրդին սովամահ լինելուց ազատում է: Դեռ սովի տարիները չհասած՝ Հովսեփը երկու արու զավակ է ունենում, որոնցից մեծի անունը՝ Մանասե, իսկ փոքրի անունը Եփրեմ է դնում:

Հարց ԼԲ. **Իշխան դառնալուց հետո Հովսեփն իրեն զրպարտող կնոջից վրեժ լուծե՞ց:**

Պատասխան: Ո՛չ, երբե՛ք, քանի որ վրեժխնդրությունը թշնամություն է ենթադրում: Արդ, ինչպես որ Հովսեփը Աստծու շնորհիվ հաղթել էր իր կիրքը, նույնպես բարկությունը զսպելով՝ չի ցանկանում ոչ ոքի թշնամություն անել: Մանավանդ վրեժ լուծելու առիթ ունենալով՝ փոխարենը հոժարակամ բարերարություն է անում:

Քանի որ նա ոչ միայն մարմնական կառավարման վերաբերյալ խնդիրներում, այլ նաև առաքինության ճանապարհին

կատարյալ էր, Եգիպտոսի նախարարները և մեծամեծները նույնպես հոժարակամ հետևում էին նրա խրատներին[289]: Բացի այդ, նրան բամբասողները, նրա առաքինությունից պատկառելով, իրենց անիրավությունն ու ստախոսությունը ստիպված խոստովանում էին[290], քանի որ ուշ կամ շուտ Աստված ճշմարտությունը հայտնում է: Չարիք անելու փոխարեն բարիք անելով՝ Հովսեփն իր առաքինությունը հայտնեց, որով իր թշնամիներն էլ զղջացին:

Խրա՛տ առ. չարի փոխարեն բարիք անելը թշնամուն առանց ջանքի հաղթել է նշանակում, քանզի բուռն զորությամբ հաղթվողը ապստամբություն է խորհում: Եթե ցանկանում ես մեղքերիդ քավություն գտնել, հակառակորդիդ հանցանքը ների՛ր[291], որովհետև Աստված է, որ, բոլորի գործերը քննելով, արդարությամբ դատում է: Երբ դու քո ցանկության համեմատ ոսոխից վրեժխնդիր ես լինում, Աստծուն վերապահված դատաստանը դու ես տեսնում և գործադրում, որովհետև չես համբերում, որ Աստված Իր բարձր և արդար կամքի համաձայն դատի, այս պատճառով պարտական ես մնում, քանի որ հանցավորին պատժելը Աստծուն է հատուկ[292]:

Ինչպես որ աշխարհում ոստիկաններ և դատավորներ կան, որոնք Աստծու կողմից որպես նրա փոխանորդ են

---

289 Որպեսզի իր ուզածի պես խրատի նրանց իշխաններին և նրանց ծերերին իմաստուն դարձնի (*Սաղմ.* 104:21):

290 Ցույց տվեց, որ ստախոսներ էին իրեն բամբասողները (*Իմաստ.* 10:14):

291 Ների՛ր մեզ մեր հանցանքները, ինչպես որ մենք ենք ներում մեր պարտապաններին (նրանց, որ հանցանք են գործում մեր դեմ) (*Մատթ.* 6:12):

292 Կհատուցեմ վրեժխնդրության օրը՝ այն ժամանակ, երբ նրանք կշեղեն իրենց ուղին (*Բ Օր.*. 32:35):

կարգված պատժի արժանի եղողներին պատժելու և զրկվածին զրկողի ձեռքից ազատելու համար: Միայն թե այս պայմանը նկատի ունենան, որ իրենց անձնական հակառակորդներին չպետք է պատժեն, այլ ուրիշներին վնասողներին՝ արդարության և իրավունքի համաձայն, և իրենց անձի համար երբեք դատախազ կանգնած չլինեն[293]:

Քանի որ ինչպես իր հակառակորդից վրեժ լուծող մասնավոր անհատը Աստծու առջև հանցավոր է լինում, նույնպես եթե իշխանները և դատավորները, իրավունքի և արդարության սկզբունքներին համաձայն հանցագործին դատելով, չպատժեն, անմեղ և հանցանք չունեցող մարդկանց դեմ անիրավություն են գործում[294], այս պատճառով իրենք էլ պատժվում են Աստծու կողմից:

Հարց ԼԳ. Հովսեփն իր հորը արդյո՞ք հայտնեց իր եղբայրների անգութ վարմունքի և Եգիպտոսում իր վիճակի մասին:

Պատասխան: Չհայտնեց: Հիրավի զարմանալի է, որ Հովսեփը Եգիպտոսում, իսկ Հակոբը Քեբրոնում գտնվելով, որոնց միջև հեռավորությունը վեց իջևանի չափ է (Սուեզի կողմից), Հովսեփն արդյոք ի՞նչ էր մտածում, որ քսաներեք տարի իր մասին չէր տեղեկացնում հորը: Մի՞թե Հովսեփն այդքան կարծրասիրտ մարդ էր, քա՛վ լիցի, ընդհակառակը, միշտ տոչորվում էր հոր սիրուց և հառաչանքով էր անցկացնում ժամանակը. նա այլևայլ մտածումների պատճառով էր այդքան ժամանակ հապաղում հայտնել իր վիճակի մասին:

---

293 Ինքներդ վրեժխնդիր մի՛ եղեք, սիրելինե՛ր, այլ թո՛ւյլ տվեք, որ Աստծու բարկությունը կատարի այն (*Հռոմ.* 12:19):

294 Ասացվածքի համաձայն՝ անիրավներին ներելը անիրավություն է արդարի հանդեպ:

Հովսեփը գիտեր, որ եղբայրներն իր համար «մեռավ» պիտի ասեին իրենց հորը: Եթե ինքն իր գլխին եկածը տեղեկացներ, հայրը նրանց վրա անպատճառ կբարկանար կամ կնեղանար, իրենց միջև թերևս մի մեծ հակառակություն առաջանալուց բացի՝ ընտանեկան այդ անհամաձայնության հավանական հետևանքը հայրական տան ցրումը կլիներ: Քանի որ Հակոբը եթե լսեր, որ իր սիրելի որդին գերի է և Եգիպտոսում է, իր ամբողջ ունեցվածքը կզոհեր նրա փրկության համար, կամ ինքը կգնար նրա մոտ: Հնարավոր է, որ այդ ժամանակ Բենիամինն էլ վնասվեր մնացած եղբայրներից, քանի որ երկուսի մայրը նույնն էր, և նա էլ Հակոբի հատուկ գորովի առարկան էր:

Նմանապես, եթե իշխանության հասնելուց հետո իր փառավոր վիճակի մասին հայտներ, դարձյալ իսկույն կարող էին ծանր անպատեհություններ առաջանալ: Քանի որ եղբայրները երկյուղից կամ ցավերից կարող էին տարբեր կողմեր ցրվել և այդպես վնասվել: Մանավանդ եթե գերության մեջ ինքն իրեն ծածուկ պահելով՝ փոխարքա դառնալուց հետո հայտներ, ապա դա կարելի էր հպարտությանը վերագրել: Բացի այդ, տեսած երազին նայելով՝ օր օրի փառք ձեռք բերելու փոխարեն գերի և բանտարկյալ վիճակի մատնվածի պես սկսեց խորհել, թե հարկավ սրա մեջ մի գաղտնիք կա, ուստի ինքը, Աստծու կամքին հանձնվելով, համբերում է և իր վիճակից գոհ մնալով՝ Աստծուց հույսը չի կտրում և իշխան լինելուց հետո էլ առանց հպարտանալու խոնարհ սրտով շնորհակալ է լինում Աստծուն:

Մանավանդ Աբրահամին եղած աստվածային տեսիլքի համաձայն (ինչպես արդեն հիշատակել ենք)՝ նրա որդիները, չորս հարյուր տարի Եգիպտոսում պանդխտության մեջ չարչարանք կրելով հանդերձ, պիտի բազմանային, և այս պատճառով հարկավոր էր, որ Հակոբն իր ողջ ընտանիքով Եգիպտոս գնար, և այնտեղ բազմանալով՝ Աստծու սահմանած

կարգադրությունն ու վճիռը կետ առ կետ կատարվեր: Որի պատճառով Աստված Հովսեփին համբերել է տալիս, մինչև որ սովի ժամանակ Հակոբն իր ամբողջ տնով Եգիպտոս չփոխադրվի, ինքն իրեն չհայտնի:

Դարձյալ, որպեսզի համայն աշխարհը օրինակ վերցնի Հակոբի այդքան երկար ժամանակ Հովսեփի համար խոր սգով համակված թախծագին ողբերից և հառաչանքներից: Որովհետև նա, աստվածապաշտ և առաքինի լինելով հանդերձ, միշտ միօրինակ ուրախություն և անձնական երջանկության օրեր չունեցավ, ինչպես Աբրահամը և Իսահակը ևս, թեև առաքինի և բարեկրոն մարդիկ էին, բայց այս երկրի վրա շատ տառապանք կրեցին:

Հարց ԼԴ. **Ինչպե՞ս կատարվեց Հովսեփի երազը:**

Պատասխան: Վերը գրվածի համաձայն, երբ առատության տարիներն անցան, սովի տարիները հաջորդեցին. բոլոր կողմերից մարդիկ Եգիպտոս էին գնում՝ Հովսեփից ցորեն գնելու: Քանանի երկրում նույնպես սով էր, և Հովսեփի եղբայրներն իրենց հոր կարգադրությամբ ցորեն գնելու նպատակով Եգիպտոս են գնում: Նրանք՝ տասը եղբայրներ միասին, հենց ներկայանում են Հովսեփին, Հովսեփն իսկույն ճանաչում է նրանց, սակայն նրանք չեն ճանաչում Հովսեփին, և երբ բոլոր մարդկանց նման մինչև գետին խոնարհվելով՝ ողջույն են տալիս. Հովսեփի առաջին երազը կատարվեց: Քանի որ ինչպես երազի մեջ եղբայրների կապած խրձերը իր կապած խրձի առջև երկրպագեցին, նույնպես էլ նրանք, ցորեն գնելու առիթով Հովսեփի առջև գալով, մինչև գետին խոնարհվեցին և երկրպագեցին[295]: Այն

---

295 Հովսեփի եղբայրները գալով գլուխները խոնարհեցին մինչև գետին (*Ծնող.* 42:6):

ժամանակ Հովսեփը, տեսած երազը մտաբերելով, սրտանց գոհանում է Արարչից[296]:

Բայց քանի որ փոքր եղբայրը՝ Բենիամինը, նրանց հետ չէր եկել, մտածում է. «Արդյո՞ք նա էլ է որևէ վնասի հանդիպել», ու վախով կասկածում: Եվ իբր նրանց լեզուն չի հասկանում, թարգմանչի միջոցով է խոսում և դաժան կերպարանքով ասում. «Դուք լրտեսներ եք», և ձևացնում է, թե բարկանում է: Նրանք պատասխանում են, որ իրենք Քանանի երկրից են, տասներկու եղբայր և մի հոր որդիներ, որոնցից փոքրը հոր մոտ է գտնվում, և մյուս եղբայրն էլ չկա:

Հովսեփը արդեն այս պատասխանին էր սպասում, ուստի նրանց խոսքից փաստ վերցնելով՝ ասում է. «Եթե դուք լրտեսներ չեք, թող ձեր փոքր եղբայրը այստեղ գա, որպեսզի հաստատի, որ ձեր խոսքերը ճշմարիտ են, ապա թե ոչ՝ ձեզ լրտես եմ համարում», և այս ասելով՝ բանտարկել է տալիս:

Խրա՛տ վերցրու. քանի որ նրանք խոստովանեցին, որ տասներկու եղբայր են, որոնցից տասը ներկա են, մեկը հոր մոտ է, իսկ մյուսի համար հայտնում են, որ կորած է[297]: Հովսեփը ինչո՞ւ չի հարցնում, թե ձեր մեջ չեղող եղբայրն ի՞նչ եղավ, ի՞նչ պատճառով և ե՞րբ կորավ, ի՞նչ է նրա անունը: Հիրավի, հարցնելու ամենակարևոր կետը սա էր, սակայն նրանց հանցանքը երեսներին չտալու և իր անձի համար դատախազ չերևալու համար այդ կետը լռության մատնելով՝ գոհություն է մատուցում Աստծուն, որ այդ «կորած է» ասվածը ոչ միայն այնտեղ ներկա էր, այլև մանավանդ նրանք իր ձեռքն էին հանձնված:

---

296 Հովսեփը հիշեց իր տեսած երազները (*Ծնող.* 42:9):

297 Նրանք ասացին. «Մենք՝ քո ծառաները, տասներկու եղբայրներ էինք, Քանանացիների երկրում մի մարդու որդիներ: Այս պահին մեր կրտսեր եղբայրն իր հոր մոտ է, իսկ մյուսն այլևս չկա» (*Ծնող.* 42:13):

Սակայն մի՛ կարծիր, թե վրեժխնդիր լինելու համար բանտարկել տվեց, այլ իր հոր և Բենիամինի մասին տեղեկություն ստանալու մտադրությամբ, մանավանդ փորձելու և հասկանալու, թե իրեն հասցրած չարիքի և անիրավության համար արդյոք զղջացե՞լ են: Չնայած Հովսեփը երեք տարի բանտում մնաց, սակայն ինքը նրանց երեք օր բանտարկեց, նրանք իրեն ցանկացան սպանել, սակայն նա միայն վախեցնում է նրանց: Երրորդ օրը, իր մոտ կանչելով, հայտնում է. «Ձեզնից մեկը այստեղ բանտարկված պիտի մնա, իսկ մյուսներդ ցորենը կտանեք և ձեր փոքր եղբորն էլ ձեզ հետ կբերեք, որպեսզի ձեր լրտես չլինելը ստուգվի, և դուք մահվանից ազատվեք»:

Երբ նրանք այս խոսքը լսեցին, շվարեցին, թե ի՛նչ անեն, և այս փորձանքին այլ պատճառ չեն կարողանում գտնել, եթե ո՛չ Հովսեփի հանդեպ իրենց գործած անիրավությունը: Ուստի խորհում են, որ իրենց դեմ դատախազ կանգնողը մի արդար նախարար է, որ ոչ ոքի անիրավություն չի արել, մանավանդ եթե անիրավ լիներ, պաշար չէր տա: Արդ, մարդու միտքը. իր մեջ անսուտ վկա լինելով՝ նրանք խոստովանում են, որ Հովսեփի արյունն է, որ արդարացիորեն պահանջվում է իրենցից[298]:

Այստեղ պետք է խրատ վերցնել, որ երբ մարդը, իր հանցանքների համար զղջալով, չի քավում դրանք, սիրտն ի՞նչ աստիճանի կասկածանքների և խղճահարության է մատնվում, քանի որ ինչպես նրա մարմնի մեջ մի փուշ մտնի, խիստ անհանգիստ է լինում, նույնպես մեղքի փուշը մարդու միտքը միշտ անհանգստության է դատապարտում: Արդարև, Հովսեփի եղբայրները որպես լրտեսներ բանտարկվեցին, սակայն սրա մեջ հանցավոր չլինելով՝

---

298 Եղբայրները միմյանց ասացին. «Այո՛, մենք մեր եղբոր նկատմամբ մեղավոր ենք, որովհետև անտեսեցինք նրա հոգու մղձավանջը.... Դրա համար է մեր գլխին իջնում այս պատուհասը» (*Ծնն.* 42:21):

Աստծուն աղաչելու կամ իրենց լրտես չլինելը ապացուցելու փոխարեն խոստովանում են, որ հանցավոր են:

Լա՛վ նկատիր. «Ի՞նչ է ձեր հանցանքը» և «Ինչի՞ համար բանտարկվեցիք» հարցնող չկա նրանց, ուրեմն ի՛նչ զարմանալի բան է, որ այլ պատճառ չեն կարողանում գտնել, եթե ոչ այն, ինչ արել էին Հովսեփի հանդեպ: Նրա արյան մասին չէին խորհել, երբ ցանկանում էին նրան սպանել, բանտ մտնելուց ի վեր սկսում են լրջորեն մտածել այդ մասին: Մի՛ զարմացիր, պատիժը բացեց այն աչքերը, որ մեղքը կուրացրել էր, միայն ժամանակ անցնելով պատիժը չի քավվում, մանավանդ առանց մտքից հանելու մարդն իր արած չարության փոխարեն անպատճառ պետք է հատուցում կրի:

Ահա այս պատճառով նրանց միտքը, որպես դահիճ, մահվան երկյուղ է տալիս նրանց՝ Հովսեփին սպանել ցանկանալու համար: Նրան հորի մեջ գցելու համար բանտ են ընկնում, վաճառելու համար՝ որպես լրտեսներ ամբաստանվում: Բացի այդ, ուշադրության է արժանի, թե ինչպես նրանք, ովքեր չարության շուրջ միավորվում են, հետո զղջալով ոչ միայն տարաձայնություն և հակառակություն է առաջ գալիս իրենց միջև, այլ նաև սկսում են միմյանց հանցանքը մերկացնել:

Քանի որ Ռուբենը, որն ուզում էր ազատել Հովսեփին, բայց եղբայրներին հակառակ չլինելու համար առաջարկել էր ջրհորը նետել՝ հետո հանելու նպատակով, և նրանք էլ իրենից գաղտնի հանել, ծախել էին: Ռուբենը, այս պարագայում իրավունք ունենալով, սկսում է հանդիմանել եղբայրներին՝ ասելով. «Ես ձեզ չասացի՞ երեխային մի՛ դիպեք, դուք ինձ չլսեցիք, ահա նրա արյունն է, որ խնդրվում է»[299]:

---

[299] Պատասխան տվեց Ռուբենն ու ասաց նրանց. «Ես ձեզ չասացի՞, թե մեղք մի՛ գործեք պատանու դեմ, բայց դուք ինձ չլսեցիք» (*Ծնող.* 42:22):

Նրանք՝ տասը եղբայրներ, եբրայերեն այսպես վիճաբանելով, թեպետ իրենց արածի համար զղջում էին, բայց իրենց աչքերից արտասուք չէր հոսում և չէին լացում, մինչդեռ Հովսեփը, որը, իբր նրանց լեզվին անտեղյակ, թարգմանչի միջոցով էր խոսում, իր մասին նրանց խոսակցությունը լսելով՝ աչքերը արտասուքով են լցվում և մեկուսանալով սկսում է այնտեղ արտասվել[300]:

Հետո Շմավոնին եղբայրների աչքի առջև թշնամաբար կապկպել տալով՝ բանտարկում է (ենթադրվում է, որ Հովսեփին հորը գցելու ժամանակ Շմավոնն էր կապկպել նրան), իսկ իր մարդկանց հրաման է տալիս, որ ոչ միայն նրանց տոպրակները ցորենով լցնեն, այլև բերած գումարներն էլ տոպրակների մեջ դնեն և ճանապարհի համար էլ ուտելու պաշար տալով՝ ճամփա ելնեն ու անմիջապես գնան՝ իրենց փոքր եղբորը՝ Բենիամինին բերելու համար:

Հարց ԼԵ. **Հովսեփն ինչո՞ւ իրեն անմիջապես հայտնի չդարձրեց եղբայրներին, երբ տեսավ նրանց:**

Պատասխան: Որպեսզի եղբայրները չվախենան, մանավանդ հասկանալու համար, թե եղբայրները ի՞նչ պիտի անեն և Բենիամինին ինչպե՞ս են վերաբերվում:

Հիմա նայի՛ր նրանց վիճակին. վերը հիշվածի համեմատ Շմավոնը բանտում պատանդ մնաց, ինը եղբայրները թեպետ Եգիպտոսից ճանապարհ են ընկնում, սակայն առաջին իջևանում անասուններին կեր տալու համար տոպրակներից մեկը բացելով և դրամը այնտեղ տեսնելով՝ երկյուղի մեջ են ընկնում և զանազան կասկածներ ունենում, թե միգուցե նոր վտանգներ պատահեն իրենց:

---

300 Եվ նրանցից մեկուսանալով՝ Հովսեփը լաց եղավ (*Ծնող.* 42:23):

Այս բանին որևէ բացատրություն տալու անկարող լինելով՝ զարմանում են և ասում, թե Աստված այս ի՞նչ արեց մեզ[301]: Մանավանդ սկսում են մտածել, թե Շմավոնին ազատելու համար Բենիամինին ինչպե՞ս տանեն Եգիպտոս: Մեծ մտատանջությամբ հասնելով իրենց հոր մոտ՝ ամբողջ կատարվածը մեկ առ մեկ պատմում են Հակոբին, որը նույնպես շատ զարմանում է: Բացի այդ, տոպրակները դատարկելու ժամանակ յուրաքանչյուրի դրամը իր տոպրակից դուրս գալուն պես ապշում են, և սարսափելի երկյուղ է պատում նրանց[302]:

Հիմա դու նայի՛ր Հակոբի գլխին եկած դժբախտությանը. նա, որ երկար ժամանակ ի վեր ողբում էր Հովսեփին, Բենիամինին էլ Եգիպտոս տանելու խոսք բացվելուն պես գանգատվելով ասում է. «Ինձ անզավակ թողեցիք. Հովսեփը չկա, Շմավոնը չկա, Բենիամինին էլ եք ցանկանում առնել, այս բոլոր աղետները ինձ վրա եկան»[303]: Սակայն Հակոբն այս խոսքով ոչ թե, Աստծուց հույսը կտրելով, գանգատվում է իր վիճակից, այլ հանդիմանում է իր որդիներին, թե ինչո՛ւ իրենց փոքր եղբորից տեղեկություն տվեցին:

Իհարկե այս պարագայում նրանք մեղք չունեին, քանի որ Հովսեփը, նրանց տեսնելով, ասաց. «Դուք լրտեսներ եք», և այդ ժամանակ կարևոր էր, որ այդ հայտնեին: Բայց տե՛ս, որ Հակոբը ամենևին չի ուզում Բենիամինին իր մոտից բաց թողնել: Այն ժամանակ Ռուբենը, նեղ դրության մեջ մնալով, ասում է. «Բենիամինին ի՛նձ հանձնիր, եթե ես նրան ողջ և առողջ

---

301 Այս ի՞նչ արեց մեզ Աստված (*Ծնող.* 42:28):

302 Եվ երբ նրանք տեսան իրենց արծաթի քսակները, իրենք և իրենց հայրը խիստ վախեցան (*Ծնող.* 42:35):

303 Նրանց հայրը՝ Հակոբը, ասաց նրանց. «Ինձ անզավակ եք թողնում: Հովսեփը չկա, Շմավոնը չկա, հիմա էլ Բենիամինի՞ն եք վերցնելու: Այս բոլորը իմ գլխին են թափվում» (*Ծնող.* 42:36):

չվերադարձնեմ, իմ երկու որդիներին սպանի՛ր»: Սակայն Հակոբը չի համաձայնում, քանի որ նրա առաջարկը անօրեն էր և հետևաբար՝ անընդունելի:

Դժբախտաբար, բերված ցորենը սպառվում է, և նրանք ծանր մտատանջությամբ են համակվում, քանի որ օր օրի սովը սաստկանում էր, և եթե կրկին գնալով ցորեն չբերեին, անպատճառ սովամահ կլինեին: Սակայն առանց Բենիամինի Եգիպտոս չեն կարող գնալ, քանզի վախենում են, որ Հովսեփի մոտ ստախոս դուրս կգան, և նրա բարկությունը իրավացիորեն իրենց վրա բերելով՝ խստագույնս պատժի կենթարկվեն: Այսուհանդերձ Հակոբը ոչ մի կերպ չի համաձայնվում թույլ տալ, որ Բենիամինը Եգիպտոս գնա:

Ապա Հուդան խնդրում է հորը, որ իրեն հանձնի Բենիամինին, որին եթե կենդանի չվերադարձնի, իր ամբողջ կյանքի ընթացքում հանցավոր համարվի[304]: Հակոբն այս խոսքի վրա համաձայնում է, որ Բենիամինը եղբայրների հետ Եգիպտոս գնա: Նկատի՛ր, թե որքա՜ն ծանր է հանցավոր լինել, քանի որ այլ կերպ չկարողացան համոզել Հակոբին: Արդարև սա մեծ փորձություն էր Հակոբի համար, քանի որ 12 որդիներից ոչ ոք իր մոտ չի մնում. առաջ միայն Հովսեփի համար էր լալիս, սակայն այս անգամ կարծես բոլորն էլ կորած դարձան: Սակայն ինչպես մինչ այդ պահը շատ աղետների և դժբախտության հանդիպելով՝ իր հույսը երբեք Աստծուց չկտրեց, նույնպես դարձյալ առանց հուսահատվելու իր որդիներին Աստծու կամքին հանձնեց[305]:

---

304 Հուդան ասաց.... «Ես նրա համար պատասխանատու եմ. ինձնի՛ց կպահանջես նրան: Եթե նրան հետ չբերեմ ու քո առաջ չկանգնեցնեմ, թող մեղավոր լինեմ իմ ամբողջ կյանքում» (*Ծնող.* 43:8-9):

305 Իմ Աստվածը թող այնպես անի, որ շնորհ գտնեք այդ մարդու մոտ, և նա կարձակի ձեզ հետ ձեր մյուս եղբորն ու Բենիամինին (*Ծնող.* 43:13):

Մի՛ վախեցիր, ո՛վ Հակոբ, թեև մի փոքր ժամանակ առանց որդիների կմնաս, սակայն հետո Հովսեփին էլ կգտնես, քանի որ Բենիամինի՝ Եգիպտոս գնալուն պես Հովսեփը գտնվում է: Հակոբի պատվիրանի համաձայն տասը եղբայրները, իրենց հետ ընծաներ և կրկնակի արծաթ և Բենիամինին էլ վերցնելով, միասին գնում են Եգիպտոս: Հովսեփը նրանց տեսնելուն պես իր տան վերակացուին հրամայում է, որ տուն տանելով՝ կերակուր պատրաստել տա: Բայց նրանք, կասկածելով, որ նախորդ անգամվա ցորենի արծաթի համար պիտի իրենց տանեն, իսկույն շտապում են ասել, որ այն հետ են բերել: Հիշյալ վերակացուն հանգստացնում է նրանց՝ ասելով, որ վախենալու ոչինչ չունեն, և Շմավոնին էլ բանտից հանելով՝ ըստ սովորության բոլորի ոտքերը լվանում է:

Հովսեփի տուն գալուն պես իրենց բերած ընծաները մատուցում են և ողջունելու համար խոնարհվում նրա առջև, նա էլ, նրանց որպիսությունը հարցնելով, երբ լսում է, որ նրանց հայրը ողջ է, գովում և գովաբանում է նրան[306]: Նույնպես Բենիամինի մասին է հարցնում. «Ա՞յս է ձեր փոքր եղբայրը, որի համար ասել էիք, որ կբերեք ինձ մոտ»[307]:

Նրանք թեև այս խոսքերից ոչինչ չհասկացան, սակայն Հովսեփի սիրտը չդիմացավ. նա ուրիշ սենյակ է մտնում, որ լաց լինի: Ճաշի ժամանակ Հովսեփը, եգիպտացիների հետ սեղան նստելով, եղբայրների համար առանձին սեղան է պատվիրում, և նրանք զարմանում են իրենց տարիքի կարգով նստեցնելու վրա, թե ինչպես է կարողացել զանազանել իրենց աստիճանները, քանի որ նախ մեծին, ապա փոքրին է նստեցնում: Հիրավի, սրանից պիտի հասկանային, որ

---

306 Այդ մարդն օրհնյալ է Աստծուց (*Ծնն.* 43:28):

307 Աստված թող ողորմի քեզ, որդյա՛կ (*Ծնն.* 43:29):

Հովսեփը ճանաչում է իրենց, սակայն բնավ չեն հասկանում: Բացի այդ, քաղաքի սովորության համաձայն Հովսեփն իր սեղանից նրանց կերակուր ուղարկած ժամանակ Բենիամինին հնգապատիկ ավելի է տալիս[308]: Քանի որ երկուսն էլ միևնույն մորից էին, նրան ավելի է պատվում, և դարձյալ նրանք չեն ճանաչում Հովսեփին: Ճաշից հետո նա տան վերակացուին հրամայում է, որ նրանց բեռները ցորենով լցնելուց հետո արծաթը վերստին տոպրակների մեջ դնի: Նաև իր գործածած գինու բաժակը Բենիամինի բեռի մեջ է դնել տալիս, և հաջորդ օրը տասնմեկ եղբայրներն ուրախությամբ ճամփա են ելնում:

Հարց ԼԶ. **Հովսեփը ինչո՞ւ է իր գինու բաժակը դնել տալիս Բենիամինի պարկի մեջ:**

Պատասխան: Իր եղբայրներին փորձելու համար, քանի որ Բենիամինին մեծ պատիվ ցուցաբերելով՝ հնգապատիկ ավելի կերակուր տվեց և ցանկանում է նրանց միտքը հասկանալ, թե արդյո՞ք բաժակը նրա բեռան մեջ գտնվելու համար նախանձելով՝ նրան մենակ կթողնեն որպես հանցագործի: Նաև ցանկանում էր իմանալ, թե ի՞նչ պայմանով էին իրենց հորից ստացել նրան, և ինչպե՞ս են վերաբերվում իրենց հորը:

Այստեղ արժե հանգամանորեն նկատի առնել Հովսեփի եղբայրների դրությունը: Արդարև, նրանք Եգիպտոսից շատ մեծ ցնծությամբ դուրս եկան, քանի որ մի փառապանծ իշխան իրենց մեծ խնջույքով պատվեց, Շմավոնը բանտից ազատվեց, Բենիամինը իրենց հետ է, և այս ամենին վերադիր՝ բեռներն էլ լցված են ցորենով, միայն թե շատ չի անցնում, և այս

---

308 Բենիամինի բաժինը բոլորի հնգապատիկը դարձավ (*Ծնն.* 43:34):

ուրախությունը մեծ տրտմության է փոխվում: Մի՛ զարմացիր, աշխարհի վիճակը այսպիսին է. մի աչքով ուրախացնում է, մյուսով՝ լացացնում, մի ձեռքով տալիս է, իսկ մյուսով՝ հետ վերցնում:

Քանի որ Հովսեփն իր գործակատարին շտապ և բարկության կերպարանքով ուղարկում է, որ նրանց բեռները խուզարկելով՝ բաժակը գտնի, և ում բեռի մեջ որ գտնի, ձերբակալելով իր մոտ տանի: Նա էլ մի խումբ մարդկանցով, գող բռնելու գնացողի նման, նրանց հասնելով, ասում է. «Այս ի՞նչ վատություն արեցիք, բարերարության փոխարեն գողություն արեցիք»: Խիստ հանդիմանում է, որին բոլորը պատասխանում են, թե՝ «Քա՛վ լիցի, որ մենք գողություն անենք, եթե առաջին անգամ մեր բեռների մեջ գտնված արծաթը հետ բերեցինք, ինչպե՞ս է հնարավոր, որ մենք գողանանք քո բաժակը: Ում մոտ որ գտնվի, թող այդ մարդը մահանա, և մենք բոլորս մեր տիրոջ ծառաները կդառնանք»:

Այս պայմանով վերակացուն խուզարկում է նրանց բեռները՝ սկսելով մեծից մինչև փոքրը: Բաժակը Բենիամինի բեռան մեջ գտնվելուն պես սկսում են բարձրաձայն լալ և կոծել, քանի որ չգիտեին, թե ինչի՛ պիտի հանդիպեին: Հիրավի, նրանք գիտեն, որ Բենիամինը գողություն չի անի, սակայն բաժակը նրա պարկից դուրս եկավ: Բոլորը ուզում են Հովսեփին ծառա դառնալ, միայն թե Բենիամինին ազատեն, բայց անկարելի է լինում. բաժակը ում պարկի մեջ գտնվել է, Հովսեփը նրան է պահանջում:

Այն ժամանակ բոլորը միասին հետ են դառնում, և Հովսեփի մոտ եղած ժամանակ Հուդան գետնատարած սկսում է աղաչել և պաղատել: Եվ իրենց արդարացնելու համար որևէ խոսք գտնելու անկարող լինելով՝ Աստծու գաղտնի դատաստանին է վերագրում այս գործը: Քանի որ հաստատ գիտի,

որ այս պարագայում բնավ հանցանք չունեն, այսուհանդերձ գողությունն իրենց վրա հաստատվեց, և չեն համարձակվում ասել, թե թշնամու նենգությանն ենք հանդիպել, քանի որ Հովսեփից թշնամություն չեն սպասում: Ուստի երբ ասում են. «Սա մեր մեղքն է, որի հետևանքը պետք է կրենք, բոլորս էլ քեզ ծառա կլինենք», Հովսեփը պատասխանում է. «Քա՛վ լիցի, որ ես այդպիսի բան անեմ, ում մոտ որ գտնվեց բաժակը, թող նա ծառայի ինձ, և դուք խաղաղությամբ վերադարձեք ձեր հոր մոտ»:

Սույն որոշումը սայրասուր նետի նման խոցելով, Հուդայի սիրտը վիրավորում է, և չիմանալով ինչ անելը՝ շվարած է մնում: Քանի որ առանց Բենիամինի ինչպե՞ս կարող էր վերադառնալ հոր մոտ, քանի որ ամբողջ կյանքում պարտական մնալու պայմանով երաշխավոր էր եղել, որ նրան անվնաս պիտի վերադարձնի հորը:

Թեպետ մինչ այդ ժամը Հուդան իր աղաչանքներում համարձակվել էր միայն ներողություն խնդրել՝ Հովսեփին չբարկացնելու մտքով, բայց այս անգամ նորից սրտառուչ կերպով, մեկ առ մեկ պատմում է, թե ինչ պայմանով են Բենիամինին հոր մոտից վերցրել, հիշում է հոր խոսքերը և մանավանդ, թե ինչպես Հովսեփի համար ժամանակին իրենց հորը ասել էին «մեռավ»[309], «մի գազան հոշոտեց»[310], և եթե Բենիամինը չվերադառնա, հայրը, տրտմությունից նեղվելով, կմեռնի: Այս ամենը պատմում է, որպեսզի ծերունի հորը գթալով՝ ազատ թողնի Բենիամինին, և ինքը նրա փոխարեն գերի մնա Հովսեփին[311]:

---

309 Նրա միակ որդին մեռել է, և սա է մնացել իր մոր միակ որդին (*Ծնն.* 44:20):

310 Դուք ասացիք, թե նա գազանի բաժին դարձավ (*Ծնն.* 44:28):

311 Արդ, այս մանկան փոխարեն ես՝ քո ծառան, լինեմ իմ տիրոջ ստրուկը, իսկ պատանին թող գնա իմ եղբայրների հետ....

Արդ, Հովսեփն իր եղբայրներին այս վիճակում տեսնելուն պես հասկանում է, որ առանց Բենիամինին նախանձելու նրա փրկության համար սրտանց ջանում են և թե իրենց հոր հանդեպ սեր ունեն: Մանավանդ տեսնում է Բենիամինին, որն այն ժամանակ հազիվ քսանչորս տարեկան մի ամոթխած երիտասարդ էր, ներկաների առջև հանցավորի նման կանգնած՝ ամոթխածությունից ոչ ոքի դեմքին չէր նայում, և Հովսեփի վեհապանծ տեսքից զարհուրելով՝ դողում էր: Նաև նկատում է, որ մյուս եղբայրների սրտերն էլ են ցավից փշրվել, և աչքերը արտասվալից են, և իրենց մտքերն առ Աստված բարձրացնելով՝ լռելյայն Նրա օգնությունն էին խնդրում, քանի որ պանդուխտ լինելով՝ երբեք որևէ պաշտպան չունեին, և իրենց դատախազը փարավոն թագավորի փառապանծ և հզոր նախարարն է:

Խրա՛տ առ, ճիշտ այդ տեսարանի նման էր, երբ Հովսեփի ծաղկյալ պատմուճանը վրայից հանելով՝ հորը նետեցին և հորից հանելով՝ գերու նման վաճառեցին, քանի որ միայնակ Հովսեփն աղաչում և պաղատում էր նրանց, բայց նրանք նրա սրտահույզ աղաչանքներին ականջալուր չեղան: Ինչպես որ Բենիամինը հանցանք չունի, սակայն հանցավորի նման դողում է, նույնպես և Հովսեփը հանցանք չուներ, սակայն հանցավորի նման կապկպվեց:

Հիմա, երբ Հովսեփի եղբայրների վիճակը հասկացար, ո՛վ ընթերցող, մի անգամ ևս մտի՛ր Հովսեփի դրության մեջ. այո՛, նա թագավորի պես մեծափառ նախարար էր, սակայն այլևս անկարող լինելով դիմանալ եղբայրներին այդ ողորմելի կացության մեջ տեսնելուն՝ սիրտը ճմլվում է, աղիքները գալարվում

Թող ես չտեսնեմ այն դժբախտությունը, որ հորս է վիճակվելու (*Ծնող.* 44:33-34):

են, և աչքերը արցունքակալած, շուրջը եղող օտար մարդկանց դուրս հանելուց հետո, երբ իր եղբայրների հետ առանձին է մնում, շտապում է ասել. «Ես եմ՝ ձեր Հովսեփ եղբայրը, որին դուք վաճառեցիք»[312]:

Այստեղ դու նայի՛ր Հովսեփի եղբայրների տարօրինակ դրությանը. մինչ այդ պահը բաժակը Բենիամինի մոտ գտնվելու համար թեպետ խոստովանեցին, թե «այս ամենը մեր մեղքերի պատճառով է»՝ նրան ազատելու ցանկությամբ, սակայն այդ ամենի մեջ հանցավոր չլինելով՝ իրենց խիղճն ու միտքը հանգիստ էին, միայն Հովսեփի ինքն իրեն հայտնելուն պես, յուրաքանչյուրի միտքը մեկ առ մեկ, դահիճի նման մահվան երկյուղով պաշարեց իրեն, որից էլ դեմքները իսկույն գունատվեցին, և սկսեցին սաստիկ դողալ: Եվ կարծելով, թե հիմա իրենց մահվան վճիռը պետք է արտասանվի, այն աստիճան խռովվեցին և սոսկումի զգացումով համակվեցին, որ այդ րոպեին, լեզուները կարկամելուց բռնված, ոչ մի բառ չկարողացան արտասանել[313]:

Որովհետև մարդու միտքը, իր անձի մեջ անսուտ և անկաշառ վկա լինելով, գործած չարությունը հիշելու ժամանակ անպատճառ չարաչար տառապում է խղճի խայթից: Սակայն Հովսեփն արտասվելով համբուրում է նրանց և մխիթարելու ու հանգստացնելու համար ասում. «Մի՛ վախեցեք և մի՛ տրտմեք, ինձ վաճառելու համար մի՛ նեղվեք, քանի որ ինձ դուք չուղարկեցիք Եգիպտոս, այլ ձեզ կերակրելու համար Աստված ուղարկեց, քանի որ դեռևս հինգ տարի պիտի շարունակվի սովը»: Այդ ժամանակ եղբայրները, հազիվ ուշքի գալով, կարողացան

---

312 Հովսեփն ասաց. «Ես ձեր եղբայր Հովսեփն եմ, որին վաճառեցիք, որ Եգիպտոս տանեն» (*Ծնող.* 45:4):

313 Նրա եղբայրները չէին կարողանում նրան պատասխանել, որովհետև տակնուվրա եղան նրա ներկայությունից (*Ծնող.* 45:3):

խոսել նրա հետ[314]: Հովսեփի եղբայրների գալստյան մասին լսելով՝ փարավոն թագավորը ուրախանում է և պատվիրում հորն էլ բերել Եգիպտոս: Ուստի Հովսեփը մեծ պատվով և շատ պաշարով եղբայրներին ուղարկում է, որ գնան իրենց հորը՝ Հակոբին, բերեն՝ միևնույն ժամանակ պատվիրելով, որ ճանապարհին, միմյանց վրա զայրանալով, չկռվեն[315]:

Խրա՛տ առ. ինչպես Հովսեփը, Բենիամինին շատ սիրելու պատճառով իր բաժակը նրա պարկի մեջ դնելով, թեպետև նա միառժամանակ երկյուղ և նեղություն կրեց, բայց վերջում Հովսեփի ինքնությունը հայտնի դառնալուց հետո բոլորից առավել նա ուրախացավ, նույնպես և Աստված, թեպետ իր սիրելի ծառաներին միառժամանակ վշտերի և երկյուղի մեջ է պահում, սակայն հետո նրանց առաքինությունը հայտնի դարձնելով՝ երկրի վրա փառավորելուց բացի, արքայությունում նույնպես Ինքն Իրեն հայտնելուն պես նրանք բոլորից ավելի պիտի բերկրեն և ցնծան անվախճան ուրախությամբ:

Հարց ԼԷ. **Հովսեփն իր եղբայրներին ինչո՞ւ պատվիրեց, որ ճանապարհին միմյանց հետ չկռվեն:**

Պատասխան: Որպեսզի իրեն հասցրած չարիքը միմյանց վրա գցելով՝ նրանց մեջ դժգոհություն չծագի, քանի որ կրակը նախ ինքն է վառվում, հետո՝ ուրիշներին այրում, նույնպես ուրիշներին վնասողը. նախ ինքն է վնասվում, միայն թե իր վնասվելը նախապես չի զգում, հետո է զգում:

Այսպես Հովսեփի եղբայրները, իրենց չարության հետևանքը նախապես չգիտակցելով, երբ Հովսեփն իրեն հայտնի

---

314 Դրանից հետո միայն եղբայրները խոսեցին նրա հետ (*Ծնող.* 45:15):

315 Նա ասաց նրանց. «Ճանապարհին չվիճեք» (*Ծնող.* 45:24):

դարձրեց նրանց, այն ժամանակ հասկանալով՝ խելքի եկան, սակայն ինչպես որ եղած, կատարված գործը հետ չի դառնա, նույնպես էլ չարության վերաբերյալ մեր զղջումը անհնար է, որ մտքից բոլորովին ելնի:

Արդարև, Հովսեփը ներեց նրանց հանցանքը, բայց նրանք իրենց կողմից զղջման զգացումը անպատճառ միշտ կրում են իրենց մեջ: Ահա այս պատճառով պատվիրում է, որ ճանապարհին միմյանց մեղադրելով, չպառակտվեն, այլ Աստծուց շնորհակալ և գոհ լինեն, քանի որ Աստված նրանց չարության գործը բարության փոխարկեց: Արդարև, այս գործում Աստծու գաղտնի մտադրությունը հայտնապես երևում է, քանի որ տասնմեկ մարդ այսպիսի մեծ անիրավության գործում քսանեռեք տարի իրենց մեջ գաղտնի պահելով չհայտնելը մի զարմանալի բան է: Քանի որ այդքան ժամանակ այդպիսի չար գործի գաղտնի մնալն անպատճառ նրանց միաբանության կարիքն ուներ, սակայն չարագործների մեջ միաբանություն չի լինում, քանի որ միաբանությունը լավ է, իսկ չարագործությունը՝ վատ, և բարության ու չարության միջև համաձայնությունն անհնար է: Ուրեմն հայտնի է, որ այդ գործում Աստծու կամքը կա: Սակայն մի՛ կարծիր, որ նրանք Աստծու կամքը կատարելու համար վաճառեցին Հովսեփին, այլ թշնամության համար, այդ պատճառով շատ մեծ մեղքի տեր դարձան:

Հարց ԼԸ. **Երբ Հակոբն իմացավ, որ Հովսեփը ամբողջ Եգիպտոսում նախարար է, ի՞նչ մտածեց:**

Պատասխան: Հայտնի է, որ չափազանց ուրախությունն ու չափազանց տխրությունը, որ հանկարծակի պատահում են, կարող են մարդուն մեծ վնաս հասցնել: Սակայն Հակոբը, ինչպես առաջ՝ Հովսեփի արնաշաղախ զգեստը տեսած ժամանակ, անչափ վիշտ ու թախիծ կրելով հանդերձ, մարմնով կամ

անձնապես չի վնասվում, նմանապես լսելով, որ Հովսեփը ողջ է և նախարար, թեև անչափ ուրախություն զգաց, սակայն իսկույն հավատալ չցանկանալով՝ իր մտքում զարմացավ[316]:

Հակոբը շուտ հավատաց Հովսեփի մահվան լուրին, սակայն նախարար լինելուն իսկույն չցանկացավ հավատալ, քանի որ վնասի հանդիպելը հեշտ է, բայց բախտավորության հասնել, մանավանդ նախարար լինել դժվարին լինելու պատճառով կասկածելի է: Բայց երբ տեսնում է այն կառքերը, որ Հովսեփը ուղարկել էր իրենց փոխադրության համար, այն ժամանակ իսկապես հավատում է, որ նա ողջ է և Եգիպտոսի իշխան է, ուստի պատրաստություն տեսնելով՝ իր ամբողջ ընտանիքով ճանապարհ է ելնում՝ գնալու և Հովսեփին տեսնելու համար:

Սակայն որովհետև Աստված խոստացել էր Քանանի երկիրն իրեն տալ, վախենում է, թե միգուցե Եգիպտոս գնալով՝ խոստացված երկրից զրկվի: Մանավանդ վախենում է, որ չլինի՞ թե իր որդիները, եգիպտացիների ընթացքին հետևելով, բարկացնեն Աստծուն: Այդ պատճառով «Երդման ջրհոր» կոչված վայրը հասնելով և զոհ մատուցելով՝ իրեն Աստծու ողորմությանն է հանձնում: Աստված էլ, նրա երազում հայտնվելով, քաջալերում է, որ Եգիպտոս գնալուց չվախենա, քանի որ Ինքը, նրա հետ Եգիպտոս գնալով և նրան այնտեղ «մեծ ազգ» դարձնելով, այնուհետև պետք է այնտեղից հաներ[317]:

Այն ժամանակ Հակոբը, հանգստացած և ուրախ, Եգիպտոսին մոտենալով, Հուդա որդուն ուղարկում է Հովսեփի մոտ՝

---

316 Պատմեցին նրան և ասացին. «Քո որդի Հովսեփը կենդանի է, նա ողջ Եգիպտացիների երկրի իշխանն է» (*Ծնն.* 45:26):

317 Գիշերը Աստված տեսիլքի մեջ Իսրայելին ասաց... «Մի՛ վախեցիր Եգիպտոս իջնելուց, որովհետև քեզ այնտեղ մեծ ազգ եմ դարձնելու» (*Ծնն.* 46:2-3):

իր գալուստը հայտնելու: Վերջինս էլ մեծ պատվով դիմավորում է իր հորը, որը նրան տեսնելուն պես արտասվելով փաթաթվում է նրա պարանոցին, և երկուսն էլ սրտանց և ամբողջ հոգով ուրախանում են: Հետո Հովսեփն իր հորը և եղբայրներից հինգին փարավոն թագավորին է ներկայացնում. Հակոբն օրհնում է նրան, որին դա դուր է գալիս, և նա Գեսեմ կոչված վայրը Հակոբին է տալիս՝ բնակության համար:

Հակոբի՝ Եգիպտոս մտնելու ժամանակ, իր որդիների կանանցից, ծառաներից և աղախիններից բացի, միայն իր որդիներն ու թոռները վաթսունվեց հոգի էին, և Եգիպտոսում ծնված ինը թոռներն էլ նրանց թվին ավելացնելով՝ ընդամենը յոթանասունհինգ հոգի են հաշվվում, որոնցից առաջացավ Իսրայելի ազգը, ինչպես որ իր տեղում արդեն հայտնվում է:

Հարց ԼԹ. **Եգիպտոս գնալու ժամանակ Հակոբը քանի՞ տարեկան էր:**

Պատասխան: Հարյուր երեսուն տարեկան: Եվս տասնյոթ տարի Եգիպտոսում ապրելով, հարյուր քառասունյոթ տարեկան լինելով, ըստ իրենց սովորության՝ Հովսեփին երդվել է տալիս, որ իր մեռնելուց հետո իրեն Եգիպտոսում չթաղի, այլ Քեբրոնում՝ Աբրահամի և Իսահակի գերեզմանների մոտ թաղի: Երբ Հովսեփը նրա խնդրանքը ընդունում է և կատարումն ապահովում, Հակոբը նրա ձեռքում եղած նախարարական գավազանին գլուխը խոնարհելով ողջունում է[318]:

Ահա այս կերպ իրականացավ Հովսեփի տեսած երկրորդ երազը, թե տասնմեկ աստղեր, արևի և լուսնի հետ խոնարհվում են իրեն (ինչպես արդեն հիշատակել ենք): Այո՛, Հովսեփի

---

318 Իսրայելը խոնարհվեց Իսրայելի գավազանի գլխի վրա (*Ծնն.* 47:31):

մայրը մահացած էր, սակայն հոր խոնարհ ողջույնի մեջ մորն էլ նկատի ունի: Ապա Հովսեփն իր երկու որդիներին՝ Մանասեին և Եփրեմին, հոր մոտ է բերում, որ նա օրհնի, որոնց Հակոբը իր գիրկն է առնում, համբուրում է և գոհանում Աստծուց, քանի որ ոչ միայն Հովսեփի երեսը տեսնելուն կարոտ չթողեց իրեն, այլև արժանացրեց տեսնելու նրա որդիներին:

Մանասեին, քանի որ անդրանիկն էր, Հովսեփը՝ հոր աջ, իսկ Եփրեմին ձախ կողմն է նստեցնում, որպեսզի աջ ձեռքը՝ անդրանիկի, իսկ ձախ ձեռքը կրտսերի գլխի վրա դնելով՝ օրհնի, սակայն Հակոբն Աստծու ներշնչանքով աջ ձեռքը դրեց Եփրեմի գլխին, իսկ ձախը՝ Մանասեի: Եվ քանի որ ծերության պատճառով աչքերը չէին կարող զանազանել, ուստի Հովսեփը փափագում է, որ աջ ձեռքը Մանասեի գլխին դնի, սակայն հայրը, առանց ձեռքերը փոխելու, երկու ձեռքը երկու թոռների գլուխներին խաչաձև դրած, օրհնում է նրանց, և ի պատիվ Հովսեփի՝ նրանց իրենն է համարում և հայտնում, որ Եփրեմը Մանասեից մեծ և զորավոր պիտի լինի թե՛ բազմությամբ և թե՛ համբավով, և այսպիսով երկուսն էլ Հակոբին ժառանգ են դառնում, ինչպես որ հետագայում Իսրայելի տասներկու ցեղերից մեկը՝ Եփրեմից, իսկ մյուսը Մանասեից են առաջանում: Հոգևոր առումով Մանասեն հրեաների և Եփրեմը քրիստոնյաների օրինակը եղան:

Քանի որ Հակոբը Հովսեփին մյուս որդիներից առավել էր սիրում, հարյուր ոչխարների գնով գնված Սիկիմ անվամբ վայրը (որի մասին արդեն հիշատակել ենք) որպես ժառանգություն տալիս է Հովսեփին այն պայմանով, որ եղբայրները դրա մեջ երբեք բաժին և ժառանգություն չունենան, այլ միայն Հովսեփին պատկանի: Այս տեղի վերաբերյալ թեպետ Հակոբը հայտնում է, որ պատերազմով է վերցրել այն, բայց պատերազմով տեղ գրավելու մասին հիշատակ չլինելու պատճառով

համարվում է, որ նախապես գնել է և ապա որոշակի ժամանակ այնտեղ բնակվելուց հետո այլ տեղ գնացել: Ամորհացիներն առանց իրավունքի գրավել են այն, և նա նրանց ձեռքից պատերազմով է հետ վերցրել[319]:

Ապա Հակոբը, բոլոր որդիներին իր շուրջը ժողովելով, յուրաքանչյուրին ըստ արժանիքի օրհնություն է տալիս և Աստծու ազդեցությամբ որոշակի ժամանակ հետո նրանց ցեղերի հետ պատահելիքը մեկ առ մեկ հայտնում է: Մանավանդ կանխավ գուշակում է, որ իր չորրորդ որդու՝ Հուդայի ցեղից պետք է ծնվի Մեսիան, որ, Սուրբ Խաչի վրա արյուն թափելով, կմեռնի և հարություն կառնի[320], նաև խորհրդավոր կերպով և այլաբանորեն գուշակում է, որ իր հինգերորդ որդի Դանի ցեղից պետք է առաջ գա Նեռը[321]:

Օրհնությունը վերջացնելուց հետո Հակոբը մեռնում է: Ըստ իրենց սովորության՝ նրա մարմինը զմռսեցին, և սգո օրերն անցնելուց հետո Հովսեփը և իր եղբայրները, ինչպես նաև ի պատիվ Հովսեփի՝ փարավոնի կողմից որոշված պատվավոր մարդիկ նրան տանում և Քեբրոնում թաղելով՝ վերադառնում են Եգիպտոս: Հետո Հովսեփի եղբայրները, դեռևս իրենց սրտում երկյուղ կրելով, Հովսեփին ասում են. «Հայրդ մեզ երդվեցրեց, որ քեզ ասենք, որ ներես մեր հանցանքները»: Երբ նրանք ներողություն էին խնդրում՝ իրենց

---

319 Ես քեզ իբրև սեփականություն տալիս եմ իմ սրով ու աղեղով ամորհացիներից գրված Սիկիմը (*Ծնող.* 48:22):

320 Հուդայից իշխան չի պակասելու, ոչ էլ առաջնորդ՝ նրա կողերից, մինչև որ գա նա, ում պատկանում են հանդերձյալները: Նրա՛ն են սպասում ժողովուրդները (*Ծնող.* 49:10):

321 Դանը թող լինի օձ դարանակալ ճանապարհի վրա՝ խայթելու համար ձիու գարշապարն ու ցած գցելու հեծյալին նրա (*Ծնող.* 49:17):

հանցանքի հիշողությունը կրկին նորոգելով, Հովսեփն արտասվեց[322]:

Իրենց խոսքով նրան ոխակալ և քինախնդիր կարծեցին, մանավանդ սուտ խոսեցին, քանի որ Հակոբը նրանց մի այդպիսի երդում անել չէր տվել: Սակայն Հովսեփը, նրանց ստախոսությունը իրենց երեսին չխփելով, պատասխանում է. «Դուք թեև իմ վերաբերյալ չար բան խորհեցիք, սակայն Աստված իմ մասին բարին խորհեց, մի՛ վախեցեք, ես ձեզ և ձեր տները կկերակրեմ», և այսպես մխիթարում է նրանց[323]: Հիրավի, այս պարագայում Հովսեփի եղբայրների առաջարկը նրան սաստիկ վշտացրեց, բայց նրա պատասխանը միանգամայն զուտ մարգարիտ է:

Այստեղ լա՛վ խորհիր, թե հանցանքը ինչ վատ բան է, և ինչքա՛ն տագնապների և խղճահարության պատճառ լինելով՝ անհանգստացնում է մարդուն: Թշնամին, ինչքան էլ զորավոր և հաղթող լինի, հնարավոր է, որ ժամանակի հետ թշնամությունը թողնի, կամ էլ կարելի է փախուստով ազատվել նրա ձեռքից, սակայն մարդու հանցանքը իր մտքից դուրս չի գալիս. անկարելի է, որ մարդը նրա ձեռքից ազատվի ո՛չ ժամանակ անցնելով և ո՛չ էլ փախուստով: Թեև Հովսեփի վաճառքից մինչ այդ պահը քառասուն տարի էր անցել, և Հովսեփը ներել էր եղբայրներին, սակայն նրանք, իրենց չարությունը մտաբերելով, դեռևս վախենում էին:

---

322 Հովսեփն իրեն ասված այս խոսքերի համար լաց եղավ (*Ծնող.* 50:17):

323 «Դուք մտածեցիք ինձ չարիք պատճառել, բայց Աստված իմ նկատմամբ բարի վարվեց, ինչպես որ եղավ այսօր, որովհետև մարդկանց մեծ բազմություն կերակրեցի ես: ....Մի՛ վախեցեք, ես կկերակրեմ ձեզ և ձեր ընտանիքները»: Հովսեփը մխիթարեց և հանգստացրեց նրանց (*Ծնող.* 50:20):

Մարդու մեղքն այն աստիճան թշնամի է իրեն, որ այս աշխարհում նրան երկյուղի մեջ պահելով՝ անհանգստացնելուց բացի հանդերձյալ աշխարհում էլ անվախճան տանջանքներով պատժում է, քանի որ մարդու դժոխք գնալու պատճառն իր մեղքն է:

Քանի որ ինչպես նյութական մարմնի ստվերն ու ծանրությունը, դրան հատուկ լինելով, չեն բաժանվում դրանից, նույնպես պատիժը, մեղքի ստվերն ու ծանրությունը լինելով, մեղավոր մարդու օձիքը ոչ մի վայրկյան չի թողնում, մինչև որ արդարությունը օրենքի համաձայն նրան պատժի: Ո՛վ մարդ, եթե ցանկանում ես թե՛ այս աշխարհում, թե՛ հանդերձյալում հանգիստ և երջանիկ լինել, բնավ մեղք մի՛ գործիր, իսկ եթե տկարությամբ մեղանչես, ժամանակ չկորցնելով՝ զղջա՛ և խոստովանի՛ր, որպեսզի պատժի չենթարկվես:

Հարց Խ. **Հակոբն ինչո՞ւ ցանկացավ թաղվել Քանանի երկրում:**

Պատասխան: Քանի որ Աստված այդ երկիրը Աբրահամին, Իսահակին և իրեն էր խոստացել: Ուստի ցանկանում է, որ Աստծուց իրեն խոստացված վայրում թաղվի: Մանավանդ Աբրահամի և Իսահակի գերեզմանները Քեբրոնում էին, ցանկանում է նրանց մոտ թաղվել, որ իր որդիները լավ ըմբռնեն և հասկանան, որ Եգիպտոսից դուրս գալով՝ Քանանի երկիրը պիտի գնան և միգուցե Եգիպտոսում մնալով՝ եգիպտացիների չար և անօրեն գործերին հետևեն: Քանի որ Հակոբը գիտեր, որ Աստծու խոստման համաձայն իր սերունդը մի օր պիտի դուրս գա Եգիպտոսից:

Բացի այդ, որովհետև Հիսուս Քրիստոսը՝ մեր Փրկիչը, Քանանում ծնվելով, այնտեղ պետք է մարդկային ազգն իր մեղքերից ազատեր և այնտեղ թաղվելով՝ հարություն առներ,

այս պատճառով Քանանում՝ Քեբրոն կոչված վայրում է ցանկանում թաղվել (այն տեղը, որը Երուսաղեմից 6 ժամվա ճանապարհ է), որպեսզի ինքն էլ Հիսուսի՝ Փրկչի հետ հարություն առնի[324]:

Հարց ԽԱ. **Հովսեփը քանի՞ տարի իշխեց:**

Պատասխան: Ութսուն տարի: Քանի որ երեսուն տարեկան էր, երբ իշխանության անցավ և հարյուր տասը տարեկան հասակում մահացավ: Տե՛ս, թե կատարյալ հավատով Աստծուն հուսացողը ինչպե՛ս է փառավորվում: Հովսեփը, բազում առումներով Քրիստոսի օրինակը լինելուց բացի, մարդկանց համար նաև սքանչելի առաքինության օրինակ եղավ:

Քանի որ իր մանկության տարիներին հորն ու եղբայրներին կատարելապես հնազանդ էր, երիտասարդական անմիտ ընթացքից հեռու, անգամ սիրում էր իրեն նախանձողներին, և երբ հորը նետվեց կամ որպես գերի վաճառվեց, Աստծուն հուսալով՝ խոնարհաբար համբերում է: Իր տիրոջ հանդեպ անհավատարիմ չի լինում, չմեղանչելու համար իր կրքերը հաղթելով՝ մահ պատճառելու չափ անգութ զրպարտության է հանդիպում և, սակայն, իր գաղտնիքն ու ցավը ոչ մեկին չհայտնելով՝ լուռ ու մունջ տառապում է: Բոլորովին իզուր և անիրավ ձևով բանտարկվելով՝ Աստծուց հույսը չի կտրում:

Իսկ երբ իշխանության է հասնում, երբեք չի հպարտանում, իրեն չարիք անողներին բարիք է անում, թագավորին հավատարմությամբ ծառայելով՝ երբեք ուրիշներին զրկանք չի հասցնում, մինչդեռ իշխանավորները, իրենց ագահության պատճառով և կամ հանցավորին պաշտպան կանգնելու նպատակով

---

324 Ննջեցյալ սրբերի բազում մարմիններ հարություն առան (*Մատթ.* 27:52):

շատ անգամ անմեղին թշնամի դառնալով, արդարությանը հակառակ են գործում: Քանի որ ինչպես գանձ դիզելու հետամուտ մարդկանց միտքը չի կարող ուղիղը հստակորեն տեսնել[325], նույնպես և մարդը իր սիրելիի հանցանքը և ատելիի առաքինությունը չի կարող ճանաչել[326] և հետևաբար արդարությանը հակառակ վճիռ է արձակում:

Սակայն Հովսեփը, Աստծու շնորհներով այսպիսի անարժան վարմունքից ամբողջությամբ հեռու և ազատ լինելով, բոլորին այն աստիճան ըստ արժանվույն էր կառավարում, որ թե՛ աղքատը, թե՛ հարուստը գոհ էին մնում նրանից: Այնպիսի փառավոր պաշտոնում մարմնի ցանկություններից երբեք չխաբվելով կամ չհաղթվելով՝ անձնատուր չի եղել հեշտալից զվարճություններին: Այնպիսի ազգասիրության և հայրենասիրության եռանդ ուներ, որ մահանալուց հետո էլ չցանկացավ բաժանվել իր ցեղից: Քանի որ հավատում էր, որ Աստծու խոստման համաձայն Իսրայելի ազգը պիտի դուրս գա Եգիպտոսից, ուստի մեռնելիս իր եղբայրներին և ցեղակիցներին երդվել է տալիս, որ Եգիպտոսից դուրս գալու ժամանակ իր ոսկորներն էլ տանեն և Քանանի երկրում թաղեն[327]:

Նկատի՛ր, որ ինչպես Հովսեփի՝ Եգիպտոս գնալու պատճառը եղբայրները եղան, նույնպես նրանց որդիները պարտական եղան նրա ոսկորները, Եգիպտոսից հանելով, Քանանի երկիրը տանել և թաղել:

---

325 Կաշառք չվերցնես, որովհետև կաշառքը կուրացնում է անգամ պայծառատեսների աչքերը և ավերում արդար գործերը (*Ելք* 23:8):

326 Առածի համաձայն՝ ատելությունն ու սերը կույր են:

327 Հավատո՛վ հիշեց Հովսեփը իր կյանքի վախճանին իսրայելացիների ելքը և իր ոսկորների վերաբերյալ պատվեր տվեց (*Եբր.* 11:22):

Դարձյալ, ինչպես Հովսեփը, մենակ Եգիպտոս գնալով, որքան էլ այնտեղ բազում նեղություններ և տառապանք կրեց, սակայն վերջում մեծամեծ պատիվների և փառքի արժանացավ, նմանապես Իսրայելի ժողովուրդը, շատ սակավաթիվ Եգիպտոս գնալով, այնտեղ բազմացավ և թեպետ փարավոնի ձեռքից շատ չարչարանքներ կրեց, սակայն հետո մեծ փառքով դուրս եկավ Եգիպտոսից:

Խրա՛տ վերցրու. ոչ միայն օտարներից, այլ նաև իր եղբայրներից մահաբեր վտանգ և վնաս կրելով հանդերձ՝ Հովսեփը Աստծուց զոհ էր և համբերում էր. եթե դու ևս թե՛ օտարներից և թե՛ բարեկամներից, ընկերներից վնասի ենթարկվես, առանց գանգատվելու աղոթի՛ր Աստծուն, որ ների նրանց հանցանքները[328]: Քանի որ նրանք քեզ թշնամաբար վնաս հասցնելու ժամանակ քեզ մեծ բարեկամություն և բարերարություն են արած լինում, քանի որ նրանց համար աղոթելով՝ քո վարձը բազմանում է:

Մի՛ ասա, թե ինչպե՛ս համբերեմ, երբ առանց պատճառի վնասում են ինձ. այստեղ լա՛վ խորհրդածիր, եթե հանցանքի համար պատժվես, որևէ մեկին մեղադրելու և արդարանալու պատրվակ արդեն իսկ չունենալով՝ ստիպված ես համբերել, սակայն երբ առանց հանցանքի պատժվելով, գոհությամբ և սիրով համբերես, Աստծու կողմից վարձերի և ողորմության կարժանանաս[329]: Նույնպես մի՛ ասա, թե մինչև ե՞րբ համբերեմ, քանի որ դրա վերաբերյալ ժամանակը որոշված չէ, մարդը պարտավոր է ամենայն հոժարությամբ և բարեմտորեն մինչև մահ համբերել[330]:

---

328 Աղոթեցե՛ք ձեզ նեղողների համար (*Ղուկ.* 6:28):

329 Քանզի ի՞նչ երախտիք կունենաք, եթե մեղանչելուց հետո տանջվեք և համբերեք, այդ շնորհ է Աստծու մոտ (*Ա Պետ.* 2:20):

330 Ով մինչև վերջ համբերեց, նա պիտի փրկվի (*Մատթ.* 24:13):

Դարձյալ, մի՛ զանգատվիր, թե քեզ հանդիպած դժվարությունը և տագնապը համբերելուդ կարողությունից վեր են, որովհետև Աստված գթած է և միանգամայն արդար լինելով՝ մարդու կարողությունից վեր վիշտ և նեղություն չի տալիս: Մանավանդ Նրա ողորմությունը, շատ մեծ և անչափ լինելով[331], մեղավորին ավելի մեղմ է պատժում, քան արժանի է, իսկ առաքինի մարդուն ավելի է փառավորում, քան արժանի է[332]: Այս պատճառով երբ մի վշտակիր մարդ անհամբերությամբ գանգատվում է, Աստծու գթության և արդարության դեմ մեղք է գործած լինում: Դարձյալ, մի՛ ասա, թե վնասողները բարեկամ և ընկերներ էին, այս բանը նրանք պետք է մտածեին: Քանի որ ամեն մարդ բնականաբար պարտավոր է իր ազգականին և ընկերոջը բարիք գործել, նրանք, բարիք չանելուց բացի թշնամություն և չարիք անելով, իհարկե շատ ավելի մեծ պատժի են արժանի[333]:

Արդարև, բարեկամների և ընկերների պատճառով վիշտ կրելը շատ ծանր է, սակայն երբ մարդը համբերում է, վարձն էլ ըստ այդմ շատ է: Այս աշխարհում մարդը ինչպես բարեկամի կարիքը ունի, որպեսզի նեղ օրերում մխիթարություն գտնի, նույնպես էլ թշնամու կարիքը ունի, որպեսզի իր բախտավոր օրերին զգույշ մնա և չսխալվի[334]: Քանզի բոլորի բարեկամ

---

331 Տե՛ր, երկնքում է քո ողորմությունը, իսկ ճշմարտությունդ՝ մինչև ամպերը (*Սաղմ.* 35:6):

332 Աստվածաբանների խոսքի համաձայն, թե՝ «Պատժէ զմեղաւորս՝ այսր քան զարժանն, պսակէ զարդարս՝ անդր քան զարժանն»:

333 Իսկ եթե մեկը յուրայիններին և մանավանդ ընտանիքին խնամք չի տանում, հավատն ուրացել է և ավելի չար է, քան անհավատը (*Ա Տիմոթ.* 5:8):

334 Ասացվածքի համաձայն, թե՝ բարեկամների և մեծամեծ թշնամիների կարիք ունենք:

եղած ժամանակ այլևս ոչ ոքից զգուշանալու պատճառ չունենալով՝ մարդը, խիստ համարձակություն ստացած, չափից ավելի անկարգ գործերի մասին է մտածում:

Ահա այս տեսությամբ մարդն իր թշնամիներից պարտավոր է գոհ լինել, քանի որ նրանք ծառայում են նրան անարժան գործերից հեռու պահելուն: Առաքինի մարդը նմանվում է Աստծու պարտեզին, իսկ թշնամին՝ փշոտ թփերին: Ինչպես որ պարտեզի շուրջը այդպիսի թփերով ցանկապատ են սարքում, որ կենդանիները ներս մտնելով պարտեզը չավերեն ու չապականեն, այդպես էլ Աստված իր սիրելիներին թշնամիներով է շրջապատում, որպեսզի անվայելուչ ընթացքի հետևելով՝ իրենց առաքինությունը չկորցնեն: Մանավանդ որ համբերությունը մարդու կամքին հակառակ գործվող գործերում է հայտնի դառնում, արդ, եթե ամեն մարդ կամքիդ համաձայն շարժվեր, անկարող կլինեինք համբերությամբ վարձ ստանալու առիթ, նյութ և միջոց գտնել: Բացի այդ, համբերությամբ թշնամուն հաղթելուց բացի, նրա ուղղվելու և դարձի պատճառ կդառնաս: Քանի որ թշնամիդ ինչքան էլ զորավոր և հաղթող լինի, երկարատև համբերությունդ տեսնելով՝ խղճահարությամբ կթողնի իր թշնամությունը: Համբերությամբ թշնամուն հաղթելու նման մեծ և ազնիվ հաղթություն չկա, որի մրցանակը նույն համեմատությամբ էլ մեծ է լինում:

Ինչպես որ Հովսեփը, Եգիպտոս գերի գնալով, թեև այնտեղ միառժամանակ նեղություն կրեց, բայց առանց հուսահատվելու, համբերությամբ իր թշնամիներին հաղթելուց բացի, փառավորվեց թե՛ այս աշխարհում և թե՛ արքայության մեջ, նույնպես մարդիկ, որպես գերի այս տառապանքի աշխարհը գալով, թեպետ միառժամանակ նեղություն են կրում, սակայն երբ համբերությամբ իրենց հույսը միշտ Աստծու վրա են դնում, անպատճառ երկու աշխարհների մեջ էլ պիտի փառավորվեն:

Քանի որ ինչպես Եգիպտոսը Հովսեփի համար փորձության վայր եղավ, նույնպես այս աշխարհը բոլոր մարդկանց համար փորձության վայր է ըստ Սուրբ գրքի[335]:

Այս մասին լա՛վ մտածիր. մարդը ոչ միայն դժբախտության, այլև բախտավոր վիճակում նույնպես կարող է փորձվել: Ուստի ինչպես նեղության ժամանակ պարտավոր է Աստծուն հուսալ, նույնպես բախտավոր եղած ժամանակ, առանց Աստծու երկյուղը մտքից ու սրտից հանելու, պարտավոր է խոնարհությամբ միշտ կատարել Աստծու պատվիրանները: Քանզի շատերը, իրենց բախտավոր ժամանակ հպարտանալով, կորստյան անդունդը գլորվեցին: Մի՛ կարծիր, որ Աստված առիթ է տալիս մարդուն, որ պատժի, ո՛չ, այլ չարագործին պատժում է, որ ուղղվի:

Արդարև, քանի որ պատիժը մարդու կամքին հակառակ է, անխելահաս մարդը այն չար է համարում, սակայն այսպիսի պատիժն այս աշխարհում է տեղի ունենում, որ ամեն առումով մարդու համար օգտակար և բարի է:

Այս առումով մեծ ուշադրություն է պետք, քանի որ չարը երկու տեսակի է. մեկը մեղքի չարիքն է, որի պատճառը Աստված չէ[336], իսկ մյուսը՝ պատժի չարը, որի պատճառը Աստված է[337]: Սակայն Աստված ոչ թե մարդուն չարիք անելու համար է պատճառ լինում, այլ արդար լինելով մեղավորին է պատժում, որպեսզի ուղղվելով հավիտենական պատժից ազատվի: Իրոք, այսպիսի պատիժը մեծ ողորմություն է, և նրան, ով այս ողորմությունը ճանաչելով իր չար ընթացքից հետ չի կանգնում,

---

335 Փորձություն չէ մի՞թե երկրի վրա կյանքը մարդու, վարձկանի օրական վարձը չէ՞ կյանքը իր (*Հոբ* 7:1):

336 Ոչ ոք, երբ փորձության մեջ լինի, թող չասի. «Աստծուց եմ փորձվում», քանի որ Աստված չարից չի փորձվում (*Հակոբ*. 1:13):

337 Քաղաքում չարիք կպատահի՞, եթե Տերը չի արել այն (*Ամոս* 3:6):

Աստված հանդերձյալ աշխարհում անպատճառ հավիտենական տանջանքով պատժում է, որպեսզի արդարությունը օրենքի համաձայն գործադրվի:

Արդ, եթե ցանկանում ես պատժից ազատվել, չարիք մի՛ գործիր, և քեզ չարիք հասցնողներին կամավորապես համբերելով՝ աղոթի՛ր նրանց համար, որ Աստված ների նրանց մեղքը, որպեսզի քո մեղքերին էլ ներում ստանալով՝ ողորմության արժանանաս[338]: Դարձյալ, եթե հանգիստ մնալ ես կամենում, այնպե՛ս մտածիր, որ այս աշխարհի վրա դու միայնակ ես, և մեկ էլ Աստված կա: Դու ինչ ուրիշներին ես անում, իմացի՛ր, թե Աստծուն ես անում[339]: Նույնպես ինչ ուրիշները կանեն քեզ, համարի՛ր, որ Աստված է անում:

Այսպես հասկանալու ես, որ քեզնից բացի երկրի վրա գտնվող բոլոր մարդիկ Աստծու կողմից փոխանորդ և քեզ վրա հսկող պաշտոնյաներ են կարգված, որոնցից մի քանիսը բարեկամաբար քեզ բարիք են անում, որպեսզի մխիթարվես և չհուսահատվես, իսկ ուրիշներն էլ թշնամական ձևերով քեզ չարիք են հասցնում, որպեսզի չափդ իմանալով՝ ուղղության և բարեկրթության ճանապարհով քայլես: Այդ պատճառով, երբ մեկից երախտիք տեսնես, նախ շնորհակա՛լ եղիր Աստծուց և ապա քեզ երախտիք անողին:

Նույնպես, երբ մի մարդուց չարիք ես տեսնում, բնավ մի՛ զայրացիր և մի՛ կարծիր, թե մարդն է անողը, այլ հիշի՛ր, որ այդ մարդուն գործել տվող կա, քանի որ Աստված Իր բարձրագույն կամքը արարածների միջոցով է գործադրում: Սակայն լոկ թշնամական դիտավորությամբ մյուսներին չարիք հասցնողը

---

338 Եթե դուք մարդկանց ներեք իրենց հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կների (*Մատթ.* 6:14):

339 Իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք դա՝ ի՛նձ համար արեցիք (*Մատթ.* 25:40):

թող չմտածի, թե Աստծու հրամանն է գործի դնում, այլ միայն իր թշնամությունը, ուստի նա պատժի է արժանանում:

Որովհետև, եթե չարիքի պատճառ եղող անձն իմանար, որ իր հակառակորդի ուղղության համար հատկացված մի պաշտոնյա է, չարությունից հետ կանգնելով՝ կթողներ թշնամությունը, որպեսզի միգուցե մի օր մեկ ուրիշն էլ իր ուղղության համար հատկացվի: Բայց եթե վնասված անձը, պատահած չարիքը Աստծուց համարելով, առանց գանգատվելու համբերի, թշնամու չարամտորեն արածը բարիքի կփոխի: Հիրավի, մարդկային բնությունը տկար լինելու պատճառով նեղությանը դժվարությամբ տոկալու համար «Փրկի՛ր մեզ չարից» աղոթքով Աստծուն դիմելը պարտականություն է[340], սակայն չարիք պատահած պահին առանց քրթմնջալու համբերելը նույնպես հարկավոր է[341]:

Քանի որ, եթե պատահած չարիքը հանցանքի պատճառով է առաջ եկել, թողություն կգտնես, կամ եթե հանցանք չունենալով՝ Աստծու մի գաղտնի դատաստանի պատճառով է, երբ անտրտունջ համբերում ես, արքայության մեջ վարձդ ավելանում է[342]: Այս եղանակով հայտնի է դառնում, որ մարդն ինչպիսի ցավի էլ որ ենթարկվի, իր համար բարի է: Նմանապես, ցավերի մեջ անհամբերությամբ տրտնջացողը ոչ մի օգուտ չքաղելուց բացի, իր ցավերն է՛լ ավելի է շատացնում:

Քանզի պատահած որևէ ցավ և վիշտ, որքան էլ թեթև լինի, տրտնջալու ժամանակ այն աստիճան ծանր է թվում, որ մարդուն հուսահատության է մղում, և, ընդհակառակը,

---

340 Մի՛ տար մեզ փորձության, այլ փրկի՛ր չարից (*Մատթ.* 6:13):

341 Եղբայրնե՛ր, ամենայն ուրախության արժանի՛ համարեք, երբ տեսակ-տեսակ փորձությունների մեջ ընկնեք (*Հակոբ.* 1:2):

342 Երանելի է այն մարդը, որ համբերում է փորձության, որովհետև եթե փորձության մեջ հաստատ լինի, կստանա կյանքի պսակը (*Հակոբ.* 1:12):

պատահած որևէ դժբախտություն, որքան էլ ծանր լինի, երբ մարդը, հոժարությամբ համբերելով, արիասիրտ և շնորհակալ լինի, անպատճառ թեթևանում է:

Ինչպես կրոնի և հավատի սիրո համար արյուն թափող նահատակների կրած տանջանքներն անտանելի և անբնական էին, բայց քանի որ կատարյալ հավատով իրենց միտքն ու սիրտը և սերը Աստծու վրա էին կենտրոնացրել, Աստծու ողորմությամբ և օգնությամբ մարդկային տկար բնությունն այն աստիճան մեծ զորություն ստացավ, որ նրանք, սրին և հրին դիմանալով, զանազան չարչարանքներով մեռնել ցանկացան[343]: Արդարև, օրինակ, դժվարին գործը սիրով կատարողի համար հեշտանում է, այդպես էլ հեշտ գործը սիրով և հոժարությամբ չկատարողի համար խիստ ծանր է թվում:

Եթե մարդիկ, որքան մարմնականի մեջ են միշտ ջանում իրար գերազանցել, նույնպիսի եռանդ ցուցաբերեին նաև հոգևորի մեջ, դժոխքում սատանայից բացի ոչ ոք չպիտի լիներ: Սակայն, դժբախտաբար, շատերը, առաքինությունը ուրիշներին թողնելով, հետամուտ են չարագործների օրինակին հետևելու և սատանայի դժոխային ընկերակցությունն ավելի են նախընտրում, քան արդարների երկնային բնակակցությունը: Հիրավի, եթե առաքինի մարդկանց օրինակին հետևելով՝ նրանք Աստծու պատվիրաններին համաձայն ապրեին, արքայության մեջ հրեշտակներին ընկերակից կլինեին:

Հարց ԽԲ. **Հովսեփի մահից հետո Իսրայելի ազգի վիճակն ի՞նչ եղավ Եգիպտոսում:**

Պատասխան: Շատ թշվառ եղավ, քանի որ Հովսեփի ժամանակակից թագավորն ու մեծամեծները մեռան, շատ ժամանակ

---

343 Քանզի սերը հզոր է մահվան պես (*Երգ.* 8:6):

չանցած՝ մոռացվեցին եգիպտացիներին արված նրա բարությունները[344]: Մանավանդ Աստծու ողորմությամբ երբ իսրայելացիներն օր օրի խիստ շատացան, Եգիպտոսի թագավորն սկսում է վախենալ նրանց այս տարօրինակ և չափազանց բազմանալուց, թե միգուցե Եգիպտոսի վրա թշնամու հարձակման ժամանակ իսրայելացիները նույնպես ապստամբեն և ցանկանան Եգիպտոսից մեկնել ու գնալ Քանանի երկիրը:

Քանզի լսել էր, որ իսրայելացիները ուզում են Եգիպտոսից գնալ իրենց երկիրը. քանի որ Հովսեփի պատճառով Քանանից եկել և այնտեղ որպես հյուր էին մնացել: Արդարև, ոչ ոք չէր կարող իրավացիորեն արգելք լինել նրանց փափագի կատարմանը, սակայն հիշյալ փարավոն թագավորը, մի անիրավ անձ լինելով, չէր ցանկանում թողնել և գերու նման չարաչար աշխատեցնում էր նրանց:

Դու նայի՛ր փարավոնի չարությանը. քանի որ ո՛չ իսրայելացիների մեկնումն է ցանկանում և ո՛չ էլ նրանց աճելն ու բազմանալը, և որպեսզի հանգիստ վիճակում լինելով՝ չբազմանան, մշակների նման նրանց շարունակ աղյուսի և քաղաք կառուցելու ստոր և դժվարին գործերին էր ծառայեցնում:

Խրա՛տ վերցրու, ինչպես որ փարավոնը, Իսրայելի ժողովրդին առնելով իր իշխանության տակ, ցեխ ճմռել և շաղախելու նման անարգ կամ ստորին գործերով էր աշխատեցնում, այդպես էլ չար գործերին հետամուտ մարդը, սատանայի իշխանության տակ մտնելով, կարծես ցեխ և աղյուս է սարքում նրա համար, քանի որ փարավոնը՝ սատանայի, իսկ ցեխը չար գործերի օրինակն է: Զարիք մի՛ գործիր, որ ազատ լինես այդ անարգ ծառայությունից:

---

344 Գահ բարձրացավ մի ուրիշ թագավոր, որը Հովսեփին չէր ճանաչում (*Ելք* 1:8):

Հիմա դու Աստծու ողորմությա՛նը նայիր. քանի որ որքան փարավոնը իսրայելացիներին նեղում էր, որ չշատանան, ընդհակառակը, նրանք նույնքան և ավելի զգալի կերպով էին աճում: Նա ճարահատյալ հրամայում է դայակ կանանց, որ Իսրայելի ժողովրդի նորածին մանուկներին խեղդելով սպանեն, սակայն անմեղ մանուկներին գթալով՝ նրանք թագավորի չար կամքը չեն կատարում: Երբ փարավոնը դրա համար հանդիմանում է նրանց, սրանք պատասխանում են, որ Իսրայելի կանայք եգիպտացիների նման չեն, նրանք, դեռևս դայակը չգնացած, ծննդաբերում են: Թեև այս խոսքը կետ առ կետ ճշմարիտ չէր, սակայն որովհետև Աստծուց վախենալով՝ նրանք գթությամբ խնայեցին անմեղ երեխաներին, ուստի Աստված նրանց գործերին հաջողություն պարգևեց, այնպես որ զավակների և բազում ունեցվածքի տեր դարձան[345]:

Օրինա՛կ վերցրու. ինչպես որ չարությունը Աստծու կամքին հակառակ է, եթե չարագործը մարդկանցից չպատժվի, անպատճառ Աստծուց է պատժվում, նույնպես բարությունը Աստծու կամքին համաձայն է, բարեգործ մարդը, եթե մարդկանցից չվարձատրվի, անպատճառ Աստված նրան կվարձատրի, քանի որ բարեգործի վարձը երբեք չի կորչում, ով և որտեղ էլ նա լինի, և երբ էլ լինի:

Այստեղ շատ մեծ ուշադրությամբ խորհի՛ր, թե որքա՛ն մեծ մեղք է մանկանը սպանելը կամ երեխա չունենալու համար դեղ խմելը և կամ բնության հակառակ գործելը: Եթե զավակ ունենալ չես կամենում, երեխայի հոգս քաշել չես ուզում, բնավ մի՛ ամուսնացիր, եթե ամուսնացել ես, Աստծու կարգադրած ճանապարհին հակառակ մի՛ կանգնիր, քանի որ

---

345 Աստված բարություն էր անում մանկաբարձներին.... Մանկաբարձները աստվածավախ էին (*Ելք* 1:20-21):

«Երեխայի հոգս չկրեմ» խորհածդ ժամանակ հոգիդ դժոխքին ես մատնում:

Դու հիմա նայի՛ր փարավոնի չարամտությանը. երբ նա տեսնում է, որ իսրայելացիներին նեղություններ տալով, դայակներին հրամայելով՝ չհասավ իր նպատակին, այն ժամանակ հրաման է արձակում, որ իսրայելացիների նորածին արու մանուկներին գետը նետեն[346]: Արդարև, այս հրամանը բնությանը հակառակ էր, սակայն քանի որ Աստված որոշած էր փարավոնին իր չարությամբ պատժել, Հակոբի երրորդ որդի Ղևիի ցեղից ծնվում է Մովսեսը (նրա հոր անունը Ամրամ էր, իսկ մորը՝ Հոքաբեդ), որին երեք ամիս պահում են[347]. խնայում են կայտառ մանկանը՝ անմիջապես ջուրը գցելու փոխարեն:

Սակայն երեք ամսից ավելի չհամարձակվելով պահել՝ մայրը եղեգներից տապանակ է սարքել տալիս, չընկղմվելու համար կուպրով ծեփել տալիս այն, և որի մեջ դնում է Մովսեսին: Ի՜նչ աստիճանի տարօրինակ թշվառություն. կարծես թե մայրը երեխայի համար դագաղ կամ գերեզման է սարքում, որի մեջ կենդանի թաղում է նրան՝ ջուրը նետելու համար: Մանուկը մորից չի ցանկանում բաժանվել, մայրը՝ իր զավակից, սակայն բռնավորի երկյուղը բաժանում է մորը զավակից, և զավակին էլ՝ մորից:

Դու նայի՛ր Մովսեսի մոր հավատքին. քանզի որքան էլ ստիպված եղավ իր որդուն ջուրը նետել, բայց Աստծու ողորմությունից հույսը բոլորովին չի կտրում: Այս պատճառով արտասուքով Աստծուն աղաչելով՝ գետի լճացած և հոսանքից ազատ մի անկյունում դնում է տապանակը և ջրին հանձնում այն, որպեսզի եթե մարդիկ իրենց նմանին չգթացին, գոնե ջուրը գթալով

---

346 Եբրայեցիներից ծնված բոլոր արու զավակներին գե՛տը նետեցեք (*Ելք* 1:22):

347 Հավատո՛վ է, որ երբ Մովսեսին ծնեցին, երեք ամիս թաքցրին նրան (*Եբր.* 11:23):

չխեղդի երեխային: Մովսեսի քույրը՝ Մարիամը, որ այն ժամանակ դեռ տասը տարեկան էր, հեռվում սպասում է, որ տեսնի, թե ի՛նչ է պատահում երեխային: Աստծու ողորմությամբ փարավոնի աղջիկն իսկույն նույն վայրն է գալիս լվացվելու և եկած ժամանակ ջրի վրա տապանակը տեսնելով՝ բերել է տալիս. դրա մեջ եղող մանկանը տեսնելով՝ սիրտը չի դիմանում, և հասկանալով, որ իսրայելացիների երեխաներից է, գութը շարժվում է:

Եվ քանի որ Մարիամը այնտեղ սպասում էր, համարձակություն հավաքելով՝ հարցնում է փարավոնի աղջկան. «Կցանկանա՞ս, որ մի եբրայեցի ստնտու կանչեմ, որ այս մանկանը քեզ համար մեծացնի»: Նա էլ «կանչի՛ր» ասածին պես ուրախությամբ գնում և կանչում է մորը՝ որպես մի օտար ստնտուի: Այն ժամանակ փարավոնի աղջիկը մանկանը նրա մորն է հանձնում, որպեսզի սնելով նրան իր համար մեծացնի և վարձատրություն էլ է խոստանում:

Լա՛վ նկատիր, թե հավատով Աստծուն դիմողն ինչպե՛ս է հասնում իր ցանկությանը: Մովսեսի մայրը կորցրեց իր որդուն, բայց շուտով գտավ, քանի որ Աստծու ողորմությանը հուսալով նրան ջրին հանձնեց, և ջուրն էլ շուտով իր ավանդը տիրոջը վերադարձրեց: Երբ մանուկը մեծացավ, փարավոնի աղջկան հանձնեց նրան, որն էլ նրան որդեգրեց: Եվ քանի որ ջրից էր հանել՝ անունը Մովսես դրեց, որ նշանակում է «ջրից»: Քանի որ «մո» ջուր է նշանակում, «սես» եգիպտերեն նշանակում է մի բանից, որպես թե՝ ջրից: Մովսեսը մնաց փարավոնի պալատում:

Հարց ԽԳ. **Մովսեսը քանի՞ տարի մնաց փարավոնի աղջկա մոտ:**

Պատասխան: Մինչև քառասուն տարեկան հասակը: Հիրավի, մարդու խելքը չի հասնի Աստծու դատաստաններին, սակայն տեղի ունեցած դեպքերի մասին խորհելով՝ պարտավոր

ենք խրատ քաղել: Փարավոնը եբրայեցիների զավակներին գետը նետել է տալիս, որովհետև միգուցե բազմանալով ուզեն Եգիպտոսից գնալ, սակայն Աստված, այդ ջուրը նետված երեխաներից մեկի ձեռքով իսրայելացիներին Եգիպտոսից հանել կամենալով, Մովսեսին ջրից ազատել և թագավորի աղջկան որդեգրել է տալիս, ինչպես նախապես Հովսեփին բանտից հանելով իշխան է կարգում:

Քանի որ Մովսեսը, որ առաջնորդելու էր Իսրայելի ժողովրդին, պետք է թագավորի և նրա մեծամեծների բնավորությանը, ինչպես նաև նրանց հետ խոսելուն վարժված լիներ: Նաև կառավարման և դատաստանների վերաբերող գործերի, ինչպես նաև ուսման և այդ ժամանակի գիտությունների մեջ կատարելագործվեր[348]:

Մտապահի՛ր, որ Մովսեսը թագավորի որդու նման մեծաշուք փառք է վայելում, սակայն աշխարհական մեծությունն ու զվարճությունները երբեք չեն գրավում նրա սիրտը, և նա, միշտ իր ազգի սիրով վառված, նրանց չարչարանքները տեսնելու ժամանակ թագավորի պալատում իր հանգիստը անարժան և անարգ մի բան համարելով, փափագում էր իր ազգին այդ ծանր և անտանելի գերությունից ազատել, և կամ ինքն էլ նրանց հետ միասին չարչարվել[349]: Այս պատճառով փարավոնի աղջկա մոտից հեռանալով՝ նրանց մոտ է սկսում ապրել:

Մի անգամ, երբ Մովսեսը շրջում էր Եգիպտոսում, տեսավ մի եգիպտացու, որը անիրավորեն հարվածում էր մի

---

348 Մովսեսը կրթվեց եգիպտացիների ամբողջ իմաստությամբ և զորավոր էր իր խոսքերով ու գործերով (*Գործք* 7:22):

349 Հավատո՛վ է, որ Մովսեսը երբ մեծացավ, մերժեց փարավոնի դստեր որդի կոչվել, նախընտրեց չարչարվել Աստծու ժողովրդի հետ, քան միառժամանակ մեղապարտ հաճույքներ վայելել (*Եբր.* 11:24-25):

իսրայելացու. չկարողանալով հանդուրժել, միաժամանակ տեսնելով, որ այնտեղ ոչ ոք չկա, ազգային նախանձախնդրությամբ լցված՝ իսկույն հարվածեց և սպանեց եգիպտացուն, որին ավազի տակ ծածկեց:

Այս պարագայում մի՛ ասա, թե Մովսեսն ի՛նչ իրավունքով մարդ սպանեց, քանի որ ոստիկան կամ դատավոր չէր: Այո՛, մարդկանց կողմից կարգված պաշտոնյա չէր, բայց քանի որ Աստված Իսրայելի ժողովրդին նրա ձեռքով պիտի ազատեր Եգիպտոսից, ուստի իր ազգի վրա Աստծուց կարգված պաշտոնյա էր:

Արդ, պաշտոնյան կամ դատավորը, երբ տեսնում է զրկողին, պարտավոր և ստիպված է իրավացիորեն արդարությունը գործի դնել: Դարձյալ, որովհետև եգիպտացիները անօրինությամբ էին իշխում Իսրայելի ազգի վրա, քանի որ սրանք հյուր էին և ոչ թե գերի, մանավանդ հարստահարողի դեմ գանգատվողին առավել խստությամբ էին պատժում, քանի որ հարստահարելու արտոնություն տվողը նույն ինքը կառավարությունն էր: Ուստի մի այսպիսի անարդար գործ կատարվելու տեղում անմեղին անիրավի ձեռքից ազատելը արդարություն և իրավունք է:

Հաջորդ օրը Մովսեսը քաղաքում քայլելու ժամանակ տեսնում է, որ երկու իսրայելացի իրար հետ վիճում են: Ցանկանում է նրանց մեջ հաշտություն հաստատել. «Դուք եղբայրներ եք, իրար մի՛ զրկեք» ասելուն պես զրկող անձը պատասխանում է. «Քեզ ո՞վ մեզ վրա դատավոր կարգեց, մի՞թե ինձ էլ ես ցանկանում այն եգիպտացու նման սպանել»[350]:

---

350 Ո՞վ է քեզ իշխան ու դատավոր կարգել մեզ վրա, թե՞ ինձ էլ ես ուզում սպանել, ինչպես որ երեկ սպանեցիր եգիպտացուն (*Ելք* 2:14):

Այս խոսքը լսելուն պես Մովսեսը, տեսնելով, որ գործածը հայտնի է դարձել, վախենում է: Ճշմարիտ է, որ եգիպտացուն սպանելու ժամանակ մեկ իսրայելացուց բացի ուրիշ մեկը չկար, սակայն նա, գաղտնիքը չպահելով և Մովսեսին ու իր ազգին էլ չխնայելով, ուրիշներին էր պատմել և բերնեբերան տարածվելով՝ մինչև թագավորի ականջին էր հասել: Եվ սա, որ արդեն իսկ թշնամացած էր, այս դեպքից հետո ավելի կատաղելով՝ ցանկացավ սպանել Մովսեսին, որը, Եգիպտոսից իսկույն փախչելով, Մադիամի երկիրն է գնում[351]:

Տե՛ս Մովսեսի առաքինությունը. նա, որ անմեղ էր և զրկվածին զրկողի ձեռքից ազատելու համար ստիպված եղավ հայրենիքը թողնելով օտար երկրում ապաստանել, արդարության սերն ու նախանձախնդրությունը ձեռքից դարձյալ չի թողնում: Քանի որ Մադիամ հասնելով՝ մի ջրհորի մոտ նստած ժամանակ տեղի Հռագուել անունով մի մեծավորի աղջիկները, որոնք իրենց հոր ոչխարներն էին արածեցնում, այնտեղ են գալիս՝ ոչխարներին ջուր տալու, սակայն հովիվները նրանց բռնությամբ վռնդում են:

Մովսեսը, նրանց այս անիրավությունը տեսնելով, չի կարողանում համբերել, ուստի հովիվներին անմիջապես մի կողմ քշելով՝ աղջիկների ոչխարներին ջուր է տալիս: Սրանք էլ, այն օրը կանուխ տուն վերադառնալով, Մովսեսի լավությունն ու արած բարիքը պատմում են Հռագուելին, որը Մովսեսին իր տուն է հրավիրում, և քանի որ միմյանց համակրում են, Մովսեսը նրա տանն է մնում, ապա Սեփորա անունով աղջկան կնության առնելով՝ նրան փեսա է դառնում՝ ըստ այն ժամանակի օրենքի և սովորության:

---

351 Հավատո՛վ թողեց Եգիպտոսը և չէր վախենում թագավորի ցասումից, քանզի համբերեց, որպես թե անտեսանելին էր տեսնում (*Եբր.* 11:27):

Դու տե՛ս իսրայելացիների ապերախտությանը. քանի որ իրենց փրկության համար Մովսեսի գործած ժամանակ նրան հակառակ կանգնելով՝ բամբասում և տարածում են նրա արածը, իսկ Հռագուելը, որ օտար ազգից էր և կռապաշտ, իր դուստրերին օգնելու համար, Մովսեսին չճանաչելով անգամ, շնորհակալ լինելով պատվում է նրան և մինչև անգամ իրեն փեսա է դարձնում, որին էլ Մովսեսը հավատարմորեն ծառայում է՝ նրա ոչխարներն արածեցնելով: Բավական ժամանակ հետո Մովսեսը երկու արու զավակ է ունենում, մեծի անունը՝ Գերսամ, իսկ փոքրինը՝ Եղիազար է դնում (*Ելք* 18:4):

Այս պարագայում Մովսեսը հոգևոր առումով Քրիստոսի օրինակը եղավ, քանզի ինչպես Մովսեսը, որին, Իսրայելի ժողովրդին փարավոնի ձեռքից ազատել ջանալու ժամանակ «Քեզ ո՞վ մեզ վրա դատավոր կարգեց» ասելով, մերժեցին, իսկ Հռագուելը, կռապաշտ լինելով, ընդունեց նրա բարի ծառայությունը, նմանապես Հիսուս Քրիստոսը Իսրայելի ազգին սատանայի գերությունից ազատելու համար աշխարհ եկած ժամանակ մերժվեց Իսրայելի ժողովրդից[352], բայց կռապաշտ ազգերը ընդունելով հավատացին նրա քարոզած կրոնին և ճշմարտությանը:

Հարց ԽԴ. **Մովսեսը քանի՞ տարի մնաց Մադիամում՝ Հռագուելի մոտ:**

Պատասխան: Քառասուն տարի: Օրինա՛կ վերցրու. Մովսեսը Եգիպտոսում՝ թագավորի պալատում, ազնվականի նման մեծանալով հանդերձ՝ հանդուրժում է հովիվ լինել և իր վիճակից երբեք չի գանգատվում: Քանի որ իմաստուն և առաքինի

352 Յուրայինների մոտ եկավ, բայց յուրայինները նրան չընդունեցին (*Հովհ.* 1:11):

լինելով՝ ո՛չ աշխարհային փառքով է հպարտանում և ո՛չ էլ աղքատի նման հովիվ լինելու համար է տխրում, այլ իրեն Աստծու կամքին հանձնելով՝ իր ազգի փրկության համար Աստծուն աղաչելուն է նվիրվում իր ժամանակն ու մտածումները: Արդարև, Մովսեսը, երկյուղից Մադիամ փախչելով, սկսում է ոչխարներ արածեցնել, սակայն նույնիսկ այս կետում գաղտնի խորհուրդ կա: Քանի որ Աստված, որ Մովսեսին Իսրայելի ժողովրդի վրա գլուխ և հովիվ պիտի հաստատեր, նախ նրան ոչխարների վրա հովվություն անել է տալիս, որից մարդկանց կառավարել սովորի: Ինչպես որ քառասուն տարի փարավոնի պալատում ուսում և գիտություն ստացավ, նույնպես և քառասուն տարի Մադիամում հովվությամբ ապրեց և հետո քառասուն տարի ևս անապատում Իսրայելի ժողովրդին առաջնորդ եղավ:

Լա՛վ մտապահիր, Մովսեսը Մադիամում մարմնով՝ հանգիստ, իսկ մտքով անհանգիստ էր, քանի որ երբ Եգիպտոսում իր ազգի կրած տառապանքներն էր մտաբերում, հոգին սաստիկ տխրությամբ էր համակվում: Այո՛, իրեն սպանել ցանկացող փարավոնը մահացավ, սակայն նրան հաջորդող թագավորը առավել անգութ մի անձ էր, և իսրայելացիները այլևս համբերելու կարողություն չունեին, ուստի թախծագին հառաչանքներով և սրտի պաղատագին գոչումով առ Աստված էին դիմում, որ իրենց փրկի: Ուստի Աստված, բացելով Իր ողորմության դուռը, կամենում է Մովսեսին Եգիպտոս ուղարկել և նրա միջոցով Իսրայելի ժողովրդին փարավոնի ձեռքից ազատել, միայն թե իմանալով, որ Մովսեսը խոնարհաբար չպիտի ուզենա ազգի և ժողովրդի գլուխ լինել, այս պատճառով իսրայելացիների չարչարանքները զգալի օրինակով ցույց տալով՝ հրաշագործելու կարողություն էլ է տալիս Մովսեսին, որ չվախենա:

Քանի որ երբ Մովսեսն իր աներոջ ոչխարները արածեցնելիս մոտենում է Քորեբ լեռանը (այն Սինա լեռան հարևանությամբ էր), հեռվից տեսնում է մի մորենի կամ մացառ, որը վառվում է, սակայն այրվելով չի փոշիանում, այլ մնում է նույն վիճակում: «Այս ի՞նչ հրաշալի բան է» ասելով՝ երբ ուզում է մոտենալ, մորենուց ահա ձայն է լսում. «Մովսե՛ս, Մովսե՛ս այստեղ մի՛ մոտեցիր, կոշիկներդ հանի՛ր ոտքերիցդ, քանի որ կանգնածդ վայրը սուրբ է, Ես եմ քո հոր՝ Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածը, տեսա Եգիպտոսում իմ ժողովրդի քաշած չարչարանքը, լսեցի նրանց հառաչանքների աղաղակը, և իջա, որ նրանց փրկելով Քանանի երկիրը տանեմ, որտեղ կաթ ու մեղր է բխում: Քեզ փարավոնի մոտ պիտի ուղարկեմ, որպեսզի Եգիպտոսից հանես Իսրայելի որդիներին»:

Սակայն Մովսեսը, զանազան առարկություններ բերելով, հրաժարվում է Եգիպտոս գնալուց և իր անկարողությունը ցույց տալու համար պատճառներ է ներկայացնում:

Հարց ԽԵ. **Որո՞նք էին Մովսեսի առաջ քաշած պատճառները:**

Պատասխան: Առաջին՝ ինքն իրեն այդպիսի մեծ և արժանի մի պաշտոնի արժանի չի տեսնում, որով որպես դեսպան պարտավոր էր գնալ թագավորի մոտ և նրա առջև խոսել: Այս պատճառով խոնարհությամբ հարցնում է. «Ես ո՞վ եմ, որ Եգիպտոսի հզոր թագավորին ներկայանամ և իսրայելացիներին Եգիպտոսից հանել համարձակվեմ»[353]: Մովսեսի այս խոսքից Աստված խոստանում է նրա հետ լինել, որպեսզի համարձակություն և քաջալերանք ստանա: Նույնպես հայտնում է, որ

---

[353] Ես ո՞վ եմ, որ գնամ եգիպտացիների արքա փարավոնի մոտ.... (*Ելք* 3:11):

Իսրայելը անպատճառ պետք է դուրս գա Եգիպտոսից, և այս լեռան վրա երկրպագեն Աստծուն:

Երկրորդ՝ առարկում է, որ երբ Իսրայելի ժողովրդի մոտ գնամ և «ձեր հայրերի Աստվածը ինձ ձեզ մոտ ուղարկեց ասելու ժամանակ, երբ հարցնեն ի՞նչ է նրա անունը, ի՞նչ պատասխանեմ իրենց»: Այս խոսքին Աստված պատասխանում է. «Ինքն է, որ Է[354], հավիտենական Էակ, որպեսզի կռապաշտների կուռքերի նման արարած չկարծեն Իսրայելի Աստծուն, այլ իմանան, որ Նա է երկնքի և երկրի Արարիչը և բոլոր արարածների Տերն ու Ստեղծողը, Նա է Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածը»:

Քանի որ խոստացել էր Քանանի երկիրը Աբրահամին, Իսահակին և Հակոբին տալ, այս պատճառով է նրանց անունները հիշում, որպեսզի հայտնի դառնա, որ նրանց տրված խոստումն անպատճառ պիտի կատարվի: Քանի որ ինչպես Ինքը հավիտենական և անփոփոխ է, նույնպես և Իր խոստումները՝ հավատարիմ և հաստատ, Մովսեսին ուղարկում է Եգիպտոս՝ տրված խոստումը գործի դնելու:

Այստեղ լա՛վ մտապահիր Մովսեսին տրված առանձնահատուկ շնորհն ու ողորմությունը: Արդարև, Աստված երևաց Աբրահամին, Իսահակին և Հակոբին, սակայն Իր անունը նրանց չհայտնեց[355]: Արդ, մեծ շնորհ և փառք է Մովսեսի համար, որին Աստված հայտնեց Իր անունը: Դարձյալ, քանի որ փարավոնը չցանկացավ թողնել Իսրայելին, վերջապես պետք է պատժվեր, ուստի Մովսեսին պատվիրում է, որ նրա մոտ գնալով՝ թույլտվություն խնդրելիս այլ պատճառ չհայտնի, այլ

---

354 Աստված ասաց Մովսեսին. «Ես այն Աստվածն եմ, որ Է» (*Ելք* 3:14):

355 Ես երևացի Աբրահամին, Իսահակին և Հակոբին.... և իմ անունը Տեր է, բայց ես դա նրանց չհայտնեցի (*Ելք* 6:3):

միայն Աստծուն պատարագ մատուցելու նպատակով երեք օրվա ճանապարհ պիտի գնան դեպի անապատ[356]:

Պատվիրում է նաև, որ Եգիպտոսից դուրս գալու ժամանակ դատարկաձեռն դուրս չելնեն, այլ յուրաքանչյուրն իր հարևանից ոսկի, արծաթ և այլ զարդեղեն ու հանդերձ խնդրելով՝ զարդարեն իրենց զավակներին: Այսպիսի պատվիրան է տալիս Մովսեսին, որպեսզի իմանա, որ իսրայելացիները ստույգ պիտի դուրս գան Եգիպտոսից, այլևս որևէ առարկություն չհարուցի: Սակայն Մովսեսը դարձյալ հարցնում է, թե եթե իր խոսքին չհավատալով՝ ասեն. «Աստված քեզ չհայտնվեց», ի՞նչ պատասխան տա նրանց: Այս անգամ Աստված հրաշագործության զորություն է շնորհում Մովսեսին, որ եթե իր խոսքին չհավատան, թող հրաշք գործի, որ հավատան:

Քանի որ Մովսեսը, հովիվ լինելով, ձեռքում գավազան ուներ, Աստված ասում է նրան. «Գավազանը ձեռքիցդ թո՛ղ»: Երբ նա թողեց, գավազանն իսկույն օձ դարձավ, որին տեսնելով՝ Մովսեսը սկսեց փախչել, սակայն նրան հրամայվում է բռնել օձի պոչից. երբ բռնում է, իսկույն առաջվա նման գավազան է դառնում: Դարձյալ Աստված նրան հրամայում է ձեռքը ծոցը մտցնել, երբ նա ձեռքը ծոցը մտցնելուց հետո հանում է, տեսնում է, որ ձեռքը բորոտվել է: Նորից հրամայում է, որ ձեռքը ծոց մտցնի, նա էլ մտցնում է, և հանելով տեսնում է, որ բորոտությունը բոլորովին անցել է:

Որպեսզի Մովսեսն ամեն առումով ապահով լինի, Աստված հայտնում է նրան, որ եթե առաջին հրաշագործությանը չհավատան, երկրորդին կհավատան և եթե երկրորդին էլ

---

356 Նրան կասես. «Եբրայեցիների Տեր Աստվածը մեզ կանչում է իր մոտ: Հիմա պիտի գնանք երեք օրվա ճանապարհ դեպի անապատ, որ մեր Աստծուն զոհ մատուցենք» (*Ելք* 3:18):

չհավատան, այն ժամանակ գետից ջո՛ւր վերցրու և թափի՛ր հողի վրա, և այն ջուրը ցամաքի վրա թող արյան փոխարկվի:

Արդարև, Աստված նորից ու նորից Իր բարձր կամքը հայտնեց Մովսեսին, որը թեև խոնարհաբար ինչքան էլ առարկեց և պատասխանները ստացավ, բայց այս անգամ էլ նա սկսեց աղաչանքով առարկել, որ ինքը նրբաձայն և ծանրալեզու է, հետևաբար այդպիսի կարևոր և մեծ պաշտոն ստանձնելուն անընդունակ և անկարող է[357], որին էլ Աստված պատասխանում է. «Ես քո բերանը պիտի բացեմ, և ինչ որ պետք է և արժանի է խոսել, խելամիտ պիտի դարձնեմ քեզ»: Այսուհանդերձ, Մովսեսը դարձյալ պաղատանքներով խնդրում է, որ իր փոխարեն ավելի համարձակախոս մեկին ուղարկի[358], այն ժամանակ Աստված բարկությամբ նրա մեծ եղբորը՝ Ահարոնին է տրամադրում, որին Մովսեսը Աստծու կողմից հաղորդի, ինչ որ անհրաժեշտ է, և Ահարոնն էլ՝ ժողովրդին[359]:

Այս պարագայում մի՛ կարծիր, թե Մովսեսն իր ազգի համար նեղություններ հանձն առնել չցանկանալու պատճառով է այսպիսի առարկություններ անում, այլ խոնարհ սիրտ ունենալու պատճառով մեծությունից խույս տալ է ցանկանում, սակայն որքան նա իր խոնարհամտությունն է հայտնում, Աստված նույնքան առաջարկում է իր օգնությունը հայտնապես բազմապատկել: Վերջապես Մովսեսը հանձն առավ գնալ Եգիպտոս, գավազանն էլ է վերցնում, որպեսզի

---

357 Մովսեսն ասաց Տիրոջը. «Աղաչում եմ քեզ, Տե՛ր, մինչև օրս ես պերճախոս չեմ եղել, ոչ իսկ երբ սկսեցիր խոսել քո ծառայի հետ, որովհետև անվարժ եմ խոսում, ծանրախոս եմ» (*Ելք* 4:10):

358 Մովսեսն ասաց. «Աղաչում եմ քեզ, Տե՛ր, մի այլ կարող մարդո՛ւ ընտրիր, նրա՛ն ուղարկիր» (*Ելք* 4:13):

359 Նա կլինի քո խոսափողը, իսկ դու նրա համար կլինես ներշնչող Աստված (*Ելք* 4:16):

հարկ եղած դեպքում դրանով հրաշքներ գործի, ինչպես Աստված հրամայեց:

Հարց ԽԶ. **Ի՞նչ խորհուրդ ունեն մորենին և կրակը:**

Պատասխան: Մորենին խորհրդանշում է Իսրայելի ժողովրդին, իսկ կրակը՝ նրա կրած չարչարանքը: Քանի որ մորենին մի թույլ մացառ է և շուտ է այրվում, նույնպես էլ իսրայելացիները՝ իբրև գերի թշվառ մի ժողովուրդ, անգութ փարավոնի ձեռքից անկարող էին ազատվել. նրա անգութ հարստահարությունը կրակի նման այրում էր իրենց: Բայց ինչպես որ հուրը այրում էր հիշյալ մորենին և չէր կարողանում մոխրացնել, նույնպես և Իսրայելի ժողովուրդը, թեպետ անտանելի և ծանրագույն չարչարանքներ կրեցին, սակայն Աստծու ողորմությամբ իրենց անձերն անվնաս էին մնում, օր օրի բազմանում և աճում էին:

Իսկ մորենուց եկած ձայնը, որ ասում էր. «Կոշիկներդ հանի՛ր ոտքերիցդ», Աստծու ներկայության նշանն էր, որի մոտ համարձակությամբ գնալը կամ կոշիկով կանգնելն անպատշաճ է: Քանզի Մովսեսը, այն հասարակ կրակ կարծելով, ցանկանում է մոտենալ դրան: Մանավանդ քանի որ փարավոնը իսրայելացիներին կավ պատրաստել էր տալիս ոտքով, դրա համար Մովսեսին հրամայվում է կոշիկները հանել, որպեսզի իր ազգականներին մերկ ոտքերով, որպես գերի այդ անարգ և դառը ծառայությանը մատնված և սոսկալի տառապանքների ենթարկված լինելը մտաբերելով, Եգիպտոս գնալու և ժողովուրդը փրկելու դժվար պաշտոնից չհրաժարվի:

Այստեղ արժանի է նկատել, թե մարդը որքա՛ն է պարտավոր Ս. Եկեղեցու և սրբազան վայրերի նկատմամբ հարգանք և պատիվ ընծայել, և Աստծուց վախենալով՝ դրանց ակնածությամբ մոտենալ, քանի որ կոշիկը ոտքից հանելը

մարմնավոր ցանկությունները մեր մտքից ու սրտից կտրելիանելու նշանակն էր:

Իսկ հոգևոր իմաստով մորենին՝ Ս. Աստվածածնի, իսկ մեջը եղած հուրը՝ Աստծու Բանի մարմնավորվելու օրինակն է տալիս:

Խրա՛տ վերցրու. երկրի վրա մարդն իբրև մի մորենի է, մարմնական ցանկության և փառքի հոգսերը կրակի նման են, որոնց անձնատուր մարդը կրակի մեջ ընկածի նման իր հոգու տառապանքների և տանջանքների պատճառն է դառնում: Բայց նա, որ մարմնի հաճույքներին և աշխարհի փառքին հետամուտ և հակված չէ, և միշտ Աստծուն հուսալով՝ Նրա կամքի համաձայն է վարում կյանքը, այրվելով չի մոխրանում, քանի որ Աստված Իրեն հուսացողներին այսպիսի կրակներից Իր ողորմությամբ անպատճառ պահում է:

Հարց ԽԷ. **Ինչպե՞ս հասկանալ Աստծու «տեսա», «լսեցի» և «իջա» խոսքերի իմաստը:**

Պատասխան: Աստծու տեսնելը՝ իրավունք տալ, լսելը՝ մարդկանց աղաչանքը ընդունել, իսկ իջնելը իսկույն դատաստան տեսնել կամ արդարությունը գործի դնել է նշանակում: Քանի որ Աստված ոչ թե մարդկանց նման տեսնելու, լսելու կամ տեղափոխվելու կարիքն ունի, այլ Աստծուն ամեն ինչ հայտնի է, և Նա ամենուր է, ուստի այսպիսի խոսքերը պարզապես Աստծու արդարությունը, գթությունը և օգնությունն են հայտնում մեզ:

Արդարև, արդարությունը գործի դնելով՝ Աստված չի զլանում Իր գթությունն ու ողորմությունը տալ մարդկանց, սակայն գաղտնի և իմաստուն պատճառներով շատ անգամ համբերում է: Ինչպես որ Եգիպտոսում իսրայելացիների այդքան երկար չարչարանքների ժամանակ Աստծու

համբերությունը մեծ և իմաստուն պատճառի կամ պատճառների արդյունք էր: Քանի որ նախապես Աբրահամին արված հայտնության համեմատ, թե նրա սերունդը չորս հարյուր տարի Եգիպտոսում օտարության մեջ պիտի մնա և աճի, այս պատճառով համբերում է, որ լրանա վճռված ժամանակը, մանավանդ փարավոնի մեղքերի չափը լրանալով՝ պատժվի: Նույնպես քանանացիների և այլ կռապաշտների մեղքի չափը լրանալով[360]՝ Իսրայելի Եգիպտոսից դուրս եկած ժամանակ նրանց երկիրը գրավելու իրավունք ունենան:

Դարձյալ, նախապես ասվել էր, որ Աբրահամի որդիները երկրի ավազի և երկնքի աստղերի չափ բազմանալու են, ուստի ըստ այդմ, ինչպես որ նրանք ավազի նման եգիպտացիներից ոտնակոխ եղան, նույնպես Եգիպտոսից դուրս գալու ժամանակ իսրայելացիների փառքը պետք է երկնքի աստղերի և արեգակի նման հայտնի դառնար աշխարհին: Քանզի նրանց ազատվելու ընթացքում կատարված հրաշքները տեսնողներն ու լսողները, հիացումի և սարսուռի մատնված, Աստծու ահեղ զորությունն էին խոստովանում: Ահա այս պատճառով Ս. գիրքը իսրայելացիների ազատվելու ժամանակահատվածը հայտնում է «տեսնել», «լսել» և «իջնել» բառերի՝ մարդկանց բնորոշ կամ սովորական բացատրությամբ:

Նմանապես, Աստծու ողորմությունը հայտնի դառնալու համար Քանանի երկրում կաթի և մեղրի առատությունը նախապես հայտնվում է Մովսեսին, որպեսզի Իսրայելի անմխիթար և հարստահարված ժողովրդի սիրտը փոքր-ինչ մխիթարվի: Քանի որ այդ չարչարանքներից փրկելուց բացի, խոստանում է

---

360 Ամորհացիների մեղքերը դեռևս իրենց լրումին չեն հասել (*Ծնող.* 15:16):

տանելիք երկրում կաթով և մեղրով սնել նրանց[361]: Իսկ հոգևոր իմաստով կաթը և մեղրը Հին և Նոր օրենքի նշանակն են[362]:

Օրինա՛կ վերցրու. այս աշխարհը փորձության և դաս քաղելու վայր է, մարդն իր ամբողջ կյանքի ընթացքում փորձությունից զերծ չի լինում: Արդ, երբ փորձություն պատահի, Աստծու ողորմությունից հույսդ մի՛ կտրիր, այլ համբերությամբ և աղոթքով գոհացի՛ր Աստծուց և վիճակիցդ մի՛ գանգատվիր, քանի որ փորձություն ուղարկող Աստված քեզ դրանից ազատելու ժամանակն էլ գիտի: Այո՛, որոշակի ժամանակ նեղություն ես կրում, բայց հետո ուրախ ես լինում: Արդարև, այս անցավոր աշխարհում աղետներն ու փորձանքները մարդու համար օգտակար են[363]:

Հարց ԽԸ. **Մովսեսին տրված երեք հրաշքների զորությունն ի՞նչ է նշանակում:**

Պատասխան: Գավազանի օձ դառնալը փարավոնի անգթությունն է ցույց տալիս, և որ Մովսեսի ձեռքով պիտի պատժվեր: Քանի որ ինչպես հովիվը գավազանով է արածեցնում իր ոչխարներին, նույնպես էլ իշխանը արդարության օրենքներով է կառավարում մարդկանց: Եթե իշխանը արդարությամբ չի կառավարում իր հպատակներին, նրա գավազանը օձի պես է դառնում, ինչպես որ Մովսեսի գավազանը օձ դարձավ, որ անօրեն փարավոնին թունավորելով՝ կորստյան մատնի, որին կատարելապես արժանի էր:

---

361 Նրանց տանեմ մի լավ ու ընդարձակ երկիր.... ուր կաթ ու մեղր է հոսում (*Ելք* 3:8):

362 Օրենքները Սիոնից են դուրս գալիս, և Տիրոջ խոսքը՝ Երուսաղեմից (*Եսայի* 2:3):

363 Ու թեպետ մարդկանց թվում է, թե նրանք տանջվեցին, բայց նրանք անմահության հաստատ հույս ունեն (*Իմաստ.* 3:4):

Աստծու պատվիրանը գավազանի նման է, որին դեմ գործելը գավազանը ձեռքից գցելու պես է, և երբ պատվիրանը գետին է ընկնում, օձ դառնալով՝ թունավորում է մարդուն, քանի որ ինչպես պատվիրանին հակառակ չգործողը չի պատժվում, այնպես էլ պատվիրանին հակառակ գործողը հարկավ պատժվում է: Ուրեմն եթե չես ցանկանում պատժվել, պատվիրանի գավազանը ձեռքիցդ բնավ մի՛ գցիր:

Նմանապես, Մովսեսի ձեռքերի բորոտվելը Իսրայելի ժողովրդի վիճակն է հայտնում: Քանի որ Եգիպտոսում նրանց լինելու ընթացքում այն ժամանակի փարավոնը, ի պատիվ Հովսեփի, նրանց անվնաս և անվտանգ պահպանում էր կարծես իր ծոցում, բայց հետո եկող թագավորները նրանց հարստահարելով և չարչարելով վիրավորեցին, նույնպես էլ իսրայելացի ժողովուրդը, եգիպտացիների վատ սովորություններին հակվելով, կարծես թե բորոտվեց: Մովսեսի ձեռքը բորոտությունից հետո վերստին առողջանալը նշանակում է, որ իսրայելացիները որքան էլ Եգիպտոսում բարոյապես վիրավորվեցին, սակայն այնտեղից դուրս գալով՝ նորից իրենց նախնական վիճակը պիտի ստանային: Դարձյալ, գետի ջրի արյուն դառնալը իսրայելացիների մանուկներին գետը նետելն էր հայտնում, որտեղ իրենց մահն էին գտնում:

Այժմ դու մտապահի՛ր. որքան փարավոնը, արդարությանը հակառակ գործելով, պատժի արժանի եղավ, սակայն Աստված իր գթությամբ նախ Մովսեսին նրա մոտ է ուղարկում, որպեսզի զղջա, և եթե չզղջա, ըստ այդմ պատիժ կրի: Քանի որ Աստված մարդուն չի պատժում, բայց միայն իր հանցանքի համար, սակայն նախ զղջման է հրավիրում, որպեսզի Իր գթությունը հայտնի դառնա: Եվ եթե մարդը, Աստծու գթությունը արհամարհելով, իր չար ճանապարհից չի հրաժարվում, այն ժամանակ պատժում է, որ Իր արդարությունը հայտնի դառնա:

Խրա՛տ առ. փարավոնին, որ մեծաշուք թագավոր էր, պատժելու համար մի հովիվ է ուղարկվում և այն էլ ոչ թե զորքով և զրահով, այլ բոլորովին միայնակ և միայն մի ցուպ կամ գավազան իր ձեռքին: Արդ, մարդը թող չիպարտանա աշխարհի զորությամբ, քանի որ երբ Աստված իր հայացքը հեռացնի, թագավոր էլ լինի, մի տկար հովվից կհաղթվի:

Ապա Աստծու հրամանի համաձայն՝ Մովսեսն իր կնոջն ու երեխաներին վերցնում է և Եգիպտոս գնալու համար ճանապարհ ընկնում, սակայն փոքր որդին՝ Եղիազարը, համարվում է, որ այն օրերին ծնված լինելու պատճառով ճանապարհին չնեղվելու նպատակով դեռևս թլփատված չէր: Երբ առաջին իջևանին են հասնում, հրեշտակը երևում է և ցանկանում է սպանել Մովսեսին: Մովսեսի կինը, պատճառը գուշակելով, իսկույն գայլախազով թլփատում է մանկանը և հրեշտակի ոտքերին փարվելով՝ հայտնում է, որ ահա մանկան արյունը դադարեց: Դրանից հետո հրեշտակը մեկնում է այդտեղից: Այս խոսքով կինն իբր ցանկանում էր ասել, թե՝ ահա Աստծու հրամանը կատարվեց, մի՛ սպանիր Մովսեսին, որը պատժի արժանի ուրիշ հանցանք չունի:

Խրա՛տ առ. Մովսեսը Աստծու հրամանը կատարելու համար Եգիպտոս է գնում, սակայն դրանից առաջ եղած հրամանը գործադրած չլինելու պատճառով քիչ մնաց, որ պատժվի. ուրեմն մարդը պարտավոր է կատարել Աստծու բոլոր հրամանները. եթե բոլոր պատվերները կատարի և միայն մեկի մեջ թերանա, բոլորին պարտապան կմնա[364]: Քանի որ պատվերը Աստծու հրամանն է, դրանցից որն էլ անկատար մնա, հրամանին հակառակ է գործած լինում, որով էլ մարդը պատժի արժանի է լինում:

---

364 Նա, ով պահում է ամբողջ օրենքը և միայն մեկ բանով է սայթաքում, պարտապան կլինի ամբողջ օրենքին (*Հակոբ.* 2:10):

Մովսեսը տեսնում է, որ կինն ու երեխաները իրեն արգելք են լինում և նեղություն պատճառում, այս պատճառով նրանց աներոջ մոտ ուղարկելով՝ ինքը միայնակ և առանձին է գնում: Եվ երբ հասնում է Քորեբ լեռանը, Ահարոնը դիմավորում է նրան, և միմյանց տեսնելով՝ ուրախանում են: Մովսեսը պատմում է Ահարոնին Աստծու բոլոր հրամանները:

Այսպես երկուսը միասին Եգիպտոս են գնում, և Ահարոնը ժողովրդի ծերերին հայտնում է այն, ինչ անհարժեշտ է: Մովսեսն էլ նրանց առջև հրաշք է գործում, և նրանք հավատալով ուրախանում են Աստծու այցելության համար: Ապա Մովսեսը և Ահարոնը գնում են փարավոնի մոտ և խնդրում, որ Աստծուն զոհ մատուցելու համար Իսրայելին թույլ տա երեք օրվա ճանապարհ անցնել դեպի անապատ:

Հարց ԽԹ. **Փարավոնը Մովսեսին ի՞նչ պատասխանեց:**

Պատասխան: Փարավոնը՝ հպարտ և համառ, «Ո՛չ Աստծուն եմ ճանաչում և ո՛չ էլ Իսրայելին եմ թողնում» ասելով, վճռական պատասխան է տալիս: Հիրավի, Մովսեսը՝ որպես Աստծու կողմից պատգամավոր, և Ահարոնը՝ որպես նրա թարգման, փարավոնի մոտ գնալը և խնդրելը, որ իր կամքով Իսրայելին թույլ տա Եգիպտոսից դուրս գալ, մեծ պատիվ և փառք էր նրա համար: Սակայն բացի այն, որ փարավոնն այս պատիվը չի հասկանում և Իսրայելին բաց չի թողնում, «Նա ո՞վ է, որ ես նրա խոսքը լսելով՝ Իսրայելին թողնեմ» ասելով՝ Աստծու ամենակարողության դեմ է խոսում: Բացի այդ, դիտավորյալ սկսում է Իսրայելի ժողովրդին առավել սաստիկ նեղություններ տալ:

Քանի որ նրանց աղյուս պատրաստել էր տալիս, իսկ մինչ այդ պահը աղյուսի հարդը կառավարության կողմից էր հատկացվում, այս դեպքից հետո աղյուսի հարդ հավաքելն էլ

նրանց վրա թողեց՝ միաժամանակ աղյուսի ամբողջ քանակը պահանջելով: Իսրայելացիների համար խիստ ծանր եղավ այս գործը, քանի որ հարդ գտնելը շատ դժվար էր: Մանավանդ այս գործին կարգված հրեա քարտուղարները փարավոնի մոտ են գնում և իրենց դառն ու տագնապալից վիճակի մասին հայտնում ու գանգատվում, թե ինչու է այսպիսի բռնություն գործադրում իր ծառաների նկատմամբ և աղյուսների քանակն էլ անփոփոխ է թողնում:

Անգութ թագավորը գթալու փոխարեն հանդիմանական խոսքեր է ուղղում նրանց, թե՝ «Պարապ և առանց զբաղմունքի մնալու պատճառով «գնանք զոհ մատուցենք» եք ասում, ուրեմն գնացե՛ք և աշխատե՛ք, ձեզ ոչ ոք հարդ չի տա, և աղյուսի քանակն էլ ամբողջացրե՛ք»:

Խրա՛տ առ. ինչպես փարավոնը իսրայելացիների աշխատանքը բազմապատկեց[365], երբ իմացավ, որ նրանք նպատակ ունեն Եգիպտոսից դուրս գալ և Աստծուն զոհ մատուցելու համար անապատ գնալ, որպեսզի Աստծու հրահանգի շուրջ խորհելու ժամանակ չունենան և Եգիպտոսից դուրս գալու մտքից հրաժարվեն, նույնպես էլ երբ մի մարդ, իր չար ճանապարհից դառնալով, Աստծու հրամանի համեմատ սկսում է առաքինություն գործել, սատանան նրան աշխարհիկ զբաղմունքների սերն է ներշնչում, որպեսզի առաքինություն գործելու համար ժամանակ գտնելու անկարող լինելով՝ երբեք մեղքից ազատ և զերծ վիճակ չունենա:

Քանի որ Եգիպտոսից դուրս գալով երեք օրվա ճանապարհ գնալն ու անապատում զոհ մատուցելը նշանակում է մարմնի հաճույքները թողնել, աշխարհի հոգսերից հրաժարվել և զղջմամբ, խոստովանությամբ և ապաշխարությամբ

---

365 Թող մարդկանց գործն է՛լ ավելի ծանրանա (*Ելք* 5:9):

ապրել: Վերոհիշյալ քարտուղարները, որոնք փարավոնից օգնություն ստանալու փոխարեն հանդիմանություն լսեցին, փարավոնի պալատից ամբողջությամբ հուսահատված դուրս գալով՝ հանդիպեցին Մովսեսին և Ահարոնին և զանգատվելով ասացին. «Մեզ փարավոնի մոտ ստորացրիք և մեր կորստյան ու կոտորածի պատճառ պիտի դառնաք»: Տե՛ս, Աստված Մովսեսին փարավոնի մոտ է ուղարկում, որպեսզի Իր հրամանը հաղորդի, սակայն նա լսելու փոխարեն, հակառակն է գործում, և ժողովուրդն էլ առանց համբերելու սկսում է գանգատվել:

Մանավանդ Մովսեսը, նրանց կրած չարչարանքները տեսնելով, սիրտը անասելի կոտրված, երբ սկսում է աղաչել Աստծուն: Աստված նրան մխիթարելու համար ասում է. «Հիմա պիտի տեսնեն, թե Ես ի՛նչ պետք է անեմ»[366]: Այս խոսքով թեև հայտնեց, որ փարավոնը պետք է սաստիկ պատժվի, և Իսրայելը Աստծու ամենակարող զորությամբ շուտով ազատվի, սակայն ժողովրդին էլ վստահեցնելու համար Մովսեսին հրամայում է, որ նրանց հայտարարի, թե Աստված, նրանց գերությունից փրկելով, Քանանի երկիրը պետք է տանի, ինչպես խոստացել էր Աբրահամին, Իսահակին և Հակոբին:

Արդարև, ըստ հրամանի՝ Մովսեսը գնում և տեղեկացնում է ժողովրդին, սակայն նրանք, անհամբեր և խիստ մեծ նեղության մեջ լինելով, այլևս չեն լսում նրա խոսքը: Աստված երբ Մովսեսին նորից հրամայում է գնալ փարավոնի մոտ և ասել, որ Իսրայելի ժողովրդին թողնի, Մովսեսը պատասխանում է. «Իսրայելի որդիներն ինձ չլսեցին, փարավոնը ինչպե՞ս լսի, քանի որ ես մի պերճախոս մարդ չեմ, ձայնս էլ տկար է»:

---

366 Տերն ասաց Մովսեսին. «Հիմա կտեսնես, թե ի՛նչ եմ անելու փարավոնին» (*Ելք* 6:1):

Այստեղ ուշադրությո՛ւն դարձրու, որ Մովսեսն ինչքան խոնարհվում էր Աստծու առջև, Աստված էլ այնքան նրա փառքն էր ավելացնում: Այս անգամ ևս Մովսեսը Աստծու նման փարավոնի վրա տեր և իշխան է կարգվում, որ տարբեր հրաշքներ գործելով՝ նրան պատժի: Իսկ Ահարոնը Մովսեսի մարգարեն է լինում[367]: Քանի որ ինչպես մարգարեները Աստծու հրամանները մարդկանց հայտնելու պաշտոնն ունեն, նույնպես Ահարոնը Մովսեսի հրամանը փարավոնին և ժողովրդին է հայտնում: Այն ժամանակ Մովսեսը՝ ութսուն, իսկ Ահարոնը ութսուներեք տարեկան էր:

Այսուհետև ուշադի՛ր եղիր Մովսեսի ձեռքով գործված հրաշքներին և ինքնահավան ու համառ փարավոնի կրած պատիժներին. քանի որ Մովսեսը և Ահարոնը Աստծու հրամանով երկրորդ անգամ են ներկայանում փարավոնին և պահանջում են, որ թողնի Իսրայելին: Եվ որովհետև նա այն ժամանակ ասել էր, որ Աստծուն չի ճանաչում, այս պատճառով Մովսեսը սկսում է հրաշքներ գործել, որպեսզի Աստծու կարողությունը ճանաչի: Ուստի Ահարոնը, Մովսեսի գավազանը վերցնելով, փարավոնի առջև գցելուն պես գավազանը օձ է դառնում:

Սակայն փարավոնը, այս հրաշքը կախարդության և ոչ թե Աստծու զորությանը վերագրելով, կանչել է տալիս Հանես և Համրես անուններով կախարդներին, որպեսզի նրանք նույնպես իրենց գավազանները օձ դարձնեն (*Բ Տիմոթ.* 3:8): Արդարև, սատանայի հնարքով նրանց գավազանները նույնպես օձ դարձան, սակայն զարմանալին այն է, որ օձերը փարավոնի ներկայությամբ իրար հետ կռվել սկսեցին, Մովսեսի (օձը) գավազանը կախարդների գավազանները կուլ տվեց և միայն

---

367 Ահա ես քեզ փարավոնի համար մի աստված դարձրի, իսկ քո եղբայր Ահարոնը թող լինի քո մարգարեն (*Ելք* 7:1):

ինքը մնաց, որը Մովսեսի բռնելուն պես նորից գավազան դարձավ: Կախարդները, առանց գավազանի մնալով, ծաղրված և ամոթապարտ մեկնեցին: Սակայն մի՛ կարծիր, որ նրանց արածը իրական հրաշք էր, այլ սատանայական հնարք:

Սակայն հրաշքը խրատ և հորդոր էր թագավորի համար, որ զղջա: Քանի որ Մովսեսը Աստծու հրամանով իսրայելացիների վրա հովիվ էր նշանակված, ցուպը ձեռքին՝ հոտը որոնելու էր դուրս եկել, և փարավոնը իր հոժար կամքով հոտը հովվին չհանձնելու պատճառով գավազանը օձ է դառնում, որպեսզի պատուհասի անիրավին: Սակայն նա այս օրինակից խրատ չառավ. բնականաբար խրատը պատժի փոխվեց, քանի որ խրատին ուշադրություն չդարձնողի բաժինը իրավացիորեն պատիժն է:

Արդարև, փարավոնը ամբողջությամբ դատապարտության է արժանի, սակայն Աստված, ողորմած և գթած լինելով, Մովսեսին նորից՝ երրորդ անգամ է ուղարկում, որ Իսրայելին թողնի, և եթե չթողնի, իմանա, որ պիտի պատժվի: Բացի այդ, տալիք պատժի ժամանակը, անունը և ձևը նախապես հայտնում է, որպեսզի բնական պատահար չհամարի, այլ Աստծու կողմից ուղարկված հատուկ պատուհաս լինելը հասկանալով՝ դարձի և զղջման գա:

Հարց Ծ. **Քանի՞ տեսակ պատիժ կամ հարված տրվեց փարավոնին:**

Պատասխան: Տասը տեսակի: Առաջին հարվածն այն էր, որ ջուրը արյուն դարձավ: Նկատի՛ր, որ ինչպես փարավոնը Իսրայելի մանուկներին ջրում խեղդել էր տալիս, դրա փոխարեն եգիպտացիների խմելու ջուրը արյան փոխվեց: Քանի որ Աստծու հրամանով Մովսեսն առավոտյան Նեղոս գետի եզերքն է գնում, ուր նաև փարավոնն է գալիս: Տեսնելով, որ

Աստծու հրամանը հայտնելով՝ անզգամ թագավորը չի համոզվում, Ահարոնը Մովսեսի գավազանը գետի ջրին հարվածեց, որից ոչ միայն գետերի և լճերի, այլ նաև տներում եղած հորերի, կարասների և սափորների ջրերը հրաշքով արյան փոխվեցին, և գետի ձկները սատկելով՝ սկսեցին գարշահոտել: Այս պատիժը յոթ օր տևեց, և քանի որ անկարող եղան խմելու ջուր գտնել, ստիպված նոր հորեր փորեցին, սակայն փարավոնը այս հրաշքը ոչ թե Աստծու կողմից, այլ կախարդության արդյունք համարելով՝ իր կախարդներին հրաման է տալիս նույնպես ջուրը արյուն դարձնել, և սատանայական հնարքով հաջողվում է:

Երկրորդ հարվածը գորտերը եղան: Քանզի Աստծու հրամանով Մովսեսը, փարավոնի մոտ գնալով, ասում է, թե Աստված այսպես է հրամայում. «Թող Իմ ժողովրդին և եթե չթողնես, երկիրդ գորտերով պիտի հարվածեմ»: Եվ երբ փարավոնը չհնազանդվեց, Ահարոնը Մովսեսի գավազանը գետնին է հարվածում, և ջրից իսկույն անհամար գորտեր են գոյանում ու այն աստիճան շատանում, որ Եգիպտոսի ցամաքը պատելուց բացի, տները, սենյակները, մահճակալները, սեղանները և նրանց վրա էլ լցվելով՝ հարձակվում նեղող ոստոստումներով: Այնպես որ բոլոր եգիպտացիները խիստ անհանգստանում են և սարսափելի պատժվում: Սակայն փարավոնին էլ է հաջողվում կախարդների ձեռքով ջրից գորտ հանել տալ:

Դու նայի՛ր փարավոնի թշվառ վիճակին. քանի որ նա համառության մեջ այն աստիճանի է առաջ գնում, որ արդեն գորտերից ոտք դնելու և կանգնելու տեղ չլինելով հանդերձ, Մովսեսին հակառակ՝ գորտերը շատացնելու փորձ է անում: Այո՛, կախարդները գորտերը շատացնում են, սակայն չեն կարողանում դրանք ոչնչացնել, և փարավոնը որքան էլ հպարտ և անաստված էր, սակայն գորտերից այնքան է նեղվում, որ ստիպված կանչում է Մովսեսին ու Ահարոնին և նրանց ասում,

որ աղոթեն առ Աստված, որ գորտերը չքվեն, որպեսզի Իսրայելին թողնի:

Մտապահի՛ր. նա, որ առաջ ասում էր՝ Աստծուն չեմ ճանաչում, պատիժը կրելուն պես խնդրում է, որ աղոթեն առ Աստված, սակայն ոչ թե ուղիղ մտքով, այլ ակամա: Մովսեսը, իմանալով նրա անհավատությունը, պայման է դնում, որ իր ուզած օրը թող գորտերը անհետանան, որպեսզի Աստծու զորությունը իմանա:

Փարավոնը հաջորդ օրն է որոշում, Մովսեսն էլ խոստանում է հաջորդ օրը հարվածը վերացնել: Արդարև, նույն օրը Աստծուն աղաչելով՝ որպես պատիժ առաջ եկած բոլոր գորտերը սատկում են: Սակայն ինչքան էլ դրանք հավաքելով քաղաքից դուրս թափեցին, այդուհանդերձ այդքան անհամար գորտերի դիակների հոտը Եգիպտոսի ժողովրդին խիստ նեղում էր: Հիրավի, Ահարոնի գավազանը գետի ջրերին հարվածելուն պես իսկույն գորտեր գոյացան, բայց դրանց չքանալու համար Մովսեսի աղոթելու ժամանակ դրանք իսկույն չեն անհետանում, այլ սատկելով մեջտեղ են մնում: Քանի որ եթե հանկարծ աներևութանային, կարելի էր կախարդությանը վերագրել, սակայն սատկած դիակների մնալով՝ հասկանում են, որ պատիժ է:

Հիմա մտածի՛ր փարավոնի խարդախ բնավորության մասին. թեպետ գորտերի ներկայությունից խիստ նեղվեց, սակայն դրանց անհետացման համար փոխանակ ինքը աղոթեր, Մովսեսին և Ահարոնին է հանձնարարում աղոթել և աղաչել Աստծուն: Բացի այդ, անմիջապես չի խնդրում, որ աղոթեն, այլ ասում է՝ վաղը աղոթեք: Քանի որ հպարտությունից չի զիջում՝ «մեղա» գոչելով Աստծուն աղոթքով դիմել, նաև անհավատ լինելով, «Հնարավոր է՝ ինքնըստինքյան ոչնչանան» ասելով՝ խնդրում է, որ վաղը աղոթեն:

Երրորդ հարվածը մժեղները եղան: Քանի որ գորտերի անցնելուն պես փարավոնը, իր խոսքին հաստատ չմնալով,

Իսրայելի ժողովրդին չի թողնում: Այն ժամանակ Ահարոնը Մովսեսի գավազանն իսկույն գետնին է հարվածում, և անհամար մժղուկներ են գոյանում և այնպիսի բազմությամբ են հարձակվում մարդկանց և անասունների վրա, որ բոլորն էլ վնասվում են: Թեպետ կախարդները նույնպես փորձում են մուն (մժեղ) գոյացնել, սակայն անկարող լինելով՝ հարկադրված խոստովանում են, որ Աստծու մատը կա այդ գործի մեջ[368]:

Քանի որ նրանք նույնպես իմացան, որ Մովսեսի հրաշքները սատանայական գործեր չեն, այլ այդպիսի հրաշք գործելու համար մարդն աստվածային զորության կարիք ունի: Արդարև, առաջ կախարդների արածները սատանայական հնարքներ էին, սակայն Աստված հատուկ չարգելեց այն, որպեսզի փարավոնի պատիժը սաստկանա, հետո արգելեց, որպեսզի իմանա, որ նրանց գործերը ճշմարիտ հրաշքներ չեն, և անկարող են ամեն անգամ իրենց ցանկացածը գործի դնել: Քանի որ երբ Աստված կամենա, արգելում է սատանային, որ անկարող լինի մարդկանց խաբել:

Չորրորդ հարվածը շնաճանճն էր, որ խիստ կատաղի տեսակից էր. խայթած տեղը վերքեր էին առաջանում: Քանի որ Մովսեսը, փարավոնի մոտ գնալով, պահանջում է, որ Իսրայելի ժողովրդին թողնի, «եթե ոչ, վաղը քո և ժողովրդիդ վրա շնաճանճեր պիտի ուղարկեմ, որոնք իսրայելացիների բնակության վայրերում բնավ չպիտի երևան, որպեսզի իմանաս, որ Աստծու զորությամբ է»: Բայց համառ փարավոնը դարձյալ չի համոզվում: Արդ, Մովսեսի ասածի պես հաջորդ օրը անհամար շնաճանճեր երևացին և փարավոնին ու բոլոր եգիպտացիներին խայթեցին, որոնք վիրավորված խիստ հիվանդացան:

---

368 Մոգերն ասացին փարավոնին. «Սրա մեջ Աստծու մատը խառն է» (*Ելք* 8:19):

Իսկ իսրայելացիների գտնված վայրում շնաճանճեր երբեք չհայտնվեցին, ինչպես որ մյուս հարվածներն էլ նրանց բնավ չպատահեցին: Այս հարվածից փարավոնը հրամայում է, որ Եգիպտոսում իրենց զոհը մատուցեն, սակայն երբ Մովսեսը հայտարարում է, որ առանց անապատ գնալու անհնար է, փարավոնը ակամա խոստանում է հրաման տալ, երբ աղոթեն, և շնաճանճերի պատիժը վերանա: Մովսեսը, իմանալով հանդերձ, որ խաբում է, պատասխանում է, որ կաղոթի, և վաղը շնաճանճը կհեռանա, «սակայն դարձյալ չխաբես»: Իրոք, Մովսեսի աղոթքով շնաճանճը վերացավ, սակայն թագավորը հրաման չտվեց:

Հինգերորդ հարվածը անասունների մահը եղավ: Մովսեսը Աստծու հրամանի համաձայն ասում է փարավոնին. «Ժողովրդին արձակի՛ր, եթե ոչ, դաշտում գտնվող բոլոր անասունները, որոնք եգիպտացիներինն են, կսատկեն, իսկ իսրայելացիների անասունները բնավ որևէ վնաս չեն կրի»: Սակայն փարավոնը դարձյալ չհամոզվեց:

Ուստի հաջորդ օրը եգիպտացիներին պատկանող ինչքան կով, ոչխար, ուղտ, ձի, էշ և այլ անասուններ կային, բոլորն էլ սատկեցին: Ճշմարիտ է, որ նախորդ հարվածներից խիստ շատ նեղություններ կրեցին, սակայն ունեցվածք չկորցրին, բայց այս անգամ նյութական մեծ կորուստ ունեցան: Փարավոնը, տեսնելով, որ միայն եգիպտացիների անասունները սատկեցին, սակայն իսրայելացիների անասուններին բնավ որևէ վնաս չհասավ, իր համառության մեջ առավել ևս կատաղած, իսրայելացիներին չի թողնում:

Վեցերորդ հարվածը մարդկանց և անասունների վրա գոյացած վերքերը եղան, որ խոց կամ ուռուցք են կոչվում: Մովսեսն ու Ահարոնը իրենց ձեռքով հնոցի վառարանից մոխիր վերցրին և փարավոնի ներկայությամբ դեպի վեր՝ երկինք

ցանեցին, և իսկույն բոլոր եգիպտացիների և նրանց անասունների վրա ուռած վերքեր գոյացան. ցավից բոլորն էլ խիստ տագնապեցին: Նույնիսկ կախարդների մարմիններին վերքեր գոյացան. Մովսեսի մոտ այլևս չեն կարողանում մնալ:

Յոթերորդ հարվածը հրե կարկուտը, սաստիկ որոտները և զարհուրելի փայլատակումները եղան: Բայց Մովսեսը մեկ օր առաջ տեղյակ պահեց, որ կարկուտ պետք է տեղա, որպեսզի իրենք և անասունները թաքնվեն: Արդարև, ովքեր, Մովսեսի խոսքին հավատալով, զգուշացան, որևէ վնաս չկրեցին, իսկ ովքեր չհավատալով դաշտերում մնացին, բոլորն էլ ոչնչացան: Քանի որ Մովսեսը ձեռքը դեպի երկինք բարձրացրեց, իսկույն սարսափելի որոտ սկսվեց, և այն աստիճանի խոշոր կարկուտ տեղաց, որի նմանը մինչև այն ժամանակ չէր եղել:

Զարմանալին այն է, որ կարկուտի մեջ կրակ լինելով՝ ջուրը անզոր էր այն մարել, ընդհակառակը, Է՛լ ավելի զորություն տալով կրակին՝ ընկած տեղը այրելով փոշիացնում էր[369]: Փարավոնը սույն հարվածից ոչ միայն զղջում է արտահայտում, այլև Աստծու արդարությունը և իր չարությունը խոստովանելով՝ Մովսեսին և Ահարոնին խնդրում է, որ աղոթեն հարվածի վերանալու համար, որպեսզի ինքն էլ Իսրայելին արձակի:

Մովսեսն էլ պատասխանում է. «Հիմա քաղաքից դուրս գալով՝ ձեռքերս վեր կբարձրացնեմ, որպեսզի պատիժը վերանա, և դու իմանաս, որ ամբողջ աշխարհը Աստծուն է պատկանում: Սակայն գիտեմ, որ դու տակավին Աստծուց չվախեցար»: Արդարև, քաղաքից դուրս գալով՝ Մովսեսը ձեռքերը երկինք բարձրացրեց, և անմիջապես դադարեցին կարկուտը,

---

369 Ամեն ինչ հանգցնող ջրի մեջ կրակն ավելի ուժեղ էր գործում (*Իմաստ.* 16:17):

անձրևն ու որոտի ձայները: Սակայն հանգիստ գտնելուն պես փարավոնն իր սովորական համառությամբ չկամեցավ կատարել խոստումը:

Ութերորդ հարվածը մորեխը եղավ: Քանի որ Մովսեսն ու Ահարոնը, Աստծու հրամանի համաձայն փարավոնի մոտ գնալով, հայտարարում են. «Այսպես է ասում Իսրայելի Աստվածը, թե մինչև ե՞րբ պիտի Ինձնից չամաչես, արձակի՛ր ժողովրդիս, որ Ինձ երկրպագություն մատուցեն, և եթե չարձակես, քո բոլոր երկրներում այնքան շատ մորեխ պիտի գա, որի նմանը ո՛չ դու և ո՛չ էլ քո նախնիներն են տեսել», և չսպասելով պատասխանի՝ հեռանում են:

Այն ժամանակ փարավոնի հպատակները սկսում են գանգատվել. «Մինչև ե՞րբ պիտի կրենք այս հարվածները, արձակի՛ր, որ գնան, որովհետև Եգիպտոսը ավերակ դարձավ»: Հիրավի փարավոնը հակված չէ թողնել Իսրայելին, բայց տեղի տալով իր հպատակների գանգատներին՝ կանչում է Մովսեսին ու Ահարոնին և հրամայում, որ գնան, սակայն միևնույն ժամանակ հարցնում է, թե ովքե՛ր պիտի գնան: Երբ Մովսեսը պատասխանում է. «Մենք բոլորս, մեծ ու փոքր, մեր ամբողջ ունեցվածքով հանդերձ»: «Այդպես չի լինի,– գոռում է փարավոնը,- միայն տղամարդիկ թող գնան», և բարկությամբ վռնդում է նրանց իր մոտից:

Ուստի Մովսեսն Աստծու հրամանով ձեռքը դեպի երկինք բարձրացրեց, և իսկույն այդ օրը՝ ցերեկը և գիշերը, հարավից հողմը փչելով՝ առավոտյան դեմ անհամար քանակությամբ մորեխ է լցվում Եգիպտոսի երկիրը, այնպես որ երկինքն ու երկիրը ծածկվում են, և փարավոնի պալատի ու բոլոր եգիպտացիների տների վրա հարձակվելով՝ որքան ծառեր, տնկիներ կամ բույսեր կային, բոլորն էլ փչացնում են՝ թե՛ ներսում և թե՛ դրսի դաշտերում եղածները: Այս հարվածից փարավոնը շտապ

կանչում է Մովսեսին և Ահարոնին, իբր թե ուղղված և արածի համար անկեղծորեն զղջացած, և ասում է. «Հանցանք գործեցի, այս անգամ էլ ներեցե՛ք իմ հանցանքները և մեկ անգամ էլ աղոթե՛ք Աստծուն, որ մորեխներն անհետացնի»: Եվ երբ Մովսեսն աղոթեց, անմիջապես մի ուժգին քամի սկսեց փչել և մորեխները Կարմիր ծովը թափել, սակայն փարավոնը նորից չկատարեց իր խոստումը:

Նկատի՛ր, որ Աստված Իր զորությունը փարավոնին ցույց տալու համար առյուծ, ինձ կամ մեկ այլ գիշատիչ կամ սարսափազդու գազան չհատկացրեց նրան պատժելու նպատակով, այլ զորտ, մժեղ, շնաճանճ և մորեխ է հատկացնում, որպեսզի իր չափը ճանաչի, որովհետև եթե Աստված կամենա, անգամ ճանճը առյուծի պես վտանգավոր կարող է լինել և մարդուն զգալ տալ իր տկարությունը:

Հիրավի, արարածները Արարչի հետքն են, Աստծու մեծ կարողության ստվերն ու նշանները նրանց մեջ են երևում, և ամեն արարածի մեջ իրեն յուրահատուկ կարողություն գտնվում, թեև իրարից զանազանվում են, սակայն մորեխի վերաբերյալ ընդհանուր կարծիքն այն է, որ նրա գլուխը՝ ձիու գլխի, աչքերը՝ խոզի աչքերի, կուրծքը՝ առյուծի կրծքի, փորը՝ կարիճի փորի, ոտքը՝ էգ ուղտի ոտքի, պոչը՝ օձի պոչի, թևերը թռչունների թևերի են նման:

Իններորդ հարվածը խիստ թանձր խավարը եղավ: Աստծու հրամանի համաձայն երբ Մովսեսը ձեռքը դեպի երկինք բարձրացրեց, իսկույն մի սևաթույր ծխով երկիրը այն աստիճանի թանձր խավար է պատում, որ եգիպտացիները, իրենց գտնվելու վայրից շարժվելու անկարող լինելով, նույնիսկ կրակ կամ ճրագ վառել չեն կարողանում, քանզի օդը խիստ խոնավ և մշուշոտ լինելու պատճառով այն աստիճանի է հասնում, որ խավարը շոշափելի է դառնում:

Բացի այդ, երկյուղից իրենց մտքի և երևակայության առջև այլևայլ զարհուրելի ճիվաղներ են հայտնվում, բոլորի մարմինն ու սիրտը սկսում են դողալ, և իրենց որտեղ գտնվելը չեն հասկանում, և որևէ մեկը անզոր է լինում օգնություն և մխիթարություն գտնել, քանի որ միևնույն սենյակի մեջ գտնվողներից յուրաքանչյուրն էլ իր ընկերոջը տեսնելու անկարողությունից շվարում է: Այս ամենին որպես լրացում՝ այդ թանձր և շոշափելի խավարում իրենց երկյուղը բազմապատկելու համար հանկարծ երբեմն-երբեմն լուսավոր փայլատակումներ են ծագում. հրի մեջ մնացած և տեսակ-տեսակ սարսափազդու տեսարանների առջև կանգնած՝ միևնույն ժամանակ ահավոր և զարհուրելի ձայներ էին լսում[370]:

Խելամո՛ւտ եղիր, ընթերցո՛ղ. երբ եգիպտացիները, Աստծու երկյուղն ու դատաստանը իրենց սրտերից վանելով, տեսակ-տեսակ հարստահարություններով կեղեքում էին Իսրայելի ժողովրդին, երբեք չէին ցանկանում նրանց հառաչանքներին ու ողբերին ականջ դնել և գթություն ու կարեկցություն ցուցաբերել, այս անգամ նրա փոխարեն իրենք էին ենթարկվել մահու չափ վախերի և նեղությունների, նրանց ողբերի և հառաչանքների ձայնը բնավ լսող չկար:

Եվ ինչպես վերոհիշյալ բոլոր հարվածներից իսրայելացիները զերծ և ազատ էին, նույնպես և այս անգամ նրանց բնակության վայրերում երբեք խավար կամ մթություն չեղավ[371]: Իսկ եգիպտացիներն ու փարավոնը երեք օր անոթի և ծարավ այդ խավարի մեջ մնացին: Երեք օր հետո Աստծու հրամանով խավարի վերանալուն պես փարավոնը, Մովսեսին և Ահարոնին

---

370 Նրանց աչքին անժպիտ և խոժոռադեմ ցնորքներ էին երևում (*Իմաստ.* 17:4):

371 Բոլոր իսրայելացիների բոլոր բնակավայրերում լույս էր (*Ելք* 10:23):

կանչելով, հրաման է տալիս, որ գնան Աստծուն զոհ մատուցեն, սակայն իրենց արջառներն ու անասունները Եգիպտոսում մնան:

Մովսեսը համարձակ պատասխանում է. «Ոչ միայն մեր բոլոր անասունները մեզ հետ պիտի տանենք, այլև դու ևս պարտավոր ես մեր Աստծուն զոհ մատուցելու համար մեզ կենդանիներ տալ»: Այս խոսքից բարկանալով՝ փարավոնն ասում է. «Այլևս աչքիս չերևաս, այլապես կմեռնես»: Այն ժամանակ Մովսեսն Աստծու ազդեցությամբ պատասխան է տալիս. «Ասածիդ պես այլևս չեմ գա մոտդ, միայն թե այս կեսգիշեր քո անդրանիկ որդին և բոլոր եգիպտացիների անդրանիկները, ինչպես նաև նրանց անասունների առաջնածինները պիտի մահանան, և ամբողջ Եգիպտոսում այնպիսի լացուկոծ պիտի լինի, որի օրինակը երբեք չի տեսնվել: Իսկ Իսրայելի ժողովրդի մեջ, թե՛ մարդկանց և թե՛ անասուններին ոչ մի վնաս չպատահելով՝ բնավ որևէ ձայն չպիտի լսվի, որպեսզի հասկանաս Աստծու զորությունը, և հպատակներդ պիտի գան ու ինձ երկրպագելով՝ ասեն. «Գնա՛ Եգիպտոսից ժողովրդիդ հետ»: Այս խոսքերից հետո Մովսեսը բարկությամբ դուրս եկավ:

Տասներորդ հարվածը, ուրեմն, եղավ փարավոնի և եգիպտացիների անդրանիկ որդիների, նաև նրանց անասունների առաջին ծնվածների մահը: Սակայն Աստծու հրամանով Մովսեսն իսրայելացիներին նախապես պատվիրում է, որ ամսվա տասներորդ օրվանից սկսած՝ յուրաքանչյուր անձ, իր տան անդամների թվի համեմատ, մի տարեկան անարատ գառ վերցնի, չորս օր կերակրի և ամսի տասնչորսի երեկոյան մորթելով՝ արյան մեջ զոպայի մի փունջ թաթախի, որով տների շեմերի վրա ցանելով՝ նշան դնի և առանց ոսկորը կոտրելու՝ միսը խորովելով ուտեն, մեջքին գոտի կապած, կոշիկները

ոտքերին և գավազանը ձեռքներին՝ շտապ ուտեն, դառնահամ հազարի հետ: Եվ եթե ավելանա, առանց առավոտվա համար պահելու ոսկորներով կրակի մեջ այրեն, և այն գիշեր ոչ ոք տնից դուրս չպիտի գա: Նաև յոթ օր առանց խմորիչի բաղարջ հաց պիտի ուտի, և այդ յոթ օրվա մեջ ոչ մեկի տանը բնավ թթխմոր չպիտի լինի:

Հիմա դու նայի՛ր համառ փարավոնի և բոլոր եգիպտացիների խեղճ և թշվառ վիճակին. քանի որ Իսրայելի ժողովուրդը, վերը նշվածի համաձայն Աստծու հրամանը գործադրելով, ուրախ և զվարթ վիճակում էր, իսկ կեսգիշերին փարավոնի պալատում և եգիպտացիների տներում այնպիսի լացուկոծի ձայն է բարձրանում, որի նմանը բնավ չէր լսվել:

Որովհետև աստվածային կամքով բոլոր եգիպտացիների անդրանիկ որդիները և առաջնածին բոլոր կենդանիները մեռան: Իրոք, ինչպես հայտնել էր Մովսեսը, եգիպտացիների տների այդ ողորմելի տեսարանը բացված ժամանակ՝ նույն գիշերը, իսրայելացիների տներում ոչ մի հիվանդ կամ տկար անձ չի գտնվում:

Հարց ԾԱ. **Տասներորդ հարվածից հետո փարավոնը Իսրայելին Եգիպտոսից հանելու հրաման տվե՞ց Մովսեսին:**

Պատասխան: Հրաման տվեց, սակայն ոչ թե Աստծուց վախենալով կամ ուղիղ սրտով և անկեղծ մտքով, այլ իր կամքից անկախ՝ ստիպված: Քանզի նա, որ Մովսեսին ասել էր. «Էլ ոչ մի անգամ մոտս չգաս, այլապես կմահանաս», այս տասներորդ հարվածից ինքն է կանչում Մովսեսին և Ահարոնին, որպեսզի ստիպի նրանց ժամ առաջ Իսրայելի ժողովրդին իրենց ամբողջ ունեցվածքով, Եգիպտոսից վերցնելով, տանեն, և խնդրում է, որ իր համար էլ աղոթեն Աստծուն: Նմանապես Եգիպտոսի

ժողովուրդը ոտքի է ելնում և սաստիկ թախանձանքներով խնդրում, որ շուտ հեռանան, քանի որ Եգիպտոսում որևէ տուն չկար, որ այն գիշեր մի մարդ մեռած չլիներ: Այդ պատճառով այս անգամ իրենք սկսեցին աղաչել Մովսեսին, որ գնան:

Այստեղ ուշադրությո՛ւն դարձրու Աստծու արդարությանը: Քանի որ երկար ժամանակ էր, որ եգիպտացիները հափշտակել էին իսրայելացիների իրավունքը՝ նրանց առանց վարձատրության և հատուցման չարաչար աշխատեցնելով որպես գերի, ուստի Աստծու հրամանով Մովսեսն իսրայելացիներին նախապես պատվիրել էր, որ յուրաքանչյուր անձ իր դրացուց կամ ծանոթ եգիպտացուց ոսկի, արծաթ, զարդեր և զգեստներ խնդրի և ստանա՝ հայտնելով, որ Աստծուն զոհ մատուցելու պիտի գնա:

Արդ, այն տագնապալի ժամին ինչ խնդրեցին, առանց առարկության իսկույն ստացան, մանավանդ Աստված եգիպտացիների մոտ Իսրայելին փառավորեց, որպեսզի իրավունքը չոտնահարվելու համար նրանց ուզածն առանց խնայելու տան[372]:

Դու տե՛ս Իսրայելի ժողովրդին Աստծու արած ողորմությունը: Նրանք, որ երկար ժամանակ եգիպտացիների պատճառով անտանելի վիշտ և չարչարանք էին քաշել, այժմ վերջիններս զանազան ծանր հարվածների ներքո ընկճված են, իսկ իրենք անվնաս և ուրախ, բազում ունեցվածքով մեկնում են:

Բացի այդ, Իսրայելի որդիները Եգիպտոս գնալիս յոթանասունհինգ հոգի էին, սակայն Եգիպտոսից դուրս գալու ժամանակ, բացի ծերունիներից, մանուկներից և կանանցից, ծառաներից և աղախիններից, միայն պատերազմելու կարող մարդիկ վեց հարյուր հազար հոգի էին: Մանավանդ շատ

---

372 Սրբերին հատուցեց իրենց վաստակի վարձը (*Իմաստ.* 10:17):

եգիպտացիներ, վերոգրյալ հրաշքները տեսնելով, հավատացին Աստծուն և Իսրայելի հետ միասին մեկնեցին:

Ոմանց հաշվարկով հավանաբար երկու միլիոնից ավելի մարդկային բազմության էր հասնում նրանց թիվը: Նաև նրանց ոչխարների, կովերի և այլ կենդանիների թիվը խիստ շատ էր: Եվ քանի որ Աստված ցանկացավ նրանց ոչ թե մոտ և ընդարձակ ճանապարհով տանել, այլ անապատով, ուստի այդքան մեծ բազմությունը կառավարելու համար Աստծու օգնության կարիքն ունենալով՝ Նրա կամքով Իսրայելին առաջնորդելու համար հրեշտակ հատկացվեց, և սա էլ ոչ թե ծածուկ, այլ մի զարմանալի և հայտնի կերպով:

Քանի որ բարձր այունի նման մի ամպ հայտնվելով ցերեկը հովանի էր լինում նրանց՝ արևի ջերմությունից պաշտպանելու համար, իսկ գիշերվա մթության մեջ չմնալու համար լույս էր տալիս[373]: Երբ ամպը շարժվում էր, նրանք նույնպես շարժվում էին, երբ այն կանգնում էր, նրանք էլ կանգնում էին իջևանելու համար: Ահա այդ ամպի միջից ձայն տալով՝ Աստված Իր հրամաններն էր հաղորդում նրանց: Սույն հրաշալի ամպը քառասուն տարի անապատում առաջնորդեց իսրայելացիներին, և երբ իսրայելացիները, Հորդանան գետը անցնելով սուրբ Երուսաղեմի երկիրը մտան, նրանց աչքերի առջևից անմիջապես աներևութացավ:

Արդ, երբ նրանք Եգիպտոսից դուրս եկան, հիշյալ ամպը ուղիղ դեպի անապատ է գնում, մանավանդ Աստված հրամայում է Մովսեսին, որ դեպի անապատ՝ Կարմիր ծովի ափը պիտի գնան:

---

373 Աստված ցերեկը նրանց առաջնորդում էր ամպի այունով, որպեսզի ճանապարհը ցույց տա նրանց, իսկ գիշերը՝ հրե այունով, որպեսզի գիշեր-ցերեկ ուղեցույց ունենան (*Ելք* 13:21):

Հարց ԾԲ. **Իսրայելացիները ո՞ր ամսին և ո՞ր օրը դուրս եկան Եգիպտոսից:**

Պատասխան: Ապրիլ ամսի տասնհինգին: Այս պատճառով հիշյալ ամիսը նրանց համար առաջին ամիսը եղավ: Քանի որ առաջ սեպտեմբերն էր տարեգլուխը, որը աշնան եղանակ է. Աստված նրանց տարեգլուխը դիտմամբ փոխեց, որպեսզի Եգիպտոսից դուրս գալը չմոռանան և մտքերում պահելով՝ Աստծուն շնորհակալ լինեն: Նույնպես այս պատճառով նրանց պատվիրվեց, որ ամեն տարի ապրիլի տասնհինգից սկսած յոթ օր բաղարջ ուտեն, ինչպես որ մինչ այսօր այդ պատվիրանի համեմատ հրեաները բաղարջակերաց տոն են անում:

Հրեաների բաղարջ հաց ուտելը Եգիպտոսում կրած չարչարանքների և այնտեղից շուտափույթ դուրս գալու նշանակն է: Քանի որ ինչպես նկանը (կարկանդակը) մոխրի մեջ է թխվում, նրանք նույնպես չարչարանքների մեջ էին եփվում, և ազատվելով այնքան են շտապում, որ իրենց շաղած խմորը չհասած՝ կտավի մեջ ծրարելով տանում են և բանակատեղիում նկան սարքելով՝ ուտում: Նմանապես վերոհիշյալ գառան խորովածը դառնահամ հազարի հետ ուտելն էլ նույն նշանակությունն ուներ:

Հարց ԾԳ. **Ինչո՞ւ հրաման տրվեց, որ իսրայելացիները տների շեմերին գառան արյունով նշան դնեն:**

Պատասխան: Նրանց տները եգիպտացիների տներից զանազանելու համար: Քանի որ Աստված, հրեշտակին ուղարկելով, պիտի կոտորել տար եգիպտացիների անդրանիկներին, ուստի հրեշտակի եկած ժամանակ նշված տները անցնելով՝ միայն եգիպտացիների տները պիտի մտներ: Ահա այս պատճառով այն գիշերը եբրայերեն «պասեք» կամ «պասքա»

կոչվեց, որը նշանակում է «զատվել», ինչպես որ հայերեն Զատիկ է ասվում:

Սակայն մի՛ կարծեք, որ նշան չտրվեր, հրեշտակը չէր կարող զանազանել, այլ հիշյալ գառը Քրիստոսի օրինակը լինելու համար այս հրամանը տրվեց: Ինչպես ապրիլի տասին գառը պատրաստելով՝ չորս օր հետո մորթեցին և առանց ոսկորները կոտրելու խորովելով կերան, և ապա եգիպտացիների անդրանիկ որդիների կոտորվելուն պես իրենք ազատվեցին, այնպես էլ Քրիստոս մեր Փրկիչը, ապրիլ ամսին՝ ծաղկազարդի օրը, օվսաննայով Երուսաղեմ գալով, չորս օր հետո վերնատան մեջ սուրբ պատարագի խորհուրդը կատարեց, որի հաջորդ օրը խաչի վրա առանց ոսկորը կոտրելու[374] արյուն թափեց և իր անպարտական մահով մեղքի առաջին պատճառին՝ սատանային պատժելով՝ մարդկությանը փրկեց:

Դարձյալ, մեջքներին գոտի կապած, ոտքերին կոշիկ հագած և գավազանը ձեռքին՝ շտապ գառն ուտելը նշանակում էր, որ հաջորդ օրը անպատճառ Եգիպտոսից պետք է դուրս գան, սակայն հոգևոր իմաստով քրիստոնյաների օրինակն է: Քանի որ գոտին քաջություն և արիություն է նշանակում, կոշիկը՝ ճանապարհորդություն, իսկ գավազանը իշխանությունն է հայտնում, որը սուրբ խաչի զորությամբ է լինում: Եվ ինչպես գառան արյունով իսրայելացիների տների դռներին նշան դրվելով՝ նրանք մահվանից ազատվեցին, նույնպես քրիստոնյաները, Քրիստոսի սուրբ արյամբ գնված և սուրբ Խաչի նշանով կնքված լինելով, հոգևոր մահվանից ազատվեցին:

Դարձյալ, բաղարջ հացով գառն ուտելը Քրիստոսի կույս մորից ծնվելու նշանն էր, ինչպես սուրբ պատարագի խորհուրդը

---

[374] Ոչխարի ոսկորները մի՛ ջարդեք (*Ելք* 12:10):

բաղարջ հացով է կատարվում: Իսկ դառնահամ հազար ուտելը Քրիստոսի կրած չարչարանքն էր ցույց տալիս:

Արդ, ինչպես Իսրայելի ժողովուրդը, Քրիստոսի չարչարանքների և սուրբ պատարագի պատկերն ու օրինակը գործադրելով, փարավոնի ձեռքից և Եգիպտոսից ազատվեց ու Երուսաղեմ գնաց, նմանապես քրիստոնյաները, Քրիստոսի օրենքները հավատքով կատարելու ժամանակ սատանայի ձեռքից և դժոխքից ազատվելով, երկնային Երուսաղեմ, այսինքն՝ արքայություն են գնում: Քանզի Եգիպտոսը՝ դժոխքի, փարավոնը՝ սադայելի, իսկ իսրայելացիներին չարչարող եգիպտացիները սատանաների օրինակն են: Պետք է իմանալ, որ Եգիպտոսի բոլոր թագավորների անունը Փարավոն չէր, այլ նրանց առանձին անուններից բացի «փարավոն» բառը որպես տիտղոս էր տրվում նրանց, քանի որ «փարավոն» եգիպտերեն «թագավոր» է նշանակում:

Դարձյալ, քանի որ Աստված Իսրայելի փրկության համար եգիպտացիների անդրանիկներին կոտորեց, այս պատճառով Մովսեսն Աստծու հրամանով իսրայելացիներին պատվիրում է, որ իրենց անդրանիկ որդիներին Աստծուն ընծայելով՝ նրանց փոխարեն մի տարեկան գառ զոհեն, իսկ անկարողները երկու տատրակ կամ աղավնի նվիրեն: Այս մասին տե՛ս Թվոց գրքի երրորդ գլխում, որտեղ գրված է, որ Իսրայելի փոխարեն Իսրայելի անդրանիկ որդիներին՝ ղևտացիներին, մասնավորապես Իրեն կապելով՝ խորանի ծառայությանը հատկացված մի դասակարգ կազմեցին:

Նույնպես եգիպտացիների առաջինը ծնված անասուններին կոտորելու համար Մովսեսն իսրայելացիներին պատվիրում է, որ իրենց անասունների առաջին ծնվածներին Աստծուն նվիրեն որպես ընծա: Իսկ այն կենդանու փոխարեն, որը ուտելու համար անպետք է, ուտելի կենդանի տան

զոհի համար: Այս պատվերը այն նպատակով արվեց, որ Եգիպտոսից հրաշքով իրենց ազատվելը միշտ իրենց մտքում անմոռաց պահելով, Աստծու բարերար ողորմությունը որդուց որդի հիշատակելով՝ միշտ շնորհակալ և գոհ լինեն Աստծուց:

Հարց ԾԴ. **Աստված Իսրայելին ուղիղ և մոտ ճանապարհով Երուսաղեմ տանելու փոխարեն ինչո՞ւ անապատի կողմը թեքեց:**

Պատասխան: Որովհետև հրաշքով Կարմիր ծովով պիտի անցկացներ նրան և փարավոնին էլ այնտեղ պիտի ընկղմեր. բացի այդ, Սինա լեռան վրա օրենքը տալով՝ անապատում զանազան հրաշքներով նոր օրենքի պատկերը պիտի գծեր: Դարձյալ, Քանանի կողմերում կռապաշտ ազգեր կային, և եթե ուղիղ ճանապարհով գնային, շուտով ստիպված պիտի լինեին նրանց հետ պատերազմել, այս պատճառով անապատ ուղղեց, որ հանկարծ թշնամուց վախենալով՝ վերադառնալու մասին չմտածեին:

Այժմ տե՛ս անողորմ և համառ փարավոնի թշվառ վիճակը. նա, որ այդքան հրաշքներ տեսնելուց և հարվածներ ստանալուց հետո, իրոք անուղղելի էր մնացել, երբ տեսավ, որ իսրայելացիները, ընծայաբերության համար եգիպտացիներից բազում ունեցվածք և հարստություն վերցնելով, Եգիպտոսից անվերադարձ մեկնեցին, զոջաց նրանց թողնելու համար և պատերազմի պատրաստությամբ զորքերը ժողովելով՝ Իսրայելի ետևից է շտապում, որպեսզի կա՛մ հետ բերի, կա՛մ նրանց կոտորելով՝ ունեցվածքը հափշտակի[375]:

---

375 Թշնամին ասաց. «Հետապնդեմ ու հասնեմ նրանց, բաժանեմ ավարը և դրանցով հագուրդ տամ ինձ» (*Ելք* 15:9):

Իսրայելացիները, որ Կարմիր ծովի ափին էին իջևանել, փարավոնի գալը տեսնելով, սաստիկ վախենում են և Մովսեսին գանգատվելով՝ ասում են. «Ինչո՞ւ մեզ Եգիպտոսից հանեցիր, մի՞թե այնտեղ գերեզման չկար, որ հիմա անապատում մեզ կոտորել պիտի տաս»: Արդարև, նրանք այս խոսքերով ուրացան Աստծու բարությունն ու զորությունը, քանի որ Եգիպտոսում կատարված այնքան հրաշքները մոռանալով՝ Աստծուց կտրեցին իրենց հույսը: Սակայն Մովսեսը, ապավինելով Աստծուն, նրանց պատասխանում է. «Մի՛ վախեցեք, քանի որ Աստված ձեզ համար պատերազմելու է եգիպտացիների դեմ, և այլևս նրանց չեք տեսնելու»:

Այո՛, Մովսեսի հավատքը կատարյալ էր, և թերևս այս պատճառով քաջալերական այդպիսի խոսքեր ուղղեց ժողովրդին, սակայն մարդկայնորեն խորհելով՝ փրկության միջոց չէր երևում, քանի որ նրանց առջև ծովն էր, հետևում՝ թշնամին, իսկ մի կողմ խույս տալու համար ճանապարհ գտնելն անհնարին էր: Ճշմարիտ է, որ նրանք բազմաթիվ էին, սակայն թշնամուն կանոնավոր դիմադրելու համարձակություն չունեին: Այսուհանդերձ, Աստծու զորությունը մարդկանց համար անհնարին թվացող բաներում հայտնի լինելով, երբ Մովսեսն ի սրտե ջերմորեն աղոթում էր Աստծուն, Աստված հարցնում է Մովսեսին. «Ինչո՞ւ ես աղաղակում Ինձ, ձեռքիդ գավազանով հարվածի՛ր ծովին, որ այն ճեղքվելով՝ ճանապարհ տա Իսրայելին իր միջով անցնելու համար»[376]:

Ուշադրությո՛ւն դարձրու. Մովսեսը, բերանը չբացելով, ի սրտե աղաչում է, սակայն Աստված ասում է. «Ինչո՞ւ ես Ինձ աղաղակում»: Օրինա՛կ վերցրու. քանի որ Մովսեսի միտքը դեպի Աստված էր ուղղված, այդ պատճառով նրա սրտագին

---

[376] Տերն ասաց Մովսեսին. «Ինչո՞ւ ես կանչում ինձ» (*Ելք* 14:15):

պաղատանքը բարձրաձայն աղաղակելու նմանվեց: Քանի որ ընդունելի աղոթքն այն է, երբ մարդը իր միտքն ու սիրտը Աստծուն է ուղղում (աղոթք է մտքի վերացումն առ Աստված): Ուստի Աստծու հրամանի համաձայն՝ Մովսեսն իր գավազանով ծովին հարվածեց, և Աստծու զորությամբ իսկույն մի ուժգին հողմ ծովը երկու մասի բաժանեց, և երկու կողմերը բերդի նման բարձրանալով՝ հրաշալի ձևով ծովի հատակին մի ընդարձակ ճանապարհ բացվեց:

Սակայն քանի որ հրեշտակը ամպի պան նման առաջնորդում էր Իսրայելին, այս անգամ հետևի կողմն անցնելով՝ իսրայելացիների և եգիպտացիների բանակների միջև է կանգնում, իսրայելացիներին՝ լույս, իսկ եգիպտացիներին խավար անելու համար, որպեսզի վերջինները անկարող լինեն առաջ գնալով իսրայելացիների բանակին խառնվել: Այս կերպ Իսրայելի ժողովուրդը այն գիշեր սկսեց դիմացի ափն անցնել, և երբ նրանց վերջին խումբն էլ անցումը վերջացրեց, այն ժամանակ հիշյալ ամպը նորից Իսրայելի բազմության առջևն անցավ:

Երբ լույսը բացվեց, փարավոնը տեսավ, որ ծովը բաժանվել է, և իսրայելացիներն անցնում են հատակի վրայով, ուստի նրանց հասնելու համար, ինքն էլ իր զորքով ծովն է մտնում, և երբ մոտ էին, նրանք բոլորն արդեն ցամաքի վրա ոտք դրեցին: Այդ ժամանակ Աստծու կամքով եգիպտացիներին մի սարսափելի երկյուղ և խառնաշփոթություն է տիրում, որից ո՛չ առաջ և ո՛չ էլ հետ գնալ են կարողանում: Ահա այդ ժամանակ վերջապես իրենց խելքը գլուխները հավաքելով՝ հարկադրված խոստովանում են և ասում. «Իսրայելի առջևից փախչենք, քանի որ Աստված նրանց համար եգիպտացիների դեմ պատերազմում է»[377]:

---

377 Հեռո՛ւ փախչենք իսրայելացիներից, որովհետև Տերը հոգուտ նրանց է պատերազմում եգիպտացիներիս դեմ (*Ելք* 14:25):

Այստեղ արժանի է շատ մեծ ուշադրությամբ խորհել համառ և խստասիրտ փարավոնի ողորմելի վիճակի շուրջ: Նա, ով իսրայելացիներին կոտորելով, նրանց ունեցվածքին տիրանալու տենչանքով էր այրվում, ինքը կորստյան մատնվեց, և Իսրայելը նրանից ավար վերցրեց: Քանի որ մեղքի չափը լրացել, ապաշխարելու ժամանակը՝ անցել, և պատժի ժամանակը հասել էր, Մովսեսը գավազանով ծովին հարվածելուն պես ծովն իսկույն իր բնական ընթացքը և դիրքը ընդունեց՝ փարավոնին իր ամբողջ զորքով և ունեցվածքով ծովի ալիքներում ընկմելով: Հրաշալին այն է, որ ծովի ալիքները նրանց դիակները դեպի իսրայելացիների գտնված ափն էին քշում, և իսրայելացիները վերցնում էին նրանց վրա եղած բոլոր զենքերն ու պատերազմի այլ պարագաները և գործիքները, որոնց կարիքը չափազանց շատ ունեին: Հիմա տե՛ս. մի քիչ առաջ իսրայելացիները Մովսեսի դեմ գանգատվեցին, թե մեզ անապատում կոտորել պիտի տաս, այժմ Աստծու ողորմությամբ կատարված հրաշքը և թշնամու ոչնչացումը տեսնելով՝ բոլորը միասին խիստ ուրախացած՝ սկսում են Աստծուն փառաբանել և գովել: Մովսեսի քույրը՝ Մարիամը, նույնպես բոլոր իսրայելացիների կանանց հետ թմբուկ հարվածելով, Աստծու կարողությունն ու հզոր զորությունն էր գովաբանում[378]:

Այս պարագայում դու մի՛ ասա, թե Աստված ինչո՛ւ չսպանեց փարավոնին, որպեսզի Իսրայելի ժողովուրդը օր առաջ ազատվեր նրա անագորույն ձեռքից: Այո՛, Աստված կարող էր մի րոպեում ջնջել իսրայելացիների բոլոր թշնամիներին, սակայն Նրա համբերությունը, գթությունը, զորությունն ու արդարությունը հայտնի դառնալու, ինչպես նաև փարավոնի չարությունը աշխարհի առջև մերկացնելու համար համբերատարությամբ սպասում է՝ ուրիշների խրատվելու

---

378 Օրինենք Տիրոջը, որ փառքով է փառաբանված (*Ելք* 15:1):

և զգուշանալու համար, որոնք աչք և դատողություն ունեն և այլևս չեն համարձակվի նրա չար օրինակին հետևել:

Քանի որ փարավոնի այնքան երկար ժամանակ ողջ մնալով՝ Աստծու գթությունը, տեսակ-տեսակ հրաշքներ գործելով՝ Նրա մեծ կարողությունը, Իսրայելի ժողովրդին մեծ փառքով Եգիպտոսից հանելով՝ Նրա ողորմությունը և փարավոնին ծովում ընկղմելով՝ Նրա արդարությունը հայտնվեցին, ուստի մարդիկ խրատվելով պետք է հասկանան, որ երբ անգութ և հարստահարիչ բռնակալի ձեռքում իրավունքին հակառակ կեղեքվեն և պատժվեն, առանց հուսահատվելու Աստծուն աղաչելով համբերեն, որպեսզի ի վերջո ուրախության օրեր վայելեն՝ որպես իրենց համբերության արդյունք, ինչպես իսրայելացիները. թեև Եգիպտոսում չափազանց շատ նեղություններ կրեցին, սակայն երբ ազատվեցին, նրանց ուրախությունը և ցնծությունն նույնչափ շատ եղան:

Թող լավ խորհեն նրանք, որոնք Աստծու կամքին և հրամանին հակառակ ընթացք ունեն և չեն ապաշխարում: Քանի որ ինչպես փարավոնը պատժվեց սոսկալի հարվածներով, նույնպես էլ նրանք ուշ կամ շուտ պիտի պատժվեն: Արդարև, համբերող և ողորմած լինելով՝ Աստված մեղավորին անմիջապես չի պատժում, որպեսզի հետ դառնա և ապաշխարի, սակայն նա, ով, Աստծու բարությունը չգնահատելով, օր օրի իր չար ընթացում առաջանում է, անպատճառ մի օր իր գործերի համեմատ կպատժվի: Որքան դանդաղի և ուշանա մեղքի փոխարեն որոշված պատիժը, նույնքան էլ սաստիկ պետք է լինի:

Հարց ԾԵ. **Կարմիր ծովի ափից իսրայելացիները ո՞ր կողմը գնացին:**

Պատասխան: Սուր կոչված անապատը: Երբ երեք օր ճանապարհ գնալուց հետո ջուր չգտան, Մեռա անվամբ վայրը եկան:

Այնտեղ թեև ջուր կար, սակայն այնքան դառն էր, որ հնարավոր չէր խմել: Ուստի սկսեցին Մովսեսի դեմ տրտնջալ, այս պատճառով Մովսեսն այդ տեղը անվանեց «դառնություն»[379]: Արդարև, ժողովուրդը այնտեղ դառնություն ցույց տվեց՝ մոռանալով տեսած հրաշքներն ու Մովսեսի լավությունները: Սակայն նրանց հանցանքին չնայելով՝ Մովսեսը աղաչանքով Աստծուն դիմեց, և Աստծու կողմից մի փայտ հայտնվեց, որը Մովսեսը հենց գցեց ջրի մեջ, Աստծու կամքով դառը ջուրը անուշ ջրի փոխվեց[380]:

Հետո եկան Եղիմ, որտեղ տասներկու աղբյուր և յոթանասուն արմավենի կային: Եվ երբ այնտեղից Սինա անապատն են գալիս, Եգիպտոսից իրենց հետ վերցրած ալյուրը սպառվում է, քանի որ արդեն երեսուն օր էր, ինչ Եգիպտոսից դուրս էին եկել:

Այնտեղ ժողովուրդը Մովսեսի և Ահարոնի դեմ գանգատվում է և ասում. «Ավելի լավ կլիներ եգիպտացիների երկրում Տիրոջ հարվածների զոհը դառնայինք, երբ մսով լի կաթսաների մոտ էինք նստում և կուշտ հաց ուտում, քան բերեիք մեզ այս անապատը, որ ողջ ժողովրդին սովամահ անեիք»: Արդարև, նրանք այն աստիճանի էին գերի դարձել իրենց որկորին, որ համաձայն էին իրենց նախկին՝ հարստահարված վիճակում մեռնել, միայն թե կուշտ հաց ուտեին, ուստի հայտնի էր, որ իրենց միտքը Եգիպտոս վերադառնալ էր:

Այս կետում իսրայելացիները վերջին աստիճանի ապերախտ գտնվեցին: Քանզի Եգիպտոսում իրենց կրած չար-

---

379 Դրա համար Մովսեսն այդ վայրն անվանեց Դառնություն (*Ելք* 15:23):

380 Տերը նրան մի փայտ ցույց տվեց: Մովսեսն այն նետեց ջրի մեջ, և ջուրը քաղցրահամ դարձավ (*Ելք* 15:25):

չարանքը և հրաշալի ձևով ազատվելը չմտաբերելով՝ փոքր և աննշան նեղություն պատահելուն պես Մովսեսին հանցավոր են հանում, թե ինչո՛ւ իրենց հանեց Եգիպտոսից, սակայն քանի որ Մովսեսը Աստծու հրամանով էր հանել, ուստի նրանց գանգատը (անուղղակի) Աստծու դեմ էր:

Թեպետ երբ ջրի պատճառով գանգատ և տրտունջ եղավ, և Մովսեսի աղոթքով դառնահամ ջուրը քաղցրացավ, սակայն այս անգամ նա չի աղոթում, քանի որ նրանց տրտունջը շատ անօրեն և անվայել էր: Սակայն Աստված, Իր գթությամբ նրանց հանցանքին չնայելով, հացի փոխարեն մանանա և մսի փոխարեն լորամարգի տվեց նրանց:

Սակայն ընդունված չէ, որ լորամարգին և մանանան բնական ճանապարհով առաջացան, այլ որպես աստվածային պարգև և շնորհ լինելու ապացույց. Մովսեսին հայտնում է, որ երեկոյան միս, առավոտյան հաց պիտի ուտեն: Արդարև, այն երեկո այնքան առատ լորամարգի է գալիս, որ ամբողջ բնակավայրը շրջապատում են, իսկ հաջորդ օրը առավոտ կանուխ մանանա է տեղում, որը իսրայելացիները տեսնելով և չիմանալով, թե ի՛նչ է այն, միմյանց հարցնում են, թե՝ «Ի՞նչ է սա», երբայերեն «մանհու», այս պատճառով «մանանա» կոչվեց:

Հրաշալին այն է, որ մանանան առաջին անգամ ինչպես հայտնվեց, նույն ձևով էլ շարունակեց ամեն օր երկնքից իջնել, բացի շաբաթ օրվանից, մինչև որ նրանք Երուսաղեմի երկիրը մտան:

Սակայն լորամարգիները միայն երկու անգամ եկան. առաջինը՝ վերոհիշյալ Սին անապատում, երկրորդը՝ «ցանկության գերեզման» կոչված վայրում, ինչպես հայտնում է *Թվոց* 11:34 համարը: Եվ խիստ շատ լինելու պատճառով վանդակներում էին պահում և հետզհետե մորթելով և աղ դնելով՝ երկար ժամանակ լորամորգու միս կերան:

Հարց ԾԶ. **Ի՞նչ էր մանանան, և ինչպե՞ս էին դրանից հաց սարքում:**

Պատասխան: Գինձի սերմի նման կլոր, սպիտակ և քաղցրահամ էր, որ ամեն առավոտ Իսրայելի բնակության վայրի շուրջը տեղում էր եղյամի նման: Սակայն նախ երկրի վրա ցող էր իջնում, մաքրում և սրբում էր այն, որպեսզի մանանայի իջած տեղը մաքուր լիներ, քանի որ արևի ջերմությունից հալվում էր: Զարմանալին այն է, որ ամանով կրակի վրա դնելու ժամանակ հալվելու փոխարեն այնքան էր պնդանում, որ այն կա՛մ սանդի մեջ ծեծելով, կա՛մ ալրաղացով աղալով ալյուր էին սարքում, և կրակի վրա եփելու ժամանակ խտանում էր և շատ լավ ու պատվական հաց էր դառնում:

Եվ քանի որ շաբաթ օրվանից բացի ամեն օր իջնում էր, այս պատճառով ով մեկ օրում օգտագործելու անհրաժեշտ քանակից ավելին հավաքեր, հաջորդ օրը որդնում էր: Միայն ուրբաթ օրը, երկու օրվա համար բավականաչափ հավաքելով, մնում էր առանց որդնելու, որպեսզի շաբաթ օրվա համար ուներ։ Ավելին, ինչ կերակուր որ փափագում էին, մանանայից դրա համն ու հոտն էին առնում, ինչպես որ Դավիթ մարգարեն է այն հիշատակում բոլոր կերակուրների անունով, որ հաստատում է այս կարծիքը:

Սույն պարգևը Աստծու հատուկ խնամքի մի արդյունքն էր, Ահարոնը, Մովսեսի հրամանով մանանան լցնելով մի ոսկյա սափորի մեջ, պահում է, որ չմոռանան Աստծու ողորմությունը: Հոգևոր իմաստով մանանան սուրբ Պատարագի խորհուրդն է հայտնում: Հետո Ռափիդիմ կոչված տեղն են գալիս, և երբ այնտեղ ջուր չեն գտնում, ժողովուրդը նորից սկսում է տրտնջալ և բամբասել Մովսեսից, թե ինչո՛ւ Եգիպտոսից հանեց իրենց, որ անապատում ծարավից կոտորվեն:

Դու նայի՛ր իսրայելացիների չարամտությանը. միշտ Մովսեսի դեմ խոսելու և նրան հանդիմանելու համար պատճառ են փնտրում: Եվ այս անգամ նրանց անհամբերության համար Մովսեսը, Աստծուն դիմելով, աղաղակում է. «Ի՞նչ անեմ այս ժողովրդին, քանզի քիչ մնաց, որ ինձ քարկոծեն»: Թեպետև ջուր խնդրելը հանցանք չէ, քանի որ այնքան մեծ բազմությունն առանց ջրի չի կառավարվի, բայց ասել, թե՝ «Ինչո՞ւ Եգիպտոսից մեզ հանեցիր», մեծ հանցանք էր:

Բացի այդ, նախապես կատարված հրաշքները տեսած լինելով՝ պարտավոր էին աղոթքով Աստծուն դիմել և Մովսեսին էլ միջնորդ ունենալով՝ խոնարհությամբ ջուր խնդրել, քանի որ հրաշքով իրենց անապատ բերած Աստվածն իհարկե կարող էր հոգալ նրանց բոլոր պետքերն ու կարիքները:

Սրա պատճառով որքան էլ ժողովուրդն արժանի էր պատժի, սակայն Աստծու ողորմությունն անչափ էր. առանց նրանց կոպտությանը նայելու՝ Մովսեսին հրամայում է, որ ժողովրդից մի քանի ծերեր վերցնելով՝ Քորեբ լեռան ստորոտը գնա և այնտեղ ջուր բխեցնելու համար գավազանով հարվածի իրեն հայտնած վեմին: Արդարև, հրամանի համաձայն հիշյալ վեմին Մովսեսի հարվածելուն պես իսկույն առատ ջուր է բխում այնտեղից և իսրայելացիների ծարավն ու պապակը լիովին զովացնում:

Զարմանալին այն է, որ սույն ջուրը ոչ միայն այդ բանակատեղիում նրանց կարիքները բավարարեց, այլև հետագայում բնավ չդադարելով՝ գետի նման նրանց հետևից գնում էր, որով անապատի ամբողջ ճանապարհորդության ժամանակ կառավարվեց Իսրայելը:

Խելամո՛ւտ եղիր. Աստված հատկապես հրամայում է, որ ժողովրդի ծերերից մի քանի մարդիկ Մովսեսի հետ լինեն, որպեսզի հրաշալի ձևով վեմից ջրի բխումը տեսնելով՝ ժողովրդի

մոտ վկայություն տան[381], քանի որ Մովսեսին հանիրավի բամբասելով՝ փորձեցին Աստծուն, և Մովսեսի սիրտը վշտացրին: Այս պատճառով այն տեղի անունը Փորձություն և Բամբասանք դրվեց[382]:

Հոգևոր առումով Մովսեսի գավազանը՝ Սուրբ Խաչի, իսկ հիշյալ վեմը Քրիստոսի օրինակն ու պատկերն էր[383]:

Հարց ԾԷ. **Անապատում Իսրայելին թշնամի հանդիպե՞ց:**

Պատասխան: Հանդիպեց, սակայն Մովսեսի աղոթքներով թշնամին պարտվեց: Քանի որ իսրայելացիների բազմությունը դեռ Ռափիդիմում եղած ժամանակ Եսավի սերնդից Ամաղեկի ցեղը մոտենալով ուզում է պատերազմել իսրայելացիների հետ, և Մովսեսի ծառա Հեսուն, զորք հավաքելով, ամաղեկացիների դեմ պատերազմի է ելնում: Մովսեսն իր գավազանով մի բլուր է բարձրանում Ահարոնի և Օվրի հետ, որտեղից երևում էր պատերազմի դաշտը:

Այս պատերազմում Մովսեսը երբ ձեռքերը դեպի երկինք էր պարզում, իսրայելացիների կողմն էր հաղթում, իսկ երբ ներքև էր իջեցնում՝ ամաղեկացիների կողմը: Բայց երբ միշտ դեպի վեր պարզած ժամանակ բազուկները հոգնում են, նրան մի քարի են նստեցնում և մի կողմից՝ Ահարոնը, մյուս կողմից՝ Օվրը՝ ձեռքերը վեր պահելով. Հեսուն ամաղեկացիներին կոտորելով հաղթում է:

Արդարև, Ամաղեկի ցեղը թեև սարսափելի կոտորվեց, սակայն անապատում իսրայելացիների դեմ թշնամական

---

381 Հարվածեց ժայռին, ու ջրեր բխեցին, և գետեր հոսեցին անապատով (*Սաղմ.* 104:41):

382 Նա այդ վայրը կոչեց Փորձություն և Մեղադրանք (*Ելք* 17:7):

383 Այն վեմը ինքը Քրիստոսն էր (*Ա Կորնթ.* 10:4):

դիտավորությամբ առաջինը պատերազմի դուրս գալու պատճառով. Աստված Մովսեսին հրամայում է, որ արձանագրությունների հիշատակարանում նշի և Հեսուին տա, որպեսզի այն չմոռացվի: «Քանի որ Ամաղեկի ցեղը կոտորելով՝ աշխարհի երեսից պիտի բնաջնջեմ»: Իրոք, չորս հարյուր տարի անց այս վճիռը Սավուղ թագավորի ձեռքով գործադրվեց (ինչպես հայտնի է *Ա Թագ.* 13:2-ից): Ըստ որում՝ այս հաղթանակը Աստծու օգնությամբ եղավ, այդ պատճառով Մովսեսը սեղան է կանգնեցնում, սեղանի անունը դնում է «Աստված է հույսս», որպեսզի Աստծու երախտիքն ու բարությունը չմոռացվեն:

Լա՛վ ըմբռնիր, թե արդարի աղոթքը որքա՛ն է ընդունելի, քանի որ Մովսեսի աղոթքով շահեցին այդ հաղթանակը: Այո՛, Մովսեսը ժողովրդի փրկության համար ամեն ժամ աղոթում էր Աստծուն, սակայն այս անգամ հատուկ մի բարձր տեղ բարձրանալով, ձեռքերը դեպի վեր բարձրացրած՝ աղոթում է, որպեսզի ժողովրդին սովորեցնի, որ թշնամուն հաղթելու համար պարտավոր են, իրենց հույսը միշտ Աստծու վրա դնելով, անդադար ի սրտե աղոթել: Քանի որ թշնամու դեմ հաղթանակ տանելը Աստծու օգնության կարոտ գործ է, Աստծու օգնությանն արժանանալը կարոտ է աղոթքի:

Իսկ բարձր տեղ ելնելով աղոթելը աշխարհիկ իրերը մտքից հանել է նշանակում: Ահարոնն ու Օվրը, որոնք ձեռքերը վերև էին պահում, մեզ ուղիղ հավատով և առանց ձանձրանալու աղոթել են սովորեցնում:

Այն օրերին Մովսեսի անները՝ Հոթորը (Հռագուել) լսում է Մովսեսի ձեռքով իսրայելացիների ազատության և կատարված հրաշքների մասին: Եվ քանի որ Մովսեսի կինը և երկու որդիները նրա մոտ էին, Հոթորը նրանց Մովսեսի մոտ է բերում: Մովսեսը պատվով ընդունում է նրան և պատմում Իսրայելի ժողովրդին արած Աստծու ողորմության մասին:

Հոթորը, որ կուռքերի պաշտոնյա քուրմ էր, թողնելով կռապաշտությունը, հավատում է Աստծուն և զոհ է մատուցում, և իր ցեղին էլ հրահանգում է, որ այսուհետև ճշմարիտ Աստծուն երկրպագեն:

Հետո Հոթորը տեսնում է, որ Մովսեսը խիստ հոգնում է ժողովրդի դատերը անձամբ և միայնակ քննելուց, և ժողովուրդը նույնպես, ուստի Մովսեսին խորհուրդ է տալիս կառավարելու մի հեշտ եղանակ գործադրել. այն է՝ ժողովրդի միջից ընտրել հավատարիմ և խոհեմ մարդկանց, որոնք ժողովրդի դատերը կքննեն, և ինքն Աստծու հրամանները նրանց կհաղորդի:

Մովսեսը, իր աներոջ խորհրդի համաձայն, ժողովրդի կառավարման համար հազարապետ, հարյուրապետ, հիսնապետ և տասնապետներ է կարգում, որոնք բարվոք կառավարում էին:

Օրինա՛կ վերցրու Մովսեսի համբերությունից և խոնարհությունից, քանի որ առաջ ժողովրդի այդքան բազմաթիվ դատերը միայնակ կատարելով՝ անգամ չի ձանձրանում, և հետո, երբ Հոթորը կառավարելու ձև է սովորեցնում, հպարտությամբ չի մերժում, այլ սիրով ընդունում և գործադրում է: Այո՛, Մովսեսը Աստծու մարգարեն է, բայց այս պարագայում Աստված Հոթորի միջոցով է նրան ցույց տալիս կառավարման եղանակները: Ուրեմն մարդն ինչքան էլ իմաստուն և իշխանավոր լինի, նորից պարտավոր է ունկնդիր լինել խրատին: Հետո Հոթորը իր բնակավայրն է վերադառնում, իսրայելացիներն էլ Ռափիդիմից շարժվելով՝ Սինա լեռան առաջ են հանգրվանում:

Հարց ԾԸ. **Ո՞վ էր Հոթը:**

Պատասխան: Եսավի ցեղից, Երուսաղեմի գավառին սահմանակից Եդեմի Օստեր կոչված վայրում ապրող խիստ առաքինի և հարուստ մի մարդ էր, մանավանդ աղքատ և անօգնական մարդկանց ամեն ինչով օգնում էր, այնպիսի մի համբավավոր

և անվանի մարդ էր, որ Ս. գիրքը «թագավոր» անվամբ է հիշատակում (*Ծննդ.* 36:33):

Արդարև, Հոբը մարմնականի մեջ որքան էլ բախտավոր էր, Աստծու շնորհներով հոգևոր և առաքինության ճանապարհին նույնքան կատարյալ էր: Այո՛, շատերին էր հրամայում, բայց ոչ թե զրկանքներով և անիրավությամբ, այլ իրավունքով և արդարությամբ: Հարստությունը մեծ էր, բայց ոչ թե իր հաճույքների և զբոսանքների, այլ աղքատներին մխիթարելու համար էր գործածում:

Նա յոթ արու և երեք աղջիկ զավակ ուներ, որոնք միմյանց տները գնալով ուրախ և զվարթ ուտում և խմում էին: Բայց Հոբը, որը վախենում էր Աստծուց, ամեն տեսակ չարությունից հեռու, արդար և հավատարիմ էր, իր որդիների մարմնական ընթացքին և կերուխումներին հետևելը տեսնելով, մտածում էր, որ թերևս նրանք Աստծու հրամաններին հակառակ որևէ մտադրություն ունենան, ուստի միշտ նրանց համար զոհ էր մատուցում Աստծուն[384]:

Թեև Հոբի որդիները չար ճանապարհին չէին, սակայն ուտել-խմելու հետ սեր ունեին, և ընդհանրապես մարմնական ընթացքին հատուկ խնջույքների պակասություն չունեին, ուստի Հոբը նրանց համար Աստծուց ներում է խնդրում: Թող մտածեն նրանք, որոնք ամեն ժամ չարաչար անձնատուր են եղել խնջույքների մեղսալից ընթացքին:

Այստեղ լա՛վ խորհիր. Աստված թե՛ հրեշտակներին և թե՛ մարդկանց արքայության երանական փառքին արժանացնելու համար ստեղծեց, բայց այն հրեշտակները, որոնք հպարտության պատճառով երկնքի բարձունքներից արտաքսվեցին

---

384 Զոհեր էր մատուցում.... նրանց մեղքերի համար: Հոբն ասում էր. «Գուցե իմ զավակներն իրենց մտքում չար բան մտածեցին Աստծու մասին» (*Հոբ* 1:5):

և իրենց կամակոր համառությամբ ոչ միայն անզիջող և անուղղելի մնացին, այլև նախանձից մարդուն էլ երկնքի փառքից զրկելու տենչանքն ունեցան: Ահա նույն անկյալ հրեշտակների պարագլուխը՝ Սադայելը, թեև հաջողեցրեց մարդուն Աստծուն հնազանդվելու արահետից հանել, բայց Աստծու շնորհիվ մարդը ապաշխարությամբ և զղջումով նորից ողորմության և աստվածային փառքին արժանանալու պատճառով չարի կատաղությունն ու մարդատյացությունը ավելացավ:

Մանավանդ ինքը, որ բոլոր հրեշտակների պետն էր, ամբարտավանությամբ այնքան հիմարացավ, որ իր համար ճշմարիտ բարիքը տարբերելու և ընտրելու անկարող, հաստատ մնալով ապստամբության մեջ՝ պարտավորվեց դժոխքի անվախճան տանջանքները կրել, քանի որ հպարտությունը հիմարությունից առաջանալու պատճառով ամեն հպարտի հիմար կամ խելագար է համարվում[385]:

Բացի այդ, մարդը, իր խոնարհությամբ քավություն և թողություն գտնելու համար զղջալով, անկյալ հրեշտակից ավելի իմաստուն համարվեց[386], այս պատճառով էլ թե՛ հոգևոր և թե՛ մարմնավոր գործերում չարն իր ամբողջ զորությամբ ջանում է մարդուն միշտ վնաս և չարիք պատճառել: Մասնավորապես առաքինի և բարեպաշտ մարդկանց համար, որպես մոլեգին հակառակորդ, զանազան որոգայթներ է լարում նրանց դեմ, որպեսզի Աստծու օրենքներին հակառակ ընթացքի մեջ գցելով՝ իր նման ապստամբ դարձնի:

Օրինակ, ահա Հոբ երանելին Աստծուն հաճելի մի անձ է, բայց քանի որ ամեն ինչով բախտավոր էր, սատանան հույս է ունենում, որ եթե նա, մի մեծ դժբախտություն հանդիպելով,

385 Ըստ ասացվածքի՝ ամեն մի հպարտ տգետ է:

386 Աշխարհի որդիները ավելի հնարամիտ են, քան լույսի որդիները իրենց սերնդի մեջ (*Ղուկ.* 16:8):

աղքատանա, ապա կսկսի Աստծու պատվիրաններին կամ օրենքներին հակառակ շարժվել և գործել, ինչպես որ Սուրբ գիրքը ընդարձակորեն ներկայացնում է սատանայի չարամիտ դիտավորությունն ու խոսքերը: Քանի որ նա ասում է. «Մի՞թե Հոբը ձրի է պաշտում Աստծուն»[387]:

Աստված թույլատրեց սատանային, որ նրա վրա տեսակ-տեսակ փորձություններ բերի այն նկատառումով, որ Հոբի առաքինությունը հայտնի դառնա, իսկ չարագործի խարդախությունն ու զզվելիությունը հայտնվելով՝ խայտառակվի:

Այստեղ մտքումդ ունեցի՛ր, թե սատանան որքա՛ն մեծ թշնամի է մարդու համար: Քանի որ երբ նա մի այսպիսի արտոնություն ձեռք բերեց, իսկույն ձեռնամուխ եղավ ոչնչացնելու Հոբի հարստությունը. անմեղ մարդու ծառաներից մեկը շտապ գալիս է և ասում. «Հողը վարելու ժամանակ ավազակները հարձակվեցին մեզ վրա և եզներն ու էշերի հոտը քշեցին տարան, ծառաներիդ կոտորեցին, միայն ես ազատվեցի և եկա քեզ լուր տալու»:

Մինչ այս մեկը խոսում էր, մեկ ուրիշ ծառա գալով հայտնում է. «Երկնքից հուր եկավ, ոչխարների հոտն ու հովիվներին ոչնչացրեց, միայն ես ազատվելով եկա, որ իմաց տամ»: Այս երկրորդ ծառան դեռևս խոսքը չէր ավարտել, երրորդ ծառան աճապարանքով գալիս և գուժում է. «Գողերը, ուղտերի երամակը շրջապատելով, առան և տարան, ուղտապաններին էլ սպանեցին, միայն ես ազատվեցի և եկա, որ քեզ տեղեկացնեմ այդ դեպքի մասին»:

Այս գուժաբերի պատմությունը հազիվ վերջանալու վրա էր, մեկ ուրիշ գուժկան է հասնում և պատմում է. «Որդիներդ և աղջիկներդ իրենց մեծ եղբոր տանը մինչ կերուխումի մեջ

---

387 Մի՞թե Հոբը ձրի է պաշտում Տիրոջը (*Հոբ* 1:9):

էին, հանկարծ անապատից մի սաստիկ փոթորիկ բարձրանալով փլեց տունը, և նրանք բոլորը, փլատակների տակ մնալով, մահացան, միայն ես ազատվեցի, և ահա շտապեցի լուրը հաղորդել քեզ»:

Հոբը, վերոհիշյալ աղետների և ցավագին անցքերի մասին լսելով, հանդերձը պատռեց և գլխի մազերը կտրեց. ապա Աստծուն երկրպագելով՝ պատասխանեց. «Մերկ ծնվեցի և մերկ էլ պիտի գնամ, Աստված տվեց և Աստված էլ վերցրեց, ինչպես Տիրոջը հաճելի էր, այդպես էլ եղավ, թող Նրա անունը օրհնյալ լինի»[388]:

Տե՛ս. չար սատանան կարծում էր, որ եթե Հոբի ունեցվածքին ու հարստությանը վնաս հասցնի, ապա նա անպայման, Աստծու երկյուղը սրտից հանելով, կմեղանչի, սակայն արդար Հոբը Աստծու հրամանին և կամքին ավելի հպատակվեց, Նրա օրհնյալ և սուրբ անունը փառավորելուն պես Աստծու և մարդկանց ոխերիմ հակառակորդն ինքը իր լարած որոգայթի մեջ ընկավ, սակայն դարձյալ չար մտադրությունից հետ չկանգնելով՝ առարկում է, թե՝ «Որքան էլ Հոբի հարստությունը ոչնչացավ, սակայն նրա անձն անվնաս է, եթե անձը կամ մարմինը վնասվի, անպատճառ կմեղանչի»:

Երբ սատանան կրկին թույլտվություն ստացավ նրա մարմնին էլ հարվածել, Հոբի վրա իսկույն գլխից մինչև ոտքերը բորոտանման այնպիսի վերքեր են գոյանում, որոնց գարշահոտությանը ոչ ոք չէր կարողանում դիմանալ, նա ստիպված եղավ բացօթյա մի վայրում՝ աղբանոցի մոտ, նստել և իր վերքերի թարախը խեցիներով քերելով սրբում էր[389]: Երանելին այն-

---

388 Իմ մոր որովայնից ես մերկ դուրս եկա, մերկ էլ կվերադառնամ: Տերը տվեց, Տերն էլ առավ: Ինչպես որ հաճելի էր Տիրոջը: Թող օրհնյալ լինի Տիրոջ անունը (*Հոբ* 1:21-22):

389 Եվ սատանան հեռացավ Տիրոջ առաջից և ոտից գլուխ չարորակ վերքերով պատեց Հոբին: Հոբը, խեցու մի կտոր առնելով, քերում

պիսի անտանելի վիճակի ենթարկվեց, որ որևէ մեկից օգնություն և մխիթարություն ստանալու հույսը կտրեց: Սակայն նա իր միտքը երբեք չի պղտորում և չի դադարում Աստծուց շնորհակալ լինել:

Այս անգամ անիծյալ սատանան Հոբի կնոջն է ձեռքն առնում, որ գոնե նրա միջոցով Հոբին ստիպի մեղանչել Աստծու դեմ: Քանի որ վերոհիշյալ անհանդուրժելի և սրտամաշ վիճակում երկար ժամանակ մնալով՝ կինն էլ, դժբախտ և հուսահատ, Հոբին ասում է. «Ինչքա՞ն պիտի համբերես, Աստծու դեմ մի խո՛սք ասա, որպեսզի մեռնելով ազատվես»: Հոբը, իր կնոջ բերանից այսպիսի մի անօրեն առաջարկ լսելով, հանդիմանությամբ պատասխանում է. «Մի՞թե Աստծու բարիքները ընդունելուց հետո պարտավոր չենք համբերելու այս չարիքներին»[390]:

Արդարև, հիշյալ կինը, այս արդարացի հանդիմանությանը արժանի լինելով, ոչ միայն անմիջապես պապանձվեց, այլև մանավանդ ամենաչար թշնամին գլխիկոր մնաց և խայտառակվեց: Քանի որ ոչ միայն իր նպատակին չհասավ, այլ նաև Հոբի առաքինությունն առավել ևս փայլեց ամբողջ աշխարհի առջև[391]:

Օրինա՛կ վերցրու. Հոբի հարստության կորսվելուց, իր որդիների մահանալուց բացի, մարմինը վիրավոր, բնակավայրը մի աղբակույտ՝ ոչ ոքից օգնություն չի սպասում, բայց դարձյալ իր շնորհակալությունը չընդհատելով՝ միշտ և հանապազ գոհանում է Աստծուց:

էր թարախը. նստում էր աղբյուսում, քաղաքից դուրս (*Հոբ* 2:7):

390 Եթե Տիրոջ ձեռքից բարիքներն ընդունեցինք, չարիքներին չհամբերե՞նք (*Հոբ* 2:10):

391 Իր հետ պատահած բոլոր դեպքերի ժամանակ Հոբն իր շրթունքներով չմեղանչեց Տիրոջ առաջ, ոչ էլ անզգամություն հանդես բերեց Աստծու հանդեպ (*Հոբ* 2:10):

Այս պարագայում մի՛ կարծիր, թե Հոբը, վերոհիշյալ աղետներին ենթարկվելով, թշվառական դարձավ, կամ իր անունն ու պատիվը արատավորվեց, ընդհակառակը, բախտավոր ժամանակների համեմատ համբավը է՛լ ավելի մեծանալով՝ խիստ փառավորվեց: Իրոք, նրա մարմինը միառժամանակ տագնապներ կրեց, սակայն հոգին, Աստծու շնորհներով առավել զարդարվելով, նրա հոգևոր բարեմասնությունները արևի լույսի նման պայծառ փայլեցին:

Որքան էլ անհույս էր մարդկանցից որևէ սփոփանք գտնելու, սակայն Աստված մի այնպիսի ներքին սփոփանք է ընծայում նրան, որ այդ անկրելի ցավերի մեջ կարողացավ անտրտունջ համբերել: Թեև երկար ժամանակ առանց ընկերոջ աղբանոցում մնաց, սակայն ոչ մի րոպե Աստծու երկյուղը սրտից չհանեց, սերն ու միտքը Աստծու վրա հաստատված լինելու համար՝ հրեշտակները հանապազ իրեն ընկերակից էին աներևութապես [392]:

Իշխանական գահին նստած ժամանակ մարդկանց էր հրամայում, տագնապի և նեղության ժամանակ գոհունակությամբ համբերելով՝ սատանային իշխեց և նվաճեց նրան: Քանի որ Հոբի չարչարանքը որքան շատ և ծանր եղավ, նույնքան և ծանր եղավ սատանայի պատիժը, քանի որ Հոբին մեղքի մեջ գցել էր ցանկանում, ընդհակառակը, նրա առաքինությունն ավելանալով՝ ըստ այդմ վարձատրությունն էլ բազմապատկվեց:

Հետո բարեկամները՝ Եղիփազը, Բաղդադը, Սոփարը և Եղիուսը, որոնք իշխում էին Եդոմի մերձակա գավառներում, նրան պատահած դժբախտության լուրը իմանալով, միասին եկան՝ նրան մխիթարելու: Սակայն երանելին այն

---

[392] Տիրոջ հրեշտակների բանակն իր երկյուղածների շուրջն է և պահպանում է նրանց (*Սաղմ.* 33:8):

աստիճանի այլակերպված վիճակի էր մատնվել, որ հեռվից նրան տեսնելով՝ չկարողացան ճանաչել: Ուստի բարձրաձայն արտասվելով՝ իրենց հանդերձներն էին պատռում, գլուխներին մոխիր ցանում և այնպես են ապշում ու դողում, որ յոթ օր ու գիշեր նրա մոտ նստած՝ անկարող են լինում իրենց բերանները բացել:

Այն ժամանակ Հոբն ինքը, սկսելով խոսել, անիծում է իր ծնված օրը: Սակայն մի՛ կարծեք, թե իր վիճակից է դժգոհում, այլ մարդկային ընդհանուր վիճակին նայելով է այդ խոսքն արտասանում: Քանի որ մարդկային ազգը, մեղքի պատճառով արտասուքի այս աշխարհն ընկնելով, ստիպված եղավ նեղություններ և վիշտ կրել, որն աշխարհի սովորական ընթացքն է:

Դու տե՛ս. Հոբի բարեկամները եկել էին՝ նրան մխիթարելու, սակայն նրա խոսքերը լսելով՝ որպես դատախազներ, սկսում են ամեն կերպ խոսքերով ցույց տալ, որ իր հանցանքների պատճառով է այդ վիճակին ենթարկվել. նրան պարզապես մեղավոր մարդու տեղ են դնում: Հոբը ևս նրանց պատասխանում է և, երկուստեք վիճաբանությունն այնքան է երկարում, որ Աստված միջամտում է՝ հայտնելով, որ Հոբի հանցանքի համար չէ կրած տառապանքը, այլ Աստծու մի գաղտնի դատաստանն ու մտադրությունն է:

Հետևաբար, քանի որ նրա բարեկամները հանիրավի դատապարտեցին նրան որպես հանցավորի, Աստծու բարկությունը շարժվում է բարեկամների վրա, և ցանկանում է պատժել նրանց: Արդարև, այս մասին սխալ դատողություններ անելով՝ նրանք մեղանչեցին, սակայն Հոբը, նրանց թերությանը չնայելով, չկամեցավ, որ նրանք պատժվեն: Ուստի Աստված հրամայում է, որ յոթ զվարակ և յոթ խոյ բերեն Հոբի մոտ, որը, նրանց համար ողջակեզ մատուցելով, աղոթի, որպեսզի նրանց հանցանքներին ներում և թողություն շնորհվի (*Հոբ* 42:8):

Հասկանո՞ւմ ես, թե Աստված ինչպե՛ս է փառավորում Իր հավատարիմ ծառային. Հոբի անմեղությունը հայտնելուց բացի, նրա աղոթքով դատախազ և հակառակորդ դարձած բարեկամների մեղքը հաճեց քավել ու անպատիժ թողնել նրանց:

Այս դեպքում մի՛ ասա, թե Աստված սատանային ինչո՛ւ արտոնեց, որ Հոբին այնպիսի դժբախտություն պատճառի: Թեպետ մենք Աստծու գաղտնի խորհուրդները չգիտենք, սակայն փաստերն ի մի բերելով ենք եզրակացնել, որ այդ թույլտվությունը եղավ, որպեսզի փառավորվի Աստծու անունը[393], ավելանա Հոբի վարձը, չար ընթացքի մեջ գտնվող մարդիկ վախենալով ուղղվեն: Քանզի եթե Հոբի նման արդար մարդը վշտերի և ցավերի է ենթարկվում, մեղավորների վիճակն ի՞նչ պիտի լինի, և որ ամեն մարդ, նրա առաքինությունից օրինակ առնելով, ջանա հաղթել սատանային, մանավանդ սրա (սատանայի) հիմար և անզոր լինելը աշխարհի առջև պարզ դարձնելու համար:

Իրոք, եթե նա հիմար չլիներ, չէր համարձակվի Հոբի հետ մաքառել: Քանի որ ինչքան էլ մարդկային ցեղի թշնամին է, բայց հաճույքի համար արդարներին վնասելու կարողություն չունի: Եվ ահա ճիշտ այդ պատճառով Աստված նրան թույլատրեց, որ Հոբի արդարությունը և իր՝ սատանայի չարությունը հայտնի դառնան: Քանի որ Հոբը ոչ միայն իր առաքինությունների համար է Ս. գրքում գովվում, այլև մանավանդ անմեղ լինելով, այդքան վշտերի և տառապանքների համբերելու և առ Աստված ունեցած հավատքը անխախտ

---

393 Թող այդպես փայլի ձեր լույսը մարդկանց առաջ, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը (*Մատթ.* 5:16):

և անսասան պահելու համար, որով մի սքանչելի օրինակ եղավ աշխարհին:

Արդարև, ինչպես ադամանդը հղկվելով ավելի է փայլում, նույնպես և արդար մարդու առաքինությունը. փորձության մեջ հայտնվելով՝ ավելանում է նրա վարձը, և նրան տեսնողները Աստծու սուրբ անունն են փառավորում, որ երբ Նա կամենա, իր հավատարիմ ծառաներին այնքան զորություն կարող է շնորհել, որ մինչև մահու չափ նեղությունները կարողանան սիրով տանել:

Դարձյալ, որպեսզի սատանայի խարդախությունը և առ մարդիկ ունեցած թշնամությունը հայտնի դառնան, և այլևս ոչ ոք նրա չար թելադրանքներին չհետևի, և ոչ ոք նրա զորությունից չվախենա, այլ մանավանդ երկյուղածությամբ Աստծուն ծառայի և հանդիպած փորձություններին համբերելով՝ թե՛ այս աշխարհում և թե՛ հանդերձյալում փառավորվի:

Ինչպես որ Հոբը, թեև ծանր հարվածների ենթարկվեց, բայց համբերությամբ Աստծուց զոհ ու շնորհակալ լինելու համար ոչ միայն իր անձի առողջությունը, այլև նախկինում ունեցածից ավելի հարստություն և փառք ձեռք բերելով՝ Աստված նորից յոթ արու և երեք աղջիկ զավակներ պարգևեց նրան, որով Հոբը մեծապես մխիթարվեց[394]:

Հետո Հոբը հարյուր յոթանասուն տարի ևս կատարյալ բախտավորության մեջ ապրեց, իր թոռներին մինչև չորրորդ սերունդը տեսնելուց հետո երկու հարյուր քառասունութ տարեկանում վախճանվեց, որի պատմությունը ամբողջ մարդկության համար խիստ օգտակար և փրկությամբ լեցուն խրատ եղավ և պիտի լինի հավիտյան:

---

394 Տերը Հոբի կյանքի վերջին շրջանն ավելի օրհնեց, քան առաջինը (*Հոբ* 42:12):

Քանի որ եթե մարդը թագավոր անգամ լինի, որքան էլ նյութական հարստություն, անուն և փառք վաստակի, Հոբին պատահած փորձանքը մտաբերելով, երկյուղածությամբ պարտավորվում է միշտ զգույշ և արթուն մնալ: Այո՛, թող մարդը չիպարտանա ո՛չ իր հարստությամբ, ո՛չ իշխանությամբ, ո՛չ անձի առողջությամբ և ո՛չ էլ նույնիսկ իր զավակներով, քանի որ մարմնական այս բոլոր բարիքները ավազի վրա հիմնված մի խարխուլ շինության նման կարող են հակառակ քամու փչելուն պես ոչնչանալ[395]:

Նմանապես, եթե մեկը զանազան վշտերի և հարվածների ենթարկվի, Հոբի օրինակը աչքի առջև ունենալով, առանց Աստծու ողորմությունից հույսը կտրելու, սիրով և անտրտունջ համբերում է: Քանի որ եթե Աստված կամենա, կարող է մարդուն ամեն փորձանքից էլ փրկել:

Թեպետ Սուրբ գիրքը չի հայտնում, թե Հոբը ինչքան ժամանակ կրեց չարչարանքները, սակայն քանի որ գրված է՝ շատ ժամանակ անցավ[396], ոմանք կարծում են, որ յոթ տարի է եղել, ոմանք ավելի կարճ ժամանակ են ընդունում, հետևաբար ստույգ ոչ ոք չգիտի:

Ուրեմն վերոհիշյալ պատմությունից խրա՛տ ստացիր, ո՛վ ընթերցող, և մի՛ կարծիր, թե միայն մեղավորներն են փորձանքի հանդիպում, այլ սուրբ և արդար մարդիկ ևս վիշտ ու փորձանք են ունենում, բայց ոչ թե մեղքի համար, այլ Աստծուն սիրելի և հաճելի անձեր լինելով՝ այս աշխարհում խրատվում են, որպեսզի մեղքից զգուշանան:

---

395 Անձրևները թափվեցին, գետերը բարձրացան, հողմերը փչեցին և զարկեցին տանը, և նա ընկավ, և նրա կործանումը շատ մեծ եղավ (*Մատթ.* 7:27):

396 Այս դեպքից շատ ժամանակ անցավ (*Հոբ* 2:9):

Հարկավոր է իմանալ, որ սրբերն էլ մարդիկ են, իրենց առաքինությամբ չիպարտանալու համար փորձվում են, կամ եթե փոքրիկ թերություններ ունեն, այս աշխարհում կրած նեղությամբ ներում գտնելով՝ արքայության հավիտենական փառքին և ուրախությանն են արժանանում[397]: Ինչպես նաև շատ հաճախ մեղավորը բախտավոր է լինում, և սա ոչ թե Աստծուն հաճելի լինելու համար է, այլ Աստծու մի գաղտնի և խորհրդավոր դատաստանի:

Քանի որ Աստված արդար լինելով, ինչպես պատժում է բոլոր չարագործներին, նմանապես վարձատրում է բոլոր բարեգործներին: Հնարավոր է, որ մեղավորն էլ երբեմն բարիքներ գործած լինի, սակայն այդ գործած բարիքը նրան արքայության փառքին չի արժանացնում, ուստի այդպիսի աննշան բարիքների փոխարեն Աստված այս աշխարհում հարստություն է տալիս, որպեսզի բազում մեղքերի պատճառով հավիտենական տանջանք տրվի:

Այսպիսով, երբ դու չարագործին որպես հաջողակ ես տեսնում, մի՛ ասա, որ նա Աստծու սիրելին է, այլ ընդհակառակը, Աստված բարկացած լինելով նրան չի խրատում: Քանի որ նա, ով, Աստծու սերը թողնելով, անձնատուր է լինում մարմնավոր ցանկություններին, անարժան է Աստծու ողորմությանը, և Աստված նրան իր կամքին է թողնում, որպեսզի հետո անվախճան թշվառության մատնի[398]:

---

397 Տերը ում սիրում, նրան խրատում է և պատժում է նրան, ում ընդունում է որպես որդու (*Առակ.* 3:12):

398 Նա, ով համբերեց մեծ համբերությամբ կորստյան համար պատրաստված բարկության առարկա անոթների հանդեպ (*Հռոմ.* 9:22):

Մանավանդ Հիսուս Քրիստոսի շնորհներով. առաքինի մարդն արքայություն է ժառանգում, այս պատճառով քրիստոնյա չեղող մարդը թեև բարեգործ իսկ լինի, Աստծու արքայությունը չի կարող ժառանգել, քանի որ միայն բնական օրենքով կամ բնության ազդեցությամբ գործված առաքինությունը չի կարող մարդուն արքայություն տանել:

Ինչպես որ կան մարդիկ, որոնք բնույթով ցանկասեր կամ հեշտասեր չեն, կան ուրիշները, որ գութ ունեն, կան, որոնք աղոթել են սիրում, և սրանց նման այլ մարդիկ էլ կարող են լինել: Արդարև, Աստված այսպիսի վարքի և ընթացքի տեր մարդկանց տալիս է հարստություն, մեծություն և մարմնի առողջություն, որպեսզի արքայությունում նրանց համար այլ վարձատրություն չլինի[399]:

Այսպիսով, դու մի՛ կարծիր, որ երբ մարդու բոլոր ցանկությունները կատարվում են, իր համար բարիք է, ընդհակառակը՝ նրա դատապարտության հայտնի նշանն է այդ[400]: Ինչպես բժիշկները մահվան դատապարտված հիվանդին պատվիրում են իրենց սրտի ուզածը ուտել, բայց առողջացող հիվանդին դեղերի հետ նաև ժուժկալության պատվեր են տալիս, որ չմեռնի: Այս պատճառով սրբերին հանդիպող աղետներն ու վշտերը դեղ և զգուշության խրատներ են համարվում, որպեսզի մեղք գործելով՝ հոգով չմահանան: Այսպիսի նեղությունն աստվածային ողորմություն է, որը Աստված շնորհում է իր սիրելի ծառաներին[401]:

---

399 Որդյա՛կ, հիշի՛ր, որ դու ստացար քո բարիքները այնտեղ, քո կյանքի ընթացքում (*Ղուկ.* 16:25):

400 Ասույթի համաձայն՝ մեղավորների կորստյան բացահայտ նշանն է, երբ նրանց բոլոր ցանկությունները կատարվում են:

401 Քանի որ Աստծուց է այն շնորհը, երբ մեկը հանիրավի վիշտ է կրում բարի խղճով (*Ա Պետ.* 2:19):

Այս առումով շատ մեծ լրջությամբ պիտի խորհես աշխարհի ընթացքի և վիճակի շուրջ, որպեսզի ընդհանրապես չսխալվես, քանի որ աշխարհի զվարճություններն ու նեղությունները միանգամայն փոփոխական են և ոչ թե տևական, ուստի օրինավոր և պատշաճ չէ դրանց համար ուրախանալ կամ տխրել: Ճշմարիտ ուրախությունն ու տրտմությունը երկնքում գտնվողներին է վայել, ինչպես որ այնտեղ սրբերի ուրախությունն ու մեղավորների տրտմությունը անփոփոխ են. արդարները միշտ ուրախ են արքայության մեջ, իսկ մեղավորները՝ միշտ տխուր և տրտում դժոխքում:

Այս պատճառով երկրային իրերի համար ուրախացող կամ տրտմող մարդը հիմար է համարվում: Որովհետև եթե իմանա, որ այս պահին իր վայելած ուրախությունը կամ զվարճությունը վաղը տրտմության է վերածվում, անշուշտ չէր ուրախանա, կամ թե այսօրվա տխրությունը վաղը ուրախության պիտի փոխվի, չէր տրտմի:

Ուստի իմաստուն մարդը նա է, ով այս աշխարհում ո՛չ ուրախանում, ո՛չ էլ տրտմում է, այլ ինքն իրեն Աստծու կամքին հանձնվելով՝ արդար Հոբի նման խոնարհությամբ և համբերությամբ Բարձրյալի հրամանին է սպասում:

Արդարև, արժանի է, որ արդար մարդն ուրախ լինի[402], բայց քանի դեռ մարդն ապրում է աշխարհում, չմեղանչելու համար միշտ երկյուղի մեջ լինելով՝ նրա ուրախությունն ու երջանկությունը կատարյալ չեն համարվում[403]:

---

402 Միշտ ուրա՛խ եղեք Տիրոջով, դարձյալ եմ ասում՝ ուրա՛խ եղեք (Փիլիպ. 4:4):

403 Ծառայեցե՛ք Տիրոջը երկյուղով և ցնծացե՛ք նրա առջև դողալով (*Սաղմ.* 2:11):

Ուրեմն, ո՛վ ընթերցող, եթե փափագում ես արքայության անվախճան ուրախությանն արժանանալ, պարտավոր ես այս աշխարհի անցավոր և անհիմն զվարճություններով չխաբվել և չուրախանալ[404], ինչպես նաև աշխարհի վշտերից երկյուղ կրելով չտրտմել, այլ Աստծուն միշտ հնազանդ և հավատարիմ՝ Նրա սուրբ և պաշտելի կամքը ջանաս կատարել ամենայն երկյուղածությամբ, սիրով և հաստատամիտ համբերությամբ:

404 Իմաստունի սիրտը սգո տանն է, իսկ հիմարի սիրտը՝ ուրախության տանը (*Ժողով*. 7:5):

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐ

Հարց Ա. **Չորրորդ դարն ինչո՞վ է տարբերվում երրորդից:**

Պատասխան: Սինա լեռան վրա Մովսեսին օրենք տրվելով: Քանի որ մարդիկ մինչ այն ժամանակը բնական օրենքներով էին կառավարվում, որ Աստված հաստատել էր մարդու բնության մեջ՝ որպես Իր հավիտենական օրենքների լույսը (թեև աղոտ կերպով):

Չորրորդ դարում նույն Ինքն Աստված, երկու տախտակների վրա գրելով այն, տալիս է Մովսեսին[405], որպեսզի մարդիկ իմանան Աստծու միությունը և Նրա կամքն ու հրամանը: Քանի որ ինչպես պես մարդու արարիչ և նրա էության մեջ բնական օրենք հաստատող Աստված է, նույնպես գրավոր օրենք տվողն ու իսրայելացիների Աստվածը Նա է, որին բոլոր արարածները պարտավոր են հնազանդվել, և օրենքը Նրա հրամանն է, որը մարդիկ բնական կարողությամբ ըմբռնում էին, այնուհետև սկսեցին գրքի մեջ նույնպես կարդալ, որ չմոռանան:

Այս պատճառով իսրայելացիներին պատվիրվեց, որ հիշյալ օրենքը իրենց տների դռների շեմերին գրեն, որպեսզի իրենց մուտք ու ելքի ժամանակ միշտ և շարունակ մտաբերեն օրենքի նկատառումները: Քանի որ օրենքը գրի առնվեց, ուստի և հակառակը վարվող մարդկանց համար հարկավոր եղավ արժանի պատիժն էլ գրի առնել, ուստի միևնույն ժամանակ դատաստանական օրենք ևս տրվեց Մովսեսին:

Մանավանդ գրավոր կամ մովսիսական օրենքի նպատակակետը քրիստոնեական օրենքն էր, ուստի սրա պատկերները խորհրդավորաբար հայտնելու համար այլևայլ սովորություններ, կանոններ և խրատական օրենքներ դրվեցին, որոնք իսրայելացիները գործադրելով՝ իրենց հավատքը և հույսը գալիք

---

405 Դրանք կգրես քո տների մուտքին ու դռների վրա (*Բ Օր.* 6:9):

Մեսիայի վրա էին դրած լինում, և Աստծուն հնազանդություն և հպատակություն հայտնելով հանդերձ՝ տարբերվում էին բոլոր կռապաշտ ազգերից:

Հիշյալ օրենքը քրիստոնեական նոր օրենքից առաջ Մովսեսի ձեռքով տրվելու պատճառով հին և մովսիսական օրենք կոչվեց, նոր օրենքի ստվերն ու նախատիպը լինելու համար նոր օրենքի «ստվերը» կոչվեց, գրված լինելու պատճառով «գրված» օրենք կոչվեց:

Հարց Բ. **Օրենքն ինչպե՞ս տրվեց:**

Պատասխան: Մեծամեծ հրաշքներով, ահավոր ցուցադրումներով և զանազան կարգադրություններով, որպեսզի ժողովուրդը, օրենքի կարևորությունը ըմբռնելով, հակառակ ընթացքով չգնա: Եվ քանի որ Սինա լեռան ստորոտին էին իջևանել, Աստված Մովսեսին լեռը կանչելով, հիշեցնում է նրան մինչ այդ պահը Իսրայելին արած բարերարությունները: Եվ եթե իսրայելացիները միշտ Իրեն հնազանդ մնան, նրանց Իրեն սեփական ժողովուրդ դարձնելու ողորմած և բարձր կամքը հայտնելով՝ Մովսեսին որպես դեսպան ուղարկում է, որ գնա և ժողովրդին հայտնի ու Իրեն պատասխան բերի[406]:

Հետամո՛ւտ եղիր Աստծու ողորմած կարգադրությանը. ինչպես բոլոր մարդկանցից միայն Աբրահամին կանչեց, նույնպես բոլոր ազգերի միջից նրա ցեղին է ցանկանում Իրեն ժողովուրդ դարձնել, սակայն որպեսզի բռնությամբ և ակամա չլինի, նախ Մովսեսին ուղարկում է ժողովրդի մոտ, որ պատասխան ստանա, որպեսզի Նրա հետ դաշինք կապելու ժամանակ

---

406 Այսպես կասես Հակոբի հետնորդներին.... «Դուք ինքներդ տեսաք, թե ինչեր բերեցի եգիպտացիների գլխին, իսկ ձեզ, ինչպես արծիվն է իր թևերի վրա առնում, բարձրացրի ինձ մոտ.... արդ պահե՛ք իմ դրած ուխտը» (*Ելք* 19:3-5):

հաճությամբ և հոժարությամբ հնազանդվելով՝ ժողովուրդը վարձ ստանա:

Այս պատճառով նախկինում գործած բարիքներն է հիշեցնում, որպեսզի դրանց շուրջ խորհելով՝ ապագայում տրվելիք բարիքներին և ողորմությանը հավատ ընծայեն և միշտ հույսով հնազանդության մեջ մնան կատարյալ օրինապահությամբ:

Քանի որ Նա է այն բարեգութ Աստվածը, որն ինչպես արծիվը իր ձագերին թևերի վրա է կրում, այնպես էլ Ինքն ազատեց իսրայելացիներին Եգիպտոսից և փարավոնի ձեռքից[407]: Ասում են, թե արծիվը իր ձագին թշնամուց փախցնելու ժամանակ իր թևերի վրա առնելով է թռչում, քանի որ իրենից բարձր թռչող թռչուն չկա, բայց մյուս թռչունները, իրենցից բարձր թռչող թռչուններից վախենալով, թռչելու ժամանակ իրենց ձագերին ոտքերի արանքում են պահում:

Երբ Մովսեսը, լեռից իջնելով, ժողովրդի ծերերին մի վայրում հավաքեց, Աստծու հրամանները մեկ առ մեկ բացատրեց նրանց, որոնք էլ միաբանված խոստացան և հանձն առան գործադրել Աստծու հրամանները ու Նրա պատվիրաններին և օրենքներին միշտ հնազանդվել[408]: Մովսեսը նույն օրը լեռը բարձրացավ և ժողովրդի պատասխանը տարավ առ Աստված[409]:

Այո՛, թեև ժողովրդի միտքը հայտնի է Աստծուն, բայց ինչպես Մովսեսը Աստծու խոսքը տարավ ժողովրդին, նույնպես էլ ժողովրդի խոսքն է տանում Աստծուն, որպեսզի ժողովուրդն իր հանդիսավոր խոստումը չդրժի: Եվ քանի որ Մովսեսը Աստծու և ժողովրդի միջև որպես դեսպան ներկայացավ, Աստված

---

407 Իր ձագերին թևի տակ առնող արծվի նման գթաց, տարածեց իր թևերն ու ընդունեց նրան (*Բ Օր.* 32:11):

408 Ժողովուրդը միահամուռ պատասխան տվեց ու ասաց. «Այն ամենը, ինչ ասել է Աստված, կկատարենք» (*Ելք* 19:8):

409 Մովսեսը ժողովրդի ասածը հաղորդեց Աստծուն (*Ելք* 19:8):

նրան հայտնում է, թե՝ «Ահավասիկ Ես ամպի միջից քեզ հետ պիտի խոսեմ, որպեսզի քեզ հավատան»:

Նայի՛ր թե Աստված ինչպե՛ս է փառավորում Իր հավատարիմ ծառային, քանի որ մինչ այն ժամը Մովսեսի հետ առանձին էր խոսում, այս անգամ խոստանում է հայտնապես խոսել, որպեսզի ժողովուրդը, նրա պատիվը և հարգանքը իմանալով, հնազանդվի: Մովսեսը, լեռից իջնելով, այս անգամ ժողովրդին Աստծու հրամանի համաձայն պատվիրում է, որ իրենց զգեստները լվանան, քանի որ երեք օր հետո Աստված Սինա լեռան վրա պիտի իջնի, և չլինի թե որևէ մեկն այդ ժամանակ լեռը ելնի կամ դրան մոտենա, լինի մարդ թե անասուն, պիտի քարկոծվի և նետահար մեռնի[410]: Դրա համար էլ լեռան շուրջը սահման է գծում, որպեսզի ոչ ոք դրանից առաջ չանցնի: Ուստի տրված պատվիրանի համաձայն պատրաստվելով՝ ժողովուրդը երրորդ օրը կանուխ լեռան վրա որոտման ձայն է լսվում, փայլատակումներ և մեգախառը ամպ է երևում, և փողի սաստիկ ձայներ են հնչում. լեռն առհասարակ հնոցի նման ծխի մեջ է, քանի որ Աստված հրով լեռան վրա է իջնում[411]:

Մովսեսը ժողովրդին լեռան շուրջն է կանգնեցնում, որպեսզի Աստծու հրամանը լսեն: Իսրայելացիները, հիշյալ նշանները տեսնելով և որոտումների ձայները լսելով, սաստիկ վախով և սարսափով են պատվում: Այդ նշանները բոլորին երևալու ժամանակ Աստված, Մովսեսին լեռը կանչելով, նորից հրահանգում է, որ ժողովուրդը չհամարձակվի լեռանը մոտենալ, և հետո Ահարոնին էլ իր հետ վերցնի ու լեռը բարձրանա: Մովսեսը,

---

410 Զգո՛ւյշ եղեք, լեռան վրա մարդ չբարձրանա (*Ելք* 19:12):

411 Երրորդ օրն առավոտյան Սինա լեռան վրա որոտներ լսվեցին, փայլատակումներ ու միգախառն ամպ երևաց.... Սինա լեռն ամբողջովին ծխում էր, քանի որ Աստված նրա վրա իջել էր իբրև հուր (*Ելք* 19:16, 18):

սույն հրամանի համաձան լեռից իջնելով, պատվիրում է ժողովրդին և Ահարոնի հետ բարձրանում լեռը:

Խորհի՛ր, ինչպես թագավորի հրովարտակը կարդալու ժամանակ բոլորին ծանուցվում է, որ զան ու լսեն, որպեսզի հրամանին հակառակ ընթացքի մեջ չլինեն, նույնպես և Աստված, քանի որ Իր հրամանները մարդկանց պիտի հայտներ, այդպիսի հանդիսավոր նշաններ են լինում, որպեսզի ամեն մարդ երկյուղով և ուշադրությամբ լսի, որպեսզի հրամանին հակառակ վարվելով՝ չպատժվի:

Արդ, Մովսեսը և Ահարոնը լեռան վրա ամպի մեջ էին, Սինա լեռն ամբողջովին ծխի մեջ էր ընկղմված, փայլատակումները և ահավոր որոտումների և փողերի ձայները հետզհետե ավելի էին ահագնանում, և երբ ժողովուրդը ներքևում երկյուղով պաշարված էր, Աստված խոսում և օրենքներն է տալիս Մովսեսին ու Ահարոնին, նաև իսրայելացիներին հատուկ դատաստանների վերաբերյալ մի քանի կանոններ և իրենց ներքին սովորությունների պատվերներ է տալիս, բայց ոչ թե գաղտնի կերպով նրանց մտքերի վրա ազդելով, այլ հայտնապես և մեծաձայն բարբառով[412], ինչի մասին քսանից մինչև քսանչորսերորդ գլխի մեջ ընդարձակորեն գրված է (Ելք): Հետո երբ Մովսեսն ու Ահարոնը, լեռից իջնելով, հաղորդում են Աստծու հրամանները, ժողովուրդը նորից կատարյալ հնազանդություն է խոստանում[413]: Այն ժամանակ Մովսեսը գրի է առնում օրենքը, ինչպես որ Աստված հրամայել էր իրեն:

Մովսեսը ժողովրդի հնազանդությունը ցույց տալու համար, որպես ապացույց իսրայելացիների տասներկու

---

412 Տերը հայտնեց հետևյալ պատգամները՝ ասելով. «Ե՛ս եմ քո Տեր Աստվածը» (*Ելք* 20:1):

413 Կկատարենք բոլոր այն պատգամները, որ տվել էր Տերը, կենթարկվենք դրանց (*Ելք* 24:3):

ցեղերի անունով տասներկու քարեր վերցնելով, սեղան է շինում և նրանց անդրանիկ որդիներին տանելով՝ ամբողջ ժողովրդի փոխարեն նրանց զոհեր է մատուցել տալիս սեղանի վրա, քանի որ մինչ այն ժամանակ Ահարոնը տակավին քահանա չէր:

Մովսեսը, զոհի արյունից մի ամանի մեջ վերցնելով, մի քիչ ջուր է խառնում, որպեսզի չմակարդվի, և դրա կեսը սեղանի առջև ցողելով՝ կարդում է օրենքը ի լուր ժողովրդի: Ունկնդրությունից հետո երբ ժողովուրդը հանդիսավորապես հայտարարում է, թե Աստծու հրամաններին և օրենքներին պիտի հնազանդվի, այն ժամանակ Մովսեսը արյան մնացած մասը ժողովրդի վրա է ցողում՝ ասելով. «Ահա այս է ուխտի արյունը, որով Աստված ձեզ հետ ուխտ կապեց»[414]:

Արդարև, Աստված ուխտով իսրայելացիներին Իրեն սեփական ժողովուրդ ընտրեց, սակայն քանի որ Աստծու ժողովրդի հատուկ արտոնությունն է Նրա անվախճան թագավորությունը ժառանգելը, իսկ Աստծու արքայությունը սրբությամբ կարելի է մտնել, և սրբությունն էլ Աստծու հաստատած օրենքներին հնազանդվելն է, և օրենքի լրումն էլ Մեսիան է[415], որպես նոր օրենքի նախատիպ, քահանայական պատարագի և այլ ծիսական արարողությունների հրահանգներ ու պատվերներ տրվեցին, որոնք գործադրելով իսրայելացիները պիտի սրբվեին արքայությանը արժանանալու համար: Քանի որ ոչ թե մովսիսական օրենքի զորությամբ, այլ Հիսուս Քրիստոսի շնորհիվ և Նրա տված ավետարանական օրենքներով մարդիկ կարող են Աստծու արքայությունը ժառանգել:

Այո՛, հին օրենքը Աստծու հրամանն է, որոնք գործադրող մարդիկ Աստծուն հաճելի էին դառնում, բայց պայմանով, որ

---

414 Ասաց. «Սա այն ուխտի արյունն է, որ կնքեց Տերը ձեզ հետ, որ կատարեք նրա բոլոր պատգամները (*Ելք* 24:8):

415 Քրիստոսն է օրենքի վախճանը (*Հռոմ.* 10:4):

դրանք պիտի պետք գային, երբ Մեսիային հավատալով՝ Նրա շնորհի վրա դնեին իրենց ամբողջ հույսը: Այս պատճառով նոր օրենքի կատարելության հետ համեմատած՝ հին օրենքի անկատարությունը հայտնված է Ս. գրքում[416]: Քանի որ ինչպես նկարիչները իրենց նկարելիք պատկերը նախ մատիտով կամ կավիճով գծանկարում են և ապա զանազան գույներով կատարելության հասցնում, նմանապես հին օրենքը, նոր օրենքի նախատիպը կամ ստվերը[417] լինելով, Հիսուս Քրիստոսի գալստյամբ կատարելագործվելը սուրբ Ավետարանում ենք կարդում[418]:

Արդ, Աստծու սուրբ ժողովուրդը հոգևոր թագավորության և քահանայության մեջ Աստծու շնորհով փառավորված քրիստոնյա ժողովուրդն է[419]: Եվ քանի որ Աստված իսրայելացիներին ընտրեց որպես Իր սեփական ժողովուրդ, այս պատճառով նրանց վրա թագավոր չի կարգում, քանզի Աստված Ինքն է նրանց Թագավորը[420]: Թեպետ բոլորի թագավորը և բոլորին իշխանությամբ կառավարողը Աստված է, բայց իսրայելացիներին օրենք տալով՝ միայն նրանց հետ ուխտ հաստատած լինելու համար մասնավորապես նրանց Թագավորը համարվեց:

---

416 Այդ էր պատճառը, որ նրանց տվեցի հրամաններ, որ բարի չէին, և օրենքներ, որոնցով չէին կարող ապրել (*Եզեկ.* 20:25):

417 Արդարև, գալիք բարիքների ստվերն էր օրենքը և ոչ թե իրողությունների բուն կերպարանքը (*Եբր.* 10:1):

418 Մի՛ կարծեք, թե Օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա, չեկա ջնջելու, այլ լրացնելու (*Մատթ.* 5:17):

419 Բայց դուք ընտիր ցեղ եք, թագավորություն, քահանայություն, սուրբ ազգ, Աստծու սեփական ժողովուրդ (*Ա Պետ.* 2:9):

420 Նրանք պիտի գիտենան, որ ե՛ս եմ իրենց Տեր Աստվածը (*Ելք* 29:46):

Հարց Գ. **Ինչո՞ւ Մովսեսը զոհի արյունը ցողեց սեղանի առջև և ժողովրդի վրա:**

Պատասխան: Իսրայելի ժողովրդի հետ Աստծու կապած ուխտը հաստատելու համար: Քանի որ այդ ուխտը Աստծու և Իսրայելի ժողովրդի միջև եղավ, բայց Աստծու անտեսանելի լինելու պատճառով արյունը սեղանի առջև է ցողում, որպես թե Նրա ներկայությամբ ցողված համարվի, որպեսզի հայտնի լինի, որ Աստված Իր խոստմանը հավատարիմ է:

Նմանապես արյան մնացյալ մասը ժողովրդի վրա ցողելը հայտնում է, որ եթե ժողովուրդը ուխտը դրժելով չկատարի հնազանդվելու պարտականությունը, հանցավոր մարդասպան համարվելով, իր արյունը մտած կլինի:

Ինչպես Աբրահամի հետ Աստծու արած ուխտը պատարագով (ընծաներով) հաստատվեց, նմանապես մեր Տեր Հիսուս Քրիստոսը Իր պատվական և սուրբ արյունով քրիստոնյաների հետ ուխտ հաստատեց[421], քանի որ այդ զոհի արյունը Քրիստոսի արյան օրինակն էր:

Արդ, ուխտը օրինավոր է. ով այդ ուխտին հակառակ է գործում, արդարապես պիտի պատժվի: Այդ պատճառով Իսրայելի ժողովրդի Բաբելոն գերեվարվելու պատճառը իրենց հետ Աստծու կապած ուխտին հակառակ ընթացքն էր, ինչպես Երեմիա մարգարեն որոշակի հայտնում է[422]:

---

421 Այդ է նոր ուխտի իմ արյունը (*Մատթ.* 26:28):

422 Ձեզ պիտի ցրեմ աշխարհի բոլոր թագավորությունների մեջ: Այն մարդկանց, որոնք խախտեցին իմ ուխտը (Երեմ. 34:18):

Հարց Դ. **Մովսեսը և Ահարոնը լեռից իջնելուց հետո նորից բարձրացա՞ն այնտեղ:**

Պատասխան: Այո՛, շատերը բաձրացան: Քանի որ Աստծու հրամանով Մովսեսը և Ահարոնը, ինչպես նաև նրա երկու որդիները՝ Նաբադը և Աբիուդը, և ժողովրդի իմաստուն ծերերից յոթանասուն հոգի միասին լեռը բարձրացան և տեսան այն տեղը, որտեղ կանգնել էր Աստված, և որը աղյուսաձև երկնագույն շափյուղայից էր: Բայց մի՛ կարծիր, թե Աստված նյութական տեղի կարիքն ունի և մարդկանց նման կանգնելու տեղ ունի, այլ այդ կերպ նշաններն այնտեղ տեսանելի կային և Մովսեսի հետ խոսելը հայտնելու համար էին գործածվում: Այն դեղին գոհարի տեսքով պատկերված լինելը Նրա մեծ փառքն է հայտնում:

Սակայն մի՛ կյարծիր, թե Աստծու փառքը մարմնավոր է, այլ մարդկանց աչքում գոհարն ու ադամանդը մեծահարգ, գեղեցկագույն և պատվավոր լինելու պատճառով Աստված Իր փառքը նրանց միջոցով է հայտնում: Քանի որ երևույթները տեղի են ունենում մարդկանց ընկալմանը համապատասխան: Ինչպես որ նույն տեղը աղյուսաձև երևաց, որպեսզի իսրայելացիները Աստծու ողորմությունը հասկանան: Քանի որ Եգիպտոսում ցեխ կոխոտելով աղյուս պատրաստելուց իրենց ազատելուց և օր օրի փառքից փառք բարձրացնելուց հետո ցեխը կարծես թե ադամանդի էր վերածել:

Դարձյալ, ինչպես ծովը երկնագույն է երևում, նույնպես այդ տեղի երկնագույն երևալը իսրայելացիների՝ ծովով անցնելով ազատվելն է հայտնում: Նաև երկնքի նման պայծառ երևումն է հայտնում, որ եթե Աստծուն հնազանդ մնային, ապա երկնքի փառքին և արքայության անվախճան շքեղությանը արժանի պիտի լինեին: Իսկ Աստծու «ոտքերի տեղ» բացատրությունը Աստծու Բանի մարմնանալու նշանակն էր:

Ահա այս պատճառով իսրայելացիների իմաստուն ծերերին ցույց է տալիս այն տեղը, որպեսզի գնան և ժողովրդին հայտնեն, և նրանք ևս գոհ լինելով միշտ հնազանդության մեջ մնան՝ իրենց խոստման համաձայն: Ապա լեռից իջնելուց և ճաշելուց հետո Մովսեսը, Աստծու հրամանի համաձայն, իր ծառայի՝ Հեսուի հետ նորից լեռն է բարձրանում. ամպը, իրենց պատելով, այնտեղ նրանց պահում է վեց օր: Յոթերորդ օրը Աստված ամպի միջից Մովսեսին դեպի լեռան բարձունքն է կանչում, և այնտեղ մնում է քառասուն օր և քառասուն գիշեր առանց ուտելու[423]:

Սակայն Հեսուն Մովսեսի հետ վերև չելավ, այլ մնաց իր տեղում: Աստծու փառքի տեսիլքը՝ բորբոքված հրի տեսքով, լեռան գագաթից տեսանելի էր ամբողջ ժողովրդին[424], որ հասկանան, թե Աստված այնտեղ է և որ նորից Մովսեսի հետ է խոսում ու պատվերներ պետք է տա և մանավանդ նրա վերադարձի հույսը չկտրի: Հիշյալ տեսիլքը կամ տեսարանը քառասուն օր ու գիշեր նույն ձևով մնաց, քանի որ Մովսեսի լեռից իջնելու ժամանակ դեռևս այդ հրեղեն նշանը կար, ինչպես որ հայտնում է Բ Օրինաց 9:15 համարում:

Այն քառասուն օրվա ընթացքում Աստված Մովսեսին հայտնում էր, թե ի՛նչ տեսք պետք է ունենան Ուխտի տապանակը և վկայության խորանը, որում պիտի պահվեր Ուխտի տապանակը, և այդ երկուսն էլ Մովսեսը պիտի շինել տար: Նմանապես այնտեղ Մովսեսին հայտնվեց, որ Ահարոնը և նրա զավակները քահանաներ պիտի լինեն, և թե ինչպիսին պիտի լինեն նրանց զգեստները քահանայագործելու ժամանակ: Այնտեղ՝ այդ ժամանակ Աստված խոսեց մատուցելիք զոհերի

---

423 Մովսեսը լեռան վրա մնաց քառասուն օր ու քառասուն գիշեր (*Ելք* 24:18):

424 Տիրոջ փառքի տեսիլքը բորբոքված կրակի նման (*Ելք* 24:18):

և դրանք մատուցելու սովորության և անհրաժեշտ ու կարևոր պայմանների մասին:

Եվ դարձյալ, Մովսեսին քարերից պատրաստված երկու տախտակներ է տալիս, որոնց վրա Աստված Տասնաբանյա օրենքն էր գրել[425], ինչպես որ *Ելք* 25-32-րդ գլուխներում հիշյալ կետերի մասին ամեն ոք կարող է կարդալ[426]:

Ահավասիկ Տասնաբանյա օրենքի համառոտ բովանդակությունը.

Առաջին՝ ճանաչել Աստծու միակը լինելը, երկրպագել միայն Աստծուն, ամեն ինչից առավել Նրան սիրել և կուռքերին բնավ երկրպագություն չանել[427]:

Երկրորդ՝ Աստծու անվամբ սուտ չերդվել:

Երրորդ՝ սուրբ պահել շաբաթ օրը. այս պատվիրանը կիրակիի առումով փոխվեց, քանի որ այն օրը Հիսուս Փրկիչը հարություն առավ:

Չորրորդ՝ պատիվ և հարգանք ընծայել հորը և մորը:

Հինգերորդ՝ մարդ չսպանել:

Վեցերորդ՝ չշնանալ:

Յոթերորդ՝ գողություն չանել:

Ութերորդ՝ սուտ վկայություն չտալ:

Իններորդ և տասներորդ՝ ուրիշների ունեցվածքներին և կնոջը ցանկության աչքով չնայել:

---

425 Քեզ պիտի տամ քարե այն տախտակները, որոնց վրա գրելու եմ իմ օրենքներն ու պատվիրանները (*Ելք* 24:12):

426 Տերը խոսեց Մովսեսի հետ (*Ելք* 25):

427 Լսի՛ր, Իսրայե՛լ, մեր Տեր Աստվածը մեկ Տեր է (*Բ Օր.* 6:4):

Հարց Ե. **Մովսեսի քառասուն օր լեռան վրա եղած ժամանակ ժողովուրդը հնազանդ մնա՞ց:**

Պատասխան: Ո՛չ, ժողովուրդն իր խոստմանը հավատարիմ չմնաց: Արդարև, թեև Մովսեսը ժողովրդի ծերերին պատվիրել էր, որ այնտեղ սպասեն մինչև իր վերադարձը և եթե դատ ունենան, Ահարոնին և Օվրին դիմեն, սակայն քանի որ նրանք աշխարհիկ ընթացքի սիրահար էին, օր առաջ Երուսաղեմ հասնելու և այնտեղ հանգիստ կյանք վարելու տենչանքով Մովսեսի քառասուն օր հապաղման համար սաստիկ նեղվում են և հիմարաբար կարծում, թե այլևս չպիտի վերադառնա, և Աստված էլ եթե չօգնի, անապատում խեղճ և թշվառ պիտի մնան:

Այս պատճառով բազմությամբ հարձակվում են Ահարոնի վրա և նրանից «Աստված» ուզում[428], որ իրենց առաջնորդի, քանի որ գիտեին, եթե ճանապարհին թշնամու պատահեն, ապա առանց Աստծու չեն կարող ազատվել:

Դու տե՛ս, անհամբերության պատճառով որքա՛ն շուտ մոռացան Աստծու բարերարությունը, ինչպես ուրացությամբ մեղանչեցին Նրա հավիտենական գոյության և բարերարության դեմ՝ կուռք խնդրելով: Նմանապես, Մովսեսին էլ օտար մարդ համարելով՝ ասում են. «Այն Մովսեսը, որը մեզ Եգիպտոսից հանեց, չգիտենք, թե ի՛նչ եղավ», և այսպիսով ուրանում նրա լավությունը[429]:

Թեպետ Ահարոնը հավանություն չի տալիս ժողովրդի այսպիսի ապօրինի առաջարկին, սակայն նրանց անհնազանդությունն ու ըմբոստությունը իմանալով՝ համաձայնվում է

---

428 Մեզ առաջնորդող աստվածնե՛ր ստեղծիր (*Ելք* 32:1):

429 Որովհետև չգիտենք, թե ինչ եղավ այն մարդը՝ Մովսեսը, որ մեզ Եգիպտոսից դուրս բերեց (*Ելք* 32:1):

կատարել նրանց ցանկությունը, սակայն ոչ թե կուռք պատրաստելու, մի հնարքով ժամանակ շահելու միջոց է փնտրում, մինչև որ Մովսեսը լեռից իջնի: Այս պատճառով նրանց կանանց և աղջիկների ոսկե օղերն է պահանջում, որպեսզի իրենց ապրանքները կամ ունեցվածքները խնայելով՝ հետ կանգնեն իրենց պահանջից, սակայն, դժբախտաբար, տղամարդիկ և կանայք, կուռքի սիրով մոլորված, առանց խնայելու բերում են իրենց ոսկե օղերը:

Ճշմարիտ է, որ այդքան մեծ բազմությունը ամբողջությամբ չհակվեց կռապաշտության, սակայն ոչ ոք չհամարձակվեց դիմադրել և արգելել, քանի որ չար բանին հետևողները միշտ շատ են և համառ: Այս պարագայում, Ահարոնի կողմից միայն նրանց ականջօղերը ուզելը նրանց մոռացկոտ անհնազանդությունն է հայտնում, քանի որ օրենքը իրենց ականջով դեռևս նոր լսած լինելով՝ շուտափույթ օրինազանց եղան:

Քանի որ եգիպտացիները հորթ էին պաշտում, ուստի հորթի կերպարանքով ոսկուց ձուլված մի կուռք է շինում, որպեսզի ըմբռնելով, թե այն Աստված չէ և չի կարող օգնել իրենց, շուտով զղջան իրենց հիմարության համար, քանի որ այն, որ չկարողացավ Եգիպտոսից ազատել իրենց, իհարկե իրենց առաջնորդել նույնպես անկարող է: Սակայն անմիտ ժողովուրդը, կուռքին տեսնելուն պես «Իսրայելացինե՛ր, ձեզ Եգիպտոսից հանող Աստվածը այս է» ասելով, սկսում է պաշտել դրան և կերուխումի նստելուց հետո ցնծությամբ պարել[430]:

Նայի՛ր, ժողովուրդը ներքևում՝ բանակատեղիում, Աստծուն է ուրանում, բայց Աստված լեռան վրա նրանց համար Մովսեսին օրենքներ է տալիս: Արդ, երբ լրանում է քառասուն

---

430 Ասացին. «Սա՛ է քո աստվածը, Իսրայել, որ քեզ դուրս բերեց Եգիպտացիների երկրից» (*Ելք* 32:4):

օրը, Աստված Մովսեսին ասում է. «Շուտ ցա՛ծ իջիր, քանի որ քո ժողովուրդը ուղիղ շավիղից խոտորվեց»[431]:

Այստեղ լա՛վ ըմբռնիր առաքինության և մոլության տարբերությունը, քանի որ Աստված, Իսրայելի ժողովրդին Իրեն սեփական ժողովուրդ դարձրած լինելով, այս անգամ նրա առումով «Մովսեսի ժողովուրդ» է անվանում, քանի որ հնազանդության շավիղից խոտորվելու պատճառով «Աստծու ժողովուրդ» կոչվելու անարժան է: Այսուհանդերձ Նրա իշխանությունից դուրս գալ չկարողանալով՝ ինքնըստինքյան ավելի պատժի է արժանի լինում:

Արդարև, Աստված բոլորի վրա էլ իշխում է, բայց հնազանդության շավիղի մեջ գտնվողներին որպես Հայր է նայում և միշտ մխիթարում է նրանց, իսկ անհնազանդների վրա իբրև դատավոր իշխելով՝ պատժում է, որպեսզի ուղղվեն, և եթե անզիղջ մնալով չուղղվեն, այս աշխարհը այդպիսի մարդկանց բանտն է համարվում, մինչև որ մի օր չարաչար վախճան գտնելով՝ գնան իրենց դատապարտության վայրը: Ինչպես Իսրայելը, որ իր անհնազանդությամբ դատապարտելի էր, Աստված նորից Մովսեսին ասում է. «Ինձ արգելք մի՛ եղիր, որ ոչնչացնեմ նրանց և քեզ էլ մեծ ազգ դարձնեմ»[432]:

Հասկացի՛ր Աստծու ողորմությունը: Նա, որ մեղավորին պատժելիս ոչ ոքի չի հարցնում, և ոչ ոք չի կարող արգելք լինել Նրան, սակայն ողորմած լինելու պատճառ է փնտրում մեղավորին ողորմելու համար, այդ պատճառով «Թող նրանց կոտորեմ» ասելը նրանց համար «Ինձ աղաչի՛ր» ասելու նման է: Այս

---

431 Ասաց. «Շո՛ւտ արա, գնա՛ իջիր այստեղից, որովհետև քո ժողովուրդը անօրինություն է անում» (*Ելք* 32:7):

432 Ասաց Մովսեսին. «Թո՛ւյլ տուր ինձ.... կոտորեմ նրանց» (*Ելք* 32:10):

խոսքը ոչ միայն Մովսեսի, այլ նաև բոլոր սրբերի համար պատիվ համարվեց:

Քանի որ Աստված նրանց աղոթքով մեղավորի հանցանքները ներել է կամենում, որպեսզի սրբերի պատիվը հասկանալով՝ ամեն մարդ աշխատի առաքինությամբ Աստծուն հաճելի լինել: Այս խոսքը նաև մեղավոր մարդու համար մեծ մխիթարություն է, քանի որ երբ մեկը սխալվելով մեղանչում է, հուսահատվելու փոխարեն սրբերի միջնորդությամբ Աստծու ողորմությանը ապավինելով՝ ջանում է ազատվել մեղքից: Այնպես, ինչպես ժողովրդի համար Մովսեսի աղոթք և աղաչանք անելուն պես Աստծու բարկությունը մեղմացավ և այլևս չպատժեց մեղավոր ժողովրդին[433]:

Օրինա՛կ վերցրու. ժողովուրդը, Մովսեսի երախտիքը մոռանալով, նրա մասին որպես օտարականի խոսեց, սակայն նա դարձյալ ժողովրդի փրկության համար աղաչում է Աստծուն, քանի որ ճշմարիտ մեծության պայմանն այս է, որ մարդը, առանց ժողովրդի թերություններին նայելու, միշտ նրա բարօրության և լավության համար աշխատի:

Հետո Մովսեսը, օրենքների տախտակները վերցնելով, գալիս է այն տեղը, որտեղ Հեսուն իրեն էր սպասում: Եվ երբ երկուսը միասին իջնում են լեռից, աղմկալից ձայներ լսելով՝ Հեսուն կարծում է, թե բանակատեղիում կռիվ կա, սակայն Աստված, Մովսեսին հայտնած լինելով ժողովրդի կռապաշտության մասին, իսկույն հասկանում է, որ այդ աղմուկը կռվի ձայն չէ, այլ խելակորույս հարբածների ժխոր:

Երբ նա, բանակատեղիին մոտենալով, տեսավ հիշյալ կուռքը և նրա շուրջ պար բռնածներին, սաստիկ բարկանալով՝

---

433 Եվ Տերը հրաժարվեց պատճառել այն չարիքները, որոնցով սպառնում էր պատժել ժողովրդին (*Ելք* 32:14):

օրենքների տախտակները գետնին զարկեց, ջախջախեց և փշրեց՝ համարելով, որ մի այսպիսի անհնազանդ և ապերախտ ժողովուրդ արժանի չէ աստվածային ողորմության[434], և կուռքը վերցնելով՝ կրակի մեջ այրում է և փոշիացնելով ջրով խմեցնում ժողովրդին, որպեսզի լավ հասկանան, թե ինչ էր, որ քիչ առաջ պաշտում էին:

Հարց Զ. **Մովսեսը պատժե՞ց կուռքը պաշտողներին:**

Պատասխան: Պատժեց, քանի որ նրանց այսպիսի անարժան վարմունքից սաստիկ բարկացած, բանակատեղիի դռան առջև կանգնելով՝ բարձր ձայնով աղաղակում է. «Ով Աստծու կողմն է, թող ինձ մոտ գա»[435]: Ահա Ղևիի ցեղը իսկույն գալիս հավաքվում է նրա շուրջը, քանի որ նրանք կուռքին ընդհանրապես չէին երկրպագել: Մովսեսը հանուն Աստծու նրանց հրամայում է, որ սուրը ձեռքները վերցրած՝ բանակատեղիի մի ծայրից մյուսը գնան և առանց նայելու ազգական է թե եղբայր, բոլոր կռապաշտներին սրով կոտորեն: Այսպիսով, այն օրը երեք հազար մարդ մեռավ:

Խելամո՛ւտ եղիր, նախ Մովսեսն ինքը աղաչեց ժողովրդի փրկության համար, բայց այս անգամ նորից ինքը կոտորել է տալիս նույն այդ ժողովրդի զավակներին: Քանի որ ինչպես հանցավորի համար Աստծուն աղաչելը Աստծու գթությանը ապավինելով՝ Նրա պատիվն ու փառքը հասկանալ է նշանակում, նույնպես հանցավորին պատժելը Աստծու արդարությունից վախենալով՝ Նրա պատիվը պահել է նշանակում:

---

434 Տեսավ հորթն ու պարողներին, խիստ զայրացավ, նետեց ձեռքում եղած երկու տախտակներն ու ջարդուփշուր արեց դրանք (*Ելք* 32:19):

435 Մովսեսը, կանգնելով բանակատեղիի մուտքի մոտ, ասաց. «Ով Տիրոջն է պատկանում, ինձ մոտենա» (*Ելք* 32:26):

Ահա Ղևիի ցեղը, այսպիսի մի արդարությանը ծառայություն մատուցելով, Աստծուն պատված և Նրա հրամանը կատարած հանդիսացավ. այդ պատճառով քահանայությունը այդ ցեղին տրվեց, քանի որ քահանա նշանակում է «քավի՛ր այն», այսինքն՝ Աստծուն մարդու հետ հաշտեցնելով՝ մեղքը քավել տվող: Հաջորդ օրը Մովսեսը ժողովրդին հայտնում է, որ մեծ մեղք գործեցին, ուստի պիտի գնա և նրանց փրկության համար Աստծուն աղաչի և վերստին լեռն է բարձրանում:

Մովսեսի այս խոսքը և հատկապես աղաչելու համար լեռը բարձրանալը պարզապես ժողովրդին զղջման և ապաշխարության հրավիրել է նշանակում: Այստեղ Մովսեսից սովորի՛ր աղոթելու պայմանները: Նախ խոստովանում է, որ ժողովրդի մեղքը չափազանց մեծ և ծանր է, և ապա ներում է հայցում և այն աստիճան ազգասիրություն է ցուցաբերում, որ մինչև անգամ Աստծու մատյանից իր անվան ջնջվելը հանձն առնելով՝ գոչում է. «Եթե նրանց մեղքերին ներում կշնորհես, լավ, ապա թե ոչ, ինձ էլ ջնջի՛ր Քո մատյանից»[436]: Մովսեսը այս խոսքով ոչ թե Աստծու հավիտենական կյանքի գրքից ջնջվել ուզեց, քանի որ ուրիշներին լավություն անելու համար Աստծու ողորմությունից զրկվելը երբեք օրինավոր կամ արդար չէ, այլ այդ խոսքով իր ազգի հանդեպ սրտում ունեցած սերն ու եռանդը հայտնեց սրտահույզ կերպով:

Պողոս Առաքյալն էլ մի այսպիսի սեր է տածում իր ազգի հանդեպ[437]: Թող օրինակ վերցնեն նրանք, ովքեր ժողովրդի

---

436 Մովսեսը վերադարձավ Տիրոջ մոտ ու ասաց նրան. «Աղաչում եմ քեզ, Տե՛ր, այդ ժողովուրդը մեծ մեղք է գործել, որովհետև իր համար ոսկե արձաններ է կերտել: Արդ, եթե ներելու ես իրենց մեղքերը, ների՛ր, իսկ եթե չես ներելու, ուրեմն իմ անունը ջնջի՛ր քո մատյանից, ուր գրել ես» (*Ելք* 32:3132):

437 Ես ինքս երդումով փափագում էի նզովվել Քրիստոսից իմ ազգակից եղբայրների համար (*Հռոմ.* 9:3):

գլուխը կամ առաջնորդներն են և ազգի սիրո համար կրած նեղություններից ձանձրանալով՝ եսասիրությամբ չշտապեն ծառայությունից խույս տալ:

Թեև Մովսեսը ժողովրդի փրկության համար Աստծու մատյանից ջնջվելու հավանություն ցույց տվեց, բայց Աստված, անմեղ մարդուն հաստատ ջնջել չկամենալով, հայտնում է, թե՝ «Ով որ մեղք է գործում, նրան եմ ջնջում Իմ մատյանից»[438]:

Ապա Աստված Մովսեսին ասում է. «Գնա՛ և առաջնորդի՛ր ժողովրդին, նրանց տա՛ր Աբրահամին, Իսահակին և Հակոբին խոստացված երկիրը, սակայն նրանց անհնազանդության պատճառով Ես նրանց հետ չպիտի գնամ, այլ նրանց առջևից առաջնորդելու համար հրեշտակիս պիտի ուղարկեմ»[439]: Ժողովուրդը երբ լսեց, որ Աստված նրանց հետ չպիտի լինի, չափազանց մեծ տխրությամբ համակվելով՝ բոլորը սուգ արեցին[440]:

Արժե նկատել, որ երբ Մովսեսն օրենքների տախտակները կոտրեց և ժողովրդից երեք հազար մարդ կոտորել տվեց, այն ժամանակ չսգացին, բայց երբ լսեցին, որ Աստված իրենց հետ չպիտի լինի, խոր սգի մեջ են ընկնում: Հիրավի, մարդուս համար սրանից մեծ պատիժ չի լինում, երբ Աստված նրանից հեռանում և լքում է նրան[441]:

Ճշմարիտ է, որ Աստված ամենուրեք է, բայց երբ Իր շնորհից մեկին զրկում է, նրանից հեռացած է համարվում: Սակայն մի՛ կարծիր, թե Աստված Ինքն է մարդուց վերցնում Իր շնորհը, այլ մարդն է, որ Աստծու օրենքներին հակառակ գործելով՝

---

438 Տերն ասաց Մովսեսին. «Ես իմ մատյանից կջնջեմ նրան, ով մեղանչել է իմ դեմ» (*Ելք* 32:33):

439 Քո առաջից կուղարկեմ իմ հրեշտակին.... Բայց ես, կամակո՛ր ժողովուրդ, քեզ հետ դուրս չպիտի ելնեմ (*Ելք* 33:2):

440 Ժողովուրդը, լսելով այս խոսքերը, մեծ սուգ արեց (*Ելք* 33:4):

441 Վա՛յ նրանց, քանի որ խույս տվեցին ինձնից (*Օսեի* 7:13):

Նրան արտաքսում է իր սրտից, և այս կերպ ինքը հոժարակամ հեռանում է Աստծուց:

Արդ, եթե փափագում ես, որ Աստված քեզ հետ լինի, մեղք մի՛ գործիր, և եթե սխալմամբ գործեցիր, զոնե սգալով դարձի՛ արի, որ չպատժվես:

Հարց Է. **Արդյոք Մովսեսի աղոթքը չընդունվե՞ց, որ Աստված իսրայելացիների հետ գնալ չուզելով կամեցավ հրեշտակ ուղարկել:**

Պատասխան: Ընդունվեց: Քանի որ Մովսեսի աղոթքով էր, որ Աստված իսրայելացիներին կորստյան չմատնեց և կամեցավ հրեշտակի միջոցով առաջնորդել, որպեսզի իրենց հանցանքը հասկանալով՝ զղջման գան: Այս պատճառով Մովսեսին պատվիրում է, որ նրանց հայտնի իրենց համառությունը, անհնազանդությունը և հակառակասիրությունը, և զգուշանան, որ նորից դատապարտության և պատժի չարժանանան:

Այո՛, թեև նրանք սգացին, բայց քանի որ մարդը պարտական է իր հանցանքների փոխարեն ամբողջ սրտով զղջալ և ապաշխարել, Աստված պատվիրում է, որ իրենց պերճաշուք զգեստները փոխելով՝ սրտերում եղած զղջումը արտաքուստ ևս հայտնի դառնա, որպեսզի հետո նրանց համար գործադրի այն ամենը, ինչի արժանի են[442]:

Այս խոսքը ժողովրդին զղջման հրավիրել էր նշանակում, ապագայում իրենց կամքին թողնելով լավ կամ վատ ընթացք ունենալը: Քանի որ եթե ուղիղ սրտով զղջան՝ շնորհների և ողորմությունների, իսկ եթե ոչ՝ պատժի և դատապարտության պիտի արժանանան: Արդարև, հրամանի համաձայն

---

442 Հանեցե՛ք ձեր շքեղ պատմուճանները, ձեր զարդերը, որպեսզի ցույց տամ, թե ինչ եմ անելու ձեզ (*Ելք* 33:5):

Աստծու ողջ ժողովուրդը ամբողջ զարդարանքից մերկացավ, և որքան ժամանակ Սինա լեռան մոտ մնացին, բնավ չպաճուճվեցին[443]:

Օրինա՛կ վերցրու. թեպետ սրբերի աղոթքները Աստված ընդունում է, սակայն մեղավորն էլ պարտավոր է այլևս հրամանին հակառակ չգործել՝ խոստանալով ճշմարիտ զղջմամբ մեղքերի փոխարեն պատվիրված ապաշխարությունը անթերի կատարել, որպեսզի պատժից ազատվի:

Հետո Մովսեսը բազմությունից հեռու մնալու համար իր վրանը բանակատեղիից հեռու է կանգնեցնում, որի անունը «Վկայության խորան» դրվեց, այնպես որ երբ մեկը Աստծուց խնդրանք ուներ, այնտեղ էր գնում խնդրելու: Երբ Մովսեսը խորան էր մտնում, ամեն մարդ, իր վրանի մուտքի մոտ կանգնած, նայում էր, և հրաշալի ամպը սյան նման խորանի դռան մոտ էր իջնում. բարեկամի հետ դեմ հանդիման խոսելու նման՝ Աստված ամպի միջից խոսում էր Մովսեսի հետ, և ժողովուրդը, դա տեսնելով, երկրպագություն էր անում[444]:

Ոչ ոք չէր կարող ներս մտնել, միայն երբ Մովսեսը խորանից դուրս էր գալիս, նրա ծառան՝ Հեսուն էր ներս մտնում և միշտ աղոթում էր այնտեղ: Վերոհիշյալ ձևով երբ Աստված խոսում էր Մովսեսի հետ, նա դարձյալ աղաչում է Աստծուն, որպեսզի ժողովրդի փառքի և մխիթարության համար համաձայնի գնալ ժողովրդի հետ, ինչպես նաև, որ հայտնի դառնա, որ Աստծու հաճությունը նրանց վրա է: Եվ քանի որ ժողովուրդը արդեն

---

443 Իսրայելացիները հանեցին իրենց զարդերն ու պատմուճանները (*Ելք* 33:6):

444 Տերը Մովսեսի հետ խոսում էր դեմ հանդիման, ինչպես մեկը կխոսեր իր բարեկամի հետ (*Ելք* 33:11):

միաբանված զղջացել էր, այդ պատճառով Աստված հայտնում է, որ կամենում է գնալ նրանց հետ[445]:

Լա՛վ մտապահիր, որ մինչ այդ ժամը Մովսեսն իր համար երբեք որևէ բան չխնդրեց, այլ միշտ ժողովրդի համար բարիք և հանգիստ էր խնդրում: Աստծու կողմից ժողովրդի հանցանքը ներելուն պես սիրտը հանգստանալով՝ այս անգամ իր համար է խնդրում: Բայց ոչ թե մարմնական փառք, աշխարհիկ հարստություն կամ կյանքի երկարություն է խնդրում, այլ Աստծուն տեսնել է փափագում[446]:

Ի՞նչ ես խոսում, ո՛վ Մովսես, մտածի՛ր, թե ի՛նչ է խնդրածդ: Այո՛, սերդ և ցանկությունդ կատարյալ են, բայց մարդ չի կարող այս աշխարհում տեսնել Աստծուն: Մովսեսն ասում է. «Եթե Աստծուն հաճելի մարդ եմ, փափագում եմ տեսնել Նրան, մինչ այսօր Նրա շատ սքանչելիքները տեսա, այս անգամ այդ սքանչելիքները գործող Տիրոջն եմ փափագում տեսնել»:

Պահանջիցդ մի՛ նահանջիր, ո՛վ Մովսես, միայն թե ժամանակը փոխի՛ր, քանի որ դու Աստծուն հաճելի մարդ ես, ցանկությունդ պիտի կատարվի, սակայն արքայության մեջ: Եվ քանի որ այս աշխարհում հնարավոր չէ Աստծուն տեսնել, ուրեմն գոնե Նրա փառքը տեսնել է ցանկանում[447]:

Դու տե՛ս. ինչպես որ մինչ այդ ժամանակ Մովսեսին արված ողորմությունը ոչ ոքի չէր արվել, նմանապես էլ ոչ ոք նրա նման Աստծուն տեսնելու փափագ հայտնելու համարձակություն չէր ունեցել: Սակայն քանի որ Մովսեսը բոլորից ավելի հաճելի էր Աստծուն, նրա խնդրանքը ընդունվեց, միայն թե փոխանակ երեսը ցույց տալու, որը անկարելի էր, նրան մի ժայռի

---

445 Տերն ասաց. «Ես ինքս պիտի գնամ քո առաջից» (*Ելք* 34:14):

446 Եթե ես քո շնորհին եմ արժանացել, հայտնապես երևա ինձ (*Ելք* 33:13):

447 Մովսես ասաց. «Ցո՛ւյց տուր ինձ քո փառքը» (*Ելք* 33:18):

ծերպում թաքցնելով՝ անցնելու ժամանակ Նրա հետքի փառքն է տեսնում[448]:

Ապա Մովսեսին հրամայում է, որ նախկին կոտրած քարե տախտակների նման երկու տախտակներ պատրաստի, որոնք իր հետ վերցնելով՝ Սինա լեռը բարձրանա: Հրամանի համաձայն՝ Մովսեսը պատրաստում է երկու տախտակները, որոնք իր հետ վերցրած՝ բարձրանում է Սինա լեռը, և հիշյալ քարերը իր համար որպես հենարան գործածելով՝ կանգնում է այնտեղ: Աստված, ամպերի վրա իջնելով, այնտեղից անցնելու ժամանակ հայտնում է իր իշխանությունը: Հայտարարում է, որ Ինքն է ողորմած, ներողամիտ, արդար, ճշմարիտ, հավատարիմ և անհունորեն գթած ու բարերար[449], որպեսզի բոլորին հայտնի դառա, և մարդիկ, ապավինելով Նրա ողորմությանը, չհուսահատվեն և արդարությունից վախենալով՝ մեղքից հեռու մնան:

Քանի որ ոչ թե Մովսեսն է ինքնին խոսում և հայտնում այս, այլ Աստված հենց Ինքը, ինչպես այդ կարդում ենք Թվոց 14:17 համարում: Քարայրի ծերպից Աստծու փառահեղ իշխանությունն ու մեծությունը տեսնելով՝ զետնամած երկրպագության ժամանակ Մովսեսի երեսը լուսավորվում է:

Թեպետ այսպիսի շնորհ և պարգև միայն Մովսեսին տրվեց, բայց նրանք, ովքեր փափագում են տեսնել Աստծու

---

448 Քեզ կդնեմ ժայռի ծերպի մեջ.... դու ինձ կտեսնես թիկունքից: Բայց իմ դեմքը քեզ չի երևա (*Ելք* 33:22-23):

449 Տեր Աստված եմ, գթացող և ողորմած, համբերատար, բարեգութ ու ճշմարիտ, որ արդարությունն է պաշտպանում, իր ողորմածությունն է ցուցաբերում հազարավոր սերունդների հանդեպ, վերացնում է անօրենությունները, անիրավություններն ու մեղքերը, մեղավորին չի ազատում պատժից, հայրերի գործած մեղքերը բարդում է որդիների և որդիների որդիների վրա մինչև երրորդ ու չորրորդ սերունդը (*Ելք* 34:6):

փառքն ու մեծությունը, թող մտքով նայեն արարածներին, քանի որ արարածը Արարչի հետքը լինելով՝ Աստծու գոյության, կարողության և գիտության ապացույցները նրանցում ենք տեսնում:

Իսկ հոգևոր իմաստով սուրբ Երուսաղեմի բոլոր տնօրինական վայրերը, մեր Փրկիչ Քրիստոսի ոտնակոխ սրբավայրերը լինելով, Աստծու կարողությունը, իմաստությունը, մարդասիրությունը և ձրիաբար պարգևած շնորհն ու ողորմությունը լիուլի հայտնվում են այնտեղ:

Քանի որ Հիսուս Քրիստոսը, թեև որպես մի աղքատ և պանդուխտ, Բեթղեհեմ քաղաքում մի այրում ծնվեց և անասունների մսուրի մեջ դրվեց, բայց միևնույն ժամանակ հրեշտակների բազմությունը՝ երկնքից իջած, նրա ծնունդը հովիվներին ավետելով, Աստծու ողորմության դուռը մարդկային բոլոր ազգերի համար բացված է համարվում[450]:

Թեպետ Գողգոթա լեռան վրա, որպես հանցագործ բարձրացավ խաչի վրա, սակայն արևը, երկնքում լույսն իսկույն իր մոտ հավաքելով և ամբողջ աշխարհը խավարի մեջ թողնելով, և երկիրը, դողալով վեմերի պատռվելը և գերեզմանները բացվելով, բազմաթիվ սրբերի հարություն առնելը Աստծու մեծ և ահավոր զորությունն են հայտնում:

Իր կամքով Սուրբ Խաչի վրա Հայր Աստծու ձեռքն է ավանդում Իր հոգին, թեև թաղվեց գերեզմանում, սակայն երեք օր հետո հարություն առնելով՝ Աստծու փառքն ու զորությունը հայտնվեց ամբողջ աշխարհին, ինչպես գրված է սուրբ Ավետարանում:

---

450 Եվ Տիրոջ հրեշտակը երևաց նրանց, Տիրոջ փառքը ծագեց նրանց շուրջը (*Ղուկ.* 2:9):

Ուրեմն ահա այս կերպ, ով փափագում է, Աստծու փառքը տեսնելով, Նրա փառքով փառավորվել, թող հիշյալ սուրբ տեղերին հոգու աչքով նայի, և կատարյալ հավատքով ու անկեղծ սիրով երկրպագություն մատուցի: Քանի որ ինչպես Մովսեսը, վերոհիշյալ քարը իրեն ապավեն և պատսպարան դարձնելով, Աստծու անցնելու ժամանակ Նրա փառքը տեսնելուն պես նրա դեմքը լույսով պայծառացավ, նույնպես էլ քրիստոնյաները, այդ սուրբ վայրերում մարդկային ցեղի փրկության համար Հիսուսի կրած չարչարանքների շուրջ խորհրդածելու ժամանակ, իրենց հոգին լույսով է պայծառանում, և իրենց հավատքի համեմատ հոգևոր մխիթարություն ստանալով՝ փառավորվում են:

Քանի որ Սինա լեռը՝ սուրբ Երուսաղեմի, հիշյալ քարը, որի ծերպի մեջ Մովսեսը պատսպարվեց՝ սրբավայրերի և այնտեղից Աստծու անցնելը Հիսուս Քրիստոսի մարդանալով աշխարհ գալու օրինակը և պատկերն են հայտնում: Այդ պատճառով քրիստոնյաները պարտավոր են, Հիսուսի կրած չարչարանքների շուրջ միշտ խորհելով[451], մեղքից հեռու մնալ և հանուն նրա սիրո պատահած վշտերին անտրտունջ համբերել, որպեսզի Աստծու արքայության անվախճան փառքին արժանանան[452] և աստվածային տեսությունը վայելեն:

Մովսեսն այս երկրոդ անգամ ևս Սինա լեռան վրա քառասուն օր և քառասուն գիշեր առանց սննդի մնաց, և նախկին տախտակների վրա գրված Տասնաբանյա օրենքը Աստված նորից գրեց Մովսեսի տարած տախտակների վրա, ինչպես նաև այլ զանազան պատվիրաններ տվեց՝ հրամայելով, որ դրանք նույնպես գրի առնի: Այստեղ Իսրայելի ժողովրդի հետ

---

451 Քրիստոսը մարմնով չարչարվեց մեզ համար, դուք ևս զինվե՛ք նույն մտքով (*Ա Պետ.* 4:1):

452 Իր չարչարանքներին կցորդ ենք, հաղորդակից ենք լինելու և փառքին (*Հռոմ.* 8:17):

Աստծու ուխտը նորոգվեց: Հետո Մովսեսը օրենքների տախտակները ձեռքին, լեռից իջավ:

Հիմա լավ խորհի՛ր առաքինի և արդար մարդու ու մեղավորի միջև եղած ահռելի տարբերության շուրջ: Մովսեսը, որ արդեն իսկ հնազանդ էր Աստծուն, ծոմապահությամբ արժանանում է Աստծու փառքը տեսնելուն, քանի որ ծոմապահությունը մարդուն հրեշտակային պատվին է հասցնում: Օրինակ՝ Ադամը դրախտում հնազանդ եղած ժամանակ ոչ միայն հրեշտակների հետ ուրախ և երջանիկ էր[453], այլ նաև աստվածային տեսությամբ և փառքով լուսավորված՝ հրճվում էր[454], բայց որկրամոլությամբ պատվիրանազանց լինելու հակված, պահեցողությունը խախտելուն պես տիրական փառքից զրկվելով՝ այնքան թշվառացավ, որ ամոթից Աստծու աչքին չերևալու համար իզուր ծառերի մեջ թաքնվելու վայր էր որոնում[455]:

Մի՛ զարմացիր, քանզի ինչպես հանցավոր մարդն է վախենում դատավորի մոտ գնալուց, նույնպես մեղավորը, Աստծու առջև գնալուց վախենալով, խուսափելու տեղ է փնտրում, քանի որ մարդկային միտքը անկաշառ վկա է և միաժամանակ դատախազ նրա մեջ:

---

453 Ի դրախտին փափկութեան ուրախանայր ընդ հրեշտակս (Դրախտում փափկության մեջ ուրախանում էր հրեշտակների հետ) (*Շարակ.*):

454 Յորում ցնծայր զուարճացեալ անտխրական խնդութեամբ, քանզի զԱստուած տեսանէր միշտ խոնարհեալ ի դրախտին, յորմէ ճառագայթ տպաւորէր ի յինքեան (Որտեղ ցնծում էր զվարճացած անտխրական խնդությամբ, քանզի միշտ տեսնում էր Աստծուն դրախտ իջած, Որից բխած լույսի ճառագայթը տպավորվում էր իր մեջ) (*Շարակ.*):

455 Ադամն ու իր կինը Տեր Աստծուց թաքնվեցին դրախտի ծառերի մեջ (*Ծնող.* 3:8):

Արդ, եթե Մովսեսը առաքինի լինելով այնքան համարձակություն ստացավ, որ դեռևս երկրի վրա եղած ժամանակ Աստծու լուսապայծառ կերպարանքը տեսնելու իղձ ունեցավ, ուրեմն ամեն առաքինի մարդ՝ սիրտը մաքուր և միտքն Աստծու շնորհքով լուսավորված, բոլոր պարագաներում հոգևոր համարձակություն կարող է ունենալ[456]:

Արդարև, մինչև որ Աստծու հատուկ մի հայտնություն չլինի, մարդը չի կարող իր՝ արքայության ժառանգորդ լինելն իմանալ, բայց սիրտը մեղքի արատից զերծ և մաքուր պահելը Աստծու արքայությանը արժանի լինելու մասնավոր մի նշան և ապացույց է[457]:

Հարց Ը. **Մովսեսը երբ երկրորդ անգամ լեռը բարձրացավ, քառասուն օր և քառասուն գիշեր լեռան վրա մնալու ժամանակ ժողովուրդը բանակատեղիում ի՞նչ վիճակում էր:**

Պատասխան: Թեպետ առաջ Մովսեսի լեռան վրա եղած ժամանակ հնազանդության շավիղից խոտորվելով՝ ժողովուրդը կուռք պաշտեց, սակայն այս անգամ հնազանդությամբ և հոգեպես սպասում էին:

Եվ թեպետ Մովսեսը տեսել էր Աստծու փառքը, և երեսը լուսավորվել էր, սակայն ինքը չգիտեր դրա մասին: Ուստի լեռից իջնելու ժամանակ, երբ Ահարոնն ու ժողովուրդը տեսան նրան, վախեցան մոտը գնալ, մինչև որ նա կանչեց նրանց և Աստծու պատվիրանները մեկ առ մեկ պատմեց նրանց: Այսուհետև ժողովրդի հետ խոսելու ընթացքում ծածկում էր երեսը, որ չվախենան, սակայն վկայության խորան մտնելու

---

456 Եթե մեր սրտերը մեզ չդատապարտեն, համարձակություն կունենանք Աստծու առաջ (*Ա Հովհ.* 3:21):

457 Երանի՛ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն (*Մատթ.* 5:8):

ժամանակ բացում էր քողը: Մովսեսի երեսի լուսավորությունը ոչ միայն փառք էր Մովսեսի համար, այլ նաև ժողովրդին ահ և երկյուղ էր ներշնչում, որ հնազանդվեին օրենքին:

Այնուհետև Մովսեսը, քանի որ Աստծու հրամանի համաձայն պիտի շիներ տապանակը, վկայության խորանը, քահանայական զգեստներն ու սրանց առնչվող այլ բաներ, ժողովրդին հրավիրում է, որ ամեն մի մարդ իր կարողության համեմատ ընծաներ բերի, որպեսզի վերոհիշյալ կարիքները իրենց ընծայաբերությամբ և տուրքով լուծվեն, բայց ոչ թե ստիպելով է պահանջում, այլ Աստծու հրամանը հայտնելով՝ նրանց կամքին է թողնում, որ բռնություն գործադրած չլինի[458]:

Ժողովուրդն էլ՝ այր և կին, իրենց կարողության համեմատ ոսկի, արծաթ, թանկագին քարեր, պղինձ և անհրաժեշտ այլ բաներ են նվիրում, այնպիսի առատությամբ են նվիրում, որ հարկ է լինում հայտարարել, որ այլևս չբերեն, իսկ նրանք, ովքեր որևէ բան բերելու կարողություն չունեին, իրենք անձամբ էին աշխատում, նույնպես զանազան արվեստ և արհեստ իմացողները՝ այր թե կին, իրենց հոժարությամբ աշխատում էին աստվածահաճո սույն գործում:

Այս գործերի համար Աստված, երկու անձեր հատկացնելով, գիտելիք և հնարամտություն է պարգևում նրանց, որոնք շինեցին տապանակը և խորանը, և որոնցից մեկի անունը՝ Բերսելիել, իսկ մյուսինը՝ Եղիաբ, ինչպես գրված է այս նյութերի 36-40-րդ գլուխներում:

Հարց Թ. **Ուխտի տապանակն ի՞նչ էր:**

Պատասխան: Չփտող փայտից շինված մի սնդուկ էր, որի երկարությունը երկուսուկես, լայնությունն ու բարձրությունը

---

458 Ում սրտով ինչ անցի, այն թող նվիրի Տիրոջը (*Ելք* 35:5):

մեկուկես կանգուն էր, ներսից և դրսից՝ ոսկեպատ, չորս անկյուններում՝ միաձույլ ոսկե օղակներով, որոնց մեջ անփուտ փայտից ոսկեպատ ձողեր էին անցկացրել, այս ձողերից բռնելով՝ վերցնում և տանում էին այն:

Դարձյալ, դրված տեղում՝ գետնին չդիպչելու համար ներքևում՝ չորս անկյուններում, կլոր անիվներ կային, որոնց վրա հենվում էր այն: Վրան ոսկեղեն կափարիչով փակ էր, որը «քավություն» էր կոչվում[459]: Սրա վրա ևս երկու կողմում իրար դեմ դիմաց հրեշտակի նման մեկական քերովբեներ կային, որոնք դեպի ներքև՝ քավության վրա էին նայում:

Այս քերովբեները չորսական թևեր ունեին, երկուսը որպես հովանի տարածված էին քավության վրա, իսկ մյուս երկու՝ վերևի թևերը, վերևից տարածվելով, գալիս էին և միմյանց միանում, որոնց վրա Աստված էր բազմում, ինչպես Իր աթոռին, և սնդուկի կափարիչը՝ քավությունը, որպես Իր ոտքերի պատվանդան էր ծառայում, որտեղ Աստված խոսում էր Մովսեսի հետ[460]:

Հիշյալ սնդուկում հետևյալ բաներն էին պահվում՝ Տասնաբանյա օրենքի տախտակները, դատաստաններին և հասարակությանն ու սովորություններին վերաբերող օրենքները, որոնք գրել էր Մովսեսը: Ինչպես նաև ոսկյա մի սափորի մեջ՝ մանանա, Ահարոնի գավազանը, որը ծաղկելով պտղաբերել էր.... ընկույզ[461], ոսկե բուրվառը ևս տապանակի կամ Սրբություն սրբոցի մեջ էր պահվում[462]: Հիշյալ սնդուկը Վկայության

---

459 Տապանակի կափարիչը պատրաստեցին մաքուր ոսկուց (*Ելք* 37:6):

460 Նայում ես անդունդներին և նստում ես քերովբեների վրա (*Դան.* 3:54):

461 Ահարոնի գավազանը ծաղկել էր (*Թվեր* 17:8):

462 Խորանը, որ կոչվում էր Սրբությունների Սրբություն, որտեղ դրվում էր ոսկե բուրվառը և կտակարանների արկղը (*Եբր.* 9:3-4):

տապանակ կամ Կտակարանների տապանակ կոչվեց: Քանի որ նրանցում պահված իրերը, որպես Աստծու զորությունը, ողորմությունը և Իսրայելի հետ արած ուխտն էին հայտնում, այս պատճառով վրանը, որում պահվում էր տապանակը, Վկայության խորան կոչվեց:

Հարց Ժ. **Ի՞նչ ձև ուներ վկայության խորանը:**

Պատասխան: Երկարությունը՝ երեսուն կանգուն, լայնությունն ու բարձրությունը՝ տասական կանգուն, երեք կողմերը՝ տախտակով պատած: Բայց ոչ թե միակտոր, այլ յուրաքանչյուր տախտակ մեկուկես կանգուն լայնություն ուներ, որպեսզի շարժվելու ժամանակ քանդելով՝ հաջորդ իջևանում նորից սարքեն: Քսան տախտակ՝ հարավային, քսան՝ հյուսիսային կողմում և միայն վեց տախտակ՝ արևմտյան կողմում, և սրանք բոլորն էլ ծխնիներով և փակով ամուր կցվում էին իրար, երբ սարքվում էր խորանը:

Երկու անկյուններում մեկական սյուն կար տախտակները պահելու համար, որոնք չփտող փայտից էին և ոսկեպատ: Նրա դուռը արևելյան կողմն էր բացվում, և միայն այն կողմից էր լույս ընկնում ներս, չորս ծածկոցներով էր պատված: Առաջին ծածկոցը կապույտ, ծիրանագույն և կարմիր բեհեզ էր: Երկրորդն այծի մազից էր հյուսված: Երրորդը խոյի մորթուց էր, որը դեղին երանգով կարմիր գույն ուներ, չորրորդը ամբողջովին կապույտ ներկված բրդից էր, սրանք ոչ թե միակտոր էին, այլ լայնությամբ բաժանված լինելով ոսկե կոճակներով՝ իրար էին ամրացված, որպեսզի դնելն ու վերցնելը հեշտ լինի:

Խորանի ներսում լայնությամբ ոսկով պատված չորս սյուներ կային, որոնցից տարբեր գույների թանկարժեք վարագույրներ էին կախված, և այս վարագույրներից այն կողմը Սրբությունների սրբություն էր կոչվում, քանի որ այնտեղ էր

պահվում տապանակը: Որևէ մեկը չէր կարող այնտեղ մտնել, բացի մեծ քահանայապետից, որը տարին մեկ անգամ՝ քավության տոնին, մտնում էր այնտեղ և աղոթում Աստծուն[463]: Իսկ վարագույրների դրսի մասը Սրբություն կոչվեց:

Այս հատվածում (Սրբությունում) հյուսիսային կողմում էր Առաջավորության սեղանը, իսկ հարավային կողմում՝ Խնկերի սեղանը: Նմանապես նույն վարագույրի առջև ոսկե աշտանակն էր դրվում, որը յոթ ճրագարաններ ունենալով, որոնցից յուրաքանչյուրի վրա կանթեղի տեղ կար, որոնք ամեն գիշեր վառում էին: Նույնպես խորանի դռան առջև ոսկեպատ հինգ սյուներ կային, որոնցից թանկագին վարագույրներ էին կախված, որպեսզի ներսի մասը անտեսանելի մնա դրսից նայողներին:

Իսկ խորանի դրսի մասում բացօթյա շրջանաձև բակ կար, որը հարյուր կանգուն երկարություն և հիսուն կանգուն լայնություն ուներ, որի երկու կողմերի երկայնքով քսան սյուներ կային, հետևի կողմում՝ տասը սյուներ, որոնք հնգական կանգուն լայնություն ունեին, որոնցից վարագույրներ կախելով՝ խորանը այդ բակով շրջապատված էր լինում, և հիշյալ սյուները, բոլորն էլ չփտող փայտից և պղնձապատ էին:

Հիշյալ բակում էին գտնվում ողջակեզների սեղանը և պղնձի ավազանը, որը ջրով էին լցնում և այդ ջրով լվանում էին զոհը: Քահանաները նույնպես իրենց պաշտոնակատարությունն սկսելուց առաջ լվանում էին ձեռքերն ու ոտքերը: Սույն բակը երկու մասի էր բաժանված, որոնցից մեկը քահանաներին էր հատկացված, որտեղ զոհաբերություն էին անում, իսկ երկրորդում ժողովուրդը կանգնելով նայում էր քահանաների զոհագործությանը: Ժողովուրդը, խորան մտնելու

---

463 Քահանաները միշտ առաջին խորանն էին մտնում (*Եբր.* 9:6):

արտոնություն չունենալով, միայն հիշյալ հրապարակում կարող էր կանգնել:

Հարց ԺԱ. **Վկայության խորանում քանի՞ սեղան կար:**

Պատասխան: Երեք: Առաջին սեղանը երկու կանգուն երկարություն, մեկ կանգուն լայնություն և մեկուկես կանգուն բարձրություն ուներ, որը չփտող փայտից էր շինված և ոսկեպատ էր, չորս ոտք ուներ, որոնց վրա հենվում էր: Սա Սրբությունների սրբություն կոչված տեղի առջևում գտնվելու պատճառով Երեսի սեղան կամ Առաջավորության սեղան անվանվեց, որպեսզի հասկանան, թե իբր Աստծու ներկայությունը մնում է: Սրա վրա հաց դրվելու համար նաև Հացի սեղան ևս կոչվեց:

Քանի որ Իսրայելի 12 ցեղերի անունով այդ սեղանի վրա դրվում էր տասներկու հաց, որոնք խմորիչով չէին պատրաստված և ոսկեզոծ թղթով էին փաթաթված, որոնցից վեցը՝ սեղանի մի անկյունում, իսկ մյուս վեցը մյուս անկյունում իրար վրա էին դնում: Այս հացերը ամեն շաբաթ փոխելով՝ թարմ հաց էր դրվում, և առաջինները միայն քահանաները կարող էին ուտել, իսկ ժողովրդին արտոնված չէր ուտել այդ հացից: Այս սեղանի վրա նաև խունկ և աղ էին նվիրում Աստծուն:

Երկրորդ սեղանը Խնկերի սեղանը կամ Խնկակալն էր, որը մեկ կանգուն երկարություն, մեկ կանգուն լայնություն և երկու կանգուն բարձրություն ուներ, անփուտ փայտից և ոսկեպատ էր: Սրա վրա առավոտյան և երեկոյան անուշահոտ նյութերից բաղադրված խունկ ծխելու համար Խնկի սեղան անունն ստացավ:

Երրորդը Ողջակեզների սեղանն էր, որի երկարությունը և լայնությունը հինգական կանգուն էր, և բարձրությունը երեք կանգուն էր, երեսը բաց էր և ամբարի ձև ուներ, չփտող

փայտից էր և պղնձապատ: Սրա մեջ խորության կեսի չափով պղնձե մի կաթսա էր դրվում, որի վրա ողջակեզն էր այրվում, այս իսկ պատճառով Ողջակեզների սեղան կոչվեց, և որի տակ միշտ կրակ լինելու պատճառով բակում էր դրվում, որպեսզի կրակի ծուխը և զոհի հոտը օդում ցրվեին:

Սակայն մի՛ կարծիր, թե տապանակի, խորանների և սեղանների զարդարանքն ու կահավորումը այսքանն էին, այլ դրանց այլևայլ զարդարանքները և գործիքները նկարագրված են Աստվածաշնչում: Արդ, Աստծու պատվերի համաձայն այս ամենը ավարտելուց հետո հանձնվեց ղևտացիներին, որոնք հատկացված էին դրանց ծառայությանը:

Եվ ահա Աստծու կամքով լուսավոր ամպը, իսկույն երևալով, սքանչելապես լուսավորում է այն, այնպես է լուսավորում, որ Մովսեսն անկարող է լինում ներս մտնել: Սույն հրաշալի ամպը, միշտ խորանի վրա լինելով, գիշերները լուսավորում էր բանակատեղին, իսկ առավոտները հովանի և ստվեր էր անում, և երբ խորանի վրայից բարձրանում էր, այն ժամանակ իսրայելացիները շարժվում էին:

Վերոհիշյալ հարցերի նկատմամբ և անհրաժեշտ պատվերներից բացի, Ղևտացիների գրքի 1-8 գլուխներում զոհերի և իսրայելացիներին հատուկ ծեսերի և այլ սովորությունների վերաբերյալ զանազան պատվերներ էլ են ավանդված և գրառված: Արդարև հին օրենքի մեջ Աստծուն նվիրված զոհերի և ընծաների մասին զանազան պատվերներ են և պայմաններ են նշված, բայց կարող ենք չորս գլխավոր տեսակների բաժանել դրանք և այստեղ համառոտակի հիշատակել:

Առաջին՝ Աստծու անհուն մեծության պատվին ողջակեզ կամ ընծա էր մատուցվում: Երկրորդ՝ յուրաքանչյուր մարդ պարտավոր էր մատուցել զոհ մեղքի համար, իր մեղքերից քավություն գտնելու համար: Երրորդ՝ Աստծու արած

բարերարության հանդեպ շնորհակալ լինելու համար զոհ էր մատուցվում, որը կոչվում էր «խաղաղական»: Չորրորդ՝ որևէ մեկը ինչ-որ խնդիրք կամ բարիք էր փափագում ստանալ Աստծուց, պարտավոր էր դրա կատարման համար զոհ մատուցել, որը կոչվում էր «խաղաղարար»:

Հարց ԺԲ. **Ղևտացիները ո՞ր ցեղից էին:**

Պատասխան: Հակոբ նահապետի երրորդ որդու՝ Ղևիի ցեղից, այս իսկ պատճառով կոչվեցին Ղևտացի: Ահարոնը ևս նույն ցեղից էր. Մովսեսը, Աստծու հրամանով Ահարոնին և նրա Նաբադ, Աբիուդ, Եղիազար և Իթամար որդիներին խորանի մոտ տանելով, լվանում է նրանց և քահանայական զգեստները նրանց հագցնելուց հետո օծելով, քահանա է դարձնում նրանց, ապա զոհ մատուցելով պատվիրում է, որ յոթ օր ընդհանրապես խորանից դուրս չելնեն:

Երբ վերջացան յոթ օրերը, Մովսեսի հրամանով Ահարոնը և նրա որդիները, ինչպես նաև ժողովրդի ծերերը խորանի առջև զոհ կտրտելով ողջակեզների սեղանի վրա են դնում և Ահարոնը, խորան մտնելով, խնկարկություն է անում, հետո դուրս գալով՝ ժողովրդի համար աղոթելու ժամանակ սքանչելիքով խորանից իսկույն բոց է ելնում և սեղանի վրայի ողջակեզը այրում ու մոխիր դարձնում:

Ժողովուրդը, այս հրաշքը տեսնելով, մեծ երկյուղով և դողով երկրպագում է Աստծուն: Քանի որ այդ եղելությունը զոհը ընդունելի լինելու նշանն էր: Հիշյալ սեղանի տակ միշտ փայտ դնելով՝ հրաշքով առաջացած կրակն անշեջ էին պահում և երեկոյան թե առավոտյան նրա վրա զոհ էին մատուցում:

Արդարև, այն օրը Մովսեսը և բոլոր իսրայելացիները շատ ուրախացան: Քանզի Աստծու հրամանի համաձայն վկայության խորանի կառուցումն ավարտելով՝ Ուխտի տապանակը

և սեղաններն իրենց տեղերում դրեցին, Ահարոնը՝ քահանայապետ, իսկ նրա որդիները քահանաներ դարձան, և զոհն էլ Աստծուն հաճելի և ընդունելի եղավ, որ բազմապատկեց իրենց ուրախությունը:

Սակայն ինչպես արժանի է ուրախանալ Աստծու ողորմության և պարգևների համար, նմանապես պետք է երկնչել նրա արդարությունից, որ չլինի թե նրա հրամանին հակառակ մի բան պատահի գիտությամբ թե սխալմամբ, ինչպես իրոք պատահեց:

Քանի որ քահանաները, որ առավոտյան և երեկոյան խորանում խունկ էին ծխում, պարտավոր էին հարկ եղած կրակը զոհի սեղանի կրակից դնել իրենց բուրվառի մեջ: Բայց նույն օրը երեկոյան խնկարկության ժամանակ Ահարոնի երկու որդիները՝ Նաբադը և Աբիուդը, անուշադրությամբ, զոհի սեղանի կրակից դնելու փոխարեն աճապարանքով ուրիշ կրակ դրեցին իրենց բուրվառների մեջ:

Եվ երբ խնկարկում էին, հանկարծ սեղանից կրակ ելնելով՝ այրեց նրանց, և նրանք իսկույն մեռան[464]: Սակայն զարմանալին այս է, որ նրանց մարմինները և հագուստները չայրվեցին և իրենց նախկին անթերի վիճակում էին մնում: Իհարկե, սրա համար Ահարոնի, Եղիազարի և Իթամարի սրտերը չափազանց շատ ցավեցին, բայց Մովսեսը, մխիթարելով նրանց, չի թույլ տալիս սուգ անել: Այս ահավոր դեպքը ոչ միայն մյուս քահանաներին, այլև ամբողջ ժողովրդին մի երկյուղալից խրատ եղավ:

Այստեղ մի պահ մեծ ուշադրությամբ խորհի՛ր. նրանք, որ հին օրենքում դեռ նույն օրն էին սկսել իրենց քահանայական

---

464 Տիրոջ առաջ անմաքուր կրակ մատուցեցին, մի բան, որ Տերը նրանց չէր պատվիրել: Կրակ բխեց Տիրոջից, այրեց նրանց, և նրանք մեռան (*Ղևտ.* 10:1-2):

պաշտոնավարությունը, մի փոքր թերության պատճառով մեռան, ի՞նչ պիտի լինի մեր վիճակը, եթե մենք նոր օրենքի մեջ թերություն ունենանք: Որովհետև երբ մարդն իր մտքի և սրտի մեջ մեղսալից փափագներ է սնուցում, իր բուրվառում կարծես թե օտար հուր է դնում, որն անպատճառ պատժի և դատապարտության է արժանանում:

Հարց ԺԳ. **Իսրայելացիներն ինչքա՞ն ժամանակ մնացին Սինա լեռան ստորոտում:**

Պատասխան: Մեկ տարի: Այդ ընթացքում վերոհիշյալ պատվերները կատարելուց բացի, Աստված Մովսեսին զոհերի վերաբերյալ ցուցումներ և զանազան նյութերի վերաբերյալ ուրիշ պատվերներ էլ տվեց, ինչպես հիշատակվում է Ղևտացիների գրքի 10-րդ գլխից մինչև 27-րդ գլխի վերջը:

Քանի որ Աստված Աբրահամին խոստացել էր, որ իրեն մեծ ազգ պիտի դարձնի (*Ծնն.* 12:2), այդ պատճառով հրամայում է, որ քսան տարեկանից մեծ տղամարդիկ արձանագրվեն, որպեսզի հայտնի դառնա մեծ ազգ լինելը. մանավանդ թշնամի հանդիպելու ժամանակ նրանք պատերազմի պատրաստ լինեն:

Իսրայելացիները, Հակոբ նահապետի տասներկու որդիներից առաջացած լինելով, տասներկու ցեղեր են հաշվվում: Թեպետ Հոսեփի երկու որդիները՝ Եփրեմը և Մանասեն, Հակոբի որդիների շարքն ընդգրկվեցին, որով տասներեք ցեղ եղան, բայց Ղևիի ցեղը, որոնք ղևտացիներ անվանվեցին, քահանայության պատճառով մյուս ցեղերից բաժանվեցին, և մնացած ժողովուրդը դարձյալ տասներկու ցեղ կոչվեց:

Մովսեսը յուրաքանչյուր ցեղից մեկական մարդ է ընտրում, որոնցից յուրաքանչյուրը, իր ցեղի վրա իշխան և խոսքի տեր ազդեցիկ մարդ լինելով, քսան տարեկանը լրացած տղաներին

արձանագրի: Երբ այդ գործողությունը հրամանի համաձայն կատարվեց, նրանց թիվը հասավ վեց հարյուր երեք հազար վեց հարյուր հիսուն մարդու՝ չհաշված կանանց, ծերերին, մանուկներին, զերիներին, ծառաներին և եգիպտացիներին, որոնք իսրայելացիների հետ դուրս էին եկել Եգիպտոսից:

Եվ քանի որ Աստված եգիպտացիների անդրանիկ որդիներին կոտորելու ժամանակ իսրայելացիների անդրանիկներին Իր սեփականությունը դարձրեց[465], այս պատճառով իսրայելացիները պարտավորվեցին իրենց անդրանիկ զավակներին Աստծուն տալ: Տասներկու ցեղերի մեկ ամսականից մեծ երեխաները արձանագրվեցին, որպեսզի խորանին ծառայությանը հատկացվեն, նրանց թիվը քսաներկու հազար երկու հարյուր յոթանասուներեք էր:

Բայց սրա վերաբերյալ ժողովրդին տրտնջալու առիթ չտալու համար, նրանց փոխարեն ղևտացիներին ընդունելով, հրամայում է, որ նրանց մեկ ամսականից մեծ արուներին հաշվեն, որպեսզի տասներկու ցեղերի անդրանիկների թիվը ինչքանով ավելի լինի, ժողովուրդը յուրաքանչյուրի համար որպես փրկագին հինգ սիկղ (ոսկի կամ արծաթ չափելու միավոր, որը հավասար է 6,8 գրամի) վճարի ղևտացիներին:

Եվ ղևտացիների թիվը քսաներկու հազար եղավ, երկու հազար յոթանասուներեքի փոխարեն ժողովուրդը ղևտացիներին վճարեց: Սրանց քսանհինգ տարեկանից մեծերը և հիսունից փոքրերը արձանագրվեցին, նրանց գումարը հասավ ութ հազար հարյուր ութսուն անձի, որպեսզի միայն նրանք խորանի ծառայության համար հատկացվեն, իսկ քսանհինգից փոքրերը հոգևոր պաշտոնից ազատ լինեն, իսկ հիսուն

465 Ինձ նվիրաբերի՛ր բոլոր իսրայելացիների անդրանիկ զավակներին, ամեն մի նախածին, մարդ թե անասուն, որովհետև իմն է (*Ելք* 13:2):

տարին անցնողն էլ ծառայությունից հեռանանա, և նրան մեկ ուրիշը հաջորդի:

Երբ ըստ վերոհիշյալ կանոնների՝ խորանը ամեն ինչով պատրաստ էր, տասներկու ցեղերի երևելիները ընծաներ էին բերում խորանի համար, սակայն ոչ թե ոմանք՝ շատ, ոմանք՝ քիչ, այլ բոլորի ընծաները միատեսակ էին և միևնույն գինն ունեին, որպեսզի իրենց միջև նախանձ չառաջանար: Դարձյալ ոչ թե նույն օրն էին բերում, այլ հաջորդաբար. առաջին օրը Հուդայի ցեղն էր բերում, երկրորդ օրը՝ Իսաքարի, և այդպես՝ մնացածները: Մովսեսը ընծաները հանձնում է ղևտացիներին, որոնց ավագները Ահարոնն էր իր որդիների հետ:

Քանի որ Աստված ժողովրդի անդրանիկների փոխարեն ղևտացիներին ընտրեց, այս պատճառով Մովսեսին հրամայում է, որ նրանց խորանի առջև բերի, և այնտեղ ժողովուրդը, նրանց վրա ձեռք դնելով, իր կողմից նրանց Աստծուն ընծայի, որպեսզի հոգևոր պաշտոնին նրանց հատկացվելը հայտնի դառնա:

Իսրայելացիները տակավին Սինայի անապատում էին, երբ Աստված պատվիրեց, որ Եգիպտոսից իրենց դուրս գալու երկրորդ տարվա առաջին ամսվա տասնչորսերորդ օրը Զատիկ կատարեն, ինչպես նախկինում արդեն պատվիրել էր: Բայց նրանք, ովքեր ննջեցյալ են թաղում և կամ մեռելի են մոտենում, օրենքի համաձայն յոթ օր անմաքուր համարվեն, հետո կարող են Զատիկ անել կամ զոհ մատուցել:

Այն ժամանակ ոմանք, անմաքուր լինելով, «Ուրեմն չե՞նք կարող ժողովրդի հետ Զատիկը անել» հարցրին Մովսեսին, որն առանց Աստծուն հարցնելու նրանց հարցերին չէր պատասխանում, քանի որ մինչ այդ պահը այդպիսի դեպք չէր պատահել: Մովսեսը դեռևս չհարցրած՝ Աստված պատասխանում է նրան, որ այդպիսի անմաքուր մարդիկ կամ այն մարդիկ,

որոնք, հեռու տեղում գտնվելով, Զատկի ժամանակ տեղում չեն լինի, թող երկրորդ ամսի տասնչորսին Զատիկ անեն:

Որպեսզի ժողովուրդը լավ և կանոնավոր կառավարվի, Աստծու հրամանով Մովսեսն իսրայելացիների տասներկու ցեղերը չորս մասի է բաժանում (ամեն մի խմբում՝ երեքական ցեղ) և վկայության խորանի շուրջը նրանց համար տեղ է հատկացնում: Նմանապես յուրաքանչյուր խմբի մեջ աստիճան և պայմաններ է սահմանում, որպեսզի երեք ցեղերից մեկն ավելի հարգի համարվի, և մնացած երկու ցեղերը հնազանդվեն նրան:

Ուրեմն խորանը մեջտեղում էր, ղևտացիները՝ նրա շուրջը. արևելյան կողմում առաջին խումբն էր բնակվում, որում Հուդայի ցեղն էր պատվավոր համարվում. նրա աջ կողմում Իսաքարի ցեղն էր, իսկ ձախ կողմում՝ Զաբուղոնի ցեղը: Երկրորդ խումբը հարավային կողմում էր մնում, որում Ռուբենի ցեղն էր պատվավորը, նրա աջ կողմում՝ Շմավոնի, իսկ ձախ կողմում՝ Գադի ցեղերը: Արևմտյան կողմում երրորդ խումբն էր բնակվում, որում ազդեցիկ էր Եփրեմի ցեղը, որի աջ կողմում՝ Մանասեի, և ձախում Բենիամինի ցեղն էր: Չորրորդ խումբը խորանի հյուսիսային կողմում էր, որտեղ Դանի ցեղն առավել ազդեցություն ուներ, նրա աջ կողմում Ասերի ցեղն էր, և ձախ կողմում՝ Նեփթաղիմի: Այս պատճառով իսրայելացիների բանակը «չորս խմբերի» կամ «չորս գնդերի» բանակ էր կոչվում:

Հետո քանի որ պիտի գնային Սինայից, կանոնավորությամբ գնալու համար Մովսեսը երկու արծաթյա փողեր է սարքել տալիս, որոնց ձայնը լսելուն պես հերթով ճանապարհ ելնեն: Փողերը հնչեցնելը քահանաներին էր հատկացված. դրանք «ազդեցության փող» անվանվեցին:

Քանի որ ոչ միայն մեկնելու ժամանակ էին փողերը հնչեցնում, այլ նաև երբ Մովսեսը ժողովրդին կամենում էր որևէ

գործ կամ հրաման հայտնել, որպեսզի ժողովուրդը խորանի դռան մոտ հավաքվի: Նաև հնչեցնում էին, երբ ամսագլուխ, տարեգլուխ, Զատկի հանդիսավոր զոհի և ուրախության օր էր լինում, նամանավանդ պատերազմի ժամանակ: Այս պատճառով երկու փողերը չէին բավականացնում, հետագայում աստիճանաբար անհրաժեշտ քանակով փողեր շինվեցին:

Հարց ԺԴ. **Իսրայելացիներն ինչպե՞ս էին գնում:**

Պատասխան: Քանի որ լուսեղեն ամպի շարժվելը ժողովրդի շարժման նշան էր համարվում. մինչ այդ ժամանակ ամպը խորանի վրա էր, այնտեղից շարժվելով՝ Հուդայի վրանի վրա էր կանգնում: Ահարոնը, այդ տեսնելով, սկսում է ճանապարհ ելնելու պատրաստություն տեսնել և երկու որդիների հետ խորան է մտնում և տապանակը Սրբություն սրբոցի վարագույրով ծածկում, սրա վրա ուրիշ ծածկոցներ էլ գցում, որպեսզի դրանք տանող մարդիկ, անծածկոց տեսնելով, չմահանան[466]: Այնուհետև ղևտացիները գալով հավաքվում էին այնտեղ, որ թե՛ վերոհիշյալները և թե՛ խորանի վարագույրները, ձողերը, տախտակները և այլ կահ-կարասին կառքով և կամ անձամբ վերցնեն տանեն:

Բայց ոչ թե պատահաբար յուրաքանչյուրն ինչ ուզում, այն էր վերցնում, այլ այդ ամենը տանելու համար բոլորի անունները Աստված նախապես Մովսեսին հայտնել էր (*Թվոց* 4), ամեն մարդ, իր պարտականությունը գիտենալով, պատրատ սպասում էր:

Նմանապես Հուդայի բանակը հավաքվելով պատրաստվում է շարժվելու, և քահանաները սկսում էին ազդարարող

---

466 Հենց այնպես թող ներս չմտնեն սրբությունները տեսնելու, թե ոչ կմեռնեն (*Թվեր* 4:20):

փողերը հնչեցնել: Այն ժամանակ Մովսեսը, տապանակին մոտենալով, «Արի՛, ո՛վ Տեր, թող թշնամիներդ ցրվե՛ն, թող ատելիներդ փախչե՛ն»[467] ասելուն պես այն վերցնելու համար հատկացված մարդիկ, խիստ մեծ հարգանքով և ուշադրությամբ իրենց ուսերին վերցնելով, ամպի հետևից ճամփա էին ընկնում: Մովսեսը, Ահարոնը և նրա երկու որդիները տապանակի հետ էին գնում:

Հետո Հուդայի բանակն էր շարժվում, քանի որ տապանակից հետո անմիջապես այս բանակն էր գնում: Երկրորդ անգամ փողը հնչելու ժամանակ Ռուբենի բանակն էր շարժվում, երրորդին՝ Եփրեմի, չորրորդին Դանի բանակն էր շարժվում ամեն ինչով կանոնի համաձայն, ինչպես իրենց հրամայված էր:

Ղևտացիները ինչպես իջևանելիս, նույնպես և ճանապարհին չորս գնդերի մեջտեղով էին գնում, որպեսզի թշնամուն հանդիպելիս պաշտպանվեն: Սրանք ոչ թե խառնիխուռն էին գնում, այլ յուրաքանչյուր խմբի և յուրաքանչյուր ցեղի միջև բավականին տարածություն թողած էին առաջ գնում, առանց մեկը մյուսին խառնվելու, քանի որ նրանց կառավարելու համար հատուկ հազարապետներ և հարյուրապետներ էին նշանակված:

Նաև յուրաքանչյուր ցեղ իրեն հատուկ դրոշը կամ նշանն ուներ և այդ նշանի հետևից էր գնում: Համարվում է, որ Հուդայի նշանը առյուծն էր, Ռուբենինը՝ մարդը, Եփրեմինը՝ եզը, Դանինը՝ արծիվը:

Արդարև, իսրայելացիները շատ ուրախ տրամադրությամբ մեկնեցին Սինա լեռից: Քանի որ լուսավոր ամպը առաջնորդում էր նրանց. ցերեկը վրանի նման նրանց պաշտպանում էր արևի տապից, իսկ գիշերը մի փայլուն լույս էր սփռում նրանց

---

467 Վե՛ր կաց, Տե՛ր, որ ցանուցիր լինեն քո թշնամիները, փախուստի մատնվեն բոլոր քեզ ատողները (*Թվեր* 10:35):

ճանապարհին: Թշնամուց երկյուղ կրելու պատճառ չունեին, քանի որ Աստված իրենց հետ էր: Իրենց կերակուրը՝ մանանան, ամեն օր կար:

Քորեբ լերան վրա հրաշքով վեմից բխած ջուրը իրենց հետևից հոսելով գնում էր[468]: Իրենց հանդերձները չէին հնանում, և ճանապարհի նեղություններից ոտքերը չէին վնասվում[469]: Բացի այդ կարծիք կա, որ մանուկների հետզհետե մեծանալով՝ նրանց հագուստն էլ հետզհետե երկարում էր և իրենց հասակին ու անձին համապատասխան դառնում:

Հարց ԺԵ. **Իսրայելացիները, Աստծու երախտիքը հասկանալով, միշտ զոհ մնացի՞ն արդյոք:**

Պատասխան: Չմնացին: Թեպետ Աստծու բարերարությունները շատ մեծ էին, սակայն իսրայելացիները, ապերախտ մի ազգ լինելով, Աստծուն նորից բարկացնելով, չարաչար պատժվեցին: Քանի որ հազիվ երեք օր ճանապարհ գնալուց հետո Աստված կարծես թե իզուր էր նրանց պտտում անապատով, սկսում են սաստիկ տրտնջալ, որով իսկույն իրենց մեջ կրակ բորբոքելով՝ բանակատեղիի մի մասն այրվում, ոչնչանում է:

Ժողովուրդը, այս տեսնելով, աղաչում է Մովսեսին, նա էլ աղաչում է Աստծուն, և նրա աղոթքներով կրակն անհետանում է, այս պատճառով այդ տեղի անունը «Հրով այրված» կոչվեց[470]: Մի քիչ առաջ գնալուց հետո իրենց առաջնորդող ամպը կանգնում է, և իջևանում են:

---

468 Բոլորն էլ նույն հոգևոր ըմպելիքը խմեցին, որովհետև խմում էին հոգևոր այն վեմից, որ գնում էր նրանց հետ (*Ա. Կորնթ.* 10:4):

469 Քո զգեստները չմաշվեցին, քո ոտքերը քառասուն տարի կոշտուկներով չպատվեցին (*Բ Օր.* 8:4):

470 Ժողովուրդը դառնորեն տրտնջում էր Տիրոջ դեմ: Տերը լսեց դա, խիստ բարկացավ և նրանց վրա կրակ թափելով՝ ոչնչացրեց

Այստեղ սկսում են գանգատվել Մովսեսի և Աստծու դեմ, սակայն այս անգամ ոչ թե ճանապարհի նեղությունների պատճառով, այլ իրենց որկրամոլության, ոչ թե անոթի մնալու պատճառով, քանի որ մանանան անպակաս էր, այլ մսեղեն կերակուր ցանկանալով. «Ո՞վ մեզ միս կտա» ասելով՝ իրենց հույսը կտրում են Աստծուց[471]:

Մանավանդ իրենց սիրտը Եգիպտոսի հետ էր կապված, այնտեղ իրենց կերած ձուկը, սեխը, ձմերուկը, սոխն ու սխտորը հիշելով, մի անխելահաս մանկան պես իրենց վրանների դռան առջև նստած՝ ողբում և լացում էին: Ճիշտ է այն, որ այս ցանկությունը նրանց հետ եղող եգիպտացիներից ծնվեց, սակայն իսրայելացիներն էլ, նրանց հետևելով, միաբան սկսեցին Մովսեսին ստիպել, որ իրենց միս տա: Մեղքի ցանկությունը տարանցիկ հիվանդության է նմանվում, որ եթե առաջն իսկույն չառնես, հետզհետե մյուսներին կարող է փոխանցվել:

Մանավանդ մանանան. ինքնին յուղի և մեղրի համ ուներ, Աստծու կամքով իրենց քիմքերին տալիս էր այն կերակուրների համը, որոնք ցանկանում էին, ուստի այսպիսի վիճակներում միս խնդրելը մեծ հանցանք էր: Մանանայից ձանձրանալով՝ սոխ և սխտոր ցանկանալը, հոգևորը թողնելով՝ մարմնի ցանկություններին և նյութական կոպիտ բաղձանքներին անձնատուր լինել է նշանակում:

Այստեղ լա՛վ խորհիր առաքինության և մոլության տարբերության շուրջ: Մանանան, երկնքից իջնելով, հրեշտակների կերակուր անվանվեց, նույնպես նաև առաքինությունը.

բանակատեղիի բնակիչների մի մասին (*Թվեր* 11:1):

471 Նրանց մեջ գտնվող խառնամբոխը սկսեց շատ պահանջներ ներկայացնել: Իսրայելացիները նստած լաց էին լինում և ասում. «Ո՞վ մեզ ուտելու միս կտա» (*Թվեր* 11:4):

Աստծու շնորհիվ ի գործ դրվելով՝ հրեշտակների պատվին և աստիճանին է հասցնում մարդուն, սակայն մոլությունը կամ մեղքը, սատանայի դավաճանությունից առաջացած լինելով, սատանայի դատապարտյալ վիճակին է իջեցնում մարդուն:

Հիրավի, ինչպես վերը նշեցինք, Մովսեսի աղոթքով թեև անհետացավ պատուհասող կրակը, բայց ժողովրդի ապօրինի խոսքերից նրա սիրտը այն աստիճանի բեկվեց, որ Աստծուց իր մահն էր խնդրում: Սակայն չկարծես, թե պաշտոնի պարտականություններից և առաջ եկած դժվարություններից խուսափելու և ազատվելու համար էր իր մահը խնդրում, քա՛վ լիցի, քանի որ Աստծու բնությանն ու հրամանին հակառակ է մեր մահը խնդրելը, այլ այդ խնդրանքով ժողովրդին կառավարելու համար իր անկարողությունը միայն հայտնելով՝ դատաստանը Աստծու կամքին է թողնում[472]:

Քանի որ Աստված Ավետյաց երկիր տանելու համար իսրայելացիներին Մովսեսին էր հանձնել այնպես, ինչպես մանկանը ստնտուին են հանձնում: Այս պատճառով չի ուզում ժողովրդի դատապարտությունն ու պատիժը, բայց նրանք դատապարտության և պատժի արժանի ընթացքով բարկացնում էին Աստծուն, և Մովսեսը, վախենալով Աստծու բարկությունից, մշտապես տագնապների մեջ լինելու համար մինչև իսկ իր մահը հանձն առավ խնդրել:

Խելամո՛ւտ եղիր Աստծու ողորմությանը, թե ինչպե՛ս է իմաստուն ձևով Մովսեսի իրավասության և հսկողության ներքո օգնականներ հատկացնում, որպեսզի նա շատ չնեղվի, ժողովրդին էլ միս է տալիս, որ չասեն, թե Աստված անկարող եղավ մեզ միս տալու:

---

472 Մովսեսը հարցրեց Տիրոջը. «....ինչո՞ւ քո առաջ շնորհք չգտա, և այս ժողովրդի բարկությունն ինձ վրա թափեցիր» (*Թվեր* 11:11):

Արդ, Աստված Մովսեսին հրամայում է, որ ժողովրդի բանիմաց ծերերից յոթանասուն հոգի ընտրելով բերի խորանի մոտ, որպեսզի նրանց իմաստություն տա, որ իրեն օգնեն ժողովրդին կառավարելու գործի մեջ: Նաև ժողովրդին լուր տա, որ հաջորդ օրը միս ուտելու համար պատրաստ լինեն: Սակայն ոչ թե մեկ, երկու կամ տասը օր, այլ մեկ ամիս ձանձրանալու չափ միս ուտեն:

Մովսեսը պատասխանում է, թե նրանց մի ամիս միս կերցնելու համար մի՞թե բավական քանակությամբ ոչխար կամ արջառ պետք է մորթել և կամ ծովի բոլոր ձկները մի տեղ ժողովել, որին Աստված պատասխանում է. «Մի՞թե Տերը չի կարող դա անել»[473]: Այս պարագայում Մովսեսը ոչ թե տարակուսում էր Աստծու կարողության վրա, այլ թե ի՛նչ եղանակով մինչև կշտանալը իր պաշտոնի բերումով պիտի կերակրի այդքան ժողովրդին, դա ցանկացավ իմանալ, քանի որ պարտավորվում էր այդ առումով հուսադրել ժողովրդին:

Ստացած հրամանի համաձայն, երբ յոթանասուն ծերեր և բանիմաց մարդիկ ընտրելով՝ Մովսեսը խորանի առջև բերեց, Աստված, ամպի մեջ իջնելով այնտեղ, խոսում է Մովսեսի հետ և նրա իմաստությունից այդ յոթանասուն ծերերին էլ է հաղորդում[474]: Արդարև, իսկույն Աստծու շնորհով լցված՝ նրանք սկսում են մարգարեանալ, այսինքն՝ Աստծուն փառաբանելով՝ օրհնություններ և գոհություններ են մատուցում:

Սակայն նրանցից երկուսը, դեռևս խորան չհասած, բնակավայրի մեջ սկսում են մարգարեանալ, սրանք էին Ելդադն ու Մովդադը, որոնց վրա ևս իջել էր Աստծու շնորհը: Սրանց

---

473 Տերը ասաց Մովսեսին. «Մի՞թե Տիրոջ ձեռքը ի վիճակի չէ դրան» (*Թվեր* 11:23):

474 Տերն իջավ ամպի մեջ, խոսեց Մովսեսի հետ, առավ նրան տրված ոգուց և դրեց յոթանասուն ծեր մարդկանց մեջ (*Թվեր* 11:25):

մարգարեությունը մի պատանի լսում է, և երբ պատմում է Մովսեսին, Հեսուն խնդրում է Մովսեսին, որ նրանց արգելի, որովհետև դեռևս խորան չեկած մարգարեանալը անհնազանդություն և Մովսեսի պատվի ստորացում համարեց: Սակայն Մովսեսը հանդիմանաբար պատասխանում է Հեսուին. «Իմ մեջ նախանձ մի՛ գրգռիր, երանի թե Տիրոջ ամբողջ ժողովուրդը մարգարե լիներ»:

Օրինա՛կ վերցրու Մովսեսի առաքինությունից, քանի որ իր ազգի նկատմամբ այնքան մեծ սեր ուներ, որ ցանկանում և միաժամանակ ի սրտե ժողովրդի բոլոր զավակներին մաղթում է, որ բոլորն էլ իր նման մի-մի մարգարե լինեն, փափագում է, որ Աստծու շնորհներին արժանանալով՝ բոլորն էլ իմաստուն և գիտուն լինեն, ինչպես վայել է Աստծու ժողովրդին:

Բացի այդ, բոլոր մարդկանցից ավելի խոնարհ լինելով՝ նա իր փառքի նվազելու համար ո՛չ հոգս է անում, ո՛չ մտածում է և ո՛չ էլ որևէ մեկին նախանձում: Մանավանդ անչափ խոհեմ լինելով՝ ուրիշի խոսքի համաձայն ոչ մեկին չի հանդիմանում կամ պատժում, որի համար էլ իր սիրելի աշակերտին՝ Հեսուին, հանդիմանում է, որ նախանձ գրգռող խոսք չասի:

Լա՛վ մտապահիր. Մովսեսն ինչքան խոնարհվում է, Աստված այնքան նրա պատիվը բարձրացնում էր: Քանի որ նա, ով ժողովրդին միայնակ կառավարելու իր անկարողությունը խոստովանեց, Աստված ցանկացավ նրան ավելի փառավորել, նրա հոգուց, այսինքն՝ իմաստությունից, հիշյալ յոթանասուն ծերերին է բաժին հատկացնում, որպեսզի Մովսեսի օգնականները լինելու պատվից կամ տիտղոսից հպարտանալով՝ իրենց նրան հավասարապատիվ չհամարեն, այլ միշտ հնազանդ մնան նրա բարձր հեղինակությանը և կարգադրությանը:

Ինչպես վերը հիշատակեցինք, երբ Աստված որոշեց մսեղեն կերակուր տալ ժողովրդին, հաջորդ օրը ծովի կողմից մի

քամի սկսեց փչել, որն այն աստիճանի շատ և անհամար լորամարգի քշեց բերեց, մինչև որ բնակավայրի շուրջը մեկ օրվա անցնելիք ճանապարհ և երկու կանգուն բարձրությամբ թռչուններով լցվեց երկիրը: Սակայն զարմանալին այն է, որ այդ թռչունները չեն կարողանում բարձր թռչել, որպեսզի ժողովուրդը դրանք հավաքելու նեղություն չկրի:

Հիմա դու տե՛ս իրենց որկորին գերի միս ցանկացողների վարմունքը. քանի որ երբ նրանք տեսան թռչուններին, սաստիկ ուրախացած՝ ցերեկվանից մինչև երեկո և ամբողջ գիշեր մինչև առավոտ, ինչպես նաև հաջորդ օրը այն աստիճան փափագով և ցանկությամբ էին հավաքում, որ ամենաքիչ հավաքողը, տասը քոռ հավաքելով, թարմ-թարմ զզվելու չափ ուտելուց բացի, նաև ապխտում էին, որպեսզի երկար ժամանակ միս ուտեին:

Դու խորհի՛ր Աստծու ահավոր զորության շուրջ. ժողովուրդը հասարակ միս ուզեց, բայց Աստված, ամենակարող լինելով, նրանց լորամարգու միս տալուց բացի, այնքան առատ է տալիս, որ երկու միլիոնի հասնող ժողովրդին մի ամիս բավականացնում է: Սակայն մի՛ կարծիր, որ այս պարագայում իրենց ողորմություն եղավ, այլ պատիժ:

Քանի որ դեռևս լորամարգու միսը իրենց բերանին էր, ահագին հարված ընկավ ժողովրդի մեջ, և շատերը մեռան, որոնց այնտեղ թաղելուց հետո տեղը «Ցանկության գերեզմաններ» կոչվեց: Քանի որ կերակրի ցանկության պատճառով շատերը մեռնելով թաղվեցին[475]՝ խրատի և զգուշության համար:

---

475 Դեռ միսը նրանց ատամի տակ էր, ու դեռ չէին ծամել, որ Տերը, ժողովրդի վրա զայրացած, մեծամեծ հարվածներ հասցրեց նրան: Այդ վայրը կոչվեց Ցանկության գերեզմաններ (*Թվեր* 11:33-34):

Թեպետ միս ուտելու ցանկությունը մեղք չէ, սակայն Աստծու շնորհած մանանայից ձանձրանալով և հուսահատ գանգատների խոսքերով՝ «Անպատճառ մեզ մի՛ս տուր» ասելով համառելը և լալը մեծ հանցանք է: Մանավանդ երբ հասան իրենց փափագին, պարգևատու Աստծուց շնորհակալ չեղան:

Դու տե՛ս Աստծու դատաստանը. քանի որ այդ շնորհն ու պարգևը առհասարակ բոլորին էր եղել, և բոլորն էլ թռչունների միս կերան, բայց բոլորը միանգամից չպատժվեցին, այլ միայն գանգատվողները և տրտնջացողները պատժվեցին: Քանի որ արդար լինելով՝ Աստված չտրտնջացողներին հարվածից հեռացրեց և միայն հանդուգն ապերախտներին պատժեց:

Այս կետն էլ է ուշադրության արժանի. ժողովուրդը նախապես երբ կերակրի համար տրտնջաց, Աստված մանանա տվեց և չպատժեց նրանց, քանի որ այդ ժամանակ նրանց ալյուրը սպառվել էր, և հաց չունեին, սակայն այս անգամ մանանա կար, ուստի միս խնդրելը շվայտությունից էր, որի համար էլ ամեն առումով պատժի արժանի եղան:

Օրինակ և միաժամանակ խրա՛տ վերցրու: Ով իր վիճակից դժգոհելով՝ գանգատվում է Աստծուց, իհարկե պատժվում է, սակայն ցավալին այս է, որ շատերը իրենց հանցանքների պատճառով անգամ եթե պատժվեն, դարձյալ չեն զգաստանում և անուղղելի են մնում: Դու մի՛ կարծիր, թե մարդը երբ իր բոլոր փափագներին հասնում է, իր համար բարիք է, այլ շատ անգամ պատիժ է:

Ուրեմն մենք պարտավոր ենք խնդրել այն, ինչ Աստծու կամքին համաձայն է, և դրա կատարվելն էլ՝ Նրա բարձր հաճությանը թողնել, բայց միայն թե մեր կողմից անհրաժեշտ ջանքը պիտի գործադրել, և եթե մեր խնդրանքն անկատար մնա, անտրտունջ համբերությամբ շնորհակալ լինել՝ խորհելով, որ մեզ համար այդ է բարին:

Քանի որ մարդը փոփոխական է, ամեն ինչ չգիտի և ամեն բանի կարողություն չունի, մանավանդ որ շատ անգամ իր համար բուն օգտակարը չհասկանալով՝ վնասակար և վտանգավոր բաներ է ցանկանում:

Սակայն Աստված անփոփոխելի է, ամենագետ, ամենատես և ամենակարող է և միանգամայն մարդասեր է. այս պատճառով նա, ով իր խնդիրը Նրա բարերար, մարդասեր և օրհնյալ կամքին է հանձնում, ոչ միայն չի սխալվում, այլև այդ մարդը միշտ և շարունակ անփորձանք և անվնաս, ամեն վտանգից զերծ և ազատ մնալուց բացի, Աստծուն հատուկ և մասնավոր խնամքով և զորավոր պաշտպանությամբ հանգիստ և երջանիկ է լինում, քանի որ նրա սիրտն ու հոգին խաղաղության մեջ են, նրա խիղճը չի տանջում, և նրա միտքը մի այնպիսի անդորրություն է վայելում, որ միայն արդարների և ճշմարիտ աստվածապաշտների առանձնաշնորհն է, որից զուրկ են բոլոր մեղավոր մարդիկ:

Հարց ԺԶ. **Իսրայելացիները «Ցանկությունների գերեզմաններ» կոչված տեղից հետո ո՞ւր գնացին:**

Պատասխան: Գնացին Ասերաթ, որտեղ թեև ժողովրդի կողմից ոչ մի տրտունջ չեղավ, սակայն Մովսեսն իր եթովպացի կնոջ՝ Սեփորայի պատճառով նորից անհանգստացավ: (Սա որքանով որ եթովպացի է հիշատակվում, սակայն Մադիամից լինելը երրորդ դարի ԽԳ հարցի մեջ հայտնել ենք, միայն Մադիամի երկիրը նաև Եթովպիա անվանվելու համար «Մովսեսը Եթովպացի կին առավ» է գրում այստեղ):

Քանի որ Մովսեսը ժողովրդի միջից ամենափառավոր և իշխանության տեր անձն էր, մանավանդ Աստված խոսում էր նրա հետ, այդ պատճառով Սեփորան հպարտացավ և իրեն մնացած կանանցից ոչ միայն ավելի պատվավոր էր համարում,

այլ նաև հավակնում է Մովսեսի քույր Մարիամի նկատմամբ գերազանցություն ունենալուն, որը, սակայն, չկարողացավ տանել կամ հանդուրժել նման ամբարտավանությունը:

Ահարոնը ևս միանում է Մարիամին, և սկսում են այս առումով բամբասել Մովսեսին՝ առարկելով, թե Աստված միայն Մովսեսի հետ չխոսեց, այլ նաև իրենց հետ խոսեց[476]: Հիրավի, սրանք ամեն առումով պահում էին Մովսեսի պատիվը, սակայն Սեփորային իր չափը հասկացնելու և հպարտությունից հետ դարձնելու համար համարձակվեցին մի այդպիսի առարկություն անել, որով իրենք իրենց Մովսեսին հավասար համարելով՝ չարախոսների նման եղան:

Որքան էլ Մովսեսն իր խոնարհությամբ նրանց խոսքերը չլսելու տվեց, բայց Աստված լսում է նրանց բամբասանքները և դատում հանցավորին[477]:

Դու նայի՛ր Աստծու դատաստանին. Մովսեսը, նրանց հանդեպ գանգատվելով, դատախազ չեղավ, սակայն Աստված, բոլորի խորհուրդներն ու գործերը իմանալով, յուրաքանչյուրի դատաստանն արդարությամբ կատարելու համար Մովսեսին, Ահարոնին և Մարիամին հրամայում է գալ ներկայանալ խորանի առջև:

Երբ երեքն էլ խորանի առջև՝ որպես Աստծու ներկայության էին գտնվում, Աստված Մովսեսի պատիվն ու փառքը հայտնելու և նրան բամբասողներին հանդիմանելու և պատժելու համար ամպով իջնում է այնտեղ: Եվ քանի որ Ահարոնն ու Մարիամը ասել էին, որ Աստված իրենց հետ էլ է խոսել, և այդ խոսքով իրենց Մովսեսի նման մարգարե էին համարում, այս պատճառով Մովսեսի և այլ մարգարեների տարբերությունը

---

476 Մի՞թե Տերը միայն Մովսեսի հետ խոսեց, նա նաև մեզ հետ չխոսե՞ց (*Թվեր* 12:2):

477 Տերը լսեց դա (*Թվեր* 12:2):

ցույց տալով՝ հայտնում է. «Այլ մարգարեների հետ տեսիլքով եմ խոսում, սակայն Մովսեսի հետ, որը Իմ տան ամենահավատարիմն է, հայտնապես բերանացի եմ խոսում, դուք ինչպե՞ս չվախեցաք Իմ ծառային՝ Մովսեսին, բամբասելուց»[478]:

Թեև Մովսեսի ներկայությամբ այսպիսի հանդիմանությունը Մարիամի և Ահարոնի համար մեծ պատիժ էր, սակայն նրանց հանցանքը այդքանով չներվեց, քանի որ ամպն իսկույն վերացավ խորանից: Ամպի վերանալը Աստծու բարկության և հեռանալու նշանն էր[479], որովհետև Մարիամը անմիջապես բորոտվեց: Ահարոնը նրան տեսնելուն պես Մովսեսից աղաչանքով և պաղատանքով ներում է խնդրում[480]:

Երբ Մովսեսը Մարիամին այդ ողորմելի վիճակում տեսավ, իսկույն առ Աստված աղաղակեց և նրա բժշկությունը խնդրեց[481]: Սակայն որքան էլ աղաչեց Աստծուն, այդուհանդերձ, թե՛ Մարիամին և թե՛ մնացածին խրատ լինելու համար Աստված հրամայում է, որ Մարիամը յոթ օր բանակատեղիից դուրս մնա, մինչև բժշկվի:

Աստվածային հրամանի համաձայն Մարիամը, յոթ օր բանակատեղիից հեռու մնալով, ինչպես որ հրաշքով եղել էր նրա պատիժը, նույնպես հրաշքով Մովսեսի աղաչանքներով յոթ օր հետո բժշկվելով՝ բանակատեղի է գալիս: Թեպետ Ահարոնը ևս միաբանվել էր Մարիամի հետ՝ Մովսեսին բամբասելու, բայց

---

478 Եվ ինչպե՞ս դուք առանց երկյուղի վատաբանեցիք իմ ծառային՝ Մովսեսին (*Թվեր* 12:8):

479 Տերը խիստ բարկացավ նրա վրա (*Թվեր* 12:9):

480 Ահարոնն ասաց Մովսեսին. «Խնդրում եմ քեզ, տե՛ր, մեզ վրա մեղքեր մի՛ բարդիր, որովհետև չիմացանք, որ մեղք գործեցինք» (*Թվեր* 12:11):

481 Մովսեսը, աղերսելով Տիրոջը, ասաց. «Խնդրում եմ քեզ, Աստվա՛ծ, բուժի՛ր նրան» (*Թվեր* 12:13):

քանի որ գործի պատճառն ու հիմքը Մարիամն էր, Ահարոնը չդատապարտվեց նրա նման պատիժ կրելու: Մանավանդ եթե Ահարոնը նույնպես բորոտվեր, ստիպված պիտի լիներ բանակատեղից դուրս գալ: Սակայն քահանայապետը պետք է ժողովրդից չբաժանվի. այս պատճառով նրան պատիժ չտրվեց:

Օրինա՛կ վերցրու. իրեն բամբասողների համար աղոթելով՝ Մովսեսը Հին օրենքի մեջ Սուրբ Ավետարանի պատվերը կատարեց[482]: Ահարոնն էլ թեև հանցանք գործեց, սակայն հանցանքը հասկանալով՝ իսկույն զղջալու համար թողություն գտավ, քանի որ Աստվածային ներմանը արժանանալու միակ միջոցն այս է:

Ուրեմն եթե քեզ էլ հանիրավի բամբասեն կամ վնասեն, Մովսեսի նման նրանց հանցանքները ների, քանի որ չարիք անողներին պարտավոր ես բարիք անել, որպեսզի Աստված փառքդ ավելացնի: Եթե Ահարոնի նման մեղանչեցիր, նրա պես իսկույն զղջա՛, որ ազատվես պատժից: Եվ եթե Մարիամի նման պատժի ենթարկվեցիր, նրա նման կամավորաբար և հոժարությամբ կրի՛ր մեղքերիդ փոխարեն սահմանված պատիժը, որպեսզի բժշկվես:

Նաև Աստծու սիրելի ծառաներից մի սուրբ անձի խնդրի՛ր, որ քեզ համար աղոթի առ Աստված: Մանավանդ եթե կամենում ես պատժից ազատ և հանգիստ լինել, մի՛ ցանկացիր հասնել առավել պատիվների և աստիճանների, և ոչ մեկին մի՛ բամբասիր:

Հարց ԺԷ. **Հետո իսրայելացիներն ո՞ւր գնացին:**

Պատասխան: Փառանի անապատից գնացին Կադեսբառնիա կոչված տեղը, որը Երուսաղեմի մոտ էր: Եվ Մովսեսը

---

482 Ձեզ նեղողների համար աղոթեցե՛ք (*Ղուկ.* 6:28):

ժողովրդին ասում է. «Աստծու կողմից ձեզ տրվելիք երկիրը եկաք, ելե՛ք և գրավե՛ք այն ու բնավ մի՛ վախեցեք»[483]: Ժողովուրդն այս խոսքը լսելուն պես փոխանակ ուրախությամբ հույսն Աստծու վրա դնելու և օր առաջ այդ երկիրը գրավելու համար անհրաժեշտ ջանքը գործադրելու պատասխանում է. «Նախ մա՛րդ ուղարկիր, որ մեր գնալիք տեղի վիճակն իմանանք», քանի որ այնտեղ գտնվող ազգերից վախենալով՝ չեն համարձակվում առաջ գնալ, ինչպես հայտնի է *Բ. Օր* 1:22-ից:

Արդարև, այս միտքն օրինավոր և հիմնավոր էր, եթե առաջադրած լինեին Ավետյաց երկիրն իրենց սեփական զորությամբ գրավել: Բայց քանի որ Աստված Իր բարձր կամքի համաձայն այդ երկիրը Աբրահամին, Իսահակին և Հակոբին էր խոստացել, որի իրագործման համար մեծամեծ հրաշքներով նրանց մինչև այնտեղ էր հասցրել, և Մովսեսն էլ հայտարարել էր, որ վախենալու կարիք չունեն, ուստի իրենց այս վիճակում «Նախ լրտես ուղարկենք» ասելը պարզապես հավատքի պակասությունն է ցույց տալիս:

Եվ քանի որ նրանք ձևացնում էին, թե իրենց առաջարկությունը զգուշության և խոհեմության տեսակետից է արված, Մովսեսը ևս հավանություն տվեց, մանավանդ ժողովրդի ընթացքին նայելով՝ Աստված էլ նույնն էր հրամայել, ուստի տասներկու ցեղերից մի-մի մարդ են ուղարկում, որ գնան և Քանանի երկիրը ամեն կերպով քննեն ու նրա պտուղներից իրենց հետ բերեն:

Արդարև, քառասուն օր Քանանի երկրում շրջելով և այնտեղ բնակվող ժողովրդին լրտեսելով՝ նրանք հետ են դառնում: Վերադարձին «Ողկույզի ձոր» կոչվող տեղից մեկ ողկույզ խաղող,

---

483 Տեսաք, որ մեր Տեր Աստվածը երկիրը ձեր աչքի առջև բաժանել է մեր միջև: Ելե՛ք և ժառանգե՛ք... (*Բ Օր*. 1:21):

թուզ և նուռ վերցնելով՝ իրենց հետ են բերում, որպեսզի տեղական մրգերի խիստ նշանավոր լինելը հայտնի դառնա: Հիրավի, բերված խաղողի ողկույզն այնքան մեծ էր, որ մի ձողի անցկացնելով՝ երկու հոգի իրենց ուսերին դնելով էին բերում այն:

Երբ բանակատեղի հասնելով՝ պտուղները ցույց տվեցին և թեև միաժամանակ հայտնեցին, որ այնտեղ կաթն ու մեղրը խիստ առատ են, սակայն Հեսուից և Քաղեբից բացի, մնացյալ տասը անձինք, Աստծու խոստումի վրա կատարյալ հավատք չունենալով, ժողովրդի միտքը պղտորելու պատճառ եղան: Քանի որ հայտարարում էին, որ այդ երկրում բնակվող ազգերը զորավոր են, քաղաքները՝ մեծ, և պարիսպները ամուր են:

Սակայն Քաղեբը, նրանց այսպիսի վհատեցնող և խռովահույզ խոսքերը լսելով, պատասխանում է, որ այդպես չէ. «Մենք կարող ենք հաղթել նրանց բոլորին էլ, ուստի վեր կենանք և գրավենք երկիրը»: Իսկ մյուսները ժողովրդի սրտում երկյուղ զցելու համար կրկնում էին. «Դուրս չգանք, մենք չենք կարող նրանց հաղթել, քանի որ նրանք մեզնից հզոր են, այն երկիրը մարդու համար վտանգավոր երկիր է, որի բնակիչները հսկաների պես մարդիկ են, և մենք նրանց համեմատ մորեխի նման փոքր ենք»:

Ժողովուրդը, այդ խոսքերը լսելով, ամբողջովին վհատվեց և սկսեց ասել. «Լավ էր, որ Եգիպտոսում կամ այս անապատում մեռնեինք, ինչո՞ւ է Աստված մեզ այն երկիրը տանում, որտեղ մենք պետք է պատերազմելով մեռնենք, և մեր ընտանիքները թշնամու ձեռքն ընկնեն»: Միևնույն ժամանակ գանգատվում են Ահարոնի և Մովսեսի դեմ: Բացի այդ, այդ գիշերը մինչև առավոտ լաց լինելով և «Լավ է Եգիպտոս վերադառնանք» ասելով՝ զորապետ են ընտրում, որ վերադառնան[484]:

---

484 Նրանք իրար ասացին. «Հրամանատար ընտրենք և Եգիպտոս վերադառնանք» (*Թվեր* 14:4):

Մովսեսը և Ահարոնը, ժողովրդի այդպիսի անվայելուչ խոսքերը լսելով, միասին երեսի վրա ընկան, որպեսզի գոնե ամաչելով հնազանդվեն և նորից չպատժվեն[485]:

Խրա՛տ առ. երբ ժողովուրդը խոսքով չի ցանկանում ուղղության գալ, գործնական եղանակով նրանց ուղղության բերելու նպատակով Մովսեսը և Ահարոնը գետնամած խոնարհվում են, սակայն խստապարանոց և անհնազանդ ժողովուրդը ո՛չ Աստծուց է ամաչում և ո՛չ պատժից է վախենում, ո՛չ Մովսեսի խրատին է ականջ դնում, ո՛չ նրա առաքինությունից է խրատվում:

Իսկ Հեսուն և Քաղեբը, Մովսեսի և Ահարոնի գետնամած խոնարհվելը տեսնելով, պատռում են իրենց հանդերձները և ժողովրդին խրախուսում են՝ ասում. «Մեր լրտեսած երկիրը շատ լավն է, մի՛ ըմբոստացեք և մի՛ վախեցեք, քանի որ Աստված մեզ հետ է»: Թեև նրանք այսպիսի հուսադրիչ և քաջալերական այլ խոսքեր էլ ասացին, սակայն ժողովուրդը ոչ մի կերպ չհամոզվելուց բացի, ցանկացավ քարկոծել նրանց. ահա այս ժամանակ խորանի վրայի ամպը, իսկույն ահավոր հրեղեն բոցի վերածվեց[486]՝ ի տես ժողովրդի:

Ամպի այսպիսի կերպարանափոխությունը թեև հայտնի նշան էր, որ Աստված բարկացած է և պատրաստվում է նրանց արժանի պատիժ տալ, սակայն Իր անհուն ողորմությամբ զիջում է՝ Մովսեսին հարցնելու. «Ժողովուրդդ մինչև ե՞րբ պիտի վիրավորի Ինձ, մինչև ե՞րբ պիտի շարունակի չհավատալ, թող որ նրանց կորցնեմ և քեզ մեծ ազգ դարձնեմ»[487]:

---

485 Մովսեսն ու Ահարոնը երեսնիվայր ընկան բոլոր իսրայելացիների առջև (*Թվեր* 14:5):

486 Տիրոջ փառքը ամպի մեջ երևաց վկայության խորանի վրա (*Թիվ.* 14:10):

487 Տերն ասաց Մովսեսին. «Թո՛ւյլ տուր ինձ, որ հարվածեմ մահվամբ և կորստյան մատնեմ նրանց, իսկ քեզ ու քո հոր տունը

Ճշմարիտ է, որ ժողովրդի անչափ անհնազանդության և ապերախտության պատճառով Աստված սպառնում է նրանց կոտորել և Մովսեսին ավելի մեծ ժողովրդի գլուխ դարձնել, բայց Մովսեսը, խոնարհ և համբերող և մանավանդ ազգասեր լինելով, իր ազգակիցների թերությունների վրա աչք է փակում և աղաչանքով Աստծու առջև փաստաբանություն է անում՝ ասելով. «Այս ժողովրդին Քո բարձր բազուկով և հզոր զորությամբ Դու հանեցիր Եգիպտոսից, և հիմա ամպով առաջնորդում ես նրանց, եթե նրանց կոտորես, լսողները կասեն ժողովրդին խոստացած երկիրը տանել չկարողանալու համար կոտորեց նրանց, ուստի, Տե՛ր, աղաչում եմ Քո մեծ ողորմությամբ ների՛ր ժողովրդիդ բազմաթիվ և ծանր մեղքերը»[488]:

Լա՛վ մտապահիր. երբ Աստված բարկանում է ժողովրդի վրա, նրանց «Մովսեսի ժողովուրդ» է կոչում, իսկ Մովսեսը՝ նրանց համար աղոթելու և բարեխոսելու ժամանակ «Աստծու ժողովուրդ» անվանում նրանց: Իբր ցանկանում է ասել. Տե՛ր, այս ժողովուրդն իմը չէ, այլ Քոնը, քանի որ մինչ այսօր հատկապես նրան Քեզ սեփական դարձնելով՝ մեծագույն բարիք և պաշտպանություն շնորհեցիր նրան, Քո սուրբ և օրհնյալ անունը նրա վրա է, ուրեմն Քո փառաբանյալ անվան համար ների՛ր նրանց հանցանքները, որպեսզի Քո հզոր զորությունը և անսահման ողորմությունն ամբողջ աշխարհին հայտնի լինի, և հեթանոսները Քո անվան դեմ անկարող լինեն խոսել[489] ըստ իրենց սրտի ցանկության:

այս ժողովրդից ավելի մեծ ու բազմանդամ դարձնեմ» (*Թվեր* 14:11-12):

488 Քո մեծ ողորմությամբ ների՛ր քո ժողովրդին (*Թվեր* 14:19):

489 Արդ, թող բարձրանա քո ձեռքը, Տե՛ր, ինչպես որ խոսեցիր և ասացիր, թե՝ «Տերը համբերատար է, ողորմած ու ճշմարիտ» (*Թվեր* 14:17):

Մովսեսից թող խրատ և օրինակ վերցնեն նրանք, որոնք ազգի գլուխն ու առաջնորդը եղան: Թող չասեն, թե ազգն ապերախտ և անհնազանդ է, այլ միշտ աշխատեն նրա լավության և բարօրության համար, որպեսզի պարտական չմնան Աստծուն: Նաև եթե ուզում ես, որ աղոթքդ ընդունելի լինի, նախ դո՛ւ նախանձախնդիր եղիր Աստծու փառքին, և նրա շնորհներն ու պարգևները խոստովանելով՝ միշտ գոհացի՛ր և ապավինի՛ր նրա ողորմությանը, ինչպես Աստված, իր բազում գթությամբ Մովսեսի աղոթքն ընդունելով, այն օրը չկոտորեց ժողովրդին[490]:

Սակայն նաև իր ազդարարությամբ վճռում է, որ Եգիպտոսից նրանց դուրս գալու ժամանակ բոլոր քսան տարեկանից մեծերը (բացի Հեսուից և Քաղեբից), անապատում մեռնելով, Երուսաղեմի ավետյաց երկիրը չմտնեն, այլ միայն նրանց որդիները, որոնք, Եգիպտոսից դուրս գալու ժամանակ փոքր լինելով, անկարող էին չարն ու բարին զանազանել. նրանք գնան և Աստծու խոստացած երկիրը գրավեն: Նաև Հեսուն և Քաղերը պիտի մտնեին Ավետյաց երկիրը, քանի որ նրանք հավատարմությամբ խոսեցին՝ Աստծուն հուսալով:

Դու տե՛ս Աստծու արդարությունը: Քանի որ նրանք անձնիշխան էին և մինչ այդ ժամանակ կատարված հրաշքները տեսնելով հանդերձ՝ առանց Աստծու զորությանը հավատալու գանգատվում են՝ ասելով. «Լավ էր անապատում մեռնեինք», և ցանկացան վերադառնալ, այս պատճառով նրանց գանգատների համեմատ պատուհաս տրվեց նրանց[491]: Քանզի Երուսաղեմին մոտեցած լինելով՝ քառասուն օրում սուրբ երկրին

---

490 Տերն ասաց Մովսեսին. «Կներեմ նրանց, ինչպես դու ասացիր» (*Թվեր* 14:20):

491 Կենդանի եմ ես,- ասում է Տերը,- և ես կվարվեմ այն խոսքերի համաձայն, որ հասան իմ ականջներին (*Թվեր* 14:28):

տիրանալու փոխարեն Աստված նրանց հետ դարձնելով երեսունութ տարի ևս անջուր և անմշակ անապատում շրջել տվեց, որպեսզի քառասուն տարին լրացնելով՝ իրենց գործերի համեմատ պատժվեն[492]:

«Երանի թե անապատում մեռնեինք» բուն իրենց ցանկության համաձայն երեսունութ տարվա ընթացքում այդ բոլոր գանգատվողները անապատում մեռնելով կորան գնացին[493]: «Մեր զավակները թշնամու ձեռքը պիտի ընկնեն» ասելու համար Աստված նույն այդ զավակների ձեռքով հետո կոտորել է տալիս թշնամուն:

Իսկ այն տասը լրտեսները, որոնք խոստացված երկրի մասին չարախոսեցին և այն «մարդածախ» անվանեցին, խորանի առջև իսկույն աստվածառաք պատիժ կրելով՝ մեռան և աշխարհի համար օրինակ եղան[494]: Բացի այդ, վճռված պատժի գործադրության համար Աստված հրամայում է Մովսեսին, որ հաջորդ օրը դեպի Կարմիր ծովի ճանապարհը գնան[495]:

Դու նայի՛ր անհնազանդ և համառ ժողովրդի ողորմելի վիճակին. քանի որ երբ հիշյալ լրտեսների մահը տեսան, և մանավանդ Մովսեսն էլ Աստծու հրամանի համաձայն հետադարձի լուրը տվեց, խիստ մեծ սգի մեջ մտան: Բայց իրենց հանցանքը չներվեց, քանի որ նետը, աղեղից արձակվելով, էլ հետ չի դառնում, նմանապես վճռված պատիժն անպատճառ գործադրվում է, և աստվածային վճիռն անդառնալի է:

---

492 Քառասուն օրերի թվի համեմատ (*Թվեր* 14: 34):

493 Նրանք այս անապատում պիտի հյուծվեն և այստեղ էլ պիտի մեռնեն (*Թվեր* 14:35):

494 Տիրոջ առաջ չարաչար մեռան (*Թվեր* 14:37):

495 Դուք վաղը կվերադառնաք և անապատով կգնաք դեպի Կարմիր ծով (*Թվեր* 14:25):

Նախապես երբ Մովսեսն ու Ահարոնը գետնամած աղերսում էին, Հեսուն և Քաղեբը չցանկացան լսել, այլ այնքան հանդգնեցին, որ կամենում էին քարկոծել նրանց: Այո՛, վերջում թեև կամեցան թշնամու դեմ դուրս գալ, բայց Մովսեսը պատասխանեց. «Ամաղեկացիները և քանանացիները ձեր առջևում են, մի՛ գնացեք, կկոտորվեք, քանի որ Տերը ձեզ հետ չէ»: Սակայն նրանք, դարձյալ չհամոզվելով, նրա կամքին հակառակ գործելով, իրենք իրենց խրախուսեցին և թշնամու դեմ ելան, և ահա ամաղեկացիներն ու քանանացիները, լեռից իջնելով, կոտորեցին նրանց:

Այս պարագայում ժողովուրդը, նորից անհնազանդ լինելով, կրկնապատկեց հանցանքը: Քանի որ ինչպես առաջ Տիրոջ հրամանով թշնամու դեմ չելնելը մեծ հանցանք էր, նմանապես իրենց զորությանն ապավինելով՝ պատերազմի խիզախելը մեծ հանցանք էր. այս պատճառով թշնամուց հաղթվելով՝ անապատում կորսվելու վճիռն սկսեց գործադրվել:

Օրինա՞կ վերցրու. արդարացի է, որ ժողովուրդն իր արածի համար զղջաց, բայց նրա զղջումն ընդունելի չեղավ, որովհետև զղջման ժամանակն անցել էր: Մանավանդ Աստծու պատվի համար չեն զղջում, այլ պատժի երկյուղից, սակայն պատիժը տեսնելուց հետո վախենալը և զղջում հայտնելն անհավատություն է և Աստծուն փորձել, քանզի եթե կատարյալ հավատք ունենային, պատժից առաջ Նրա հրամանին հնազանդվելով՝ կհավատային:

Թող լսեն նրանք, ովքեր ուշադրություն չեն դարձնում խրատներին, և մանավանդ թող խրատվեն նրանք, ովքեր իրենց մեղքերի համար զղջալու առիթն ունեցած ժամանակ կամակոր համառությամբ գամվում, մնում են այդ գարշելի և զզվելի մեղքի մեջ, որոնք հայտնապես իրենց կորուստ են պատճառում: Քանզի ինչպես անհնազանդ ժողովուրդը

չարժանացավ Երուսաղեմ մտնելուն, նմանապես «մեղա՛» չասելով՝ մեղքի մեջ մեռնող մարդիկ չեն կարող Աստծու արքայությունը մտնել, քանի որ ավետյաց երկիրը հոգևոր իմաստով արքայության օրինակն է:

Հարց ԺԸ. **Անապատում իսրայելացիների մեջ ուրիշ ի՞նչ դեպքեր կատարվեցին:**

Պատասխան: Մեկը շաբաթ օրը փայտ էր հավաքում, սակայն քանի որ շաբաթ օրը մարմնական գործերով զբաղվելն Աստծու պատվիրանին հակառակ էր, այդ մարդուն քարկոծելով սպանում են: Մեկ ուրիշին էլ, քանի որ բանակատեղիում կռվելու ժամանակ հայհոյել էր, Աստծու հրամանով քարկոծելով սպանեցին[496]:

Թող հայհոյող մարդիկ խրա՛տ առնեն, ինչպես նաև նրանք, ովքեր կիրակի օրը սուրբ չեն պահում, քանզի եթե հին օրենքի ժամանակ հայհոյող և աստվածային պատվիրաններին հակառակվող մարդիկ մահվան արժանի դատվեցին, նոր օրենքի ժամանակ այդպիսի ընթացք ունեցողները որքա՛ն ավելի մեծ պատժի արժանի պիտի լինեն:

Դարձյալ. Ղևիի ցեղից Կորխ անունով ազդեցիկ մեկը, Ահարոնին նախանձելով, ուզում է քահանայապետությունը նրա ձեռքից վերցնել: Այս նպատակով պատվավոր ղևտացիներից երկու հարյուր հիսունի չափ մարդկանց իրեն համախոհ գտնելով՝ հանդգնում է հասնել իր նպատակին:

Սակայն հասկանալով, որ Մովսեսն այս գործին հավանություն չպիտի տա, նրա դեմ ևս հակառակորդներ դուրս բերելու մտադրությամբ Հակոբ նահապետի անդրանիկ որդու՝

496 Տերը խոսեց Մովսեսի հետ ու ասաց. «Հայհոյող այդ մարդուն բանակատեղիից հանե՛ք դուրս.... և ամբողջ ժողովուրդը թող քարկոծի նրան» (*Ղևտ.* 24:13-14):

Ռուբենի ցեղից երեք երևելի մարդկանց՝ Դաթանին, Աբիրոնին և Օնանին, շահագրգռող միջոցներով իրեն է միացնում, որպեսզի սրանք՝ իբրև անդրանիկ ցեղից առաջ եկած պատվավոր անձինք, հետամուտ լինելով մեծությանը, կոտրեն Մովսեսի ազդեցությունը և կամ ժողովրդի գլուխ անցնեն, որ ինքն էլ կարողանա քահանայապետ դառնալ:

Այս մասին նրանք Մովսեսի և Ահարոնի դեմ այսպես էին խոսում. «Այդքանը ձեզ բավական է, միայն դո՞ւք եք սուրբ, ամբողջ ժողովուրդն է սուրբ, և Աստված նրանց մեջ է»: Ուզում էին ասել, որ եթե սրբության պատճառով եք իշխում, ամբողջ ժողովուրդն է սուրբ, ինչո՞ւ միշտ հենց դուք պիտի իշխեք:

Այս խոսքերը լսելուն պես Մովսեսն իսկույն երեսի վրա է ընկնում, սակայն ոչ թե երկյուղից, այլ նրանց խոսքերից ունեցած մեծ զարմանքից: Նա, երեսը գետնամած, Աստծուց խնդրում է, որ կամենա և պատասխանի, թե ո՛վ է սուրբ, որպեսզի իրենց միջև հակառակություն չծագի: Քանի որ Կորխը, մի հպարտ անձնավորություն լինելով, նախանձում էր Ահարոնին, սակայն նախանձելը հայտնի չդարձնելու համար սրբության խնդիր է առաջ քաշում, և «Ես սուրբ եմ» ասելը շատ անտեղի լինելու պատճառով առարկում է՝ «Ամբողջ ժողովուրդը սուրբ է», որ ինքն էլ սուրբ համարվի՝ որպես ժողովրդի մի անհատ:

Եվ քանի որ Ահարոնը Աստծու կամքով էր քահանայապետ եղել, այս պատճառով Մովսեսը դատաստանը Աստծու կամքին է հանձնում, Կորխին և նրա հետևորդներին հանձնարարում է, որ հաջորդ օրն իրենց բուրվառների մեջ ածուխ և խունկ դնելով՝ գան խորանի առջև, «Աստված ում որ ընտրի, նա է սուրբը: Մի՞թե փոքր պատիվ է, որ Աստված քեզ խորանի ծառայությանը հատկացրեց. արդ, ձեր այս պահվածքով ոչ թե

Ահարոնի, այլ Աստծու առջև եք դուրս եկել, ո՞վ է Ահարոնը, որ գանգատվում եք նրա դեմ»:

Մովսեսն այս խոսքերով ցանկացավ նրանց զղջման հրավիրել, որ պատիժ կրելու չդատապարտվեն, և մարդ ուղարկելով՝ Դաթանին և Աբիրոնին նույնպես հրավիրեց, որպեսզի ներկայանան խորանի առջև: Քանի որ նրանք վերադարձել էին իրենց վրանները և սպասում էին խնդրի ելքին. որ եթե Կորխին իր նպատակը առաջ տանել հաջողվի, իրենք էլ հարձակվեն Մովսեսի վրա և նրա իշխանությունը ձեռքից խլեն:

Սակայն հիշյալ երկու մարդիկ Մովսեսի մոտ չգալուց բացի լուր են ուղարկում՝ ասելով. «Բավական չէ, որ անապատում մեռնելու համար Եգիպտոսի նման արգասավոր երկրից մեզ հանեցիր, և տակավին իշխանություն ես վարում: Մի՞թե կաթ և մեղր բխող երկիր տանելով՝ արտ և այգի՞ տվեցիր մեզ: Եթե մինչև իսկ մեր աչքը փորելու լինես, չենք գա»:

Այսպիսի հակառակ խոսքեր լսելով՝ Մովսեսը խիստ բարկացավ, քանի որ առաջ՝ «Ելե՛ք, տիրե՛ք Ավետյաց երկրին» ասած ժամանակ, չցանկացան գրավել, իսկ այս անգամ հանդիմանում էին, թե իրենց ինչո՛ւ այնտեղ չտարավ: Մանավանդ մինչ այդ պահը Մովսեսը ոչ միայն նրանց ոչ մի նեղություն չէր տվել, այլև միշտ բարերար էր եղել, և ահա իրեն մի անգութ բռնավոր համարելու չափ անխիղճ են գտնվում:

Հաջորդ օրը Մովսեսը և Ահարոնը, խորանի դռան մոտ կանգնած, Կորխին համախոհ երկու հարյուր հիսուն մարդիկ ևս, յուրաքանչյուրը մի-մի պղնձե բուրվառ ձեռքներին, խորանի առջև գալով, կրակ ու խունկ են դնում դրանց մեջ: Կորխի դրդմամբ ժողովրդի մի մեծ բազմություն էլ է հավաքվում այնտեղ, և ահա Աստծու փառքը երևում է մի ահավոր հրի նման, և ամպի միջից խոսելով՝ Աստված Ահարոնին և Մովսեսին

ասում է. «Այդ ժողովրդի միջից մի կո՛ղմ գնացեք, որ ես դրանց միանգամից ջնջեմ»[497]:

Սակայն Մովսեսը և Ահարոնը գետնամած խնդրում են, որ մի մարդու պատճառով այդքան ժողովուրդ չկոտորվի: Աստված, նրանց աղաչանքը ընդունելով, Մովսեսին պատվիրում է ժողովրդին ասել, որ զատվեն Կորխի, Դաթանի և Աբիրոնի մարդկանցից, որպեսզի նրանց հետ չկորսվեն: Հրամանի համաձայն՝ Մովսեսը գնում և ազդարարում է, որ ժողովուրդը հեռանա այդ չար և ապստամբ անձանցից:

Եվ որպեսզի փաստի, որ ինքն Աստծու կողմից է ուղարկված, հիշյալ ապստամբների մահվան և կորստյան ձևն ու եղանակը նախապես հայտնում է՝ ասելով. «Եթե նրանք հասարակ և բնական մահով մեռնեն, ուրեմն ինձ Աստված չուղարկեց, բայց եթե գետինը ճեղքվելով՝ նրանց և նրանց ունեցվածքը կուլ տա, իմացե՛ք, որ Աստված ինձ ուղարկեց, քանի որ նրանք բարկացրին Աստծուն»:

Հազիվ Մովսեսն արտասանել էր այս խոսերը, երբ մի հրաշքով գետինը, իսկույն ճեղքվելով, կլանում է նրանց, նրանց վրանները և նրանց բոլոր համախոհներին[498]: Շուրջը գտնվող ժողովուրդը, այս նորանշան երևույթը տեսնելով և միևնույն ժամանակ գետնի տակ անցնողների ողբալի ձայները լսելով, սաստիկ երկյուղով համակված, փախչում են: Իսկ այն երկու հարյուր հիսուն մարդիկ, որոնք խորանի առջև խունկ էին ծխում, խորանից դուրս ելած կրակով այրվեցին[499]:

---

497 Հեռացե՛ք այդ ժողովրդի մոտից, որ ես միանգամից կոտորեմ դրանց (*Թվեր* 16:21):

498 Բացվեց գետինը և կուլ տվեց նրանց ու նրանց ընտանիքներին (*Թվեր* 16:32):

499 Տիրոջ ուղարկած կրակն իջավ ու ճարակեց այն երկու հարյուր հիսուն մարդկանց, որոնք խնկարկում էին (*Թվեր* 16:35):

Արդարև, խռովարարներն այսպես կորստյան մատնվեցին, Աստված հրամայում է Մովսեսին և Ահարոնի որդուն՝ Եղիազարին, որ երկու հարյուր հիսուն այրված մարդկանց պղնձե բուրվառները ողջակիզման սեղանի առջև որպես վարագույր կախեն, որպեսզի ամեն տեսնելիս պատահած պատիժը մտաբերելով՝ չհամարձակվեն այլևս Տիրոջ դեմ հակառակ ընթանալ:

Կորխի պատժից խրա՛տ առ. վիճակիցդ գո՛հ եղիր, մի՛ հպարտացիր, որևէ մեկին մի՛ նախանձիր, չար մարդկանց ընդհանրապես մի՛ հետևիր, սակայն եթե սխալվես և միառժամանակ հետևես, շտապ զղջա՛ և նրանցից հեռացի՛ր, որ չդատապարտվես, թեև Կորխը, Դաթանը և Աբիրոնը ժողովրդի մեջ պատվավոր և ազդեցիկ մարդիկ էին, բայց իրենց դիրքը չհասկանալով՝ հպարտացան և Մովսեսին ու Ահարոնին նախանձելով՝ օրինակը չունեցող մի պատուհասով իրենց բոլոր համախոհների հետ միասին դժոխք իջան: Իսկ ով չարամիտների հետ չէր միացել, անվնաս մնաց, ինչպես որ նույնիսկ Կորխի որդիները, իրենց հոր գործերին և ընթացքին մասնակից չլինելով, ազատվեցին պատժից (*Թվեր* 16:11): Նմանապես Օնանը, թեև նախապես միաբանվել էր Դաթանի և Աբիրոնի հետ, բայց հետո զղջալով և նրանց ընկերակցությունից բաժանվելով՝ փրկվում է, ինչպես ենթադրվում է: Քանի որ Դաթանի և Աբիրոնի ապստամբության սկսվելու ժամանակ նրա անունը գրված է, սակայն պատիժ ընդունելու ժամանակ չի հիշատակվում:

Հարց ԺԹ. **Կորխի, Դաթանի և Աբիրոնի պատժից հետո ժողովուրդը զղջալով հնազանդություն ցույց տվե՞ց:**

Պատասխան: Ո՛չ, երբեք: Քանի որ հաջորդ օրը հարձակվում են Մովսեսի և Ահարոնի վրա՝ ասելով, թե դուք կոտորեցիք Աստծու ժողովրդին: Մովսեսն ու Ահարոնը, նրանց այսօրինակ

վարքը տեսնելով, փախչում և մտնում են խորան: Ահա ամպը հրաշքով ծածկում է նրանց, և Աստված հրամայում է, որ ժողովրդից բոլորովին հեռանան, որպեսզի բոլորին կոտորի[500]:

Թեպետ Մովսեսն ու Ահարոնը, նույն պահին երեսի վրա ընկած, նրանց փրկության համար աղաչեցին Աստծուն, սակայն կրակ բորբոքելով՝ սկսում է կոտորել ժողովրդին: Այս տեսնելով՝ Ահարոնը, Մովսեսի հրահանգով բուրվառի մեջ սեղանից կրակ և խունկ դնելով, գնում և ժողովրդի մեռելների և ողջերի մեջ կանգնելով՝ սկսում է խնկարկել, որից Աստծու բարկությունը նվազում է, և պատուհասը դադարում է[501]:

Նկատի՛ ունեցիր. ժողովուրդը Մովսեսի և Ահարոնի մահը կամեցավ, սակայն նրանք աղոթում էին ժողովրդի համար, քանի որ Մովսեսը՝ խորանում, իսկ Ահարոնը՝ բուրվառով ժողովրդի մեջ կանգնած, իրենց ջերմ և սրտագին աղոթքներով դադարեցրին պատուհասը, սակայն այդ օրը ժողովրդից տասնչորս հազար յոթ հարյուր մարդ մեռավ, բացի վերոհիշյալ Կորխի հետ մահացածներից:

Թող խրատվեն ըմբոստ և անհնազանդ մարդիկ, որ Աստծու հրամանով կարգված մեծավորների և իշխանների դեմ դուրս գալով՝ չպատժվեն, քանի որ Մովսեսը և Ահարոնը Տիրոջ հրամանով ժողովրդին կառավարելու համար պաշտոնյա էին կարգված, նրանց հանդեպ եղած գանգատները Աստծու դեմ համարվեցին, և առանց խնայելու այդքան մարդ կորստյան մատնվեց:

Ճշմարիտ է, որ Ահարոնին նախանձող մարդիկ մեռան, սակայն այդպիսի մի շարժում նորից առաջ չգալու համար

---

500 Տերը խոսեց Մովսեսի և Ահարոնի հետ ու ասաց. «Հեռացե՛ք այդ ժողովրդի միջից» (*Թվեր* 16:44-45):

501 Ահարոնը կանգնեց սպանված ու կենդանի մարդկանց միջև, և կոտորածը դադարեց (*Թվեր* 16:48):

Աստված, կամենալով նրա քահանայապետությունը հրաշքներով ևս հաստատել, հրամայում է, որ տասներկու ցեղից երևելի մարդիկ իրենց գավազանների վրա անունները գրեն, նույնպես և Ահարոնը, իր գավազանի վրա անունը գրելով, խորանում՝ տապանակի առջև, դնեն, և որի գավազանը ծաղկի, նա՛ է քահանայապետը:

Մովսեսը, հրամանի համաձայն գավազանները տապանակի առջև դնելով, հաջորդ օրը տեսնում է, որ Ահարոնի գավազանը բողբոջելով ծաղկել է և ընկույզ է պտղաբերել: Այս հրաշալիքի առջև ամեն մարդ ձայնը կտրած պարտավորվեց հնազանդվել: Մովսեսը Տիրոջ հրամանով այդ գավազանը տապանակի մեջ է դնում, որպեսզի ապագայում Աստծու հրաշքը չմոռացվի: Ժողովուրդը, վերոհիշյալ պատիժը տեսնելով, ասում է Մովսեսին. «Ահա կոտորվում ենք. ով մոտենում է խորանին, մեռնում է, այնպես որ բոլորս էլ պիտի մեռնենք»: Քանի որ նրանք այնքան վախեցան, որ այլևս չէին համարձակվում խորանի մոտ գնալ:

Եվ քանի որ այս պատիժը քահանայապետության համար եղավ, այս առիթով Աստված ցույց է տալիս, թե որո՛նք են Ահարոնի, նրա որդիների, այլ քահանաների և ղևտացիների՝ խորանին ծառայելու պարտականությունները և միաժամանակ նրանց ապրուստի համար հատկացվող եկամուտն ու ռոճիկը: Որպեսզի յուրաքանչյուրը իր պաշտոնին և ծառայությանը նվիրվի և երբեք որևէ հակառակություն չծագի նրանց միջև:

Ժողովուրդն էլ, ըստ հրամանի սահմանված տուրքը ղևտացիներին վճարելով, թող երբեք չմիջամտի և չխառնվի խորանի ծառայությանը, որպեսզի չմեռնեն: Այս պատվերի մշտապես հաստատուն և տևական լինելու ապացույց տալու համար մի օրինակով հայտնում է նրանց, թե՝ «Աղի ուխտ է

այս[502]. ինչպես որ աղն է միօրինակ և անփոփոխ մնում առանց փչանալու և ապականվելու, այս ուխտն էլ հավիտենական և անփոփոխ թող մնա ձեր մեջ»:

Բացի այդ քահանայապետի պաշտոնն էր, տարին մեկ անգամ՝ Քավության տոնին, անարատ և լծի տակ չեղած մի երինջ բանակատեղիից դուրս մորթելով, նրա արյունը ամանի մեջ հավաքելով, խորանի առջև յոթ անգամ մատով ցանի ժողովրդի մեղքի քավության համար: Հետո այն իր ամեն ինչով պետք է այրել ու մոխիրը պահել և այս մոխիրը ջրին խառնելով՝ օրենքի համաձայն անմաքուր համարվող մարդու վրա ցողել, որ մաքրվի:

Հոգևոր իմաստով այս երինջը Հիսուս Քրիստոսի օրինակն է, քանի որ Քրիստոսը, բոլոր մարդկանց մեղքերի քավության համար Երուսաղեմից դուրս՝ Գողգոթա լեռան վրա խաչվելով, Իր ամենասուրբ արյունը թափելով, մահացավ[503]: Ճիշտ է, որ ներկայումս Գողգոթա լեռը քաղաքի մեջ է գտնվում, սակայն պատմությունը և սուրբ Ավետարանը ցույց են տալիս, որ հնում քաղաքից դուրս էր գտնվել:

Հարց Դ. **Իսրայելացիները հետո ո՞ւր գնացին:**

Պատասխան: Գնացին Սին անապատի Կադես կոչված վայրը (սա երրորդ դարի 55-րդ հարցի մեջ հիշված Սինը չէ): Քանի որ Եգիպտոսից դուրս գալուց հետո դեռևս Սինա լեռանը չհասած՝ ութերորդ իջևանն էր այդ տեղը, որտեղ երկնքից մանանա սկսեց իջնել, սակայն այս Սին անապատը երեսուներեքերորդ իջևանը եղավ:

---

502 Տիրոջ առաջ Աղի ուխտ է (*Թվեր* 18:19):

503 Հիսուս, որպեսզի իր արյամբ մաքրի ժողովրդին, չարչարվեց դռնից դուրս (*Եբր.* 13:12):

Նմանապես այս Կադեսը տարբեր է մյուս Կադեսբառայից, որից հետ դառնալով (ինչպես հիշեցինք 18-րդ հարցում)՝ երեսունութ տարի անապատում շրջելուց հետո քառասուներորդ տարվա առաջին ամսվա մեջ իսրայելացիները նորից հիշյալ վայրը եկան, որտեղ Մովսեսի քույրը՝ Մարիամը, մեռավ և թաղվեց:

Այստեղ ևս ջուր չգտնելով՝ ժողովուրդը նորից սկսեց բամբասել Մովսեսին և Ահարոնին, «Ինչո՞ւ մեզ Եգիպտոսից հանելով՝ այս վատ տեղը բերեցիք, որտեղ վար ու ցանքս չի լինում, այգի, սեխ, նուռ և խմելու ջուր չկա»[504] ասելով՝ հարձակվում են նրանց վրա, որոնք, խորանը փախչելով, երեսի վրա տարածվում են Աստծու առջև:

Խորամո՛ւխ եղիր. երբ Մովսեսն ու Ահարոնը մի ծանր տագնապ են ունենում, Աստծու ողորմությանը ապավինելով՝ խորանում են ապաստանում և ողորմություն խնդրում, և Աստված, Իր փառքը հայտնելով[505], նրանց ոչ միայն ազատում է վտանգից, այլ նաև ցանկանում է նրանց ջուր տալ, որպեսզի Իր անհուն կարողությունն ու գթությունը հայտնի ամբողջ ժողովրդին, ապերախտ և ապաշնորհ ժողովրդին:

Այս պատճառով Աստված հրամայում է Մովսեսին, որ գավազանը վերցնելով՝ հավաքի ժողովրդին և նրանց առջև Ահարոնի հետ քարին ասեն, որ ջուր բխեցնի: Արդարև, հրամանի համաձայն ժողովուրդը հավաքվում է հիշյալ ժայռի մոտ, բայց «Ջուր տուր» չեն ասում, այլ ժողովրդից նեղացած և նրանց

---

504 Ինչո՞ւ հանեցիք մեզ Եգիպտացիների երկրից, որ գանք հասնենք այս վատ տեղը, ուր ո՛չ սերմ կլինի ցանել, ո՛չ սեխ կա, ո՛չ այգիներ, ո՛չ նռենիներ և ո՛չ իսկ խմելու ջուր (*Թվեր* 20:5):

505 Եվ Տիրոջ փառքը երևաց նրանց (*Թվեր* 20:6):

վրա բարկացած լինելով՝[506] Մովսեսը տարակուսանքով երկու անգամ քարին է զարկում իր գավազանով:

Սակայն մի՛ կարծիր, թե Մովսեսը Աստծու կարողության վրա տարակուսում է, այլ ժողովրդի ընթացքին նայելով՝ տարակուսում է, թե մի այսպիսի անհնազանդ ժողովրդի համար քարից արդյոք ջուր դուրս կգա՞: Իրոք, ժողովուրդն անարժան էր, սակայն քանի որ Աստծու ողորմությունը չափ և սահման չունի, քարից իսկույն շատ առատ ջուր է բխում, որից թե՛ ժողովուրդն է խմում և թե՛ նրանց անասունները:

Առաջ Քորեբ լեռան մոտ Մովսեսը, իր գավազանով քարին հարվածելով, ջուր բխեցրեց (ինչպես հիշատակեցինք երրորդ դարի 6-րդ հարցում), սակայն այս անգամ չէր հրամայվել, որ քարին զարկի, այլ միայն խոսքով ասելու հրաման լինելու և քարին զարկելը հրամանին հակառակ լինելու պատճառով Աստված բարկանալով վճռում է, որ Մովսեսն ու Ահարոնը ժողովրդին Ավետյաց երկիր չտանեն[507]:

Թեպետ Մովսեսի և Ահարոնի՝ ժողովրդի Ավետյաց երկիր չտանելը հոգևոր իմաստով նշանակում է, որ մարդիկ, հին օրենքի զորությամբ արքայություն մտնելու համար անկարող լինելով, անպատճառ Հիսուս Քրիստոսի շնորհի կարիքն ունեն, այսուհանդերձ այս դեպքը մարդկանց մեծ դաս եղավ:

Քանի որ բարերար Աստված, ողորմությանը անարժան եղողներին գթալով, մեղավորներին խրախուսում է, որ առանց հուսահատվելու Աստծու անսահման ողորմությանը ապավինելով՝ քավության արժանի լինեն:

---

506 Նրան բարկացրին Հակառակության ջրերի մոտ, և Մովսեսը տանջվեց նրանց պատճառով (*Սաղմ.* 105:32):

507 Տերն ասաց Մովսեսին ու Ահարոնին. «Քանի որ դուք ինձ չհավատացիք, որ ես կարող եմ ինձ սրբացնել իսրայելացիների առջև, ուստի դուք այդ ժողովրդին չեք առաջնորդի... » (*Թվեր* 20:12):

Նմանապես Մովսեսի և Ահարոնի նման սրբերի մի փոքր օրինազանցության կամ պարտազանցության պատճառով ժողովրդին Երուսաղեմ տանելու փառքից և պատվից նրանց զրկելով, սրբերին էլ է երկյուղ տալիս և զգուշացնում, որ ժողովրդի պակասություններից նեղվելով՝ բարկությամբ իրենց պարտականությունների դեմ չգործեն, մանավանդ իրենց առաքինությունների համար հպարտալով՝ չմեղանչեն: Քանի որ մարդը ինչքան էլ սուրբ և իմաստուն լինի, այնքան ևս պարտավոր է զգուշանալ, քանի որ ինչքան մարդը ողջ է, չի կարող վտանգից ազատ և զերծ մնալ:

Քանի որ վերոհիշյալ Կադես անվանված տեղը Եդոմին մոտ էր, Մովսեսը երկրի թագավորի մոտ մարդ է ուղարկում՝ խնդրելու, որ Եդոմի միջով անցնելու թույլտվություն տա իրենց, բայց այս պայմանով, որ առանց նրանց դաշտերն ու այգիները ոտնակոխ անելու, ուղիղ ճանապարհով անցնեն գնան, և եթե ջուր խմեն, գինը վճարեն: Սակայն հիշյալ թագավորը ոչ մի կերպ չի համաձայնում ճանապարհ տալ իսրայելացիներին, ընդհակառակը, արգելելու համար մեծ զորքով պատերազմի է դուրս գալիս նրանց դեմ:

Թեև Մովսեսը կարող էր բռնությամբ անցնել այդ երկրի միջով, բայց եդոմացիները, Եսավի ցեղից լինելով, Աստված Մովսեսին պատվիրել էր, որ նրանց հետ չպատերազմի, քանի որ Եսավի երկրից իսրայելացները որևէ տարածք չպիտի գրավեին, ինչպես որ հայտնի է (*Բ Օր.* 2:5): Այս պատճառով Մովսեսն առանց նրանց հետ պատերազմելու ուրիշ ճանապարհով շարունակեց ընթացքը:

Հարց ԻԱ. **Իսրայելը հետո ո՞ւր գնաց:**

Պատասխան: Հովր լեռան ստորոտը: Այստեղ Աստված Մովսեսին պատվիրում է, որ Ահարոնին և նրա որդի Եղիազարին

լեռը բարձրացնի, որտեղ Ահարոնի զգեստը հանելով՝ Եղիազարին զգեստավորի, և Ահարոնն այնտեղ մեռնի: Մովսեսի՝ աստվածային սույն հրամանը գործադրելուց հետո Ահարոնը հարյուր քսաներեք տարեկանում մեռավ, և ժողովուրդը երեսուն օր սուգ արեց նրա վրա:

Արադ երկրի թագավորը՝ Քանանիսը, պատերազմի դուրս գալով իսրայելացիների դեմ, գերիներ է առնում և տանում իր երկիրը, որը մոտ էր իսրայելացիների բանակատեղիին: Ուստի իսրայելացիները, իրենց հույսն Աստծու վրա դնելով, ուխտ են անում, որ Աստված իրենց հաղթանակ պարգևի, նզովի Արադի բնակիչներին և ամբողջ երկիրը: Արդարև, իսրայելացիները Աստծու զորությամբ հաղթում են, կոտորում են այդ երկրի մարդկանց, անասուններին և կործանում նրանց քաղաքները: Այդ պատճառով իսրայելացիներն այդ տեղը կոչեցին Հորմա (նզովք):

Հետո Հովր լեռից դեպի կարմիր ծովի ճանապարհն են շարժվում: Եվ երբ այն տեղից էլ Եդոմի երկրի մոտակայքում շրջելով դեգերում են, ժողովուրդը, ճանապարհից հոգնելով, դարձյալ սկսեց գանգատվել և Աստծուն ու Մովսեսին բամբասել՝ ասելով, թե «Եգիպտոսից մեզ հանեցիր անապատում կոտորելու համար, ո՛չ հաց ունենք, ո՛չ ջուր, այս փուչ հացից (մանանայից) զզվեցինք»[508]:

Դու նայի՛ր ժողովրդի ապերախտությանը. ճանապարհին փոքր կամ մեծ նեղությունների համար մինչ այն ժամը տեսած հրաշքները մոռանալով՝ երկնքից իջնող մանանայից ձանձրանում է, հանդգնում այն փուչ հաց անվանելու չափ: Պարզ

---

508 Ժողովուրդը սկսեց գանգատվել Աստծուց ու Մովսեսից. «Ինչո՞ւ մեզ հանեցիր Եգիպտոսից, որ մեզ այս անապատում կոտորես: Ո՛չ հաց կա և ո՛չ ջուր: Մենք զզվել ենք այս խղճուկ սննդից» (*Թվեր* 21:5):

է, որ նրանց սիրտը Եգիպտոսի հետ է կապված, նրանց միտքը զվարճությանն ու հեշտասիրությանն էր հակված, նրանց լեզուն, թունավոր լինելով, մշտապես և ամեն առիթով մեղադրելով, «Ինչո՞ւ մեզ Եգիպտոսից հանեցիր» է ասում, որով՝ որպես մի թունավոր նետով, Մովսեսի սիրտը խոցելուց բացի, գրգռում են Աստծու բարկությունը:

Ուստի Աստված նրանց հանցանքների համեմատ որպես պատիժ թունավոր օձեր է ուղարկում, որից շատ շատերը մահանում են: Ժողովուրդը երբ այսպիսի պատիժը տեսավ, խոստովանելով, որ հանցավոր են, և աղաչում են Մովսեսին, որ աղոթի Աստծուն օձերի անհետացման համար: Մովսեսն ինչպես անցյալում էր աղոթում նրանց համար, այս անգամ էլ սրտագին աղոթքով դիմում է Աստծուն և Նրա պատվիրանի համաձայն մի պղնձե օձ պատրաստելով՝ մի փայտի վրա է դնում, որը մի բարձր վայրի վրա է կանգնեցնում, որպեսզի օձերից խայթված մարդիկ, դրան նայելով, բժշկվեն: Արդարև, ովքեր գնալով նայում էին, Աստծու զորությամբ իսկույն առողջանում էին[509]:

Օրինա՛կ վերցրու. պղնձե օձի գտնվելու տեղը գնալ և նրան նայելով՝ բժշկվելու մեջ մեղքի փոխարեն ապաշխարելու օրինակն է իմացվում, քանի որ միայն զղջումով մարդը թողություն չի կարող գտնել, այլ պարտավոր է իր հանցանքի համաձայն խոստովանահայրը ինչ ապաշխարություն նշանակի՝ որպես մեղքի հատուցում, այն սրտի մտոք և ճշտությամբ կատարի, այս է թողություն գտնելու միակ և օրինական միջոցը:

Դու նայի՛ր Աստծու ողորմությանը: Հիրավի, օձերը պատիժ էին, և պղնձե օձը որպես դեղ կանգնեցվեց, սակայն այս

---

509 Մովսեսը պղնձե օձ պատրաստեց և դրեց ձողի վրա: Օձից խայթվողը, նայելով պղնձե օձին, կենդանի էր մնում (*Թվեր* 21:9):

տնօրինությունը շատ խորհրդավոր է, քանզի հոգևոր իմաստով այն, Գողգոթայի վրա Հիսուս Քրիստոսի խաչվելով, մարդկային ցեղը մեղքից փրկելու օրինակն էր[510]:

Իսրայելացիները, այդ պղնձե օձը իրենց հետ Երուսաղեմ տանելով, թերևս որոշ ժամանակ անց զոհեր մատուցելով, սկսեցին պաշտել այն, սակայն Երուսաղեմի Եզեկիա թագավորը այն կոտրատելով ոչնչացրեց, ինչպես հայտնի է (*Դ Թագ* 18:4):

Հարց ԻԲ. **Վերոհիշյալ պատժից հետո ժողովուրդը աստվածային հրամանին նորից հակառակ գործե՞ց:**

Պատասխան: Այո՛, գործեց: Քանի որ եդոմացիների երկրից գնալու ժամանակ այդ կողմերում գտնվող կռապաշտ ազգերին կոտորելով և նրանց տեղերը գրավելով՝ եկան հասան Հորդանան գետի մոտ Երիքով քաղաքի առջևում գտնվող Սատտիմ կոչված տեղը, որտեղ իջևանեցին: Բաղակը, որը մոտակայքում բնակվող կռապաշտ մովաբացիների թագավորն էր, սաստիկ վախենում է իսրայելացիների ներկայությունից:

Թեև Աստծու պատվիրանի համաձայն իսրայելացիները նրան չպիտի վնասեին (*Բ Օր.* 2:9), սակայն այլ երկրներին հասցրած վնասներին նայելով՝ Բաղակը կասկածում է և իր երկրին սահմանակից Մադիամի երկրի երևելիների հետ խորհրդակցում, թե ինչպես կարող են իրենք իրենց պահել, քանզի բազուկի ուժով իսրայելացիներին դիմադրելու կարողությունն ու համարձակությունը չուներ:

Այն ժամանակ Բաղաամ անունով մի հռչակավոր կախարդ կար, որը Եփրատ գետի եզերքին գտնվող Փաթուր քաղաքում

---

510 Ինչպես որ Մովսեսը անապատում բարձրացրեց օձը, այնպես էլ մարդու Որդին պետք է բարձրանա (*Հովհ.* 3:14):

էր բնակվում, և որի մոտ Բաղակը մեծամեծ ընծաներով մարդ ուղարկեց, որ գա և անիծի իսրայելացիներին:

Քանի որ նա հույս ուներ, որ այդ կախարդի անեծքի զորությամբ իսրայելացիները վնասվելով անկարող պիտի լինեին իրեն չարիք հասցնելու: Բաղաամը իր մոտ եկած մարդկանց պատասխանում է. «Սպասե՛ք, այս գիշեր Աստված ինչ որ հրամայի, դրա համաձայն ձեզ կպատասխանեմ»: Ակայն Բաղաամի դիտավորությունը ոչ թե իրոք Աստծուն հարցնելով պատասխանի համեմատ շարժվելն էր, այլ կախարդությամբ սատանային հարցնելը:

Արդ, Աստված հայտնելու էր Իր զորությունը Բաղաամին և Իր անհուն ողորմությունը՝ իսրայելացիներին, Բաղաամին կարգադրեց, որ չգնա և իսրայելացիներին չանիծի: Այն ժամանակ Բաղաամը եկած մարդկանց պատասխանեց, որ չի կարող գնալ և չգնաց: Երբ Բաղակը այս լուրը ստացավ, նորից պատվավոր մարդկանց ուղարկելով՝ շատ ընծաներ է խոստանում նրան, միայն թե առանց հապաղելու շտապեր, գար:

Այս անգամ Աստված Բաղաամին հրամայում է, որ գնա, սակայն խոսի այն, ինչ Ինքը կթելադրի նրան: Եվ քանի որ հիշյալ կախարդը շատ խորամանկ և ագահ մարդ էր, մտադրվում է գնալ և անիծել իսրայելացիներին, որպեսզի ուզածի պես Բաղակից դրամ ստանա: Երբ նա, էշին հեծած, գնում է, Աստծու կամեցողությամբ հրեշտակը սուրը ձեռքին իսկույն էշի առջև է կանգնում, որը երկյուղից խոտորվում է ճանապարհից՝ զգուշանալու և չվնասվելու համար:

Բաղաամը գավազանով հարվածում է էշին, որ ճանապարհով գնա: Հետո երբ մի փոս տեղով էին անցնում, հրեշտակը նորից ճանապարհը կտրում է, որից անասունը, պատին հենվել ցանկանալով, Բաղաամի ոտքը ճմլում է, և նա դարձյալ սկսում է գանահարել էշին: Վերջապես չափազանց նեղ մի

վայրով անցնելու ժամանակ, երբ հրեշտակը երևում է, կենդանին, շեղվելու տեղ չունենալով, նստում է: Երբ Բաղաամը նորից սկսում է հարվածներ տեղալ կենդանու վրա, մի հրաշքով էշը մարդկային լեզու է ստանում և մարդու նման հարցնում. «Ես ի՞նչ հանցանք եմ գործել, որ այս երեք անգամ է ինձ հարվածում ես, մի՞թե մինչև այսօր այդպիսի մի բան էի արել»:

Բաղաամը պատասխանում է. «Ինձ ծաղրեցիր, և եթե մոտս սուր լիներ, անշուշտ քեզ արդեն վիրավորած կլինեի»: Այս խոսքի վրա նրա աչքերը բացվում են, և տեսնում է հրեշտակին, իսկույն դեմքի վրա ընկնելով՝ երկրպագություն անում: Հրեշտակը հարցնում է Բաղաամին. «Ինչո՞ւ էշին ծեծեցիր, ես էի, որ դիմացը կանգնում էի, և եթե նա ճանապարհը չշեղեր, սպանելու էի քեզ, քանի որ սիրտդ իմ առջև ուղիղ չէր»: Այն ժամանակ Բաղաամը զղջալով հայտնում է, որ պատրաստ է հետ դառնալ, եթե հրամայի, բայց հրեշտակը պատվիրում է գնալ և ինչ որ ինքը թելադրի, միայն այն խոսի:

Էշի մարդկային լեզվով խոսելը տեսնելուց հետո Բաղաամն իհարկե պարտավոր էր խորհել, որ մի խորհրդավոր բան կա այս անօրինակ դեպքի մեջ, և հետ պիտի կանգներ իր չար ընթացքից, սակայն նա, լինելով կախարդ, խրատվելու փոխարեն սկսում է էշի հետ խոսել՝ որպես ճանապարհի ընկերոջ, այդ պատճառով հրեշտակը նրան հայտնեց ինքն իրեն, որպեսզի Աստծու զորությունը և Իսրայելի հանդեպ խնամքն ու պաշտպանությունը հասկանալով՝ հրամանին հակառակ չընթանա:

Բաղակը, Բաղաամի գալստյան մասին լսելով, առոք-փառոք դիմավորում է նրան, և առավոտյան տանում այն վայրը, որտեղից երևում էր իսրայելացիների բանակատեղիի մի մասը, և քանի որ Բաղաամը հարստություն էր տենչում, Բաղակին առաջարկում է յոթ սեղան շինել և յոթ զվարակ ու յոթ խոյ

զոհ մատուցել, և ինքը կգնա Աստծուն հարցնելու, ինչ որ Նա հայտնի, այն կպատմի:

Արդարև, նրա այս ձևով հանձնարարությունը ուրիշ բան չէր, եթե ոչ վարձատրություն ստանալու համար կախարդներին հատուկ խորամանկություն և հնարք: Բայց Աստված չպիտի թույլ տար, որ ըստ իր հաճույքի խոսեր, ուստի նզովելու փոխարեն, ընդհակառակը՝ օրհնում է իսրայելացիներին, քանի որ Աստված էր խոսեցնում նրան:

Երբ Բաղակը լսում է նրա խոսքերը ասում է. «Ես քեզ հրավիրել եմ ոչ թե օրհնելու, այլ անիծելու իմ թշնամուն»: Այնտեղից մի ուրիշ տեղ է տանում նրան՝ մտածելով թերևս՝ տեղափոխվելով հանձն առնի անիծել: Թեպետ այնտեղ ևս նախորդի նման սեղան շինել և զոհեր անել տվեց, սակայն երբ անիծել չկարողանալով՝ նորից է սկսում օրհնել Իսրայելին, Բաղակը ասում է. «Եթե չես անիծում, գոնե մի՛ օրհնիր»: Բաղաամը պատասխանում է. «Աստված ինչ որ հայտնում է, այն եմ խոսում»:

Դարձյալ Բաղակը նրան մի այլ տեղ է տանում, բայց այնտեղ առավել ևս է օրհնում և միաժամանակ հայտնում, որ իսրայելացիների ազգը պիտի խիստ շատ զորանա և փառավորվի ու հաղթի իր թշնամիներին, մանավանդ նրա ցեղից Մեսիան պիտի ծնվի[511]: Երբ Բաղաամը Աստծու ազդմամբ այս մարգարեական խոսքերն էր արտասանում, Բաղակը բարկանալով ասում է. «Կորի՛ր, տե՛ղդ գնա, ես կամեցա քեզ ընծաներով պատվել, բայց Աստված քո բախտավորությանը և հարստությանը արգելք եղավ»:

Այստեղ Բաղաամի չար նպատակը լա՛վ մտապահիր. քանի որ անկարող եղավ անիծել Իսրայելին, ուստի իր նյութական

---

511 Ծագելու է Հակոբի աստղը, մի մարդ է բարձրանալու իսրայելացիներից (*Թվեր* 24:17):

շահը չկորցնելու համար Բաղակին մի այնպիսի անզգամ խորհուրդ և խրատ է տալիս, որի գործադրությունը կարող էր նրան հասցնել իր նպատակին, այն է՝ իսրայելացիների մոտ աղջիկներ ուղարկել, որոնց միջոցով ժողովրդին շնության մեղքի մեջ գցելուց բացի, իրենց կուռքերին էլ ստիպեն պաշտել, որպեսզի Աստված բարկանալով՝ իր խնամքն ու պաշտպանությունը վերցնի Իսրայելի ժողովրդի վրայից, և այսպիսով կարողանա հաղթել նրանց:

Արդարև, Բաղաամի չար խորհրդի համաձայն՝ Բաղակը անպարկեշտ աղջիկների ուղարկեց իսրայելացիների մոտ, որոնց պատճառով ժողովուրդն այն աստիճանի մոլորվեց, որ առանց ամաչելու իր ցանկական կրքին հագուրդ տալու համար խորանի մոտ հատուկ տեղ շինելով՝ նրանց կուռքերին էլ սկսեց պաշտել, որով Աստծու սաստիկ բարկությունը հրավիրեց իր վրա[512]:

Խրատվի՛ր նրանց թշվառ վիճակից, ովքեր, այսպիսի զարշելի պղծություն գործել հանդգնելով, թե՛ մարմնով և թե՛ հոգով կորստյան մատնվեցին: Քանի որ անցյալում երբ մեղքի համար արժանի էին լինում պատժի, Մովսեսն աղաչում էր Աստծուն, որ նրանց ների, սակայն այս անգամ նրանց համար աղոթելու փոխարեն Աստծու հրամանով պղծագործ բազմության գլխավորներին կախել է տալիս և ժողովրդին հրամայում, որ բոլոր կռապաշտներին անխնա սպանեն:

Թեպետ նրանք, ովքեր չէին մասնակցել այդ պղծությանը, խորանի առջև կանգնած լալիս էին, բայց նույն հարվածի ժամանակ, երբ բազմաթիվ մարդիկ կախված և ժողովուրդը առանց ազգականությանն իսկ նայելու կոտորում էր

---

512 Իսրայելացիները.... պղծվեցին այնտեղ մովաբացիների դուստրերի հետ պոռնկանալով... Իսրայելացիները կերան մովաբացիների մատուցած զոհերից ու երկրպագեցին նրանց կուռքերին (*Թվեր* 25:1-2):

հանցավորներին, Մովսեսը և ուրիշ անմեղ մարդիկ ներկա էին այնտեղ, և ահա Շմավոնի ցեղի պետը՝ Զամբրի անունով, հայտնապես երկու այլ մարդկանց հետ այդ պահին մտնում են վերոհիշյալ վայրը՝ շնության մեղքը գործելու:

Փենեեսը, որը Եղիազար քահանայապետի որդին էր, երբ տեսավ այս անամոթ և լիրբ վարմունքը, չկարողանալով համբերել, նիզակով իսկույն խոցեց և սպանեց թե՛ այդ անամոթ մարդկանց և թե՛ նրանց դեպի մեղքը հրապուրող պոռնիկ կնոջը:

Դու նայի՛ր Աստծու փառքի և արդարության նախանձախնդիր մարդու առաքինությանը. քանի որ Փենեեսի կողմից շնացող այդ մարդկանց սպանելը արդար և իրավացի էր, Աստծուն հաճելի արարք համարվեց, որով պատիժն իսկույն դադարեց, սակայն մինչ այդ ժամանակ քսանչորս հազար մարդ մեռավ: Եվ ինչպես որ աստվածային սուրբ կամքին հակառակ գործողները պատժվեցին, նմանապես նաև աստվածային կամքը իրագործելու մեջ եռանդ և սեր ցուցաբերող մարդը փառավորվեց. քանզի Աստված քահանայությունը խոստացավ Փանեեսին և նրա ցեղին[513]:

Խելամո՛ւտ եղիր: Իսրայելի ժողովուրդը, որ պատերազմի ահեղ զորությամբ չէր հաղթվի, անպարկեշտ և լկտի կանանց հրապուրանքից հաղթվեց, որի հետևանքը եղավ ահավոր պատիժն ու կոտորածը իր ներսում: Այն չարահնար հրահանգը, որ Բաղաամը Բաղակին տվեց, սատանայի մի հնարքն էր, քանի որ ինչպես սատանան դրախտում օձի միջոցով Եվային և սրա ձեռքով նաև Ադամին մեղքի մեջ գցեց, նմանապես Բաղաամի ձեռքով կանանց սեռը գործիք դարձնելով՝ Իսրայելի ժողովրդի մի մասի կորստյան պատճառ դարձավ[514]:

---

513 Ապա Փենեեսը եկավ մեջտեղ, քավություն տվեց, ու մահը վերջ գտավ (*Սաղմ.* 105:30):

514 Թողնելով ուղիղ ճանապարհը՝ մոլորվեցին՝ ընթանալով Բաղաամի ճանապարհով (*Բ Պետ.* 2:15):

Ամեն մեղք, որ Աստծու հրամանին հակառակ է, մարդուն հավիտենական կրակով դժոխքում այրվելու պատճառ է լինում, սակայն զգայական ցանկության բորբոքումը, երբ մի անգամ գրավի մարդու սիրտը, նրա մարմինն էլ հրի նման վառում այրում և փոշիացնում է: Այս պատճառով Ս. գիրքը հնոցի է նմանեցնում այն վայրը, որտեղ շնության մեղքն էին գործում, և որտեղ Փենեեսը մահվամբ պատժեց այդ անառակ և անզգամ մարդկանց[515]:

Այսպիսի վտանգներից ազատվել ցանկացողը պետք է խուսափի պատճառից, չարասեր մարդկանց հետ չմիաբանվի, այս պատճառով Մովսեսը Աստծու հրամանով իսրայելացիներին հրամայում է թշնամանալ և կոտորել այն բոլոր կռապաշտներին, որոնք իրենց մեղքի մեջ գցելու պատճառ են լինում:

Իշխանություն ունեցող մարդիկ պարտավոր են Փենեեսի նման Աստծու փառքին նախանձախնդիր լինել, որպեսզի Աստծու առջև պատասխանատվությամբ ընթանան: Քանի որ եթե չարերին չպատժեն, բարիները կվնասվեն. նա, ով կարող է հանցավորին պատժել, սակայն զանց առնելով անպատիժ է թողնում, ինքն էլ է հանցավոր լինում: Անուղղելի անձին պատժելը ոչ թե անգթություն է, այլ Աստծու հրամանը գործադրել:

Հարց ԻԳ. **Աստված Բաղաամին ինչո՞ւ թույլ տվեց, որ Բաղակի մոտ գնա:**

Պատասխան: Իր զորությունը նրանց հայտնելու համար: Որովհետև Բաղակի հույսը Բաղաամին էր, պետք չէ կարծել, թե դրա համար արգելեց նրան, իբր թե նա կարող էր իր անեծքով վնասել Իսրայելի ժողովրդին, այլ Բաղաամը խոսում է այն,

---

515 Այդ տղամարդու հետևից մտավ անառակ կնոջ սենյակն ու խոցեց երկուսին էլ (*Թվեր* 25:8):

ինչ Աստված է հրամայում, և եթե պատվիրեց չանիծել Իսրայելին, պատճառը այն էր, որ եթե իսրայելացիները մեղքի համար պատժվեին, հնարավոր է՝ սխալմամբ կարծեին, թե Բաղաամի անեծքով եղավ:

Քանի որ թեպետ Բաղաամը օրհնեց Իսրայելին, բայց երբ սա մեղանչեց, Աստված դարձյալ պատժեց նրան: Ուրեմն իսրայելացիների առումով Բաղաամի թե՛ վատ և թե՛ լավ խոսելով նրանց ո՛չ օգուտ, ո՛չ էլ վնաս էր լինում, այլ իրավամբ և արդարությամբ օրենքի համաձայն իրենց գործերին համապատասխան նրանց հատուցում է լինում Տիրոջ կողմից: Քանի որ ինչպես Բաղաամի էշը, մարդու նման խոսելով, մարդ չդարձավ, նմանապես թեև Աստված Բաղաամին խոսել տվեց, բայց նա դրանով սուրբ չդարձավ, այլ մնաց նույն չարության մեջ:

Այո՛, կատարված հրաշքը տեսնելով՝ պիտի ուղղեր իր ընթացքը, մինչդեռ ընդհակառակը, ուղղելու փոխարեն այդ անօրեն և չարիքի պատճառ հանդիսացող խրատը տալով՝ առավել սաստկացրեց իր պատիժը: Քանի որ Աստծու հրամանով երբ իսրայելացիները կոտորում էին այդ երկրների կռապաշտներին, Բաղաամը ևս նրանց հետ կորստյան մատնվեց, ինչպես որ հիշվում է (*Թվոց* 31:8):

Այս մասին մի՛ կարծիր, թե միայն սրբերի միջոցով է հրաշք գործվում, քանի որ ինչպես Սուրբ Ավետարանում ենք կարդում[516], Աստված երբեմն մեղավոր մարդկանց հրաշագործության զորություն է տալիս, որպեսզի նրանց ձեռքով ևս

---

516 Այն օրը շատերն ինձ պիտի ասեն. «Տե՛ր, Տե՛ր, չէ՞ որ քո անունով մարգարեացանք և քո անունով դևեր հանեցինք և քո անունով բազում զորավոր գործեր արեցինք»: Եվ այն ժամանակ ես նրանց պիտի ասեմ. «Ես ձեզ երբեք չեմ ճանաչել, հեռո՛ւ կացեք ինձանից դու ամենքդ, որ անօրենություն եք գործում» (*Մատթ.* 7:22, 23):

Իր աստվածային կարողությունը ցույց տա աշխարհին՝ իբրև Տեր ամեն ինչի:

Նմանապես երբեմն չար մարդկանց գիտություն և մարգարեական շնորհ էլ է տալիս, ինչպես, որ Կայիափա քահանայապետը իսրայելացիների փրկության համար Հիսուսի՝ մեր Փրկչի մահը կանխածանուցեց[517] իսրայելացիների փրկության համար, քանի որ հրաշքը, գիտությունը և մարգարեությունը չեն կարող մարդուն տանել արքայություն, այլ ուղիղ հավատով առաքինություն է պետք: Արդ, այսպիսի մարդիկ, եթե Աստծու զորությունը ըմբռնելով չուղղվեն, չափազանց խիստ պատիժ պիտի կրեն:

Հարց ԻԴ. **Եգիպտոսից իսրայելացիների դուրս գալուց մինչև վերոհիշյալ Սատտիմ կոչված տեղը հասնելը որքա՞ն ժամանակ անցավ:**

Պատասխան: Քառասուն տարի: Ըստ որում՝ հիշյալ վայրը Հորդանան գետի մոտ էր, որից անցնելով՝ պիտի մտնեին Ավետյաց երկիրը: Ուստի Աստծու հրամանով Մովսեսը և Եղիազար քահանան, Իսրայելի տասներկու ցեղերից պատերազմելու ընդունակ քսան տարեկանից մեծ տղամարդկանց արձանագրում են, որպեսզի թշնամու դեմ պատերազմելու պատրաստ լինեն: Նրանց թիվը վեց հարյուր մեկ հազար յոթ հարյուր երեսուն էր (միայն հազար ինը հարյուր քսան հոգով պակաս երեսունութ տարի առաջ Սինա լեռան մոտ կատարված զորահամարի թվից):

Աստված հրամայում է Մովսեսին, որ Քանանի երկիրը վիճակահանությամբ բաժանի՝ յուրաքանչյուր ցեղի

517 Այս բանը նա ինքն իրենից չասաց, այլ քանի որ այդ տարվա քահանայապետն էր, մարգարեացավ, որ Հիսուս մեռնելու էր ազգի համար (*Հովհ.* 11:51):

առավելության և նվազության համեմատ, և գրավելիք երկրները չորս կողմից սահմաններով հստակ որոշվեն: Նմանապես ղևտացիները. առանձին հաշվվելով՝ մեկ ամսական մանուկից մեծ արու անձանց թիվը քսաներեք հազարի հասավ:

Եվ քանի որ Իսրայելի ժողովրդի մեջ որևէ աղջիկ չէր կարող ժառանգել հոր ունեցվածքը, Մանասեի ցեղից Սաղպաադ անունով մի մարդ անապատում մեռել և հինգ աղջիկ զավակ էր թողել, որոնք խնդիր առաջադրեցին Մովսեսին, Եղիազար քահանայապետին և ժողովրդի մեծամեծներին, որ իրենց հոր ունեցվածքն նրա եղբայրների հետ իրենց էլ տրվի, որպեսզի հանգուցյալի անունը չկորսվի, քանի որ արու զավակ չունի:

Մովսեսն Աստծու հրամանով նրանց խնդիրը լուծելուց հետո պատվիրում է ժողովրդին, որ արու զավակ չունեցող մարդու ունեցվածքը նրա աղջկան տրվի, և եթե աղջիկ էլ չունի՝ եղբորը, եթե եղբայր չունի՝ հորեղբորը, եթե հորեղբայր չկա, մերձավոր ազգականին տրվի, որպեսզի մի ցեղի ժառանգությունը մյուսին չանցնի:

Այս պատճառով վերոհիշյալ աղջիկներին պատվիրվեց, որ ուրիշ ցեղից ամուսին չառնեն, այլ իրենց ցեղից առնեն, որպեսզի իրենց ցեղի ժառանգությունն ուրիշ ցեղի ժառանգության հետ խառնվելու հետևանքով նրանց մեջ հակառակություն չծագի, ինչպես գրված է (Թվոց 36-րդ գլուխ):

Հետո Աստված Մովսեսին հրամայում է, որ ելնի Նաբավ լեռը, այնտեղից տեսնի Քանանի երկիրը և այնտեղ վախճանվի[518]: (Հիշյալ լեռը շատ բարձր էր, որի վերի մասը՝ Նաբավ, իսկ

---

518 Տերն ասաց Մովսեսին. «Բարձրացի՛ր այն կողմում գտնվող Նաբավ լեռը և դիտի՛ր Քանանացիների երկիրը, որը ես իսրայելացիներին եմ տալու որպես կալվածք: Կտեսնենս այն, որից հետո դու ևս մեռնելով՝ կմիանաս քո նախնիներին» (*Թվեր* 27:12-13):

ստորոտը Աբարիմ էր կոչվում): Երբ Մովսեսը լսեց այս հրամանը, Աստծուց այլ բան չխնդրեց, բացի ժողովրդին կառավարելու համար մի անձ որոշելուց:

Դու նայի՛ր Մովսեսի առաքինությանը. քանի որ ջրի խնդրի առթիվ ժողովրդի ապօրինի տրտունջների պատճառով ինքը Ավետյաց երկիր չմտնելու վճիռը ստացավ, բայց դարձյալ նույն ժողովրդի համար աղաչում է Աստծուն, որ Իր խնամքը նրա վրա անպակաս անելով՝ մի առաջնորդ կարգի իրեն հաջորդելու համար:

Այո՛, Աստված ժողովրդին առանց առաջնորդի չի թողնում, բայց Մովսեսի հատուկ խնդրանքն այդ մասին իր ազգի նկատմամբ ունեցած չափազանց սերն է ցույց տալիս, մանավանդ չի խնդրում, որ իր որդին կամ ազգականներից մեկը դառնա առաջնորդ, այլ այդ ընտրությունը Աստծու կամքին է թողնում: Աստված հրամայում է, որ Նավեի որդուն՝ Հեսուին, կարգի ժողովրդի առաջնորդ: Նա Մովսեսի ծառան էր առաջ և որի առաջնորդությամբ իսրայելացիները Ավետյաց երկիր պիտի մտնեին:

Ուստի Մովսեսը, Եղիազար քահանայի և ժողովրդի ներկայությամբ Հեսուի վրա ձեռքը դնելով, իր փոխարեն ժողովրդի առաջնորդ նրան է կարգում: Հետո զոհերի, Աստծուն նվիրելի ընծաների և իսրայելացիներին բնորոշ այլ սովորությունների մասին Աստված նորից պատվերներ է տալիս Մովսեսին, որ հաղորդի ժողովրդին:

Նմանապես Աստված, կամենալով մադիանացիներին արդարությամբ պատժել (որոնք, քսաներորդ հարցի համեմատ անպարկեշտ աղջիկներին իսրայելացիների մոտ ուղարկելով, մեղքի պատճառ էին դարձել), հրամայում է Մովսեսին, որ նախ կոտորի այդ ամբարիշտ ցեղը և ապա Նաբավ լեռան վրա վախճանվի:

Մովսեսը, հրամանի համաձայն յուրաքանչյուր ցեղից հազարական մարդ վերցնելով, Եղիազար քահանայապետի որդու՝ Փենեեսի առաջնորդությամբ ուղարկում է մադիանացիների վրա, որոնց կոտորում են իրենց հինգ թագավորներով հանդերձ: Վերոհիշյալ Բաղաամ կախարդն էլ, այնտեղ լինելով, նրանց հետ չարաչար մահվամբ սպանվում է, և թեև ամբողջ մադիանացիների երկիրը կողոպտելով ավերում են, սակայն իգական սեռի ներկայացուցիչներին և մանուկներին առանց սպանելու գերեվարում են:

Մովսեսը նրանց տեսնելուն պես բարկանում է, թե ինչու են կանանց ողջ թողել, քանի որ նրանք էին, որ Բաղաամի թելադրանքով իսրայելացիների մեղքի և պատժվելու պատճառը եղան, ուստի բացի կույս աղջիկներից, բոլոր գերված կանանց և արու մանուկներին կոտորել է տալիս: Եվ հրամայում է օրենքի համաձայն յոթ օր բանակատեղիից դուրս մնալով՝ մաքրվելուց հետո բանակատեղի վերադառնան ըստ օրենքի:

Եվ քանի որ ահագին քանակությամբ ոսկի, արծաթ և այլևայլ ուրիշ ապրանքներ և անասուններ էին ավար բերել: Աստծու հրամանով բաժին են հանում ամբողջ ժողովրդին, ղևտացիներին և խորանին, իսկ աղջիկները որպես աղախին են ծառայում:

Սակայն զարմանալին այն է, որ մի այսպիսի ահեղ պատերազմում իսրայելացիների զորքից և ոչ մեկը չի մեռնում: Հետևաբար այս հաղթանակը հայտնի ձևով պարզ է լինում, որ Աստծու մասնավոր օգնության շնորհիվ էր, ուստի զորքը ավար վերցրած ոսկյա բոլոր զարդերը բերում է Մովսեսի և Եղիազար քահանայապետի մոտ՝ Աստծուն նվիրելու համար, նրանք էլ դնում են խորանում, որպեսզի այդ հաղթության հիշատակն անմոռաց մնա ապագայում:

Թեպետ թշնամիներին հետզհետե հաղթելով՝ իսրայելացիները Երուսաղեմ մտնելու համար Հորդանան գետով պիտի

անցնեին, բայց այդ տեղի շատ խոտավետ և արգասաբեր լինելու պատճառով Ռուբենի և Գադի ցեղերի երևելիները Մովսեսին, Եղիազար քահանայապետին և ժողովրդի ծերերին առաջարկում են, որ հիշյալ գետի այդ կողմում իրենց տեղ հատկացնեն առանց դիմացի ափն անցնելու՝ առարկելով, որ իրենց անասունները խիստ շատ են:

Մովսեսը, լսելով սույն առաջարկը, բարկանում է և հիշյալ երկու ցեղերի ներկայացուցիչներին հանդիմանում է, քանի որ նա կարծում է, թե նրանք միայն իրենց հանգստության և շահի համար Ավետյաց երկիր գնալ չեն կամենում և 17-րդ հարցում հիշված լրտեսների նման ուզում են պղտորել ժողովրդի միտքը:

Սակայն նրանք պատասխանում են, թե՝ «Մեր որդիներին և ընտանիքը, ինչպես նաև մեր անասուններին այստեղ թողնելով՝ մենք զինված կանցնենք Հորդանան գետը, և մինչև որ ամբողջ ժողովուրդը չտեղավորվի, չենք վերադառնա մեր տները»: Այս վստահեցնող խոսքերից Մովսեսը, համոզվելով, որ նրանք սրտի անկեղծությունից են արել իրենց առաջարկը, կատարում է նրանց խնդրանքը:

Այն ժամանակ Մանասեի ցեղը քանի որ Գաղաադում կոտորել էր ամովրհացիներին և գրավել նրանց տեղը, Մովսեսն այդ երկիրը Մանասեի ցեղին է տալիս բնակվելու համար: Բայց տեղի փոքրության պատճառով հիշյալ ցեղի կեսը՝ այնտեղ բնակվելով, մյուս կեսն անցնում է Հորդանանի մյուս ափը: Ահա այսպիսով երկուսուկես ցեղ Հորդանանի այն կողմում է բնակվելու տեղ ստանում, իսկ իննուկես ցեղ, այս կողմն անցնելով, բնակություն են հաստատում որոշված տեղերում, որոնց անուններն ու սահմանները Ս. գիրքը մեկ առ մեկ հիշատակում է (*Թվոց* 33-34-րդ գլուխներ):

Եվ քանի որ ղևտացիներին հատուկ տեղ չէր տրվել (որովհետև նրանք քահանաներ էին, հարկ էր, որ տասներկու

ցեղերի քաղաքներում ևս գտնվեին՝ Աստծու օրենքն ու պատվիրանները նրանց սովորեցնելու համար), այս պատճառով աստվածային հրամանով Մովսեսը ժողովրդին պատվիրում է, որ յուրաքանչյուր ցեղ իր սահմանի մեջ ղևտացիներին տեղ հատկացնի բնակության համար, և քառասունութ քաղաք հատկացվեց նրանց:

Այս քաղաքներից վեցը «Ապաստանի քաղաք» կոչվեցին. դրանցից երեքը՝ Հորդանանի մի կողմում, իսկ երեքը՝ մյուս կողմում գտնվելով, երբ մի մարդ, դիպվածով ակամա մարդասպանություն գործելուց հետո այդ քաղաքներից մեկը փախչելով, այնտեղ ապաստաներ, առանց որևէ մեկի կողմից արգելքի հանդիպելու պարտավոր էր մինչև ժամանակի քահանայապետի մահն այնտեղ մնալ, և ապա իր ծննդավայր վերադարձած ժամանակ օրենքով ազատ էր, այսինքն՝ նրա դեմ արյան դատաստան չպիտի բացեին:

Այստեղ Ս. գիրքը (*Թվեր*, գլուխ 36) նորից խոսում է վերոհիշյալ Սաղպաադի դուստրերի մասին, և այդ առիթով ցեղական ժառանգության շուրջ ամեն մի շփոթության առջևն առնելու համար մասնավոր և իսրայելացիներին բնորոշ պատվիրաններ են տրվում:

Հարց ԻԵ. **Քանի որ Մովսեսը Նաբավ լեռան վրա պիտի մեռներ, իր վերաբերյալ արդյոք որևէ կտակ թողե՞ց:**

Պատասխան: Ո՛չ, իրեն վերաբերող որևէ կտակ չթողեց, սակայն Աստծու պատվիրանները ժողովրդին նորից ու նորից հանձնարարեց զգուշությամբ և ճշտությամբ կատարել: Ուշադրությո՛ւն դարձրու, թեպետ Մովսեսը քառասուն տարի շարունակ ժամանակ առ ժամանակ Աստծու պատվերն ու օրենքը ժողովրդին բացատրելու պարտականության մեջ

երբեք չթերացավ, այդուհանդերձ մահվան ժամը մոտենալու պահին ժողովրդին հավաքեց և մինչ այդ պահը Աստծո՝ իրենց արված բարերարությունները, գործած հրաշքները, իրենց հայրերի անօրեն ընթացքի պատճառով շատ անգամ Աստծու բարկանալով պատժելը և մանավանդ Աստծու օրենքներն է վերստին հիշեցնում, որպեսզի հրամանը հակառակ ընթացքի մեջ լինելով՝ իրենք ևս չպատժվեն:

Քանի որ Եգիպտոսից ելնող ժողովուրդը, ովքեր քսան տարեկանից մեծ էին, իրենց անհնազանդության պատճառով, աստվածային վճռի համաձայն, բոլորն էլ անապատում մեռան, բացի Հեսուից և Քաղեբից, որոնք ողջ էին:

Արդ, այն ժամանակ ներկա ժողովրդի առջև, որոնցից ոմանք մանուկ հասակում էին Եգիպտոսից դուրս եկել, ոմանք էլ անապատում էին ծնվել, նախապես տրված պատվերները մի անգամ ևս հաստատելուց բացի, այլ պատվերներ էլ է ավանդում: Մանավանդ Քրիստոսի՝ մեր Փրկչի գալուստն է նախապես նրանց հայտնում, որպեսզի գալու ժամանակ Նրա հրամանին և օրենքին հնազանդվեն[519]:

Քանի որ իսրայելացիները կռապաշտության էին հակված, այս պատճառով մեծ զգուշությամբ պատվիրում է, որ կռապաշտների հետ մոտ հարաբերություններ չունենան, կուռքեր չպաշտեն, քանզի երբ պաշտելու լինեն, բոլոր առումներով մի թշվառ վիճակի մատնվելով՝ սաստիկ պատիժների էլ պիտի ենթարկվեն:

Դարձյալ. Մովսեսը պատվիրում է, որ Աստծու օրենքներին չհնազանդվողներին՝ անեծք, իսկ հնազանդվողներին օրհնություն տրվի, Հորդանան գետը անցնելով՝ երկաթ

---

519 Տերն ինձ ասաց.... «Ես նրանց եղբայրներից քեզ նման մի մարգարե մեջտեղ կհանեմ (*Բ Օր.* 18:17-18):

(մուրճ) չդիպած քարերից շինված սեղանի վրա զոհ մատուցեն, և ժողովրդի վեց ցեղերը՝ Շմավոնի, Ղևիի, Հուդայի, Իսաքարի, Հովսեփի և Բենիամինի, մնան Գարիզին լեռան վրա, իսկ մյուս վեց ցեղերը՝ Ռուբենի, Գադի, Ասերի, Զաբուղոնի, Դանի և Նեփթաղիմի, կանգնեն Գեբաղ լեռան վրա, օրենքը չկատարողներին անիծելով՝ Գեբաղ լեռան վրա կանգնածներն «ամեն» թող ասեն, իսկ օրենքը կատարողներին օրհնություն տալով՝ Գարիզին լեռան վրա կանգնածները «ամեն» ասեն:

Հետո երկինքն ու երկիրը վկա բերելով[520]՝ Մովսեսը մինչ այն ժամանակ խոսածների համառոտ բովանդակությունը որպես պատմություն կամ օրհնության հիշատակարան գրի է առնում, որպեսզի ժողովուրդը կարդա և բերանացի սովորի չմոռանալու համար:

Բացի այդ, օրինակի համար, Հակոբ նահապետը, մահանալիս Աստծու զորությամբ իր տասներկու որդիներին օրհնություն տալով հանդերձ, նրանց սերունդներին ժամանակի ընթացքում պատահելիքը հայտնեց, նմանապես Մովսեսը, մահամերձ ժամանակ իսրայելացիների յուրաքանչյուր ցեղին արժանի օրհնությունը տալով, հետագայում նրանց պատահելիք բաների մասին հայտնում է Աստծու ազդեցությամբ:

Ապա Աստծու հրամանով Մովսեսը Նաբավ լեռը ելած ժամանակ տեսնում է այն երկիրը, որն Աստված խոստացել էր տալ Աբրահամին, Իսահակին և Հակոբին, և այնտեղ վախճանվելով՝ հրեշտակի ձեռքով թաղվում է «Մովաբի ձոր» կոչված վայրում. գերեզմանի տեղը ոչ մեկի չի հայտնվում, ու ժողովուրդը, երեսուն օր սուգ պահելով, ողբում է իր մարգարե առաջնորդին:

---

520 Երկի՛նք, ակա՛նջ դիր, որ խոսեմ (*Բ Օր.* 32:1):

Մովսեսն իր ամբողջ կյանքի ընթացքում երբեք մարմնավոր հանգիստ չգտավ, քանի որ դեռևս եռամսյա մանուկ էր, որ փարավոնի երկյուղից մայրը նրան Նեղոս գետը գցեց: Թեև հրաշքով ազատվելով՝ թագավորի պալատում մեծացավ, սակայն իր ազգի կրած չարչարանքները տեսնելով՝ ինքն էլ նրանց չարչարանակից լինելու նման անհանգիստ էր: Ազգի փրկության պատճառով օտար երկիր փախչելով՝ անգամ հովվություն անել հանձն առավ:

Լինելով իսրայելացիների առաջնորդը՝ թեև քառասուն տարի անտանելի նեղությունների ենթարկվեց, բայց ոչ մի պահ հույսով աղոթելուց չդադարեց: Այդքան մեծաթիվ ժողովրդի իշխան և առաջնորդ եղավ, սակայն միշտ խոնարհ մնալով՝ հպարտությունը երբեք չկարողացավ տիրել նրա սրտին: Միշտ հնազանդ և Աստծու փառքին այնքան նախաձախնդիր էր, որ մինչև իր մահը Նրա հրամանը ժողովրդին հայտնելու պաշտոնի մեջ երբեք չթերացավ:

Աշխարհի վրա նա ուրիշ բան չի փնտրել, բացի Աստծուց, և Նրա փառքը տեսնելն էր ցանկանում: Բացի այդ, «Աստծու ծառա» կոչվելով՝ նրա փառքը առավել ևս մեծացավ, քանի որ մարդուս համար Աստծու ծառա լինելուց բացի ավելի մեծ փառք ու պատիվ երկրի վրա չի կարող լինել: Մովսեսի նման մարգարե Իսրայելում երբեք չեղավ, ինչպես Ս. գիրքն է հայտնում[521]:

Մովսեսը մեռնելիս թեև հարյուր քսան տարեկան էր, սակայն Աստծու կամոք նրա անձը երբեք չթուլացավ, և ոչ էլ նրա աչքերը տկարացան, ուստի քայլելով և միայնակ բարձրացավ Նաբաթ լեռը՝ մեռնելու համար:

---

521 Իսրայելում Մովսեսի նման մարգարե այլևս չելավ (*Բ Օր.* 34:10):

Օրինա՛կ վերցրու Մովսեսի առաքինությունից. որքան հնարավոր է, քո կամքով մեծության մի՛ ձգտիր[522], քանի որ աշխարհիկ մեծությունը մարդու թե՛ մարմնի և թե՛ հոգու համար վտանգավոր է: Եթե արդար ես, պարզ է, որ նեղություններ պիտի կրես, քանի որ չարության հակված մարդիկ խիստ շատ են. բոլորին լավ կառավարելու համար ահագին ջանք և տքնություն է անհրաժեշտ:

Եթե անարդար լինես, ժողովուրդը կսկսի ապստամբել և մի օր կարող է վնասել քեզ, այս իսկ պատճառով այս աշխարհի վրա անիրավ դատավորը կամ իշխանավորը միշտ երկյուղ կրելուց բացի[523] հանդերձյալ կյանքում էլ սաստիկ պատժվում է: Եթե Մովսեսի պես քեզ էլ ի վերուստ ժողովրդին առաջնորդելու հրավեր է լինում, աստվածային կամքին մի՛ հակառակվիր և նրա նման ամեն մի նեղության համբերելով՝ միշտ տքնի՛ր ժողովրդի բարիքի համար:

Քանի որ մեծությունը ոչ թե իշխելն է, այլ իշխանությանդ ներքո եղողների բարեկեցությունը, ինչպես նաև նրանց շահի համար կրելիք նեղությունները և վսեմ պայքար մղելը: Մինչ աշխարհը քնի մեջ հանգիստ է վայելում, ժողովրդի արդար և բարի իշխանը, նրա բարվոք կառավարելու շուրջ խորհելով, գրեթե միշտ քնի կարոտ է մնում: Ամեն մարդ իր սեփական օգուտի մասին է խորհում, իշխանավորը, բոլորի օգուտի մասին մտածելով, բնականաբար, ավելի կամ նվազ անհանգիստ է լինում:

Սակայն եթե արդարությամբ կառավարելով՝ բոլորի ուղղության համար աշխատի և բոլորին առաքինության օրինակ

---

522 Եթե հարստությունն առվի պես իսկ հոսի, թող ձեր սրտերը չցանկանան (*Սաղմ.* 61:11):

523 Ասացվածքի համաձայն՝ ով շատերին է կառավարում, շատերից էլ երկնչում է:

լինի, այն ժամանակ իր վարձը խիստ մեծ և փառավոր կլինի: Քանի որ յուրաքանչյուր անձ իր առաքինության վարձն է առնում, իսկ ուրիշների առաքինության պատճառ եղողը նրանց համար էլ է Աստծուց վարձ ստանում[524]: Սրան հակառակ, անարդարացի կառավարելու հետևանքով որոնց գայթակղության կամ մեղքի պատճառ է եղել, նրանց համար ավելի պատժի է արժանի լինում[525]:

Այսուհանդերձ պիտի գիտենանք, որ թե՛ հոգևոր և թե՛ մարմնավոր իշխանավորները, որքան էլ արդարությամբ և առաքինությամբ կառավարեն, դարձյալ բամբասանքից բոլորովին զերծ և ազատ չեն կարող լինել, քանի որ մարդիկ իրար նկատմամբ գերազանց և փառավորագույն լինելու ցանկությամբ ընդհանրապես իրար են մեղադրում, իրար պակասությունները գտնելու առիթ են փնտրում, ոմանք՝ նախանձից, ոմանք՝ տգիտությունից:

Թեպետև մարդկանց պարսավանքից և չարախոս լեզվից ազատ լինելը բացարձակապես անհնար է[526], սակայն համբերությամբ նրանց ուղղության համար աղոթելը և միաժամանակ աշխատելը թե՛ հնարավոր է և թե՛ սրբազան պարտականություն: Լա՛վ խորհիր այս մասին և մի՛ կարծիր, թե երբ չարերը չուղղվեն, քո վարձը կկորսվի, այլ նրանք ավելի մեծ պատժի արժանի կլինեն[527]:

---

524 Ով մեղավորին իր մոլորության ճանապարհից հետ է բերում, կփրկի նրա հոգին մահվանից (*Հակոբ.* 5:20):

525 Անկարելի է, որ գայթակղություն չգա, բայց վա՛յ նրան, որի ձեռքով կգա (*Ղուկ.* 17:1):

526 Ասացվածքի համաձայն՝ չկա մարդ այնքան առաքինի, որ ազատ լինի նախանձներից և տգետներից:

527 Մարդո՛ւ որդի, քեզ դետ կարգեցի Իսրայելի տանը (*Եզեկ.* 3:17):

Վերջապես, թե ի՛նչ է մեծությունը, ուրիշի մի՛ հարցրու, այլ Մովսեսին և նրա օրինակի՛ն հետևիր ամենայն համբերությամբ և արիությամբ, որպեսզի սխալների մեջ չընկնես և պատժի արժանի չլինես:

Հարց ԻԶ. **Մովսեսի գերեզմանի տեղն ինչո՞ւ չհայտնվեց:**

Պատասխան: Քանի որ իսրայելացիները, կռապաշտությանը հակված լինելով, միգուցե նրան պաշտեին, ինչպես որ սատանան, այս չարիքին հետամուտ լինելով, ցանկանում էր Մովսեսի մարմինը Ավետյաց երկիր փոխադրել, սակայն Միքայել հրեշտակապետը, արտոնություն չտալով, թաղում է այն[528]:

Մանավանդ Ավետյաց երկիր Մովսեսի մտնել չկարողանալը, միայն Նաբավ լեռից այն տեսնելը հոգևոր իմաստով նշանակում է, որ հին օրենքը հեռվից նայելու էր Մեսիային և նրա զորությամբ Աստծու արքայություն մտնելն անհնարին լինելով՝ անպատճառ Քրիստոսի շնորհի կարիքն ուներ:

Քանզի, օրինակի համար, Իսրայելի ժողովուրդը, Մովսեսի մահից հետո Հեսուի առաջնորդությամբ Հորդանան գետը անցնելով, սուրբ Երուսաղեմի երկիրը մտավ, այդպես էլ քրիստոնյաները Մեսիայի շնորհիվ արժանի են լինում արքայությանը: Հեսուն՝ Հիսուսի, իսկ Հորդանանը՝ Սուրբ Ավազանի օրինակն են: Այս պատճառով Մովսեսի՝ Հորդանան գետը չանցնելն ու Մովաբի ձորի մեջ մնալը նշանակում է, որ քրիստոնեական սուրբ հավատի հայտնության ժամանակ հին օրենքը պետք է դադարեր:

---

528 Միքայել հրեշտակապետը բանսարկու Սատանայի հետ Մովսեսի մարմնի մասին վիճելիս պատասխանեց (*Հուդա* 1:9):

Բացի այդ, Մովսեսի գերեզմանի՝ անհայտ մնալը, իսկ Երուսաղեմում Հիսուս Քրիստոսի գերեզմանի բոլորին հայտնի լինելն ապացույց է, որ նոր օրենքը միշտ և հավիտյան պիտի մնա, այնպես որ Հիսուսի հարություն առած ժամանակ հրեշտակը հարության ավետիսը կանանց տալուց բացի, ասում է. «Եկե՛ք և տեսե՛ք դրված տեղը»[529]: Արդարև այս խոսքից հայտնի է դառնում, որ Նրա սուրբ գերեզմանին մարդիկ պարտավոր են ամենամեծ[530] հարգանք և երկրպագություն մատուցել:

529 Եկե՛ք, տեսե՛ք այն տեղը, ուր պառկած էր (*Մատթ.* 28:6):

530 Նրա հանգիստը փառահեղ է լինելու (*Եսայի* 11:10):

Ցանկ

Հեղինակի նախաբան 7

ԱՌԱՋԻՆ ԴԱՐ

Հարց Ա. **Ե՞րբ է ստեղծվել աշխարհը** 13

Հարց Բ. **Քանի որ ժամանակը աշխարհի ստեղծագործությունից է սկսվում, դրանից առաջ եղածն ինչպե՞ս հասկանանք** 13

Հարց Գ. **Աշխարհ ասելով ի՞նչ ենք հասկանում** 14

Հարց Դ. **Աստված ինչո՞ւ ստեղծեց արարածներին** 15

Հարց Ե. **Արդյո՞ք կարելի է հնարավորինս հասկանալ աշխարհի≈արարչության եղանակը** 17

Հարց Զ. **Ինչո՞ւ աշխարհը վեց օրում ստեղծվեց** 20

Հարց Է. **Դրախտը որտե՞ղ էր** 20

Հարց Ը. **Ադամը որտե՞ղ ստեղծվեց** 21

Հարց Թ. **Աստված Ադամին ինչո՞ւ դրախտի մեջ չստեղծեց** . . 23

Հարց Ժ . **Ինչո՞ւ մինչ Ադամի ստեղծվելը Բարձրյալի անունը Սուրբ գրքում միայն Աստված է գրված, իսկ Ադամի արարումից հետո՝ Տեր Աստված** 23

Հարց ԺԱ. **Ինչպե՞ս պիտի իմանալ, որ Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերի համեմատ և Իր նմանությամբ** 24

Հարց ԺԲ . **Ադամը դրախտում ի՞նչը պիտի մշակեր և պահպաներ, քանի որ գրված է, թե Աստված Ադամին դրախտում դրեց, որ մշակի և պահպանի** . . 26

Հարց ԺԳ. **Առաջին պատվիրանն ինչո՞ւ կերակրի մասին եղավ** . 28

Հարց ԺԴ. **Ադամին արգելված պտղի ծառի անունն ի՞նչ էր** . . . 30

Հարց ԺԵ. **Ադամին պատվերը տալու ժամանակ Եվան ստեղծվա՞ծ էր** 32

Հարց ԺԶ . **Ինչո՞ւ արգելված պտղի ծառը բարու և չարի գիտության ծառ կոչվեց** 32

Հատ ԺԷ. **Ի՞նչ ենք հասկանում «մահով մեռնել» ասելով** . . . 33

Հատ ԺԸ. **Սատանան ինչո՞ւ խաբեց մարդուն** 34

Հատ ԺԹ. **Սատանան ինչո՞ւ օձի միջոցով խաբեց մարդուն.** . . . 35

Հատ Ի. **Աստված չգիտե՞ր, որ Ադամը մեղանչելու է, ինչո՞ւ պատվեր տվեց.** 35

Հատ ԻԱ. **Մի՞թե Աստված չգիտեր Ադամի թաքստոցի տեղը, երբ հարցնում էր՝ ո՞ւր ես** 37

Հատ ԻԲ. **Աստված Ադամին ինչո՞ւ ասաց. «Հող էիր և հող կդառնաս», քանի որ նա անմահ հոգի ուներ:** 40

Հատ ԻԳ. **Աստված օձին ինչո՞ւ ասաց, թե քո որովայնի վրա սողաս և հող ուտես, մի՞թե արդեն իսկ չէր սողում և հող ուտում** 40

Հատ ԻԴ. **Աստված, պատժելով Ադամին, Եվային և օձին, ինչո՞ւ չարիքի հեղինակ սատանային որևէ բան չասաց** . . 41

Հատ ԻԵ. **Կենաց ծառն ի՞նչ էր** 42

Հատ ԻԶ. **Եթե Ադամը կենաց ծառից ուտեր, ի՞նչ կլիներ** . . . 43

Հատ ԻԷ. **Աստված ինչո՞ւ կենաց ծառի ճանապարհը պահպանելու հրաման տվեց հրեշտակներին (քերովբեներին)** 43

Հատ ԻԸ. **Ո՞րն էր Ադամի հանցանքը** 45

Հատ ԻԹ. **Ադամի հանցանքների համար ի՞նչ պատիժ տրվեց** . . 45

Հատ Լ. **Ադամն իր զավակներին և թոռներին պատվիրանի վերաբերյալ ինչ-որ բան ավանդե՞ց** 47

Հատ ԼԱ. **Ինչո՞ւ Աբելի զոհն ընդունելի եղավ, իսկ Կայենինը՝ ոչ** . . 48

Հատ ԼԲ. **Պատժից հետո Կայենն ի՞նչ եղավ** 52

Հատ ԼԳ. **Կայենից և Աբելից բացի Ադամը ուրիշ զավակ ունեցա՞վ** 53

Հատ ԼԴ. **Աստված Ենոքին ինչո՞ւ փոխադրեց աշխարհից** . . . 54

Հատ ԼԵ. **Ինչո՞ւ ջրհեղեղ եղավ** 55

Հատ ԼԶ. **Նոյը չաղոթե՞ց Աստծուն, որ ների մարդկանց մեղքերը, կամ մեղավորներին չխրատե՞ց**

և կամ նրանց չհանդիմանե՞ց, որ իրենց չար ճանապարհներից հետ դառնան 57

Հատց ԼԷ. **Բոլոր տեսակի անասուններից վերցվե՞ց տապանի մեջ** 59

Հատց ԼԸ. **Երբ անձրևը սկսվեց, մարդիկ, դրա պատիժ լինելը հասկանալով, զղջացի՞ն** 60

Հատց ԼԹ. **Նոյը կորուսյալներին կարեկցելով չտխրե՞ց** 65

Հատց Խ. **Ջրհեղեղը ո՞ր ամսին եղավ** 66

Հատց ԽԱ. **Նոյն արդյո՞ք գիտեր, թե որքան պետք է մնար տապանում** 66

Հատց ԽԲ. **Նոյն ինչքա՞ն ժամանակ մնաց տապանում** 67

Հատց ԽԳ. **Ինչո՞ւ տապանը մտնելու ժամանակ նախ Նոյը և իրորդիները, ապա կինը և որդիների կանայք մտան,մինչդեռ դուրս գալու ժամանակ նախ Նոյը իր կնոջ հետդուրս եկավ, հետո որդիները և իրենց կանայքմիմյանց հետևից դուրս եկան** 68

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՐ

Հատց Ա. **Երկրորդ դարը ինչո՞վ է տարբերվում առաջինից** . . 71

Հատց Բ. **Նոյը տապանից դուրս գալուց հետո որտե՞ղ բնակվեց** 71

Հատց Գ. **Մի՞թե ծիածանը արդեն չէր երևում, որ Աստված այն հաշտության նշան է հայտարարում:** 72

Հատց Դ. **Մարդու հետ Աստծու հաշտվելն ու ուխտ կապելը ինչպե՞ս հասկանանք** 74

Հատց Ե. **Նոյը և իր որդիներն ի՞նչ եղան** 74

Հատց Զ . **Մարդիկ ինչպե՞ս ցրվեցին աշխարհի չորս կողմերը** . 76

Հատց Է. **Լեզուները խառնվելուց առաջ մարդիկ ի՞նչ լեզվով էին խոսում** 78

Հատց Ը. **Նոյը քանի՞ տարեկանում մահացավ** 79

Հատց Թ. **Ինչի՞ց առաջացավ կռապաշտությունը** 80

ԵՐՐՈՐԴ ԴԱՐ

Հարց Ա. **Երրորդ դարը երկրորդից ինչո՞վ է զանազանվում** . . 87

Հարց Բ. **Աբրահամն արդեն ճանաչո՞ւմ էր Աստծուն, որի հրամանին հետևեց** 89

Հարց Գ. **Աստված Աբրահամին հրամայում է, որ իր ծննդավայրը թողնի, սակայն գնալու տեղի անունն ինչո՞ւ չի հայտնում** 90

Հարց Դ. **Քանի որ տեղի անունը Աբրահամին չասվեց, զարմանալի չէ՞, որ ուրիշ կողմ գնալու փոխարեն Քանանի երկիրը գնաց:** 91

Հարց Ե . **Մարդուն Աստծու երևալը և նրա հետ խոսելն ինչպե՞ս հասկանանք** 92

Հարց Զ. **Աստված Քանանի երկիրն ինչո՞ւ տվեց Աբրահամին մի՞թե դրանից ավելի պտղաբեր և ուրախ երկիր չկար** 93

Հարց Է. **Քանանի երկիրը Աբրահամին խոստանալու ժամանակ նա դեռ որդի չուներ, ինչո՞ւ զավակ չխնդրեց Աստծուց** 94

Հարց Ը. **Եգիպտոսից վերադառնալուց հետո Աբրահամն ո՞ւր գնաց** 95

Հարց Թ. **Ո՞վ էր Մելքիսեդեկ քահանան** 97

Հարց Ժ. **Աբրահամը ինչի՞ց էր վախենում, որ Աստված քաջալերում էր նրան** 98

Հարց ԺԱ. **Ի՞նչ խորհուրդ ունեն վերոհիշյալ երինջը, արու այծ, խոյը, տատրակն ու աղավնին** 100

Հարց ԺԲ. **Աստված ամենակարող է և նախապես հայտնում է լինելու բաները, ինչո՞ւ այնքան ժամանակ հապաղեց գործադրել իր խոստումը** 102

Հարց ԺԳ. **Ինչո՞ւ է երեք հրեշտակ գալիս Աբրահամի մոտ. մեկը բավական չէ՞ր:** 105

Հարց ԺԴ. **Որ՞ն էր սոդոմացիների մեղքը** 109

Հարց ԺԵ. **Ի՞նչ էր Սոդոմին և Գոմորին տրված պատիժը** . . . 114

Հատոր ԺԶ. **Աբրահամն ինչպե՞ս իմացավ Սոդոմի և Գոմորի այրվելու և Ղովտի ազատվելու մասին** 117

Հատոր ԺԷ. **Աբրահամն ի՞նչ էր խորհում Իսահակին զոհելու հրամանը ստացած պահին** 123

Հատոր ԺԸ. **Աստված Աբրահամին ինչո՞ւ հրամայեց զոհաբերել Իսահակին** 130

Հատոր ԺԹ. **Սառայի մահվանից հետո Աբրահամը նորից ամուսնացա՞վ** 132

Հատոր Ի. **Իսահակը քանի՞ տարեկան էր, երբ ամուսնացավ** . . 134

Հատոր ԻԱ. **Հակոբն ինչպե՞ս ստացավ հոր օրհնությունը** 138

Հատոր ԻԲ. **Հակոբը միայնա՞կ գնաց Խառան** 142

Հատոր ԻԳ. **Հակոբը որքա՞ն մնաց Լաբանի մոտ** 145

Հատոր ԻԴ. **Երբ Հակոբի անասունները շատացան, Լաբանն ու իր որդիները նախանձեցի՞ն** 149

Հատոր ԻԵ. **Հակոբը, Խառանից դուրս գալով և Քանանի երկիր գնալով, մի՞թե չվախեցավ իր Եսավ եղբորից** 151

Հատոր ԻԶ. **Երբ Հակոբը Խառանից վերադարձավ, հայրը ո՞ղջ էր** 156

Հատոր ԻԷ. **Հակոբը քանի՞ որդի ուներ** 160

Հատոր ԻԸ. **Հովսեփը հորի մեջ եղած ժամանակ արդյոք լացե՞ց և աղաչե՞ց իր եղբայրներին** 165

Հատոր ԻԹ. **Հովսեփի եղբայրները իրենց հորն ինչպե՞ս տեղեկացրին նրա վիճակի մասին** 167

Հատոր Լ. **Հովսեփին գնած վաճառականը նրան ո՞ւր տարավ**. . 170

Հատոր ԼԱ. **Հովսեփն ինչքա՞ն ժամանակ մնաց բանտում** 174

Հատոր ԼԲ. **Իշխան դառնալուց հետո Հովսեփն իրեն զրպարտող կնոջից վրեժ լուծե՞ց** 178

Հատոր ԼԳ. **Հովսեփն իր հորը արդյո՞ք հայտնեց իր եղբայրների անգութ վարմունքի և Եգիպտոսում իր վիճակի մասին**. 180

Հատոր ԼԴ. **Ինչպե՞ս կատարվեց Հովսեփի երազը** 182

Հատ ԼԵ. **Հովսեփն ինչո՞ւ իրեն անմիջապես հայտնի չդարձրեց եղբայրներին, երբ տեսավ նրանց** 186

Հատ ԼԶ. **Հովսեփը ինչո՞ւ է իր գինու բաժակը դնել տալիս Բենիամինի պարկի մեջ** 190

Հատ ԼԷ. **Հովսեփն իր եղբայրներին ինչո՞ւ պատվիրեց, որ ճանապարհին միմյանց հետ չկռվեն** 195

Հատ ԼԸ. **Երբ Հակոբն իմացավ, որ Հովսեփը ամբողջ Եգիպտոսում նախարար է, ի՞նչ մտածեց** 196

Հատ ԼԹ. **Եգիպտոս գնալու ժամանակ Հակոբը քանի՞ տարեկան էր** 198

Հատ Խ. **Հակոբն ինչո՞ւ ցանկացավ թաղվել Քանանի երկրում** 202

Հատ ԽԱ. **Հովսեփը քանի՞ տարի իշխեց** 203

Հատ ԽԲ. **Հովսեփի մահից հետո Իսրայելի ազգի վիճակն ի՞նչ եղավ Եգիպտոսում** 211

Հատ ԽԳ. **Մովսեսը քանի՞ տարի մնաց փարավոնի աղջկա մոտ** 215

Հատ ԽԴ. **Մովսեսը քանի՞ տարի մնաց Մադիամում՝ Հռագուելի մոտ** 219

Հատ ԽԵ. **Որո՞նք էին Մովսեսի առաջ քաշած պատճառները** . . 221

Հատ ԽԶ. **Ի՞նչ խորհուրդ ունեն մորենին և կրակը** 225

Հատ ԽԷ. **Ինչպե՞ս հասկանալ Աստծու «տեսա», «լսեցի» և «իջա» խոսքերի իմաստը:** 226

Հատ ԽԸ. **Մովսեսին տրված երեք հրաշքների զորությունն ի՞նչ է նշանակում** 228

Հատ ԽԹ. **Փարավոնը Մովսեսին ի՞նչ պատասխանեց** 231

Հատ Ծ. **Քանի՞ տեսակ պատիժ կամ հարված տրվեց փարավոնին** 235

Հատ ԾԱ. **Տասներորդ հարվածից հետո փարավոնը Իսրայելին Եգիպտոսից հանելու հրաման տվե՞ց Մովսեսին** . . 245

Հատ ԾԲ. **Իսրայելացիները ո՞ր ամսին և ո՞ր օրը դուրս եկան Եգիպտոսից** 248

Հատ ԾԳ. **Ինչո՞ւ հրաման տրվեց, որ իսրայելացիները տների շեմերին գառան արյունով նշան դնեն** 248

Հատ ԾԴ. **Աստված Իսրայելին ուղիղ և մոտ ճանապարհով Երուսաղեմ տանելու փոխարեն ինչո՞ւ անապատի կողմը թեքեց** 251

Հատ ԾԵ. **Կարմիր ծովի ափից իսրայելացիները ո՞ր կողմը գնացին** 255

Հատ ԾԶ. **Ի՞նչ էր մանանան, և ինչպե՞ս էին դրանից հաց սարքում** 258

Հատ ԾԷ. **Անապատում Իսրայելին թշնամի հանդիպե՞ց** . . . 260

Հատ ԾԸ. **Ո՞վ էր Հոբը** 262

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐ

Հատ Ա. **Չորրորդ դարն ինչո՞վ է տարբերվում երրորդից** . . . 279

Հատ Բ. **Օրենքն ինչպե՞ս տրվեց** 280

Հատ Գ. **Ինչո՞ւ Մովսեսը զոհի արյունը ցողեց սեղանի առջև և ժողովրդի վրա** 286

Հատ Դ. **Մովսեսը և Ահարոնը լեռից իջնելուց հետո նորից բարձրացա՞ն այնտեղ** 287

Հատ Ե. **Մովսեսի քառասուն օր լեռան վրա եղած ժամանակ ժողովուրդը հնազանդ մնա՞ց** 290

Հատ Զ. **Մովսեսը պատժե՞ց կուռքը պաշտողներին** 294

Հատ Է. **Արդյոք Մովսեսի աղոթքը չընդունվե՞ց, որ Աստված իսրայելացիների հետ գնալ չուզելով կամեցավ հրեշտակ ուղարկել** 297

Հատ Ը. **Մովսեսը երբ երկրորդ անգամ լեռը բարձրացավ, քառասուն օր և քառասուն գիշեր լեռան վրա մնալու ժամանակ ժողովուրդը բանակատեղիում ի՞նչ վիճակում էր** 304

Հատ Թ. **Ուխտի տապանակն ի՞նչ էր** 305

Հատ Ժ. **Ի՞նչ ձև ուներ վկայության խորանը** 307

Հատ ԺԱ. **Վկայության խորանում քանի՞ սեղան կար** 309

Հատ ԺԲ. **Ղևտացիները ո՞ր ցեղից էին** 311

Հատ ԺԳ. **Իսրայելացիներն ինչքա՞ն ժամանակ մնացին Սինա լեռան ստորոտում:** 313

Հատ ԺԴ. **Իսրայելացիներն ինչպե՞ս էին գնում** 317

Հատ ԺԵ. **Իսրայելացիները, Աստծու երախտիքը հասկանալով, միշտ գոհ մնացի՞ն արդյոք** 319

Հատ ԺԶ. **Իսրայելացիները «Ցանկությունների գերեզմաններ» կոչված տեղից հետո ո՞ւր գնացին** . . 326

Հատ ԺԷ. **Հետո իսրայելացիներն ո՞ւր գնացին** 329

Հատ ԺԸ. **Անապատում իսրայելացիների մեջ ուրիշ ի՞նչ դեպքեր կատարվեցին** 337

Հատ ԺԹ. **Կորխի, Դաթանի և Աբիրոնի պատժից հետո ժողովուրդը զղջալով հնազանդություն ցույց տվե՞ց** 341

Հատ Ի. **Իսրայելացիները հետո ո՞ւր գնացին** 344

Հատ ԻԱ. **Իսրայելը հետո ո՞ւր գնաց**. 347

Հատ ԻԲ. **Վերոհիշյալ պատժից հետո ժողովուրդը աստվածային հրամանին նորից հակառակ գործե՞ց** 350

Հատ ԻԳ. **Աստված Բաղաամին ինչո՞ւ թույլ տվեց, որ Բաղակի մոտ գնա** 356

Հատ ԻԴ. **Եգիպտոսից իսրայելացիների դուրս գալուց մինչև վերոհիշյալ Սատտիմ կոչված տեղը հասնելը որքա՞ն ժամանակ անցավ** 358

Հատ ԻԵ. **Քանի որ Մովսեսը Նաբավ լեռան վրա պիտի մեռներ, իր վերաբերյալ արդյոք որևէ կտակ թողե՞ց** 363

Հատ ԻԶ. **Մովսեսի գերեզմանի տեղն ինչո՞ւ չհայտնվեց** . . . 369

ՊՈՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԵՑԻ

ՀԻՆԳ ԴԱՐԵՐԻ ԶԱՆԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախաձեռնությամբ՝
Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ
Տ. Գրիգոր քահանա Գրիգորյանի

Արևմտահայերենից փոխադրեց
Վաչագան սրկ. Դոխոլյանը

Խմբագիր՝
Դավիթ Գյուրջինյան

Սրբագրիչ՝
Նազիկ Հովհաննիսյան

Ձևավորումը և էջադրումը՝
Գոռ Գրիգորյանի